



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

СЕРГЕЙ ВАРДАНЯН

**СРЕДА ФОЛЬКЛОРНОГО
ПОВЕСТВОВАНИЯ**

(Варианты одной сатирической сказки от исламизированных амшенских армян)

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

SERGEY VARDANYAN

**THE DOMAIN
OF A FOLKLORIC NARRATIVE**

(Variations of a satirical tale from Islamized Hamshen Armenians)

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЕРЕВАН 2022

PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
YEREVAN 2022

ՆՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԲԱՆԱՆՅՈՒՍԱԿԱՆ
ՊԱՏՈՒՄԻ ՄԻՋԱՎԱՅՐԸ**
(ԿՐՈՆԱՓՈԽ ՆԱՄՇԵՆԱՆԱՅԵՐԻ
ՄԻ ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ)

ՆԱԻ ՆՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2022

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագիր՝ բանասիրական գիտ. դոկտոր *Արմեն Շ. Սարգսյան*

Գրախոսներ՝ բանասիրական գիտ. դոկտոր *Վերժինե Սվազլյան*
պատմական գիտ. դոկտոր *Հակոբ Չոլաքյան*
բանասիրական գիտ. թեկնածու *Լուսինե Ղոնջյան*

ՀՏԴ 398
ԳՄԴ 82
Վ 301

Վարդանյան Սերգեյ

Վ301 Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի
զվարճապատումի տարբերակները) / Ս.Վարդանյան. – Եր., ՀԱԻ հրատ.,
2022 – 352 էջ+16 էջ գուն. ներդիր:

Բանահյուսական ստեղծագործության միջավայրին ու պատմությանը նվիրված այս եզակի ուսումնասիրությունը կրոնափոխ համշենահայերից և XIX–XX դարերում տարբեր վայրերի քրիստոնյա հայերից գրառված, այուժետային ընդհանրություններ ունեցող 37 անտիպ ու տպագիր երգիծապատումները համեմատելու և մեկտեղելու առաջին փորձն է: Հեղինակը բանարվեստի յուրաքանչյուր նմուշին անդրադառնալիս, հաճախ մանրակրկիտ ներկայացնում է բանասացների, բանահավաքների և հրատարակիչների, տվյալ պատումում հիշատակվող բնակավայրերի, գործող անձանց վերաբերյալ հետաքրքիր ու օգտակար տվյալներ: Տպագրվել են նաև բոլոր զվարճապատումների բնագրերը:

Հետազոտությունը նախատեսված է բանասերների, բանագետների, բարբառագետների, ազգագրագետների, մշակութաբանների, դասախոսների, ուսանողների և թեմայով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 398
ԳՄԴ 82

ISBN 978-9939-886-38-1

© Սերգեյ Վարդանյան, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	9
1. Պատմական անդրադարձ	16
2. Բաթումի մարզի համշենցիները	28
3. Կրոնափոխ համշենահայերի բարբառի և բանահյուսության ուսումնասիրության պատմությունից (XIX–XXI դդ.)	38
4. Ղազախստանում գրառված մի զվարճապատում	65
5. ԱՄՆ-ում գրանցված տարբերակը	76
6. Թուրքիայում գրառված հինգ տարբերակները	91
7. Ղարաբաղի (Արցախ) և Ղարադաղի (Պարսպատունիք) տարբերակները	98
8. Նախիջևանյան տարբերակները	144
9. Գրառման տվյալները չնշված օրինակ	162
10. Կաճեթցիների մասին տարբերակները	165
11. Ջավախքի տարբերակը	174
12. Կեսարիայի տարբերակը	175
13. Լոռու տարբերակը	184
14. Տավուշի տարբերակը	185
15. Սևանի ավազանում՝ Ձորագյուղում, գրանցված Մուշի տարբերակը	186
16. Սյունիքի տարբերակը	187
17. Բեյրութում գրառված արաբկիրցիների տարբերակը	188
18. Փերիայի գավառի տարբերակները	194
19. Մուշի տարբերակը	200
20. Հայագետ Ջեյմս Ռասելի դիտարկումների մասին	203
21. Հալեպում գրառված տարբերակները	208
22. Այլ ժողովուրդների փոփոխակները	211
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ	219
ԱՄՓՈՓՈՒՄ	229
РЕЗЮМЕ	233
SUMMARY	234
ԲՆԱԳԻՐԵՐ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	236
1. Արդեղեցիք՝ ավշի (№ 1)	238
2. Արդալացիները՝ որսորդ (Թարգմանություն) (№ 1/1)	239
3. Temel's Head (№ 2)	240

4. Temel's Head (№ 2/1)	244
5. Արչէ (№ 3)	242
6. Արջը (Թարգմանություն) (№ 3/1)	243
7. Քէլօխ չունսողին հէքիյան (№ 4)	244
8. Գլովս չունեցողի պատմությունը (Թարգմանություն) (№ 4/1)	245
9. Յիլէք արդէլէցի (№ 5)	246
10. Երէք արդալացի (Թարգմանություն) (№ 5/1)	247
11. Ու՛մ քէլօխն էր (№ 6)	248
12. Ու՛մ գլովսն էր (Թարգմանություն) (№ 6/1)	249
13. Չախցուցէ քարէ քիլուշէ (№ 7)	250
14. Ջրադացի քարը գլորելը (Թարգմանություն) (№ 7/1)	251
15. Պէլ դարադաղցուց հնքնաթը (№ 8)	252
16. Պըրել դարադաղցուց հաքյաթը (№ 8/1)	253
17. Լուսին վորոնող քահանան (№ 9)	254
18. Դերեն մրոքը (№ 10)	255
19. Հաթերքին իրէք դերը (№ 11)	256
20. Աղ ցանուշէ (№ 12)	258
21. Աղ ցանելը (Թարգմանություն) (№ 12/1)	258
22. Ադորը կլոխը (№ 13)	259
23. Վերսկան դերը (№ 14)	260
24. [Ռըմնցիք ու լինսըկօն] (№ 15)	261
25. [Ռըմացիք ու գնլը] (№ 16)	262
26. [Ռամիսի տէրտէրը] (№ 17)	263
27. [Ռամիսի տէրտէրը] (№ 17/1)	264
28. [Ռամիսի տէրտէրը] (Թարգմանություն) (№ 17/2)	265
29. Շամբցիք ու արելը (№ 18)	266
30. Տերտերն ու արջը (№ 19)	267
31. Поп и медведь (№ 19/1)	268
32. [Կանեցցի քահանայի գլովսը] (№ 20)	269
33. Կննետն տէրտէրը (№ 21)	270
34. Կննետն տէրտէրը (№ 21/1)	271
35. Как церковь передвигали (№ 22)	272
36. [Էրէց կըցըննն, ժնն կըտընդն] (№ 22/1)	273
37. Տերտրոչ մուրուս (№ 23)	274
38. Կննէթն ծըռեր (№ 24)	275
39. Տերտերի միրուքը (№ 25)	277
40. Խելօք Դաւիթ (№ 26)	278
41. Կուրթանցոց ոըսերեն սովորելը (№ 27)	281
42. Լոռեցունց ոուսերենը (№ 28)	282
43. Տէրդէրի գըլօխը (№ 29)	283
44. Հիմար տերտերն ու արջը (№ 30)	284

45. Մօրուքը տեսայ ըմնա... (№ 31)	285
46. Ուրբաթը կը փնտռեն... (№ 32)	287
47. Ուրբաթը կորիլ ա (№ 33)	289
48. Ուրբաթի կորուստը (№ 34)	290
49. Ուրբաթի կօրուստը (№ 35)	291
50. The missing Friday (№ 35/1)	293
51. Ուրբաթ գորեր է (№ 36)	294
52. Commentary (№ 37)	296
53. [Լճեցիներն ու արջը] (№ 38)	297
54. [Խարբերոցիներն ու արջը] (№ 39)	298
55. «Когда твой муж выходил из дому, была ли у него на плечах голова?» (№ 40)	299
56. Была ли голова? (№ 41)	300
57. Գլուխը կա՞ր (№ 41/1)	301
58. Как тиарийцы искали солнце (№ 42)	202
59. Թե ինչպես էին թիարցիներն արև փնտրում (№ 42/1)	304
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	306
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	307
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	348
ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ	349

Գիրքը պատգարկել է
հեղինակի, մի ակյուրքահայ բարերարի
և Մարկոս Քեսայանի (Մոչի) միջոցներով

ԱՌԱՋԱԲԱՆ

1981թ. սեպտեմբերին Կրասնոդարի երկրամասի համշենցիների գյուղերով շրջագայելիս, երբեմն որպես արտառոց 'տրություն' մեզ ասում էին, որ ինչ-որ մեկը Բելոբեյենսկ քաղաքի ավտոկայանում կամ Ապշերոնսկում պատահաբար հանդիպել է Ղազախստանից և Կիրգիզիայից (1990-ից՝ Ղրղզստան) եկած մարդկանց, որոնք խոսում էին համշենահայերի նման, բայց մահմեդական էին և հագնված էին Կենտրոնական Ասիայի բնակիչների պես:

Պարզ էր, որ նրանք 1944թ. Աջարիայից բռնի տեղահանված կրոնավորյալ համշենահայերն էին: Նրանց վաղուց էինք փնտրում, ցանկանում էինք աքսորի վայրերում լինել, նրանցից ազգագրական և բանահյուսական նյութեր հավաքել: Բայց թե Ղազախստանի և Ղրղզստանի ո՞ր մարզերից, քաղաքներից ու գյուղերից էին եկել, մեր զրուցակիցները չգիտեին, քանի որ իրենք էլ ուրիշներից էին լսել:

Արդեն վերադառնալու ժամանակն էր, պիտի գայինք ներկայանայինք աշխատանքի՝ «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրություն, նաև հետևեինք «Հրեղեն ձին»¹ բանահյուսական ժողովածուի տպագրությանը, որտեղ ամփոփված էին մեր նախաձեռնությամբ Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի ԻՄ, Նախիջևանի ԻՀ, Վրաստանի, Աբխազիայի ԻՀ, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտների՝ իրենց համերկրացիներից բարբառներով, այդ թվում՝ Համշենի բարբառով գրառած բանարվեստի նմուշները:

Գրքի լույս ընծայումը ողջունեցին ԳԱ ակադեմիկոս Արամ Ղանալանյանը², երգիչ, ազգագրագետ Հայրիկ Մուրադյանը³, արձակագիր և բանահավաք Սերո

1 **Հրեղեն ձին**, մշակեց և վերապատմեց **Սերգեյ Վարդանյանը**, գիտ. խմբագիր՝ **Սարգիս Հարությունյան**, խմբագիր՝ **Դավիթ Հովհաննես**, նկարիչ՝ **Նիկոլայ Մանուկյան**, առաջաբանը՝ բ. գ. դ. **Սարգիս Հարությունյանի**, Երկու խոսքը՝ **Սերգեյ Վարդանյանի**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1981 (-240 էջ):

2 ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս **Արամ Ղանալանյան**, Նվեր պատանի դպրոցականներին, «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1982, հունվարի 18, № 1:

3 **Айрик Мурадян**, Предания наших предков, «Коммунист», ежедневная газета, Ереван, 1982, 26 марта. **Հայրիկ Մուրադյան**, Սիրեք, սովորեք, տարածեք, «Պիոներ», ամսագիր, Երևան, 1982, № 12, էջ 16-17:

Խանգաղյանը⁴, բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանը⁵ և ուրիշներ⁶:

Միլիոնավոր տպաքանակ ունեցող միութենական ռուսերեն մամուլում՝ «**Комсомольская правда**»⁷ թերթում, «**Аврора**»⁸ և տասը լեզվով հրատարակվող «**Советский Союз**»⁹ ամսագրերում գրքի մասին հրապարակումներից հայ դպրոցականների բանահավաքչության մասին տեղեկացան մի շարք երկրներում: Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում լույս տեսնող «**Revue Svetovej Literatúry**» («Համաշխարհային գրականության տեսություն») հանդեսի առաջարկությամբ ընդարձակ հոդվածով անդրադարձանք «**Հրեղեն ձին**» ժողովածուի ստեղծման պատմությանը, հայկական բանահյուսությանը՝ սկսած հնագույն շրջանից, ներկայացրեցինք 10-ից ավելի հարսանեկան, օրորոցային, ողբի երգեր և 55 առած-ասացվածքներ (թարգմանիչ՝ Յարոսլավ Ռեզնիկ)¹⁰:

Իտրիերոյային Միության ղեկավարներ Բրեժնևի և Չեռնենկոյի կառավարման **լճացման** շրջանին **1982 թ. նոյեմբերին** հաջորդեց հսկա երկրի ժողովուրդներին զգաստացնող և ստալինյան բռնատիրության հիշողություններն արթնացնող Անդրոպովի իշխանությունը:

Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայերի ու փակվող հայկական դպրոցների մասին պատմող մեր ուղեգրության մեկ հատվածը՝ «**Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ**» վերնագրով, հենց **1982 թ. նոյեմբերին** զգալի կրճա-

4 Մերո Խանգաղյան, Փրկված մասունքներ, «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երևան, 1982, փետրվարի 19:

5 Ռաֆայել Իշխանյան, Բանահյուսություն, բարբառ, արդիականություն, «Գարուն», ամսագիր, Երևան, 1983, № 1, էջ 92:

6 Ա. Հովհաննիսյան, «Հրեղեն ձին», «Սովետական Հայաստան», օրաթերթ, Երևան, 1982, հունվարի 13: В[алерий] Айдинян, Праздник для души и глаз, «Комсомолец», газета, Ереван, 1982, 4 февраля. Ս. Իսկանդարյան, Մանկության հեքիաթի հրեղեն ձին, «Հայրենիքի ձայն», շաբաթաթերթ, Երևան, 1982, մարտի 3: Նույնի՝ Մանկութեան հեքիաթի հրեղեն ձին, «Պայքար», օրաթերթ, Բոստոն, 1982, մայիս 18: Ռաֆիկ Համբարձումյան, Կարևոր իրագործում, «Ավանգարդ», թերթ, Երևան, 1982, մարտի 7: Վարդերես Գարակեօղեան, «Հրեղեն ձին», «Լրաբեր», շաբաթաթերթ, Լոս Անջելես, 1983, յուլիս 2: Էդուարդ Վիրապյան, Հրեղեն ձիու վերադարձը, «Սովետական գրականություն», ամսագիր, Երևան, 1982, № 6, էջ 127-128: Վարդանուշ Թորոսյան, Հրեղեն ձին, «Սովետական դպրոց», շաբաթաթերթ, Երևան, 1982, հուլիսի 15:

7 М[ери] Юзбашьян, За живою водой, «Комсомольская правда», ежедневная газета, Москва, 1982, 27 июля.

8 Людмила Будашевская, Юные летописцы, «Аврора», журнал, Ленинград, 1981, № 5, с. 126-128:

9 Обо всем, «Советский Союз», ежемесячный журнал, Москва, 1982, № 5 (387), с. 25.

10 Sergej Vardanján, Arménska slovesnost, Preložil Jaroslav Reznik, «Revue Svetovej Literatúry», Bratislava, 1984, № 1, s. 129-143:

տումներով տպագրվեց «Գարուն» ամսագրում¹¹, որն ուներ 51 հազար տպաքանակ: Այն մեծ արձագանք գտավ¹², ԽՍՀՄ տարբեր վայրերում բնակվող հայերից ստացված բազմաթիվ նամակների մի մասը հրատարակվեց ամսագրում, դրանցից մեկի հիման վրա նշանավոր արձակագիր **Մերո Խանզադյանը** պատմվածք գրեց¹³:

Ուղեգրությունն արտատպվեց նաև սփյուռքի մամուլում¹⁴, ինչն այդ ժամանակ բացառիկ երևույթ էր: Վերատպությունների մասին էլ տեղեկանում էինք, եթե այդ թերթերի Հայաստան հասնելուց հետո գրաքննիչները զանգում, հարցնում էին, թե մենք ենք հողվածն արտասահման ուղարկել, ինչո՞ւ ենք գրել «ներքին սփյուռք»:

Ամիսներ անց «Գարունը» տպագրեց նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար **Լյուդվիգ Ղարիբջանյանի** պաշտոնական գրությունը: Մեր ահագանգից հետո Լ. Ղարիբջանյանը դիմել է կառավարություն, Ռուսաստանի լուսավորության, Վրաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարություններ: Որոշվել է Աբխազիայի հայկական դպրոցներն ուսուցիչներով ապահովելու համար այնտեղի շրջանավարտներին Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական ու Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական բուհերում

¹¹ **Մերգեյ Վարդանյան**, Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ, «Գարուն», ամսագիր, Երևան, 1982, №11, էջ 60–73: Նույնը տես «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2012, №5–6, 7–8:

¹² Արձագանքում են «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» հոդվածին, «Գարուն», 1983, № 9, էջ 24–25: Արձագանքում են մեր տպագրածին. «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ», «Գարուն», 1984, №6, էջ 42–43: **Վաչէ Բրուտեան**, Պարբերական ակնարկ խորհրդահայ մամուլի, հոկտեմբեր-դեկտեմբեր, Խորհրդահայ մամուլը 1982ի աշնան (Բ մաս), «Ազդակ», օրաթերթ, Բեյրութ, 1983, յուլիսի 19: Նույնը տես նաև՝ «Ազատ օր», օրաթերթ, Աթենք, 1983, յուլիսի 27, «Հայրենիք», օրաթերթ, Բոստոն, 1983, օգոստոսի 16, **Երկիրը Արտերկրէն** (Յօդուածներու ժողովածո), Երևան, Լուսակն, 2021 (- 392 էջ), էջ 175–178: **Արայ Գալայճեան**, «Պարզունակ թիրիմացութեան պատճառով», «Հիմա բոլորովին մոռացել են իրենց...», «Չկան մանկավարժներ, չկան աշակերտներ», «Պայքար», շաբաթաթերթ, Բոստոն, 1984, նոյեմբերի 17: **Rüdiger Benninghaus**, Zur Herkunft und Identität der Hemşinli // **Ethnic Groups in the Republic of Turkey**, compiled and edited by Peter Alford Andrews with the assistance of Rüdiger Benninghaus, Wiesbaden, Dr. Ludwig Reichert verlag, 1989, pp. 477, 482, 485, 492, 493, 497. **Rüdiger Benninghaus**, Hemşinlilerin Kökeni ve Kimliği (Almancadan çeviren: Manuela Görgü-Ali Turan Görgü), “Folklor/Edebiyat”, dergisi, Ankara, 2003, № 4, cilt 9, sayı 36, s. 174, 177, 179, 182, 183. **Շամիրամ Քեյսյան**, Ամանացորդ սվիրումով (Մերգեյ Վարդանյան) // **Գրական Համշեն**, Աբխազիայի «Սնծովյան այգաբաց» գրական միավորման արևմտախ, Սուխում, 2013 (- 264 էջ), էջ 109, 110:

¹³ **Մերո Խանզադյան**, Հայը, «Գրական թերթ», 1984, սեպտեմբերի 7: Պատմվածքի պլոտին քաղված է մանկավարժ **Վարսենիկ Հայրապետյանի** (Կրասնոդարի երկրամաս, ք. Նովոռոսիյսկ) նամակից, «Գարուն», 1984, № 6, էջ 43:

¹⁴ **Մերգեյ Վարդանյան**, Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ, ուղեգրական նոթեր, «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, 1983, փետրուարի 12–13, 15, 16: **Մերգեյ Վարդանյան**, Ուղեգրական նոթեր՝ «Ներքին» սփյուռքէն. Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ, «Զարթօսք», օրաթերթ, Բեյրութ, 1983, մարտի 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11:

1983–1984 ուստարվանից 13 առարկայի գծով արտամրցութային կարգով տարեկան 30 տեղ հատկացնել¹⁵:

Նախարարի հաջորդ նամակն ավետում էր, որ 1984–1985 ուստարվանից սկսած, Արխագիային տարեկան կտրամադրվի 32, Կրասնոդարի երկրամասին՝ 5–6, Ռոստովի մարզին՝ 2 արտամրցութային տեղ¹⁶:

Մեր ճամփորդական նոթերի մեկ հատվածն էլ՝ «Մայկոյայան խճանկար» վերնագրով, 1983թ. լույս տեսավ «Սովետական գրականություն» ամսագրում¹⁷, որոշ հրապարակումներ էլ եղան այլ թերթերում ու հանդեսներում¹⁸, բայց հետագա տարիներին տարբեր խմբագրություններում և հիմնարկություններում տարվելով աշխատանքով, նոր գրքեր ու հոդվածներ գրելով՝ շուրջ 100 էջանոց ուղեգրությունն այդպես էլ մնաց անտիպ:

Անշուշտ, «ներքին սփյուռքի» հայերի արագընթաց ուժացման և հայկական դպրոցների փակման խնդիրները մոռացության չէինք մատնում, այդ ցավոտ հարցերին նվիրված մեր մյուս հոդվածները և հարցազրույցները ևս շատ մեծ արձագանք էին գտնում, նաև արտատպվում սփյուռքում¹⁹:

- ¹⁵ Լյուդվիգ Ղարիբջանյան, Պաշտոնական պատասխան, «Գարուն», 1983, №9, էջ 25:
- ¹⁶ Արձագանքում են մեր տպագրածին. «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ», «Գարուն», 1984, №6, էջ 42:
- ¹⁷ Ս. Վարդանյան, Մայկոյայան խճանկար, «Սովետական գրականություն», ամսագիր, Երևան, 1983, №5, էջ 88–95: Նույնը տես «Ձայն համշենական», 2012, №9–10:
- ¹⁸ Ս. Վարդանյան, Դյուցազնապատումի մի ճյուղը, «Հայաստանի աշխատավորուհի», ամսագիր, Երևան, 1985, №5, էջ 38, 39, №7, էջ 22–24: Նույնի՝ Հյուսիսի հոդվերը և հայ գաղութի դիմադրական ճիգերը, «Մաշտոց», թերթ, Երևան, 1991, հուլիսի 6: Նույնի՝ Մոլդովկայի «Թոչնոց բույրը», «Ձայն համշենական», 2007, №5–6, տես նաև՝ «Նոյան տապան», շաբաթաթերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 10: Նույնի՝ Մի անձրևոտ օր Տուրիում, «Ձայն համշենական», 2004, №4–5: Նույնի՝ Երկու երգ, «Ձայն համշենական», 2005, №1–2: Նույնի՝ Անհատի ճակատագիրը ժողովրդի ճակատագիրն է, «Ձայն համշենական», 2005, №5–6: Сергей Варданян, Окровавленные семена, Ереван, изд. ВМВ-Принт, 2015 (- 80 стр., 70 фотографий).
- ¹⁹ Ս. Վարդանյան, Մենք պարտավոր ենք, «Սովետական Հայաստան», օրաթերթ, Երևան, 1989, փետրվարի 9: Արտատպությունը տես՝ «Հորիզոն», շաբաթաթերթ, Մոսկվա, 1989, մարտի 6: Հոդվածի արձագանքները տես՝ Անդրադարձ. «Մենք պարտավոր ենք», «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, Երևան, 1989, օգոստոսի 25: Խմբագրական՝ «Այո, պարտավոր ենք», «Հորիզոն», շաբաթաթերթ, Մոսկվա, 1989, մարտի 6: Սերո Խանզադյան, Փակ դռների առաջ. երկրորդ մերժումը, «Հայրենիքի ձայն», շաբաթաթերթ, Երևան, 1989, մայիսի 10: Сергей Варданян, Кто, если не мы? «Комсомолец», газета, Ереван, 1989, 12 сентября. Кто, если не мы? Отклики на статью, «Комсомолец» 1989, 19 октября. Համշենահայեր. անսավ Ներքին սփյուռքի ձայնին (հարցազրույց), «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1990, № 1: Ս. Վարդանյան, Լույսը հեռու լեռներում, «Դպրություն», եռօրյա թերթ, Երևան, 1990, ապրիլի 27: Նույնի՝ Ներքին սփյուռք. մշակույթ և ազգապահպանում, նախամուտք, «Մշակույթ», հանդես, Երևան, 1990, հունվար-փետրվար, №1, էջ 15–19: Նույնի՝ Ներքին սփյուռք. մշակույթ և ազգապահպանում. կրթարաններ, «Մշակույթ», 1990, №2–3, մարտ-հունիս, էջ 66–73: Նույնի՝ Վերհուշ... ներկայի մասին, «Գարուն», 1991, №3, էջ 32–38: Նույնի՝ Ներքին

1984թ. ապրիլին տեղեկացանք, որ Բելորեչենսկի շրջանում (Белореченский район) վերաբնակվածներից ոմանք եկել են Ղրղզստանի Օշի մարզի Կզըլ-Կիյա փոքր քաղաքից: Իսկույն մեկնեցինք Ուզբեկստան՝ Տաշքենդ, այնտեղից էլ՝ Ֆերգանա, հետո Ղրղզստան՝ Կզըլ-Կիյա: Գտանք կրոնավոյա համշենցիներին, նրանցից կարևոր տեղեկություններ ձեռք բերեցինք, նրանց դժվարընկալ բարբառով բանահյուսություն գրառեցինք և ուղևորվեցինք Ղազախստանի Չիմքենդի մարզաքաղաքներից ևս բանարվեստի նմուշներ հավաքելու:

1984թ. հուլիսին այցելեցինք Կրասնոդարի երկրամասի Բելորեչենսկի և Ապշերոնսկի (Апшеронский район) շրջանների այն գյուղերը, որտեղ Կենտրոնական Ասիայից եկած կրոնավոյա համշենցիներ, այդ թվում՝ «բաշ-համշենցիներ» և «քուրդ-համշենցիներ» կային:

Հետաքրքրվողներն այդ ամենի մասին կարող են կարդալ տասնամյակներ անց մեր գրած «**Կորած հայերի հետքերով ճանապարհորդություն Միջին Ասիա. 1984թ.**» ուղեգրության մեջ, և թեմային վերաբերող այլ հրապարակումներում²⁰:

սփյուռք՝ խոհեր և առաջարկություններ, «**Հայ աշխարհ**», թերթ, Երևան, 1990, հոկտեմբերի 8: **Նույնի՝** Ներքին Սփյուռք խոհեր և առաջարկություններ, «**Ասպարեզ**», օրաթերթ, Գլենդեյլ, Քալիֆորնիա, ԱՄՆ, 1991, յունուար 23: **Նույնի՝** Արխագահայ փախստականներ Հայաստանում (Ինչպե՞ս են ապրում, ո՞վ է հոգում նրանց մասին), «**Ազգ**», օրաթերթ, Երևան, 1992, նոյեմբերի 10: **Նույնի՝** Արխագահայեր. մոռացյալ բեկորներ, «**Ազգ**», 1993, մարտի 24: Համշենահայերը միավորվում են (հարցազրույց «**Համշեն**» հայրենակցական միության փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Սերգեյ Վարդանյանի հետ), հարցազրույցը՝ **Սաթիկ Միսակյանի**, «**Երկիր**», շաբաթաթերթ, Երևան, 2004, մայիսի 14–20: Համշենահայերը միաուրում են, հարցազրույց Ս. Վարդանյանի հետ, **Սաթիկ Միսակյան**, «**Ասպարեզ**», Գլենդեյլ, 2004, օգոստոսի 4: **Ս. Վարդանյան**, Դպրոցի ճամփան..., «**Էկոնոմիկա**», եռամսյա հանդես, Երևան, 2006, սեպտեմբեր, №2, էջ 49–53: **Նույնի՝** Ուծացման ճանապարհին (Հայերենի ուսուցումը ՌԴ Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում), «**Չայն համշենական**», 2011, №1–2: **Սերգեյ Վարդանյան**, Արխագահայի հայկական դպրոցների տխուր վիճակագրությունը, «**Նոր Յառաջ**», երկօրյա թերթ, Փարիզ, 2018, յուլիս 21:

²⁰ **Սերգեյ Վարդանյան**, Կորած հայերի հետքերով ճանապարհորդություն Միջին Ասիա. 1984թ., «**Չայն համշենական**», 2016, №№1–2, 3–4, 5–6, 7–8, 9–10: Տե՛ս նաև՝ **Sergio Kniasian**, Deportados al Asia Central en La era staliniana, «**Ararat**», Periódico, Argentina, Buenos Aires, 2007, 20 de Junio. **Ճուլիա Յակոբեան**, Համշենահայեր. պայքար յանուն ինքնուրույն եւ ճանաչման, «**Ազդակ**», Բեյրութ, 2007, մարտ 16: **Ս. Վարդանյան**, Կրոնավոյա համշենահայերի ուսումնասիրման պատմությունից, «**Նորավանք**» գիտակրթական հիմնադրամի «**Տեղեկագիր**», № 22, Երևան, 2008, էջ 20–44: **Նույնի՝** Կրոնավոյա համշենահայեր. փոխադարձ ծանոթություն // «**Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ**», միջազգային գիտագործնական կոնֆերանսի նյութերի ժողովածու, «**21-րդ դար**» (հատուկ թողարկում), «**Նորավանք**» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2012, №2 (42), էջ 91–96: Սույն գրքի գրականության ցանկում տե՛ս նաև հոդվածի ռուսերեն և անգլերեն թարգմանությունների հղումները: **Համո Մոսկոֆեան**, Վաստակաշատ համշենագետը, գիտնականն ու հայրենասերը՝ Սերգեյ Վարդանյան, «**Դիտակ**», հանդես, Բեյրութ, 2011, յուլիս-օգոստոս (№48), էջ 28, տե՛ս նաև էջ 14, 16, 81:

Ղազախստանում, Ուզբեկստանում և Ղրղզստանում եղանք նաև 1987 թ., կրկին համշենահայերից թղթին հանձնեցինք բանարվեստի արժեքավոր օրինակներ:

Ամեն անգամ նրանցից որևէ նյութ գրատելիս մտովի զուգահեռներ էինք անցկացնում քրիստոնյա հայերի բանահյուսական ժառանգությունից մեզ հայտնի նմուշների հետ: Այդպիսի մի շարք ընդհանրություններ կային թե՛ չափածո և թե՛ արձակ ստեղծագործություններում, որոնք կքննարկենք ապագայում, իսկ այս անգամ կանդրադառնանք դրանցից մեկին՝ «Արդէլէցիք՝ ավջի» («Արդալացիները՝ որսորդ») ծիծաղաշարժ մանրապատումին և այլևայլ վայրերի քրիստոնյա հայերից XIX–XX դարերում գրի առնված նրա տպագիր և անտիպ փոփոխակներին:

Ի դեպ, այս մենագրությունը հայ բանագիտության մեջ **մահմեդական և քրիստոնյա** հայերի բանահյուսությունը համեմատելու, ինչպես նաև դիպաշարային (սյուժետային) ընդհանրություններ ունեցող երեքուկես տասնյակից ավելի զվարճալի պատումները մեկ ուսումնասիրության մեջ մեկտեղելու **առաջին փորձն է:**

Թեև աշխատության մեջ բոլոր զավեշտապատումները համառոտ վերապատմում ենք, այնուամենայնիվ գրքի վերջում՝ **«Բնագրեր և թարգմանություններ»** բաժնում, համապատասխան համարակալումով տրվում են դրանց ամբողջական տարբերակները, որպեսզի բանագետներն ու ազգագրագետները, բարբառագետները, մյուս գիտնականները, դասախոսներն ու ուսանողները, ընթերցողները բնագրերին ծանոթանալու համար ստիպված չլինեն դրանք փնտրել գրադարաններում և արխիվներում:

Երգիծապատումները և զանազան հեղինակներից քաղվածքները տպագրվել են առանց կետադրական կամ ուղղագրական միջամտությունների:

Քանի որ մեր ուսումնասիրությունն առենախոսություն չէ և կաշկանդված չէ ծավալով ու որոշ կաղապարներով, ուստի կարևորելով բովանդակությունը՝ երբեմն հրամցվել են քիչ թե՛ շատ ընդարձակ մեջբերումներ, որպեսզի ավելին իմանալ ցանկացողները օգտվեն այդ հնարավորությունից:

Մեր շարադրանքում օգտագործված **անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, սլովակերեն, ռուսերեն և թուրքերեն** պարբերականների անունները, գրքերի, հոդվածների վերնագրերը, քաղվածքները ներկայացվել են բնագրերով և հայերեն զուգահեռ թարգմանությամբ, որովհետև, բնականաբար, ոչ բոլոր ընթերցողներն են տիրապետում այդ լեզուներին:

«Համշեն» տեղանունն ու «համշենցի» անվանումը տարբեր լեզուներում, այլևայլ պատճառներով ունեն իրենց տարատեսակները: Մենք թուրքերենից թարգմանությունների ժամանակ «Հեմշին»-ի և «հեմշինլի»-ի փոխարեն կիրառում ենք «Համշեն» և «համշենցի», սակայն, երբ այլ լեզուներով (անգլերեն,

ֆրանսերեն և այլն) գրքերում և հոդվածներում հեղինակները նախընտրել են օգտագործել թուրքերեն տարբերակները, մենք պահպանել ենք նույնությամբ:

Ընդհանրապես, միշտ աշխատել ենք հարազատ մնալ բնագրերին, որոնք հրատարակել ենք թարգմանությունների հետ կողք-կողքի, որպեսզի որևէ հարցի դեպքում ընթերցողները կարողանան իսկույն համեմատել, ճշտել:

Գրքում, հասկանալի պատճառներով, «զվարճապատում»²¹ եզրույթը պիտի բազմիցս կրկնվեր, ուստի այն փոխարինել ենք հոմանիշներով՝ զվարճալի պատում, զվարճալի մանրապատում, երգիծական մանրապատում, ժողովրդական երգիծապատում, երգիծական մանրավեպ, ծիծաղաշարժ պատում, զավեշտալի պատում, զավեշտապատում:

Ուսումնասիրությունը գրելիս մասնագետներին և ուսանողներին օգնելու նպատակով հնարավորության դեպքում աշխատել ենք որոշ գիտնականների, ասացողների ու բանահավաքների մասին կենսագրական տեղեկություններ ներկայացնել, մանավանդ որ բանագիտական գրականության մեջ և բանահյուսական ժողովածուներում հաճախ քիչ ուշադրություն է դարձվում այդ երախտավորներին, երբեմն էլ նրանք բոլորովին չեն հիշատակվում:

Նշել ենք նաև հեղինակների գիտական կոչումները, շատ անգամ շեշտել հետազոտողների, ասացողների ու բանահավաքների տարիքը, քանի որ նրանց գործն ավելի ճիշտ և անաչառ է արժևորվում, երբ իմացվում է, թե որ հասակում են կատարել:

Օրինակ, շատերի մտքով իսկ չի անցնում, որ մեր ամենաառաջին բանահավաքներից մեկը՝ **Առաքել Բահաթրյանը**, իր հրաշալի գրառումներն արել է ընդամենը **12 տարեկանում**՝ 1860 թ.: Հենց այդ նույն թվականին Թիֆլիսում տպագրվեց **23-ամյա Պերճ Պողոջանի** «Սու և Վարդիթեր» վեպը: Կամ կարդալով հայկական ժողովրդական բառուբանի առաջին հրատարակիչներից մեկի՝ բանահավաք **Տիգրան Նավասարդյանի** ժողոված հեքիաթները՝ ընթերցողները չեն մտածում, որ նա Մայր Աթոռ Սբ Էջմիածնի խստապահանջ «Արարատ» ամսագրում 1881 թվականին իր գրառումները բարբառով լույս ընծայելիս հազիվ **20 տարեկան** էր, իսկ **21-ում** էլ տպագրել է «**Հայ-ժողովրդական հեքիաթներ**» տասհատորյակի առաջին գիրքը:

Երևի ոմանք ծանոթանալով Արևմտյան Հայաստանում՝ Մոկսում, հայերի և քրդերի շրջանում **Հովսեփ Օրբելու** 1911–1912 թթ. կատարած հետազոտություններին, չեն էլ պատկերացնում, որ նման ծանրակշիռ ուսումնասիրությունները գրել է ոչ թե ավելաառն մորուսով ծերունագարդ ակադեմիկոսը, այլ **24–25-ամյա** գիտնականը:

²¹ Ժողովրդական բանավոր երգիծանքի տարատեսակ անվանումների մասին տես **Արմեն Շ. Սարգսյան**, Հայկական անեկդոտների ժողովրդական և գիտական եզրույթները, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2017, №1, էջ 79–92:

Իսկ 1919թ. Պարսկաստանի Նոր Զուղա քաղաքում լույս տեսած **Արամ Երեմյանի «Նոր-Զուղա»** և **«Սպահանի Փերիա գաւառը»** գրքերը կարդացողները հազիվ թե մտածեն, որ ապագա ճանաչված ազգագրագետն ու արվեստաբանն այդ ժամանակ եղել է **21 տարեկան**:

Սույն մենագրության մեջ նմանատիպ փաստերը մատնացույց անելով փորձել ենք կոտրել գիտական գրականության մեջ տասնամյակներ իշխող այն կարծրատիպը, երբ **հեղինակին** հղելիս կամ որևէ մեկին անդրադատնալիս, հաճախ առանց որևէ կենսագրական տվյալ հիշատակելու, նշվում է սոսկ նրա ազգանունն ու անվան միայն սկզբնատառը՝ մոռանալով, որ ինչ էլ որ գրում ենք, ի վերջո, այդ ամենը **մարդկանց** մասին է:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Դարերի ընթացքում մեր ժողովրդին պատուհասած ամենամեծ աղետներից են եղել Հայաստանի և հարևան երկրների հայերի բռնի կրոնափոխությունները: Երևի Հայաստանի ոչ մի նահանգ կամ գավառ զերծ չի մնացել այդ արհավիրքից: Արյունոտ սպանդի հետևանքով կրոնափոխվում էին անհատները, ընտանիքներն ու գերդաստանները: Նրանք այլևս հայ չէին համարվում, այլ՝ **«տաճիկ»**²², **«թուրքացեալ»**²³, **«թուրքացած հայեր, հայ թուրք»**²⁴, **«այլազգ»**²⁵: Իսկ նրանց, ովքեր թեև բռնի կրոնափոխվել էին, բայց պահպանել էին լեզուն, գաղտնաբար նաև՝ քրիստոնեությունը, անվանում էին **«կէսակէս»**²⁶ կամ **«կէս-կէս»**²⁷:

²² **Հայր Ղուկաս Վարդապետ Ինճիճեան**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամէրիկոյ: Մասն Առաջին, Ասիա, Հատոր Ա, ՚ի Վէնէտիկ, ՚ի Վանս արքոյն Ղազարու, յամի 1806 (–462 էջ), էջ 396, 397: **Միմէոն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք, ուսումնասիրեց եւ հրատարակեց **Հ. Ներսէս Վ. Ակիսեան**, Մխիթարեան ուխտէ, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1936 (–535 էջ), էջ 306:

²³ **Սերգեյ Վարդանյան**, Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին, **«Պատմա-քանասիրական հանդես»**, 2004, №3, էջ 168:

²⁴ **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր (Տրապիզոնի հայ-մահմեդական գիւղերն եւ նրանց ասանդութիւնները), **«Արարատ»**, ամսագիր, Վաղարշապատ, 1895, №Ը, օգոստոս, էջ 296:

²⁵ **Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ**, հատոր Գ., Մաշտոց-գիրք ձեռնադրութեանց, Յօրինեցին **Հ. Բարսեղ Սարգիսեան** եւ **Հ. Գրիգոր Սարգսեան**, Մխիթարեան ուխտէ, Վենետիկ, Ս. Ղազար, 1966 (–380 էջ), սյուն 5: Այլազգ նշանակել է նաև «այլ ՚ի քրիստոնէից» (Ոսկելիոր), տե՛ս **Նոր բառգիրք հայկազեան լեզուի**, հ. առաջին, ի Վենետիկ, 1836 (–1140 էջ), էջ 85:

²⁶ **Միմէոն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք, Վիեննա, 1936, էջ 306:

²⁷ **Հայր Ղուկաս վրդ. Ինճիճեան**. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն

Ուղեգիր, գրիչ և բանաստեղծ **Սիմեոն դպիր Լեհացին** 24 տարեկանում՝ 1608թ.²⁸, Լվովից Երուսաղեմ ուխտի գնալուց հետո՝ վերադարձին՝ 1616թ.²⁹, Երուսաղեմում միանում է Սսի Հովհաննես կաթողիկոսի գլխավորությամբ Հալեպ ուղևորվող խմբին, որի մասին գրում է. «Էին ընդ մեզ եւ **Տաճիկքն**, որ **Կէսակէս** կոչին. սոքա եւս ուխտ եկին յԵրուսաղեմ մեծաւ հաւատով. Հայոց լեզու խօսին, **թուրքնակ** չի գիտեն. եւ են երկրէն Հոռոմկլու...»³⁰ («Մեզ հետ կային և տաճիկներ, որ կեսուսակես են կոչվում. սրանք ևս ուխտ եկան Երուսաղեմ մեծ հավատով: Խոսում են հայոց լեզվով, թրքերեն չգիտեն, և Հոռոմկլայի երկրից են...»)³¹:

Կրոնափոխ համշենահայերին անդրադարձած հայերեն ամենահին գրավոր սկզբնաղբյուրը, որին մեզ հաջողվեց ծանոթանալ 1992թ. Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, **Հայր Պողոս վարդապետ Մեհերյանի** (1729, Մուշ, գ. Առինճ–1814, Վենետիկ) կենսապատումն է³², որում 82-ամյա հեղինակը

առաջին, հատոր Ա, Վենետիկ, 1806, էջ 396: **Հ. Մինաս Վարդապետ Բժշկեան**, Պատմութիւն Պոնտոսի, որ է Մեա ծով, ՚ի Վենետիկ, ՚ի վանս Սրբոյ Ղազարո, 1819 (–168 էջ + քարտեզ), էջ 97:

28 **Սիմեոն դպիր Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք, Վիեննա, 1936, էջ 3, 4:

29 **Սիմեոն դպիր Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք, Վիեննա, 1936, էջ ԻԴ:

30 **Սիմեոն դպիր Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք, Վիեննա, 1936, էջ 306:

31 **Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն**, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Արշակ Մաղոյանի**, Երևան, «Նաիրի» հրատ., 1997 (–252 էջ), էջ 176:

32 **Պատմութիւն վարուց Տեառն Հ. Պողոս վարդապետի Մեհերեան, շարագրեալ յիրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարո**, Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. №560: Հ. Պողոս վրդ. Մեհերյանի և նրա հուշագրության մասին մեր հրապարակումները տես **Ս. Վարդանյան**, Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, «Իրան-Նամէ», արեւելագիտական հանդէս, Երևան, 1998, №1–2–3, էջ 2: Հուշապատումի «Իրան-Նամէ»-ում տպագրված մի հատվածի անգլերեն վերաշարադրանքը և թարգմանությունը տես **Hovann H. Simonian**, *Hemshin from Islamicization to the end of the nineteenth century* // **The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**, Edited by Hovann H. Simonian, London and New York, Routledge Taylor & Francis Group, 2007 (–472 p.), pp. 71, 95. **Ս. Վարդանյան**, Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին, «Պատմա-բանասիրական հանդէս», 2004, №3, էջ 159–170: **Նույնի՝** Մահմեդական համշենահայերի մասին 1776թ. վերաբերող մի կարևոր վկայություն // **Համշեն եւ համշենահայություն (գիտաժողովի նիւթեր)**, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեսնամյեան, Համագգային Վահե Մեթեան տպարան, 2007 (–296 էջ), էջ 269–277: Տես նաև ռուսերեն՝ **С. Варданян**, Свидетельство 1776 г. об исламизированных армянах Амшена, «**Еркрамас**», г. Краснодар, 2005, октябрь, №10 (128), с. 3 **Նույնի՝** Одно важное свидетельство 1776 года об Амшенских армянах-мусульманах, «**Дзайн амшенакан**» («**Голос амшенский**»), еженесячная газета, Ереван, 2007, март-апрель, №3-4. Տես նաև թուրքերեն՝ **Sergey Vardanyan**, 1776 yılında Müslüman Hemşinli Ermeniler hakkındaki önemli bir şehadetname // **Hemşin ve Hemşinli Ermeniler (konferans makaleleri)**, Ermenistan Cum-

հիշում է նաև 35 տարի առաջ՝ 1776թ., Համշենի Խևակ³³ գյուղ իր այցելության և կրոնափոխ համշենցիների հետ հանդիպման մասին:

Ներկայացնում ենք այդ հատվածի գրաբարից գրական արևելահայերեն մեր թարգմանությունը. «Եվ լեռից իջնելով՝ գնացինք Խևակ և երբ մտանք գյուղ, գյուղի տղամարդիկ և կանայք, որոնք թուրքացել էին, աջից և ձախից համբուրում էին իմ աջը, ուր իջանեցինք նորընծա Սերոբեի տանը, որ ուներ հորեղբայրներ, և բարեկեցիկ էին: Առաջինը տանը սեղան դրեցի և պատարագեցի ես, Տեր Պետրոսը և Տեր Ավետիսը, և տուն էին գալիս տաճկացածները՝ պատարագը տեսնելու: Նրանց հարցրեցի, թե՛ Կամ այստեղ եկեղեցի, ասացին՝ Այո՛, կա՛, բայց ավերակ է: Եվ երբ տեսա եկեղեցին դյուրին էր նորոգել, իսկոյն նորոգեցի, մաքրեցի հինգ-վեց հոգով, և ապա սեղանի անշարժ քարը լվացի ջրով և գինով, քանզի օծված էր և դուռը փակ էր, ոչ ոք չէր մտել կամ ելել, այդ պատճառով օրհնեցի, և երեք քահանաներս պատարագեցինք: Եվ տեսն դու, որ ուրացյալները պատարագի ժամանակ լցրին եկեղեցին և չկարողացա գավազանով արտաքսել: Որովհետև երկնչում էի, թե գուցե մատնեն ինձ այլազգիներին, թե այս վարդապետը եկել է իսկակցիներին հայացնելու: ...Իսկ պատարագից հետո, ըստ ազգիս սովորության, մենք շուրջատով և խաչով ելնելով եկեղեցուց՝ օրհնելու ուղղափառների գերեզմանները, և գյուղի ուրացյալները կուտակվեցին մեր շուրջը և դրեցին կերակուր իրենց հայրերի գերեզմանների վրա, և աղաչում էին ինձ սա

huriyeti Bilimler Ulusal Akademisi Tarih Enstitüsü, Yerevan, «Name», 2007 (–306 s.), s. 278–286. Վերոնշյալ թուրքերեն թարգմանության մեկ հատվածի արտատպությունը տես **Cemil Aksu**, Nereden Geldiler, Nereye Giderler? Hemşinliler Kimdir?, “**Toplumsal Tarih**”, dergisi, Istanbul, 2013, Ağustos, №236, s. 40–47. **Նույնի՝** Artvin Ermenilerine Ne Oldu?, “**Tarih ve Toplum-Yeni Yaklaşımlar**”, Istanbul, 2013, Yaz, Sayı: 16 (256), s. 93, 100. Տես նաև անգլերեն՝ **Sergey Vardanyan**, An Important Source of Information about Islamized Armenians, “**Armenian Folia Anglistika**”, International Journal of English studies, Yerevan, 2009, №1–2 (6), pp. 251–261: **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (Նյութեր և ուսումնասիրություններ), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (–428 էջ + 12 էջ սև-սպիտակ և 12 էջ գունավոր լուսանկարներով ներդիրներ), էջ 406–422: Կենսապատումի մեր հրատարակած հատվածը վերապատմել են թուրքագետներ, բ. գ. թ. **Ռ. Մելքոնյանը** և պ. գ. թ. **Մ. Աբրահամյանը**, տես **Ռուբեն Մելքոնյան**, Մեր Աբրահամյան, Օսմանյան Կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, ՎՄԿ-Պրինտ հրատ., 2015 (–240 էջ), էջ 52, 53, ինչպես նաև բ.գ.թ., թուրքագետ **Լ. Սահակյանը**, տես **Լուսինե Սահակյան**, Համշենը հայկական ձեռագրերում, Երևան, ԵՊՀ, 2019 (–364 էջ + 132 էջ ներդիր և քարտեզ), էջ 247–249, **Лусине Саакян**, Амшен в армянских рукописях, ЕГУ Институт арменоведческих исследований, Ереван, изд. «Лусакн», 2022 (– 308 с. + приложения (80 с.) + карта), с. 197-199:

³³ 2012թ. երզրումցի քուրդ **Նուրի Չիչեքի** ուղեկցությամբ, որը ծանոթ էր **Արդվինի** նահանգի **Յուսուֆեյի** գավառին, թուրքագետ **Լուսինե Սահակյանի** հետ մեծ դժվարությամբ հասանք երկնամերձ **Խևակ** (այժմ՝ Յայլալար, Yaylalar) գյուղ, որի **Քորամեթ**, **Քյորահմեթ** (Koramet, Kōrahmet) թաղամասում մինչև XX դ. կեսերը բնակվել է քրիստոնյա հայերի մի քանի ընտանիք:

ու նա, թե՛ Արի՛ և օրհնի՛ մեր նախնիների գերեզմանները, քանզի քրիստոնյաներ էին: Իսկ ումանք ողբում էին իրենց անհավատությունը և խնդրում էին խոստովանել, մանավանդ ծերերը: Բայց մի քանի պառավ կանայք չէին ուրացել, որոնց հավատի հարկավոր տարրերը ուսուցանեցի և թողություն տվեցի և հանձնարարեցի նորընծա Տեր Սերոբեին հոգալ նրանց»³⁴:

Հայր Պողոսը Համշեն գնալուց առաջ Կարինում մի շրջիկ մանրավաճառ (փերեզակ) տիրացուի հանձնարարում է, «որ գաւառները շրջած ժամանակ եթէ ձեռագիրներու հանդիպի, գնէ, զանոնք իր հաշուին եւ արժէքն ընդունի. սա Համշէն գաւառին մէջ յաւուր կիրակամտի այլազգոյ մը տունը իջեւանած պահուն, որ ծագումով հայ, 60 տարի յառաջ թրքաց բռնութենէն ստիպուած իսլամութիւն ընդունած էր, կը տեսնէ որ անդին կանթեղ մը կը վառի՝ կաւեղէն համբարի մը վրայ. կը հետաքրքրուի հարցնել եւ իմանալ եղելութեան պատճառը. եւ կ'ըսուի իրեն, թէ ի պատիւ Իսճիլին (Աւետարան կարծելով) զոր իրենց նախնիքներէն ժառանգած են, կը վառեն այդ կանթեղը ամէն շաբաթ իրիկուն: Տեսնելով տիրացու փերեզակը սոյն պատկառելի մատենանը՝ կ'ուզէ գնել. բայց նոքա չեն ուզեր վաճառել, ըսելով որ իրենց տան բերքէթն է (այն է՝ օրհնութիւնն): Շատ թախսանձելէն վերջ կը զիջանին ծախել 60 փարայի. եւ նա կը տանի ի Կարին առ յիշեալ վարդապետը, եւ գինէն ու ճանապարհի ծախքէն դուրս աւելի բան չ'ուզեր առնուլ...»³⁵:

Համշենում ձեռք բերված այս հայերեն ամենահին **Մաշտոցը** թվագրվում է շուրջ 960 թվականով³⁶, այն Տրապիզոնից ուղարկվում է Կ. Պոլիս, այնտեղից էլ 1776 թ. մայիսին հասնում Վենետիկի Ս. Ղազար կղզի³⁷:

Մխիթարյան միաբաններից **Հայր Ղուկաս վրդ. Իսճիճյանը** (1758, Կ. Պոլիս–1833, Վենետիկ), որը Համշենի բռնի կրոնափոխված հայերին «**տաճիկք**» և «**կէսկէս**» է անվանում, 1806 թ. գրում է. «Բնակիչք երկրին յառաջագոյն հայ էին, այլ ՚ի յելս ԺԷ դարուն և ՚ի սկիզբն ԺԸ-երրորդին՝ առհասարակ հանդերձ ամենայն շրջակայ գիւղօրէիք դարձան ՚ի տաճկութիւն սակս բռնութեան հարկա-

³⁴ Տպագրված հատվածների գրաբար բնագիրը և արևելահայերեն մեր թարգմանությունը տես **Սերգեյ Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանասիրությունը և երգարվեստը, Երևան, 2009, էջ 419–421, 424, 425:

³⁵ **Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ**, հատոր Գ., Մաշտոց-գիրք ձեռնադրութեանց, Յօրինեցին **Հ. Բարսեղ Սարգիսեան** եւ **Հ. Գրիգոր Սարգսեան**, Մխիթարեան ուխտէն, Վենետիկ, Ս. Ղազար, 1966 (–380 էջ), սյուն 4, 5:

³⁶ **Մայր Մաշտոց**, հատոր Ա., Գիրք Ա. Ըստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատենի. Բնագրական եւ կանոնացանկային յաւելումովք, Աշխատասիրութեամբ՝ **Գէորգ Տէր-Վարդանեանի**, Ս. Էջմիածին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2012 (–920 էջ + 16 էջ ներդիր), էջ 57:

³⁷ **Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ**, հատոր Դ., Շարակնոց, ճաշոց, ժամագիրք, խորհրդատետր, մանրուսմունք, կցուրդք, Յօրինեց **Հ. Սահակ վրդ. Ճեմնեմեան**, Մխիթարեան ուխտէն, Վենետիկ, Ս. Ղազար, 1993 (–686 էջ), էջ ԺԹ:

պահանջութեան, բայց գտանին տակաին 'ի նոսա և քրիստոնեայք, յորոց գիւղօրէս կանգուն կան տակաին եկեղեցի իւրեանց 'ի վաղուց մնացեալ, այլ չունին երէց 'ի հովուել, միայն քանի մի անգամ յամին գայ առ նոսա երէց յեվողիւս³⁸ գեղջէ: Իսկ **տաճիկք** խօսին մինչև ցայժմ հայերէն, 'ի գործ ածեն 'ի գիւղօրէս ինչ անուանս Կնքահայր եւ Կնքամայր, պահեն պահս, և զայլ ծէսս և օրէսս քրիստոնէական հաւատոց, յաճախեն յեկեղեցիս և այլն. ոմանք **կէսկէս** են հաւատովք, արտաքրուստ միայն ցուցանելով զտաճկութիւն...»³⁹:

1817–1819 թթ. Սև ծովի առափնյակով ճանապարհորդելիս մեկ ուրիշ Մխիթարյան միաբան՝ **Հ. Մինաս վրդ. Բժշկյանը** (1777, Տրապիզոն – 1861, Վենետիկ) ևս հանդիպել է կրոնափոխ համշենահայերի. «Համշէնցիք **կէս-կէս** են. շատը դարձած են. բայց քրիստոնէութեան սովորութիւնը կը պահեն ժամոց և ողորմութիւնը պակաս չեն ընէր. գրեթէ ամէնքը վարդավատին և վերափոխման կերթան եկեղեցին մոմ կը վառեն և մատաղ կընեն իրենց պապերուն հոգուն համար. բոլորը հայերէն կը խօսին: Ասոնց մէկ մասը Խոռոշունիի և Սիւրմէնէ գնացին. խոռոշունիի գնացողները քրիստոնեայ մնացին»⁴⁰:

«**Խոռոշունիի** աւան մօտ է Չարշանպայի. բնակիչներն են հայ Համշէնու եկած. և ամէնքը զինոր գրված են որդւոց որդի. և ունին զօրապետ հայ իշխան, որ զիրենք կը կառավարէ. մարդէ ահ չունին. միայն Տէրէպէկիին⁴¹ հետ պատերազմ կերթան. և զօրատր մարդիկ են»⁴²:

Իսկ Տրապիզոն և Ռիզե քաղաքների միջև գտնվող Սյուրմենեի (Քարա դերե, Կարա դերե, Սև գետ) գավառակի հայերի մասին նա վկայում է. «Սիւրմենեի... հայերը համշէնու եկած են. մինչև հիմա հայերէն է իրենց մականունը և լեզուն. կան ծերեր որ գիտեն քրիստոնէութիւն, կը պատուն խաչը, և ծածուկ ողորմութիւն կուտան ժամերուն: Վերը քանի մի տուն հայ քրիստոնեայ կայ: Հասարակօրէն վաթսունվեց գեղ կայ կըսեն հոս»⁴³:

³⁸ **Յեվողիւս** – նկատի ունի Եղնովիտ, Էլկիթ, այժմ՝ Թուրքիայի Ռիզեի նահանգի Չամլը-հենշինի գավառի Յայլաքեոյ Yaylaköy գյուղը, որի մոտ էր գտնվում նշանավոր Խաչիկ հոր վանքը, տե՛ս **Լուսինե Սահակյան**, Եղնովիտ բնակավայրի պատմությունը և տեղանվան ստուգաբանությունը, «**Լրաբեր հասարակական գիտությունների**», 2012, № 2–3, էջ 305–315: Համշենի պատմության, վանքերի և ընդօրինակված ձեռագրերի մասին տե՛ս **Նույնի՝** Համշենը հայկական ձեռագրերում, 2019: **Л. Саакян**, Амшен в армянских рукописях, 2022: Հայկական սրբավայրերի հետքերը տեսնելու նպատակով, թուրքագետ, ր. գ. թ. **Լուսինե Սահակյանի**, ստամբուլաբնակ համշենցի երգիչ **Հիքմեթ Աքիչեքի** հետ 2011 թ. եղել ենք **Եղնովիտ** գյուղում:

³⁹ **Հայր Ղուկաս վրդ. Ինճիճեան**. Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, մասն առացին, հատոր Ա, Վենետիկ, 1806, էջ 396: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

⁴⁰ **Հ. Մինաս Վարդապետ Բժշկեան**, Պատմություն Պոնտոսի, որ է Սեալ ծով, 1819, էջ 97: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

⁴¹ Տէրէպէկ (թուրք.՝ derebeyi) – դերեբեյ, ձորապետ, ավատատեր:

⁴² **Հ. Մինաս Վարդապետ Բժշկեան**, Պատմություն Պոնտոսի, որ է Սեալ ծով, 1819, էջ 49:

⁴³ **Հ. Մինաս Վարդապետ Բժշկեան**, Պատմություն Պոնտոսի, որ է Սեալ ծով, 1819, էջ 92, 93:

Հ. Մինասս վրդ. Բժշկյանից մտո չորս տասնամյակ անց՝ 1857 թ., Կ. Պոլսում տպագրվում է Աբել վրդ. Մխիթարյանի «**Վէպ գաղթականության հայոց Տրապիզոնու**»⁴⁴ ոչ մեծ աշխատությունը: Քանի որ հայ իրականության մեջ այն առաջին գիրքն է, որն ամբողջությամբ նվիրված է Տրապիզոնի, մասամբ Ճանիկի (Մամսոն) գավառի Չարշամբայի, Ունիեի, Ֆաթայի, Օրդուի, Կերասոնի և Թրիպոլիի հայերի թվաքանակին, զբաղմունքին, Հայ Առաքելական, Հայ Կաթողիկե և Հայ Բողոքական եկեղեցիների կառուցմանը, հոգևորականներին, հայկական դպրոցներին, նաև կրոնավիճակի համաձայնեցմանը, ուստի, գոնե համառոտ ներկայացնենք հեղինակին:

Նա 1816 թ. ծնվել է Վաղարշապատում, որտեղ էլ մահացել է 1876 թ.⁴⁵: 1832 թ. մտել է «ի վանականություն Ս. Էջմիածնի»⁴⁶: 21–24 տարեկանում՝ 1837–1840 թթ., ինչպես ինքն է նշում, օրինակ ունենալով Հ. Մինասս վրդ. Բժշկյանի «**Ճանապարհորդություն ՚ի Լեհաստան**»⁴⁷ աշխատությունը՝ շրջագայել է Բեսարաբիայում, Ղրիմում և Նոր-Նախիջևանում, հավաքել հայերի մասին կարևոր տեղեկություններ⁴⁸: Այցելել է Կ. Պոլիս, Զմյուռնիա, Եգիպտոս՝ Ալեքսանդրիա և Կահիրե, 1854 ին՝ Փարիզ, և ուր էլ որ գնացել է, գրել է ուղեգրություններ, հոդվածներ, գրքեր, որոնցից մեկն էլ վերոնշյալ «**Վէպ գաղթականության հայոց Տրապիզոնու**» ու-

⁴⁴ **Աբել վարդապետ Մխիթարեանց**, Վէպ գաղթականության հայոց Տրապիզոնու, Կոստանդնուպոլիս, Ի տպարանի Մասիս լրագրոյ, 1857 (–163 էջ):

⁴⁵ **Աբել Արքեպիսկոպոս Մխիթարյան**, Երկերի ժողովածու, հրատարակության պատրաստեց **Եգնիկ Արք. Պետրոսյանը**, «Արարատ»-ի ժառանգությունը – Ա., Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2009 (–416 էջ), էջ 5, 6, 14: Աբել վրդ. Մխիթարյանի ծննդյան և մահվան թվականները մի քանի հանրագիտարանների համապատասխան հոդվածներում նշված են 1804–1873 թթ., տե՛ս **Ա. Տեր-Ստեփանյան**, «Մխիթարյան Աբել» // **ՀՍՀ**, հ. 7, Երևան, 1981, էջ 634: «Մխիթարյան Աբել» // **ՀՀՀ**, հ. 3, Երևան, 1999, էջ 736, 737: «Մխիթարյան Աբել» // **Ով ով է. կենսագրական հանրագիտարան**, հ. 2, Երևան, 2007 (–740 էջ), էջ 137: «Մխիթարյան Աբել» // **Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան**, Երևան, 2015 (–1120 էջ), էջ 751, 752: «Մխիթարյան Աբել» // **Հանրագիտական բառարան**, հ. 2, Երևան, 2018 (–1144 էջ), էջ 398: Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում գտնվող տապանաքարի վրա փորագրված է «քաջ պատմաբանի եւ հնագիտի Տեառն Աբելի Արքեպիսկոպոսի» միայն մահվան թվականը՝ 1876, տե՛ս **Արսեն Հարությունյան**, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2016 (–548 էջ + 5 ներդիր), էջ 228:

⁴⁶ **Աբել Արքեպիսկոպոս Մխիթարյան**, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 6:

⁴⁷ **Հ. Մինասս Վարդապետ Բժշկեան**, Ճանապարհորդություն ՚ի Լեհաստան, ՚ի Վենետիկ, ՚ի վանս Սրբոյ Ղազարու, 1830 (–424 էջ):

⁴⁸ **Աբել Վարդապետ Մխիթարեանց**, Ստորագրություն քաղաքաց ՚ի նահանգսն Բեսարաբիոյ, Ղրիմոյ և Նոր-Նախիջևանոյ, յորս Հայք գրութեանը Աբել վարդապետի Մխիթարեանց ՚ի ճանապարհորդութեան իւրում յանս Տեառն 1837, 1838, 1839 և 1840, «**Մեղու Հայաստանի**», շաբաթաթերթ, Թիֆլիզ, 1859, հոկտեմբերի 24, № 43, էջ 342, 343, հոկտեմբերի 31, № 44, էջ 350, 351, նոյեմբերի 7, № 45, էջ 358–360, դեկտեմբերի 5, № 49, էջ 392, դեկտեմբերի 12, № 50, էջ 399, 400:

սումնասիրությունն է, որը շարադրել է 1855–1857 թթ. Տրապիզոնում հովվական ծառայության ընթացքում⁴⁹:

Խելացի, եռանդուն և հայրենասեր հոգևորականի գործունեության մասին Կ. Պոլսի «Մասիս» շաբաթաթերթը 1856 թ. գրում է. «Տրապիզոնի ուսումնասեր ժողովուրդը՝ նոյն վիճակին բարեխնամ առաջնորդ Գերապատի Ս. Մեսրոպ ծայրագոյն վարդապետի փոխանորդ Արժանապատի Ս. Աբել գիտնական վարդապետին յորդորանօքը՝ իրենց արու զուսկաց դպրոցը բարեկարգելէն եւ աղջկանց դպրոց մըն ալ բանալէն ետեւ, այս օրերս նոր ընկերութիւն մըն ալ հաստատել են Ուսումնասիրաց ընկերութիւն անունով: Այս ընկերութեան նպատակն է՝ ուսման սէրը տարածելու համար բաժանորդութեամբ դրամագլուխ մը պատրաստել, եւ ազգերնուս մէջ գտնըված կրօնական, բարոյական եւ հմտական գիրքերը տետրակներն ու լրագիրները գնելով վերձանութեան սենեակ մը բանալ: Արդէն այս սենեակը բացված է, եւ իննսունի չափ անձինք ընկեր գրված են: Ասոնց մէջ քանի մը ազգասէր հռոմէադասանք ալ կան»⁵⁰:

«Վերձանութեան սենեակ»-ը ընթերցարանն է, քանի որ գրաբարում «վերձանութիւն» նշանակել է «ընթերցողութիւն, ընթերցումն, կարդացումն»⁵¹:

Նա «1857 թ. ծրագրում է նաև Տրապիզոնում հիմնել Հայկական տպարան»⁵²: Սակայն նույն թվականի վերջին մեկնում է Կ. Պոլիս, որտեղ «Մասիս» թերթի տպարանում հրատարակում է իր «Վեպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու» գիրքը:

Հաջորդ տարվա սկզբին նրան Ղրիմում՝ Թեոդոսիայում, սիրով ընդունում է Գաբրիել ծ. վրդ. Այվազովսկին⁵³:

Աբել արք. Մխիթարյանը, «Ատրպատական աշխարհի առաջնորդական ծանր պարտատրոյթիւններն առած», 1860 թ. փետրվարին Մայր Աթոռից ուղևորվում է «ի Դարեժ»⁵⁴:

Բաֆֆին իր «Խամսայի մեղիքությունները (1600–1827)» (Թիֆլիս, 1882) գրքում գրում է. «Մի ժամանակ Պարսկաստանի հայոց թեմական առաջնորդ»⁵⁵

⁴⁹ Աբել Արքեպիսկոպոս Մխիթարյան, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 10, 11:

⁵⁰ «Ազգային» բաժնի լուրերից, «Մասիս», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1856, նոյեմբերի 28, թիւ 253, էջ 2: Նույն թեմայով տես նաև Աբել վարդապետ Մխիթարեանց, Վեպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու, էջ 58–63:

⁵¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր երկրորդ, 'ի Վենետիկ, 'ի տպարանի սրբոյն Ղազարու, 1837 (–1068 էջ), էջ 813:

⁵² Աբել Արքեպիսկոպոս Մխիթարյան, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 12:

⁵³ Աբել Արքեպիսկոպոս Մխիթարյան, Երկերի ժողովածու, 2009, էջ 12, 13:

⁵⁴ Աբել Արքեպիսկոպոս Ատրպատականի, Ճանապարհորդութիւն ի Դարեժ, «Կռունկ Հայոց աշխարհին», ամսագիր, Թիֆլիս, 1861, թիւ Ը, օգոստոս, էջ 627:

⁵⁵ Աբել արք. Մխիթարյանը Ատրպատականի հայոց հոգևոր առաջնորդ է եղել 1860–1861 թթ. և Դավրիժում ծանոթացել Բաֆֆու հետ, տես Ավագ Ավթանդիլյան, Պատկերներ Բաֆֆիի կյանքից // Բաֆֆին ժամանակակիցների հուշերում (ժողովածու), բնագիրը

լինելով, մի ամբողջ ձևեռ ապրում էր նա իմ տան մեջ, շատ անգամ գիշերները կարդում էր ինձ իր հետաքրքիր պատմությունը»⁵⁶:

Արել արք. Մխիթարյանը 1868թ. եղել է «**Արարատ**» ամսագրի առաջին խմբագիրը⁵⁷: Նա ինը գիրք է բազմաթիվ հոդվածներ է հեղինակել:

Նրա մահից հետո Բաֆֆին գալիս է Ս. Էջմիածին, որ ծանոթանա թողած անտիպ ժառանգությանը: Այդ մասին «**Խամսայի մեկիքություններում**» գրում է. «Միայն նա, Էջմիածնում երկար ժամանակներ ապրած լինելով, այդ վանքի բոլոր գաղտնիքներին տեղյակ լինելով, կարող էր գրել մի այդպիսի պատմություն, որը իսկապես Չամչյանի շարունակությունը կարելի էր համարել: Բայց ո՞ր մնաց նրա աշխատությունը. ինչպես հալածվեցավ հեղինակը, այնպես էլ հալածվեցավ նրա գիրքը... Այդ բազմարդյուն և բազմաշխատ գրողին թույլ չտվեցին մինչև անգամ իր հոգին ավանդել Էջմիածնի պարիսպների մեջ: Նա քաղցածությունից մեռավ իր ծառայի տանը, դառն չքավորության մեջ: Իսկ նրա պատմության գիրքը և ուրիշ շատ անտիպ մնացած աշխատությունները մի քանի հարյուր ռուբլու կաշառքով անցան մեկի ձեռքը, ուր այժմ կամ մոխիր են դարձել, կամ երբեք դուրս բերելու հնար չկա...»

...Մի վանքում, ուր մի կաթողիկոս իր նախորդների հիշատակը ոչնչացնելու համար փութերով այրել է տալիս նրանց ժամանակներից մնացած պաշտոնական թղթերը, – այլևս ի՞նչ կարելի է գտնել արխիվում: Իսկ այդ բարբարոսությունը կատարվել է մի քանի կաթողիկոսների փոխվելու ժամանակներում»⁵⁸:

Ինչպես նշել ենք, **Արել վրդ. Մխիթարյանը** «Վեպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու» գրքում հիշատակում է նաև կրոնափոխ համշենահայերին. «...1765 էն մինչև 1772 թուականները՝ Տրապիզոնի քաղաքական խաղաղութիւնը կը խոտովի եւ ժողովուրդը տակնուվրայ կըլլայ Տէրէպէկներու պատերազմաց երեսէն...»:

...Այս պատճառաւ բոլոր քրիստոնեայներն ալ գրեթէ ցրուեացան Տրապիզոնի մէջէն. ոմանք անցան Ղրրիմ, ոմանք Պօլիս, եւ ոմանք Ճանիկները. աս հալածանաց երեսէն Հայոց եկեղեցիներն ալ Ս. Օգսէնտ, Չարիսափան եւ Ս. Յովհաննէս ամայի մնացին:

Ազգերնուս ան հալածական բաժինը որ Ճանիկ անցան եւ Ղուրշնուլու Տէրէրսուած գեղերը բնակեցան, երեւելի դէպք մը թողին յետագայից ՚ի նիւթ պատմութեան:

պատրաստեց և ծանոթագրեց Խ. Ե. Սամվելյանը, ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986 (–358 էջ), էջ 122–127, 312:

⁵⁶ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, Ուղեգրություններ, պատմական երկեր, իններորդ հատոր, հատորը կազմեց և ծանոթագրեց Խ. Սամվելյանը, ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987 (–704 էջ), էջ 622:

⁵⁷ **Արել Արքեպիսկոպոս Մխիթարյան**, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 13:

⁵⁸ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, իններորդ հատոր, էջ 622:

Այս ժամանակի Տերէպէկները ՚ի Տրապիզոն, որոց մէկն էր Մոմոշ անուն, Սիրմէնէ եղած հայոց ու հռոմոց տունները կայրեն եւ զիրենք կը տաճկըցընեն. Աս տաճկըցողները կերթան Ճանիկները, Խուրշունլու Տերէ, Պաֆրայ եւ ուրիշ տեղեր:

Ճանիկու Բաթալ անունով բղեշխը ինչ ժամանակ մահապարտ կը դատուի արքունի դռնէն, կը փախչի Մոսկովի մէջ Սանկտպետրբուրգ մայրաքաղաքը. անտեղ Արդութեանց Յովսէփի արք եպիսկոպոսէն կը մեծարուի. եւ բաւական մարդասիրութիւն տեսնելով անկէ, անկէ կը խոստանայ որ ինքը դարձած ատեն՝ Ճանիկու մէջ նոր տաճկցած հայերուն ազատութիւն տայ քրիստոնէութիւնը պաշտելու, զորն որ մէջերնին ծածուկ կը պահեն եղեր:

Իրան այս խոհական բղեշխը երբ ազատութիւն կը գտնայ եւ վերստին Ճանիկու բղեշխութիւնը կ'առնու, անատեն հայոց արք եպիսկոպոսին մարդասիրութեան փոխարէնը հատուցանելու մտօք հրաման կուտայ տաճկացած հայերուն՝ որ քրիստոնէութիւնը յայտնի եւ համարձակ պաշտեն. եւ ահա ներկայ Խուրշունլուի հայերը անոնց սերունդն են, բարեյիշատակ բղեշխին ազատասիրութեան ժառանգները, եւ անոր հաւատարմութեան անջնջելի յիշատակը զոր խոստացեր էր Յովսէփի արք եպիսկոպոսին Ռուսաստանի»⁵⁹:

Հովսէփ արք. Արդությանը (1743, Սանահին–1801, Թիֆլիս) 1773-ից Ռուսահայոց թեմի առաջնորդն էր, Ռուսաստանի գերիշխանության ներքո հայկական պետականության վերականգնման նպատակով մեծ գործունեություն էր ծավալել, լավ հարաբերություններ ուներ Եկատերինա Երկրորդ կայսրուհու, Պավել Առաջին կայսեր, վրաց Հերակլ և Գեորգի թագավորների հետ, մտերիմ էր մեծահարուստ Հովի. Լազարյանի, նշանավոր գորավարներ, գեներալ-ֆելդմարշալ Գ. Պոտյոմկինի, գեներալիսիմուս Ա. Սուվորովի և այլոց հետ: Նրա եռանդուն մասնակցությամբ են հիմնադրվել Նոր-Նախիջևան (1779) և Գրիգորիուպոլիս (1792) քաղաքները: 1800-ին ընտրվել է կաթողիկոս⁶⁰:

Ահա, այսպիսի բացառիկ անձնավորության աջակցությունն է վայելել Ճանիկի կառավարիչ Բաթալը, որը չի մոռացել նրան տված խոստումը:

Տարօրինակ է, որ **Աբել վրդ. Մխիթարյանն** անդրադառնալով XIII և XIV դդ. Անիից Համշեն և Տրապիզոն գաղթին, քանիցս հիշատակելով **Համշենը**⁶¹, իր օրերի Օրդու քաղաքը նկարագրելիս, շրջակա գյուղերի համշենցիների մա-

⁵⁹ **Աբել վարդապետ Մխիթարեանց**, Վէպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու, 1857, էջ 45–48: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

⁶⁰ **Լէօ**, Յովսէփ կաթողիկոս Արդութեան, Թիֆլիս, Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի, 1902 (–IV + 228 + 4 նկար), էջ 17, 19, 20, 43, 44, 61, 64, 72, 75, 88, 89, 91, 107, 108, 165, 171, 178, 179, 222, 223, 225: **Վ. Բարխուդարյան**, «Արդության Հովսէփ» // ՀՄՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 86: «Արդության Հովսէփ» // ՀՀՀ, հ. 1, Երևան, 1990, էջ 389:

⁶¹ **Աբել վարդապետ Մխիթարեանց**, Վէպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու, էջ 10–12:

սին գրում է. «...իսկ գիտացիքն **Խամշնոցիներէն** են, որոնք Ճանիկու բոլոր լեռնակողմերը ցրուած են»⁶²:

Հատկանշական է, որ 1890թ. «Մշակ» թերթի թղթակիցն էլ Համշենի փոխարեն գործածում է **Խէամշին**: Տրապիզոնից գրած նամակում նա Լազիստանի բնակիչներին անվանելով **հայ լազեր, հույն լազեր, մահմեդական լազեր**, գրում է. «Հայ լազերը Լազիստանում բնակվում են **Խէամշինի** նահիյէյում (մի աւան մանր գիւղերով...): Թէ մահմետական, թէ յոյն և թէ հայ լազերը տափարակ հողեր շատ քիչ ունեն, մեծ մասը ցից առապարներ և պառիկներ են, ուր առհասարակ ցանում են եգիպտացորեն, որը նրանց հացն է, տափարակների վրա ծխախոտ, որ նրանց առևտրի նիւթն է: ...Հայ լազերը, որոնք միայն գտնվում են Լազիստանի **Խէամշին** աւանում, սեփական հողեր շատ քիչ ունեն (գոնէ այդպէս ասացին մեզ **յոյն լազերը**), նրանք մեծ մասամբ ուրիշների հողը բանեցնում են ընկերութեամբ, իսկ բնաւորութեամբ բոլորովին չեն զանազանվում միւս լազերից»⁶³:

Ինչպէս տեսնում ենք, հեղինակն անձամբ Համշենում չի եղել և իր տեղեկությունները քաղել է «յոյն լազեր»-ից, այսինքն **տեղաբնակ հույներից**, ուստի կարծում ենք, որ Համշենը, թուրքերեն՝ Հեմշինը, Պոնտոսի հույների **h > ju** արտասանությամբ վերածվել է Խէմշինի կամ ըստ թղթակցի՝ «**Խէամշին**»-ի:

Կարելի է ենթադրել, որ Աբել վրդ. Մխիթարյանին «**խամշնոցիների**» մասին տեղեկություն հաղորդողը նույնպէս տեղացի հույն է եղել: Անշուշտ, սա վարկած է, որին լեզվաբանների ուշադրությունն ենք հրավիրում:

1872թ. ամռանը Համշեն է այցելում Մեծ Բրիտանիայի պետական արխիվի տնօրեն, հայտնի պատմաբան և հնագետ **Ֆրենսիս Փալգրեյվի**⁶⁴ որդին՝ նշանավոր արևելագետ, արաբագետ և ճանապարհորդ, 46-ամյա **Վիլյամ Ջիֆֆորդ Փալգրեյվը**⁶⁵, որը Տրապիզոնում Անգլիայի հյուպատոսն էր: Նա գրում է. «В округе считается 33 селения, дворов или семейств 1.584, из них 23 армянских; остальные магометане, но все армянского происхождения. Обращение их к исламу совершилось постепенно и, кажется, началось не более 100 лет тому назад; оно продолжается и по сие время. Как христиане, так и магометане сохранили коренастый, грубый склад армянского поселенина...»

⁶² **Աբել վարդապետ Մխիթարեանց**, Վէպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու, էջ 153, 154:

⁶³ Ա., Նամակ Թիւրքիայից, «Մշակ», թերթ, Թիֆլիս, 1890, յուլիսի 7, №76: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

⁶⁴ **Пальгрев** (Francis Palgrave, 1788-1861) // **Энциклопедический словарь**, т. XXII^А, издатель: Ф. А. Брокгауз (Лейпциг), И. А. Ефрон (С.-Петербург), С.-Петербург, Типо-Литография И. А. Ефрона, 1897, с. 648.

⁶⁵ **Пальгрев** (Вильям Palgrave, 1826-1888) // **Энциклопедический словарь**, т. XXII^А, издатель: Ф. А. Брокгауз (Лейпциг), И. А. Ефрон (С.-Петербург), С.-Петербург, Типо-Литография И. А. Ефрона, 1897, с. 648.

...Всех жителей считается 13.190»⁶⁶ («Շրջանում⁶⁷ հաշվվում է 33 գյուղ, 1.584 տուն կամ ընտանիք, որից 23-ը՝ հայկական. մնացյալը մահմեդականներ են, բայց բոլորը՝ հայկական ծագմամբ: Նրանց իսլամացումը կատարվել է աստիճանաբար, և թվում է՝ սկսվել է 100 տարուց ոչ ավելի շուտ և այն շարունակվում է մինչև հիմա: Ինչպես քրիստոնյաները, այդպես էլ մահմեդականները պահպանել են հայկական շինականի պնդակազմ, կոպիտ կազմվածքը...

...Բոլոր բնակիչները հաշվվում են 13.190»):

Առաջին համշենահայր, որը կրոնափոխ համշենցիների մասին ուսումնասիրություն է հրատարակել, **Սարգիս Հայկունին** (Ղազարյան) է (1838, Տրապիզոնի գավառ, Յոմուրա, գ. Զեֆանոս–1908, Վաղարշապատ)⁶⁸: Ապագա նշանավոր ազգագրագետն ու բանահավաքը, դեռևս 1878 թ. լինելով Սյուրմենեում (Սև գետ), գրի է առել գավառակի հայերի բռնի մահմեդականացման պատմության դրվագները⁶⁹:

⁶⁶ Отчеты В. Джиффорда Пальгрева о провинциях Анатолии за 1867-68, 1869 и 1872 годы. 4. Отчет консула Пальгрева за лето 1872 года, о береге Лазистана и прилегающих к нему внутренних округах... // Материалы для описания Азиатской Турции и Батумской области. Приложения к VII тому «Известии Кавказского отдела Императорского Русского географического общества», Тифлис, 1882 (с. 41-87), с. 70, 71.

⁶⁷ Բնագրում «округ», որը նշանակում է «շրջան, մեծաշրջան», տե՛ս ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս **Արարատ Ղարիբյան**, Ռուս-հայերեն բառարան, մեկ հատորով, 85.000 բառահոդված և շուրջ 100.000 բառ և դարձվածք, Երևան, «Հայաստան» հրատ., 1968 (–1424 էջ), էջ 652, այսուհետև՝ **Ռուս-հայերեն բառարան**: Գրքի հետագա շարադրանքում Բաթումի և Արդվիխի համեմատաբար ընդարձակ օկրուգների դեպքում «շրջան, մեծաշրջան»-ի փոխարեն նախընտրել ենք թարգմանել «մարզ»: Երբեմն օկրուգն ունի գավառ, գավառակ իմաստը:

⁶⁸ **Վերժինե Սվազյան**, Սարգիս Հայկունի (կյանքն ու գործունեությունը) // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 1–82 էջ (–176 էջ), էջ 12, 32:

⁶⁹ **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացում զուրկ հայեր (Տրապիզոնի հայ-մահմեդական գիւղերն ու նրանց ասանդութիւնները), «Արարատ», 1895, №7, էջ 239–243, №8, էջ 293–297: Այսուհետև «Տէր Կարապետ քահանայ Թորոպիցի» վերնագրով տպագրվել է՝ **Հայոց նոր վկաները (1155–1843)**, Գիտական հրատարակություն: Բազմաթիւ ձեռագրերի համեմատութեամբ, ընդարձակ տեղեկութիւններով եւ ծանօթագրութիւններով, եւ ձեռագրերի, նահատակների, յատուկ անունների ու օտար բառերի մանրամասն ցուցակներով եւ ցանկերով: Աշխատութեամբ **Յ. Սանսանդեանի** եւ **Հ. Աճառեանի**, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1903 (–836 էջ) ժողովածուի մեջ, էջ 702–709: **Ս. Հայկունուց** օգտվելով **Հ. Աճառյանը** վերապատմել է իր «**Քննություն Համշենի բարբառի**» գրքում, ՀՍՍՌ ԳԱ Ն. Յա. Սամի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1947 (–272 էջ), էջ 5–8, նաև իր «**Հայ գաղթականության պատմություն**» գրքում, Հրայր Աճառյանի անվան համալսարան, Երևան, «Զանգակ 97» հրատ., 2002 (–768 էջ), էջ 498–503: **Տարգիս Այկունի**, Мученичество священника владыки Карапета Торослиецци +1780 // **Новые армянские мученики (1155–1843)**, сборник, перевод, предисловие и примечания **Кнарик Тер-Давтян**, Матенадаран, Институт литературы им. М. Абегамяна НА Армении, Ереван, Изд. «Наири», 1998 (–332 р.), р. 222–227. Ցավոք, այս շատ կարևոր հրատարակությունը գերծ չէ բազմաթիվ վրիպակներից և թարգմանական սխալներից.

Ըստ նրա՝ 1700-ական թվականներին Համշենի և Սյուրմենեի (Սև գետ) հատությունն ընդամենը 4–5 քահանա ուներ⁷⁰: Հայերը **Տեր Կարապետի** գլխավորությամբ հերոսաբար դիմադրում են իրենց բռնի կրոնափոխելու եկած թուրք ենիզերիներին, մուլաներին ու խաժամոժին, բայց Տրապիզոնի կուսակալից օժանդակ զորք ստանալով՝ թուրքերն, ի վերջո, կոտորում են մեծաթիվ հայերի և ներխուժելով Թորոսոց գյուղի եկեղեցին՝ մասնատելով սպանում **Տեր Կարապետին**: Ժողովրդի մի մասը փախչում է, մյուսները նահատակվում են, իսկ մնացյալները ստիպված են լինում առերես կրոնափոխվել, որպեսզի գոնե երեխաների կյանքը փրկեն:

Տեր Կարապետի ընտանիքից մագապուրծ եղածները բնակություն են հաստատում Տրապիզոնի գավառի Կալաֆկա գյուղում, ուր նրա որդին, քահանա ձեռնադրվելով, ուխտ է անում, որ իր սերունդները որդվոց-որդի նույն՝ **Տեր Կարապետ** անունով քահանայություն անեն և տարին մեկ անգամ ծայտյալ այցելեն Սյուրմենեում մնացած հայրենակիցներին⁷¹:

1840-ական թվականներին **Տավլաշյան** ընտանիքից մեկը, **Տեր Կարապետ** անունով քահանա ձեռնադրվելով, շարունակում է մեծ նախորդների գործը և կյանքը վտանգելով՝ այցելում է Սյուրմենեի գավառակի կրոնափոխ համշենցիների գյուղերը, ուր նրան էին սպասում այն հայերը, որոնք, չնայած մահապատժի վտանգին, ծածուկ պահպանում էին նախնյաց հավատքը⁷²:

Սարգիս Հայկունու նախկին աշակերտ Վաղարշ Խոյյանը (հետագայում՝ **Տ. Վահան ավագ քահանա Խոյյան**, 1856, Տրապիզոնի գավառ, Յոնուրա, գ. Կրոմիլա⁷³ – 1939, Փարիզ⁷⁴), որը 1874–1879 թթ. ուսուցիչ է աշխատել Սյուրմենեի գավառակում, իր անտիպ հուշագրության մեջ որոշ մանրամասներ է հաղորդում **Տեր Կարապետ Տավլաշյանի** մասին. «Բնիկ Սիւրմենեցի Տավլաշեան Տ. Կարա-

«Սև Գետ»-ը քանիցս տպագրվել է «Сев Гетик», նույնիսկ Սիւրմենե տեղանունն է անճանաչելի դարձել: Համեմատենք ընդամենը մեկ նախադասություն, ըստ Հայկունու. «Այլ և այլ տեղերէ գիտնական մօլլաներ, դագի, մուֆթի կէն անձիք հաւարուեցան ի Սիւրմենէ...» (էջ 241), թարգմանվել է. «Из разных мест Сюмиса прибыли ученые моллы, кадии, муфтии и другие [духовные] лица...» (с. 225).

⁷⁰ **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «Արարատ», 1895, №7, էջ 239, 240:

⁷¹ **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «Արարատ», 1895, №7, էջ 240–242:

⁷² **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «Արարատ», 1895, №7, էջ 242: **Սարգիս Հայկունի**, Յուսէփիցի ազգատոհմ եւ տարօրինակ աւագակ Արրիեօս Տրապիզոնի հայ գիւղերու մէջ, 1795–1840, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1905 (–96 էջ), էջ 44–59:

⁷³ **Տ. Վահան ավագ քահանա Խոյյանի** 1922–1939 թթ. գրած անտիպ հուշագրություն, էջ 3: Տարիների փնտրտուքից հետո հուշագրությունը 1995 թ. հայտնաբերվեց Վաշինգտոնում, հեղինակի որդու՝ **Տ. Տիգրան ավագ քահանա Խոյյանի** այրու՝ երեցկին **Սիրարփի Իսպեղերյանի** մոտ: Այն պատրաստել ենք հրատարակելու համար:

⁷⁴ **Ալրշակլ Չոպանեան**, Քրոնիկ. մեկնողները, «Անահիտ», հանդես, Փարիզ, 1939, սպրիլ-մայիս, №3, էջ 79:

պետ քահանան կար, որ իր ժամանակին բաւական ազգային գործունէութիւն մը ունեցած է: Սա քիչ ատեն Սիւրմենէ պաշտօնավարելէ վերջ Տրապիզոնի մէջ հաստատուած էր: Տ. Կարապետ նշանաւոր հանդիսացած է այն բանով, որ Սիւրմենէի մէջ ծածուկ հայ-քրիստոնէայ և յայտնի մահմետական 8–10 ընտանիքներ կային, ստոնց հոգևոր հովուութիւնը կ'ընէր, քանի՛-քանի անգամներ Կ. Պոլիս եկած-դարձած է և այդ ծածուկ քրիստոնէաներու մասին տեղեկութիւններ տուած, ինչպէս նաև Տրապիզոնի շրջակայ հայերու համար սնտուկներով գիրքեր բերած ու ցրուած է ժողովուրդին, ի հարկէ կրօն. գիրքեր՝ Աւետարան, Սաղմոս, Ժամագիրք, Նարեկ և այլն: Տավլաշեան քինյ. սիրելին եղած էր Պալեան ճարտարապետ Կարապետ գալֆային⁷⁵ և այս նպաստներն ալ հայ գիւղացիներու նուիրողը Կարապետ գալֆան էր:

Ես Սիւրմենէ ուսուցիչ էի, երբ յիշեալ Տ. Կարապետ շուրջ ութսունամեայ, ամիսներով մեզի հիւր կը մնար: Շատ մը հետաքրքրական պատմութիւններ կ'ընէր, իր կեանքէն զանազան շահեկան դրուագներ, շատ հաճելի էին և յաճախ կը խնդրէինք, որ պատմէ»⁷⁶:

Սարգիս Հայկունի Սև ծովի հարավային առափնյակի կրոնավիտի համշենահայերի մասին գրում է. «Պաթումից մինչև Տրապիզոն ծովեզերեայ երկիրներն բռնած են թուրքացած վրացիք, լազք և յոյնք, իսկ որոց հարան հայ թուրք: ...Թուրքացած հայեր աւելի քաջ են քան վրացի, լազ և յոյն, որք հայթուրքերու աղջիկ չեն տար: Հայ թուրքն ունի վեհանձն պարզ բնութիւն, չի գիտեր խարդախութիւն...»⁷⁷:

ԲԱԹՈՒՄԻ ՄԱՐԶԻ ՆԱՄՇԵՆՅԻՆԵՐԸ

Բաթում քաղաքը և նրանից հարավ ընկած հատվածը՝ նավահանգստային **Խոփա** (թուրք.՝ Hopa, Հոփա) ավան չհասած՝ **Մաքրիյալի** գյուղախումբը (այժմ՝ Թուրքիայի Արդվինի նահանգ, Խոփայի շրջան, Քեմալփաշայի ենթաշրջան, րուջաք) ներառյալ, Ռուսական կայսրությանն են միացել ռուս-թուրքական

⁷⁵ **Կարապետ ամիրա Պալյան** (1800, Կ. Պոլիս–1866, Կ. Պոլիս), պալատական ճարտարապետ, հեղինակ է բազմաթիվ նշանավոր կառույցների, այդ թվում՝ Ստամբուլի զարդերից՝ Դոլմաբահչեի պալատի: Մասնակցել և նյութապես աջակցել է հայ համայնքի կրթական և առողջապահական հաստատությունների հիմնադրմանն ու գործունէությանը, տե՛ս **Բ. Թուղլաճյան**, «Պալյաններ» // ՀՄՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 86–87: **Աշոտ Հայկազուն Գրիգորյան**, Հայոց ազգին պարտեզի գանձերը. Պալյաններ, Երևան, Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ, 2017 (–544 էջ + 7 ներդիր), էջ 49 և այլն:

⁷⁶ **Տ. Վահան ավագ քահանա Խոյյանի** 1922–1939 թթ. գրած անտիպ հուշագրություն, էջ 24, 25:

⁷⁷ **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «Արարատ», 1895, №8, էջ 296:

պատերազմի ավարտին՝ 1878 թ. կնքված Սան Ստեֆանոյի⁷⁸ և Բեռլինի⁷⁹ պայմանագրերով: Խոփայի երկու կողմում էլ համշենցիների գյուղեր կային:

Նորաստեղծ Բաթումի մարզի համշենցիներին առաջիններից մեկը 1888 թ. «Մշակ» թերթում անդրադարձել է **Հարություն Գաթենյանը**, որը, լինելով շալջեթցի, հաճախ է հանդիպել անասնապահությանը զբաղվող կրոնավոյս հայերի, որոնց մասին գրել է. «Իրանց խօսքի համեմատ, սրանք իբրև հաշում են Անիի գաղթականներից, սակայն Համամաշեն քաղաքի բնակիչներից ևս հաշվել հաւանական է, ինչպէս և կոչվում են: Այս համշենցիների գիւղերի մի մասը գտնվում է տաճկի սահմանում Բաթումի մօտ, որտեղից անց են կենում ամառը և այս կողմերիս հիւր են գալիս սարերի վրա ամառելու, իսկ մնացեալ մասը Բաթումի նահանգում է, որ անցած են ռուսաց հպատակութեան ներքև վերջին ռուսութիւրք պատերազմի ժամանակ: Տաճկաստանի մէջ գտնված համշենցի հայ-մահմեդականների գիւղերն են, որքան իրանցից ստուգած եմ՝ Խօփայում կամ փոքր Համշենում **Զալինա** 80 տուն, **Խինկօբա** 80 տուն, **Զուրփիջի** 30 տուն, **Արդալա** 60 տուն, **Չավուշուկ** 30 տուն, **Կարջի** 40 տուն, **Զէնդիդ** 40 տուն: Իսկ ռուսաց հպատակութեան ներքև գտնվածները հետևեալներն են. **Կարաշալվար** 15 տուն, **Ավգեսի** 12 տուն, **Մակրիալ** 150 տուն: Բոլոր համշենցի հայ-մահմեդականները իրանք իրանց ընդամենը 600 տուն են հաշում»⁸⁰:

Ո՞վ էր **Հարություն Գաթենյանը**, որին այս աշխատության մեջ քանիցս հիշատակելու ենք: Քանի որ նա համշենցի կրոնավոյս հայերին անդրադարձած առաջին հեղինակներից էր, ուստի տարիներ շարունակ տարբեր հանրագիտարաններ, գրքեր և հին թերթեր կարդալիս միշտ ուշադիր էինք, որ նրա մասին որևէ տեղեկություն գտնեինք: Առայժմ մեզ հանդիպած միակ աղբյուրը, ցավոք, 1917 թ. Թիֆլիսի «Հայաստան» թերթում տպագրված Կարինից ուղարկված մահախոսականն է, որից արտատպում ենք որոշ հատվածներ, ո՞վ գիտի, այս արժանավոր հայորդուն էլի առիթ կլինի՞ ներկայացնելու մեր ընթերցողներին. «Հեռագիրը մի տխուր լուր գուժեց: Նոյ. 11-ին Թիֆլիզի մէջ յանկարծամահ է եղեր Յարութին Գաթենեանը: Ո՞ր կարնեցին չի ճանչնար զինքը և չի գիտեր անոր ազգօգուտ գործունէութիւնը ռուսական հիւպատոսարանը պաշտօնավարած ժամանակ: Որքան հիշողութիւններ կապուած են իր անուան հետ, սակայն այս

⁷⁸ Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը, 19 փետրվարի (3 մարտի), 1878 թ., հողված 19 Ե կետ, թարգմանություն ռուսերենից, տես **Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)**, ժողովածուն կազմել են **Զոն Կիրակոսյանը**, **Ռուբեն Սահակյանը**, Երևան, «Հայաստան» հրատ., 1972 (-812 էջ), էջ 93, 94:

⁷⁹ Բեռլինի պայմանագիրը, 1/13 հուլիսի, 1878 թ., հողված 58, թարգմանություն ռուսերենից, տես **Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)**, էջ 127:

⁸⁰ **Յարութին Գաթենեան**, Չորս տարի Շավշեթ-Իմերխելում շրջագայութեան արդիւնքից, «Մշակ», թերթ, Թիֆլիս, 1888, յուլիսի 23, №83: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

աշխարհակործան պատերազմը քանդեց և անոր տունը ու զինքը հասցուց այն աստիճանին որ այլ ևս չկարողացաւ դիմանալ և ահա յանկարծ կնքեց իր մահկանացուն:

Նա ծնած է Շավշէթ 1852-ին, նախնական ուսումն ատեր է Արդւին, ուրկէ գնացեր է Պաթում ասարտելու դեռ տաճկաց տիրապետութեան ժամանակ **Վալիաթ Սուլթանի** միջնակարգ դպրոցը: Իր կեանքի մեծ մասը անցուցեր է Կարս, ուսուցչական պաշտօնով և Արտահան, իբրև **ուչապետ** նաչալնիկ: 1900 թուականին Կարնոյ Ռուսիոյ ընդ. հիւպատոսարանին հարկատր էր մի լեզուագետ հմուտ թարգման. այր. Տէմէրիք փնտրել կուտար ամբողջ Կովկասի մէջ մի մարդ, որ գիտենար կատարելապէս ռուսերէն, ֆրանսերէն և թուրքերէն լեզուները: Գտան վերջապէս Յարութին Գաթէնեանին և առաջարկեցին ընդունիլ յիշեալ պաշտօնը: Սա տեսնելով իր առջև գործունէութեան մի նոր ասպարէզ, ընդունեց այս առաջարկը և 1901-ին ընտանեօք տեղափոխուեցաւ Կարին: Իր պաշտօնավարութեան առաջին օրերէն սկսեալ սարսափ ձգեց թուրք կառավարչական շրջաններու մէջ, որովհետև կը պահանջեր կէտ առ կէտ քափիթիլափօսներու գործադրութիւնը և անաչառ օրինաւոր վերաբերմունք դէպի ռուսահպատակներու շահերը:

... Թէ սահմանադրութենէն առաջ և թէ վերջը թուրքերը քանի մը անգամներ ուզեցին ջարդել Կարնոյ հայերուն, բայց հիւպատոսի և Գաթէնեանի ջերմ միջամտութեան և ջանքերու շնորհիւ չկարողացան իրագործել այն ատենները իրենց դժոխային ծրագիրները: Տաճկ. Սահմանադրութենէն վերջ երբ հայերուս մէջ սկսաւ տիրել մեծ ոգևորութիւն, երբ թուրքերը իբր եղբայրացած կը համբուրէին հայերուն և երբ բոլոր հայերս կը պահանջէինք անմիջական զինուորական ծառայութիւն, Յարութին Գաթէնեանը խիստ հակառակ էր այս բոլորին և միշտ կազդարարէր բոլորին. «Ծանր կեցիք, զգոյշ կեցիք, օղային խոստումներու հովերովը մի տարուիք, մէկ մը տեսէք նոր ըէժիմի գործնական արդիւնքները, ձեր դարաւոր տառապանքներէն մէկ մը հանգչեցէք, գոնէ 20 տարի յետոյ զինուոր տուէք, յետոյ հաւատացէք, մի խաբուիք»: Բայց այս խոհեմ խորհուրդներուն մտիկ ընող չեղաւ. սակայն շուտ օրով վրայ հասան այնպիսի ցաւալի դէպքեր, որոնք կարդարացնէին Գաթէնեանի բոլոր ազդարարութիւնները: Իթթիհատի կառավարութիւնը Համիտէն ատելի կատաղի կերպով սկսաւ իրագործել հայահալած քաղաքականութիւնը»⁸¹:

Եթե ժամանակ առ ժամանակ հայերեն թերթերն ու ռուսական գիտական հանդէսներն անդրադառնում էին կրոնափոխ համընտհայերին, ապա ռուսերեն թերթերը լռում էին: Երևի պատերազմական իրավիճակի անհրաժեշտու-

⁸¹ **Վ. Ողբունի**, Մեր կորուստները. Յարութին Գաթէնեան, «Հայաստան», թերթ, Թիֆլիս, 1917, նոյեմբերի 24, №165: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

թյունից ելնելով է Թիֆլիսի «Кавказское слово» («Կովկասյան խոսք») թերթը 1915 թ. փետրվարի 25-ին տպագրել սահմանամերձ գոտու կրոնափոխ հայերի մասին **Իոսիֆ Ռիսի** (Иосиф Рис) «Армяне-магометане близ Хопы» («Խոփայի մերձակայքի հայ-մահմեդականները») հոդվածը, որը հեղինակը սկսում է նրանց կյանքի հովվերգական պատկերներով: Այնուհետև գովում է 1877–78 թթ. ռուս-թուրքական պատերազմի հաշտության պայմանագիրը կազմող նրբազգաց դիվանագետներին, որոնք աղքատ և խաղաղ անասնապահներին հնարավորություն են տվել ամռանը՝ ռուսական, իսկ ձմռանը՝ թուրքական տարածքներում արածեցնելու իրենց ոչխարների հոտերը:

Հեղինակը համշենցիներին **Էմշեն** «эмшен», **Էմշեններ** «эмшенны» է անվանում, հավանաբար, ռուսերեն այբուբենում «հ» տառի բացակայության պատճառով: Նա փաստում է, որ **Էմշենները** հայ են: Այստեղ բացենք փակագծերը և նշենք, որ **Իոսիֆ Ռիսը** այդքան վստահ է, քանի որ ինքն էլ լինելով հայ, հասկացել է նրանց բարբառը: Նա գրում է. «...достаточно самого мимолётного наблюдения за жизнью и обычаями этих людей, достаточно послушать их разговор, чтобы убедиться, что племя кочевников эмшенов, которых иначе называют ещё «хопинцами» – осколок армянского народа, принявший ислам в какую-нибудь невыносимо трудную минуту своей истории»⁸² («...բավարար է այս մարդկանց կյանքի ու սովորոյթների ամենաթոռուցիկ դիտարկումը, բավարար է լսել նրանց խոսակցությունը՝ համոզվելու համար, որ քոչվոր էմշենների ցեղը, որոնց այլ կերպ անվանում են նաև «խոփացիներ», իր պատմության մի անտանելի դժվար պահին հայ ժողովրդի իսլամ ընդունած բեկոր է»):

Իոսիֆ Ռիսի իսկական անուն-ազգանունը **Հովսեփ Ռիստակյան** է, ռուսական մամուլում, հատկապես Թիֆլիսի «Кавказ» («Կովկաս») թերթում հանդես է եկել նաև «**Р., Риста, Р-ян**» և այլ ծածկանուններով⁸³:

Նա կրոնափոխ համշենցիների մասին ավելի հանգամանալից պատմելու համար, առանց քիչ թե շատ ներկայացնելու զրուցակցին, դիմում է **Հովսեփ Էֆենդի Միրայեյանին**. «Вот что говорит об эмшенях знаток народностей ближайшего к Батуму побережья Черного моря-Овсеп эфенды Микаэлян.

«Известные под именем «эмшенов» кочевники безусловно по происхождению армяне. Об этом свидетельствует прежде всего само название «эмшен» – слово с армянским корнем; затем, эти люди почти все говорят прекрасно на

⁸² **Иосиф Рис**, Армяне-магометане близ Хопы, «Кавказское слово», ежедневная газета, Тифлис, 1915, 25-ого февраля, № 45.

⁸³ **Բախտիար Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան (8000 հեղինակի 25000 ծածկանուն), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2005 (-788 էջ), էջ 507, 517, 518, 711:

армянском языке, употребляя часто в разговорах много слов из древне-армянского языка; их женщины прячутся только от мужчин магометан, а от армян не прячутся, их свадебные обряды и вообще обычаи очень схожи с свадебными обрядами и обычаями турецких армян, и наконец имена и фамилии у большинства из них армянские: сплошь и рядом встречаются у них фамилии: Гаспар-оглы, Седрак-оглы, даже Тертер-оглы; армянские названия некоторых эмшенских селений близ Хопы, как например: Бададжур, Арташен и др.

Да и сами эмшены не отрицают своего армянского происхождения, они про себя говорят: «Мы такие же армяне, как вы, только по религии магометане»⁸⁴ («Ահա թե էմշենների մասին ինչ էլ ասում Սև ծովի՝ Բաթումին ամենամոտ ափերի ժողովուրդների գիտակ Հովսեփի Էֆենդի Միքայելյանը.

««Էմշեններ» անունով հայտնի քոչվորները, անկասկած, ծագումով հայեր են: Այդ մասին նախ և առաջ վկայում է հենց «Էմշեն» անունը՝ հայկական արմատով բառը. հետո էլ, այս մարդիկ գրեթե բոլորը հրաշալի խոսում են հայերեն՝ հաճախ խոսակցություններում օգտագործելով հին հայերենի շատ բառեր. նրանց կանայք թաքնվում են միայն մահմեդական տղամարդկանցից, իսկ հայերից չեն թաքնվում, նրանց հարսանեկան ծեսերը և, ընդհանրապես, սովորույթները շատ նման են թուրքահայերի հարսանեկան ծեսերին և սովորույթներին, և, վերջապես, նրանց մեծ մասի անուններն ու ազգանունները հայկական են. ամենուրեք հանդիպում են նրանց ազգանունները՝ Գասպար-օղլի, Մեդրակ-օղլի, նույնիսկ Տերտեր-օղլի, հայկական են Խոփայի մոտակա որոշ էմշենական գյուղերի անունները, ինչպես օրինակ՝ Բադաջուր, Արտաշեն և այլն:

Հենց իրենք էլ՝ էմշենները, չեն ժխտում իրենց հայկական ծագումը, նրանք իրենց մասին ասում են. «Մենք նույնպիսի հայեր ենք, ինչպես դուք, միայն կրոնով մահմեդական ենք»):

Առաջին աշխարհամարտի սկզբներին՝ 1915թ. մարտին, Թիֆլիսի «**Հորիզոն**» թերթում տրապիզոնցի նամակագիրը՝ «**Յ. ԱՐՃԵԱՆ**»-ը, որը, հավանաբար, ռուսական բանակի հետ էր, նույնպես պատմում է թուրքական սահմանում գտնվող **Խոփայի** շրջակա գյուղերից մեկում իրեն հանդիպած կրոնավորի համաշենահայերի մասին. «Խոփեից մենք գնում ենք դէպի դիրքերը-ձինսապատ սարեր, ճանապարհին ընկերներս ձայնում են ինձ ցոյց տալով մի թիրք ծերուկի՝ մեկուսի նստած, մօտենում եմ նրան, հետը խօսում նախ թիրքերէն, յետոյ հայերէն...: Ծերուկը ինձ հետ խօսում է հայերէն, որ ամեն հայ չի կարող հասկանալ, դա մի բարբառ է, շատ նման Տրապիզոնի բարձր գիւղերում խօսող բարբառին:

⁸⁴ **Иосиф Рис**, Армяне-магометане близ Хопы, «Кавказское слово», ежедневная газета, Тифлис, 1915, 25-ого февраля, №45.

Յայտնում եմ իրեն, որ ես էլ հայ եմ, նա ուրախանում է. գգում եմ նրան, մօրուքը բռնում, շոյում, նա ծիծաղում է բարի ժպիտով, պատմում է թե առաջ մենք էլ հայեր էինք ձեզ նման, գաղթել են մեր նախնիքը Անիից և այս կողմերը բնակություն հաստատել, յետոյ թիրքերը մեր նախնիքներին թրքացրին, մենք էլ մեր պապերից ինչ որ տեսել ենք և ստացել՝ այն էլ պահում, պահպանում ենք, պահում ենք նաև թե մեր հայ լեզուն և թե միալիմանությունը: Հարցիս՝ թե քանի՞ տարի կը լինի որ կրօնափոխ են եղել, պատասխանում է թե չգիտեմ, բայց պապին պապը գուցե հայ եղած լիներ: Մենք ճանապարհին պատահեցինք այդպիսի ուրիշ իսլամացած հայերի: Համշենցիները ապրում են հետևեալ գիղերի մէջ – **Արտալա, Ծարդինա, Կարճի, Զինտիր**⁸⁵, **Չաուշի, Զուրպիճի, Խիկի, Զալունա** և **Օսնուրոյի**: Գրեթէ ամեն գիղ ունի իր դպրոց-մեղրեսէն, ինձ յաջողեց իրենց քանակի մասին ստոյգ տեղեկություն ստանալ, իրենք ենթադրում են որ չորս հազար հոգի կը լինեն: Վերջին ծայր տգէտ են, ապրում են լեռների կողերին, բնակարանները տախտակից շինած մութ սնակներ են, վրաները կղմիւղրով ծածկած: Հողը բարեբեր չէ, իրենց ցանածը հազիւ կը բաւէ վեց ամիս ապրելու, մնացած սնունդը լրացնում են Ռուսաստան, գլխաւորապէս Սուխում պանդխտած իրենց երիտասարդների ուղարկած դրամով: Ցանում են միայն եգիպտացորեն, ունեն նաև մեղի փեթակներ. կանայք երեսնին կիսով չափ ծածկում են, հարցիս թե ինչու՞ ձեր կանայք ծածկում են երեսնին, պատասխանեցին թե՛ ինչ անենք, այդ մեր աղեթն է: Հարցրի, թե թիրք զօրքը ձեզ նեղություն տուա, երիտասարդ մը պատասխանեց թե՛ «Հապան ախպար, մեր ունեցածը սրբեց տարաւ, բոլորը կերան, ո՛չ հաւ մնաց, ո՛չ էժ, էս ալ – ցոյց տուց իր հագին ունեցած պատառոտուն վերարկուն – էտնք ձգեցին՝ իմ նորը իրենք առին»:

...Ես սիրեցի այս խեղճ բարի մարդիկը, որոնք տաճկական կործանիչ բռնակալութեան կենդանի վկաներն են: Մրանց կենդանիներին էլ ես փաղաքշում էի հայ լեզուով, որովհետև տանը մէջ խօսած լեզուն հայերէնը լինելով՝ ինձ թում էր թե կատուն, շունը ևս իրենց տէրերի պէս հասկանում են հայ լեզուն: Ամուսնական կապը պահպանում են միմիայն իրենց գիղերի մէջ, իրենց գիղերից դուրս ո՛չ աղջիկ կուտան, ո՛չ կտանեն և շտրիհի այս հանգամանքին էլ պահած են հայկական դիմագծերը»⁸⁶:

Պատերազմի օրերին Խոփայի շրջակա գյուղերի կրոնափոխ համշենցիների ծանր վիճակի մասին «**Հորիզոնի**» հրապարակումից մոտ մեկ տարի անց ահագանգում է նաև «**Համբաւաբեր**» թերթը: 1916թ. փետրվարի 4-ին Բաթու-

⁸⁵ Հավանաբար նամակագրի ձեռագիրը սխալ է ընթերցվել, կարծում ենք՝ հեղինակը նկատի ունի Զենտիտ, Զենդիդ գյուղը (Ս. Վ.).

⁸⁶ Յ. Աւճանս, Դէպի Խոփէ, «**Հորիզոն**», թերթ, Թիֆլիս, 1915, մարտի 19, №62: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

մից ուղարկված թղթակցության մեջ կարդում ենք. «Մօտ օրերս «Строгий» ակա-նակիրը Արխաի շրջանից, **Խոփի** կողմերից բերեց Բաթում 15 հոգի տղամարդ, կին և երեխաներ, որոնք մահմեդական հայեր են: Բաթումի շրջանային կոմիտեի կողմից դրանք յանձնուած են քաղաքային կոմիտեի հայր նախագահ Մ. ա. ք. Մելեանին»⁸⁷ հոգալու կարևոր պետքերը: Դրանք իրենց պարզապէս հայ են անուանում և, հայերէն հասկանում են, շատերը նոյն իսկ խօսում: Խոփ-Արխաի շրջանում գտնուած **Խիզի, Զարուսպ⁸⁸, Զաուշի, Արտազա, Զէնդիդ** ու **Կարճի** գիւղերն իրենց 300-400 տուն բնակիչներով այդպիսի հայեր են: Անհրաժեշտ է ալլժմէն իսկ օգնութիւն կազմակերպել, մարդ ուղարկել այդ կողմերը Բարեգոր-ծական Ընկերութեան կենտրոնական կոմիտեի կողմից:

Տեղական Կ.Շ.Բ.Ընկ. ճիւղի⁸⁹ վարչութեան անդամ տիկիններից ոմանք պատրաստակամութիւն են յայտնել սիրով մասնակցելու այդ գործին»⁹⁰:

Նույն թերթի մարտի 13-ի համարից տեղեկանում ենք, որ «Փետրուարին հայ հասարակութեան կողմից պ.պ. Աշոտ Մնտոյեանց⁹¹, Յարութիւն Զաքարեանց և չորս ուրիշ անձինք ընծաներ էին տարել նորանուած Ռիզէ քաղաքը զօր-քերին բաժանելու:

Այնտեղ նրանք իմանում են, որ տաճիկները, Տրապիզոնի հայերին կոտորե-լուց յետոյ, նաուվ հայ մանկահասակ կենդանի մնացած երեխաների բերել են Ռիզա իրենց մահմեդականների մէջ բաժանելու: Երեխաները եղել են 3-ից մին-

⁸⁷ Նկատի ունի Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ, Կովկասի հայոց բարեգործա-կան ընկերության Բաթումի մասնաճյուղի վարչության նախագահ **Տեր Մներոպ ավագ քահանա Մելյանին**: Նրա գործունեության մասին տեն **Ռուբեն Սահակյան**, Արև-մոյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914թ. հուլիս-1917թ. փետրվար), ՀՀ սփյուռքի նախարարություն, ՀՀ ԳԱ պատմության ինս-տիտուտ, Երևան, ՊԻ, 2015 (-428 էջ), էջ 344-363, **Նույնի՝** Տրապիզոնի հայության փրկության կազմակերպումը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1916-1917 թթ.), «**Ձայն համշենական**», 2010, № 5-6, 7-8, 9-10, 11-12: 2011, №1-2, 5-6, 7-8, 9-10: **Հենրիկ Խառատյան**, Նամակ խմբագրությանը, «**Ձայն համշենական**», 2011, №1-2: Մ.ա.ք. Մելյանի հոգևորական նախնիների մասին տեն «Մելյան Հովսեփ Հարությունի (1835-1910)» // **Հենրիկ Խառատյան**, Նշանավոր դիվիզանցիներ. կենսագ-րական բառարան, Երևան, «Զանգակ-97», 2008 (-144 էջ), էջ 81-83:

⁸⁸ Պատերազմի մասին «**Համբաւաբեր**»-ում տպագրված տարբեր թղթակցություններում հանդիպող բազմաթիվ անձանոթ տեղանունների մի մասը, հավանաբար, նամակագիր-ների դժվարընթեռնելի ձեռագրերի պատճառով սխալ է տպագրվել: Այս դեպքում Զուր-պիճի (՝), Զաուշի և Արտալա գյուղանունները հրատարակվել են Զարուսպ (՝), Զավուշի և Արտազա:

⁸⁹ Նկատի ունի Կովկասի հայոց բարեգործական ընկերության Բաթումի մասնաճյուղը:

⁹⁰ Գաւառ, «**Համբաւաբեր**», շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, փետրվարի 14, № 8, սյունակ 242:

⁹¹ **Աշոտ Մնտոյանն** (Մնոյան) իր «**Տրապիզոն**» շոգենավով հաճախ էր նավարկում Սև ծովի այդ ափերը և շատ լավ ծանոթ էր երկրամասին ու բնակիչներին: Նրան կանդրա-դատնանք հաջորդ՝ «**Կրոնափոխ համշենահայերի բարբառի և բանահյուսության ու-սումնասիրության պատմությունից (XIX-XXI դդ.)**» գլխում:

չև 12 տարեկան հասակի: Ենթադրում է, որ այդ երեխաների թիւը կը հասնի 400–500 հոգու: Տղայ երեխաներին մահմեդականացրել են, կատարելով նրանց վրայ իրենց կրօնական ծիսակատարութիւնը:

...Սկսուած է հայ որբերի որոնումն, որոնց մաս մաս բերում են Բաթում: Բարեգ. ընկերութեան ճիւղը Ռիզէ հիմնել է մի ժամանակաւոր ապաստարան. գտնուած որբերին նախ բերում են այդ ապաստարանը, իսկ յետոյ այնտեղից փոխադրում են Բաթում»⁹²:

Ռուսական զորքերի՝ 1916 թ. ապրիլի 5-ին Տրապիզոնի գրավումից մեկ շաբաթ անց՝ ապրիլի 12-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետին Ս. Մեսրոպ ավագ քահանա Մելլանի՝ Բաթումից գրած նամակից այդ որբերի մասին նոր մանրամասներ են հայտնի դառնում. «Ռիզէի կողմից բերուեցին մօտ 20 որբեր ու անձեր: Սրանցից 2-ը մեռան այստեղի հիւանդանոցներում, 2-ը՝ այր և կին, անցան Ռուսաստան, 5 որբ գտան մօտիկ ազգականներ և առնուեցին իրենց մօտ: Օրերումս Ռիզէի շրջանում «акоп»-ների⁹³ մէջ գտնուել էին դարձեալ երկու մանկահասակ որբեր–մինը՝ 2 տարեկան, միւսը՝ 8 ամսական: Այս բոլոր որբերը խնամում են Բար[եգործական] Ընկ[երութեան] Բաթումի ճիւղի կողմից: Վարձել ենք Կորբուլետում 8 սենեակից մի բնակարան, ծովի եզերքում: Լաւում է որ Ռիզէի կողմերում դարձեալ կան: Օփի⁹⁴, Խոփի, Արխավէի ու, մանաւանդ, Սուրմենէի կողմերը — ասում են — կան որբեր»⁹⁵:

Այս կարևոր հրապարակումներն ու փաստերը վկայում են, որ քրիստոնյա համշենահայերի, տվյալ դեպքում՝ նրանց երեխաների, բռնի իսլամացումը, որը սկսվել էր դարեր առաջ, շարունակվել է նաև Յեղասպանության տարիներին, և հայտնի չէ, թե այդ 400–500-ից քանիսին է հաջողվել գտնել ու տեղափոխել Բաթում և Կորբուլետ, քանիսն է մնացել Ռիզէի և գյուղերի մահմեդականների տներում բանտված:

1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով⁹⁶, ինչպես նաև մի կողմից՝ Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև,

⁹² Գաւառ. Բաթում, «Համբարաբեր», շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, մարտի 13, №12, սյունակ 369:

⁹³ Ռուսերեն «акоп» բառն է, նշանակում է «խրամատ»:

⁹⁴ Օփ-հավանաբար նկատի ունի Օֆ գավառակը, որը հայտնի էր մոլեռանդ մահմեդական հույն բնակչությամբ:

⁹⁵ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (1914–1920): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, հ. Ա. (1914–1917), կազմող՝ պ. գ. թ. Գոհար Ավագյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ՀՀ Ազգային արխիվ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2018 (–672 էջ + 8 ներդիր), էջ 431, 432:

⁹⁶ Պայմանագիր Ռուսաստանի և Թուրքիայի միջև, Մոսկվա, 16 մարտի, 1921 թ., հոդված 1, հավելված 1 (A), թարգմանություն ռուսերենից, տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), էջ 500, 504, 505:

Ռուսաստանի մասնակցությամբ 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում կնքված պայմանագրով⁹⁷ Թուրքիային հանձնվեց ներկայիս **Սարփիի (Սարփ)** սահմանային անցակետից հարավ ընկած տարածքը, որի մեջ էր մտնում նաև **Սարրի-յալի (1928-ից՝ Քենալփաշա)**⁹⁸ գյուղախումբը: Աջարական մասում մնացած գյուղերից մի քանիսում՝ **Սարփիում (Սարփ)**, **Քանլը դերեում**, **Քվարիաթիում**, **Գոնիոյում**, **Ճառնալիում (Ճառնալ)**, **Բոլորոյում**, **Ավգիայում** (այժմ՝ **Ախալսոփեղի** գյուղի կազմում), ապրում էին նաև իսլամացած, հայախոս համշենահայեր:

Կրոնափոխ համշենցիներին ոռուսական գիտական և տեղեկատու գրականության մեջ անվանում են խամշիլի **«хамшинли»**⁹⁹, խենշին (խամշենլի) **«хемшины (хамшенлы)»**¹⁰⁰, խենշին **«хемшин»**¹⁰¹, խենշիլ **«хемшил»**¹⁰²:

⁹⁷ Հայկական ՍՍՀ-ի, Ադրբեջանական ՍՍՀ-ի ու Վրացական ՍՍՀ-ի միջև՝ մի կողմից և Թուրքիայի միջև՝ մյուս կողմից, ՌՍՖՍՀ-ի մասնակցությամբ Կարսում կնքված բարեկամության պայմանագիրը, 13 հոկտեմբերի, 1921 թ., հոդված 4, հոդված 6, հավելված 1, թարգմանություն ոռուսերենից, տես **Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)**, էջ 519, 520, 524:

⁹⁸ **Taner Artvinli**, Artvin Yer Adları Sözlüğü, İstanbul, Chiviyazıları Yayınevi, 2013 (- 310 s.), s. 186:

⁹⁹ **А. П. Мегавориан**, К вопросу об этнографических условиях развития народностей Чорохского бассейна, «Известия Кавказского отдела Императорского Русского географического общества», Тифлис, 1904, т. XVII, №5, с. 366, 367.

¹⁰⁰ «Хемшины (хамшенлы)» // **Большая советская энциклопедия**, т. 46, второе издание, Москва, Государственное научное издательство «Большая советская энциклопедия», 1957, с. 118.

¹⁰¹ **Н. Марр**, Из поездки в Турецкий Лазистан, «Известия Императорской Академии наук», С. Петербург, 1910, с. 552, 556-558, 608, 609, 611, 612. **Народы СССР**. Краткий справочник, Институт этнографии им. Н. Н. Миклухо-Маклая АН СССР, Ленинград, изд. АН СССР, 1958 (- 44 с.), с. 12, 43. **Г. А. Шпажников**, Религии стран Западной Азии. Справочник, АН СССР, Институт востоковедения, Москва, изд. «Наука», 1976 (- 328 с.), с. 266. **С. И. Брук**, Население мира. Этнодемографический справочник. Второе переработанное и дополненное издание, АН СССР, Институт этнографии им. Н. Н. Миклухо-Маклая, Москва, изд. «Наука», 1986 (- 832 с.), с. 434. **Н. В. Мгеладзе, Т. Х. Тунадзе**, Из истории хемшинов Восточной Турции и Юго-западной Грузии // **Археология, этнология и фольклористика Кавказа**, НАН РА Институт Археологии и этнографии, Армянский центр этнологических исследований «Азарашен». Материалы международной конференции, 17-18 ноября, Ереван, 2003 (- 382 с.), с. 270-273. **И. В. Кузнецов**, Аджария // **Армяне Причерноморья: энциклопедия** / И. В. Кузнецов, сост. Том I. - Москва, УП ПРИНТ, 2020 (- 492 с.), с. 151-153. **И. В. Кузнецов**, Алелук (и полевые маршруты с А. Е. Тер-Саркисянц в 1990-е) // **Армяне в исторических и этнокультурных процессах XVIII-XXI вв.:** сборник научных статей, Москва: МАКС Пресс, 2021 (- 386 с.), с. 50, 51.

¹⁰² **В. М. Шамиладзе**, Хозяйственно-культурные и социально-экономические проблемы скотоводства Грузии. Историко-этнографическое исследование, Тбилиси, изд. «Мецниереба», 1979 (- 340 с. + VIII табл. фотографии), с. 192, 196, 198, 201, 205. **И. В. Кузнецов**, Одежда армян Понта. Семиотика материальной культуры, Москва, Издательская фирма «Восточная литература» РАН, 1995 (- 296 с. + 24 с. ил.), с. 6, 7, 25, 41, 126, 127, 177, 179, 210, 213, 243, 264, 265 и т.д. **И. В. Кузнецов**, Хемшилы Краснодарского края в 1980-1990-е гг. // **Старый свет: Археология. История. Этнография:** Сборник научных статей, Минис-

Նույնիսկ Հրաչյա Աճառյանի «Քննություն Համշենի բարբառի» (1947) գրքի տիտղոսաթերթի վրա է վերնագիրը ռուսերեն թարգմանվել «Исследование хемшинского армянского наречия»¹⁰³, թեև աշխատությունը նվիրված է քրիստոնյա համշենցիների բարբառին:

Քրիստոնյա համշենահայերն իրենք իրենց ռուսերեն անվանում են «**амшенские армяне, амшенцы**»¹⁰⁴, այդպես էլ կիրառվում է ռուսալեզու հրապարակումներում կամ հայերենից ռուսերեն թարգմանություններում:

Իսկ «**хемшил**», «**хемшин**» առավելապես օգտագործվում է Կենտրոնական Ասիայի և Ռուսաստանի կրոնափոխ համշենցիների համար:

Նրանք **խենշիլ** «**хемшил**» են անվանվում նաև 2012թ. Մոսկվայում «**Народы и культуры**» («Ժողովուրդներ և մշակույթներ») մատենաշարով ռուսերեն լույս տեսած «**Армяне**» («Հայեր») արժեքավոր հատորում: Ռուսաստանի ԳԱ Ն. Ն. Միկլոյխոն-Մակլայի անվան ազգաբանության և մարդաբանության ու ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտների համատեղ ջանքերով հրատարակված սովորածավալ գրքում հայ ժողովրդի յուրահատուկ հատվածներից մեկը՝ կրոնափոխ համշենահայությունը, հիշատակվում է ընդամենը մի քանի բառով. «**Среди армян есть также небольшая группа протестантов**

терство Образования РФ, Кубанский государственный университет, Краснодар, 2000 (-200 с.), с. 110-139. **И. В. Кузнецов**, Турки-хемшилы или исламизированные армяне? (случай «неясной» этнической идентичности), «**Диаспоры**», независимый научный журнал, Москва, 2000, №1-2, с. 226-258. **И. В. Кузнецов**, Понтийско-кавказские исследования: лекции, статьи, Краснодар, Кубанский гос. университет, 2008 (-590 с.), с. 14, 18, 19, 27, 32, 39, 42, 44, 46-48, 50, 51, 54-64 и т.д. **К. Э. Григорьян**, Грани идентичности. Социокультурное пограничье как фактор формирования этнического самосознания (на примере субэтнических групп армян), Москва, Центр цивилизационных и региональных исследований РАН, 2006 (- 172 с.), с. 7, 22, 23, 31- 42, 168. **Н. Р. Шахназарян**, Дрейфующая идентичность: случай хемшилов (хемшинов), «**Диаспоры**», независимый научный журнал, Москва, 2004, №4, с. 85-104. **Н. Р. Шахназарян**, Этнография фронтальных контекстов: армяно-язычные турки-хемшилы Краснодарского края России // **Армяне в исторических и этнокультурных процессах XVIII-XXI вв.**: сборник научных статей, Москва: МАКС Пресс, 2021(- 386 с.), с. 128-176. **А. Л. Тулумджян**, Хопа-хемшилы и Баш-хемшилы: материалы экспедиции, «**Дзайн амшенакан**» («**Голос амшенский**»), 2006, №1-2. **А. Л. Тулумджян**, Хемшилы (хомшеци) Краснодарского края: современное положение, «**Дзайн амшенакан**» («**Голос амшенский**»), 2012, № 11-12.

¹⁰³ Աճառյան Հրաչյա, Քննություն Համշենի բարբառի, 1947, էջ 2 (տիտղոսաթերթ):

¹⁰⁴ **А. Е. Тер-Саркисянц**, Армяне. История и этнокультурные традиции, Москва, Издательская фирма «Восточная литература» РАН, 1998 (- 397 с.), с. 294–310. **И. В. Кузнецов**, Хемшилы и амшенские армяне в культурном контексте Понта (жилище, расшитые полотенца, одежда, заклинания от засухи) // **Б. Г. Торлакян, Этнография амшенских армян, сборник статей и материалов**, Краснодар, 2002 (-200 с.), с. 129–174. **М. Кузуб**, Расселение армян в Джубгском округе, «**Дзайн амшенакан**» («**Голос амшенский**»), 2006, №9–10. **М. Кузуб**, Армяне Краснодарского края, «**Дзайн амшенакан**» («**Голос амшенский**»), 2009, №9–10. **М. Кузуб**, Полковничье - Պոլկովնի, «**Дзайн амшенакан**» («**Голос амшенский**»), 2010, № 3–4, 5–6.

(с начала XIX в.) и насильственно обращенных в ислам мусульман (так называемые хемшилы)»¹⁰⁵ («Հայերի մեջ կա նաև բողոքականների (XIX դ. սկզբից) և բռնի իսլամացված մուսուլմանների (այսպես կոչված **խեմշիլներ**) ոչ մեծ խումբ»), այնինչ, Թուրքիայից և Կենտրոնական Ասիայից բացի, **խեմշիլներ** են բնակվում նաև Ռուսաստանի **Կրասնոդարի** երկրամասի, **Վորոնեժի** և **Ռոստովի** մարզերի գյուղերում¹⁰⁶, և լավ առիթ էր ռուսալեզու ընթերցողներին նրանց ներկայացնելու հայերին նվիրված նույն հատորում:

Մենք մեր ռուսերեն հրապարակումներում կրոնափոխ համշենցի հայերին անվանում ենք «амшенские армяне-мусульмане»¹⁰⁷, «исламизированные армяне Амшена»¹⁰⁸, «верообращённые амшенские армяне»¹⁰⁹, դրանով միշտ շեշտելով նրանց հայկական ծագումը:

ԿՐՈՆԱՓՈԽ ՆԱՄՇԵՆԱՏՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԻ ԵՎ ԲԱՆԱՆՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ (XIX – XXI դդ.)

Երբ XIX դարի երկրորդ կեսին հրատարակվեցին քրիստոնյա հայերի բանարվեստի նմուշները, որոշ չափով ուշադրության արժանացավ նաև Տրապիզոնի կուսակալության **կրոնափոխ համշենահայերի** բանահյուսությունը: Այլ նահանգների ու գավառների **մահմեդական հայերից** արված գրառումների մասին մենք տեղյակ չենք:

Համշենցի նշանավոր ազգագրագետ և բանահավաք **Սարգիս Հայկունին**, իր նախկին աշակերտի՝ 22-ամյա ուսուցիչ **Վաղարշ Խոյյանի** հրավերով 1878 թ.

¹⁰⁵ **Армяне**, ответственные редакторы: Л. М. Варданян, Г. Г. Саркисян, А. Е. Тер-Саркисянц, Институт этнологии и антропологии им. Н. Н. Миклухо-Маклая РАН, Институт археологии и этнографии ИАН РАН, Москва, «Наука», 2012 (- 648 с.), с. 10.

¹⁰⁶ **Սերգեյ Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, էջ 69:

¹⁰⁷ **Варданян Сергей**, Одно важное свидетельство 1776 года об Амшенских армянах-мусульманах, «Дзайн амшенакан» («Голос амшенский»), 2007, № 3-4.

¹⁰⁸ **Варданян Сергей**, Свидетельство 1776 г. об исламизированных армянах Амшена, «Еркрамас», ежемесячная газета, г. Краснодар, 2005, октябрь, №10 (128), с. 3.

¹⁰⁹ **Варданян Сергей**, Верообращённые Амшенские армяне: взаимное знакомство, Религиозно-конфессиональные сегменты армянства: вызовы и возможности, сборник материалов международной научно-практической конференции, «21-й век» (специальный выпуск), журнал фонда «Нораванк», Ереван, 2012, № 2 (22), с. 78-83. Տե՛ս նաև հայերեն և անգլերեն հրատարակությունները:

լինելով Տրապիզոն և Ռիզե քաղաքների միջև գտնվող Սյուրմենեի (Քարա դերե, Սև գետ) գավառակում¹¹⁰, 1895 թ. «Արարատ» ամսագրում գրում է, որ դեռևս 1700-ական թվականներին բռնի կրոնափոխված համշենցիները, ինչպես իրեն ասել է մի թրեձորցի, մինչև հիմա հայերեն են երգում. «Այվեն գիւղը եղած է աշխ¹¹¹ Վարդան, որ հայերեն տաղեր յօրինած է, մինչև հիմայ հարսանիքներու մէջ կը երգուին: ...Վերոյիշեալ Թրեձորցին կը պատմէր, թէ իրենց գիւղը հայերէն խաղեր ստող պատաներ կան, եթէ տաս օր իրար վերայ ասեն, չվերջանար (փոքրիկ մաս մի գրի առած եմ)»¹¹²: **Ս. Հայկունին** թղթին է հանձնել երգն ու որոշ խաղիկներ (58 տող)¹¹³, որոնք Սև գետի կրոնափոխված համշենահայերի բանահյուսության փրկված նշխարներ են:

Ինքը՝ Վաղարշ Խոյյանը, հետագայում՝ **Տ. Վահան ավագ քահանա Խոյյան**, 1874 թ.՝ 18 տարեկանում ուսուցիչ հրավիրվելով Սյուրմենեի գավառակի քրիստոնյա համշենահայերի **Բերվանե** գյուղ¹¹⁴, նույնպես կրոնափոխ համշենցիներից բանահյուսական նյութեր է հավաքել, որոնք կորել են: Այդ մասին նա իր անտիպ հուշապատումում գրում է. «Միւրմէնէ մնացած հինգ տարուան¹¹⁵ ժամանակիս մէջ Գարատէրէի հայոց իսլամացման բաւական մանրամասն պատմութիւնը, նոյն ատենի իրենց հայերէն երգերն ու խաղեր, մանաւանդ պարերգ, օրհներգ, 500-ի չափ առածներ, ժողովրդային հանելուկներ, տաղեր և այլն, 350 էջնոց մեծադիր տետրակի մը մէջ խնամով ամփոփուած, դասաւորուած կը պահէի, օր մը տպագրութեան տալու նպատակաւ: Սանասարեան վարժարանի հաստատման Բ.-րդ տարին (կարծեմ 1883-ին) նոյն վարժարանի տնօրէն պ. Յ. Մատաթեանի եղբայրը՝ պ. Նշան (այժմ հանգուցեալ) Տրապիզոն եկած էր: Շատ մը ծառերու, բոյսերու սերմեր խնդրեց գտնել: Խնդիրը կատարեցինք ինչպէս որ է՝ խօսքին ընթացքին մէջ իմանալով այդպէս տետրակ մը գրած ըլլալս՝ թախանձանօք խնդրեց ինձմէ իրեն յանձնել, որպէսզի Տփլիսի երթալուն տպել տայ: Իր առաջարկութիւնը նպատակայարմար գտնելով իրեն յանձնեցի նոյն գրուածքը: Անցան մի քանի ամիսներ, Կարին նամակ գրեցի, բացատրութիւն ուղղելու, պատասխան չառի: Քիչ ատենէն իր մահուանը գոյժը առինք»¹¹⁶:

Ցավոք, կորել են նաև **Սարգիս Հայկունուց** և **Վահան Խոյյանից** շուրջ երեք տասնամյակ անց, հայտնի երգահան և խմբավար **Գրիգոր Սյունու** (1876,

¹¹⁰ **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «Արարատ», 1895, № Է, յուլիս, էջ 239:

¹¹¹ աշխ – աշուղ (Ս. Վ.):

¹¹² **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «Արարատ», 1895, № Է, յուլիս, էջ 243:

¹¹³ **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «Արարատ», 1895, № Ը, օգոստոս, էջ 293, 294:

¹¹⁴ **Վահան ավագ քահանա Խոյյանի** անտիպ հուշագրություն, էջ 11:

¹¹⁵ 1874–1879 թթ. (Ս. Վ.):

¹¹⁶ **Վահան ավագ քահանա Խոյյանի** անտիպ հուշագրություն, էջ 18, 19:

Գետաբեկ, այժմ՝ Ադրբեջանում –1939, Ֆիլադելֆիա)՝ համշենահայերից գրանած երգերի տետրերը: Երրորդ դեմքով պատմված նրա ինքնակենսագրականից տեղեկանում ենք, որ 32 տարեկանում՝ 1908 թ. հոկտեմբերին Բաթումից գնալով Թուրքիա, ոչ միայն **Տրապիզոնում**, **Մամսոնում** և **Կիրասոնում** է կազմակերպում նվագախմբեր ու երգչախմբեր, այլև «Տրապիզոնը կենտրոնավայր ընդունելով՝ նա հնարատրություն է ունենում ուսումնասիրել **Սիրմենեի**, **Կարատերի** և **Եամբուլի** գետերու հովիտների Հայնակների (հայ մահմեդականների) կեանքն ու կենդանի մնացած կէս հայկական, կէս թրքական խօսքերով ժողովրդական երգերի բեկորները: 1910-ին անցնելով Էրզրում, նա այնտեղից շարունակում է այդ գործը ասելի լայն մասշտաբով, տարածելով իր գործունեությունը ամբողջ **Համշենի**, **Ճերմեղի տերեսի**¹¹⁷, **Թորթումի** և շրջակայքի մէջ: Այդ ուսումնասիրությունների արդիւնքները 2 մեծ տետրակների մէջ պարփակված նա ներկայացրել էր Թիֆլիզում Մայիլեան էքսպեդիցիային (բանաստեղծ Յովհ. Յովհաննիսեանին). չհասկացուեց, թէ ինչ բախտի արժանացաւ»¹¹⁸:

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Սյունին հայ մահմեդականներին անվանում է «Հայնակներ», որը շատերին անծանոթ բառ է: 1913 թ. տպագրված **Հրայյա Աճառյանի** «Հայերէն գաւառական բառարանում» կարդում ենք. «**Հայ/նակ** Հնգ. Նսխ. Ռմ. **հայերէն լեզու.** – գիտնւ. 2. Նսխ. **ըստ հայոց, հայոյ ոճով.** – չէ մեծցեր»¹¹⁹: Այսինքն՝ Հունգարիայի, Նոր Նախիջևանի և Ռումինիայի բարբառախոս հայերը բառն օգտագործել են «**հայերեն լեզու**», նաև «**հայերի նման, հայերի ոճով**» իմաստներով:

Այստեղ տեղին է նշել, որ կրոնավոխ համշենահայերն էլ իրենց լեզուն՝ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքը, անվանում են «**համշէցնակ (համշէսնակ), հոմշէցնակ (հոմշէսնակ)**»¹²⁰, **համշէցնագ (համշէսնագ), հոմշէցնագ (հոմշէս-**

¹¹⁷ Բնագրում՝ «**Ճերմեղի տերեսի**», հավանաբար տառասխալ կա, կարծում ենք՝ հեղինակը նկատի է ունեցել «**Ճեմեղ գետն**», տե՛ս **Ս. Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «**Արարատ**», 1895, № Ը, էջ 296:

¹¹⁸ **Գրիգոր Սիւնի**, Հայ երաժշտութիւն, հրատարակության պատրաստեց **Մարինե Մուշեղյանը**, Գրականութեան եւ արուեստի թանգարան, Երևան, Գրականութեան եւ արուեստի թանգարանի հրատ., 2005 (–140 էջ), էջ 115, 116: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը:

¹¹⁹ **Հր. Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան // **Էմինեան ազգագրական ժողովածու**, հ. Թ., հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Թիֆլիս, Типография Н. Аганянц, 1913 (–1182 էջ), էջ 635: Տե՛ս նաև **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հատոր երրորդ, ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974 (–584 էջ), էջ 284:

¹²⁰ **Սերգեյ Վարդանյան**, Կրոնավոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (պոլթեր և ուսումնասիրություններ), 2009, էջ 73–75, 298: **Նոյսի**՝ Որոշ դիտարկումներ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի մասին // Ակադեմիկոս Գ. Զախուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կազմակերպած

նագ)¹²¹. Քրիստոնյա համշենահայերն իրենց բարբառին «**համշենակ**» (**և տարբերակները**)¹²² չեն ասում, այլ՝ «**մի լիզվով**»–մեր լեզվով, «**միրվարի**»– մեզ պես, մեզ նման, օրինակ՝ «**Մի լիզվով խօսուշ**»–Մեր լեզվով խոսել, «**Միրվարի խօսուշ**»–Մեզ պես խոսել, Մեզ նման խոսել, «**Մի լիզվով խօսմ**»–Մեր լեզվով խոսիր, «**Միրվարի խօսմ**»–Մեզ պես խոսիր, Մեզ նման խոսիր:

Որ բարբառակիր, բայց օտարախոս հայրենակիցը Համշենի բարբառով, այսինքն՝ հայերեն խոսի, ծագումով ջնիկցիներն ու օրդուցիներն ասում են. «**Հնյրվարի խօսմ**», Տրապիզոն քաղաքում և մերձակա գյուղերում բնակված համշենցիների սերունդները՝ «**Հեյրվարի խօրաթե**»–Հայերեն խոսիր:

Ջնիկցիներն ու օրդուցիներն ասում են՝ «**Հնյրվարի խօսուշ բիդու յմ**», տրապիզոնցի համշենցիները՝ «**Հեյրվարի խօրաթուշ բիդու յե**»–Պետք է հայերեն խոսել:

Գրական հայերենի ազդեցությամբ վերջին տասնամյակներում առավել հաճախ ասվում է «**Հայերէն խօսմ**»–Հայերեն խոսիր:

Հ. Աճառյանն իր «**Քննություն Համշենի բարբառի**» գրքի «Մասնիկներ» գլխում գրում է. «–**վար** (ցույց է տալիս լեզու). ինչ. **հոյիվար** «հայերէն», **դաջգրվար** «տաճկերէն», **ուրուսրվար** «ռուսերէն», **արագրվար** «ափխազերէն» են»¹²³:

«Թուրքերենից փոխառյալ կա նախ–**վարի** մասնիկը, որով կազմվում են հետևյալ մակբայները. **մարտավարի** «մարդու պես» (նոր փոխառություն Կովկասյան բարբառներից), **հոյրվարի** «հայի ձևով», **դաջգրվարի** «տաճկի ձևով», **յահուղիվարի** «հրէի ձևով», **հոմնրվարի** «հույնի ձևով», **խրիստիյանվարի** «քրիստոնեաբար», **մահմէդանվարի** «մահմեդականի ձևով», **արագավարի** «ափխազի ձևով», **չորկուզրվարի** «չերքեզի պես», **գիւջըրվարի** «վրացու նման» են»¹²⁴:

«**Ձահուկյանական ընթերցումներ**» միջազգային գիտաժողովի (2015թ. հունիսի 4–5) նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015 (–224 էջ), էջ 167: **Նույնի՝** Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի մահմեդական համշենահայերից գրառված հայերեն մի քանի բառերի մասին, «**Պատմաբանասիրական հանդես**», 2016, № 3, էջ 81:

¹²¹ Հաճախ «**ա**» ձայնավորը «**մ**» ղնգային բաղաձայնից առաջ վերածվում է «**օ**» ձայնավորի: Առկա է նաև **g>u** և **կ>գ** հնչյունափոխություն:

¹²² Գրական արևելահայերեն մանկական Աստվածաշնչի Համշենի բարբառով (հայատառ և ռուսատառ) թարգմանության գրքում նշված է. «Կրրագան արեվելախայերէնըն հօմշէծնագ (հօշէնծու խօրատա) տառուծ...», տվյալ դեպքում «**հօմշէծնագ**»-ը **նորագույն փոխառություն է Խոփայի խոսվածքից**, տե՛ս **Աստվածաշունճ բիջիգունս դէ. Լաջվեռտին գարգէրը**, Կրրագան արեվելախայերէնըն հօմշէծնագ (հօշէնծու խօրատա) տառու՛ծ **Ռօգա Խասայանը**–պանաստեղծուի, թարկմօսիճ, ՀՀ ԿՄ հընու Ռ-Գ ԿՄ օնտամ, Յէրեվան, Հայաստանի Աստվածաշունճային Ընգէրուտին, 2021 (–60 էջ), էջ 4:

¹²³ Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, 1947, էջ 185, 186: Շրջված ա>ո գրության առթիվ Հ. Աճառյանը գրում է. «ա>է կամ ո», էջ 25:

¹²⁴ Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, էջ 187, 188: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

Բայց միայն քրիստոնյա համշենցիները չէ, որ լեզվանվանման համար «վար» վերջածանց են օգտագործում: Կեսարացի Մահտեսի Հակոբի որդին՝ Հայեայուն ծնված հնդկահայ մեծահարուստ Եղիա Հակոբյանը, 1799թ. կազմած կտակում հիշատակում է իր նախորդ՝ 1793 թվականի «**հօլանդկար**», այսինքն՝ հոլանդերեն, և 1794 թվականի «**Հայնար**»՝ հայերեն, կտակները¹²⁵:

«Հայ/եար»-ը, ըստ Հ. Աճառյանի՝ «հայերեն» իմաստն ունի նաև Ախալցխայի, Արարկիի, Երևանի, Ղազախի, Ղարաբաղի, Պոլսի, Տփղիսի հայերի խոսքում. «Հայեար կը խօսի»¹²⁶: Թիֆլիսի (Տփղիսի) հայերը վրացերենին ասում էին «**վրացեար**»¹²⁷, ռուսերենին՝ «**ռուսար**»¹²⁸, քրդերենին՝ «**քրդեար**»¹²⁹: Նոր-Ջուղայեցիներն իրենց բարբառն անվանում էին «**Ջուղկար**»¹³⁰:

Կրոնափոխ համշենահայերի խոսվածքն առաջիններից մեկը փորձել է ուսումնասիրել վրացի լեզվաբան, Մանկտ Պետերբուրգի համալսարանի հայ-վրացական բանասիրության ամբիոնի հրավիրյալ դասախոս (պրիվատ-դոցենտ), վրացերենի, մեգրելերենի, ճաներենի (լազերեն) մասին գրքերի ու հոդվածների հեղինակ **Իոսեֆ Ղիփշիձեն** (ռուս. աղբյուրներում Иосиф Кипшидзе):

Թիֆլիսի նորաբաց համալսարանի հին վրացերենի ամբիոնի վարիչ 36-ամյա գիտնականը 1918թ. օգոստոսին կրոնափոխ համշենահայերի **Ջալունա** (**Ջալունա**, այժմ՝ Թուրքիայի Արդվիհի նահանգի Խոփայի գավառ, գ. Քոյունջուլար) գյուղում **Իբրահիմ Մուսիսօղլիի** գրի է առել, իր բնորոշմամբ՝ «**հեմշինուրի**» (հեմշիներեն) 115 բառեր ու կարճ նախադասություններ, գրելով նաև վրացերեն թարգմանությունները: Դրանք տվել է Ս. Պետերբուրգի համալսարանի իր նախկին դասախոսին՝ նշանավոր հայագետ և վրացագետ **Նիկողայոս Մանին** (1864-1934):

Բայց, շուտով՝ 1919թ. փետրվարին, երիտասարդ գիտնականը Թիֆլիսում տիֆի համաճարակի զոհ է դառնում: Ակադ. Ն. Մառը կարգավորելով և պարզաբանումներ անելով, 1925թ. այդ գրառումները «**Материалы по хемшинскому наречию армянского языка (По записи И. А. Кипшидзе)**»¹³¹ («Նյութեր հա-

¹²⁵ Մ[իքայել] Նալբանդեանց, Ազգային ժառագոթինք, «Հիսիսափայլ», անագիր, Մոսկվա, 1859, №5, էջ 394:

¹²⁶ Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, 1913, էջ 635:

¹²⁷ Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, 1913, էջ 1007:

¹²⁸ Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, 1913, էջ 949:

¹²⁹ Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, 1913, էջ 1129:

¹³⁰ Հ. Աճառեան, Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի, Երեւան, ապակետիպ, 1940 (–402 էջ), էջ 14:

¹³¹ Н. Мара, Материалы по хемшинскому наречию армянского языка (По записи И. А. Кипшидзе), «Записки Коллегии Востоковедов при Азиатском музее Российской Академии наук», т. 1, Российская Академия наук, Главное управление научными учреждениями

յոց լեզվի խեմշինյան բարբառով (Ըստ Ի. Ա. Ղիփշիձեի գրառման)» վերնագրով հրատարակում է «**Записки Коллегии Востоковедов при Азиатском музее Российской Академии наук**» («Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Ասիական թանգարանին առընթեր Արևելագետների ընկերակցության Տեղեկագիր») տարեգրքում:

Մեզ հայտնի չէ, թե ինչու՞ մեծանուն գիտնական **Հրայցա Աճառյանը** չի ուսումնասիրել կրոնափոխ համաշենահայերի խոսվածքը, երբ քանիցս այդ հնարավորությունն ունեցել է: Նա «**Կյանքիս հուշերից**» գրքում պատմում է, որ ծնողները 1904թ.՝ իր հարսանիքից կարճ ժամանակ անց, Շուշից Կ. Պոլիս վերադարձի ճանապարհին կանգ են առնում Բաթումում, հավանում են քաղաքը և որոշում են մնալ այնտեղ: Եվ այդ թվականից սկսած, մի քանի տարի Հ. Աճառյանն ու տիկինը՝ Արուսյակ Աճառյանը (1885, Շուշի–1925, Երևան)¹³² նրանց հյուր էին գնում և ամռանը հանգստանում Բաթումից հյուսիս գտնվող **Մախինջաուրի** գյուղում, որն ավելի հայտնի է իր երկաթուղային կայարանով¹³³: Այնտեղից նախորդ կայարան՝ ծովափնյա **Քոբուլեթի** (Կոբուլետ) գյուղը, որտեղ բնակվում էին նաև կրոնափոխ համաշենցիներ, շատ մոտ էր:

Նշենք, որ Ճորոխի գետաբերանի ձախ կողմի կրոնափոխ համաշենահայերի գյուղերը՝ **Ավգիան** (այժմ՝ Ախալսուփեղի գյուղի կազմում), **Ճառնալին**, **Գոնիոն**, **Քվարիաթին**, **Սարփին** ևս Բաթումից հեռու չէին: Նրանց բնակավայրերի ու լուսքաշարը հասնում էր **Մաքրիյալ** (այժմ՝ Քեմալփաշա, Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի գավառում), որը նույնպես Ռուսական կայսրության սահմաններում էր: Կարծում ենք՝ նա չի իմացել այդ վայրերում ապրող համաշենահայերի մասին, այլապես անպայման կփորձեր հանդիպել նրանց հետ, քանի որ Համաշենի բարբառով հետաքրքրվել է դեռևս 1898–1902 թթ. Էջմիածնի Ճեմարանում աշխատած տարիներին: 1911թ. նա գրել է. «Համաշենի բարբառը ուսումնասիրուած չէ դեռ, բայց հրատարակուած են բառական ընդարձակ բնագիրներ: Ասոնց մէջ գլխատորն է **Արարատ** 1892, էջ 428–447 հրատարակուածը, որ թէև ստորագրուած չէ, բայց ծանօթ բանահաւաք Ս. Հայկունիինն է: Էջմիածին եղած ժամանակս առիթ ունեցած եմ իր միջոցով նոյն բնագիրը վերածելու գիտական ուղղագրութեան...»¹³⁴:

(Главнаука), Государственное издательство (Госиздат), Ленинград, 1925 (- 568 с.), с. 73-80

¹³² Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Խ. Ա., Հրատարակութիւն Հայաստանի Խ. Ա. Հանրապետության պետական համալսարանի, Երեւան, Համալսարանի ապակետիպ, 1926 (ձեռագիր էջագրված՝ 1232 էջ), չէջագրված՝ էջ V: **Գառնիկ Ստեփանյան**, Հրայցա Աճառյան (Կյանքը և գործը), Երևան, ԵՊՀ հրատ., 2013 (- 352 էջ), էջ 193:

¹³³ **Հրայցա Աճառյան**, Կյանքիս հուշերից, Երևան, ԵՊՀ «Միտք» հրատ., 1967 (- 460 էջ), էջ 273, 301–305, 315:

¹³⁴ Հր. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն. ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով)//**Էմիւնեան ազգագրական ժողովածու**, Խ.Ը.,

Հ. Աճառյանի նման հանճարը չէր կարող նույնիսկ հանգստյան վայրում գիտությամբ չգրադվել: Նա Բաթումում բնակվող արդվինցիներից տեղեկություններ է քաղում Արդվինի, Արտանուշի ու Շավշեթ-Իմերխևի գավառակների լուսավորչական և կաթոլիկ (ֆրանկ) հայերի գյուղերի ու թվաքանակի մասին, ըստ որի՝ կաթոլիկները գերակշռում էին¹³⁵: «Այս բարբառին վրայ ոչ մեկ ուսումնասիրություն և ոչ տող մը բնագիր կայ հրատարակուած, ուստի յաջորդ տողերը իմ անձնական հետազոտութեանս արդիւնքն են՝ Բաթումի մէջ քաղուած գաղթական Արթվինցիներէ»¹³⁶, — գրել է նա հետագայում:

Հետաքրքիր է, որ նույն տարիներին՝ 1902թ., հայ ազատագրական պայքարի ապագա նշանավոր գործիչ, 20-ամյա Ռուբեն Տեր-Մինասյանը երբ Բաթում է գալիս¹³⁷, առաջինը, որ նրան ներկայացնում է նոր ընկերը, քաղաքի հայության խճանկարն է լինում, որի մի գույնն էլ իսլամ հայերն էին. «Հայութիւնը Պաթումի մէջ այնքան հին է, որքան հին է ինքը՝ Պաթումը: Ան կը ծորայ Պաթումի վրայ Ճորոխ գետին հետ՝ Արդուին, Արտանուշ, Խոփայ¹³⁸, Բորչխայ են.:

... Հայութիւնը մի կրօնի չէ. ան թուրք, ֆրանկ եւ հայ է, այլ խօսքով՝ իսլամ, կաթոլիկ եւ լուսատրչական: Ասոնք իրարմէ այնքան հեռու են, որքան մենք եւ թուրքերը, որքան մենք եւ ռուսերը, առանց չափազանցութեան: Թէեւ այս երեքն ալ գտարին հայ են, բայց ցաւօք սրտի՝ մեր իսլամ եւ քրիստոնեայ եկեղեցիները կը ջանան ատելի հեռացնել զանոնք իրարմէ...

... Մենք վրացիներէն պիտի օրինակ առնենք: Ազարիկն¹³⁹ ու Միմոնը ինծի կը հաւաստիացնէին, որ իսլամ հայերու թիւը ատելի շատ է Ճորոխի ավերումն եւ Պոնտոսի փեշերուն վրայ, քան հայ համարուածներունը: Հարցը ուրեմն խոփացիներուն եւ բորչխացիներուն չի վերաբերիր, որոնք կրնան կորիզ դառնալ, հարցը ատելի ընդարձակ եւ լուրջ է: Ահա մեզի ասպարէզ մը՝ ցանկու եւ հնձելու համար»¹⁴⁰:

1908թ. հետո, երբ Թուրքիա երթողարձը հեշտացավ, նույնիսկ Բաթումից

Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911 (–XII+ 306 էջ, քարտեզ), էջ 184:

¹³⁵ Հր. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն..., 1911, էջ 291, 292:

¹³⁶ Հր. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն..., 1911, էջ 291:

¹³⁷ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա հատոր, Կարսի հնոցին մէջ (1904), Գ հրատարակութիւն, Թեհրան, 1982, վերահրատարակություն՝ Երևան, «Ադանա» հրատ., 1990 (–402 էջ), էջ 358–360:

¹³⁸ Գրքում հրատարակվել է տպագրական վրիպակով՝ Փոփայ, էջ 363:

¹³⁹ Կարծում ենք՝ խոսքը Ազարիկ Իրիզեյանի (Ազարյան) մասին է, որը 1895թ. ջարդերից հետո Տրապիզոնից տեղափոխվել է Բաթում, տե՛ս **Յովակիմ Յովակիմեան (Արշակունի)**, Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պէրյութ, տպագրութիւն «Մշակ»-ի, 1967 (–952 էջ), էջ 803, 804:

¹⁴⁰ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա հատոր, էջ 363, 364:

գրոսաշրջիկներ սկսեցին գնալ Խոփա: Թիֆլիսի «**Հորիզոն**» թերթի 21-ամյա թղթակից **Օհանջան Մարությանը**¹⁴¹, որի ծննդավայր **Ղարաղաղի Ողան գյուղի** բնակիչները ևս մեր այս գրքում քննարկվող զվարճապատումների հերոսներից են¹⁴², 1911 թ. Բաթումից տեղեկացնում է. «Տեղումս գոյություն ունեցող՝ «Горный Клуб» (լեռնային ակումբ) ընկերությունը, որի նպատակն է գլխատրապետ էքսկուրսիաներ կազմակերպելու (արդեն 4–5 անգամ Բաթումի շրջակայքում սարքեց) անցեալ մայիսի 29-ին պ. **Աշոտ Մնդոյեանի «Տրապիզոն»** շոգենաով, մօտ 160 մարդկանցով մի էքսկուրսիա սարքեց ծովի վրայով դեպի Տաճկաստանի սահմանը՝ Լինայի վրայով մինչև «**Խօպա**» և երեկոյան ժամը 10-ին վերադարձան:

Գեղեցիկ եղանակը և սիրուն ծառուտ ապառաժներն ու ջրվեժները հիացրել էին էքսկուրսանտներին, մանաւանդ **Ճօրօխ** գետը իր պղտոր յորձանքներով թափող բերանով:

...«Горный Клуб» ընկերությունը օրերս դարձեալ պ. Մնդոյեանի նաով էքսկուրսիա է սարքում դեպի **Տրապիզոն** քաղաքը»¹⁴³:

Լազերենի հետազոտման համար այս «**Տրապիզոն**» շոգենավով է 1909 թ. Խոփա մեկնել 45-ամյա **Նիկողայոս Մառը**: Նա նավում էլ ծանոթացել է կրոնափոխ համշենահայերի հետ. «...пароход армянский, капитан турок, также команда, в буфете один армянин, другой турок. В числе пассажиров несколько греков и богатых хемшинов. Хемшины говорят по-русски и занимают меня характеристикою лазов в довольно мрачных чертах: особенно не шадят красок, чтобы ярко изобразить лазскую скупость. На пароходе с капитаном управляющий армянин. Ему известно про мои научные работы, больше про раскопки в Ани. Его энергичная рекомендация местным агентам парохода оказала мне существенную помощь, особенно в Архаве»¹⁴⁴ («...շոգենավը հայկական

¹⁴¹ Թղթակցությունը ստորագրված է «**Amico**»: Օհանջան Մարությանն այդ և այլ կեղծանուններով բազմաթիվ կյութեր է հրատարակել մամուլում, տե՛ս **Բախտիար Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան, էջ 52, 474, 666:

¹⁴² Ողան գյուղի մասին տե՛ս «**Ղարաբաղի (Արցախ) և Ղարաղաղի (Պարսպատունիք) տարբերակները**» գլխում:

¹⁴³ **Amico**, Բաթում, «**Հորիզոն**», օրաթերթ, Թիֆլիս, 1911, յունիսի 24, № 135:

¹⁴⁴ **Н. Мара**, Из поездки в Турецкий Лазистан (Впечатления и наблюдения), «**Известия Императорской Академии наук**», С. Петербург, 1910 (часть I, с. 547-570, часть II, с. 607-632), с. 552. Ծովափնյա Արխավին՝ Արհավին, այժմ Արդվինի սահանգի Արհավիի գավառի կենտրոնն է–Ս. Վ.:

Ն. Մառին օգնած **Աշոտ Մնդոյանի** մասին, ցավոք, գրավոր աղբյուրներում տեղեկություններ չգտանք: Հետաքրքիր է, այդ նույն՝ 1909 թ. տարվա վերջին՝ դեկտեմբերի 28-ին (նոր տոմարով՝ 10.01.1910) Բաթումում ծաված ապագա նշանավոր ճարտարապետ **Աշոտ Աշոտի Մնդոյանցը**, որն Օդեսայում մասնագիտական կրթություն ստանալուց հետո

է, նավապետը թուրք է, անձնակազմը՝ նույնպես, բուֆետում մեկը հայ է, մյուսը՝ թուրք: Ուղևորների թվում են մի քանի հույներ և հարուստ խեմշիններ: Խեմշինները խոսում են ռուսերեն և ինձ զբաղեցնում են լազերի բնութագրությամբ՝ բավականին մոայլ գծերով. հատկապես գույներ չեն խնայում, որ վառ պատկերեն լազական ժխտությունը: Շոգենավի վրա նավապետի հետ է հայ կառավարիչը: Նրան հայտնի է իմ գիտական աշխատանքների, ավելի շատ՝ Անիի պեղումների մասին: Շոգենավի տեղական գործակալներին նրա ազդու հանձնարարականն ինձ էական օգնություն ցուցաբերեց, հատկապես Արխավիում»):

Մոտ մեկ ամիս շրջագայելով Լազիստանի ռուսական և թուրքական տիրապետության տակ գտնվող հատվածներում, նա 1910թ. հրատարակված իր ուղեգրության մեջ անդրադառնում է նաև կրոնափոխ համշենցիներին (хемшин)¹⁴⁵:

Նույն թվականին լույս է տեսնում նաև լազերենին նվիրված նրա գիրքը, որում գրում է. «Влияние хайского языка незначительное и более позднее, быть может, через армянскую речь хемшинов. Особенно сильно могло бы сказаться такое поздне-армянское влияние на атинском говоре: по Атинскому ущелью и происходит постоянное движение деятельных хемшинов для общения с внешним миром через море»¹⁴⁶. Նա տողատակում մանրամասն ներկայացնում է, որ «*хайский язык*» ասելով, նկատի ունի իշխանական խավից ժառանգած գրաբար լեզուն, իսկ «*армянский язык*»-ը հասարակ ժողովրդի ռամկականը՝ աշխարհաբարն է, որը միակ կենդանի լեզուն է¹⁴⁷: Ուստի, ընթերցողներին հասկանալի լինելու համար, մենք այս հատվածը թարգմանում ենք ոչ թե բառացի, այլ վերոհիշյալ պարզաբանումը հաշվի առնելով. «Գրաբարի ազդեցությունն աննշան է ու

1932–1935 թթ. Բաթումում ճարտարապետ է աշխատել, այդ թվում՝ քաղաքի գլխավոր ճարտարապետ, արդյոք նրա որդին է: Տեղափոխվելով Մոսկվա նախագծել է մի շարք հանրահայտ կառույցներ, արժանացել Ստալինյան (1949) և Լենինյան (1962) մրցանակների, սակայն 56-ամյա տարիքում հանկարծամահ է եղել:

Եզակի երևույթ է, որ անունն ու հայրանունը նույնն են, ուստի փորձեցինք պարզել պատճառը: Հայաստանի ազգային արխիվի նրա ֆոնդում պահվող մոտ ութ տասնյակ թերթերում ու ամսագրերում տպագրված հարցազրույցներում, նրան նվիրված հոդվածներում նշանավոր ճարտարապետի կյանքի բաթումյան շրջանի և ընտանիքի մասին ոչինչ չկա (ՀԱԱ, ֆ. 769, ց. 1, գ. 33): Ինքն էլ իր նամակներում (ՀԱԱ, ֆ. 769, ց. 1, գ. 28) և ինքնակենսագրություններում (ՀԱԱ, ֆ. 769, ց. 1, գ. 34) լռություն է պահպանում ծնողների մասին, այն դեպքում, երբ ԽՍՀՄ-ում 1950–60-ական թթ. գրված ինքնակենսագրություններում պարտադիր նշվում էր: Տե՛ս նաև ՀՀՀ, հ. 3, Երևան, 1999, էջ 755:

¹⁴⁵ **Н. Марр**, Из поездки в Турецкий Лазистан, «Известия Императорской Академии наук», С.-Петербург, 1910, с. 552, 556-558, 608-614, 618, 624, 628.

¹⁴⁶ **Н. Марр**, Грамматика чанского (лазского) языка, с хрестоматиею и словарем, С.-Петербург, Типография Императорской Академии Наук, 1910 (- 270 с.), с. XIV. Ծովափնյա Աթինաս այժմ կոչվում է Փազար և Ռիզեի նահանգի Փազարի գավառի կենտրոնն է՝ Ս. Վ.:

¹⁴⁷ **Н. Марр**, Грамматика чанского (лазского) языка, с хрестоматиею и словарем, 1910, с. X.

ավելի ուշ շրջանի, և գուցե խեմշինների աշխարհաբարի միջոցով: Այդպիսի ուշ-հայկական ազդեցությունը հատկապես ուժեղ կարող էր դրսևորվել Աթինայի խոսվածքի¹⁴⁸ վրա. ծովի միջոցով արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու համար հենց Աթինայի կիրճով են մշտապես երթևեկում գործույնյա խեմշինները»:

Նշենք, որ Ն. Մառը, զլանալով գովեստի մի քանի խոսք ասել 18–19 տարեկանում Կ. Պոլսում և Կարինում լազերենի առաջին հետազոտողներից մեկի՝ Հ. Աճառյանի¹⁴⁹ հասցեին, քանիցս քննադատում է նրան¹⁵⁰:

Վերոնշյալ գրքի մասին 1911թ. տպագրված գրախոսության մեջ¹⁵¹ Հ. Աճառյանն անդրադառնում է 1899-ից իր ընկեր¹⁵² Ն. Մառի մտքերին ու հայերեն-լազերեն փոխառություններին, բայց մեր թեմայից չհեռանանք:

Եվ այսպես, 1910թ. 34-ամյա **Հրայա Աճառյանը**, Կ. Պոլիս վերադարձած ծնողների մոտ գնալու ճանապարհին, Համշենի բարբառին մոտիկից ծանոթանալու նպատակով, տիկնոջ հետ Բաթումից շոգենավով հասնում է Տրապիզոն, ուր երկու շաբաթ հանգրվանում է մի շուշեցի երիտասարդի հյուրանոցում¹⁵³:

Այստեղ նա տրապիզոնցիների և, ինչպես ինքն է նշում, իր բարեկամ, ուսուցիչ **Նշան Խտոյանի** օգնությամբ¹⁵⁴ որոշ չափով քննել է քաղաքացիների բարբառը¹⁵⁵:

Համշենահայ ազգագրագետ և բանահավաք **Բարունակ Թողաքյանը** (1899, Տրապիզոնի գավառ, Յոնուրա, գ. Կյուշանա¹⁵⁶–1987, ք. Սոչի) **Նշան Խտոյանի** մասին գրում է. «...Տրապիզոնի Ազգային վարժարանի երկարամյա հարգված

¹⁴⁸ Նկատի ունի ճաներենի (լազերենի) Աթինայի խոսվածքը:

¹⁴⁹ Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, 1967, էջ 138–141:

¹⁵⁰ H. Mapp, Грамматика чанского (лазского) языка, с хрестоматиею и словарем, 1910, с. X.

¹⁵¹ Հ. Աճառյան, H. Mapp, Грамматика чанского (лазского) языка. С.П. 1910, «Արարատ», 1911, մայիս, №5, էջ 414–420: Լազերենի և Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի առընչությունների մասին տես Ս. Վարդանյան, Թուրքիայում քնակվող համշենահայերի արդի լեզվավիճակը // «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի (2014թ., հոկտեմբերի 8–9) զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2014 (–226 էջ), էջ 211–222: **Նույնի** Թուրքիայի կրոնավիճակի համշենահայերից գրառված մի երգի մասին // **Գիտական հոդվածների ժողովածու** (սվիրվում է Հ. Աճառյանի ծննդյան 140-ամյակին), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2016 (–398 էջ), էջ 356, 359, 360:

¹⁵² Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, 1967, էջ 222–226:

¹⁵³ Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, 1967, էջ 315–318:

¹⁵⁴ Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն..., 1911, էջ 180:

¹⁵⁵ Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն..., 1911, էջ 178–183:

¹⁵⁶ **Բարունակ Թողաքյան**, Համշենահայերի ազգագրությունը // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ 13, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 5, 44–46:

ուսուցիչ-կառավարիչն էր, որի աշակերտը լինելու բախտն ինձ վիճակվել է 1908–1914 թվականներին: Երջանկահիշատակ ուսուցիչս եղբայրն էր Տրապիզոնի Հնչակյան կուսակցության ղեկավար Համբարձում Խտշյանի, որին թուրք իշխանությունը կախաղան բարձրացրեց 1906թ. Համբարձման տոնի գիշերը, Տրապիզոնի կենտրոնական հրապարակում: Նշան Խտշյանը նահատակվեց 1915թ. Մեծ եղեռնին»¹⁵⁷:

Հավելենք, որ Նշան Խտշյանը նաև բանահավաք էր և հաճախ էր հրատարակվում «**Հանդէս ամսօրեայում**»¹⁵⁸:

Մեկ տարի անց Հրայր Աճառյանի լույս ընծայած «**Հայ բարբառագիտութիւն...**» աշխատության մեջ կարդում ենք. «Տրապիզոնի բարբառին վրայ ոչ մէկ ուսումնասիրութիւն կայ գրուած. չկան նոյնպէս բնագիրներ: 1910 թուի ամառը երկու շաբաթ մնալով Տրապիզոնի մէջ՝ ստուգեցի որ Տրապիզոնի բարբառը Պօլսոյ, մանաւանդ Խրիմի բարբառին շատ մօտ է»¹⁵⁹: «Տրապիզոնի բարբառը կը տարածուի փոքր շրջանի մը մէջ, որ կը պարունակէ միայն Տրապիզոն, Կիւմիշլիսանէ և Կիրասոն քաղաքները: Վերջինս Տրապիզոնէն եկած գաղթականութիւն մ'է: Տրապիզոնի շրջակայ գիւղերը չեն մտներ նոյն բարբառին շրջանակին մէջ և կը պատկանին Համշէնի բարբառին»¹⁶⁰:

Իսկ Համշէնի բարբառին անդրադառնալիս, նա «**Արարատ**» ամսագրում Ս. Հայկունու 1892թ. տպագրած բնագրի մասին խոսելուց հետո, առանց հեղինակներին ու վերնագրերը նշելու, գրում է. «Ուրիշ անելի փոքր բնագիրներ ու բառերու հաւաքածոներ հրատարակուած են թերթերու մէջ, ինչպէս **Բիրակն**, 1899, էջ 508, 558, 603, 654, 699, 752, 779, 1900, էջ 14, 29, 42, 59, 82 և 120. – **Հանդէս Ամսօրեայ**, 1891, էջ 116, 300, 1892, էջ 24, 183–4, 382–3, 1895, էջ 13, 183–6. – **Արարատ**, 1895, էջ 54, 83–84, 239–243, 293–297, 396–400»¹⁶¹:

¹⁵⁷ Նշխարներ Համշէնի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց **Բարունակ Թողլաքյանը**, Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1986 (–256 էջ + քարտեզ), էջ 248, 249:

¹⁵⁸ **Նշան Գ. Խտշեան**, Ազգային ժողովրդական առածներ Տրապիզոնի կեանքէն քաղած, «**Հանդէս ամսօրեայ**», Վիեննա, 1890, №7, էջ 163, 164, №12, էջ 289: 1891, №4, էջ 116, №10, էջ 300, 301: 1892, №1, էջ 24, №6, էջ 183, 184, №12, էջ 382, 383: 1893, №12, էջ 358, 359: 1895, №1, էջ 13: **Նոյնի՝** Պոնտական գաւառաբարբառներէն նշխարք, «**Հանդէս ամսօրեայ**», 1895, №6, էջ 183–186:

¹⁵⁹ **Հր. Աճառեան**, Հայ բարբառագիտութիւն..., 1911, էջ 178: Ըստ **Գևորգ Զահուկյանի**, Տրապիզոնի բարբառն առանձին միավոր չէ, այլ Պոլսի միջբարբառի խոսվածք է, տես **Գ. Բ. Զահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն), ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ԳԱ հրատ., 1972 (–348 էջ), էջ 184, 217:

¹⁶⁰ **Հր. Աճառյան**, Հայ բարբառագիտութիւն, էջ 178:

¹⁶¹ **Հր. Աճառեան**, Հայ բարբառագիտութիւն, էջ 184–195:

Պարզաբանները, որ Հ. Աճառյանը նկատի ունի 1899 և 1900 թթ. «**Բիրակ-նում**» հրատարակված Ճանիկի (Սամսոն) թեմի առաջնորդական տեղապահ¹⁶² **Բաբկեն վրդ. Կյուլեսերյանի** (1928-ից՝ Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս) Տրապիզոնի նահանգի Սամսոնի գավառի համընդհանրական գործածած 600-ից ավելի բառերից կազմված բառարանը¹⁶³, 1891, 1892 և 1895 թթ. «**Հանդես ամսօրեայում**» լույս տեսած **Նշան Խտշանի** գրառած առածները¹⁶⁴, 1895 թ. «**Արարատ**» ամսագրում **Սարգիս Հայկունու** տպագրած նյութերը¹⁶⁵:

Հ. Աճառյանն ուսուցիչների և գյուղացիների օգնությամբ հետազոտում է նաև Համշենի բարբառը. արդյունքը նույնպես հրատարակվում է 1911 թվականին «**Էմինեան ազգագրական ժողովածուում**»¹⁶⁶:

Ավելի քան չորս տասնամյակ անց՝ 1953 թ., մահվան պատճառով կիսատ մնացած¹⁶⁷ նրա հրաշալի հուշագրության մեջ այդ օրերի մասին կարդում ենք. «Ուզում էի ուսումնասիրել Համշենի բարբառը, որ Տրապիզոնի բարբառից տարբեր է: Երբ իմ միտքը հայտնեցի պանդոկապետին և ասացի, որ ուզում եմ գնալ գյուղերը, նա ասաց, որ այդ կողմի գյուղերը բոլորովին ցրված են. մի տուն այստեղ է, մի տուն հինգ րոպե հեռու. այնպես որ այդտեղերը շրջագայել անհնարին է: Ավելի լավ կլինի, ասաց նա, գյուղացիներին բերել ձեզ մոտ, կմնան այստեղ և դուք հարցաքննելով, ձեր ուզած ձևով կօգտվեք նրանցից:

Այդ մասին հայտնեց ազգային մարմիններին, որոնք սիրահոժար նպաստեցին այս գիտական գործին, որովհետև իրենց բարբառի քննությանն էր վերաբերում: Եկան մալազի, ապկիոնցի, կյուշանացի և ճոշարացի գյուղացիներ, որոնց հետ երկու շաբաթ աշխատելով ուզած նյութերս հավաքեցի: Շատ ավելի հետո գնալով Գագրի և բնակվելով Էքսուզյան ընտանիքում, ավելի մոտիկ

¹⁶² Առաջնորդական Տեղապահ Ճանիկի **Բաբգեն Վարդապետ**, Համընդհանրական հայերենը, «**Լոյս**», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1906, 15 յունուար, թիւ 2, էջ 40, 41: «**Լոյս**» շաբաթաթերթի խմբագիր-տնօրենը հենց **Բաբկեն Վ. վրդ. Կյուլեսերյանի** էր:

¹⁶³ **Բաբգեն Վ. Կիլիսեւերեան**, Ճանիկի վիճակին մէջ գտնուող Համընդհանրական գաւառաբարբառը, «**Բիրակն**», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, №31–32, էջ 508–513, №35, էջ 558–560, №38–39, էջ 603–605, №41, էջ 654–656, №44, էջ 699–700, №47–48, էջ 752–754, №49, 779–780, 1900, №1, էջ 14–16, №2, էջ 29–31, №3, էջ 42–43, №4, էջ 59–62, №6, 82–84, №8, էջ 120, 121:

¹⁶⁴ **Նշան Գ. Խտշեան**, Ազգային ժողովրդական առածներ Տրապիզոնի կեանքէն քաղած, «**Հանդես ամսօրեայ**», 1891, №4, էջ 116, №10, էջ 300, 301: 1892, №1, էջ 24, №6, էջ 183, 184, №12, էջ 382, 383: 1895, №1, էջ 13: **Նույնի՝** Պոնտական գաւառաբարբառներէն նշխարք, «**Հանդես ամսօրեայ**», 1895, №6, էջ 183 186:

¹⁶⁵ **Սարգիս Հայկունի**, Առածներ Տրապիզոնի հայ գիւղացոց բարբառով, «**Արարատ**», 1895, №2, էջ 54: Հանելուկներ Տրապիզոնի գիւղացոց բարբառով, №3, էջ 83, 84: Կորած ու մոռացուած հայեր, №7, էջ 239–243, №8, էջ 293–297: Հայ Գասապարը, №10, էջ 397–400:

¹⁶⁶ **Հր. Աճառեան**, Հայ բարբառագիտութիւն..., 1911, էջ 184–195:

¹⁶⁷ **Հր. Աճառյան**, Կյանքիս հուշերից, էջ 3, 4:

շփվեցի համշենցոց հետ և կազմեցի Համշենի բարբառի քննությունը, որ մեր Ակադեմիայի կողմից հրատարակվեց 1947 թվականին»¹⁶⁸:

Հ. Աճառյանը, Սարգիս Հայկունուց քաղելով, «**Քննություն Համշենի բարբառի**» գրքում բավականին մանրամասն ներկայացնում է Սյուրմենեի (Սև գետ) գավառակի հայության 1710-ական թթ. բռնի կրոնափոխության արյունոտ պատմությունը¹⁶⁹, բայց չի նշում, թե ինչո՞ւ, երբ 1910 թ. ինքն այդքան մոտ էր Սյուրմենեին, այնտեղից Տրապիզոն եկող-գնացող կրոնափոխ, բայց հայախոս գյուղացիներից նրանց գավառաբարբառի մասին տեղեկություններ չի քաղել:

Գուցե 1910 թ. նա դեռևս չգիտեր նրանց մասին: Ընդհակառակը, լավատեղյակ էր և նույնիսկ 27 տարեկանում՝ 1903 թ., **Հակոբ Մանանդյանի** հետ հրատարակել է «**Հայոց նոր վկաները**» մեծածավալ և արժեքավոր աշխատությունը: Նա **Սարգիս Հայկունու** «Կորած ու մոռացուած հայեր» հոդվածից օգտվելով, «Տէր Կարապետ քահանայ Թորոպիցի» վկայաբանության մեջ վերապատմել է Սյուրմենեի կրոնափոխության պատմությունը¹⁷⁰:

Թեև գրքում նշված չէ, թե որ վկայաբանությունը ղվ է հրատարակության պատրաստել, բայց դրա պատասխանի բանալին գտնում ենք Հ. Աճառյանի հուշագրության մեջ. «...Որոշելու համար, թե ո՞ր գլուխը ղվ է գրել, այսպես պայման կապեցինք. երբ նահատակի պատմության վերջում գրված տեղեկությունը սկսում է «այս» բառով, դա Մանանդյանինն է. երբ սկսում է «սույն» բառով՝ իմն է. իսկ երբ սկսում է «հիշյալ» բառով, իմն է, բայց քրոջս (Արմենուհու) աշխատակցությամբ»¹⁷¹:

Կարծում ենք՝ Սյուրմենեի կրոնափոխ հայերի բարբառը չուսումնասիրելու պատճառներից մեկն էլ այն է, որ Ս. Հայկունին վերոնշյալ հոդվածում գրելով, որ նրանց «**մեծին ու փոքրին խօսքը հայերէն**»¹⁷² է, քրիստոնյա մնացածների և կրոնափոխների խոսվածքային տարբերությունների մասին չի նշում, ուստի Հ. Աճառյանը բավարարվել է Տրապիզոնի մոտակա գյուղերի քրիստոնյա հայերի բարբառի քննությամբ, որի արդյունքն օգտագործել է «**Էմինեան ազգագրական ժողովածուի**» 1911 և 1913 թթ. հրատարակված Ը և Թ հատորներում¹⁷³:

¹⁶⁸ Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, 1967, էջ 320:

¹⁶⁹ Հրայցա Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 5–8:

¹⁷⁰ Հայոց նոր վկաները (1155–1843), Գիտական հրատարակություն բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ, ընդարձակ տեղեկություններով և ծանօթություններով, և ձեռագրերի, նահատակների, յատուկ անունների ու օտար բառերի մանրամասն ցուցակներով և ցանկերով: Աշխատությամբ Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1903 (–834 էջ), էջ 702–709: Տես նաև Հայոց նոր վկաները (1155–1843), կազմեցին Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, գրաբարից թարգմանությունը՝ Գևորգ Թոսունյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, 2015 (–320 էջ), էջ 295–302:

¹⁷¹ Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 239:

¹⁷² Սարգիս Հայկունի, Կորած ու մոռացուած հայեր (Տրապիզոնի հայ-մահմեդական գիւղերն և նրանց աւանդութիւնները), «Արարատ», 1895, № Է, յուլիս, էջ 243:

¹⁷³ Հ. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն, 1911, էջ 178–195: Նույնի՝ Հայերէն գաւառական բառարան, 1913:

Շատ կարևոր է նաև այն փաստը, որ տրապիզոնցի ուսուցիչ **Նշան Խտշյանն** արդեն ուսումնասիրել էր Սյուրմենեի հայոց բարբառը և հավաքել բանահյուսական արժեքավոր նյութեր, որոնք 1905թ. ներկայացրել էր **Հովսեփ Իզմիրյանցի Սահակ Մեսրոպյան** հեղինակավոր մրցանակի: Հինգ հոգանոց հանձնաժողովը (անդամներից մեկը Բաբկեն ծ. վրդ. Կյուլեսերյանն էր)¹⁷⁴, Կ. Պոլսի «Արևելք» թերթում մեկիկ-մեկիկ ներկայացնելով առաջադրված բոլոր 18 աշխատությունները¹⁷⁵, Նշան Խտշյանի «Անգիր յիշատակարան կամ Համ-շէնի Հայոց գաւառաբարբառը» հետազոտության մասին մասնավորապես արձանագրել է. «337 միջին երեսներէ բաղկացեալ, եւ երկու մասերու բաժնուած, որոց առաջինը կը պարունակէ քերականական ուրուագիծ և բառարան, Սիւրմենէի¹⁷⁶ եւ արդի Համշէնցոց վրայ տեղագրական, աշխարհագրական եւ ազգագրական տեսութիւններով, եւ երկրորդն հաւաքածոյ մըն է աշուղի սիրերգերու (թուով 43), նախապաշարմանց (թուով 164) տեղացոց բարբառով ի գիր առնուած, առածներու՝ այբուբենական կարգի վերածուած (թուով 134), երազներու ռամկական մեկնութեանց՝ դարձեալ այբուբենական կարգով շարադրուած (թուով 63), հէքեաթներու (թուով 8), գաւառաբարբառով պատմուած եւ աւանդութեանց (թուով 10), իւրաքանչիւրին տակ բացատրական փոքրիկ բառարանով: Հայ պատուանց անելորդապաշտական բանաձեւերու եւ գրերու, հանելուկներու (թուով 32), շուտասելիքներու (թուով 7), արական եւ իգական կրճատեալ յատուկ անուններու, երդմանց, անիծից, օրհնութեանց: Նշան Խտշեանի այս գործը խղճամիտ կերպով աշխատուած լուագոյն գործերէն մին է, գոր հմտութեամբ եւ միանգամայն գաւառաբարբառներու կարեւորութեան խորին համոզմամբ ու զիտակցութեամբ յորինած է: Գրեթէ ամէն Գլուխներէն առաջ կը գտնուի տեսութիւն մը, յորում հեղինակը կը խօսի մէն մի Գլխու մէջ յառաջ բերուած նիւթոյն, բառացանկ, հէքեաթ, սիրերգ, առած, եւն. պիտանութեան եւ նշանակութեան վրայ, իբր ցոլացուցիչ ժողովրդական գրականութեան, մտքին ու բարուց, անցեալ եւ ներկայ, Քերականական գիտելիք ներկայացուած են կանոնաւոր ու յստակ ամփոփմամբ»¹⁷⁷:

¹⁷⁴ Տեղեկագիր Սահակ Մեսրոպեան Գրական մրցանակաբաշխութեան, «Արևելք», օրաթերթ, Կ. Պոլիս, 1905, յուլիս 8/21, թիւ 5920:

¹⁷⁵ Տեղեկագիր Սահակ Մեսրոպեան Գրական մրցանակաբաշխութեան, «Արևելք», 1905, յուլիս 8/21 և յուլիս 9/22, թիւ 5921:

¹⁷⁶ Տպագրական վրիպակ է, կարդալ՝ Սիւրմենէի-Ս. Վ.:

¹⁷⁷ Տեղեկագիր Սահակ Մեսրոպեան Գրական մրցանակաբաշխութեան, «Արևելք», 1905, յուլիս 9/22, թիւ 5921: Ակադ. **Գևորգ Զահուկյանի** «Հայ բարբառագիտության ներածության» (1972) գրականության ցանկում նշված է նաև **Ն. Խտշյանի** աշխատությունը (էջ 334), սակայն գրքի որևէ էջում այն չի հղված, իսկ Խտշյանի ազգանունը տպագրված է **Խոշյան**, ինչը, երևի վրիպակ է, բայց կարևորը՝ չի գրված, թե որտեղ է պահվում այդ եզակի բնագիրը: Զարմանալի է, որ «Հայոց լեզվի բարբառային բառարանի» առաջին հա-

Հետաքրքիր է, որ հանձնաժողովի անդամներից համշենցիներով հետաքրքրվում էր ոչ միայն **Բաբկեն ծ. վրդ Կյուլեսերյանը**, այլև Պետրոս Դուրյանի դասընկեր, ճանաչված բանասեր և լեզվաբան **Խաչիկ Ուղուրիկյանը** (ծնվ. 1850, Կ. Պոլիս)¹⁷⁸: «Անշուք, աննշան», «ճգնաւորի մը պէս»¹⁷⁹ ապրող Խաչիկ Ուղուրիկյանի 1910 թ. մահից հետո նրա թողած գիտական ահռելի անտիպ ժառանգությունը թվարկելիս, **Թեոդիկը** (Թեոդոս Լաբճինճեան, 1873, Կ. Պոլիս – 1928, Փարիզ), որի «**Պոլսի Հայեվարք. բառագիրք պոլսական ոամկօրէնի**» 2455 էջանոց մենագրությունը¹⁸⁰ 1905 թ. արժանացել էր Իզմիրյան մրցանակի¹⁸¹, իր «**Ամէնուն տարեցոյցում**» նշում է նաև Խ. Ուղուրիկյանի «Համշինեցիք»-ը, ցավոք, չմանրամասնելով ո՛չ բովանդակությունը, ո՛չ ծավալը¹⁸²:

Թե ինչ բախտի արժանացան «**Համշինեցիք**»-ն ու մյուս ուսումնասիրությունները, չգիտենք: Այն հայտնի չէ նաև մահվանից ուղիղ 100 տարի անց՝ 2010 թ. Ստամբուլի «**Ժամանակ**» թերթում տպագրված «Խաչիկ Ուղուրիկեան» փոքր նյութի հեղինակ Ավետիս Արզումանին, որը գրել է. «Ինչ մեղք այս արժեքատր ձեռագրերուն ապագան այդ օրն ալ, այսօրն ալ անյայտ մնացած է»¹⁸³:

Որ Հ. Աճառյանը անտարբեր չի եղել կրոնափոխ համշենահայերի խոսվածքի հանդեպ, վկայում է այն, որ նա «**Քննություն Համշենի բարբառի**» գրքի «Մատենագիտություն» բաժնում հիշատակում է Ն. Մառի «**Материалы по хемшинскому наречию арм. яз.**» (Համշենցի թրքացած հայոց բարբառով 115 բառ և նրանց քննութիւնը)¹⁸⁴ հոդվածը: Նա այդ 115 բառից մի քանիսն ընդգրկել

տորի (2001) գրականության ցանկում ևս հեղինակի ազգանունը տպագրվել է **Խոշյան** (էջ XXII) և կրկին առանց ժողովածուի գտնվելու վայրի մասին հիշատակման: Մենք այն Լեզվի ինստիտուտի գրադարանում և արխիվում չգտնելով, շարունակեցինք որոնումները, և հուսով ենք՝ շուտով մեր ենթադրած տեղում կհայտնաբերենք:

¹⁷⁸ Թեոդիկ, **Ամէնուն տարեցոյցը**, Կ. Պոլիս, 1909 (–384 էջ), էջ 225:

¹⁷⁹ Թեոդիկ, **Ամէնուն տարեցոյցը**, Կ. Պոլիս, 1909, էջ 225:

¹⁸⁰ Տեղեկագիր Սահակ Մեարոպեան Գրական մրցանակաբաշխութեան, «**Արեւելք**», 1905, յուլիս 9/22, թիւ 5921:

¹⁸¹ Տեղեկագիր Սահակ Մեարոպեան Գրական մրցանակաբաշխութեան, «**Արեւելք**», 1905, յուլիս 11/24, թիւ 5922, 1-ին էջ: Մրցանակի արժանացած 5 հեղինակներից Թեոդիկն ու «Տ. Ե. Յ. Չիթճեանը» ստանում են 35-ական, իսկ «Ս. Գաբամաճեանը, Կ. Գաբիկեանը եւ Օ. Բարադամեանը»՝ 30-ական ոսկի: Նշվում է, որ այդ գումարները խրախուսանք են և դրանցով հնարավոր չէ գրքեր հրատարակել: Տե՛ս նաև՝ Պատրիարքարանէն լուրեր, «**Արեւելք**», 1905, յուլիս 15/28, թիւ 5926:

¹⁸² Թեոդիկ, **Ամէնուն տարեցոյցը**, Կ. Պոլիս, 1912 (–419 էջ + հայտարարությունների և գովազդների էջեր, ընդհանուրը – 432 էջ), էջ 348:

¹⁸³ **Աւետիս Արզուման**, Խաչիկ Ուղուրիկեան, «**Ժամանակ**», թերթ, Ստամբուլ, 2010, մայիսի 20, թիւ 9209: Ա. Արզումանի հոդվածում տպագրվել է «համշենցիք արքայական ժամանակագրութիւն», այնինչ «**Ամէնուն տարեցոյցում**» թվարկված է. «Համշինեցիք: Արքայական ժամանակագրութիւն: Կիլիկիան հայերէնը», և այլն:

¹⁸⁴ Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, էջ 17:

է իր գրքի ընդարձակ բառարանում¹⁸⁵: Թե ինչու՞ այդքան քիչ, չի բացատրում:

Հրաչյա Աճառյանի հետ զրեթե միաժամանակ՝ 1910 թ. հուլիսին, 28-ամյա **Ֆարհատը** ևս հետաքրքրվում է Համշենի բարբառով, ավելի հստակ՝ Խոփայի գավառից Ստամբուլի կողմերը՝ ներկայիս **Սաքարյայի** և **Դյուզջեի** նահանգների Սև ծովի առափնյա **Քոչասալի**, **Քարասու** և **Աքչարոչա** գավառներ գաղթած կրոնափոխ համշենցիներով և նրանց անսովոր խոսվածքով: Նա ծնվել է Նիկոմեդիայի (Իզմիր) Պարտիզակ քաղաքում, 12 տարի ապրել Բուլղարիայում, Շվեյցարիայում ու Անգլիայում, և 1908 թ. վերադարձել ծննդավայր¹⁸⁶: 1910 թ. Կ. Պոլսի «Ազատամարտ» թերթում տպագրված իր «Մահմետական հայեր» հոդվածում **Ֆարհատը** պատմում է նորագաղթ համշենցիների մասին. «Գիտը կը կոչուի Աչմա-Պաշը, 42 տնով, ամենքը ցրուած սարալանջին զանազան կողմերը...:

Գիտըը հաստատուած է մոտ 15 տարի առաջ: Գաղթած են **Խոբէէ (Խոբա)**, ռուս-թրքական սահմանագլուխ Սեւ ծովէն մէկ ժամ հիւսիս **Ջուրքիճի** մահմետական հայ գիւղէն: Գաղթումի միակ պատճառ եղած են ապրելու դժուարութիւնները և Կովկաս աշխատելու համար օսմ. իշխանութիւններու յարուցած անտանելի նեղութիւնները: Կը խօսին հայերէն, մաքուր տեսակը Հէմշինի (**)¹⁸⁷ բարբառին: Կիները մանաւանդ բոլորովին կ'անգիտանան ուրիշ լեզուներ:

...Կան ուրիշ երկու մահմետական հայ գիւղեր ալ որոնք Ազճէ-Շէհիրի նահիյէին մէջ կ'իյնան (Գասթամունի վիլայէթ-Տիւզճէի գազա): Եէնիճէ՛ 40 տուն, Գարա-Թավուտ 25 տուն, ամենքն ալ Խոբէի գիւղերէն, ուր գաղթած էին Հէմշինէն 250 տարի առաջ:

Ասոնցմէ Եէնիճէ՛ ունի մէկ ժամ հեռի, զատ թաղ մը, 35 տնուոր, որոնք կորսնցնելով իրենց մայրենի լեզուն, կը խօսին թուրքերէն, բայց ծերերը տակաւին հայերէն կը խօսին: Ասոնք «Պաշ-Հէմշինլի» կը կոչուին, իսկ մահմետական Հայերը զանոնք «Ապօեցի» կը կոչեն: Ես դժբախտաբար չկրցայ այցելել վերջին երկու գիւղերը: Մինչեւ այսօր «Մակար օղլու»ներ և «Մինաս օղլու»ներ կան իրենց մէջ:

¹⁸⁵ Այդ բառերն են՝ **գլուխ** – կելըխ (էջ 35, 225), **երես** – էէսէ «երեսը» (էջ 227), **նա** – ինու «նորա», ինէր, էնէր «նոքա» (էջ 246), **պռուկ**, հոգն.՝ **պոկունք** – բէրուք (էջ 51, 252), **տղայ** – դաղա (էջ 255):

¹⁸⁶ **Գաբրիէլ Լազեան**, Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1949 (–400 էջ), էջ 380: **Նույնի՛** Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Մոնթեպելլօ, 1993 (–428 էջ), էջ 353: **Կարօ Գեղորգեան**, Ամէնուն տարեգիրքը. 1963, Ժ. տարի, Տասնամեակի բացառիկ հատոր, Պէյրութ-Լիբանան, էջ 395, «Ժընեւ»-ի փոխարեն նշված է «Պուքրէշ»:

¹⁸⁷ «Հէմշին կը գտնուի Բիզէի և Կարնոյ միջև, լեռնային երկիր է: Իրենց բարբառը իրենց «Հէմշիներէն» կ'անուանեն» (ծանոթ.՝ Ֆարհատի): Ենթադրում ենք, որ **Ֆարհատը** պարզապէս թարգմանել է թուրքերէն ասվող «Hemşince»-ն, որը նշանակում է համշեներէն:

Մաքուր հայկական բարբառ է իրենց խօսածը, անլի մաքուր քան հայ-լազերունը:

– Կ'ըսեն՝ «**Փուօ ընո՞ղ ես առ**» = պիտի նային: Իրենց լեզուով **հալէտը** կը նշանակէ ծէր. **ցախտա**՝ անտառ. **շուշտ ըրէ՛** = շուտ ըրէ. **ածուք՝** պարտէզ. **խմիչք մը բի՛յ՝** ջուր մը բեր և այլն:

Հայ ազգը դարեր շարունակ յօշոտուեր ու անդամահատուեր է: Իսկ եկեղեցին բեկորներ միայն կրցած է պահպանել այդ մարմնէն: Հասկնալ թէ ինչ¹⁸⁸ ենք կորուսեր դարերու ընթացին, – ահա կարեւոր խնդիրը, և մահմէտական Հայերը ցրուած ամենուրեք – միայն **Խօբայի** մէջ եօթը կտոր գիւղ կայ-կրնան ուսումնասիրութեան խիստ շահեկան նիւթ մատակարարել»¹⁸⁹:

Այս հողվածի կրճատումներով և հավելումներով տարբերակը **Ֆարհատ** ընդգրկել է նաև իր իսկական՝ «**Մինաս Գ. Գասապեան**» անուն-ազգանունով հրատարակված «**Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ**» (1913) գրքում¹⁹⁰: Բայց նա հետագայում հայտնի է դառնում ոչ թե իրական ազգանունով, այլ թուրքական դժոխային բանտից երրորդ տարում հրաշքով ազատվելուց՝ վերստին ծնվելուց հետո ընտրած **Վերածին** գրչանունով: Անշուշտ, շատերի համար անակնկալ է, որ իրենց տարագի պատճառով «**հայ «լազեր»**»¹⁹¹ կոչված համշէնահայերի և կրոնափոխ համշէնցիների մասին առաջին գրողներից մեկը՝ Ֆարհատը (Մինաս Գ. Գասապեան) և «**Հայրենիք**» (Բոստոն) ու «**Ասպարէզ**» (Ֆրեզնո) հանրահայտ թերթերի խմբագիր **Մինաս Վերածինը** (1882, Պարտիզակ – 1945, Սան Ֆրանցիսկո) նույն անձն են¹⁹²:

Ֆարհատի այս հրապարակումից շուրջ կես դար անց՝ 1962 թ., ֆրանսիացի մեծանուն բանասեր **Ժորժ Դյումենզիլը** (1898 – 1986), Ստամբուլում մի մուսուլման համշէնահայ ուսանողից՝ 22-ամյա **Իսմեթ Աքքըրքից (Ismet Akbıyık)**, լատինատառ գրառել է մեկ հեքիայթ, վեց գվարճապատում և 14 խաղիկ, որոնք, զուգահեռ ֆրանսերեն թարգմանությամբ, 1964 թ. տպագրել է Բոյուսելում՝ Բելգիայի

¹⁸⁸ Հողվածը՝ որոշ կրճատումներով և հավելումներով, 1913 թ. արտատպվել է հեղինակի գրքում, բայց «ինչ»-ը փոխարինվել է «ինչու» հարցադրմամբ, տե՛ս **Մինաս Գ. Գասապեան (Ֆարհատ)**, Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ: Ուսումնասիրութիւն վիճակագրական ցուցակներով եւ քարտէսով, Պարտիզակ, տպագր. «Ազատամարտ»-ի, 1913 (–314 էջ), էջ 146:

¹⁸⁹ **Ֆարհատ**, Մահմեդական հայեր, «**Ազատամարտ**», թերթ, Կ. Պոլիս, 1910, օգոստոսի 18/31: Մաքարյայի և Դյումենզիլի նահանգների համշէնահայերի գյուղերի մասին տե՛ս նաև՝ **Սերգեյ Վարդանյան**, Թուրքիայի մահմեդական համշէնահայերի բնակավայրերի և թվաքանակի մասին, «**Պատմաբանասիրական հանդես**», 2017, № 2, էջ 52, 53:

¹⁹⁰ **Մինաս Գ. Գասապեան (Ֆարհատ)**, Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ, 1913, էջ 143–147:

¹⁹¹ **Մինաս Գ. Գասապեան (Ֆարհատ)**, Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ, 1913, էջ 81–99:

¹⁹² **Գաբրիէլ Լազեան**, Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, տպարան «Յուսարէր», 1949 էջ 380–386: **Նոյնի՛** Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Մոնթեպէլլօ, 1993, էջ 353, 359:

Թագավորական ակադեմիայի հանդեսում: «Notes sur le parler d'un Arménien musulman de Hemşin»¹⁹³ («Դիտողություններ Հեմշինի մի մուսուլման հայի խոսվածքի մասին») վերնագրով այս ֆրանսերեն աշխատությունը Խոփայի գավառի կրոնավոխ համշենցիների խոսվածքի **առաջին լուրջ ուսումնասիրությունն է:**

Այնուհետև, մի քանի տարի ամռանը հանդիպելով **Իսմեթ Աքբըլըքին՝ Ժորժ Դյումեզիլը** նոր նմուշներ է հավաքել և 1967 թ. զուգահեռ ֆրանսերեն թարգմանությամբ երեք պատում է լատինատառ հրատարակել Փարիզի «Revue des études Arméniennes» («Հայագիտական հանդես») կիսամյա հանդեսում լույս տեսած իր «Trois récits dans le parler des Arméniens musulmans de Hemşin»¹⁹⁴ («Երեք պատմվածք Հեմշինի մուսուլման հայերի խոսվածքով») հոդվածում: Դրանց մասին նա գրել է. «Je publie ici trois historiettes, ou “fikra”. Les Hemşinli ont un folklore plutôt libertin, dont le lecteur voudra bien ne pas se choquer»¹⁹⁵ («Այստեղ տպագրում եմ երեք պատմություն կամ «ֆիքրա»: Հեմշինլիները բավականին անպարկեշտ բանահյուսություն ունեն, որն ընթերցողին կարող է ցնցել»):

Նշենք, որ Ժորժ Դյումեզիլը, հավանաբար Իսմեթ Աքբըլըքի խնդրանքով, իր հրապարակումներում չի նշել, թե ասացողը որտեղացի է: Ինչպես մեր այս մենագրության «ԱՄՆ-ում գրանցված տարբերակը» գլխում կոտեսնենք, նույնիսկ շուրջ 30 տարի անց՝ 1995 թ. Բոստոնում, համշենցի մի այլ բանասաց «արևելյան Թուրքիայի քաղաքական նուրբ իրավիճակի պատճառով» ոչ միայն իր գյուղի, այլև իր անունն է թաքցնում: 2010 թ. Խոփայի գավառում մեզ հաջողվեց պարզել, որ Իսմեթ Աքբըլըքը ծնվել է 1940 թ. Քեմալփաշայի գյուղախմբի Քարաօսմանիյե (մինչև 1928 թ.՝ Խեցեղան, Հեցեղան, Խեցեղոն)¹⁹⁶ գյուղում:

1964 թ. ամռանը դարձյալ Ստամբուլում Ժորժ Դյումեզիլը մի տասնութամյա մուսուլման համշենահայից՝ **Քադիր Յըլմազից** (Kadir Yılmaz), նոր նյութեր է ժողովել, որոնք՝ մեկ հեքիաթ, մեկ հեքիաթի պատառիկ, մեկ զրույց և ինը խաղիկ, 1965 թ. լատինատառ հրատարակել է համապատասխան գիտական մեկնաբանություններով և զուգահեռ ֆրանսերեն թարգմանությամբ:

¹⁹³ Georges Dumézil, Notes sur le parler d'un Arménien musulman de Hemşin, “Mémoires de L' Académie Royale de Belgique, Classe des Lettres et des Sciences Morales et Politiques”, coll, in 8^o, tome LVII, fascicule. 4, Bruxelles, 1964, pp. 5–52.

¹⁹⁴ Georges Dumézil, Trois récits dans le parler des Arméniens musulmans de Hemşin, “Revue des études Arméniennes”, tome IV, Paris, 1967, p. 19-35.

¹⁹⁵ Georges Dumézil, Trois récits dans le parler des Arméniens musulmans de Hemşin, “Revue des études Arméniennes”, tome IV, Paris, 1967, p. 19.

¹⁹⁶ Taner Artvinli, Artvin Yer Adları Sözlüğü, Istanbul, Chiviyazıları Yayınevi, 2013 (- 310 s.), s. 136:

Քաղիր Յըլմազը ծնունդով Արդվինի նահանգի Խոփայի գավառի Արդալա գյուղից էր, ինչը **Ժորժ Դյումեզիլին** հնարավորություն է տվել մի շարք կարևոր տարբերություններ նկատել նրա և նախորդ բանասացի՝ **Իսմեթ Աբբըրքի** խոսվածքներում: Այդ առանձնահատկությունների մասին նա գրել է իր «Notes sur le parler d'un Arménien musulman d'Ardala (Vilâyet de Rize)»¹⁹⁷ («Դիտողություններ Արդալայի (Ռիզեի վիլայեթ) մի մուսուլման հայի խոսվածքի մասին») հոդվածում, որտեղ մեծանուն գիտնականը Արդվինի նահանգում գտնվող Արդալա գյուղը սխալմամբ վերագրել է Ռիզեի նահանգին: Նույնը նա կրկնել է ավելի քան քսան տարի անց Փարիզի «Revue des études Arméniennes» հանդեսում տպագրված մեկ այլ հոդվածում¹⁹⁸:

Համշենահայ ազգագրագետ և բանահավաք **Բարունակ Թողաթյանը** 1967 թ. Բաթումում հանդիպելով 1944 թ. Աջարիայից Ղազախստան և Ղրղզստան աքսորված կրոնափոխ համշենահայերի պատվիրակներին, որոնք եկել էին Աջարիայի իրենց հայրենի գյուղերը վերադառնալու հարցերով, նրանցից գրի է առել տասնմեկ խաղիկ, որոնցից վեցը հրատարակվել է 1972 թ. «**Բանբեր Երևանի համալսարանի**»¹⁹⁹ հանդեսում, նույնը՝ որոշ շտկումներով, նաև 1986-ին «**Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության**»²⁰⁰ ժողովածուում, իսկ դրանցից հինգը և ավելացրած ևս հինգը՝ 1984 թ. «**Սովետական Հայաստան**»²⁰¹ ամսագրում: Ցավոք, այդ գրառումները սխալաշատ և Խոփայի խոսվածքից շեղումներով են:

Պետք է նշենք, որ, հավանաբար գրաքննության կամ այլ պատճառներով **երեք հրապարակումներում էլ Բ. Թողաթյանը չի անդրադառնում 1944 թ. Աջարիայից կրոնափոխ համշենցիների Կենտրոնական Ասիա արքորին**, այնտեղից պատվիրակների Բաթում գալուն և նրանցից խաղիկներ գրառելու հանգամանքներին, այլ խուսափողաբար գրում է «մահմեդական համշենահա-

¹⁹⁷ **Georges Dumézil**, Notes sur le parler d'un Arménien musulman d'Ardala (Vilâyet de Rize), «Revue des études Arméniennes», tome II, Paris, 1965, p. 135-142:

¹⁹⁸ **Georges Dumézil**, Un Roman Policier en Arménien d'Ardala, «Revue des études Arméniennes», tome XX, Paris, 1986–1987, p. 7: Տես **Սերգեյ Վարդանյան**, Սահմեդական համշենահայերի բանահյուսության նմուշների ֆրանսերեն և անգլերեն թարգմանությունները // «**Զարմանալի հայելի. հրաշապատում հեքիաթի թարգմանական մեկնություններ**», 2012 թ. ապրիլի 3–4, գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Երևան, 2012, էջ 32, 33: Գիտաժողովի կազմակերպիչներ՝ Հովհ. Թումանյանի թանգարան, Fabula armeniaca ծրագիր, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն:

¹⁹⁹ **Բ. Թողաթյան**, Պատառիկներ համշենահայերի և Տրապիզոնի ժողովրդական բանահյուսությունից, «**Բանբեր Երևանի համալսարանի**», 1972, № 2 (17), էջ 183:

²⁰⁰ Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց **Բարունակ Թողաթյանը**, Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1986 (–256 էջ + քարտեզ), էջ 90–92:

²⁰¹ **Բարունակ Թողաթյան**, Խոփացի համշենահայերը, «**Սովետական Հայաստան**», ամսագիր, Երևան, 1984, № 8, էջ 28, 29:

յեր»²⁰² կամ «խոփացի համշենահայեր»²⁰³, «գրի է առել Բ. Գ. Թողաքյանը 1967 թ. Բայթումում»²⁰⁴:

Նույնիսկ 1982 թ. ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած նրա «**Համշենահայերի ազգագրությունը**» գրքում Աջարիայի կրոնափոխ հայերի գյուղերը ներկայացնելիս ոչ մի խոսք չի ասվում 1944 թ. արքորի մասին²⁰⁵:

Բարեբախտաբար, նրա արխիվում գտանք այդ հանդիպման մասին պատմող որոշ ձեռագիր նյութեր, որոնցից ներկայացնում ենք մի փոքրիկ հատված. «1967 թ. դեկտեմբեր ամսին ինձ հաջողվեց Բայթումում երկար զրույց ունենալ մի խումբ (15 անձ) այդ շրջանում ապրած մահմեդական հայրենակիցների հետ: Հանդիպումը չափազանց ջերմ ու հոգեցունց էր, կարծես տարիներով իրարից բաժանված հարազատները գտել էին միմյանց:

Առաջինը ինձ ապշեցրեց նրանց անարատ համշենահայ բարբառով խոսելնին: Անցել էր արդեն ավելի քան 300 տարի յաթաղանի սպառնալիքի տակ նրանց մահմեդական կրոնը ընդունած օրից, սակայն մայրենի լեզուն պահել են անսղարտ, ավելի մաքուր, քան Պոնտոս փախչող համշենահայերից շատերը, որոնց մի մասը շրջապատված լինելով թուրք ազգաբնակչությանը, թրքախոս էին դարձել կամ խոսում էին ու այսօր էլ խոսում են թրքերեն բառերով խճողված բարբառով»²⁰⁶:

2002 թ. Անկարայում լույս տեսավ 1958 թ. Արդվինի նահանգի Արտանուջի գավառի Թյուրյունլյու (**Tütünlü**) գյուղում ծնված **Ալի Գյունդյուզի** «Համշենցիներ. լեզու-պատմություն-մշակույթ» թուրքերեն ոչ մեծ աշխատությունը, որի հեղինակը բանասեր, պատմաբան կամ ազգագրագետ չէ: Նա, համապատասխան մասնագիտական կրթություն ստանալով, անտառտնտեսության տնօրեն է աշխատել Կիրաստնում, Սինոպում, Արդվինում և այլ վայրերում:

²⁰² Բ. Թողաքյան, Պատառիկներ համշենահայերի և Տրապիզոնի ժողովրդական բանահյուսությունից, «**Բանբեր Երևանի համալսարանի**», 1972, № 2 (17), էջ 183:

²⁰³ **Բարունակ Թողաքյան**, Խոփացի համշենահայերը, «**Սովետական Հայաստան**», էջ 28: Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց **Բարունակ Թողաքյանը**, էջ 90, 91, 246:

²⁰⁴ Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց **Բարունակ Թողաքյանը**, Երևան, 1986, էջ 90, 91, 246:

²⁰⁵ **Բարունակ Թողաքյան**, Համշենահայերի ազգագրությունը // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ. 13, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982 (-156 էջ + IX էջ լուսանկարներ և գծանկարներ), էջ 30: Թեև տիտղոսաթերթի վրա տպագրության թվականը նշված է 1981, բայց դարձերեսին՝ գրքի մասին մանրամասն տվյալներում, գրված է 1982, ինչը, նաև մեր վկայությամբ, համապատասխանում է իրականությանը:

²⁰⁶ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (այսուհետև՝ ՀԱԻ) արխիվ, № 43, «**Բ. Գ. Թողաքյան**, Համշենահայերի և պոնտահայերի ազգագրական նյութերը (ձեռագիր) / Խարբերդ և Սեբաստիա/, մաս II, 1959–1969 թթ.», տետր № 182, 37 թերթ (47-ից–84), թերթ 52-րդ, 53-րդ թերթում տսննված հատված:

Գրքում հանդիպում են նաև Խոփայի խոսվածքով բանահյուսական նյութեր՝ 1 կարճ հեքիաթ (զուգահեռ թուրք. թարգմ.) և 6 խաղիկ: Ասացողը՝ **Դևինիմ Բա-րաիբրահիմօղլուն (Devinim Karabrahimoğlu)** է, այլ մանրամասներ չեն հաղորդվում²⁰⁷:

2005 թ. Ստամբուլում տպագրված **Օզհան Օզթյուրքի** «Մև ծով: Հանրագիտական բառարան» թուրքերեն հանրագիտարանի առաջին հատորում Խոփայի խոսվածքով, լատինատառ ներկայացվել են 1978 թ. Խոփայի գավառի Քեմալփաշայի գյուղախմբի Աքդերե (նախկին՝ Չոլիքեդ) գյուղում ծնված, Ադանայի Չուքուրովայի համալսարանի փիլիսոփայության բաժնի շրջանավարտ, մանկավարժ և արձակագիր **Մահիր Օզքանի (Mahir Özkan)** Քեմալփաշայում հավաքած 42 խաղիկները²⁰⁸:

2008–2010 թթ. Խոփայում հրատարակված թուրքերեն «**Bir yaşam**» («Մի կյանք») հանդեսի տարբեր համարներում Խոփայի խոսվածքով, լատինատառ 15 խաղիկներ (13-ը՝ զուգահեռ թուրք. թարգմ.)²⁰⁹ և 29 առած-ասացվածքներ (զուգահեռ թուրք. թարգմ.)²¹⁰ է տպագրել Բաշոբա (նախկին՝ Խիկոբա, Խիգո) գյուղի բնակիչ, 1970 թ. ծնված **Հարուն Աքսուն (Harun Aksu)**:

Կարևոր է, որ 2014 թ. աշնանից Ստամբուլում լույս տեսնող կրոնափոխ համալսարանի «**Gor**»²¹¹ երկկեզվյան կիսամյա հանդեսում իրենց բանահյուսությունից գատ, պարբերաբար տպագրվում են նաև Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համալսարանի բանահյուսության նմուշներ, իսկ 2021 թ. տարեկերթյան համարում՝ նաև քրիստոնյա համալսարանի խաղիկների գրառման և հրատարակման պատմության, նվագարաններ պատրաստողների և երաժիշտների մասին²¹²:

²⁰⁷ **Ali Gündüz**, Hemsinliler, dil - tarih - kültür. Ardanuç kültür yardımlaşma derneği, Ankara, Baskı Yeni GÖZDE MATBAASI, 2002 (–168 s.), s. 89, 90.

²⁰⁸ “Hemşetsi, Homşetsi, Homşetma” // **Özhan Öztürk, Karadeniz. Ansiklopedik Sözlük**, Cilt 1, İstanbul, Heyamola yayınları, 2005 (–XXIV+616 s.), s. 508–510.

²⁰⁹ “**Bir yaşam**”, Yerel tarih, folklor, biyografi ve coğrafya dergisi, Hopa, 2008, №1, s. 43 (2 հատ), №2, s. 71, 72 (3 հատ), №3, s. 51 (4 հատ), №4, s. 50 (1 հատ), 2009, №6, s. 40 (1 հատ), №8, s. 20 (1 հատ), 2010, №12, s. 25 (3 հատ): Քանի որ հանդեսում հրատարակվել են Թուրքիայի համալսարաններին նվիրված մի շարք կարևոր նյութեր, որոնք, կարծում ենք՝ կհետաքրքրեն ապագա համալսարաններին, ուստի նրանց օգնելու նպատակով տեղեկացնենք, որ տպագրվել է ընդամենը 12 համար, և նա մեկը՝ 13-րդը, նույն՝ 12-րդի տվյալներով՝ 2010, №12, Eylül-Ekim (թարգմ.՝ սեպտ.-հոկտ.):

²¹⁰ “**Bir yaşam**”, dergisi, Hopa, 2009, №7, s. 41, 42.

²¹¹ Խոփայի խոսվածքով հնչում է «Գոր» և նշանակում է փոխօգնության կարգով համատեղ, անվճար աշխատանք: Ծագել է «կոռ» հարկատեսակի անունից: «Կոռ» էր կոչվում հողատիրոջ համար գյուղացիների անվճար աշխատանքը: Ավելի մանրամասն տես **Սերգեյ Վարդանյան**, Թուրքիայի կրոնափոխ համալսարանից գրառված մի երգի մասին // **Գիտական հոդվածների ժողովածու** (սվիրվում է Հ. Աճառյանի ծննդյան 140-ամյակին), Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Ատողիկ» հրատ., 2016 (–398 էջ), էջ 360–363:

²¹² **Sergey Vardanyan**, Abhazy ve Krasnodar Hemsinlilerinde Müzik, “**Gor**”, Hemsin Kültür, Dil,

1984, 1987 թթ. Ղրղզստանում, Ղազախստանում, Ուզբեկստանում, նաև 1984 և 1988 թթ. Երևան այցելած կրոնափոխ համշենահայերից մեր գրառած նյութերի մի մասը (ինը հեքիաթ ու զվարճապատում՝ **Թ-Էմբալը, Ցի կողնուշը, Կողիյե, Մախբե, Ֆուքարա (Ֆուքաս) դաղան, Չադու, Օգե, Շաշե, Արդեյեցիք՝ ավջի,** և իրենց նոտագրությամբ մեկ երգ՝ «**Այե, Խաուլա, այե**» ու 28 խաղիկ՝ կից բառարանով) 1989 թ. հրատարակվել է «**Ձայն համշենական**» ժողովածուի 3-րդ հատորում²¹³: Դրանցից մի քանիսը տեղ են գտել նաև տարբեր ժողովածուներում, թերթերի ու ամսագրերի էջերում²¹⁴:

2009 թ. մեր «**Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)**»²¹⁵ գրքում «Ձայն համշենականից» վերատպել ենք վերոնշյալ 9 հեքիաթներն ու զվարճապատումները: Բացի այդ, տպագրվել են 55 խաղիկներ (32-ը՝ նոտաներով), 19 երգեր (3-ը՝ «**Ասա՛, բիձիգ, ասա՛**», «**Այե՛, Խաուլա՛, այե՛**», «**Հինգ դայի շահարին յես**»՝ նոտաներով):

Կրոնափոխ համշենցիների երգարվեստին ու բարբառին ավելի լավ ծանոթանալու համար այդ 19 երգերի թվում, Կենտրոնական Ասիայում գրի առնվածներից գատ, ընդգրկել ենք նաև Թուրքիայի համշենահայերի Խոփայի խոսվածքով երգերի ձայնագրություններից և խոսակալառակներից արված մեր վերծանություններն ու թարգմանությունները²¹⁶: Շեշտենք, որ դրանցից շատե-

Tarih Dergisi, Türkçe-Hemşince, İstanbul, 2020-2021, Kaun-Aşun, № 12-13, s. 45-48.

²¹³ **Ձայն համշենական**, ժողովածու, բանաստեղծություն, արձակ, բանահյուսություն, գիրք 3-րդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց **Սերգեյ Վարդանյանը**, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989 (–252 էջ), էջ 208–246: Գրքի մասին տես **Իգնատ Մամյան**, Երրորդ հանդիպում, «**Գրական թերթ**», 1990, հունիսի 29: **Տիգրան Բադալյան**, «Ձայն համշենական», «**Հայրենիքի ձայն**», շաբաթաթերթ, 1990, դեկտեմբերի 26: Համշենահայեր. անսալ Ներքին սփյուռքի ձայնին (հարցազրույց), «**Գրքերի աշխարհ**», ամսաթերթ, 1990, հունվարի 28:

²¹⁴ **Սերգեյ Վարդանյան**, Համշենի մուսուլման հայերը, «**Փյունիկ**», պարբերաթերթ, Երևան, 1991, №1, էջ 3, 4 (տպագրվել է 1 երգ): **Նույնի՛** Համշենի մուսուլման հայերը, «**Իրան-Նամե**», Երևան, 1993, №4, էջ 13 (1 երգ): Մահմեդական հայեր. թավշյա կրոնափոխության ներկայի սովերները... հարցազրույցը՝ Կարինե Դանիելյանի, «**Ժամանակ**», թերթ, Երևան, 1999, ապրիլի 16 (2 խաղիկ): Ցի կողնուշը, «**Ձայն համշենական**», 2006, №1–2 (1 զվարճապատում): **Ս. Վարդանյան**, Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի մահմեդական համշենահայերից գրառված հայերեն մի քանի բառերի մասին, «**Պատմաբանասիրական հանդես**», 2016, №3, էջ 81–95 (1 երգ, 2 խաղիկ): **Նույնի՛** Թուրքիայի կրոնափոխ համշենահայերից գրառված մի երգի մասին // **Գիտական հոդվածների ժողովածու** (սվիրվում է Հ. Աճառյանի ծննդյան 140-ամյակին), Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2016, էջ 353–366 (1 երգ):

²¹⁵ **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (–428 էջ):

²¹⁶ Տես հետևյալ երգիչների՝ **Գյոքհան Բիրբենի** «Ասա, սեվդամ» (ժող.), «Թուն սարի, մազեդ՝ սարի» (ժող.), «Հավազ ալի մերալեց» (ժող.), **Հիքմեթ Աքչիչեքի** «Ասա, օնդեր, ասա» (ժող.), «Ռիննօ, նանայդա» (ժող.), «Յե՛ խալա» (ժող.), **Էրսին Չելիքի** «Էրանդ»

ընդ զանազան վայրերում ու ժամանակներում, տարբեր մարդկանց հորինած և բանավոր փոխանցված խաղիկներից կազմված երգեր են, որոնց խոսքերի և երաժշտության հեղինակներն անհայտ են:

Աշխատության հարյուր էջից ավելին կազմում է «**Համշենի բարբառի Խոփայի խոսվածքն ըստ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի»**» բաժինը²¹⁷: Մենագրությունը եզրափակում են 1900-ական բառերից բաղկացած «**Խոփայի խոսվածք-գրական հայերեն**» և «**Գրական հայերեն-Խոփայի խոսվածք**» բառարանները²¹⁸:

Կենտրոնական Ասիայի և Թուրքիայի կրոնափոխ համշենցիների մասին կան գիտական հրապարակումներից դուրս մնացած բազմաթիվ կարևոր նյութեր, հետաքրքիր պատմություններ, մանրամասնություններ, փաստեր ու եզրահանգումներ, որոնց կարելի է ծանոթանալ թեմային վերաբերող մեր հարցազրույցներում²¹⁹ ու 2004–2018 թթ. մեր խմբագրությամբ հրատարակված «**Ձայն**

(ժող.), **Հիքմեթ Աբչիչեթի** և **Էրսին Չելիքի** «Մաա, աաքազ, մաա» (ժող.), «Բուրքուն քուկա, գոնչա գու» (ժող.), «Էլլա, Էլլա» (ժող.), **Էրսին Չելիքի** և **Այշենուր Քոլիվարի** «Նէն-նի, նէննի» (ժող.), **Ռենգի Թաթարի** «Հեյդանէ» (ժող.), «**Ջէրմազ**» խմբի «Թէվէս փեր-նա» երգերը: Տես նաև **Սերգեյ Վարդանյան**, Մահմեդական համշենցիների բարբառով նոր երգ [«Թէվէս փերնա»], «**Ձայն համշենական**», 2007, №9–10: **Նույնի՝** Մեկ երգի հինգ տարբերակ [«Ասա, բիձիգ, ասա», «Ասա, սեվդամ», «Ասա, օնդէր, ասա» և այլն], «**Ձայն համշենական**», 2008, №7–8: **Նույնի՝** Գյոքհան Բիրբենի հայերեն երգերը [«Ասա, սեվդան», «Թուն սարի, մազեդ՝ սարի», «Հավազ ալի մերալեց»], «**Ձայն համշենական**», 2008, №11–12:

²¹⁷ **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, էջ 71–182:

²¹⁸ **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, էջ 272–401: Գրքին նվիրված գրախոսությունները տես **Ռուբեն Մելքոնյան**, ր. գ. թ., Նոր գիրք կրոնափոխ համշենահայերի մասին, «**21-րդ դար**», հանդես, Երևան, 2009, №5 (27), էջ 124–126: **Սարգիս Սերովբեան**, Համշենահայ բանահյուսությունը, «**Agos**», Haftalık gazete, Istanbul, 2009, Kitap/Kirk, Gazetesinin Ücretsiz Ekidir, №7, Mayıs. Ստամբուլ, «**Ալօս**», Գիթափ / Գիրք, №7, մայիս, 2009, էջ 18: **Ալվարդ Ղազիյան**, ր. գ. թ., Ս. Վարդանյան, «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)», Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 428 էջ, «**Պատմաբանասիրական հանդես**», 2010, №2, էջ 276–278: **Ներսես Մկրտչյան**, ր. գ. ղ.-սլ., Հանրագիտարան կրոնափոխ համշենահայերի մասին, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, 2010, փետրվարի 4:

²¹⁹ Մահմեդական հայեր. թավշյա կրոնափոխության ներկայի սովորները... հարցազրույցը՝ **Կարինե Դանիելյանի**, «**Ժամանակ**», երկօրյա թերթ, Երևան, 1999, ապրիլի 16: Голос амшенцев, вѣл интервью **Роланд Джоджуа** (Сухуми), ред. газет «Абхазия молодая» и «Абхазский университет», «**Голос Армении**», газета, Ереван, 2005, 29 марта. Амшенские армяне-знакомые и незнакомые, беседовала **Роза Егиазарян**, «**Новое время**», газета, Ереван, 2006, 7 октября. Амшенские армяне-знакомые и незнакомые, беседовала **Роза Егиазарян**, «**Еркрамас**», ежемесячная газета, г. Краснодар, 2006, октябрь, №10. Амшенцы на дорогах мира, беседу вела **М. Затикян**, «**Голос Армении**», 2006, 11 ноября. «Մեզ թավայի ծուգ իք» («Մեկ թավայի ծուկ ենք»), հարցազրույցը՝ **Անի Ղարաբաղցյանի**, «**Մենք մեր մասին**», հանդես, Երևան, 2007, №2 (№10), էջ 20–23: Պետք է օգնել, որպես-

համշենական» ամսաթերթի բազմաթիվ համարներում²²⁰, նաև Հայաստանի և արտերկրի մամուլի, գիտնականների ու մտավորականների՝ թերթին նվիրված հրապարակումներում²²¹:

զի այդ մարդիկ գնան ինքնաճանաչման, զրույցը՝ **Արմեն Հակոբյանի**, «Հայոց աշխարհ», թերթ, 2009, մայիսի 5: «Ձայն համշենականի» խմբագիրը երազում է թանգարան հիմնել ու վերավորվում է անտարբերությունից, հարցազրույց, «Անկախ», շաբաթաթերթ, Երևան, 2011, հունիսի 2–9: Требует перевода, беседовала **Магдалина Затикян**, «Голос Армении», 2012, 28 февраля. Վտանգավորը անուղղելի սխալներն են, հարցազրույց Սերգեյ Վարդանյանի հետ, հարցազրույցը՝ **Ռ. Եղիազարյանի**, «Գրական թերթ», 2012, դեկտեմբերի 7: Արտասույությունը տե՛ս «Վտանգավորը անուղղելի սխալներն են», հարցազրույց Սերգեյ Վարդանյանի հետ, հարցազրույցը՝ **Ռ. Եղիազարյանի**, «Armenian Times», (Արմենիան Թայմս, Армениан Таймс), հայերեն-ռուսերեն ամսաթերթ, Մոսկվա, 2012, դեկտեմբեր, №12: «Տասնյակ հազարավոր հայեր հանգստանում էին Սև ծովի հյուսիսային ափերին, բայց չգիտեին, թե ովքեր են համշենցիները», զրույցը՝ **Արմինե Սարգսյանի**, «Իրատես de facto», եռօրյա թերթ, Երևան, 2012, մարտի 13–15: «Ցեղասպանությունը շարունակվում է», զրույցը՝ **Արմինե Սարգսյանի**, «Իրատես de facto», 2013, մայիսի 7–9: «Մեզանից ոմանք կրօնափոխ հայերին հայ չեն համարում, սա օտարում է իրանց մեզանից, բայց հայը հայ է՝ անկախ կրօնից», Սերկեյ Վարդանյան, համշենագետ, **Սառա Գալստեան**, «Զարթոնք», Բեյրութ, 2014, սեպտեմբերի 14: Անադմուկ հայրենասերը, հարցազրույցը՝ մայր **Գնել Շահնազարյանի**, «Հայ զինվոր», շաբաթաթերթ, Երևան, 2014, հոկտեմբերի 23–29: «Ես գտա իրական Մակնոնոն՝ Արդվինի նահանգում գտնվող ծովափնյա Խոփա քաղաքը», զրույցը՝ **Արմինե Սարգսյանի**, «Իրատես de facto», 2014, հոկտեմբերի 24–27: «Ինչի համշենցակ խաբբե չես», հարցազրույցը՝ **Մարինա Բաղդասյույանի**, «Ձայն համշենական», 2017, №11–12: Հիսուն տարի անց... Կրկին համշենահայերի մասին, զրույց համշենագետ Սերգեյ Վարդանյանի հետ, զրույց **Գևորգ Գյուլումյանը**, «Ազգ», 2019, հուլիսի 19:

²²⁰ Թերթի հավաքածուն կարելի է կարդալ Հայաստանի ազգային գրադարանում, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի և ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարաններում, նաև **Գրահավաք** և dzaynhamshenakan.org կայքէջերում:

²²¹ Բարի երթ «Ձայն համշենական», «Երկիր», 2004, օգոստոսի 20–26: **Ստեփան Շահինյան**, Արժեքավոր պարբերական, «Գրական թերթ», 2004, դեկտեմբերի 3: **Հ. Մոսկոֆեան**, «Ձայն համշենական» կամ համշենահայերու զարթոնքը Մայր Հայրենիքի, Կովկասի, Թուրքիոյ, Ռուսիոյ, Գերմանիոյ եւ այլ երկիրներու մէջ, «Արարատ», շաբաթաթերթ, Բեյրութ, 2005, յունուար 14–20: **Գևորգ Յազընյան**, Համշենահայոց ձայնը Երեւանից, «Ազգ», 2005, յունուար 21: **Գոհար Գևորգյան**, Նոր խոսք հայահավաք մամուլում, «Ազգ», 2005, փետրուարի 10: **Կարինե Ասատրյան**, Ռուսաստան գաղթած հայը գերադասում է ռուսերեն սովորել, «Այբ-Ֆե», շաբաթաթերթ, Երևան, 2005, մարտի 25–31: **Արփիկ Միսաքեան**, Համշենցիներուն թերթը եւ «որպէս հայ» ապրողը, «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, 2005, մայիս 25: **Ν. Κιλισιάν**, Μια απόμακρη φωνή των Αρμενίων του Χαµσέν, “Αρμένικος Τύπος”, ամսագիր, Աթենք, 2008, մարտ, №3 (196), էջ 8, 9: **Adnan Genç**, Hemsinlilerin Sesi Gazetesi Yayimcisi Vartanyan: Hemsin kültürü için gazete yapiorum, “Bir Gün”, gazete, Istanbul, 2008, 24 Ağustos. Амшенские новости, «Еркрамас», г. Краснодар, 2008, август-сентябрь, №8. **Արմեն Հովակիմյան**, Համշենահայերին մեծ աշխարհի հետ կապող շավիղը, Սերգեյ Վարդանյանը՝ ծանոթ և անծանոթ, «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 2010, փետրվարի 11: **Mesut Çevikalp**, Erivan’da bir garip Hemsinli, “Aksiyon”, Haftalık haber dergisi, Istanbul, 2010, 5-11 Nisan, №14 (800), s. 52-54: **Mesut Çevikalp**, A lone “Hemsinli” in Yerevan, “Today’s Zaman”, gazete, Istanbul, 2010, may 6: [Месут Чевикалп], «Голос Амшена» в Ереване; Сергей Варданян, переводчики **Гарри Гаранян** и **Георг Мхитарян**, «Hamshen», периодическое издание, Москва, 2010, лето,

2010–2015 թթ. Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառներում մեր գրառած 60-ից ավելի խաղիկները, 50 առած-ասացվածքները, երկու տասնյակ հանելուկները, վախ չափելու և չար աչքի դեմ շուրջ մեկ տասնյակ ժողովրդական հնայական աղոթքները, նաև արձակ կյուֆերը (իրապատում գրույցներ, խորհրդածություններ, հեքիաթներ, զվարճապատումներ և այլն) տպագրել ենք «**Ձայն համշենական**» թերթի 2011–2017 թթ. համարներում²²²:

Կենտրոնական Ասիայում և Թուրքիայում մեր գրի առած երգերն ու խաղիկները, համշենցիների խտասկավառակների երգերի տեքստերի վերծանություններն ու թարգմանությունները «**Կրոնափոխ համշենահայերի բարբառը, քանահյուսությունը և երգարվեստը**» (2009) գրքում, նաև «**Ձայն համշենական**» (1989) ժողովածուի 3-րդ հատորում, «**Ձայն համշենական**»²²³ թերթում հրապա-

№2, с. 73-74. Aris Nalci, Yerevan'da bir Hemşinli, “Agos”, gazete, Istanbul, 2010, 8 ocak. **Գասպարյան Անի**, Հայաստանի դեսպանը համշենահայության շրջանում, «**Անկախ**», շաբաթաթերթ, Երևան, 2012, ապրիլի 12–19: «**Արմենայրես**», Համշենահայերը վերադառնում են ակունքներին. «**Ձայն համշենական**» թերթը 10 տարեկան է, «**Հայաստանի Հանրապետություն**», 2014, հուլիսի 25: **Իվան Կրբաշյան**, Իսկական համշենցին, «**Ձայն համշենական**», 2014, №7–8: **Հարություն Մարության**, պ.գ.դ., Նվիրվածություն, «**Ձայն համշենական**», 2014, №7–8: **Գևորգ Յազրճյան**, պ.գ.թ., Խոսք երախտիքի՝ ի խորոց սրտի, «**Ձայն համշենական**», 2014, №7–8: **Երազիկ Հարությունյան** (Կրասնոդար), ք.գ.թ., Ձայն կարոտի և ուսվիրան հավատի, «**Ձայն համշենական**», 2014, №7–8: **Արմեն Սարգսյան**, ք.գ.թ., «**Ձայն համշենականի**» ինքնատիպ ձայնը, «**Ձայն համշենական**», 2014, №7–8: **Թորոս Թորանեան**, Հայրենական մամուլ, «**Զարթոնք**», 2014, օգոստոսի 24: **Магдалина Затикян**, Тираж идёт в разные страны. Газете амшенцев 10 лет, «**Голос Армении**», 2014, 11 октября. **Աշոտ Ավետիսյան**, Թերթը՝ ի պատկերի յուրում, «**Գրական թերթ**», 2014, հոկտեմբերի 17: **Արթուր Անդրանիկեան**, Նամակ խմբագրություն, «**Ձայն համշենական**», 2014, №9–10: **Լենդրուշ Արտյան**, ք.գ.թ., Հայաստաստ գործունեություն, «**Ձայն համշենական**», 2014, №9–10: **Adnan Genç**, Ermenistan'da iki dilli etnik bir yayım organı var, “**Gor**”, dergisi, Türkçe-Hemşince, Istanbul, 2015, sayı 2, s. 58–59.

²²² Տե՛ս «**Ձայն համշենական**» ամսաթերթի հետևյալ համարները՝ **Հորթն ու քուփե**, **Արչե**, **Շաեղնիյե**, **Արչ փերնուշե**, 2011, №1–2: **Բարոմի արդանույցի էրմնի մե**, **Քալաշոլլի Մամնէթին հեքիյան**, 2011, №3–4: **Թեմալին Շաիզեին հեքիյան**, **Զօնգաթե**, **Գօղօր բեդ էնուշե**, **Գեղբեվային խօջային հեքիյան**, 2011, №5–6: **Յիլեք արդեկեցի**, **Թուզ հազ էնօղ բարավե**, **Արդեկեցիի ձառան իշնուշի հեքիյան**, **Արդանույցիին թօրե** 2012, №1–2: **Մեր լիզվիս մերնուշին վարե**, **Վանցիք**, **Քուրու**, **Փերի**, 2012, №3–4: **Քելօխ չուննօղին հեքիյան**, **Փելիսուն փօղօղը**, 2012, №5–6: **Նըշանլու դեւ**, 2012, №9–10: **Ասպաձե էմմեն դաղ դեսնու գու**, **Վեյիսեկին աթմաշա փըրնուշի հեքիյան**, 2013, №1–2: **Իսա օրես ինչվես էգաթ**, 2013, №5–6: **Լուսնիկան**, **Թեմիզ Հարունին արգային ցավե**, **Իսուն լիրան շաղ ա**, **Գանջեղօզե քուկա**, **փախի**, **Արբեկե իսա ջամփացաս գերթա**, **Խերք չուներ**, **գաթե**, **Շաշ սաթաք ու աղադիզ ալ չա**, **Այս**, **ջիվանություն**, 2013, №7–8: **Արդեկեցի հօրթե**, 2014, №3–4: **Ու՛մ քելօխ էր**, **Հօրթե**, **Չաղու**, **Խիփիլիզ**, 2014, №5–6: **Չախցուցե քարե քիլուշե**, **Արդեկեցիի ցի փարցուշե**, **Աչար մօրթուշե**, **Մօզի մօն էգուշե**, 2014, №7–8: **Լուսնիկա խալէսուշի հեքիյան**, **Աղ ցանուշե**, 2014, №9–10: **Էյ վախ**, 2015, №1–2: **Համշենակ ցիղացօղ արչե**, 2015, №3–4: **Սօյ հարս քըղնուշե**, 2016, №1–2: **Արդեկեցի փաղ գիյուշի հեքիյան**, **Չազե**, 2016, №3–4:

²²³ **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի երգերը և գրույցները [Գյոքհան Բիրբեն, Զուրփիջինե ախչեկին, **Յաշար Քաբաօսմանօղլու**, Լէրն ի վեր էրթօթ, Գարմի դօջ, Բարալ], 2012, №5–6: **Նույսի՝** Նուրջանըմի երգերը [Նեշանլու աղար, գերթալ], 2012, №7–8: **Նույսի՝** Նոր գրառումներ [Նուրջանըմ, Յե մա], 2012, №9–10: **Նույսի՝** Արդվինի

րակելու, «**Լրատվական ռադիոյով**» (FM 106.5) 2013թ. ի վեր հեռարձակվող «**Համշենական գրուցարան**»²²⁴ հեղինակային հաղորդաշարով բազմիցս հնչեցնելու շնորհիվ լայն ճանաչում են ձեռք բերել և շատ ջերմ ընդունելություն գտել: Հայաստանում և սփյուռքում դրանք պատվավոր տեղ են գրավել բազմաթիվ արհեստավարժ և ոչ արհեստավարժ երգիչ-երգչուհիների²²⁵, երգչախմբերի²²⁶, վոկալ-գործիքային անսամբլների²²⁷, ավանդական երգի-պարի համույթների երգացանկում և պարացանկում²²⁸:

Նահանգի կրոնափոխ համշենահայերի երգերից [**Յաշար Քաբաօսմանօղլու**, Քա, յես քեզի ամա, **Նուրջանըմ**, Շադ դարթ ունիմ], 2012, №11-12: **Նույնի՛** Այշենուր Քուլիվարի հայերեն երգացանկը [Զօրօխի քօվուշ, Դա, իմ Յուսուֆ օրթի, Նօրհարս էլլիմ], 2013, №3-4: **Նույնի՛** Մի երգի մասին [**Հիքմեթ Աքչիչեք**, Լէլլիմ յար], 2013, №3-4: **Նույնի՛** Երկու երգ Արդվինի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառներից [**Էբրալ Այդըն**, Յէմա, **Բայար Շահին**, Գաադ մէնուշ], 2013, № 11-12: **Նույնի՛** Այդողան Թոփալի երգերը [Միյօղ, Արդէցուր], 2014, №1-2: **Նույնի՛** «Երգից բառ դուրս չես նետի» [**Յուսուֆ Վայիչ**, Քուզիմ], 2014, №3-4: **Նույնի՛** Խոփայի խոսվածքով գրառումներ Թուրքիայում [**Յաշար Քաբաօսմանօղլու**, Լուսնիկա, **Էրսին Չելիք**, **Հիքմեթ Աքչիչեք**, Յար, յար], 2015, №1-2: **Նույնի՛** Գրառումներ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով [**Մեղուես**», Խաղուլիզ, Գարմի, «**Վոլա**», Գէլինի: Նաև՝ ժող. երգ.՝ Մէվդօղում, շօֆէր էս թա], 2015, №3-4: **Նույնի՛** Խոփայի խոսվածքով երգերի նոր թարգմանություններ [**Մեղուես**», Քընացին, Հօրթէ, Բօբօլ, **Սալիհ Յըլմազ**, Լուսնիքա, Էլէվիթ], 2015, №9-10: **Նույնի՛** Նոր գրառումներ Արդվինի նահանգի Օսմանիյէ գյուղում [**Նուրջանըմ**, Ասա դարդէթ, Մօնա, մօնա, Ասա, յէ մա, ասա], 2016, №7-8: **Նույնի՛** Մեկ երգ Քյազըմ Քոյունջուի երգացանկից [Քա, թուն մի թա խէնդաս օյ], 2016, №11-12: **Նույնի՛** Թողարկվել է Ալթան Ջիվելեքի խոսակավառակը [Մադմօնէդ մօնա, մօնա, Յէ մօմի], 2017, №1-2:

²²⁴ Lratvakan.am, Youtube.com, տե՛ս նաև **Ռոզա Խասսոյան** (Մայկոյ), Ինքնություն, «**Ձայն համշենական**», 2014, №9-10:

²²⁵ Հստ այբբենական կարգի՝ Ադաբեկյան Անահիտ, Բարսայան Ռոբերտ և Աննա, Գիժկարյան Մայի, Գևորգյան Մելիսա, Գևորգյան Նարե, Թաղևոսյան Գայանե, Խանգեղոյան Փառանձեմ, Համբարչյան Սևադա, Մարալյան Տաթևիկ, Մարտիրոսյան Մերի, Մովսիսյան Արամ, Նազարյան Լուսինե, Նաջարյան Սուսաննա, Ներսիսյան Նառա, Պետրոսյան Սասուն, Պողոսյան Աննա Սառա, Պողոսյան Արտյուշ (Ջավախք), Սահակյան Քրիստինա, Մարգարյան Վազգեն, Սևինյան Հասմիկ, րեյրուֆջիներ՝ Շաքե Բաղդասարյան, Նայիրա Բաղդասարյան, Լոռի Մարգարյան և ուրիշներ: Անշուշտ, ցուցակն ամբողջական չէ, քանի որ Հայաստանում և սփյուռքում հնարավոր չէ տեղեկանալ անխտիր բոլորի մասին: Հասկանալի է, որ չեն թվարկված երգչախմբերի անդամները, երգիչներին ձայնակցողներն ու երաժիշտները, այլ մանրամասներ, տասնը և հյուրընկալ հարկի տակ մենակ կամ ներկաների հետ երգողները, որոնց ձեռքի հետախոսներով արված նկարահանումները երբեմն հայտնվում են համացանցում:

²²⁶ «**Արահետ**», «**Նաիրյան** վոկալ անսամբլ», «**Հովեր**» (Աննա Ազիզյանի մշակումները) և այլն:

²²⁷ «**Ալեքսանդրապոլ**», «**Էթն Քուրուս**», «**Կաթիլ**», «**Վան**» և այլն:

²²⁸ «**Կարին**», «**Նուբար**», «**Վերադարձ**», «**Մենք**» ավանդական երգի-պարի համույթներ, Մ. Հերացու անվ. բժշկական համալսարանի «**Խոյ**» ազգային պարի խումբ, «**Վանք**» մշակույթի կենտրոնի մանկապատանեկան պարախումբ և այլն: Իսկ քրիստոնյա համշենցիների պարերը վաղուց են բեմ բարձրացրել Բուենոս Այրեսի «**Մասիս**» պարախումբը և Հայաստանի «**Բերդ**» պարային անսամբլը: Հասկանալի է, որ մեր թվարկումն ամբողջական չէ: Բնականաբար, չենք հիշատակել այժմ չգործող պարախմբերը, նաև Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի համշենցիների երգի և պարի համույթները:

Ղազախստանում մեր ձայնագրած «Նօարս էլլիմ» երգը Ռիզեի նահանգի Չայելիի գավառում ծնված ստամբուլարնակ թուրքախոս համշենցի երգչուհի **Այշենուր Քոլիվարը** ներառել է 2012 թ. թողարկված իր «**Bahçeye Hanımeli**» (թարգմ.՝ «Տիկնաթաթիկ պարտեզի համար») ալբոմում²²⁹: Ծագումով իսլամ վրացի, Բորչքայի գավառից, ստամբուլարնակ հանրահայտ երգիչ **Բայար Շահինի** դուստրերի՝ **Դամլա**, **Յուդում** և **Թամարա Շահինների «Samida»**²³⁰ («Մամի դա», վրաց. թարգմ.՝ «Երեք քույր») վոկալ-գործիքային համույթի «**Alaca**» («Ալաջա», թուրք. թարգմ.՝ խայտաբղետ, գույնզգույն) խտասկավառակի (2019) մեջ նույնպես ընդգրկված է այդ երգը:

Ստամբուլարնակ համշենցիների նշանավոր «**Վոլա**» («Ո՛վ է») վոկալ-գործիքային համույթի ղեկավար, Խոփայի գավառում՝ Քենալփաշայում ծնված **Հիքմեթ Աքիչեքն** էլ երգում է Ղրղզստանում մեր գրառած «Ասմ, բիձիզ, ասմ» (վերնագրված՝ «Ալի աշուն քուկա») երգը, որը տեղ է գտել 2019 թ. լույս աշխարհ եկած նրա «**Garmi DOÇ**» (թարգմ.՝ «Կարմիր ԴՕՉ») խտասկավառակում²³¹:

Ի դեպ, ներկա ու ապագա բանագետներին, բանահավաքներին, բարբառագետներին, ազգագրագետներին, պատմաբաններին, համշենագետներին ու թուրքագետներին, երգիչ-երգչուհիներին, երաժիշտներին ու երաժշտագետներին օժանդակելու նպատակով սույն մենագրության մեջ, ինչպես հավանաբար նկատել են ընթերցողները, **աշխատել ենք բազմաթիվ աղբյուրների գոնե մի մասը հղել, ինչի շնորհիվ գիրքը որոշ չափով ստանալով մատենագիտական գործառույթ, ներկայացնում է նաև հետազոտության միջավայրը:**

²²⁹ **Ayşenur Kolivar**, Bahçeye Hanımeli, Istanbul, Kalan Müzik, 2012. Տե՛ս նաև՝ **Ani Sepetçiyen**, Doğu Karadeniz'in çokdilli şarkılarına "hanımeli" değdi, "Agos", Haftalık gazete, Istanbul, 2012, Şubat 17, № 827, s. 16. (Թարգմանություն՝ Արևելյան Սև ծովի բազմալեզու երգերին «տիկնաթաթիկ» է դիպել): Այշենուր Քոլիվարի հետ հարցազրույցի հայերեն տարբերակը տես թերթի հաջորդ համարում՝ **Անի Սեփեթճեան**, Ծաղիկ դպար երգերում, "Agos", Haftalık gazete, Istanbul, 2012, Şubat 24, № 828, տես «**Ակոս**», 2012, փետրուար 24, թիւ 828, Հայերեն ներդիր, էջ 4: **Այշենուր Քոլիվարի** հետ հարցազրույցը նրա «**Bahçeye Hanımeli**» («Պարտեզիկն այծտերևուկ»), այծտերևուկը կամ տիկնաթաթիկը ծաղկի անուն է) ալբոմի մասին է: Թղթակցի հարցին ի պատասխան նա անդրադառնալով խտասկավառակի «Նօրհարս էլլիմ» երգին, նշում է. ««**Նօրհարս էլլիմ**» երգը Շօփայե՛ն Ղազախստան գացած, այնտեղէն ալ Երևան վերադարձած եղանակ մըն է: Մերկէյ Վարդանեան, Ստալինի շրջանին Ղազախստան արտրուած Համշենցիներէն քաղեր է»: Տես նաև՝ **Ս. Վարդանյան**, Այշենուր Քոլիվարի հայերեն երգացանկը, «**Չայն համշենական**», 2013, № 3–4:

²³⁰ **Samida**, Alaca, Istanbul, Kalan Müzik, 2019.

²³¹ **Vova**, Garmi DOÇ, Istanbul, ADA Müzik, 2019. Արդվինի նահանգի համշենցիների գյուղերում հիմնականում օգտագործում են DOÇ (ԴՕՉ) մականիշի կարմիր բեռնատարներ:

ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՌ-ՎԱԾ ՄԻ ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄ

1987 թ. հունիսին Ղազախստանի Չինքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում կրոնափոխ համշենահայ **Քյազըմ Քարաիբրահիմովից** (Кязим Караибрагимов) գրառեցինք «Արդէլեցիք՝ ավջի» (№1), («Արդալացիները՝ որսորդ», №1/1) զվարճապատումը: Բանասացը ծնվել էր 1926 թ. Աջարիայում՝ Բաթում քաղաքից հարավ՝ Թուրքիային սահմանամերձ **Սարփի** (Սարփ) գյուղի մոտակա **Քանլը դերե** գյուղակում, ինչպես ինքն էր արտաբերում՝ **Գօնլը դաա**, այնուհետև թարգմանում՝ **Աղունօղ քեդ** (Արյունոտ գետ): Քյազըմը հինգ տղայի ու հինգ աղջկա, 17 թոռան տեր խոսքաշեն մարդ էր, 25 տարի ֆերմայի վարիչ էր աշխատել Չիրկինոյում:

Չիրկինոն ուներ շուրջ 700 բնակիչ, դազախներ, ռուսներ, երկու տուն կրոնափոխ հույներ, նաև 48 տուն՝ 286 կրոնափոխ համշենահայեր, որոնք XVIII դարում բռնի իսլամացված համշենցի հայերի սերունդներն էին:

Քյազըմի հետ ծանոթացել էինք դեռ 1984 թ.՝ Չիրկինո մեր առաջին այցելության ժամանակ: Դրդստանի իրենց հայրենակիցների նման, Չիրկինոյի համշենցիները ևս ցանկանում էին տեղափոխվել Հայաստան: Պայմանավորվեցինք, որ երկու համայնքի ներկայացուցիչները հունիսին կգան Երևան: Բայց Դրդստանի պատվիրակներից մեկի ողբերգական մահվան պատճառով այցը խափանվեց: Դեկտեմբերին Չիրկինոյից եկան միայն Քյազըմը և գյուղի դպրոցի ուսուցիչ Ջելալ Քարաիբրահիմովը, որից նույնպես բանահյուսություն էինք գրառել: Իրենց հետ բերել էին վերաբնակեցման խնդրանքով համագյուղացիների դիմումը՝ ուղղված Հայաստանի ղեկավարությանը, բայց, ցավոք, մերժում ստացան²³²:

Փորձենք համառոտ ներկայացնել, թե ինչպես են **Քյազըմ Քարաիբրահիմովն** ու նրա ազգակիցները Բաթումի մոտակա ծովափնյա անտառածածկ սարերից հայտնվել Ղազախստանի այդ ծառազուրկ վայրերում և լեռնային Դրդստանում:

1926 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Աջարիայում (Аджаристан) բնակվում էր տարբեր ազգությունների 131.957 մարդ, որից՝ 2 քաղա-

²³² Տե՛ս **Սերո Խանզադյան**, Փակ դռների առաջ. երկրորդ մերժումը, «Հայրենիքի ձայն», 1989, մայիսի 10: **Նույնի՝** Նողկալի մերժում, «Գարուն», 1993, №8, էջ 15: **Серо Ханзадян**, Возмутительный отказ // **Б.Г. Торлакян**, **Этнография амшенских армян**, сборник статей и материалов, Амшенская библиотека № 1, Краснодар, 2002 (- 198 с.), с. 197. **Ս. Վարդանյան**, Կորած հայերի հետքերով ճանապարհորդություն Միջին Ասիա. 1984 թ., «Ձայն համշենական», 2016 թ., №7-8:

քում՝ 50.378, 289 գյուղերում ու գյուղակներում՝ 81.579 մարդ²³³: 10 հազար 476 հայերից²³⁴ բացի, գյուղական վայրերում ապրում էին 625 (329 արական և 296 իգական) հայախոս **խեմշիններ** «**хемшины khemchines**»²³⁵ և 19 (12 արական և 7 իգական) օտարահպատակ **խեմշիններ**²³⁶: Ազգությունների լեզուների բաժնում խեմշիններն իրենց մայրենի լեզուն համարել են **հայերենը**²³⁷:

Հետաքրքիր է, որ նույն մարդահամարի ժողովածուի Հայաստանին նվիրված բաժնում էլ են հաշվառված արական սեռի 2 խեմշիններ «**хемшины khemchines**»²³⁸:

Համամիութենական մարդահամարի այս ռուսերեն ժողովածուի Հայաստանին վերաբերող մասը 1929 թ. Թիֆլիսում լույս է տեսել նաև հայերեն²³⁹: Ցավոք, այն զուրկ չէ տպագրական վրիպակներից, 7-րդ էջում կարդում ենք «**Չումշենցիներ Хемшины**», իսկ 9-րդ էջում՝ «**Չամշենցիներ**²⁴⁰ **Хемшины**»: Նրանք բնակվում էին «այլ քաղաքային վայրերում»²⁴¹, այսինքն՝ ոչ Երևանում ու գյուղերում:

Ինչպես ռուսերեն հրատարակության մեջ, հայերենում ևս «**Բացատրական դիտողություններ**» բաժնում պարզաբանված է ազգությունների լեզուների ընտրության կարգը. «Իր ազգության լեզուն, ընդունվում է այն լեզուն, որի անու-

²³³ **Всесоюзная перепись населения 1926 г.**, т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929 (–404 с.), см. отдел «Социалистическая Советская Республика Грузии, А.С.С.Р. Аджаристана, таблица IV», с. 12.

²³⁴ **Всесоюзная перепись населения 1926 г.**, т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929, см. отдел «Социалистическая Советская Республика Грузии, А.С.С.Р. Аджаристана, таблица VI», с. 26.

²³⁵ **Всесоюзная перепись населения 1926 г.**, т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929, см. отдел «Социалистическая Советская Республика Грузии, А.С.С.Р. Аджаристана, таблица VI», с. 26, 28.

²³⁶ **Всесоюзная перепись населения 1926 г.**, т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929, см. отдел «Социалистическая Советская Республика Грузии, А.С.С.Р. Аджаристана, таблица VII-а», с. 39:

²³⁷ **Всесоюзная перепись населения 1926 г.**, т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929, см. отдел «Пояснительные замечания к XIV тому», с. V.

²³⁸ **Всесоюзная перепись населения 1926 г.**, т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929, см. отдел «Социалистическая Советская Республика Армении, таблица VI», с. 7, 9.

²³⁹ 1926 թ. Համամիութենական մարդահամար, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, բաժին I, ազգություն–մայրենի լեզու–տարիք–գրագիտություն, Ա.Ս.Ֆ.Խ.Հ. Կենտրոնական վիճակագրական վարչություն, Թիֆլիս, հրատ. ԱՍՖԽՀ Կենտվիճվարի, Պոլիգրաֆարեստի 6-րդ տպարան, 1929 (–58 էջ + ՀՄԽՀ սխեմատիկ քարտեզ):

²⁴⁰ 1926 թ. Համամիութենական մարդահամար, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, աղյուսակ VI, էջ 7, 9: Գուցե սխալի պատճառը եղել է այն, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին ոմանք մեծատառ «Հ»-ն գրում էին մեծատառ «Չ»-ի նման:

²⁴¹ 1926 թ. Համամիութենական մարդահամար, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, աղյուսակ VI, էջ 9:

նը նման է ազգության անվանը, քանի որ այդ ազգությունը որոշված է եղել համաձայն այդ հարցի վերաբերյալ տրված հրահանգչական ցուցմունքների:

... Ներքևում բերված էտնիկ խմբերի համար իր ազգի լեզուն հասկացվում է ինչպես այն լեզուն, որ կրում է իր ազգության անունը, նույնպես և հետևյալ լեզուները»²⁴²:

148 համարի տակ, արդեն առանց սխալի, գրված է «**Համշենցի**» և դիմացը նշված է «**Հայերեն**»²⁴³: «Ազգությունների այբբենական ցուցակում» ևս սխալն ուղղված է՝ «**Համշենցի**»²⁴⁴: Կարևոր ենք համարում, որ մարդահամարների բոլոր ռուսերեն և հայերեն աղյուսակներում, բացի այբբենական հերթակառույթամբ կազմվածների, հայերը՝ «**армяне**» և համշենցիները՝ «**хемшины**», իրար հաջորդում են, համապատասխանաբար 147 և 148 համարակալմամբ:

1926 թ. մարդահամարի տվյալներով Աջարիայում ապրում էր 3295 քուրդ²⁴⁵: «Անձնական թերթիկին» պատասխանելու տարբերակները խիստ սահմանափակ էին, ուստի լրացնողները կարող էին մատնանշել էթնիկ անվանման լեզուն կամ վրացերենը, ռուսերենը կամ այլ լեզու՝ առանց անվան հիշատակման: Քուրդ համարվող այս 3295 անձանցից՝ 273 արական և 249 իգական սեռի հարցվողներ քրդերենը, վրացերենն ու ռուսերենն իրենց մայրենի լեզու չեն համարել²⁴⁶: Թե ո՞րն է նրանց մայրենի լեզուն, աղյուսակում չի նշվում: Այս քուրդ համարվող, բայց քրդերեն չհնացող և այն որպես օտար լեզու ընկալող տղամարդկանց (273) և կանանց (249) թվի համամասնությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տվյալ պարագայում գործ ունենք մի ամբողջական համայնքի հետ: Կարծում ենք, որ այս թվերը վերաբերում են «**համշենցի քուրդ**» կոչվող, նախկինում հայախոս, հետագայում թուրքախոս դարձածներին²⁴⁷:

Հետաքրքիր է, որ Աջարիայի Գոնիոյի շրջանում (теми) ապրող 572 (307 արական, 265 իգական) քրդերից քրդերեն գիտեին ոչ բոլորը, ընդամենը 408 հո-

²⁴² 1926 թ. Համամիությունական մարդահամար, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, էջ 51: Բնագիրը արեղյանական ուղղագրությամբ է:

²⁴³ 1926 թ. Համամիությունական մարդահամար, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, էջ 52:

²⁴⁴ 1926 թ. Համամիությունական մարդահամար, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, էջ 54:

²⁴⁵ Всесоюзная перепись населения 1926 г., т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929, см. отдел «Социалистическая Советская Республика Грузии, А.С.С.Р. Аджаристана, таблица VI», с. 26.

²⁴⁶ Всесоюзная перепись населения 1926 г., т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929, см. отдел «Социалистическая Советская Республика Грузии, А.С.С.Р. Аджаристана, таблица VI», с. 26.

²⁴⁷ Մերգեյ Վարդանյան, Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, «Իրան Նամե», 1998, №1-2-3, էջ 6:

գի (214 արական, 194 իգական)²⁴⁸, այսինքն քուրդ համարվող կամ մարդահամարում քուրդ գրանցված 164 հոգի (93 արական, 71 իգական) այդ լեզուն չգիտեր: Կարծում ենք՝ այս թվերը ևս վերաբերում են «**համշենցի քրդերին**»:

Համշենցի կրոնափոխ հայերի մի հատվածին երբեմն քրդերի հետ շփոթելու պատճառը երևի նրանց մահմեդական լինելն ու խաշնարածությամբ զբաղվելն էր, բայց, հավանաբար, կային նաև այլ հանգամանքներ ևս, որոնք, ցավոք, չեն ուսումնասիրվել:

Ոչխարաբուծության բնագավառում Համշենի և Խոփայի գավառների, նաև Աջարիայի համշենցիների ունեցած մեծ հաջողությունների մասին է վկայում այն, որ նրանք ստեղծել էին ոչխարների սեփական ցեղատեսակ: Վրացի գիտնական **Մ. Ռչևուլիշվիլին** իր «**К истории овцеводства Грузии**» («Վրաստանի ոչխարաբուծության պատմությունից») գրքում առանձին ենթաբաժին է նվիրել այդ ցեղատեսակին²⁴⁹. «Хемшинские овцы. Овцы этой породы не местного происхождения. Они завезены переселенцами в Аджарию из районов Хопи и Ризе, находящихся в настоящее время в пределах Турции»²⁵⁰ («Խենշինական ոչխարներ: Այս ցեղատեսակի ոչխարները տեղական ծագման չեն: Վերաբնակիչները դրանց Աջարիա են բերել ներկայումս Թուրքիայի սահմաններում գտնվող Խոփայի և Ռիզեի շրջաններից»):

Ռուսական Լազիստանում 1904թ. շրջագայած **Է. Լիոզենը** գրում է. «...Во всем Артвинском округе их считают за курдов и только удивляются тому, что они говорят по-армянски. Действительно, в противоположность баш-химшиламу мусульманам, они сохранили язык своих предков, от которых не отрекаются. Они мне рассказывали, что некогда были христианами, о чем у них сохранилось предание, и что они продолжают говорить «эрмэнджэ», т. е. по-армянски. Несколько приведенных ими на их наречии фраз убедили меня, что они действительно говорят по-армянски»²⁵¹ («Ամբողջ Արդվինի մարզում նրանց քրդերի տեղ են դնում, և միայն զարմանում են, որ նրանք խոսում են հայերեն: Իսկապես, ի հակադրություն մուսուլման բաշ-խիմշիլների՝ նրանք պահպանել են իրենց նախնիների լեզուն, որոնցից չեն հրաժարվում: Նրանք ինձ

²⁴⁸ **Всесоюзная перепись населения 1926 г.**, т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929 (–404 с.), см. отдел «Социалистическая Советская Республика Грузии, А.С.С.Р. Аджаристана, таблица X», с. 104, 105.

²⁴⁹ **М. Д. Рчеулишвили**, К истории овцеводства Грузии, Тбилиси, Государственное издательство ГССР, 1953 (–220 с.), с. 88–90. Տե՛ս նաև՝ **В. М. Шамиладзе**, Хозяйственно-культурные и социально-экономические проблемы скотоводства Грузии. Историко-этнографическое исследование, Тбилиси, изд. «Мецниереба», 1979, с. 74, 282.

²⁵⁰ **М. Д. Рчеулишвили**, К истории овцеводства Грузии, с. 88.

²⁵¹ **Э. Лиозен**. Берег Русского Лазистана, «Известия Кавказского отдела Императорского Русского географического общества», т. XVIII, 1905–1906, Тифлис, 1906, с. 169.

պատմում էին, որ մի ժամանակ քրիստոնյաներ են եղել, ինչի մասին նրանց մոտ պահպանվել է ավանդազրույց, և որ նրանք շարունակում են խոսել «երմէնջէ», այսինքն՝ հայերեն: Իրենց բարբառով նրանց բերած մի քանի նախադասություններն²⁵² ինձ համոզեցին, որ նրանք, իրոք, խոսում են հայերեն»):

Քանի որ **Է. Լիոզենի** հոդվածում կարևոր դիտարկումներ և փաստեր կային նաև կրոնափոխ համշենահայերի մասին, ուստի որոշեցինք պարզել, թե ո՞վ է հեղինակը: Բայց հանրագիտարաններում և գիտական աշխատություններում **Է. Լիոզենի** մասին ոչինչ չգտանք, միայն մի շատ հակիրճ հիշատակման հանդիպեցինք վրացի պատմաբան, հնագետ և աղբյուրագետ **Էրվտիմե Թաղայշվիլի** (1863–1953)²⁵³ «**Археологическая экспедиция 1917-ого года в южные провинции Грузии**» («1917 թվականի հնագիտական գիտարշավը Վրաստանի հարավային գավառներ») գրքում, որի առաջաբանում նա, անդրադառնալով նախորդ՝ 1907 թ. գիտարշավախմբի կազմին, գրում է, որ նրանում ընդգրկված էր նաև «**фотограф-любитель, преподаватель французского языка Тифлисской II мужской гимназии Э. Лиозен**»²⁵⁴ («սիրող-լուսանկարիչ, Թիֆլիսի II արական գիմնազիայի ֆրանսերեն լեզվի ուսուցիչ **Է. Լիոզենը**»):

Ըստ 1926 թ. մարդահամարի տվյալների՝ Գոնիոյի շրջանում ապրում էին նաև 540 (287 արական և 253 իգական) խեմշիններ «**хемшины**», 46 արական և 5 իգական սեռի ռուսներ²⁵⁵: Ռուսների թվերի այս անհամամասնությունից դատելով, նրանք Սարվիի սահմանապահ գործառնա մարտիկներն էին: Ինչպես արդեն նշել ենք, 1921 թ. մարտի 16-ին ռուս-թուրքական պայմանագրով Թուրքիային էին հանձնվել Սարվիից հարավ գտնվող տարածքները, որոնցում համշենահայերի գյուղեր կային:

Մարդահամարի X աղյուսակում նշված է, որ Գոնիոյի շրջանում բնակվող վրացիների, աջարների, լազերի հետ ապրում էին նաև **արական սեռի 3 հայեր**²⁵⁶: Ամենայն հավանականությամբ նրանք ևս ծառայում էին ուղեկալում:

²⁵² Թարգմանության ճշտության հարցում կասկածները փարատելու համար նշենք, որ ըստ **Ռուս-հայերեն բառարանի** (Երևան, 1968)՝ «**фраза**» բառի առաջին իմաստը «**նախադասություն**» է: 2. փխբ. դատարկախոսություն, ճոռոմախոսություն, ճամարտակոչություն, 3. խոսք, արտահայտություն, կայուն կապակցություն (էջ 1327): Կարծում ենք՝ պարզելու համար, թե այդ քրդեր համարվող մարդիկ ինչ լեզվով են խոսում, բնական է, որ պետք էր անվագն մի քանի նախադասություններ ասվեին:

²⁵³ **Ռ. Մեարնեղի**, «Թաղայշվիլի Էրվտիմե Սիմոնի» // ՀՍՀ, հ. 4, Երևան, 1978, էջ 128:

²⁵⁴ **Е. Такайшвили**, Археологическая экспедиция 1917-ого года в южные провинции Грузии, Академия наук Груз. ССР, Тбилиси, изд. АН Груз. ССР, 1952 (–262 էջ, որից 101 էջ տեքստ, գծանկարներ և եկեղեցիների հատակագծեր, 151 էջ Տայքի եկեղեցիների լուսանկարներ), с. 18.

²⁵⁵ **Всесоюзная перепись населения 1926 г.**, т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929 (– 404 с.), см. отдел «Социалистическая Советская Республика Грузии, А.С.С.Р. Аджаристана, таблица X», с. 104, 105.

²⁵⁶ **Всесоюзная перепись населения 1926 г.**, т. XIV, Закавказская С.Ф.С.Р., Москва, 1929

Բարունակ Թողաքյանի արխիվում մեզ հաջողվեց գտնել սահմանապահ հայերից մեկի հետ նրա զրույցի գրառումները. «Ճորոխի ծովեզրյա հովիտներում մահմեդական համշենահայերի բնակվելու մասին առաջին անգամ իմացել էի 1918 թ. Բաթումում իմ ծանոթ Սերոբ Մարգարյանից, որը մոտիկ բարեկամություն ուներ նրանց հետ: Ավելի մանրամասն տեղեկություններ ինձ հաղորդեց 1942–43 թթ. սահմանապահ կայազորում ծառայած Վազգեն Գասպարյանը:

... Բաթումի բնակիչ Արշակ Ավետիսի Գարամանյանը, որը երկար տարիներ ծառայել է այդ շրջանի սահմանապահ ջոկատում, պատմում է. «1938 թ. մի երեկո հյուր եղա Գոնիո գյուղում Գարաիբրակիմօղլի Բեկտաշ Սուլիսիչի տանը: Ըստ ավանդական հավաստի վկայության՝ նրանց նախնիները Ճերմակյան են կոչվել: Մինչև այսօր էլ բնակիչները նրանց Ճերմակցի են անվանում:

Տանտիկինը հացի հեսի (խմոր) շաղվելը վերջացնելուց հետո վրան մատով խաչ քաշեց ու ապա խմորը ծածկեց: Իմ հարցին, թե մահմեդական լինելով ինչո՞ւ խաչի նշան է անում, պատասխանեց. «Ես հիներուս էամոն տեսած ունիմ, ինչ էնիմ որ մուսլուման դարձած իք»: Կանանց շատերը հայկական անուններ ունեն՝ Մայրոմ, Թագուկյ, Տիրուկ, Հեղնար, Խնկենի և այլն:

Հաճախ գտնվել եմ նրանց հարսանիքներում: Պարում են նույն պարերը, ինչ դեպի ծովափ փախչող համշենահայերը՝ թրթռուկ (թիթռեմե), կանանց շուրջպար, հարսի պար: Վերջինիս տարբերությունը կայանում է նրանում, որ պարողների առջևից գնացողը նախշուն թաշկինակը բարձր բռնած ուրախ երգելով ու ճկուն շարժումներով առաջնորդում է պարողներին, նրան հետևում են զույգերը:

Աղջիկներն ու կանայք դեմքերը չեն ծածկում, տղամարդկանց հետ համատեղ երգում ու պարում են: Հետաքրքրականը նրանումն է, որ հարսանիքներում, թե խնջույքներում ավելի երգում են հայերեն (Համշենի բարբառով) խաղերգեր, քան թուրքերեն: Երաժշտական գործիքները նույնն են, ինչ որ մեր գյուղերում՝ դավուլ[ը], զուռնան ու ամենից սիրված քեմենչեն»²⁵⁷:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Խորհրդային Միությունն ու Թուրքիան հայտնվեցին տարբեր ճամբարներում, ավելի ծանրացավ սահմանամերձ գյուղերում բնակվող համշենցիների կյանքը: Որպեսզի Թուրքիայի հետ պատերազմի դեպքում Աջարիայի թուրքերը, քրդերն ու կրոնափոխ համշենցիները՝ **խեմշինները**, չաջակցեն մյուս կողմում բնակվող իրենց ազ-

(–404 с.), см. отдел «Социалистическая Советская Республика Грузии, А.С.С.Р. Аджаристана, таблица X», с. 104.

²⁵⁷ ՀԱՄ արխիվ, №43, «Բ. Գ. Թողաքյան, Համշենահայերի և պոնտահայերի ազգագրական նյութերը (ձեռագիր) / Խարբերդ և Սերաստիա/, մաս II, 1959–1969 թթ.», տետր №182, 37 թերթ (47-ից–84), թերթ 52-րդ, 53-րդ թերթում սոսնձված հատված:

գակիցներին ու հավատակիցներին, Պաշտպանության պետական կոմիտեի նախագահի տեղակալ, Ներքին գործերի ժողկոմ **Լ. Բերիան** 1944 թ. հուլիսի 24-ի գրությամբ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ **Ի. Ստալինին** առաջարկում է. «**В целях улучшения условий охраны государственной границы СССР на участке Грузинской ССР**»²⁵⁸ («ԽՍՀՄ պետական սահմանի Վրացական ԽՍՀ հատվածի պահպանության պայմանների բարելավման նպատակներով») Թուրքիային սահմանակից շրջանների թուրքերին, քրդերին և **խեմշիներին** գաղթեցնել:

1944 թ. հուլիսի 31-ին Ի. Ստալինի ստորագրած թիվ 6279 **խիստ գաղտնի** որոշմամբ հրահանգվում է՝ Վրացական ԽՍՀ պետական սահմանի պահպանության պայմանների բարելավման նպատակով Վրացական ԽՍՀ սահմանամերձ գոտուց՝ Ախալցխայի, Ադիգենի, Ասպինձայի, Ախալքալաքի, Բոգդանովկայի շրջաններից և Աջարական ԻԽՍՀ-ից 86 հազար թուրքերի, քրդերի և խեմշիների (խեմշիլների) վերաբնակեցնել, այդ թվում՝ Ղազախստանում՝ 40 հազար, Ուզբեկստանում՝ 30 հազար և Կիրգիզիայում (1990-ից՝ Ղրղզստան)՝ 16 հազար մարդ:

Որոշումն ունի 14 կետ և մի շարք ենթակետեր²⁵⁹:

1944 թ. նոյեմբերի 28-ին Լ. Բերիան Ի. Ստալինին գրած զեկուցագրով տեղեկացնում է, որ Ադիգենի, Ախալցխայի, Ասպինձայի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններից աքսորն իրականացվել է նոյեմբերի 15–18-ին, իսկ Աջարիայից՝ նոյեմբերի 25–26-ին: Նախատեսված 86 հազարի փոխարեն տեղահանվել է 91.095 մարդ²⁶⁰, որոնց թվում՝ Աջարիայից 1385 խեմշիլներ²⁶¹: Իրերը հավաքելու համար բռնագաղթվողներին տրվում էր ընդամենը 2 ժամ²⁶²:

Շուրջ 20 օր տևած²⁶³ այս դժոխային աքսորի ընթացքում, կենդանիներ տեղափոխելու համար նախատեսված փակ վագոններում մի քանիսը գժվեցին, ոմանք էլ՝ մեծ ու փոքր, մահացան սովից, ծարավից ու հիվանդություններից:

Այդ ապրանքատար գնացքների մեջ էին նաև **Քյազըմ Բարաիբրահիմովն** ու նրա հայրենի գյուղի **խեմշիլները**:

²⁵⁸ Николай Бугай, Аскарби Гонов, Кавказ: Народы в эшелонах (20–60-е годы), Москва, Изд. «Инсан», 1998 (-368 с.), с. 212, 213.

²⁵⁹ Сталинские депортации, 1928-1953. Под общей редакцией академика А. Н. Яковлева. Составители: Н. Л. Поболь, П. М. Полян, Россия, XX век, документы, Международный фонд «Демократия», Москва, Издательство «Материк», 2005 (-904 с.), с. 525–528.

²⁶⁰ Сталинские депортации, 1928-1953. 2005, с. 534.

²⁶¹ Николай Бугай, Аскарби Гонов, Кавказ: Народы в эшелонах (20–60-е годы). 1998, с. 213.

²⁶² Николай Бугай, Аскарби Гонов, Кавказ: Народы в эшелонах (20–60-е годы). 1998, с. 215.

²⁶³ Николай Бугай, Аскарби Гонов, Кавказ: Народы в эшелонах (20–60-е годы). 1998, с. 217.

Քանլը դերն (Канлы дара) գյուղն ըստ հետազոտող **Է. Լիոզենի** 1906 թ. հրատարակած «**Берег Русского Лазистана**» («Ռուսական Լազիստանի ափը») հոդվածի՝ ուներ 5 տուն և 23 **խեմշիլ** բնակիչ (13 տղամարդ և 10 կին)²⁶⁴: Քյազըմի հավաստմամբ, որն աքսորի ժամանակ 18 տարեկան է եղել, 1944-ին գյուղն արդեն 10 տուն էր:

Թե որքան շատ էին կորուստները, վկայում է այն, որ տարագրությունից 9 տարի անց՝ 1953 թ. հունվարի 1-ի դրությամբ «հատուկ բնակավայրերում» (специальные поселения, спецпоселения) ապրող **համշենցիների (խեմշիլների)** թիվը 1397 էր (Ղրղզստանում՝ 973, Ղազախստանում՝ 422, Ուզբեկստանում՝ 2)²⁶⁵, այսինքն՝ անը կազմել է ընդամենը 12 հոգի, այն դեպքում, երբ խեմշիլները հայտնի էին իրենց բազմազավակ ընտանիքներով:

Ուշագրավ է, որ պաշտոնական գրություններում և մարդահամարներում կրոնափոխ համշենցիների ազգությունը նշվում էր ն՝ «**խեմշին**», ն՝ «**խեմշիլ**», երբեմն երկուսը միաժամանակ²⁶⁶, հաճախ անձնագրերում գրվում էր խեմշիլ, զինվորական գրքույկներում՝ թուրք:

Թե՛ Ղազախստանում ու Ղրղզստանում, թե՛ Թուրքիայում բնակվող կրոնափոխ համշենահայերը խոսում են Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով, որն անվանում են «**համշեցնակ**», «**համշեսնակ**», «**հոմշեցնագ**», «**հոմշեսնագ**»: Այն բաժանվում է երկու ենթախոսվածքի՝ **թուրքնանցիների** (այսինքն՝ դրսեցիների, այլ գյուղերի բնակիչների) և **արդեկեցիների** (արդալացիների), այսինքն՝ Արդալա գյուղի բնակիչների²⁶⁷: Արդալան գտնվում է Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի գավառում:

²⁶⁴ Э. Лиозен, Берег Русского Лазистана, «Известия Кавказского отдела Императорского Русского географического общества», т. XVIII, 1905–1906, Тифлис, 1906, с. 160.

²⁶⁵ Виктор Николаевич Земсков, Спецпоселенцы в СССР, 1930–1960, РАН институт российской истории. Москва, Изд. «Наука», 2005 (–312 с.), с. 213, 214.

²⁶⁶ Итоги всероссийской переписи населения 2002 года по Краснодарскому краю (в 13 томах), том 4, Национальный состав и владение языками, гражданство. Официальное издание, Краснодар, 2005 (–456 с.), с. 11, 16, 20, 446

²⁶⁷ Աջարիայից Կենտրոնական Ասիա աքսորված, նաև Թուրքիայում բնակվող կրոնափոխ համշենահայերի մասին մեր ուսումնասիրությունները տե՛ս **Ձայն համշենական**, ժողովածու, բանաստեղծություն, արձակ, բանասիրություն, զիրք 3-րդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց **Սերգեյ Վարդանյանը**, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989, էջ 199–246: **Սերգեյ Վարդանյան**, Համշենի մուսուլման հայերը, «**Իրան-Նամե**», հանդես, Երևան, 1993, №4, էջ 3, 4: **Նույնի**՝ Նախկին Խորհրդային Միությունում բնակուող մահմետական հայերը, «**Բազմավեպ**», Վենետիկ, 1996, №1–4, էջ 189–200: **Նույնի**՝ Կրոնափոխ համշենահայերի ուսումնասիրության պատմությունից, «**Իրան-Նամե**», Երևան, 1998, №1–2–3, էջ 2–11: **Serguei Vartanian**, Des Arméniens oubliés, “Azad magazine”, Grenoble, France, 1999, №87, p. 16, 17. **Նույնի**՝ Des Arméniens oubliés (Deuxième partie), Au sujet des Arméniens convertis à L’Islam, “Azad magazin”, Grenoble, France, 1999, №88, p. 16, 17. **Նույնի**՝ Des Arméniens oubliés (suits et fin). Au sujet des Arméniens convertis a L’Islam, “Azad magazine”, Grenoble, France, 2000, №89, p. 16, 17. **Նույնի**՝ Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանասիրությունը և երգարվեստը (յուրերևույթ և ուսումնասիրություններ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (–428 էջ): **Նույնի**՝ Որոշ

2010 թ. մենք հնարավորություն ունեցանք այցելելու Խոփայի գավառ, որի բնակչությունը 32.016 մարդ էր, այդ թվում՝ Խոփա քաղաքինը՝ 17.433: Մեծ մասը համշենահայեր էին, այնուհետև՝ լազեր²⁶⁸, թուրքեր և այլք: Թեև ամեն տարի գավառի բնակիչների թիվը դանդաղորեն աճում է, բայց գյուղերում նվազում է: Շատերը տեղափոխվում են Խոփա, մեծ քաղաքներ՝ Ստամբուլ, Անկարա, Բուրսա, Իզմիր և այլն: 2010 թ. **Արդալան** արդեն բաժանված էր երկու գյուղի՝ **Վեյի Արդալան** (**Վերին Արդալա**) կոչվում էր **Էշմեքայա**, մյուսը՝ **Վայի Արդալան** (**Ներքին Արդալա**)՝ **Չիմենլի**: Այդ թվականին **Էշմեքայան** ուներ 363 բնակիչ (2018 թ.՝ 289), իսկ **Չիմենլին**՝ 300 (2018 թ.՝ 285):

Ըստ մեր ուսումնասիրությունների՝ արդալացիների ենթախոսվածքով են խոսում Արդվինի նահանգի Խոփայի գավառի համշենցիների 23 շեներից չորսում՝ **Էշմեքայայում**, **Չիմենլիում**, **Փընարլիում** և **Գյունեշլիում**, նաև՝ հարևան Բորչքայի գավառի համշենցիների երեք գյուղերից մեկում՝ **Շիլքեոյում** (նախկին՝ **Մանաստրը**): Մնացած 21-ում տիրապետում է թուրքևանցիների ենթախոսվածքը²⁶⁹:

Հենց իրենց՝ համշենցիների վկայությամբ՝ արդալացիների մեջ համեմատաբար շատ են աջակողմյան հայացքներով մարդիկ, նաև կրոնամոլները, իսկ թուրքևանցիների մեջ մեծ թիվ են կազմում ձախակողմյան քաղաքական կողմնորոշում ունեցողներն ու աթեիստները: Թուրքևանցիները սիրում են արդալացիներին վերագրվող տարբեր թերությունների մասին կատակներ անել, զվարճալի հորինվածքներ պատմել:

դիտարկումներ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի մասին // Ակադեմիկոս Գ. Զահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կազմակերպած «**Զահուկյանական ընթերցումներ**» միջազգային գիտաժողովի (2015 թ. հունիսի 4–5) նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015 (–224 էջ), էջ 167–174: **Նույնի՝** Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի մահմեդական համշենահայերից գրառված հայերեն մի քանի բառերի մասին, «**Պատմաբանասիրական հանդես**», 2016, №3, էջ 81–95: **Նույնի՝** Կորած հայերի հետքերով ճանապարհորդություն Միջին Ասիա. 1984 թ., «**Ձայն համշենական**», 2016, №1–2, 3–4, 5–6, 7–8, 9–10: **Նույնի՝** Թուրքիայի կրոնափոխ համշենահայերից գրառված մի երգի մասին // **Գիտական հոդվածների ժողովածու** (նվիրվում է Հ. Աճառյանի ծննդյան 140-ամյակին), Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Ատողիկ» հրատ., 2016 (–398 էջ), էջ 353–366:

²⁶⁸ **Լազ** – Սև ծովի հարավ-արևելյան ափերին՝ Լազիստանում (հայերեն Ճենք, վրացերեն՝ Ճանեթ) ապրող ժողովուրդ: Լազերենը (ճաներենը) իբերա-կովկասյան լեզվաընտանիքի քարթվելական խմբի լեզու է: Համշենցիները նրանց անվանում են **ջան**, **ջոն**, վրացիները՝ **ճան**:

²⁶⁹ **Սերգեյ Վարդանյան**, Թուրքիայում բնակվող համշենահայերի արդի լեզվավիճակը // **Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ**, միջազգային գիտաժողովի (2014 թ. հոկտեմբերի 8–9) **գեկուցումների ժողովածու**, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Ատողիկ» հրատ., 2014 (–224 էջ), էջ 213: Նույնի՝ Թուրքիայի մահմեդական համշենահայերի բնակավայրերի և թվաքանակի մասին, «**Պատմաբանասիրական հանդես**», 2017, №2, էջ 52:

Հարություն Գաթենյանը դեռևս 1883 թվականին է կրոնափոխ համշենցիների պարզամտության մասին «Մշակում» գրել. «Բաթումի մերձակայքում համշենցի հայախօս հայ-մահմետականները, լինելով ըստ մեծի մասին տաւարապահ, հնուց սովորություն ունեն գարնանը ելնել իրանց տաւարների հօտերով և շաշորդներով²⁷⁰ Արդահանի, Արդանուչի ու Շավշէթի մէջտեղերում գտնված Կղարջքի սարերի վրա, ճորոխ գետի հովիտների առատ արօտներում իրանց հօտերը ազատօրէն արածացնելու համար: ...Սրանց մօտ յայտնի նշմարվում է մի նահապետական պարզամտություն»²⁷¹:

Այնուհետև նա պատմում է մի իրական դեպք. «Սրանց հովուական պարզամտութեան ապացոյց կարող է համարվել մի շատ հետաքրքիր անցք, որը պատահել է այս մօտ օրերում: Սրանց հարուստների կարգումն էր հաշվվում Կարա-Մահմէդ անունով մինը, սրա որդին անցեալ տարի սարի վրա մի փոքրիկ բանակրում աորճանակի մի հարուածով սպանեց մի թիւրք հովուին: Սրանցում աւանդական համոզում է մնացել, թէ իբրև մարդ մարաղից²⁷² կարող է մարած ընկնել այնպէս, որ կատարեալ մեռած համարվի: Այդ Կարա-Մահմէդը իր մարդասպան որդուն ազատելու համար, որպէս ասում են, 200 լիրա (1800 ը.) պատրաստի փող փճացրած²⁷³ լինելով, մարաղից այս տարի իր կենաց ընթացքը կնքել էր մի և նոյն սարի վրա, որտեղ իր որդին մարդ էր սպանել: Սրան թաղել էին այնտեղ մի ճանապարհի եզերքին, որտեղից պէտք է անց-կենան Արդանուչի և Արդուիսի ճանապարհորդները Արդահան երթնելու ժամանակ:

...Անցեալ ամիս երբ որ օրան²⁷⁴, ցրտերից ստիպեալ իրանց սիրելի Կարա-Մահմէդին սարի վրա հողի տակ միայնակ թողնելով, իջել էր սարի ստորոտի վրա գտնված մի թիւրք գիւղի շրջակայքում, գալիս է մի ճանապարհորդ, իմաց է տալիս օրային, որ սարի վրայի թաժա (նոր) գերեզմանից (որտեղ այլ ուրիշ գերեզման չէր գտնվում) մի ինչ որ խորունկ ձայն է գալիս, այնպէս որ սաստիկ ողորքում է և իր թիւթին չբուխն ու թիւթինի քիսան է ուզում: Հէնց որ օրան լսում է այս լուրը, իսկոյն հաւատալով, թէ գուցէ մարած էր ու արթնացաւ, հաւաքվում են նրա ազգականները, գիւղից էլ մի քանի մարդ ուզում են հետները առնել, բայց դրանք չեն համաձայնում, շտապում վազում են դէպի սարի բարձրությունը, հասնում են գերեզմանի մօտ: Առաջ է անցնում նրա ազգականներից մինը, որը Մուրդօ է կոչվում, ձայն է տալիս գերեզմանի վրա, խօսում է իրանց հայերէն լեզուով, սակայն, ի հարկէ, ոչ մի պատասխան չէ ստանում: Ապա մօտենում են միւս ընկերները, որոնք արդէն զարմացել էին, թէ ինչ պատճառով չէ պատասխանում, հարցնում

²⁷⁰ **Շաշորդ** – կաթնամթերք պատրաստող:

²⁷¹ **Յարութին Գաթենեան**, Նամակ Արդահանից, «Մշակ», թերթ, Թիֆլիս, 1883, նոյեմբերի 5, № 168, էջ 2: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

²⁷² **Մարաղ** – վիշտ, տրտմություն:

²⁷³ **Փող փճացրած** – վատնած, չսախատեալած ծախսեր արած:

²⁷⁴ **Օրա** – մեծ վրան, վրաններով ժամանակավոր բնակության վայր:

են ձայնողին, թե արդեօք մահուան մօտ օրերում հանգուցեալը իր հետ մի ատելութիւն խօս չունէր: Սրա միտն է գալիս այն, որ մահուանից մի քանի օր առաջ ինքն մի ինչ-որ բանակոխի է ունեցել Կարա-Մահմէդի հետ: Ուրեմն, ասում են, դու յետ կանգնիր և լուռ կայ, որովհետև քեզնից ջորած²⁷⁵ է և հէնց նրա համար էլ պատասխան չէ տալիս: Առաջ են անցնում իրանք, ձայնում են, ձայնում են այնքան, որ յոգնում են. մէջներից մինը, ինքնիրան ատելի բանգէտ համարելով, տարակուսվում է, թէ մի գուցէ հողակոյտից ներս ձայն չէ թափանցում, փորում է գերեզմանի մի կողքը, մի գլուխ ներս տանելու չափ փոս է բաց անում և այնպէս կոխում է գլուխը ներս հողի մէջ ու ձայնում է, սակայն, երբ որ տեսնում են թէ դարձեալ պատասխան չէ տալիս, յուսակտոր տրտմութեամբ ստիպվում են յետ դառնալ, թիթիւն չբուխն ու թիւթիւնի քիսան էլ յետ բերելով, որը չէին մոռացել հետները միասին տանել, որ ծխել տային հանգուցեալին գերեզմանից դուրս հանելուն պէս: Պատճառ են բռնում թէ վաղօրօք չը կարողացան հասնել, որ կենդանի գտնէին, որից հետևում է թէ ուշ հասնելու պատճառով կրկին հոգին գերեզմանում արանդել է, մինչդեռ հանգուցեալը այդ ժամանակ մի ամսվայ թաղված էր»²⁷⁶:

Հարություն Գաթենյանին չհավատալու հիմքեր չունենք²⁷⁷, քանի որ նա լրջմիտ մտավորական էր: 1917 թ. «**Հայաստան**» (Թիֆլիս) թերթում տպագրված մահախոսականից տեղեկանում ենք, որ նա «**80ական թուականներուն աշխատակցած էր «Մշակ» լրագրին**²⁷⁸, տեղս ունէր ձեռագիր աշխատութիւններ Արդւինի շրջանին թրքախօս հայերու վրայ, որոնք բաւական հետաքրքիր էին և ունէին պատմական մեծ արժէք, գրած էր նաև ընթացիկ կեանքէն առնուած վէպիկներ. բայց ափսո՛ս, այս բոլոր գրաւոր աշխատութիւնները կորսուեցան Կարնոյ բոլոր ստացուածքին հետ»²⁷⁹:

Յավոք, քաղաքական անբարենպաստ պայմանների՝ Թուրքիայի հետ սահմանի փակ լինելու, իսլամ համշնեցիների՝ Կենտրոնական Ասիա աքսորի և այլ պատճառներով, նրանց բանահյուսությունը ուշադրության չի արժանացել: Պոլ-

²⁷⁵ **Ջորած** – խոռված, նեղացած:

²⁷⁶ **Յարություն Գաթենյան**, Նամակ Արդահանից, «Մշակ», Թիֆլիս, 1883, նոյեմբերի 5, №168, էջ 2, 3: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

²⁷⁷ Հ. Գաթենյանի նկարագրած միջադեպին հավանաբար նպաստել է այն, որ ըստ մեր գրառումների՝ Բաթումի մոտակա գյուղերի համշնեցիները՝ որպէս մուսուլմաններ, հուղարկավորում էին առանց դագաղի և փոսի մեջ՝ հանգուցյալի վրա, թերթւթայմբ՝ գլխի կողմում բարձր, դնում էին իրար միացված տախտակներից պատրաստված «**լախթի փաղ**», այնպէս, որ գլխի մոտ որոշ ազատ տարածություն մնար, և հետո էին հողով ծածկում:

²⁷⁸ **Հարություն Պետրոսի Գաթենյանը** 1880-ականներից մինչև 1900-ականները «Մշակին» թղթակցել է նաև հետևյալ ծածկանուններով՝ «Գ., Յ., Յարություն Գաթեն», տե՛ս **Բախտիար Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան, 2005, էջ 116, 580:

²⁷⁹ **Վ. Ողբունի**, Մեր կորուստները. Յարություն Գաթենյան, «Հայաստան», թերթ, Թիֆլիս, 1917, նոյեմբերի 24, №165: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

սահայերն էլ, իրենք լինելով հալածյալ, չեն կարողացել զբաղվել իրենց իսլամ համերկրացիների բարբառի և բանահյուսության ուսումնասիրությամբ:

Ժորժ Դյումենզիլի գրանցած բանահյուսական նյութերի 1964թ. Բրյուսելում հրատարակումից ուղիղ 20 տարի անց՝ 1984թ., մեզ հաջողվեց Ղազախստանի Չիմբենդի մարզի Չիրկինտ գյուղում մաթեմատիկայի ուսուցիչ, 1955թ. ծնված **Ջելալ Քարաիբրահիմովից** (Джелал Караибрагимов) գրառել երկու հեքիաթ, մեկն էլ՝ նույն թվականի դեկտեմբերին՝ նրա Երևան այցելության ժամանակ: 1987թ. կրկին Չիրկինտյում նա պատմեց մեկ հեքիաթ, ևս մեկը՝ 1988թ. Երևանում հյուրընկալվելու ընթացքում:

1987 թվականին Չիրկինտյում **Քյազըմ Քարաիբրահիմովից** գրառեցինք երկու հեքիաթ և «Արդեկեցիք՝ ավջի»²⁸⁰ (№ 1) գվարճապատումը:

Այն հինգ **արդալացիների** որսի գնալու մասին է: Նրանք արջի որջի մուտքից նայում են, բայց չչինչ չեն տեսնում: Նրանցից մեկը համաձայնվում է բունը մտնել: Նրան պարան են կապում ու նա ներս է սողոսկում: Արջը նրա գլուխը պոկում է: Իրենց ընկերոջը պարանով դուրս են քաշում և մտածում, թե մտնելիս նա գլուխ ունե՞ր, թե՞ չունե՞ր: Վերադառնում են գյուղ, կնոջը հարցնում, թե այս առավոտյան մարդդ որ վեր ելավ, գլուխը վրան էր, թե՞ վրան չէր: Կինն էլ պատասխանում է. «**Բէլօխէ չքիդիմ, համա բերբուքէ (բերվուքէ) ժաժի գուր**» («Գլուխը չգիտեմ, բայց շրթունքը շարժում էր»):

ԱՄՆ-ՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Այս երգիծապատումի մեկ այլ օրինակ 1995թ. Հարվարդի համալսարանի երեք աշխատակիցներ ձայնագրել են Բոստոնում (ԱՄՆ): Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի թուրքականցիների ենթախոսվածքով այդ գվարճալի պատումը՝ լատինատառ տառադարձմամբ, նաև՝ անգլերեն թարգմանությամբ՝ «**Temel's Head**» (թարգմ.՝ «Թեմելի գլուխը») վերնագրով, 1996թ. տպագրվել է ԱՄՆ-ի Օհայոյի նահանգի Քլիվլենդ քաղաքի համալսարանի «**Annual of Armenian Linguistics**» («Հայկական լեզվագիտական տարեգիրք») հանդեսում հրատարակված Հարվարդի համալսարանի աշխատակիցներ **Բերթ Վոքսի, Սերջիո Լա Փորթայի** և **Էմիլի Թաքերի**՝ «**Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes**»²⁸¹ («Լեզվաբանական գրառումներով ազգա-

²⁸⁰ **Չայն համշենական**, ժողովածու, բանաստեղծություն, արձակ, բանահյուսություն, գիրք 3-րդ, էջ 229: **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), էջ 188:

²⁸¹ **Bert Vaux, Sergio La Porta, Emily Tucker**, Ethnographic Materials from the Muslim Hem-

գրական նյութեր մուսուլման հեռնշինլիից») հողվածում:

Հեղինակները էջատակում շնորհակալություն են հայտնում **Հակոբ Խաչիկյանին** (Hagop Hachikian) և **Ջեյմս Ռասելին** (James Russel) հողվածի նախնական տարբերակը կարդալու և օգտաշատ դիտողությունների (comments) համար²⁸²: Հավելենք, որ Հակոբ Խաչիկյանը պոլսեցի էր, որն ապրում էր Բոստոնում, իսկ Ջեյմս Ռասելը 1993-ից Հարվարդի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչն էր:

Հողվածագիրներն ասացողի (informant) մասին նշում են. «We have been working since January of 1995 with a twenty-five-year-old Homshentsi who was born and raised in a village of some one thousand inhabitants located five kilometers from the Georgian border and from the Black Sea coast in the Artvin province of Turkey»²⁸³ («Մենք 1995 թ. հունվարից սկսած աշխատում էինք մի քսանհինգամյա **հոմշենցու** հետ, որը ծնվել ու մեծացել էր Թուրքիայի Արդվինի նահանգում՝ Վրաստանի սահմանից և Սև ծովի ափից հինգ կիլոմետր հեռու գտնվող մոտ հազար բնակիչ ունեցող գյուղում»): “Due to the delicate political situation in eastern Turkey, our informant has requested that we withhold his name and that of his village”²⁸⁴ («Ասացողը խնդրել է, որ արևելյան Թուրքիայում քաղաքական նորր իրավիճակի պատճառով մենք իր և իր գյուղի անունները գաղտնի պահենք»):

Թեև նրա մասին գրում են. «Our informant is an endless font of jokes and tales»²⁸⁵ («Մեր ասացողը կատակների ու պատմությունների անսպառ աղբյուր է»), բայց նրանից գրառվել է ընդամենը 5 ասացվածք, 4 հանելուկ, մեկական խաղիկ ու թվախաղ և 4 զվարճալի մանրապատում, այդ թվում՝ «**Temel’s Head**»²⁸⁶

shinli with Linguistic Notes, “**Annual of Armenian Linguistics**”, volume 17, Cleveland State University, Cleveland, 1996, pp. 25–45. Տե՛ս նաև՝ **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայից Բոստոնում գրառված զվարճախոսության տարբերակների մասին // «**Լեզուն, գրականությունը և արվեստը միջնադարի համատեքստում**» (ԵՊՀ, 2011 թ. հոկտեմբերի 4–8) միջազգային գիտաժողովի թեզիսներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 133, 134:

²⁸² Bert Vaux, Sergio La Porta, Emily Tucker, Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes, “**Annual of Armenian Linguistics**”, volume 17, Cleveland, 1996, p. 25:

²⁸³ Bert Vaux, Sergio La Porta, Emily Tucker, Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes, “**Annual of Armenian Linguistics**”, volume 17, Cleveland, 1996, p. 26.

²⁸⁴ Bert Vaux, Sergio La Porta, Emily Tucker, Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes, “**Annual of Armenian Linguistics**”, volume 17, Cleveland, 1996, p. 26.

²⁸⁵ Bert Vaux, Sergio La Porta, Emily Tucker, Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes, “**Annual of Armenian Linguistics**”, volume 17, Cleveland, 1996, p. 33:

²⁸⁶ Bert Vaux, Sergio La Porta, Emily Tucker, Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes, “**Annual of Armenian Linguistics**”, volume 17, Cleveland, 1996,

(№ 2), որի տակ նշված է, որ այն քրիստոնյա հայերի շրջանում տարածված ժողովրդական պատումի տարբերակ է, և հղում է արվում Ջ. Ռասելի 1987 թ. տպագրված անգլերեն մի հրապարակմանը, որին մենք կանդրադառնանք այս ուսումնասիրության «**Հայագետ Ջենյա Ռասելի դիտարկումների մասին**» գլխում:

Մի քանի տարի անց՝ 2001 թ., **Բերթ Վոքս** այս հոդվածի զգալիորեն փոփոխված, ազգագրական և լեզվաբանական նոր նյութերով հավելված տարբերակը՝ «**Hemshinli: The Forgotten Black Sea Armenians**» («Հեմշինլիներ. Սև ծովի մոռացված հայերը») վերնագրով հրատարակել է ԱՄՆ-ի Մասաչուսեթսի նահանգի Բելմոնթ (Բոստոն) քաղաքում լույս տեսնող «**Journal of Armenian Studies**»²⁸⁷ («Հայագիտական հանդես») պարբերականում:

Նախորդ հոդվածում տպագրված բանահյուսական նյութերից **Բ. Վոքսը** վերահրատարակել է 4 հանելուկ, 1 թվախաղ և **մեզ հետաքրքրող մանրապատումի լատինատառ տառադարձմանն ու անգլերեն թարգմանությանն ավելացրել է նաև հայատառ տարբերակը**²⁸⁸:

Ըստ այդ պատումի՝ երեք ընկեր գառիվեր բարձրանում են անտառ՝ մակույկ պատրաստելու: Գործն ավարտելուց հետո նրանցից երկուսն իջնում են մի արահետով, իսկ Թեմելը մակույկը պարանով կապում է իր վզին և իջնում է մի այլ կածանով: Ճանապարհին ընկերները տեսնում են Թեմելի անգլուխ մարմինը: Գյուղ են գնում և նրա կնոջը հարցնում՝ ամուսինն առավոտյան գլուխ ունե՞ր: Նա էլ պատասխանում է. «**աս արվան ա**» կ'ասա, «**քահվալթի հազըրլամիշ ի**», կ'ասա, «**պաթ մարդէ կիավ թա կիավ օչ թա չքիտիմ**»²⁸⁹ (№ 2/1) («Այս առավոտյան, — ասում է, — նախաճաշ էի պատրաստել, — ասում է, — բայց մարդը կերանվ, թե՛ չկերավ, չգիտեմ»):

Այս անգամ ևս նշելով, որ բանասացը ծնվել և մեծացել է Վրաստանի սահմանից և Սև ծովի ափից 5 կմ հեռու գտնվող գյուղում, **Բերթ Վոքսը** գրել է գյուղի անունը՝ **Köprücü** (**Քեոփրյուջյու**), իսկ ասացողին չի գաղտնագերծել, պարզապես նրա համար ընտրել է «**Cengiz**» («**Ջենգիզ**») ծածկանունը²⁹⁰:

Մանրամասնենք, որ Քեոփրյուջյուն Արդվինի նահանգի Խոփայի գավառի Քենավիաշայի (նախկին՝ Մաքրիյալ) ենթաշրջանում (բուջաք) է: Այդ տարիներ

pp. 33, 34:

²⁸⁷ **Bert Vaux**, Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, “**Journal of Armenian Studies**”, vol. VI, no 2, Winter-Spring 2000–2001, Belmont: 2001, pp. 47–71.

²⁸⁸ **Bert Vaux**, Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, “**Journal of Armenian Studies**”, vol. VI, no 2, Winter-Spring 2000–2001, Belmont: 2001, pp. 53, 54:

²⁸⁹ **Bert Vaux**, Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, “**Journal of Armenian Studies**”, vol. VI, no 2, Winter-Spring 2000–2001, Belmont: 2001, p. 54:

²⁹⁰ **Bert Vaux**, Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, “**Journal of Armenian Studies**”, vol. VI, no 2, Winter-Spring 2000–2001, Belmont: 2001, pp. 47, 48:

րին՝ 2000 թ., այն ուներ 1.380 բնակիչ, տասը տարի անց՝ 2010 թ., երբ մենք այցելեցինք գյուղ, բնակչության թիվն արդեն կիսվել էր՝ կազմելով 685 մարդ: Մեծամասնությունը համշենցիներ էին, շուրջ մեկ երրորդը՝ լազեր:

Համագյուղացիների և թուրքական իշխանությունների համար, բնականաբար, բոլորովին էլ գաղտնիք չէին կարող լինել Բոստոնում բնակվող բանասացի՝ **Թեմել Յըլմազի (Temel Yılmaz)** տվյալները: Նրա հեռու կամ մոտ ազգականների հետ հետազայում ևս տարբեր առիթներով ծանոթացել ենք Խոփայում, և տեղեկանալով, որ բանահավաքչությամբ ենք զբաղվում, հաճախ էին հիշատակում նրան:

Այս հանդիպումներն ակներև դարձրեցին, թե ինչ տարատեսակ մտավախությունների պատճառով էր **Թեմել Յըլմազը** թաքցրել իր և գյուղի անունները: Պարզվեց, որ ոչ միայն համշենցիների հայկական ծագումը, այլև բարբառը ժխտողներ կան անգամ իր ազգականների և համագյուղացիների մեջ: Նրանցից մեկը՝ երկար տարիներ Ստամբուլում բնակվող **Ռեմզի Յըլմազը**, 2013 թ. օգոստոսին ընդհանուր ծանոթներից իմանալով, որ Խոփայում ենք, զանգեց և ասաց՝ Քեոփրյոյցում է, ցանկանում է մեզ նվիրել իր «**Դեպի Համշենի պատմության արմատները**» թուրքերեն գիրքը²⁹¹: Հանդիպեցինք, գիրքը մակագրված նվիրեց, զրուցեցինք: Ծնվել է 1955 թ., գյուղում նախնական կրթությունը ստանալուց հետո սովորել է Խոփայում, Էրզրումում, Ստամբուլի Տեխնիկական համալսարանում, նավթագործ ճարտարագետ է, Ստամբուլում արդվիցի ուսանողների հանրակացարանի տնօրենն է:

Առևտրային գործերով եղել է Նախիջևանում, Վրաստանում, Աջարիայում, Ղազախստանում, Ուզբեկստանում, Ռուսաստանում, ամենուր հետաքրքրվել է համշենցիներով: Այդ ընթացքում քանիցս լսել է մեր մասին: Թուրքական ազգայնականության քարոզիչներից է, կեղծիքների միջոցով ցանկանում է ապացուցել, որ համշենցի հայերը, այդ թվում՝ Խոփայի իր համերկրացիները, ծագել են թյուրքական ցեղերից՝ օղուզներից, թուրքմեններից, քոչվորներ են և եկել են Կենտրոնական Ասիայի տափաստաններից:

Ջրուցում էինք Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով, որը շատ վատ գիտեր, մեկ-երկու բառից հետո անցնում էր թուրքերենի, անընդհատ հիշեցնում էինք, որ թուրքերեն չգիտենք, բայց բարբառով խոսել դժվարանում էր: Իսկ գուցե խորամանկու՞մ էր՝ ցույց տալու համար, որ Համշենի բարբառը թուրքերեն է: Այս մտքին հանգեցինք նրա կազմած բառարանին ծանոթանալուց հետո:

Մեր հանդիպման մանրամասներին կանդրադառնանք մեկ ուրիշ անգամ,

²⁹¹ **Remzi Yılmaz**, *Hemşin'in tarihi köklerine doğru*, İstanbul, Kum Saati Yayıncılık, 2003 (–216s.).

այժմ՝ հակիրճ նրա գրքի «**Համշենի բարբառի բառարանի**»²⁹² մասին, որը բաղկացած է 1823 բառերից, որոշ տեղանուններից ու անձնանուններից: Դրանք հատուկ ընտրվել են, որ հայերեն չլինեն, միայն 4 բառի մոտ է գրված (Erm)²⁹³, այսինքն՝ հայերեն, մյուսները նշված են՝ թուրքերեն, ադրբեջաներեն, օսմաներեն, ույղուրերեն, օղուզերեն, դրոզերեն, դազախերեն, չովաշերեն, յակուտերեն, դիչաղերեն, թաթարերեն, թուրքմեններեն, մոնղուլերեն, չաղաթայերեն, արաբերեն, պարսկերեն, չինարեն, ռուսերեն, ֆրանսերեն, հունարեն և այլն: Մի շարք բառերի մոտ, այդ թվում՝ հայերեն, ոչինչ չի գրված, ինչը նշանակում է՝ ծագումն անհայտ է: Հասկանալի է, որ տարբեր լեզուներին հեղինակի ընծայած բառերի մի մասը հայերեն է: Նպատակը՝ համոզել, որ կրոնափոխ համշենցիները խոսում են ոչ թե հայերենի, այլ թուրքերենի բարբառով:

Ռեմզի Յըլմազը հենց այդպես էլ վերնագրել է իր հաջորդ՝ «**Տափաստանների հեծյալ քոչվոր համշենցիները**»²⁹⁴ թուրքերեն գրքի «**Թուրքերենի Համշենի բարբառի բառարան**»-ը²⁹⁵: Այս անգամ այն ավելի մեծ է՝ 3139 միավոր: Համապատասխանաբար հայերեն բառերի քանակն էլ է ավելացել՝ 29²⁹⁶: Մնացյալ 3110-ի շարքում եղած մեծ թվով հայերեն բառերը նախորդի նման վերագրվել են թուրքերենին, ադրբեջաներենին, թուրքական և այլնայլ լեզուներին²⁹⁷:

Ցավոք, հեղինակը դիմել է սադրանքների և քանիցս անհերթությունների աստիճանի նենգափոխել մեր խոսքը²⁹⁸: Իբր ասել ենք՝ Համշենի բարբառի քերականությունը նույնն է, ինչ թուրքերենի քերականությունը²⁹⁹: Հասկանալի է՝ բառամթերքը թուրքացնելուց հետո մնում էր քերականությունը, այդ էլ է փորձել լուծել կեղծիքի միջոցով: Նաև գրում է, իբր ասել ենք, թե մենք չորս տարի է, որ սովորում ենք Համշենի բարբառը³⁰⁰:

Ռեմզի Յըլմազին հղելով, այդ «**չորս տարին**» իսկույն օգտագործել է Ադրբեջանի նախագահին առնթրեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի առաջատար գիտաշխատող **Արազ Քուրբանովը** 2017 թ. հրատարակված իր «**«Մուսուլման հայեր»: Տարածաշրջանում աշխարհաքաղաքական խաղե-**

²⁹² Hemşin Ağzi Sözlüğü, s. 64-135.

²⁹³ **Remzi Yılmaz**, Hemşin'in tarihi köklerine doğru, İstanbul, 2003, **Ahçik**[Ահչիք], s. 65, **Dağa** [Դաղա], s. 79, **Ğentzor** [Գէջոք], s. 92, **Kodos** [Բօղօշ], s. 104.

²⁹⁴ **Remzi Yılmaz**, Bozkırın Atlı Göçebeleri Hemşinliler, Ankara, 2016 (–384 s.).

²⁹⁵ Türkçenin Hemşin Ağzi Sözlüğü, s. 189-278.

²⁹⁶ **Remzi Yılmaz**, Bozkırın Atlı Göçebeleri Hemşinliler, s. 190, 192-195, 203, 220, 221, 224, 225, 228, 229, 236, 243-245, 255, 265, 269.

²⁹⁷ **Remzi Yılmaz**, Bozkırın Atlı Göçebeleri Hemşinliler, s. 189-278.

²⁹⁸ **Remzi Yılmaz**, Bozkırın Atlı Göçebeleri Hemşinliler, Ankara, 2016, s. 63, 77, 83, 164, 174.

²⁹⁹ **Remzi Yılmaz**, Bozkırın Atlı Göçebeleri Hemşinliler, s. 63.

³⁰⁰ **Remzi Yılmaz**, Bozkırın Atlı Göçebeleri Hemşinliler, s. 63.

րի նոր մասնակիցներ: Էթնոքաղաքական ակնարկներ»³⁰¹ վերնագրով ծայրից ծայր հակահայկական ադրբեջաներեն գրքում:

Թեև հեղինակը տեղյակ է մեր կենսագրությանը³⁰², նույնիսկ հիշատակում է 1982 թ. «Գարունում» տպագրված «**Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ**»³⁰³ ուղեգրությունը, նշում, որ 1992-ից «**Համշեն**» հայրենակցական-բարեգործական ՀԿ փոխնախագահն ենք, 2004-ից՝ «**Ձայն համշենական**» թերթի գլխ. խմբագիրը³⁰⁴, որ 2009 թ. Երևանի պետհամալսարանը հրատարակել է մեր «**Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը**» գիրքը³⁰⁵, որ 2013 թ. «**Հրանտ Դինք**» հիմնադրամի և Ստամբուլի **Բողազիչի համալսարանի** կազմակերպած «**Մուսուլմանաց(վ)ած հայեր**» թեմայով գիտաժողովում կարդացել ենք «**Մուսուլմանացված համշենահայերը՝ զոհեր և ականատեսներ**»³⁰⁶ հայերեն զեկուցումը, այնուամենայնիվ չի խորշում ցույց տալ, թե ինքը հավատում է Ռեմզի Յըլմազի փչոցին, այն է՝ մենք չորս տարի է ինչ սովորում ենք Համշենի բարբառը³⁰⁷:

³⁰¹ **Araz Qurbanov**, “Müsəlman ermənilər”. Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər. Bakı, 2017 (- 404 s.), s. 325.

³⁰² **Araz Qurbanov**, “Müsəlman ermənilər”. Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər. s. 128.

³⁰³ **Araz Qurbanov**, “Müsəlman ermənilər”. Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər. s. 130.

³⁰⁴ **Araz Qurbanov**, “Müsəlman ermənilər”. Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər. s. 128.

³⁰⁵ **Araz Qurbanov**, “Müsəlman ermənilər”. Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər. s. 130, 131.

³⁰⁶ **Araz Qurbanov**, “Müsəlman ermənilər”. Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər. s. 128, 130, 131. Գիտաժողովում մեր կարդացած զեկուցման արևմտահայերեն վերապատմությունը և հատվածաբար թարգմանությունը տևեց Իսլամացում համշենցիները թե՛ զոհեր են եւ թե՛ վկաներ, “**Agos**”, Haftalık gazete, Istanbul, 2013, Kasım 8, №914, «**Ակոս**», շաբաթաթերթ, Ստամբուլ, 2013, նոյեմբերի 8, №914, Հայերեն ներդիր, էջ 3: Իսլամացում համշենցիները թե՛ զոհեր են եւ թե՛ վկաներ, «**Ազատ օր**», օրաթերթ, Աթենք, 2013, նոյեմբեր 20: Զեկուցման թուրքերեն վերապատմությունը և հատվածաբար թարգմանությունը տևեց **Uygar Gültekin**, Karadeniz’in gizemli halkı, “**Agos**”, Haftalık gazete, Istanbul, 2013, Kasım 8, №914, s. 8: Տե՛ս նաև՝ **Ս. Վարդանյան**, Իսլամացված հայերին նվիրված գիտաժողով Ստամբուլում, «**Պատմաբանասիրական հանդես**», 2014, №1, էջ 296–299: **Նույնի՝** Դժոխքի ձորը, կրոնափոխ համշենցիները՝ Մեծ եղեռնի ականատեսներ, «**Անդին**», ամսագիր, Երևան, 2014, ապրիլ, №4 (17), էջ 14–19: **Նույնի՝** Իսլամացված համշենահայերը՝ Ցեղասպանության ականատեսներ // **Տրապիզոն նահանգ և Համշեն**, Թորոնթո, Գանատա, Printed by: A&V Digital Offset, Publisher: ARS «Roubina» Chapter, 2014 (–166 էջ), էջ 67–76, 97: Մեր զեկուցման թուրքերեն թարգմանությունը տևեց **Sergey Vardanyan**, Müslümanlaşırılmış Hemşinli Ermeniler: Kurbanlar ve tanıklar, Ermeniceden çeviren **Pakrat Estukyan** // **Müslümanlaş(tırıl)mış Ermeniler**, Konferans Tebliğleri, Kasım 2013, Hrnt Dink Vakfı Yayınları, Istanbul, 2015 (–470 s.), s. 75–86.

³⁰⁷ **Araz Qurbanov**, “Müsəlman ermənilər”. Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər. s. 325.

Արագ Քուրբանովն անդրադառնում է նաև Աբխազիայի քրիստոնյա³⁰⁸ և Թուրքիայի կրոնափոխ համշենահայերին³⁰⁹, առաջ տանում նրանց թուրքադրբեջանական ծագման «վարկածը»:

Վերադառնանք **Թեմել Յըլմազից** 1995 թ. Բոստոնում Հարվարդի համալսարանի աշխատակիցների գրի առած բանահյուսությանը, որը ևս մեկ կովան է բարբառը թուրքերեն հայտարարողների, գիտությունը քաղաքականացնողների դեմ:

Հանուն արդարության նշենք, որ համշենագիտության մեջ ավելի շատ հետք է թողել ոչ թե 25-ամյա բանասացից գրաված արժեքավոր կյուրը, այլ իրենց խոսվածքի նրա ասած սխալ անվանումը՝ «**Homshetsma**» («Հօմշէցմա»): Հիշենք, որ խոսքը 1995 թ. մասին է, երբ կրոնափոխ համշենցիների շրջանում բարբառի հանդեպ չկար այն հետաքրքրությունը, որն առաջացավ ավելի ուշ՝ 2000-ականներին:

Երիտասարդ տարիքում Բոստոնում հայտնված **Թեմել Յըլմազը** գուցե մինչ այդ չէր էլ լսել կամ մտապահել, թե համշենցիներով, լազերով և թուրքերով բնակեցված Քեոփոյոջյու գյուղում թուրքերեն «*Hemşince* = հեմշինցե»-ից բացի, իրենց բարբառին ուրիշ ինչ են ասում:

Այդ տարիներին Թուրքիայում դեռևս չկային Խոփայի խոսվածքով հրապարակումներ, բառարաններ, բեմերից չէին հնչում երգեր:

Նույնիսկ 1995-ից 17 տարի անց՝ 2012 թ., 47-ամյա **Յունուս Ալթունքայայի**՝ Ստամբուլում հրատարակած գրքում խոսվածքի անվանումը Թեմել Յըլմազի ասածից քիչ է տարբերվում՝ «**Hamşesna**»³¹⁰ («Համշէցմա»):

Յունուս Ալթունքայան Յուդերեն (սախկին՝ Ջուրբիջի) գյուղի դպրոցում և Խոփայում՝ միջնակարգ մասնագիտական վարժարանում, ուսանելուց հետո իր ոչ հումանիտար կրթությունը շարունակել է Արդվիհում և Անկարայում, այնուհետև բնակություն հաստատել Ստամբուլում³¹¹:

Համշենցիների թուրքական ծագման քարոզիչ հեղինակը 4 տարի անց՝ 2016 թ., նույն թեմայով, բայց ավելի լայն ընդգրկմամբ և կրկնակի ծավալով տպագրված իր նոր գրքում էլ չի հրաժարվում «Համշէցմայից»³¹², այն դեպքում, երբ ծնունդով Խոփայի գավառի Բալըք (Նախկին՝ Ջենդիթ) գյուղից, 69-ամյա

³⁰⁸ **Araz Qurbanov**, “Müsəlman ermənilər”. Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər, s. 207–220.

Araz Qurbanov, “Müsəlman ermənilər”. Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər, s. 310–337.

³¹⁰ **Yunus Altunkaya**, *Hemşince - Hamşesna*, Istanbul, Chiviyazıları Yayınevi, 2012 (- 200 s.), s. 8, 10, 13.

³¹¹ **Yunus Altunkaya**, Tur, Istanbul, 2016 (- 434 s.), s. 4.

³¹² **Yunus Altunkaya**, Tur, Istanbul, 2016 (- 434 s.), s. 11, 403.

երկրաբան **Շերիֆ Յըլմազի** 2012թ. Անկարայում լույս տեսած գրքում արդեն արձանագրվել էր «**Hamşesnak**»³¹³ «**Hamşetsnak = Hamşesnak (hamşece)**»³¹⁴ տարբերակը:

2014թ. ընթերցողների սեղանին դրած իր պատմվածքների երկլեզվյան ժողովածուում «**Hamşetsnag**», «**Համշեցնակ**»-ն է նախընտրել նաև ստամբուլաբնակ 36-ամյա մանկավարժ և արձակագիր Մահիր Օզքանը³¹⁵, որին անդրադարձել ենք «**Կրոնափոխ համշենահայերի բարբառի և բանահյուսության ուսումնասիրության պատմությունից, XIX–XXI դդ.**» գլխում: Բացի այդ, նա, 2014թ. աշնանից Ստամբուլում հրատարակվող համշեցիների «**Gor**» կիսամյա հանդեսի առաջին համարից սկսած, «**Hamşesnak sorvik gu**» («**Համշեանակ սորվիք գու**») վերնագրով դասընթաց է վարում³¹⁶:

1995թ. բոստոնյան գրառումից հետո անցած քսան տարվա ընթացքում Թուրքիայի կյանքում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան, 2015թ. արդեն դպրոցներում կարելի էր «**ընտրովի դասի**» ժամին սովորել նաև այլ լեզուներ:

Ստամբուլում Համշեցիների մշակույթի ուսումնասիրման և պահպանման «**Hadig**» («**Հատիկ**») կազմակերպության ստեղծման օրից՝ 2011-ից, նրա գլխավոր քարտուղար, մայրենի բարբառով ժողովրդական երգեր գրառող, ճանաչված երգիչ **Հիքմեթ Աքչիչեքը** 2015թ. «**Gor**» հանդեսում հրապարակած իր «**Hemşince Seçmeli ders olur mu? Olur neden olmasın? Ya da “gelli inçi elli çi?”**»³¹⁷ («**Համշեներենը ընտրովի դաս կլինի: Կլինի, ինչու՞ չի լինի: Կամ էլ «գէլի լի, ինչի՞ էլլի չի»**) հոդվածում առաջարկում է իրենց խոսվածքով ևս «**ընտրովի դասեր**» անցկացնել:

Բայց, հասկանալի է, որ դա միայն բարի ցանկություն էր, քանի որ չկային իրենց խոսվածքին նվիրված դասագրքեր, նույնիսկ վիճահարույց էր լեզվանվանման հարցը:

³¹³ **Şerif Yılmaz**, Hemşinlilerin ve Hemşinli Ermenilerin (Hayların) Kökeni, Ankara, Payda Yayıncılık, 2012 (- 198 s.), s. 97.

³¹⁴ **Şerif Yılmaz**, Hemşinlilerin ve Hemşinli Ermenilerin (Hayların) Kökeni, Ankara, 2012, s. 59.

³¹⁵ **Mahir Özkan**, Hemşin Öyküleri, Hamşetsnag Hekiyaner, Մահիր Էօզքան, Համշենեան Պատմութեան, Համշեցնակ Հէքիաներ, Istanbul, ARAS-ԱՐԱՍ, 2014 (-336 էջ), երկլեզվյան: Պատմվածքները Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով (համշեցնակ) են և տպագրվել են հայատառ, նույնը՝ թուրքական լատինատառ այբուբենով, զուգահեռ թուրքերեն թարգմանությամբ:

³¹⁶ **Mahir Özkan**, Hamşesnak sorvik gu. Hemşince öğreniyoruz, “**Gor**”, Hemşin kültür, dil, tarih dergisi, Istanbul, 2014, Sonbahar, №1, s. 64–66. Երբեմն «**Hamşesnak**»-ի փոխարեն տպագրվում է «**Hamşesnag**»: **Huriye Şahin**, Hamşetsnak Lizu Kidanutun (Hemşince Dil Bilgisi), Ankara, Kurgu Kültür Merkezi Yayınları, 2018 (-86 s.). Գիրքը գրված է լատինատառ թուրքական այբուբենով և Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով (համշեցնակ):

³¹⁷ **Hikmet Akçiçek**, Hemşince Seçmeli ders olur mu? Olur neden olmasın? Ya da “gelli inçi elli çi?”, “**Gor**”, dergisi, Istanbul, 2015, Aşun/Sonbahar, sayı 3, s. 53–55.

Եվ այսպես, «**Annual of Armenian Linguistics**» և «**Journal of Armenian Studies**» հանդեսներում հրապարակված այդ երկու հոդվածի միջոցով շրջանառության մեջ դրվեց կրոնավիոյս համշենահայերի խոսվածքի «**homšec‘ma**», ավելի մատչելի գրությամբ՝ «**Homshetsma**»³¹⁸ (հոմշեցմա) սխալ անվանումը:

Երկրորդ հոդվածում Բերթ Վոքսը համշենցիներին բաժանում է երեք խմբի՝ **Արևմտյան համշենցիներ**, որոնք թուրքախոս սուննի իսլամ են, բնակվում են Ռիզլի նահանգում: **Արևելյան համշենցիներ**, որոնք ապրում են Թուրքիայում, Կենտրոնական Ասիայում և Եվրոպայում, սուննի են և խոսում են «**Homshetsma**»: **Հյուսիսային համշենցիներ**, որոնք Սամսունի, Օրդուի, Կիրասոնի, Տրապիզոնի գավառներում նախկինում բնակված և Վրաստանում ու Ռուսաստանում հաստատված քրիստոնյա համշենահայերի սերունդներն են և խոսում են «**Homshetsma**»³¹⁹:

Նույն միտքը նա հայտնում է նաև 2007 թ., արդեն որպես Քեմբրիջի համալսարանի (Մեծ Բրիտանիա) հնչյունախոսության (ֆոնոլոգիա, հնչյոթաբանություն) և ձևաբանության (մորֆոլոգիա) դասախոս, «**The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**» («Հեմշինը. Պատմությունը, հասարակությունը և ինքնությունը Թուրքիայի հյուսիսարևելյան լեռնաշխարհում») գիտական ժողովածուում տպագրված 22 էջանոց իր հոդվածում, որտեղ 150 անգամ կրկնում է «Homshetsma»³²⁰:

Բայց նա այս հրատարակության միակ հեղինակը չէ, որ օգտագործում է «**Homshetsma**»-ն, նրան են հետևել նաև այլ գիտնականներ³²¹:

³¹⁸ Bert Vaux, Sergio La Porta, Emily Tucker, Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes, “**Annual of Armenian Linguistics**”, volume 17, Cleveland State University, Cleveland, 1996, pp. 26–29, 31, 39–42. Bert Vaux, Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, “**Journal of Armenian Studies**”, vol. VI, no 2, Winter-Spring 2000–2001, Belmont: 2001, pp. 48, 50, 51, 55–66, 68, 69, 71.

³¹⁹ Bert Vaux, Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, “**Journal of Armenian Studies**”, vol. VI, no 2, Winter-Spring 2000–2001, Belmont: 2001, pp. 48, 68.

³²⁰ Bert Vaux, Homshetsma: the language of the Armenians of Hamshen // **The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**, Edited by Hovann H. Simonian, London and New York, Routledge Taylor & Francis Group, 2007 (–472 p.), pp. XVII, 257–278

³²¹ Hovann H. Simonian, Hemshin from Islamicization to the end of the nineteenth century // **The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**, p. 80. Uwe Bläsing, Armenian in the vocabulary and culture of the Turkish Hemshinli // **The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**, pp. 279, 300. Hagop Hachikian, Some particulars of Hemshin identity // **The Hemshin. History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**, p. 305. Բերթ Վոքսի սույն հոդվածին են հղված նաև հետևյալ հրապարակումները՝ Şerif Yılmaz, Hemşinlilerin ve Hemşinli Ermenilerin (Hayların) Kökeni, Ankara, Payda Yayıncılık, 2012 (–198 s.), s. 155. James Barry, Millet Ethnicity: Islamized Armenians and Armenian Identity // **Sites of Pluralism: Community Politics in the Middle East**, Editor Firat Oruc. Published in collaboration with Center for International and

2002թ. Լոս Անջելեսում՝ Կալիֆոռնիայի համալսարանում (UCLA), կայացած միջազգային գիտաժողովի՝ 2009-ին լույս տեսած զեկուցումների «**Armenian Pontus: The Trebizond-Black Sea Communities**»³²² («**Հայկական Պոնտոս. Տրապիզոնի-Սև ծովի համայնքները**») անգլերեն ժողովածուի հեղինակներից մի քանիսը ևս տարածում են այդ սխալը³²³:

Նույնիսկ հայության կյանքն ու մշակույթը բազմակողմանիորեն լուսաբանող պոլսահայերի թուրքերեն «**Paros**» («Փարոս») բարձրակարգ ամսագրում համշենցիների բարբառի անունը, գուցե անսովորության պատճառով, մեկ էջում չորս անգամ հրատարակվել է տպագրական վրիպակով՝ «**Haşmetsma**»³²⁴ («Հաշմէցմա»):

Թե որքան մեծ է եղել վերոնշյալ անգլերեն հրապարակումների ազդեցությունը, վկայում է նաև Թուրքիայի Անադոլու և Բիլգի հանրահայտ համալսարաններում ուսանած, 2008–2010 թթ. Խոփայում հրատարակված «**Bir Yaşam**» («Մի կյանք») ամսագրի խմբագիր, ճանաչված հասարակական գործիչ, նախկին քաղբանտարկյալ **Ջեմիլ Աքսունի** (ծնվ. 1977 թ., գ. Բաշոբա) Ստամբուլի «**Toplumsal Tarih**» («Հասարակական պատմություն») գիտական հանդեսում 2013թ. լույս տեսած «**Nereden Geldiler, Nereye Giderler? Hemşinliler Kimdir?**» («Ովքեր են համշենցիները. որտեղից են եկել, ո՞ր են գնում») ուսումնասիրությունը³²⁵:

Նախ նշենք, որ այն թուրքերեն եզակի հրապարակումներից է, որի հեղինակն ընդունում է կրոնափոխ համշենցիների հայկական ծագումը: Այդ միտքն ավելի փաստարկելու համար **Ջեմիլ Աքսունի** թուրքերեն թարգմանված մեր մի հոդվածից քաղվածաբար ներկայացրել է Վենետիկի Մխիթարյան միաբան Հ.

Regional Studies, Georgetown University in Qatar. First published in the United Kingdom, London, C. Hurst and Company (Publishers), 2019 (–248 p.), pp. 144, 224, 225.

³²² **Armenian Pontus: The Trebizond-Black Sea Communities** // Edited by Richard G. Hovannisian, UCLA Armenian history and culture series, Historic Armenian cities and provinces, no. 8, Costa Mesa, California, Mazda publishers, Inc., 2009 (–474 p.):

³²³ **Robert H. Hewsen**, Armenians on the Black Sea: The Province of Trebizond // **Armenian Pontus: The Trebizond-Black Sea Communities**, p. 63. **Claire Mouradian**, Islamization of Armenians in the Ottoman Empire: The Hamshentsi / Hemshinli Case // **Armenian Pontus: The Trebizond-Black Sea Communities**, p. 155. **Hovann H. Simonian**, History and Identity among the Hemshin // **Armenian Pontus: The Trebizond-Black Sea Communities**, pp. 371, 390, 391. **Igor Kuznetsov**, Armenian Pontic Communities in the Kuban and Abkhazia // **Armenian Pontus: The Trebizond-Black Sea Communities**, pp. 413, 416, 426.

³²⁴ **Osep Tokat**, Hamşen/Hemşin’in gizemi, “**Paros**”, Çok Kültürlü yaşam dergisi, İstanbul, 2011, Ekim, №1, s. 79.

³²⁵ **Cemil Aksu**, Nereden Geldiler, Nereye Giderler? Hemşinliler Kimdir?, “**Toplumsal Tarih**”, dergisi, İstanbul, 2013, Ağustos, №236, s. 40–47. Հոդվածի թարգմանությունը տես **Ջեմիլ Աքսունի**, Ովքեր են համշենցիները. որտեղից են եկել, ո՞ր են գնում, «**Չայն համշենական**», 2014, №5–6:

Պողոս վրդ. Մեհերյանի հուշագրության 1776 թ. Համշեն այցելության մասին պատմող հատվածը³²⁶, որը տպագրվել է նաև սույն մենագրության «**Պատմական անդրադարձ**» գլխում:

Բայց հետևելով Բերթ Վոքսի տված բնութագրմանը՝ «**Արևելյան համշենցիների**», այսինքն՝ Խոփայի և Բորչքայի գավառների կրոնավոխ համշենահայերի լեզուն անվանում է «**Homshetsma**»³²⁷, այն դեպքում, երբ ինքը բարբառակիր է և իր խմբագրած «**Bir Yaşam**» ամսագրում, ինչպես արդեն նշել ենք, նաև Խոփայի խոսվածքով նյութեր էր տպագրում: 2014 թ. Խոփայում նա մեզ անկեղծորեն ասաց, որ այդպես է գրել Հարվարդի, Քենթրիջի և այլ համալսարանների գիտնականների բարձր հեղինակության հանդեպ հարգանքից դրդված:

2013 թ. նոյեմբերին «Հրանտ Դինք» հիմնադրամի և Ստամբուլի Բողազիչի համալսարանի կազմակերպած «Մուսուլմանաց(վ)ած հայեր» թեմայով գիտաժողովում իր «**Մուսուլմանացված հայեր. մի պատմական հայացք Համշենի աշխարհագրությանը**»³²⁸ զեկուցման մեջ Ջեմիլ Աքսուի վերոնշյալ հոդվածին հղելով «**Hamşetsma**» է օգտագործում նաև սույն համալսարանի մագիստրատուրայում սովորող **Սերափ Դեմիր**:

Թյուրիմացաբար օգտագործված «**Homshetsma**»-ն սույն՝ 2013 թ. մուտք է գործել ՌԴ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի հրատարակած «Языки мира» («Աշխարհի լեզուներ») շարքի հերթական հատոր, որտեղ առանձին գլուխ է հատկացված հայերենին: Հայերենի բարբառներին նվիրված բաժնում անդրադարձ կա նաև Համշենի բարբառին՝ «**Амшенский диалект**»: Համշենցիները բաժանվել են երեք ենթախմբի՝ **Արևմտյան, Արևելյան և Հյուսիսային**: Որպես բարբառի անվանման տարբերակներ՝ նշվել են. «**самоназвание homšec'ma, арм. Hamšeni, тур. Hemsince**»³²⁹ («ինքնանվանումը՝ **homšec'ma**, հայ.՝ **Hamšeni**, թուրք.՝ **Hemsince**»):

³²⁶ **Cemil Aksu**, Nereden Geldiler, Nereye Giderler? Hemşinliler Kimdir?, “**Toplumsal Tarih**”, dergisi, İstanbul, 2013, Ağustos, №236, s. 43. Տե՛ս **Sergey Vardanyan**, 1776 yılında Müslüman Hemşinli Ermeniler hakkındaki önemli bir şahadetname // **Hemşin ve Hemşinli Ermeniler (konferans makaleleri)**, Ermenistan Cumhuriyeti Bilimler Ulusal Akademisi Tarih Enstitüsü, Yerevan, “Name”, 2007 (–306 s.), s. 283.

³²⁷ **Cemil Aksu**, Nereden Geldiler, Nereye Giderler? Hemşinliler Kimdir?, “**Toplumsal Tarih**”, dergisi, İstanbul, 2013, Ağustos, №236, s. 41.

³²⁸ **Serap Demir**, Müslümanlaştırılmış Ermeniler: Hemşin coğrafyasına tarihsel bir bakış // **Müslümanlaş(tırıl)mış Ermeniler**, Konferans Tebliğleri, Kasım 2013, Hrant Dink Vakfı Yayınları, İstanbul, 2015 (– 470 s.), s. 97, 429.

³²⁹ **Г. Мартиросян**, Армянские диалекты (Характеристика отдельных диалектов) // **Языки мира: Реликтовые индоевропейские языки Передней и Центральной Азии**. РАН Институт языкознания, Москва, изд. Academia, 2013 (–512 с.), с. 361, 362. Տե՛ս նաև **Hrach Martirosyan**, The Armenian dialects // **The languages and linguistics of Western Asia, an areal perspective** (edited by Geoffrey Haig, Geoffrey Khan), Series: The world of linguistics, vol. 6, Berlin, Boston, De Gruyter Mouton, 2018, p. 72. **Hrach Martirosyan**, The Armenian dialects: Archaisms and innovations; description of individual dialects, «**Армянский гуманитарный вестник**», №5, Ереван, 2019, с. 203, 204, 207.

Նույնիսկ 2020 թ. Մոսկվայում տպագրված «**Армяне Причерноморья**» («Մերձսևծովյան հայեր») մեծադիր հանրագիտարանի առաջին հատորում Համշենի բարբառին նվիրված «**Амшенский диалект**» բառահոդվածի վերնագրի տակ գրված է «**См. Хомшецма**» («Տես Խոմշեցմա»), այսինքն՝ Համշենի բարբառի մասին կարդա «**X**» («**Խ**») տառն ընդգրկող տպագրվելիք հատորում³³⁰:

Բանն այնտեղ է հասել, որ ամենուրեք դուրս են մղվում դեռևս 110, 115, 120 տարի առաջ գիտական հրապարակումներում օգտագործված «**Համշենի բարբառ**»³³¹, «**Համշենի Հայոց գաւառաբարբառ**»³³², «**Համշենի գաւառաբարբառ**», «**Համշենցիների գաւառաբարբառ**»³³³ եզրույթները:

2021 թ. դեկտեմբերի վերջին Ստամբուլում հրատարակված «**Gor**» հանդեսում լույս տեսած հարցազրույցում Բերթ Վոքսն անդրադառնում է նաև 1995 թ. ընտանյան գրառումներին. «**Boston'daki ana Hemsinli kaynağım (Türkiye'nin en kuzeydoğudaki Hemsin köyündendir) onun dilini Homşetsma veya Türkçe Hemsince olarak ifade ediyor. Ancak Türkiye'den karşılaştığım diğer tüm Hemsince konuşanlar buna Hamşetsnag, Homşetsnag, Hamşesnag vb. diyor. İlginçtir ki, ne “- ma” ne de “- nag” ekleri, bildiğim kadarıyla, Ermenice veya Türkçe konuşulan başka yerlerdeki dil adlarının son eki olarak kullanılmamaktadır. Tek kullanıldığı yer, Yeni Culfa / Hint Ermeni Massy Baba John'un 1794 vasiyetinde -nag'in bir dil adı son eki olarak kullanıldığını, yani 'Rusça' için Ռուսնակ (Rusnag) kullanıldığını biliyoruz**»³³⁴. («Բոստոնում իմ հիմնական աղբյուրը (Թուրքիայի ամենահյուսիսարևելյան համշենական գյուղից) իր լեզուն պարզաբանում էր իբրև հոմշեցմա կամ թուրքերեն հեմշինցե»³³⁵: Սակայն³³⁶ Թուրքիայից ինձ հանդիպած

³³⁰ **Армяне Причерноморья: энциклопедия** / И.В.Кузнецов, сост. Том I. – Москва, УП ПРИНТ, 2020 (–492 с.), с. 344. Տիտղոսաթերթին հրատարակման վայրը նշված է Կրասնոդար:

³³¹ **Աճառեան Հ.**, Հայ բարբառագիտություն, 1911, էջ 184–195:

³³² **Նշան Խոշյան**, Անգիր յիշատակարան կամ Համշենի Հայոց գաւառաբարբառը, Տես Տեղեկագիր Սահակ Մեարուպեան Գրական մրցանակաբաշխություն, «**Արևելք**», 1905, յուլիս 9/22, թիւ 5921:

³³³ **Բարգէն Վ. Կիլիկեան**, Ճանիկի վիճակին մէջ գտնուող Համշենցիներու գաւառաբարբառը, «**Բիրական**», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, №31–32, էջ 508–513, №35, էջ 558–560, №38–39, էջ 603–605, №41, էջ 654–656, №44, էջ 699–700, №47–48, էջ 752–754, №49, 779–780, 1900, №1, էջ 14–16, №2, էջ 29–31, №3, էջ 42–43, №4, էջ 59–62, №6, 82–84, №8, էջ 120, 121:

³³⁴ **Neşenur Altunkaya**, Bert Vaux “Dil, modern bağlamda kullanıldığında hayatta kalma şansartar”, “**Gor**”, dergisi, Istanbul, 2020-2021, Kaun-Aşun, №12-13, s. 77, 78.

³³⁵ հեմշինցե – հեմշիներեն = համշեներեն (Ս.Վ.):

³³⁶ Բնագրում՝ ancak, որը նշանակում է «только, лишь, всего лишь» («միայն, միմիայն, ընդամենը»), նաև «однако» («սակայն, բայց և այնպես»), տես **Р.Р.Юсипова**, Турецко – русский словарь, 80000 слов и словосочетаний, Москва, Русский язык – Медиа, 2005 (–X+694 с.), с. 27.

մյուս բոլոր համշեններեն խոսողներն այն անվանում են համշեցնագ, հոմշեցնագ, համշեննագ և այլն: Հետաքրքիր է, որ ոչ «մա» և ոչ էլ «նագ» ածանցները, որքան գիտեն, հայերեն կամ թուրքերեն խոսվող ուրիշ վայրերի լեզվանունների համար իբրև վերջածանց չեն օգտագործվում: «Նագ»-ը՝ որպես լեզվի անվան վերջածանց միակ օգտագործված տեղը, որ մեզ հայտնի է, նոր-ջողայեցի հնդկահայ **Massy Baba John**-ի՝ 1794թ. կտակում է՝ ռուսերենի համար՝ Ռուսնակ (**Rusnag**)»):

Բ. Վոքսի հիշատակած հնդկահայ մեծահարուստ **Massy Baba John**³³⁷-ը Մասեհ Բաբաջանն է, որն իր ունեցվածքի մեծ մասը 1794թ. (1795-ին լրացված) կտակել է Ղրիմից գաղթեցված հայերի՝ ընդամենը 15 տարի առաջ՝ 1779թ., հիմնադրած Նոր Նախիջևան քաղաքին³³⁸:

Բայց Մասեհ Բաբաջանը ոչ թե Նոր Ջողայից էր, այլ՝ Համադանից, ինչպես որ գրված է 1846թ. Կալկաթայի «**Ազգասեր**» շաբաթաթերթում տպագրված նրա կտակում, որտեղ, ի դեպ, չի օգտագործված «Ռուսնակ (**Rusnag**)» լեզվանունը³³⁹:

«Ռուսնակ»-ը բացակայում է նաև 1859թ. Մոսկվայի «**Հիսիսափայլ**» ամսագրում «**Ազգասերից**» արտատպված Մասեհ Բաբաջանի թե՛ կտակում³⁴⁰ և թե՛ վերահրատարակության առթիվ Միքայել Նալբանդյանի գրած «Ազգային ժառանգությունը» առաջաբանում³⁴¹:

Իսկ «մա» ածանցի մասին Բերթ Վոքսի կարծիքի հետ լիովին համաձայն ենք, իսկապես, այն հայերենում լեզվանուն արտահայտող վերջածանց չէ, այդ պատճառով էլ «**Homshetsma**»-«հոմշեցմա»-ն համարել ենք սխալ: Մակայն «նագ», «նակ» վերջածանցով լեզուների անվանումները բազմաթիվ են, օրինակ՝ «**հայնակ**», որը, ինչպես նշել ենք «**Կրոնափոխ համշենահայերի բարբառի և բանահյուսության ուսումնասիրության պատմությունից (XIX–XXI դդ.)**» գլխում, նշանակում է հայերեն³⁴²:

«**Հայնակ**»-ի ամենաաիսկ տպագիր գործածությունը մեզ հանդիպել է 1788թ. Իտալիայի Տրիեստ քաղաքում լույս տեսած հայերեն-գերմաներեն «**Հայնակ և**

³³⁷ Մասեհ Բաբաջանի կամ Massy Baba John-ի մասին տե՛ս Մեսրոպ Սեթի (1871–1939) գրքում՝ **Mesrovb Jacob Seth**, Armenians in India. New Delhi, 2005 (–629 p.), pp. 523–525.

³³⁸ «Նոր Նախիջևան» // ՀՀՀ, հ. 4. Երևան, 2003, էջ 8, 9:

³³⁹ ՕՐԻՆԱԿ ԿՏԱԿԻ Բաբաջանի, կամ հասարակ կոչմամբ Մարտիրոսի որդի Մասեհի Համադանցոյ, «**Ազգասեր**», շաբաթաթերթ, Կալկաթա, 1846, Հոկտեմբր 3, թիւ 60, էջ 61–68:

³⁴⁰ Մ. Նալբանդեանց, Ազգային ժառանգությունը, «**Հիսիսափայլ**», ամսագիր, Մոսկվա, 1859, №5, էջ 385–393:

³⁴¹ Մ. Նալբանդեանց, Ազգային ժառանգությունը, «**Հիսիսափայլ**», 1859, №5, էջ 379–384:

³⁴² Ս. Վարդանյան, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, էջ 66, 67: **Նույնի՝** Կրոնափոխ համշենահայերի բարբառի և բանահյուսության ուսումնասիրության պատմությունից // **Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ**, №4, Երևան, ՀԱԻ հրատարակչություն, 2021, էջ 212, 213, 222:

նէմէցնակ այբուբենի թուղթ»³⁴³ երկլեզվյան գրքույկում: Այն գրել և հրատարակությունը հովանավորել են Հունգարիայի Տրանսիլվանիայի երկրամասի Եղիսաբեթուպոլիս հայաքաղաքի հայերը: Նմանատիպ հայերեն-հունգարերեն մեկ գրքույկ էլ՝ **«Հայնակ եւ մաճըռնակ այբ ու բենի թուղթ»** վերնագրով, նրանք հրատարակել են 1834թ. Վիեննայում³⁴⁴:

Այն կիրառել են նաև լեհահայերը, գործրինակ՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի 1574թ. մի արձանագրության մեջ կարդում ենք, որ վկան՝ Լիվինսքին, պատմում է, որ իր ներկայությամբ երկու հայ **«հայնակ գրուցէին ի մէջ իւրեանց նա, ես ասի, թէ օլախնակ գրուցէք, զի ես այլ հասգնամ»**³⁴⁵: **«Օլախնակ»**-ը մոլդավերենն է³⁴⁶:

Միմեռն դպիր Լեհացին 1608–1618 թթ. կատարած ուխտագնացության և հետագա իրադարձությունների մասին պատմող ուղեգրության մեջ որպես հոմանիշներ գործածում է **«հայերէն»**³⁴⁷, **«հայ լեզու»**³⁴⁸, **«Հայոց լեզու»**³⁴⁹, **«հայնակ»**³⁵⁰ եզրույթները, նույնպես և **«արապի լեզու»**³⁵¹–**«արապնակ»**³⁵², **«թրքի լեզու»**³⁵³–**«թուրքնակ»**³⁵⁴, **«տաճկնակ»**³⁵⁵: Ղվիչաղերենին ասում է **«խրչակնակ որ է թաթրի լեզու»**³⁵⁶, լեհերենին էլ՝ **«լէհնակ»**³⁵⁷:

³⁴³ **Հայնակ եւ նէմէցնակ այբուբենի թուղթ**: Շարադրած յԵղիսաբեթ Հայոց Քաղաքը և իւր յատուկ խարճովն տիպած: Վասն պիտոյութեան հայ տղոց Թրանսիլվանիայու երկրին: Թրեստը: Ի Տպարանի Վ. Հարց Մխիթարեան Միաբանութեան: Հրամանաւ Մեծաւորաց: 1788 (–48 էջ):

³⁴⁴ **Հայնակ եւ մաճըռնակ այբ ու բենի թուղթ**: Շարադրած ՚ի հայաքաղաքն Դրանսիլվանիայ, և տիպեցուցած իւր քաղքին խարճովն վասն պիտոյութեան հայ տղոց: Ի Վեննա, 1834 (–56 էջ, էջագրվել է նաև գրքի շապիկը):

³⁴⁵ **Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.)**, աշխատասիրությամբ Վ. Ռ. Գրիգորյանի, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան», Երևան, ՀՍՄՌ ԳԱ հրատ., 1963 (–440 էջ), էջ 252, 253:

³⁴⁶ Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, 2-րդ բարեփոխված հրատարակություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009 (–840 էջ), էջ 823:

³⁴⁷ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք, ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակիւնեան, Մխիթարեան ուխտէ, Վիեննա, 1936, էջ 198:

³⁴⁸ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 192:

³⁴⁹ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 192, 306:

³⁵⁰ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 195, 198, 208, 320, 326, 333, 346:

³⁵¹ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 320:

³⁵² **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 320:

³⁵³ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 333:

³⁵⁴ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 306, 320:

³⁵⁵ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 326:

³⁵⁶ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 346:

³⁵⁷ **Միմեռն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն..., 1936, էջ 346:

Հրայյա Աճառյանը 1913 թ. Թիֆլիսում հրատարակված իր «**Հայերէն գաւառական բառարանում**» «հայնակ»-ից³⁵⁸ բացի, այլ օրինակներ էլ է բերում՝ **նոր-նախիջևանցիները** ռուսերենին ասում էին «ռուսնակ»³⁵⁹, թուրքերենին՝ «թուրքնակ», «տաճկնակ»³⁶⁰:

Նա, 11–12 տարի՝ մինչև 1918 թ., ուսուցիչ աշխատելով Նոր-Նախիջևանում³⁶¹, հնարավորություն է ունենում ուսումնասիրություններ կատարել և գրում է «**Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի**» աշխատությունը, որը 1925 թ. ընդամենը 50 օրինակ ապակետիպ³⁶² բազմացվել է Երևանում³⁶³: Գրքի «Մակբայներ» գլխում Հ. Աճառյանը «**նագ**» վերջածանցով ավելի շատ լեզվանուններ է թվարկում. «**նագ**. մասնիկ՝ որ կցուելով զանազան ազգերի անուան՝ կազմում է լեզուներ. ինչ. **հայնագ** «հայերէն», **ռուսնագ** «ռուսերէն», **ձառանագ** «ձառաների լեզով (այն է ռուսերէն)», **խազախնագ** «ռուսերէն», **հոսոնագ** «յունարէն», **թաթառնագ** «թաթարերէն, **դազգնագ** «տաճկերէն», **նէմէցնագ** «գերմաներէն», **Ֆոանցուզնագ** «ֆրանսերէն»: Սովորական նշանակութեամբ մակբայներ են **բէննագ** «պէս, կերպով». **ասալէսնագ** «այսպէս», **ամբէսնագ** «այնպէս»»³⁶⁴:

1892 թ. Սասունի Գելիեզուզան գյուղում ծնված ճանաչված մանկավարժ և ազգագրագետ Վարդան Պետոյանն իր գրքերում վկայում է, որ Սասունի բարբառով «**Հայանագ**» նշանակում է «1. Հայերեն, 2. Հայի պես: Հայնակ», «Ռուսանագ, ռուսավար-ռուսերեն», «Վրացնագ-վրացերեն, վրացու պես», «Քրդանակ-քրդերեն, քրդի նման»³⁶⁵:

³⁵⁸ **Հր.Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան, 1913, էջ 635:

³⁵⁹ **Հր.Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան, 1913, էջ 949:

³⁶⁰ **Հր.Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան, 1913, էջ 380:

³⁶¹ **Հր.Աճառյան**, Կյանքիս հուշերից, էջ 310–315, 338, 339, 438:

³⁶² «Ապակետիպ-1. տպագրական սարք, որով բազմացնում են հատուկ թանաքով գրված ձեռագիրը հաստ ապակու միջոցով...: 2. Այդպիսի սարքով կատարվող տպագրություն: 3. Ապակետիպով տպված», տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, ՀՄՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1969 (–604 էջ), էջ 162:

³⁶³ **Հր.Աճառեան**, Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Երևան, ապակետիպ, 1925 (–464 էջ):

³⁶⁴ **Հրաչեայ Աճառեան**, Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021 (–266 էջ), էջ 198:

³⁶⁵ **Վարդան Պետոյան**, Սասունի բարբառը, ՀՄՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՄՍՌ ԳԱ հրատարակչություն, 1954 (–200 էջ), էջ 138, 155, 160, 167: **Նույնի՝** Սասնա ազգագրությունը, խմբագիրներ՝ Վ. Բդոյան, Ս. Տարոնցի, ՀՄՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայաստանի պետական պատմական թանգարան, Երևան, ԵՊՀ տպարան, 1965 (–552 էջ), էջ 494, 522, 528, 539: **Նույնի՝** Սասուն, կազմեց և խմբագրեց Սյոդպա Պետոյանը, Երևան, «Նախաբեմ», 2016 (–744 էջ), էջ 687, 709, 714, 724:

Ի դեպ, խարբերողիներն էլ իրենց գավառաբարբառն անվանում էին «**խարբերողնակ**»³⁶⁶:

Այսօր էլ Սիրիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Քեսապի շրջանի հայերն իրենց բարբառը կոչում են «**քեսաքնուօք**», Սվեդիայի բարբառը՝ «**սրվտըքնուօք**»³⁶⁷: Քեսապի բարբառով «**քրոթընուօկ**» նշանակում է քրոթերեն, նաև՝ քրոթավարի³⁶⁸, «**տիժկընուօք**»՝ տաճիկի՝ թուրքի լեզվով, թուրքերեն, նաև՝ «այլակրօն ու այլազգի մարդու օրէնքով»³⁶⁹: «**Քիստինուօք**» ասում են Անտիոքի շրջանի հայերի խոսվածքներին, քանի որ «**քիստինա**» այդտեղի հայերին տրվող ընդհանուր անուն է, նաև նշանակում է «**քրիստոնեայ**»³⁷⁰:

ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԳՐԱՌՎԱԾ ՆԻՆԳ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Կրոնափոխ համշենցիներից բանահյուսության նմուշներ մեզ կրկին հաջողվեց հավաքել երկար տարիների ընդմիջումից հետո՝ 2010–2015 թվականներին՝ Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառներում: Այդ նյութերի թվում էին նաև քննարկվող սյուժեի 5 տարբերակները³⁷¹: Դրանցից մեկը՝ «**Արչէ**»³⁷² (№3), («Արջը», №3/1), 2010թ. հուլիսին Խոփա քաղաքում գրառել ենք քաղաքապետարանի աշխատակից **Ասլան Ջանջրից (Aslan Canci)**, որը նա լսել էր իր մորից՝ 1930 թ. Խոփայի գավառի Քեմալիաշայի (Մաքրիյալ) գյուղախամբի **Քարասումանիյե** (նախկին՝ Խեցելոն) գյուղում ծնված **Հավվա Ջանջրից (Havva Canci)**:

Ինչպես արդեն նշել ենք, այդ ժամանակ՝ 2010թ., Խոփա քաղաքն ուներ 17.433 բնակիչ: Տեղացիների վկայությամբ՝ քաղաքացիների կեսից ավելին կրո-

³⁶⁶ **Ս.Մ. Ծոցիկեան**, Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, տպագրութիւն Ա.Յ. Լէյլէկեան, 1947 (–816 էջ), էջ 208: Տե՛ս նաև **Մանուկ Գ. Ճիգմեճեան**, Խարբերո՞ւ եւ իր զաւակները, Ֆրէզնոյ Քալիֆորնիա (Միացեալ Նահանգներ), 1955 (–752 էջ, այդ թվում բազմաթիւ լուսանկարներ՝ մի մասն առանձին էջերով), էջ 727:

³⁶⁷ **Յակոբ Չոլաքեան**, Քեսապի բարբառը, Երեւան, ԵՊՀ հրատ., «Հայաստան» հրատ., 2009 (–382 էջ), էջ 198:

³⁶⁸ **Յակոբ Չոլաքեան**, Քեսապի բարբառը, 2009, էջ 307:

³⁶⁹ **Յակոբ Չոլաքեան**, Քեսապի բարբառը, 2009, էջ 300:

³⁷⁰ **Յակոբ Չոլաքեան**, Քեսապի բարբառը, 2009, էջ 308:

³⁷¹ Տե՛ս «**Ձայն համշենական**» ամսաթերթի հետևյալ համարներում՝ Արչէ, 2011, №1–2: **Յիյէք արդէլէցի**, 2012, №1–2: **Քէլօխ չունսօղին հէքիյան**, 2012, №5–6: **Ու՛մ քէլօխն էր**, 2014, №5–6: **Չախցուցէ քարէ քիլուշէ**, 2014, №7–8:

³⁷² **Սերգէյ Վարդանյան**, Բանահյուսական նոր գրառումներ Թուրքիայի Արդվինի նահանգում, «**Ձայն համշենական**», 2011, №1–2:

նափոխ համշենցիներ էին, մյուսները՝ լազեր, թուրքեր, չնչին քանակությամբ՝ գնչուներ (լում), քրդեր և այլք: Նույն թվականին Քենալիաշայի (Մաքրիյալ) գյուղախումբն ուներ 4.794 բնակիչ, մեծ մասը՝ համշենցիներ, մյուսները՝ լազեր և այլք: Մյուս գյուղերի նման **Քարասումանիեից** ևս արտագաղթը մեծ էր (2000 թ. 330 բնակչից 2010 թ. մնացել էր ընդամենը 200-ը):

Թե XVIII դարում կրոնափոխված համշենահայերը էրբ են բնակություն հաստատել ծովափնյա Խոփայում, Մաքրիյալում ու Գոնիոյում, անհայտ է: Իրենք էլ չգիտեն:

Բնիկ տրապիզոնցի, բանասեր և ազգագրագետ, Մխիթարյան միաբան **Հայր Մինաս վրդ. Բժշկյանը** 1817–1819 թթ. Սև ծովի առափնյակով իր ճանապարհորդության սկզբում հիշատակում է Խոփա (Խօփա) նավահանգստային ավանը, Մաքրիյալ (Մաքրազալա) և Գոնիո (Կէօնէ) գյուղերը, բայց բնակիչների թվում հայերի կամ կրոնափոխ համշենցիների չի նշում, այլ՝ միայն լազերի³⁷³:

Կարծում ենք՝ Խոփայի գավառում համշենցիների վերաբնակեցումը կատարվել է 1830-ականներին: Այս ենթադրությանը հանգեցինք 2012 թ.՝ Էրզրումի նահանգում կրոնափոխ համշենցիների շուրջ երկու տասնյակ գյուղերը բացահայտելիս: Դրանց բնակիչներն ասում էին, որ իրենց նախնիները պատմական Համշենի մաս կազմած Համշենի, Չամլըհեմշինի, Չայելիի և Իքիզդերեի գավառակներից են բերվել և տնավորվել 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո գաղթած հայերի գյուղերում³⁷⁴:

Հասկանալի է, որ դա եղել է պետական ծրագիր: Առաջինը՝ բնակեցվում էին դատարկված գյուղերը: Իսկ Խոփայի գավառի դեպքում նոր շունչ էր հաղորդվել շատ նոր բնակչությամբ երկրամասին: Երկրորդը՝ շուրջ մեկ դար կրոնափոխված, բայց իրենց ինքնությանն ու լեզվին ամուր կառչած հայերին կտրում էին բնօրրանից և սփռում օտարախոս միջավայրում:

Հ. Մինաս վրդ. Բժշկյանից յոթ տասնամյակ անց՝ 1888 թ., **Հարություն Գաթենյանի** հրապարակած գյուղացանկի տվյալներով Մաքրիյալում բնակվում էին 150 տուն համշենցիներ, բայց **Գոնիո** գյուղի անունն ընդհանրապես բացակայում է: Կենտրոնական Ասիայում մեր կատարած ազգագրական և բանահավաքչական աշխատանքների ընթացքում մեզ հաջողվել է պարզել, որ 1880–1890-ական թվականներին Գոնիոյում համշենցիներ ևս բնակվել են:

³⁷³ Հ. Մինաս Վարդապետ Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեւա ծով, ՚ի Վենետիկ, ՚ի վանս Սրբոյ Ղազարու, 1819, էջ 98:

³⁷⁴ Վարդանյան Սերգեյ, Թուրքիայում բնակվող համշենահայերի արդի լեզվավիճակը // Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ, միջազգային գիտաժողովի (2014 թ. հոկտեմբերի 8–9) զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2014 (–224 էջ), էջ 217–219: Վարդանյան Սերգեյ, Թուրքիայի մահմեդական համշենահայերի բնակավայրերի և թվաքանակի մասին, «Պատմաբանասիրական հանդես», 2017, №2, էջ 53–55:

Այսպես, համշենցու հետ ամուսնացած ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի, ազգությամբ թաթար **Մինիսա Քարաբաջաքովայից (Миниса Карабаджак ова**, օրիորդական ազգանունը՝ **Ասկարովա (Аскарова)**, ծնվ. 1952 թ. Թաթարստանի Ալմետևսկ քաղաքում), որը վարժ խոսում էր Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով, 1987 թ. **Ուզբեկստանի Անդիժանի մարզի Սովետարաղ (1991-ից՝ Խոնդրոդ)** քաղաքում գրառել ենք մեկ հեքիաթ, որը նա լսել էր իր սկեդրայրից՝ 1892 թ. Աջարիայի Գոնիո գյուղում ծնված **Շարան Քարաբաջաք-օղլուից** (մահ.՝ 1980): Ասացող Շարան Քարաբաջաքօղլուի գոնիոցի լինելու փաստը շատ կարևոր է, քանի որ այդ տարածաշրջանն ուսումնասիրողների համար հիմնական աղբյուրներից մեկը հանդիսացող **Է. Լիոզենի «Берег Русского Лазистана»** («Ռուսական Լազիստանի ափը») աշխատության մեջ 1904 թ. տվյալներով Գոնիոյում բնակվում էին միայն 16 տուն աջարներ³⁷⁵: Նա 1904 թ. եղել է Գոնիոյում (**Гоние**), բայց կրոնափոխ համշենցիների չի հիշատակում³⁷⁶: Իր տպագրած վիճակագրական տվյալները նա համարում է առավել ճիշտ, քանի որ դրանք իրեն տվել է սահմանային պահակագործի կապիտան Լեոնիդ Լիսենկոն³⁷⁷:

Կենտրոնական Ասիա արքայազնի համշենցիներից նյութեր հավաքելիս մենք հանդիպել ենք այլ գոնիոցիների ևս, օրինակ՝ 1984 թ. Ղազախստանի Չիրկինո գյուղում՝ **Իսխաք Քարաիբրահիմովին (Исхак Караибрагимов)**, որը 1888 կամ 1889 թ. ծնվել էր այդ գյուղում: 1984 թ. Ղրղզստանի Կզըլ-Կիյա քաղաքում Եղեռնի մասին պատմություններ ենք գրի առել **Դուրսուն Քարաբաջաքովից (Дурсун Карабаджак ов)**, որը ևս Գոնիոյի ծնունդ էր (1905 թ.), իսկ Ղրղզստանի Օշի մարզի Սուգակի շրջանի Բեգաբաղ գյուղում 1987 թ. ծանոթացել ենք մոլլա **Հեմդի Աբդույուսօղլիի (Хемди Абдуюкоғлы)** հետ, որը 1904 թ. նույնպես ծնվել էր Գոնիոյում³⁷⁸:

1984 թ. հուլիսին Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի շրջանի Երիկ (Ерик) գյուղում գրուցել ենք 1914 թ. Գոնիոյում ծնված **Քյազըմ Թաթարօղլիի (Кязим Татароглы)** հետ, որը նոր էր ընտանիքով տեղափոխվել Ղրղզստանի Օշի մարզի Ուչ-Կորգոն գյուղից:

Հասկանալի է, որ միայն վերոնշյալ հինգ համշենցիները չեն, որ լույս աշխարհ են եկել Գոնիոյում, նրանք ունեցել են պապ ու տատ, ծնողներ, քույրեր ու եղբայրներ, ընտանիքի այլ անդամներ, ուստի **Է. Լիոզենին Լ. Լիսենկոյի** հանձ-

³⁷⁵ Э. Лиозен, Берег Русского Лазистана, 1906, с. 160.

³⁷⁶ Э. Лиозен, Берег Русского Лазистана, 1906, с. 141, 146, 147, 160:

³⁷⁷ Э. Лиозен, Берег Русского Лазистана, 1906, с. 160:

³⁷⁸ Մերգել Վարդանյան, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանասիրությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), էջ 60, 61:

նած տվյալները, կարծում ենք, ամբողջական չեն և այլ աղբյուրներով ճշտման կարիք ունեն, մանավանդ որ Է. Լիոզենից 19 տարի առաջ՝ 1887 թ. հրատարակված գնդապետ Վ. Լիսովսկու «**Чорохский край (военно-статистический очерк)**» («Ճորոխի երկրամաս (ռազմա-վիճակագրական ակնարկ)») ուսումնասիրության մեջ Գոնիոյի (**Гония**) բնակչության թիվը, առանց ազգությունը հիշատակելու, 38 տուն է³⁷⁹: Նա համշենցիներին **եմշիլ** «**емшил**» է անվանում՝ հավանաբար բառասկզբի «հ» հնչյունը չկարողանալով ռուսերեն գրել, և կարծում է, որ նրանք **քուրդ** են: Ինչպես **Է. Լիոզենի** հոդվածի առթիվ արդեն նշել ենք, գուցե պատճառն այն է, որ համշենցիները մուսուլման էին և մեծ տեղ էին հատկացնում անասնապահությանը:

Վ. Լիսովսկին գրում է, որ **եմշիլները** բնակվում էին Գոնիոյի բերդի մոտ³⁸⁰: Այդ նշանավոր **բերդը** և **Բաթունը** 1547 թ. գրավել են օսմանյան թուրքերը, 1712 թ. միացվել են Տրապիզոնի էյալեթին, իսկ 1878 թ. Բեռլինի պայմանագրով՝ անցել Ռուսական կայսրությանը³⁸¹: Գոնիոն այժմ դարձել է Աջարիայի զբոսաշրջիկների սիրելի վայրերից, 2017 թ. հնարավորություն ունեցանք մեկ շաբաթ բնակվել Գոնիո գյուղում, տեսնել բերդն ու թանգարանը:

Ըստ Խոփայում մեր գրանցած «**Արչե**» (№ 3) («Արջը» № 3/1) պատումի՝ երեք հոգի գնում են որսորդության: Անտառում արջ է հանդիպում, որը նրանց հարցնում է, թե այնտեղ ի՞նչ են անում: Մարդկանց լեզուն կապ է ընկնում: Արջը նրանցից մեկի գլուխը պոկում է, տանում քոթոթներիս: Մյուս երկուսը փախչում են գյուղ և իրենց ընկերոջ կնոջը հարցնում, թե առավոտյան ամուսնու գլուխը վրան էր, թե՞ վրան չէր: Նա էլ ասում է. «**Չկիդիմ, հաս արվանա հաց ուղեղէ չենգյան ժածի գուր, ամա կելոխէ վասն էր թա, վասն չէր թա, մեդիս չա**»³⁸² («Չգիտեմ, այս առավոտ հաց ուտելիս ծնուրը շարժվում էր, բայց գլուխը վրան էր, թե՞ վրան չէր, չեմ հիշում»):

Ժամանակագրական առումով հաջորդ գրառումը՝ «**Քելոխ չունսողին հէ-քիյան**»³⁸³ (№ 4), («Գլուխ չունեցողի պատմությունը», № 4/1), կատարել ենք 2011 թ.

³⁷⁹ **Чорохский край (военно-статистический очерк)**, выпуск 1, Составил Генерального Штаба полковник В. Я. Лисовский, Приложения 1, Список населённых мест Чорохского края, Тифлис, 1887, с. 3.

³⁸⁰ **Чорохский край (военно-статистический очерк)**, выпуск 1, Составил Генерального Штаба полковник В. Я. Лисовский, 1887, с. 53:

³⁸¹ **Н. Н. Шенгелия**, Османские документальные источники о крепостях Батуми и Гонии // «**Тюркологический сборник 1978**», АН СССР, Институт Востоковедения, Москва, изд. «Наука», 1984, с. 250, 251.

³⁸² **Ս. Վարդանյան**, Բանախյուսական նոր գրառումներ Թուրքիայի Արդվինի նահանգում, «**Ձայն համշենական**», 2011, № 1–2:

³⁸³ **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայերի երգերը և զրույցները, «**Ձայն համշենական**», 2012, № 5–6, էջ 8:

հուլիսին, Խոփայի գավառի Քենավիաշայի ենթաշրջանի **Քայաքոյ** գյուղի **Շանա** գյուղականում: **Քայաքոյը** կազմավորվել է չորս գյուղականերից, որոնք կոչվում են Շանա (այստեղ է գյուղապետարանը), Խալբաշը, Գորամաթ և Փափաթ: Բոլորն իրար հետ 2010 թ. ունեին 548 բնակիչ: Բանասացը Շանա գյուղականում 1956 թ. ծնված վարորդ **Նաջի Թաթարն (Naci Tatar)** էր: Նա ասում էր, որ այդ պատմությունը մանկուց է իմացել. «**Յէս դասը դաագան գայի, չբայի, իսա խաբարը քիդէյի**» («Ես տասը տարեկան կայի, չկայի, այս զրոյցը գիտեի»):

Ըստ այս տարբերակի՝ չորս ընկեր ճմռանը գնում են արջի որսի: Հասնում են արջի քարայրին: Մեկն առաջարկում է՝ պարանն իր ոտքից կապեն, ինքը ներս մտնի, երբ արջին գտնի, ոտքը կթափահարի, որ իրեն հանեն: Քարայրում արջը նրա վիզը բռնում է: Ոտքը թափ է տալիս, ընկերները դուրս են քաշում, տեսնում՝ գլուխը չկա: Կասկածում են, թե մտնելիս գլուխը վրան էր: Վերադառնում են գյուղ, կնոջն են հարցնում, նա էլ պատասխանում է. «**Յէս ալ վաամէդի չիմ, աս արվանա թուրջի ուղէլէ չէնգան ժաժէ գուր, համա քէլօխէ վաան էր թա, վաան չէր թա, չքիդիմ**»³⁸⁴ («Ես էլ չեմ հիշում, այս առավոտյան թթու ուտելիս ծնոտը շարժում էր, բայց գլուխը վրան էր, թե՛ վրան չէր, չգիտեմ»):

Նույն թվականին՝ մի քանի ամիս անց՝ 2011 թ. հոկտեմբերին, մեզ հաջողվեց թղթին հանձնել այս երգիծապատումի «**Յիլէք արդէլէցի**»³⁸⁵ (№5), («Երեք արդալացի», №5/1) տարբերակը: Ասացողը՝ **Հիքմեթ Յադջին (Hikmet Yağci)**, 1973 թ. ծնվել է Խոփայի գավառի Բաշոբա (նախկին՝ Խիզո, Խիկոբա, Հիզոբա) գյուղում: 1888 թ. «Մշակում» տպագրված Հարություն Գաթենյանի հոդվածում գյուղը հիշատակվում է «Խիսկօբա» անունով և 80 տուն էր³⁸⁶: Ավելի քան մեկ դար անց՝ 2000 թ., այն ուներ 760, իսկ 2011 թվականին՝ 564 բնակիչ: Գյուղը լքողներից մեկն էլ **Հիքմեթ Յադջին** էր, որն արդեն ապրում էր Խոփա քաղաքում:

Պատումի հերոսները կրկին **արդալացիներ** են: Երեք **արդալացի** գնում են արջի որսի: Իրենցից մեկին՝ Հասանին, պարանով կապում են, մտցնում քարայրը: Արջը նրա գլուխը բռնում է, և պարանը թափահարվում է: Հասանին դուրս են քաշում, տեսնում՝ գլուխը չկա: Վերադառնում են գյուղ և կնոջը հարցնում, թե առավոտյան ամուսնու գլուխը վրան էր: Կինն էլ պատասխանում է. «**Յահու՛, ան չքիդիմ, չիդէ վաան էր, ամա քէլօխէ վաան էր թա, ան մէդիս չա, չքիդիմ**»³⁸⁷

³⁸⁴ **Ս. Վարդանյան**, Կրոնավիոյի համշենահայերի երգերը և զրոյցները, «**Ձայն համշենական**», 2012, №5–6, էջ 8:

³⁸⁵ **Ս. Վարդանյան**, Կրոնավիոյի համշենահայերի բանահյուսութեան նմուշներ, «**Ձայն համշենական**», 2012, №1–2, էջ 7:

³⁸⁶ **Յարութին Գաթենյան**, Չորս տարի Շավշէթ-Իմերխէվում շրջագայութեան արդիւնքից, «**Մշակ**», թերթ, Թիֆլիս, 1888, յուլիսի 23, թիւ, 83:

³⁸⁷ **Ս. Վարդանյան**, Կրոնավիոյի համշենահայերի բանահյուսութեան նմուշներ, «**Ձայն համշենական**», 2012, №1–2, էջ 7:

(«Յահու՛, այդ չգիտեմ, վիզը վրան էր, բայց գլուխը վրան էր, այդ չեմ հիշում, չգիտեմ»):

Կրոնափոխ համշենահայերից գրառված 6-րդ տարբերակի ասացողը Խոփայի գավառի Քենավիաշայի ենթաշրջանի Ուչքարդեշ գյուղի բնակիչ, շինարար **Սավաշ Քաբաօսմանօղլուն (Savaş Kabaosmanoğlu)** է (ծնվ. 1970 թ.): Ծովահայաց Ուչքարդեշի բնակչության թիվը նույնպես նվազում է, 2000 թ. 250 բնակչից 2012 թ. մնացել էր 152-ը:

«**Ու՛մ քէլօխն էր**»³⁸⁸ (№ 6), («Ու՛մ գլուխն էր», № 6/1) զվարճապատումը զգալիորեն տարբերվում է մյուսներից: Արջը մտնում է մի գյուղացու տուն և կնոջ մոտ քնած ամուսնուն փախցնում, տանում է իր որջը: Առավոտյան կինն արթնանում է, սակայն ամուսինը չկար: Մեկ օր, երկու օր, երեք օր է անցնում, բայց ամուսինը չի հայտնվում: Կնոջ եղբայրը գյուղացիների հետ գնում է փնտրելու: Արջի բնի մոտ տեսնում են, որ մի մարդու ոտքերը դրսում են, իսկ գլուխը ներսում է: Քաշում, հանում են, բայց գլուխը չի լինում: Գալիս են կնոջը հարցնում, թե մարդդ գլուխ ունե՞ր: Նա էլ ասում է. «**Հիզունե՛ բարգէլէ մօղէս մեզ քէլօխ մեզար, ամա չքիդիմ քի, ում քէլօխն էր**»³⁸⁹ («Երեկոյան պառկելիս մոտս մի գլուխ կար, բայց չգիտեմ, թե ում գլուխն էր»):

Մեր հաջորդ գրառումը՝ «**Չախցուցէ քարէ քիլուշէ**»³⁹⁰ (№ 7), («Ջրաղացի քարը գլորելը», № 7/1), կատարել ենք 2013 թ. օգոստոսին Խոփայում, ասացողը՝ **Սեբահաթ Թոփալօղլուն (Sebahat Topaloğlu)**, օրիորդական ազգանունը՝ **Ջիհան՝ Cihan**), ծնվել է 1948 թ. Խոփայի գավառի Չավուշլու գյուղում: Հարություն Գաթենյանի 1888 թ. հրատարակած գյուղացանկում «Չավուշլուկ»-ն ուներ 30 տուն³⁹¹: 120 տարի անց՝ 2008 թվականին, բնակչության թիվը 626 էր:

Չավուշլուում քանիցս հանդիպել ենք ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Կենտրոնական Ասիայից իրենց ազգականների մոտ բնակություն հաստատած համշենցիների ընտանիքների: Երբ 2013 թ. կրկին եղանք չնաշխարհիկ բնության գրկում գտնվող այս գյուղում, բնակչության թիվը դարձյալ կրճատվել էր՝ հասնելով 487-ի:

Ինչպես առաջին և հինգերորդ տարբերակներում, այս անգամ էլ հերոսներն **արդալացիներ** են: Նրանք սար են բարձրանում, որ ջրաղացի քարը գլո-

³⁸⁸ **Ս. Վարդանյան**, Թուրքիայում արված բանահյուսական նոր գրառումներ, «**Ձայն համշենական**», 2014, № 5–6, էջ 7:

³⁸⁹ **Ս. Վարդանյան**, Թուրքիայում արված բանահյուսական նոր գրառումներ, «**Ձայն համշենական**», 2014, № 5–6, էջ 7:

³⁹⁰ **Ս. Վարդանյան**, Բանահյուսական նշխարներ (Թուրքիայի Արդվինի նահանգում արված բանահյուսական նոր գրառումներ), «**Ձայն համշենական**», 2014, № 7–8, էջ 7:

³⁹¹ **Յարութին Գաթենյան**, **Չորս տարի Շավշէթ-Իմերխէվում շրջագայութեան արդիւնքից**:

րելով բերեն: Իրենցից մեկին առաջարկում են՝ գլուխը խոթի ջրաղացքարի անցքի մեջ, որ կամաց տանեն, թե չէ աղացի մոտ կանգ չի առնի՝ կանցնի, կգնա: Ներքև են գլորում, գալիս են քարի մոտ, տեսնում՝ մարդու գլուխը չկա: Տարակուսում են, թե նրա գլուխը վրան էր, թե՛ չէ: Գնում են կնոջը հարցնում, նա էլ ասում է. «**Չբիդիմ, հացե ձամե գուր, հացե գուլ գուդար, յես չբիդիմ, ջիդե՞ վաան էր թա, վաան չէր թա**»³⁹³ («Չգիտեմ, հացը ծամում էր, հացը կուլ էր տալիս, ես չգիտեմ, գլուխը վրան էր, թե՛ վրան չէր»):

Այսպիսով, կրոնափոխ համշենահայերից գրառված յոթ սյուժեներից հինգում ձախորդ գյուղացու գլուխը պոկում է արջը, մեկական անգամ՝ մակույկը և ջրաղացի քարը³⁹⁴:

Սակայն այս վիճակագրությունից, անշուշտ, պետք չէ եզրակացնել, որ համշենցիների հետ պայքարում միշտ հաղթում էին արջերը: Ընդհակառակը, համշենցիներն իրենք էին **արջերի հայտնի որսորդներ**: Այդ է վկայում Տրապիզոնում Մեծ Բրիտանիայի հյուպատոս, նշանավոր արևելագետ և ճանապարհորդ Վիլյամ Ջիֆֆորդ Փալգրեյվը, որը 1872թ. եղել է Համշենում. «**Хамшинцы известны как охотники на медведей, и обыкновенно вооружены; редко османлис дерзает показаться в их среде, но я, как иностранец, был принят ими дружелюбно и гостеприимно**»³⁹⁵ («Խամշինցիները հայտնի են որպես արջերի որսորդներ և սովորաբար զինված են. օսմանցին հազվադեպ է համարձակվում հայտնվել նրանց միջավայրում, բայց ես որպես օտարերկրացի նրանց կողմից ընդունվեցի բարեկամաբար և հյուրընկալորեն»):

Նույն՝ բուն Համշենի քրիստոնյա և կրոնափոխ հայերի մասին բացառիկ փաստ է արձանագրել Հ. Մինաս վրդ. Բժշկյանը. պարզվում է նրանք ուխտի էին գնում **Եղնովիտ** գյուղից ոչ հեռու գտնվող նշանավոր Սուրբ Խաչիկ հոր կամ Խաչեքարի վանքի մոտ թաղված արջի գերեզմանին. «Խաչիքեար վանքը մեծ ուխտատեղի է հայոց և այլազգաց. այս վանքին քով գտան մեծ զանգակ մի. ուր

³⁹² Բանասացը «ջիդ»՝ վիզ, բառը օգտագործում է «վիզը և գլուխը միասին» իմաստով:

³⁹³ Ս. Վարդանյան, Բանահյուսական նշխարներ (Թուրքիայի Արդվինի նահանգում արված բանահյուսական նոր գրառումներ), «Ձայն համշենական», 2014, №7–8, էջ 7:

³⁹⁴ Ս. Վարդանյան, Իսլամացված համշենահայերից գրառված մի զվարճապատումի յոթ տարբերակների մասին // Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր, 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 27–29 սեպտեմբերի, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Երևան, Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019 (–536 էջ), էջ 341–344:

³⁹⁵ Отчеты В. Джиффорда Пальгрева о провинциях Анатолии за 1867-68, 1869 и 1872 годы. 4. Отчет консула Пальгрева за лето 1872 года, о береге Лазистана и прилегающих к нему внутренних округах... // Материалы для описания Азиатской Турции и Батумской области. Приложения к VII тому «Известии Кавказского отдела Императорского Русского географического общества», Тифлис, 1882 (с. 41-87), с. 71.

կայ մեծ գերեզման արջու, վրան գրած է թէ այս արջ հաւատարիմ ծառայութիւն ըրեր է վանքին տասներկու տարի. հայ և տաճիկ վրան ուխտ կերթան մինչև հիմա անմտութեամբ, և սատկած օրը վրան կերթան աղօթք կընեն»³⁹⁶:

ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽ) ԵՎ ՂԱՐԱԴ-ԱՂԻ (ՊԱՐՍՊԱՏՈՒՆԻՔ) ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ինչպէս արդէն նշել ենք, մեր բանահավաքչության ընթացքում հարց էր ծագում, թե իսկամ համշենահայերի շրջանում տարածված այս գվարճապատումն արդյո՞ք իր փոփոխակներն ունի հայ ժողովրդի մյուս հատվածների բանահյուսության մեջ³⁹⁷:

Տարիներ տևած պրպտումների շնորհիվ պարզեցինք, որ շուրջ երեք տասնյակ տարբերակներ պատմել են նաև Հայաստանի և հարևան երկրների գանազան քաղաքների, գավառների ու գյուղերի հայերը: Մեր տվյալներով Արցախում գրանցվել է չորս փոփոխակ, որոնցից հնագույնը՝ «**Պէլ դարադաղցուց հնքաւթը**» (N°8), 1860 թ. Շուշիում գրառել է ապագա ճանաչված մանկավարժ **Առաքել Բահաթրյանը** (1848, Շուշի–1883, Խարկով)³⁹⁸, որի **Հայաստանի ազգային արխիվում՝ Տիգրան Նավասարդյանի ֆոնդում**, պահվող բանահյուսական տետրի³⁹⁹ վրա գրված է. «Հաքաթներ Առաքել Բահաթրեան, սկսեալ ՚ի 6 մայիս, աւարտեալ ՚ի 6 օգօստ. 1860»⁴⁰⁰:

Նույն ձեռագրով նույնպիսի նշումներ կան նաև «Ալեք.»⁴⁰¹ և Գրիգոր⁴⁰² Բահաթրյանների տետրերի վրա: Նրանց վեց⁴⁰³ անվանաթերթերից միայն Գրիգոր

³⁹⁶ Հ. Մինաս Վարդապետ Բժշկեան, Պատմութիւն Պոստոսի, որ է Սեալ ծով, ՚ի Վենետիկ, ՚ի վանս Սրբոյ Ղազարու, 1819, էջ 97:

³⁹⁷ Սերգեյ Վարդանյան, Մի գվարճախոսության գրառումների և հրապարակումների պատմությունից, «Ոսկե դիվան», հեքիաթագիտական հանդես, պրակ 2, Երևան, 2010, էջ 32–41:

³⁹⁸ «Բահաթրյան Առաքել» // ՀԱՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 246: «Բահաթրյան Առաքել» // ՀՀՀ, հ. 1, Երևան, 1990, էջ 461: «Բահաթրյան Առաքել» // Հայ գրատպություն և գրքարվեստ, հանրագիտարան, Երևան, 2015 (–1120 էջ), էջ 188:

³⁹⁹ Թեև Առաքել Բահաթրյանի երկու անվանաթերթերի վրա այլ ձեռագրով, մեծ տատերով գրված է «Տետրակ առաջին» (թ. 265) և «Տետրակ երկրորդ» (թ. 204), բայց դրանք մեզ ծանոթ միտողանի տետրերը չեն, չունեն շապիկ և գծանշումներ, դպրոցական տետրից մեկ-երկու մատ երկար, սպիտակ, հաստ, հավանաբար 100–120 գրամանոց թղթեր են:

⁴⁰⁰ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 484, ցուցակ 1, գործ 1, թերթ 218:

⁴⁰¹ ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 1, թ. 208:

⁴⁰² ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 1, թ. 245:

⁴⁰³ ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 1, թ. 204, 208, 218, 245, 265, 277:

րի երկրորդ անվանաթերթի վրա է նախորդներից տարբերվող ձեռագրով, գրառման վայրի մասին մակագրված՝ «Գրիգոր ի 1860 սեպտ. Շուշի»⁴⁰⁴:

Ուսումնասիրողներն «Ալեք.»-ը կարդում են Ալեքսան⁴⁰⁵ և Ալեքսանդր⁴⁰⁶:

Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթյանների արյունակցական կապի մասին տեղերում որևէ ակնարկ չկա, ուստի նրանց անդրադարձած գիտնականներից ոմանք իրենք էլ չեն նշում⁴⁰⁷, կամ գրում են «ազգականներ»⁴⁰⁸, օրինակ՝ «Հայ ժողովրդական հեքիաթների» (1959) առաջին հատորի «Առաջաբանում» կարդում ենք. «Հայկական ՄՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիվի **Տիգրան Նավասարդյանցի** ֆոնդում գտնվում են ձեռագիր մի քանի տեղերակներ, որոնք պարունակում են երկու տասնյակից ավելի հեքիաթներ

⁴⁰⁴ ՀԱԱ, ֆ. 484, ց.1, գ.1, թ. 277:

⁴⁰⁵ **Թամար Հայրապետյան**, Հայ ժողովրդական հեքիաթների գրառման և գիտական հրատարակության շուրջ, «ՎԷՄ», հանդես, Երևան, 2009, թիվ 3 (28), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 159: **Նույնի՝** Արքեպիսկոպիտ հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016 (–462 էջ), էջ 392:

⁴⁰⁶ **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ոստիք**, հ. VI, հատորի բնագիրը, նախաբանը, ծանոթագրությունները, բառարանն ու ցանկերը **Ա. Մ. Նազինյանի, Վ. Գ. Սվազյանի**, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973 (–780 էջ), էջ 705: Գրքի «**Նախաբանի**» վերջում նշված է. «...քնագրերի պատրաստման և բառարանի կազմման աշխատանքներին մասնակցել է Մ. Ն. Առաքելյանը (Լեոնային Ղարաբաղի հեքիաթների բաժին)» (էջ 16): **Միքայել Առաքելյանն** ինստիտուտի բանահյուսության բաժնի աշխատակից էր, ծնունդով արցախցի: Նրա բանահավաքչական գրառումները պահվում են ինստիտուտի արխիվում՝ իր անվամբ ֆոնդում:

Նելլի Հակոբյան, Արծրունի Սահակյան, Հայ ժողովրդական հեքիաթների գրառման պատմությունից (Ընդհանուր ակնարկ), «**Բանբեր Երևանի համալսարանի**», 1986, №1, էջ 127: **Նազիկ Հարությունյան**, Առաքել Բահաթյան (Կյանքը և գործը), Երևան, ԵՊՀ հրատ., 1992 (–120 էջ), էջ 103: **Թամար Հայրապետյան**, Առասպելական տարրը Բահաթյանների գրառած հրաշապատում հեքիաթներում (Շուշի, XIX դարի երկրորդ կես) // **Շուշին՝ հայկական մշակույթի օջախ**, Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, «Կանառ» գիտական կենտրոնի հրատ., 2014 (–240 էջ), էջ 107:

⁴⁰⁷ **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ոստիք**, հ. VI, էջ 705: **Նելլի Հակոբյան, Արծրունի Սահակյան**, Հայ ժողովրդական հեքիաթների գրառման պատմությունից (Ընդհանուր ակնարկ), էջ 127: **Ալվարդ Ղազիյան**, Արցախ // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ. 15, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983 (–192 էջ), էջ 5:

⁴⁰⁸ **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. I, ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու, հատորը պատրաստեց և առաջաբանը գրեց **Ա. Մ. Նազինյանը**, ՀՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959 (–672 էջ), էջ 8: **Թամար Հայրապետյան**, Հայ ժողովրդական հեքիաթների գրառման և գիտական հրատարակության շուրջ, էջ 159: **Նույնի՝** Արքեպիսկոպիտ հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, էջ 392:

Ղարաբաղի բարբառով, գրի առնված նշանավոր մանկավարժ Առաքել Բահաթրյանի ու նրա **ազգականներ** Գրիգոր և Ավետիք⁴⁰⁹ Բահաթրյանների կողմից, 1860թ. Շուշիում»⁴¹⁰, կամ ենթադրաբար գրում են «եղբայրներ»⁴¹¹: Մենք ևս հակված ենք ենթադրելու, որ նրանք եղբայրներ էին, քանի որ ավագ եղբոր՝ Ավետիսի (Ավետիքի) և կրտսերի՝ Առաքելի միջև տարիքային տարբերությունը 15 տարի էր, և, հավանաբար, այդ ժամանակահատվածում ընտանիքում այլ երեխաներ էլ են ծնվել:

Տեսրերում չեն նշված նաև բանահավաքների ծննդյան թվականները. այլ աղբյուրներից հայտնի է միայն Առաքելինը:

Երեք եղբայրների հավաքած 64 հեքիաթներից ու զավեշտապատումներից 10-ը գրառել է Ալեքսանդրը, 21-ը՝ Գրիգորը, իսկ ամենաշատը՝ 33-ը, **1860թ. մայիս-օգոստոս ամիսներին**, մի քանիսն էլ **սեպտեմբերին** թղթին է հանձնել Առաքել Բահաթրյանը, երբ նա ընդամենը **12 տարեկան** էր: Տարօրինակ է, որ **Առաքել Բահաթրյանին** անդրադարձած հոդվածների, ատենախոսությունների և գրքերի հեղինակները նրա վաղ պատանեկան տարիքի վրա ուշադրություն չեն դարձրել: Այդ մասին բազմիցս նշել ենք Հնագիտության և ազգագրության ինստիտուտում աշխատող մեր գործընկեր բանագետների և ազգագրագետների հետ զրույցներում, 2010 և 2011 թթ. Հովհ. Թումանյանի թանգարանում⁴¹² և Երևանի պետհամալսարանում⁴¹³ կայացած գիտաժողովներում կարդացած զեկուցումներում, 2010թ. հրապարակված մեր «**Մի զվարճախոսության գրառումների և հրապարակումների պատմությունից**»⁴¹⁴ հոդվածում, նաև հետա-

⁴⁰⁹ Վրիպակ է, ինչպես վերը նշել ենք, բանահավաքի անվանաթերթի վրա գրված է «Ալեք.»:

⁴¹⁰ **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. I, էջ 8:

⁴¹¹ **Նագիկ Հարությունյան**, Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը), էջ 103: **Էսթեր Խենյան**, Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները) // **Շուշին հայոց քաղաքակրթության օրրան**, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ ԳԱ ակադեմիա, ԵՊՀ, ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն, Արցախի պետ. համալսարան, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2007 (- 370 էջ), էջ 337:

⁴¹² **Ս. Վարդանյան**, Մահմեդական համշենահայերից գրառված երկու զվարճախոսության տարբերակները // «**Հեքիաթի զարգացումը բանահյուսական և գրական միջավայրում**», Հովհ. Թումանյանի թանգարան, 2010 թ., մարտի 30–31, գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Երևան, 2010, էջ 12: Գիտաժողովի կազմակերպիչներ՝ Հովհ. Թումանյանի թանգարան, Fabula armeniaca ծրագիր, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն:

⁴¹³ **Ս. Վարդանյան**, Կրոնափոխ համշենահայից Բոստոնում գրառված զվարճախոսության տարբերակների մասին // «**Լեզուն, գրականությունը և արվեստը միջմշակութային համատեքստում**» (ԵՊՀ, 2011 թ. հոկտեմբերի 4–8) միջազգային գիտաժողովի թեզիսներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 133–134:

⁴¹⁴ **Ս. Վարդանյան**, Մի զվարճախոսության գրառումների և հրապարակումների պատմու-

գայում՝ տարբեր գիտաժողովներում, **Լրատվական ուղիոյով** (FM:106.5) հեռարձակվող «**Համշենական գրուցարան**» հեղինակային հաղորդաշարի՝ թեմային առնչվող թողարկումներում:

Այդ եզակի փաստը չի սկստել և չի արժևորել նույնիսկ «**Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը)**» մենագրության հեղինակ, մանկավարժական գիտ. թեկնածու (2002-ից՝ դոկտոր) **Նազիկ Հարությունյանը**: Նա, ինքն իրեն հակասելով, գրում է. «Վաստակաշատ մանկավարժ, հոգեբան, հասարակական գործիչ Ա. Բահաթրյանն **իր համեստ ներդրումն ունի** նաև հայ ժողովրդական հեքիաթները գրի առնելու և մոռացությունից փրկելու շնորհակալ գործում: Նա իր երկու եղբայրների՝ Գրիգոր և Ալեքսանդր Բահաթրյանների հետ 1860 թվականին Շուշի քաղաքում **գրի է առնում մեծ քանակությամբ հեքիաթներ...**»⁴¹⁵:

Բահաթրյաններն Արցախի հայտնի գերդաստաններից էին: Բաֆֆին 1882թ. Թիֆլիսում հրատարակված իր «**Խամսայի մեկիբությունները (1600–1827)**» գրքում հիշատակում է 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հերոսներից Ասրի-բեկ Բահաթրյանին⁴¹⁶ և նրա նախնիներին. «Ասրի-բեկի նախապապը՝ Բայինդուրը, կամ որպես պարսիկները կոչում էին Բահաթուրը, դեռ շահ սուլթանի Հուսեյնի թագավորության ժամանակ Սյունյաց աշխարհից գնաց Պարսկաստան և պարսից ծառայության մեջ մտնելով, շահի քաջ և նշանավոր զորավարներից մեկը դարձավ: Հետո Պարսկաստանից զգվելով, եկավ Վրաստան, այստեղ միացավ Դավիթ Բեկի հետ և, գնալով իր հայրենիքը, Սյունյաց ապստամբության պարագլուխներից մեկը դարձավ: Դա մեր «Դավիթ Բեկ» վեպի հերոսներից մեկը՝ Բայինդուր իշխանն է...»⁴¹⁷:

Գրող, բանահավաք, Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ **Գալուստ Շերմագանյանը** (1814, Հին Ջուղա–1891, Օրյոլի մոտ, գ. Ջալեսնոյե)⁴¹⁸, որին առավել մանրամասն կանոնադառնանք «**Նախիջևանյան տարբերակները**» գլխում, մանկուց ծանոթ էր Ասրի-բեկ Բահաթրյանին, որի մասին իր «**Նիւթեր ազգային պատմութեան համար: Երեւելի Հայկազունք ի Պարսկաստան**» գրքում

թյունից, «**Ոսկե դիվան**», հեքիաթագիտական հանդես, պրակ 2, Երևան, Հովհ. Թումանյանի թանգարան, 2010, էջ 33:

⁴¹⁵ **Նազիկ Հարությունյան**, Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը), էջ 88:

⁴¹⁶ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, Ուղեգրություններ, պատմական երկեր, իններորդ հատոր, հատորը կազմեց և ծանոթագրեց Խ.Սամվելյանը, ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987 (–704 էջ), էջ 594–597:

⁴¹⁷ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, Ուղեգրություններ, պատմական երկեր, իններորդ հատոր, էջ 595:

⁴¹⁸ **Սամվել Կարապետյան**, Թիֆլիսի քաղաքագլուխները, ԴԱԱ գիտական ուսումնասիրություններ, գիրք Ե, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2003 (–120 էջ), էջ 54, 63: Տե՛ս նաև՝ «Շարմագանյան (Շիրմագանյան) Գալուստ Հարությունի» // ՀՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 487 և «Շարմագանյան (Շիրմագանյան) Գալուստ Հարությունի» // ՀՀՀ, հ. 4, Երևան, 2003, էջ 68, որոնցում ծննդյան թվականը նշված է 1807 թ.:

գրում է. «Ասրի-բեզը Ղարաբաղի էր և ծնած էր Ջրաբերդ ամրոցում կամ Միխրաթաղ կամ Կսապատ գիւղում, ուստի և ունանք նրան Ջրաբերդցի, և այլք Կըսապատցի կանուանէին: Նրա պապերն ու հայրը, և ինքն Ասրին անձնանուէր և քաջ զինուորակից էին Ջրաբերդի մելիքներին...»⁴¹⁹: «Ասրի-բեզն ամուսնացած էր Հին-Նախիջևանցի Սարգիս-աղայի դստեր հետ, և Սարգիս-աղայի մեծ որդի Ղազար-աղան ամուսնացած էր իմ մեծ քրոջ հետ: Ասրի-բեզին մօտիկ ազգական էին Հին Ջրաբերդցի Շուշի վերաբնակեալ Մահտեսի Միսայէլ, Ղազար և Սարգիս Բրհաթուրեանց հարազատ եղբայրները, որոնց թոռներից շատերը, ինչպես լսել եմ, կենդանի են մինչև ցայժմ»⁴²⁰: Այնուհետև Գ. Շերմազանյանը գրքի «ԼԳ. Ասրի-բեզ Բրհաթուրեանց» գլխում մանրամասն պատմում է նրա արկածալի կյանքի դրվագները⁴²¹:

Հիշատակենք մի քանի Բահաթոյանների ևս՝ 1814թ.⁴²² Շուշիի Կուսանոցը հիմնել և կարգավորել է առաջին մայրապետ Հռիփսիմե Բահաթուրյանցը (1790–1865)⁴²³: Ըստ **Մակար եպս. Բարխուդարյանի «Արցախ»** (1895) աշխատության՝ Կուսանոցի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է կույս Հռիփսիմեի երեք եղբայրների օգնությամբ. «օժանդակութեամբ երից եղբարց իւրոց հարազատաց Իսրայէլի, Աստուածատրոյ և Պետրոսի Գրիգորեանք Բահաթուրեանց ի թվն 1816 ամի»⁴²⁴: «**Արծուի Վասպուրական»** ամսագրի 1862–1863 թթ. 4-րդ համարում տպագրվել է **Իսրայել Մամիկոնյանցի**⁴²⁵ հետևյալ վկայությունը. «...կայ մի

⁴¹⁹ [Շերմազանեան Գալուստ] Նիւթեր ազգային պատմութեան համար: Երեւելի Հայկազունք ի Պարսկաստան, աշխատասիրութեամբ Գալուստ Շերմազանեանի, Պսակեալ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՒԲԵԱՆ մրցանակալ ի գործադիր մնայուն Յանձնաժողովոյն Կուստանդնուպօլսոյ, ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց: Ռոստով (Դոնի վերայ), տպարան Յովհաննու Տէր-Աբրահամեան, 1890 (–400 էջ), էջ 295: Ի դեպ, գրքի առաջաբանի հեղինակը **Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցն** է (էջ 3–6), որը աշխատությունը երաշխավորել էր մրցանակի համար: Այն արտատպվել է Կ. Պոլիս «Արեւելք» թերթի 1889թ. հունիսի 30-ի համարից:

⁴²⁰ [Շերմազանեան Գալուստ] Նիւթեր ազգային պատմութեան համար: Երեւելի Հայկազունք ի Պարսկաստան, էջ 295:

⁴²¹ [Շերմազանեան Գալուստ] Նիւթեր ազգային պատմութեան համար: Երեւելի Հայկազունք ի Պարսկաստան, էջ 295–311:

⁴²² **Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց**, Ուղեգնացական ակնարկներ, **Գիտական ուսումնասիրություններ**, մատենաշար, գիրք ԺԳ., Երևան, «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հիմնադրամ, 2010 (–104 էջ), էջ 15: **Արզամ**, Շուշի. 13 մայիսի, «Նոր Դար», թերթ, Թիֆլիս, 1886, մայիսի 20, №75, էջ 3: **Ա. Յ. Այվազեան**, Մեր կուսաստանները, «Նոր Դար», 1894, յուլիսի 1, №111, էջ 2, 3:

⁴²³ **Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց**, Ուղեգնացական ակնարկներ, էջ 15:

⁴²⁴ **Մակար եպս. Բարխուտարեանց**, Արցախ, Բագու, տպարան «Արօր», 1895, վերահրատարակություն՝ Երևան, Լուսակն, 2018 (–474 էջ), էջ 149: **Հեղինե Մկրտչեան**, Արցախի Կուսանաց անապատները, «Հայկազեան հայագիտական հանդէս», Բեյրութ, 2022, թիւ 42/1, էջ 209:

⁴²⁵ **Իսրայել Մամիկոնյանցը** եղել է Ղարաբաղի թեմի կոնսիստորիայի ատենադպիր, տեղապետ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, 1838–1913, Թիֆլիզ,

Մենաստան կուսանաց՝ յանուն սուրբ Աստուածածնի. ունի սա իւր շրջապատն հող և պարտեզ. եւ իւրեան սեպհական երկայարկ սենեակներ. գորս կառուցած է իւր ծախքով բազմաշխատ Մայրապետն **Հռիփսիմէ կոյս Բահաթորեանց**. ուր բաց յինքնէն բնակում են նաև հինգ կուսանք»⁴²⁶: Նրա մահից հետո հաջորդ մայրապետը դարձել է եղբոր դուստրը՝ Վարվառէ (Վատվառա) Բահաթորյանցը⁴²⁷:

Ամարասի վանքի մասին 1859 թ. Մոսկվայում հրատարակված գրքույկի հեղինակը նույնպես Բահաթորյան է⁴²⁸:

1876–1880 թթ. Ախալցխայի քաղաքագլուխ⁴²⁹, հետագայում հոգևորական Տեր Եղիշէ (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանցի՝ 1885 թվականին Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» թերթում հրատարակված ուղեգրության մեջ Շուշիի քաղաքային բժիշկ է նշվում Խաչատուր Բահաթորյանցը⁴³⁰: Եկատերինա Բահաթորը (Բահաթորյան, 1870, Վարարակն, այժմ՝ Ստեփանակերտ–1944, Երևան), ժամանակին ճանաչված դրամատուրգ էր⁴³¹: Այստեղ թվարկումն ընդհատենք և վերադառնանք Բահաթորյան եղբայրների՝ 1860 թ. բանահավաքչությանը:

Կարևոր ենք համարում շեշտել, որ 1860-ական թվականներին հայ մտավորականների միջավայրում հայկական բանահյուսությունը չուներ նույն գրավչությունը, ինչ դրանից մեկուկես-երկուսուկես տասնամյակ անց՝ **Գարեգին վրդ.**

տպարան Ն. Աղանեսնի, 1914 (–696 էջ), էջ 338: «Կոնսիստորիա-Թեմական հոգևոր հիմնարկ՝ վարչական և դատական ֆունկցիաներով (սախատավետական Ռուսաստանում)», տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, ԳԱ լեզվի ինստիտուտ, 1974 (–584 էջ), էջ 180:

⁴²⁶ **Գ. Մրուանձտեանց**, Սինեաց աշխարհ եւ Շուշի քաղաք, «Արծուի Վասպուրական», Վարագ, 1862–1863, թիւ 4, էջ 104, 105:

⁴²⁷ **Արզամ**, Շուշի. 13 մայիսի, «Նոր Դար», թերթ, Թիֆլիս, 1886, մայիսի 20, №75, էջ 3: **Հեղինէ Մկրտչյան**, Շուշիի Կուսանաց անապատը // **Շուշին՝ հայկական մշակույթի օջախ**, Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2014 (–240 էջ), էջ 206, 209: Ի դեպ, Կուսանաց անապատի մասին **Իսրայել Մամիկոնյանցի** հաղորդած տեղեկությունները զեկուցման մեջ սխալմամբ վերագրվել են Գ. Մրվանձտյանցին, էջ 204, 205:

⁴²⁸ **Բ. Բահաթրեան**, Պատմութիւն կենաց, նշխարաց եւ եկեղեցոյ Սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, Հանեալ ի 10-րդ տետրակէն Ճառքաղին 1859 ամի, Ի Մոսքուա, Ի տպարանի Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1859 (–20 էջ):

⁴²⁹ **Եղիշէ (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց**, Ուղեգնացական ակնարկներ, էջ 5–7:

⁴³⁰ **Եղիշէ (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց**, Ուղեգնացական ակնարկներ, էջ 15: Առաջին պետական դումայի անդամ, Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի վարչության նախագահ, Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձու, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հայկական ինքնապաշտպանության ամենատանգուն անդամներից մեկը՝ բժիշկ Խ. Բահաթորյանը, ծանր հիվանդությամբ տառապելով, 1916 թ. վաթսու տարեկանում վերջ է տվել կյանքին, տե՛ս Ա. Փարեմուզեան, Բժ. Խ. Բահաթրեան, «Համբարաբեր», 1916, սեպտեմբերի 18, №38, սյունակ 1193, 1194:

⁴³¹ «Բահաթոր (Բահաթորյան) Եկատերինա Բեգարի» // ՀՀՀ, հ.1, Երևան, 1990, էջ 462:

Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց...»⁴³² (1874), «Մանանայ»⁴³³ (1876) և մյուս գրքերի հրատարակությունից հետո:

Կարծում ենք՝ բանագետներին կհետաքրքրի մեր ենթադրությունը, որ Բահայթյան եղբայրները Գարեգին Սրվանձտյանցի հետ ծանոթացել են նրա գրքերի տպագրությունից տարիներ առաջ՝ 1861թ., երբ նա 21 տարեկանում այցելել է Շուշի: Պարզաբանենք:

Վարազավանքի վանահայր, «Արծուի Վասպուրական» ամսագրի խմբագիր **Մկրտիչ վրդ. Խրիմյանը** (1820, Վան–1907, Ս. Էջմիածին) իր հիմնադրած Ժառանգավորաց վարժարանի սաների՝ Գարեգին Սրվանձտյանցի, Հրաչյա Սևիկյանի և Երեմիա Տևկանցի հետ 1860թ. նոյեմբերի 10-ին ուղևորվում է Ս. Էջմիածին: Այնտեղ կաթողիկոսից ստանալով հանգանակություն հավաքելու կոնդակ⁴³⁴՝ մոտ մեկ ամիս Թիֆլիսի եկեղեցիներում հայրենասիրական քարոզներ է կարդում, որոնք ջերմորեն են ընդունվում⁴³⁵: Նա նաև խիստ քննադատում է աշխարհիկ և հոգևոր իշխանություններին, որի պատճառով կաթողիկոսը հետ է վերցնում կոնդակը⁴³⁶:

Թիֆլիսից նա մեկնում է Գանձակ, այնուհետև՝ Շուշի, սակայն Ղարաբաղի թեմի կոնսիստորիայի ատենապետ Հակոբ Շահնազարյանին է հասնում կաթողիկոսի նամակը, որով հրահանգվում է **Մկրտիչ վրդ. Խրիմյանին** չհյուրընկալել և չթույլատրել քարոզել, այլ շտապ ուղարկել Ս. Էջմիածին. «Լուսք զԽրիմեան Մկրտիչ վարդապետն եկեալ այդր (ի Ղարաբաղ). պատուիրենք մի տալ տեղի մտանելոյ ՚ի քաղաք ձեր, և մի տալ իրատունս քարոզելոյ յեկեղեցիս ձեր. այլ վաղվադակի առաքեսցիք. – այսր յԷջմիածին...»⁴³⁷: Մ. Խրիմյանը վերադառնում է Ս. Էջմիածին:

⁴³² **Գրոց ու բրոց եւ Սասունցի Գաիթ կամ Մհերի դուռ**, Ծրագրեաց Գ. Վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս, տպագրութիւն Ե. Մ. Տստեսեան, 1874 (–192 էջ):

⁴³³ **Մանանայ**, ժողովեաց եւ ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս, տպագրութիւն Ե. Մ. Տստեսեան, 1876 (–458 էջ):

⁴³⁴ **Էմմա Կոստանդյան**, Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979 (–195 էջ), էջ 25: **Նույնի՝** Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, «Զանգակ-97», 2000 (–448), էջ 84:

⁴³⁵ **Գարեգին Մուրատեանց**, Մկրտիչ վարդապետ Խրիմեան Վանեցի. կամ Վասպուրական Արծիւր Թիֆլիզումը (նամակ), «Կոռնկ Հայոց աշխարհին», ամսագիր, Թիֆլիզ, 1860, թիւ 12, դեկտեմբեր, էջ 1003–1009:

⁴³⁶ **Էմմա Կոստանդյան**, Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, էջ 84–90:

⁴³⁷ Ուղեւորութիւն Մկրտիչ վարդապետի Խրիմեան ի Ռուսահայք, «Մեղու», հանդէս տասնօրեայ, Կ. Պոլիս, 1862, նոյեմբերի 10, թիւ 177, էջ 239: Ըստ պ. գ. դ. **Էմմա Կոստանդյանի՝** «Մեղու»-ի 1862թ. հոկտեմբերի 30-ի թիւ 176-ում, նոյեմբերի 10-ի թիւ 177-ում, նոյեմբերի 20-ի թիւ 178-ում և նոյեմբերի 30-ի թիւ 179-ում տպագրված վերոնշյալ արևելահայերեն անստորագիր հոդվածի հեղինակն իրականում **Գարեգին Սրվանձտյանցն** է, տես **Էմմա Կոստանդյան**, Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), էջ 26, **Նույնի՝** Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, 2000, էջ 88:

Արցախում անցկացրած նրա օրերի մասին **Գ. Սրվանձտյանը** 1862 թ. «Մեղու» տասնօրյա հանդեսում տպագրված անստորագիր հոդվածում գրում է. «Դու նստար Ղարաբաղում ութ օր և քարոզեցիր էստեղ ամեն օր: Դու գտար էստեղ մի խումբ ժողովուրդ, որոյ մէջ անարատ և առատ կը փայլէր Հայութեան ձիրքեր և բնատրութիւն և սովորութիւն: Նոցա մէջ տեսար ըստ ամենայնի ընդունակութիւն. արի և անվեհեր էր նոցա բազուկն և արիւն. իրաւ անուսում էին, բայց զգացող և շատ հասկացող. նոցա մանկունք ուշիմ, նոցա ծերեր առոյգ մարմին, խելացի հանճարով, փորձեալ գլուխներով, նոցա երիտասարդք հզօր և հնազանդ, միշտ պարկեշտութիւն իրենց քաջասրտութեան քօղ կը պահէին»⁴³⁸:

Մ. Խրիմյանը կողմնակից լինելով, որ ժողովրդի կրթության գործը հանձնվի աշխարհիկ ուսումնականներին⁴³⁹, հավանաբար **Գ. Սրվանձտյանցին** հանձնարարում է ուսումնասիրել Շուշիի թեմական դպրոցի փորձը, քանի որ 1860 թ. հունվարից այն ղեկավարում էին ընտրված 5 հոգաբարձուները, իսկ նրանց բացակայության դեպքում՝ «անձնափոխանորդները», այդ թվում՝ Բահաթրյան եղբայրների հայրը՝ **Բարա Բահաթրյանը**, նաև Իվան-բեկ Բահաթրյանը⁴⁴⁰:

21-ամյա Գարեգին Սրվանձտյանը, 1861 թ. առաջին կեսին **երեք ամիս** բնակվելով Շուշիում, «Մեղու»-ի նույն հոդվածում բավականին մանրամասն ներկայացնում է Շուշիի թեմական դպրոցի վիճակը. «Էս Շուշվայ ուսումնարանը կարծեմ նախ հոգետոր կառավարութեան ձեռքումն էր, որ անհոգի էին պահպանում. նորա եկամուտն ու արդիւնք ողջ իրանց ովկիանոս որովայնի մէջ էին ծրարում. բայց հիմայ աշխարհականք առին իրանց կառավարութեան տակը. հոգաբարձութեամբ կառավարում են, և գնալով գնալով արդիւնքը շատանում է օր ըստ օրէ...»⁴⁴¹:

1862–1863 թթ. «Արծուի Վասպուրական»-ի 4-րդ համարում «**Գ. Սրուանձտեանց, Աշակերտ Ժ. Վ. Վարազայ**» ստորագրությամբ հոդվածում ևս նա մանրամասն անդրադառնում է Շուշիի թեմական դպրոցին, որից ներկայացնում ենք հատվածներ. «Մեք անձամբ պատիւ ունեցանք Շուշուայ քաղաքը **երեք ամիս մնալու**. Եւ էստեղի Ազգայնոց մեծարանքը եւ սէրը վայելելու. նոցա խորհրդական եւ հրապարակական արիւններն մեր աչքն եւ ուշը գրաւած են. գրեթէ ամեն օր խորհուրդ էր, ամեն օր հոգացողութիւն էր միայն ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՈՒ-

⁴³⁸ Ուղեորութիւն Մկրտիչ վարդապետի Խրիմեան ի Ռուսահայք, «Մեղու», Կ. Պօլիս, 1862, նոյեմբեր 10, թիւ 177, էջ 238:

⁴³⁹ **Էմմա Կոնստանդյան**, Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, էջ 87:

⁴⁴⁰ **Լէօ**, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգետոր դպրոցի, էջ 244:

⁴⁴¹ Ուղեորութիւն Մկրտիչ վարդապետի Խրիմեան ի Ռուսահայք, «Մեղու», Կ. Պօլիս, 1862, նոյեմբեր 10, թիւ 177, էջ 238:

ՍՈՒՄՆԱՐԱՆ. քանիցս ճառեր կարդացուեցան. քանիցս ատենախօսութիւններ եղան. եւ ամեն խօսքի մէջ ամեն շունչի մէջ այս էր միայն. ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ, ո՞հ կ'իշեմ եւ կ'սիրեմ ես այն օրը, որ ուսումնարանի հոգաբարձութեան հաշիւը կ'ներկայացուցուէր հասարակութեան առաջ. փինսաչին ոսկերիչին հետ խառն էր կայնած. գեղացին իշխանին կուշտ կոյտէր եւ կտեղեկանայր թէ՛ իւր տուած արդիւնքն ինչ տեղ ծախս է եղեր. եւ ինչ շահ ունեցեր է. արդարեւ զարմացան եւ ամեն բերան կօրհնէր այս ժամանակը. կօրհնէր վեհափառ սրբազան Մատթէոս կաթողիկոսին կեանքը. կօրհնէր եւ նուիրական ջանքն. կօրհնէին եւ ուրախ էին յուսալով որ փութով կտեսնան իրենց որդիքը լուսաւոր եւ իմաստուն մարդիկ...»⁴⁴²:

Այդ ժամանակ թեմական դպրոցում կային մեկ նախապատրաստական եւ երկու հիմնական դասարաններ⁴⁴³: Ըստ դպրոցի կանոնադրոյան՝ այն պետք է ունենար 6 դասատուն՝ դասարան⁴⁴⁴: Առաջին դասարան կարող էին ընդունվել հայերեն վարժ գրել, կարդալ իմացող, թվաբանական չորս գործողութիւններ կատարող 10–12 տարեկանները, իսկ վերջին՝ 12–14, կամ 15-ից ոչ մեծ դիմորդները⁴⁴⁵:

Մեզ հայտնի չէ, թե 1861թ. առաջին կեսին Առաքել Բահաթրյանը կամ նրա ավագ եղբայրները՝ Ալեքսանդրը եւ Գրիգորը, սովորել են թեմական դպրոցում, այնտեղ հանդիպել են Գ. Սրվանձտյանցին: Միայն գիտենք, որ 1864թ. նոյեմբերի 12-ին Առաքելը երրորդ դասարանցի 9 աշակերտների թվում, ի պաշտպանություն տեսուչ Պետրոս Շանշյանի, հոգաբարձոյանը հասցեագրված նամակ է ստորագրել⁴⁴⁶:

Կարծում ենք՝ եղբայրներից ամենամեծը՝ 28-ամյա Ավետիքը (Ավետիս), որը զբաղվում էր տորոնի մշակույթամբ⁴⁴⁷, նաև գրքեր էր գրում, թարգմանում, կազմում բարբառային բառերի բառարան, ծանոթացել է Գ. Սրվանձտյանցի հետ,

⁴⁴² Գ. Սրուանձտեանց, Միւնեաց աշխարհ եւ Շուշի քաղաք, «Արծուի Վասպուրական», Վարազ, 1862–1863, թիւ 4, էջ 105, 106:

⁴⁴³ Մուշեղ Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, Հայպետումանկհրատ., 1964 (–448 էջ), էջ 415:

⁴⁴⁴ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 257:

⁴⁴⁵ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 261:

⁴⁴⁶ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 321, 322:

⁴⁴⁷ Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 268: «Տորոն (Rubia), 1. տորոնազգիների ընտանիքի բոյսերի ցեղ: Բազմամյա խոտաբոյսեր են, կիսաթփեր կամ ոչ բարձր թփեր: ...2. Տորոնաներկ, ներկատու տորոնի արմատներից ստացվող ներկանյութ: Բուրդը, գործաթելը, գործվածքը եւ մանրաթելերը ներկելու համար Հայաստանում օգտագործվում է վաղ ժամանակներից, որտեղից նաև արտահանվել է», տե՛ս Զ. Թատայան, «Տորոն» // ՀՍՀ, հ.12, Երևան, 1986, էջ 63:

քանի որ 1859թ. հունվարի 1-ից⁴⁴⁸ Շուշիում գործող **հանրային գրադարան-ընթերցարանի** կառավարիչներից⁴⁴⁹ էր և պարտականությունների բերումով, նաև որպես ընթերցող շատ հաճախ էր լինում այնտեղ:

Ենթադրում ենք՝ Բահաթրյան մյուս եղբայրները ևս գրադարանի մշտական այցելուներն էին, քանի որ գրքերի մեծ մասը ընտանեկան հավաքածուից հատկացրել էր իրենց հայրը («**Պ. Պապայ Բհաթուրեանց դրել է Ընթերցարանումն 400 հատոր գրեանք ընթերցանութեան համար**»⁴⁵⁰), որը որպես գրքասեր, երևի նույնպես հաճախում էր այնտեղ:

Շուշիում բնակված ամիսներին տարբեր վայրերում հրատարակվող թերթերը, ամսագրերն ու գրքերը կարդալու համար այս եզակի մշակութային օջախ պետք է որ բազմիցս այցելած լինի ընթերցասեր երիտասարդ Գ. Սրվանձտյանցը, որն այդ հանրային գրադարանը հիացմունքով է նկարագրում. «...այսպիսի ընկերական նուիրատույթեամբ սահմանած եւ հաստատած են այն հասարակաց գրատունը, ուր կստանան հայերէն ամէն լրագիրներ եւ ամսագիրներ. նմանապէս եւ Ռուսաց քաղաքական օրագիրներ, հայերէն գանազան գիրքեր, նոր հեղինակութիւններ, այլ կժողովին կկարդան եւ ունկնդրութիւն ու խորհրդածութիւն կանեն ժամանակին վերայ, ազգաց եւ ազգիս վերայ:

Ինչ գեղեցիկ միջոց է ժողովուրդ կրթելու եւ լուսատրելու համար. կցանկամք որ ուրիշ քաղաքներ էլ այսպիսի տեղ մի ունենան. ուր լուսատրութեան հետ եւ միութիւն կունենան, եւ միութեամբ ազգօգուտ բարիք. կցանկամք, որ Շուշի քաղաքն էլ անելի յառաջադէմ եւ յարատեւ լինի իւր սկզբմանց մէջ յօրինակ եւ ի նախանձ այլոց»⁴⁵¹:

Ամենայն հավանականությամբ Գ.Սրվանձտյանցը Շուշիում ապրած երեք ամիսների ընթացքում եկեղեցիներում, հասարակական վայրերում, քաղաքացիների հարկի տակ, մանավանդ հանրային ընթերցարան-գրադարանում կամ թեմական դպրոցում ծանոթացել է կրթօջախի հոգաբար-

⁴⁴⁸ **Աղէքսանդր Յովակիմեան Ծահագիզեանց Կամսարական**, Հասարակաց Մատենադարան Շուշի քաղաքումը, «**Կոունկ Հայոց աշխարհին**», Կ. Պոլիս, 1860, թիւ Բ, Փետրուար, էջ 148: **Հ. Սարոյաճեանց**, Շուշուայ Հայ հասարակութեան ընթերցարանին վերատեսչաց տարեկան ընտրութեան հանդիսին նկարագրութիւնը, «**Կոունկ Հայոց աշխարհին**», 1860, թիւ Է, Յուլիս, էջ 565:

⁴⁴⁹ **Հ. Սարոյաճեանց**, Շուշուայ Հայ հասարակութեան ընթերցարանին վերատեսչաց տարեկան ընտրութեան հանդիսին նկարագրութիւնը, էջ 568–570:

⁴⁵⁰ **Հ. Սարոյաճեանց**, Շուշուայ Հայ հասարակութեան ընթերցարանին վերատեսչաց տարեկան ընտրութեան հանդիսին նկարագրութիւնը, էջ 568:

⁴⁵¹ **Գ. Սրուանձտեանց**, Մինեաց աշխարհի եւ Շուշի քաղաք, «**Արծուի Վասպուրական**», Վարազ, 1862–1863, թիւ 4, էջ 107:

ձուների «անձնափոխանորդ»⁴⁵² Բաբա Բահաթրյանի և նրա որդիների հետ, որոնք գուցեև պատմել են իրենց բանահավաքչության մասին:

Ինչևէ, 1869 թ. փետրվարին Ավետիս Բահաթրյանն ընտրվում է թեմական դպրոցի հոգաբարձուների կազմում⁴⁵³, իսկ նոյեմբերին՝ այսինքն հիմնադրումից շուրջ տասը տարի անց, արդեն գործունեությունը դադարեցրած նշանավոր ընթերցարանի ամբողջ գույքը, տարբեր լեզուներով գրքերն ու մամուլի հավաքածուները նվիրվում են թեմական դպրոցին, որը ստեղծում է իր գրադարանը⁴⁵⁴:

Ահա այստեղ՝ գրադարանում է 1903 թ. թեմականի երիտասարդ ուսուցիչ Հրայր Աճառյանը առաջին անգամ հանդիպում արդեն 70-ամյա Ավետիք (Ավետիս) Բահաթրյանին, որի հետ այնուհետև ամիսներ շարունակ աշխատում են Ղարաբաղի բարբառի բառարանի վրա⁴⁵⁵:

Զարմանալի է, որ Շուշիի թեմական դպրոցին նվիրված Լեոյի (1860, Շուշի–1932, Երևան) մոտ 700 էջանոց գրքում չեն օգտագործվում **Գ. Սրվանձտյանցի** վկայությունները:

Նշենք, որ պատմական գիտ. թեկնածու (1999-ից՝ դոկտոր) **Էմմա Կոստանդյանի** (1934, Կիրովական, այժմ՝ Վանաձոր–2015, Երևան) «**Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը)**» (1979) մենագրության մեջ ևս անդրադարձ չկա Գ. Սրվանձտյանցի՝ Շուշիում անցկացրած երեք ամիսներին: Գրքում Մ. Խրիմյանի և նրա սաների՝ Էջմիածին, Թիֆլիս, Շուշի այցելությանը մեկ էջից քիչ ավելի է հատկացված⁴⁵⁶:

Այն վերահրատակվել է 2008 թ.: Այդ առթիվ հեղինակը գրել է. «Ամենևին չթերագնահատելով Սրվանձտյանցի մասին գրված գիտական բազմաթիվ արժեքավոր հոդվածները, այս աշխատությունը մինչև օրս մնում է միակ համապարփակ ուսումնասիրությունը մեծ բանագետի, բանահավաքի, ազգագրագետի, ժամանակի ակնավոր հասարակական-քաղաքական գործչի, հայ առաքելական եկեղեցու նվիրյալ հոգևորականի մասին: Մոտ 40 տարի⁴⁵⁷ առաջ հրատարակված այս հետազոտության կարիքն այսօր շատ է զգացվում: ...Այստեղ կատարվել են որոշ խմբագրական փոփոխություններ և ավելացվել է գիտաժողովում կարդացված երկու զեկուցում...»⁴⁵⁸:

⁴⁵² ԼԷՕ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 244:

⁴⁵³ ԼԷՕ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 355:

⁴⁵⁴ ԼԷՕ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 353:

⁴⁵⁵ Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 267–271:

⁴⁵⁶ Էմմա Կոստանդյան, Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979 (–195 էջ), էջ 25, 26:

⁴⁵⁷ Իրականում՝ 29 տարի–Ս. Վ.:

⁴⁵⁸ Էմմա Կոստանդյան, Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Երևան, ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008 (–200 էջ), էջ 3:

Ցավոք, այդ խմբագրական փոփոխություններն ու լրացումները չեն առնչվում Շուշիում Գ. Սրվանձտյանցի ապրած ամիսներին⁴⁵⁹:

Է. Կոստանդյանը Մ. Խրիմյանի և սաների 1860–1861 թթ. ուղևորության ավելի մեծ տեղ է նվիրել **«Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը»** (2000)⁴⁶⁰ աշխատության մեջ, բայց Շուշիում լինելուն՝ ընդամենը մի քանի տող, առանց Գ. Սրվանձտյանցի անվան հիշատակության⁴⁶¹:

Բանասիրական գիտ. թեկնածու Նազիկ Հարությունյանի **«Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը)»** (1992)⁴⁶² հետազոտության մեջ ևս Գ. Սրվանձտյանցի Շուշիում բնակված ամիսների և Բահաթրյան եղբայրների հետ հնարավոր ծանոթության մասին ոչինչ չկա:

Գրող, հրապարակախոս Բակուր Կարապետյանի 2000թ. լույս տեսած **«Շուշի բերդաքաղաքը (Պատմությունը մինչև 1920 թ.)»** ուսումնասիրության մեջ ևս Բահաթրյանների բանահավաքչության և Գ. Սրվանձտյանցի մասին չի խոսվում⁴⁶³:

Պատմական գիտ. թեկնածու Մարինե Հարությունյանի (Ստեփանակերտ) **«Մշակութային կյանքը Լեոնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին»** (2010)⁴⁶⁴ գրքում նույնպես Գ. Սրվանձտյանցի՝ Շուշի այցը չի նշվում:

Բանասիրական գիտ. թեկնածու Արմեն Յ. Սարգսյանը (Ստեփանակերտ) թեև իր **«Արցախի բանահյուսությունը»** (2015) ժողովածուի ներածությունում անդրադառնում է «շուշեցի նշանավոր մտավորականներ Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյաններ»-ին⁴⁶⁵, սակայն Գ. Սրվանձտյանցի կենսագրության արցախյան էջը չի հիշատակում:

⁴⁵⁹ **Էմմա Կոստանդյան**, Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), 2008, էջ 23, 24:

⁴⁶⁰ **Էմմա Կոստանդյան**, Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, էջ 84–92:

⁴⁶¹ **Էմմա Կոստանդյան**, Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, էջ 90:

⁴⁶² **Նազիկ Հարությունյան**, Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը), Երևան, ԵՊՀ հրատ., 1992 (–120 էջ):

⁴⁶³ **Բակուր**, Շուշի բերդաքաղաքը (Պատմությունը մինչև 1920 թ.), ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, ԵՊՀ հրատ., 2000 (–350 էջ):

⁴⁶⁴ **Մարինե Հարությունյան**, Մշակութային կյանքը Լեոնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս հրատ., 2010 (–160 էջ + 4 թերթ ներդիր):

⁴⁶⁵ **Արմեն Յ. Սարգսյան**, Արցախի բանահյուսությունը, ՀՀ մշակույթի նախարարություն, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, Երևան, 2015 (–748 էջ), էջ 11:

Բանագետ և բանահավաք, բանասիրական գիտ. դոկտոր Թամար Հայրապետյանը ևս, իր «**Արքեոիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ**» (2016) աշխատության 1-ին Հավելվածում հակիրճ անդրադառնալով Բահաթրյանների հավաքածուին⁴⁶⁶, չի քննարկում Գ. Սրվանձտյանցի հետ նրանց ծանոթության հավանականության հարցը:

Պատմական գիտ. դոկտոր Վահրամ Բալայանի (Ստեփանակերտ) «**Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում**» (2017)⁴⁶⁷ մենագրության մեջ թեև հիշատակվում են Բահաթրյանները, բայց Գ. Սրվանձտյանցը՝ ոչ:

Ինչևիցե, կրկին վերադառնանք Բահաթրյան եղբայրների բանահավաքչությանը:

Քանի որ նրանք, ինչպես գրված է տետրերի վրա, բանահյուսական գրառումները սկսել և ավարտել են միաժամանակ՝ 1860թ. մայիսի 6-ին և օգոստոսի 6-ին (թեև այլ ամիսներին էլ քիչ քանակությամբ նյութեր են հավաքել), ուստի կարելի է ենթադրել, որ այն եղել է պայմանավորվածությամբ, ընդհանուր որոշմամբ, կամ նրանց հանձնարարել, հորդորել է իրենց հայրը՝ Բաբա Բահաթրյանը, որը, ինչպես նշել ենք, գրքասեր էր և ընտանեկան մեծ գրադարան էր ստեղծել, կամ իրենց ավագ եղբայրը՝ **Ավետիք (Ավետիս) Բահաթրյանը**, որը 1860-ին 27 տարեկան էր:

Հրայա Աճառյանը Ավետիք Բահաթրյանի մասին գրում է, որ նա 1860-ական թվականներին կազմել էր 50 հազար բառ ընդգրկող բառարան, որի մեջ կային նաև Ղարաբաղի բարբառով բառեր⁴⁶⁸: Իր «**Առակագիրք**»⁴⁶⁹ (1886) ժողովածուի շապիկի 3-րդ էջում Ավետիք Բահաթրյանը տեղեկացնում է, որ «հանգամանքների ներելուն չափ պիտի հետզհետե տպագրութեան յանձնուին» 6 գրքեր, այդ թվում՝ Շեքսպիրի «**Լիր թագաւոր**»-ի, Հորացիոսի՝ «**Որաստիոսի Քերթողական արուեստը**», «Հոմերոսի Իլիականից մէկ քանի գրքերի թարգմ. հին հայկական վիպասանական վանկաչափով, հանդերձ կարևոր ծանոթագրութեամբ և բացատրութեամբ», «**Առակագիրք**», «**Բառգիրք Ղարապաղու**

⁴⁶⁶ **Թամար Հայրապետյան**, Արքեոիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, էջ 392, 393:

⁴⁶⁷ **Վահրամ Բալայան**, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Արցախի գիտական կենտրոն և Արցախի պետհամալսարան, Երևան, «Զանգակ» հրատ., 2017 (–560 էջ + 32 էջ ներդիր):

⁴⁶⁸ **Հրայա Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, Հայպետհրատ, 1951 (–610 էջ), էջ 545, 546:

⁴⁶⁹ **Ա. Բահաթրեանց**, Առակագիրք, ինքնագիր եւ թարգմանածոյ առակներ եւ երգեր ժողովրդական լեզուով գրուած, Շուշի, տպ. Միրզաջան Մահտեսի Յակոբեանցի, 1886 (–162 էջ):

գաւառական բարբառի և նորա քերականական կազմութիւնը», նաև նախաքրիստոնէական շրջանի հայերի գրականության և կրոնի մասին գիրք:

Սակայն, նրա անտիպ թարգմանություններն ու աշխատությունները, նաև հին հայերեն ութ ձեռագրերը, այդ թվում՝ **Գրիգոր Տաթևացու** ձեռամբ գրված մատյանը, հետագայում ոչնչացան նրա տան հրդեհի ժամանակ⁴⁷⁰:

1891թ. տպագրված Ավետիք Բահաթրյանի «**Հին հայոց տաղաչափական արուեստը**»⁴⁷¹ գրքի 124-րդ ազատ էջի վրա **Եղիշե Չարենցը**, հավանաբար 1937 թ., գրել է ընդարձակ մակագրություն, այն անվանելով «**հանճարեղ և զարմանալի**» գիրք, «**զարմանալի հանք է՝ գտնված հանճարեղ բնագրի տեր հեղինակի կողմից**»⁴⁷² :

Ի դեպ, Հրայցա Աճառյանն իր «**Կյանքիս հուշերից**» (1967) գրքում մի քանի էջ է նվիրել նրան «**Ավետիս Բահաթրյանի հետ**»⁴⁷³ վերնագրով: **Հրայցա Աճառյանը** 27 տարեկանում Շուշիում աշխատելիս ամիսներ շարունակ այցելել է **Ավետիս Բահաթրյանին**, համագործակցել նրա հետ, նաև Ղարաբաղի բարբառի բառարանից բառեր դուրս գրել⁴⁷⁴: 1913թ. լույս տեսած իր «**Հայերէն գաւառական բառարան**» գրքում նա նույնիսկ գրում է այդ բառերի թիվը. «Ա. Բահաթրեանց տուաւ 1000 բառ Ղարաբաղէն»⁴⁷⁵:

Հավանաբար, այսպիսի բազմակողմանի զարգացած ավագ եղբոր խորհուրդներով, գուցեև աջակցությամբ են կրտսեր Բահաթրյանները 1860 թ. սկսել Ղարաբաղի բարբառով բանահյուսություն գրառել:

Բայց դրան նախորդել են իրադարձություններ, որոնք հնարավոր է՝ նպաստել են բանահավաքչությանը զբաղվելու Բահաթրյանների որոշմանը: «**Մեղու Հայաստանի**» շաբաթաթերթի 1859թ. վերջին՝ դեկտեմբերի 26-ի համարում տպագրվել է «**Ազգային աշխարհօրէն առածից (մասալէքի) վրայ**» ոչ մեծ հոդվածը: Հեղինակը՝ այգեհատցի «Գրիգոր Տէր Յարութիւնեան Կիրակոսեանց»-ը գրում է բանահյուսություն գրառելու կարևորության մասին, բերում եվրոպացի և

⁴⁷⁰ **Հրայցա Աճառյան**, Կյանքիս հուշերից, էջ 270: **Նույնի՝** Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 546:

⁴⁷¹ Հին հայոց տաղաչափական արուեստը: Քննական տեսութիւն **Աւետիքայ Բահաթրեան**, Շուշի, Միրզաջան Մահտեսի Յակոբեանցի տպարանում, 1891 (–138 էջ):

⁴⁷² **Ավետիք Բահաթրյան**, Հին հայոց տաղաչափական արվեստը: Քննական տեսություն (Առաջաբանը՝ **Էդ. Զրբաշյանի**), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1984 (–XXX-IV+ 140 էջ), էջ V: Տիտղոսաթերթի երկրորդ երեսին գրքի էջերի թիվը նշված է 185 էջ, իրականում գիրքը 174 էջ է:

⁴⁷³ **Հրայցա Աճառյան**, Կյանքիս հուշերից, էջ 267–271:

⁴⁷⁴ **Հրայցա Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 546:

⁴⁷⁵ **Հր. Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան, 1913, էջ 18: Հ. Աճառյանը, որի կինը Շուշիից էր, նույն տեղում երախտապարտորեն նշում է. «Կինս՝ Արուսեակ Աճառեան 717 բառ Ղարաբաղէն (նախորդ հաւաքածուներէն և իմ հաւաքած բառերէն դուրս՝ բոլորովին նոր բառեր)»:

նուս բանահավաքների օրինակը, բարբառով ներկայացնում հայրենի Լոռիում և Այգեհատ գյուղում հավաքած 102 առած-ասացվածքները և հայտնում իր նպատակը. «...որ ուրիշներն էլ իրանց գիտցածն գրեն ու չթողան կորչի էսպէս բանը, որից որ երևում է ազգի բուն լեզուն ու բնատրուրթինը»⁴⁷⁶:

Թերթի նույն համարում «Մանրավէպք» խորագրի ներքո տպագրվել է «Յիմարութիւնը իւր սիրողին պատժում է»⁴⁷⁷ հեքիաթը: Այն խոսքի (կարծիք, մաղթանք, օրհնանք, անեծք) և գործողությունների տեղի, ժամանակի ու հանգամանքների անհամապատասխանությունների մասին հայերի և այլ ժողովուրդների մեջ տարածված մի բանահյուսական սյուժեի տարբերականներից է, որն առանց աղբյուրը նշելու գրական արևելահայերենի է վերածել գանձակեցի «Եղիշէ Տէր Սարգսեան Տէր Ազարեանց»-ը:

Շատ ավելի նշանակալից էր հաջորդ ամսվանից սկիզբ առնող իրադարձությունը: 1860 թ. հունվարից Թիֆլիսի «Կոունկ Հայոց աշխարհին» նորաստեղծ ամսագիրը սկսում է հրատարակել 23-ամյա Պերճ Պոռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպը⁴⁷⁸, որն աչքի էր զարնում ժողովրդական լեզվամտածողությամբ, ազգագրական և բանահյուսական նյութերի առատությամբ. այսպէս, երիտասարդ հեղինակը մայիսի համարում վեպի ընթերցողներին է ներկայացնում Անձրևաբեր ծեսը, Համբարձման տոնը և երգվող ժողովրդական խաղիկները, հունիսին՝ Վարդավառը և այլն:

Հետաքրքրական է, որ 1860 թ. փետրվարից Առաքել Բահաթրյանը ևս «երգեր, ջանգյուլումներ, սովորություններ»⁴⁷⁹ է գրառել, որոնք ցայսօր անտիպ են, և որոնց գտնվելու վայրը մեզ անհայտ է:

⁴⁷⁶ Գրիգոր Տէր Յարութիւնեան Կիրակոսեանց, Ազգային աշխարհօրէն առածից (մասալէքի) վրայ, «Մեղու Հայաստանի», Դ Թիֆլիզ, 1859, դեկտեմբերի 26, համար 52, էջ 413:

⁴⁷⁷ Եղիշէ Տէր Սարգսեան Տէր Ազարեանց, Յիմարութիւնը իւր սիրողին պատժում է, «Մեղու Հայաստանի», 1859, դեկտեմբերի 26, համար 52, էջ 415:

⁴⁷⁸ Պերճ Պոռոշեանց, Սոս և Վարդիթեր, «Կոունկ Հայոց աշխարհին», ամսագիր, Թիֆլիզ, 1860, թիւ Ա, էջ 33–52, թիւ Բ, էջ 111–130, թիւ Գ, էջ 199–225, թիւ Ե, էջ 359–389, թիւ Զ, էջ 448–479, թիւ Ը, էջ 630–654, թիւ Թ, էջ 696–744, թիւ Ժ, էջ 810–831:

⁴⁷⁹ ՀԱԱ 484-րդ ֆոնդում պահվող մատյանի («Տ. Նավասարդյանի, Ս. Շալջյանի և Ն. Նիկողոսյանի գրառած և արտագրած բանահյուսական և ազգագրական նյութեր ամփոփող գործերի ցուցակներ») Տ. Նավասարդյանի հավաքածուն ներկայացնող բաժնում թանաքով գրված են Բահաթրյան եղբայրների գրառած հեքիաթների և զվարճապատումների վերնագրերը, ուստի կարծում ենք՝ մատյանը լրացվել է 1960-ականների կեսերից առաջ, երբ դեռ չէին կիրառվում գնդիկավոր գրիչներ: Նույն բաժնում՝ 23-րդ համարի դիմաց նշված է. «Խաղեր, երգեր, ջանգյուլումներ, սովորություններ: Հավաքել է Առաքել Բահաթրյանը. 1860, 20 փետրվարի մինչև 1861 թ. Ղարաբաղի բարբառով: Ընդամենը՝ 13 էջ», ֆ. 484, ց. 1, գ. 15, թ. 27: Ցավոք, նման 13 էջանոց գրառում Տ. Նավասարդյանի նյութերի հետ 1992 թ. ՀԱԱ չի հանձնվել: Տե՛ս նաև՝ Էսթեր Խեմչյան, Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները), էջ 337-339:

Իսկ ապրիլի համարում ամսագիրը՝ «**Հավաքածու ազգային ասացուածոց: Ազգային բարոյական առածներ**» վերնագրով, տպագրել է «**ուսումնասէր պատանի**» Միքայել Քոչարյանցի Թիֆլիսի Հավլաբար թաղամասի հայերից ժողոված և այբբենական կարգով դասավորած 454 առած-ասացվածքներից 232-ը⁴⁸⁰, հույս հայտնելով. «**յիշեալ Միքայել Քոչարեանց ուսումնասէր պատանոյն օրինակին հետևելով՝ մեր սիրելի ազգայիններից շատերը այս օրինակ առածների և ուրիշ հայկական ասացուածների հաւաքածուներ օրագրիս հաղորդեն Հայաստանի զանազան կողմերից, որով ազգիս գրականութեանը մի շահեկան ծառայութիւն կանեն**»⁴⁸¹:

Իմբագրության խոսքում չի նշվում, թե Միքայել Քոչարյանցը ո՞ր դպրոցում, ո՞ր դասարանում է սովորում:

Նրա և նրա եզակի հավաքածուի մասին ոչ մի հիշատակություն չկա նաև Արամ Ղանալանյանի «**Առածանի**»⁴⁸² աշխատության մեջ:

Կարծում ենք՝ **պատանի Միքայել Քոչարյանցի** օրինակը կարող էր ոգևորել **պատանի Առաքել Բահաթրյանին ու եղբայրներին** և ևս մեկ խթան հանդիսանալ, որ մայիսից իրենք էլ բանահավաքչությամբ զբաղվեին:

Ի դեպ, տասնամյակներ անց թղթին հանձնած իր հուշագրության մեջ Հ. Աճառյանը գրում է, որ Ավետիս Բահաթրյանը «**երկու որդի ուներ՝ Առաքել և Բահաթուր: Առաջինը հայտնի գրող է...**»⁴⁸³: Ըստ երևույթին շփոթմունքի առիթ է սովել այն, որ ավագ եղբայրը՝ **Ավետիսը, Առաքելից** շուրջ 15 տարի մեծ էր: Բահաթուր Բահաթրյանը (1872, Շուշի–1934, Երևան) ճանաչված մաթեմատիկոս էր, 1896-ին ավարտել էր ժնևի համալսարանը, դասավանդել էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Երևանի պետհամալսարանում⁴⁸⁴:

Ինչպես արդեն նշել ենք, եղբայրներից ամենից շատ՝ 33 բանահյուսական պատում հավաքել է ամենակրտսերը՝ **12 տարեկան Առաքել Բահաթրյանը**: Նա նաև աչքի ընկնող աշակերտ է եղել Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև՝ առաջադեմ ուսանող՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որի դասախոսներից նշանավոր հրապարակախոս Ստեփանոս Նազարյանցի և Պետերբուրգի համալսա-

⁴⁸⁰ **Միքայել Քոչարեանց**, Հավաքածու ազգային ասացուածոց: Ազգային բարոյական առածներ, «**Կռունկ Հայոց աշխարհին**», 1860, թիւ Դ, ապրիլ, էջ 307–315: Մնացած 222 առած-ասացվածքները նույնպես տպագրվել են նույն ամսագրում, 1860, թիւ Ժ, հոկտեմբեր, էջ 804–809:

⁴⁸¹ **Միքայել Քոչարեանց**, Հավաքածու ազգային ասացուածոց: Ազգային բարոյական առածներ, «**Կռունկ Հայոց աշխարհին**», 1860, թիւ Դ, ապրիլ, էջ 308:

⁴⁸² **Արամ Ղանալանյան**, Առածանի, ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ, Երևան, ԳԱ հրատ., 1960 (–C = 90 էջ + 398 էջ):

⁴⁸³ **Հրայա Աճառյան**, Կյանքիս հուշերից, էջ 268:

⁴⁸⁴ **Հրայա Աճառյան**, Կյանքիս հուշերից, էջ 268, 269: «Բահաթրյան Բահաթուր Ավետիսի» // **Հայկական համառոտ հանրագիտարան**, հ. 1, էջ 461, 462:

րանի արևելյան լեզուների ամբիոնի վարիչ Քերովբե Պատկանյանի աջակցությամբ 1874թ. մեկնում է Գերմանիա՝ Հայդելբերգի ու Լայպցիգի համալսարաններում պետական կրթաթոշակով երկու տարի մանկավարժություն ուսանելու⁴⁸⁵:

1876թ. աշնանը նա վերադառնում է Ռուսաստան և նշանակվում Սիմֆերոպոլի թաթարական ուսուցչական սեմինարիայի տեսուչ, որտեղ ընկերանում է «Ծիծեռնակ» երգի հեղինակ Գևորգ Դոդոխյանի հետ, որը ռուսերեն էր դասավանդում: Շուտով Ա.Բահաթրյանի ջանքերով հիմնվում է հասարակական գրադարան-ընթերցարան⁴⁸⁶:

Տարբեր քաղաքների դպրոցներում աշխատած տարիներին նա նորարար մանկավարժ էր, ինչը վկայում են նրա կարճ կյանքի ընթացքում հրատարակված շուրջ երկուսուկես տասնյակ մանկավարժական գրքերն ու գրքույկները, հոդվածները⁴⁸⁷:

Ինչպես արդեն նշվել է, Բահաթրյան երեք եղբայրների տետրերը մեզ են հասել բանահավաք, թարգմանիչ, բառարանագիր և հեքիաթների հրատարակիչ **Տիգրան Նավասարդյանի** (1861, Վաղարշապատ–1927, Թիֆլիս) ֆոնդում պահվող՝ տարբեր մարդկանց հավաքած ազգագրական և բանահյուսական նյութերի միատեղ կազմված ժողովածուի միջոցով⁴⁸⁸:

Տիգրան Նավասարդյանը Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի (1770, Աշտարակ–1857, Վաղարշապատ) քրոջ թոռը⁴⁸⁹ կամ, որ ավելի հավանական է, ծոռն էր:

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում որպես որդեգիր ուսանելու տարիներին Վաղարշապատ արձակուրդ գալիս 1876 թվականից, երբ 15 տարեկան էր, իր ազգական, երիտասարդ բժիշկ և հասարակական գործիչ **Բագրատ Նավասարդյանի** (1852, Վաղարշապատ–1934, Թիֆլիս) խորհրդով զբաղվել է բանա-

⁴⁸⁵ **Պրոֆ. Ա. Շավարշյան**, Առաքել Բահաթրյանի մանկավարժական գործունեությունը և հայացքները, Երևանի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտ, մանկավարժական ամբիոն, ձեռագրի իրավունքով, Երևան, 1956 (–20 էջ), էջ 7:

⁴⁸⁶ **Պրոֆ. Ա. Շավարշյան**, Առաքել Բահաթրյանի մանկավարժական գործունեությունը և հայացքները, էջ 7:

⁴⁸⁷ **Պրոֆ. Ա. Շավարշյան**, Առաքել Բահաթրյանի մանկավարժական գործունեությունը և հայացքները, էջ 15–17: **Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ (կենսաբիբլիոգրաֆիական ծանոթագրություններով)**, կազմեց. **Հովհ. Պետրոսյան**, ՀՍՍՌ Պետգրապատ, Երևան, 1960 (–540 էջ), էջ 56, 57: **Նագիկ Հարությունյան**, Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը), Երևան, 1992, էջ 106–108:

⁴⁸⁸ **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Արցախ, Ուտիք, հ. VI, էջ 705:

⁴⁸⁹ **Սվետլանա Վարդանյան**, Տիգրան Նավասարդյանը բանագետ-բանահավաք, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1974, №5, էջ 42: **Светлана Варданян**, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику // **Армянская этнография и фольклор, материалы и исследования**, т. 18, Институт археологии и этнографии АНА, Ереван, издательство АН Армении, 1991, с. 1–58 (–150 с.), с. 10.

հավաքչությամբ⁴⁹⁰: Նա, սիրահարվելով հայկական բանահյուսությանը, ամբողջ կյանքն անդավաճան նվիրեց իր սիրուն: Երևի այդ սիրո արտահայտություններից էր և այն, որ 1907 թ., երբ արդեն 46-ամյա հասուն այր էր, ամուսնացավ Գևորգյան ճեմարանի դասախոս, բանաստեղծ **Հովհաննես Հովհաննիսյանի** քրոջ՝ **Աշխենի** հետ, որից Վաղարշապատում հեքիաթներ էր գրառում⁴⁹¹:

Տ. Նավասարդյանի գրառած, նաև նրան ուղարկված բանարվեստի նմուշները, որոնք 1882–1903 թթ. ընդգրկվել են նրա «**Հայ-ժողովրդական հեքիաթներ**» տասը ժողովածուներում, ինչպես նաև պատրաստված, բայց չհրատարակված տասնմեկերորդում, նրա արխիվում պահվող անտիպ ժառանգության մեծ մասի հետ տպագրվել են Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի լույս ընծայած «**Հայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի երկրորդ և երրորդ հատորներում⁴⁹²:

Սակայն վերադառնալով 1870-ական թվականների վերջը: **Տիգրան Նավասարդյանը** Միքայել Նալբանդյանի նկարը և «Ազատն Աստված» բանաստեղծությունը տարածելու նպատակով 500 օրինակ բազմացնելու մեղադրանքով 1879 թ. ձերբակալվում է և դատապարտվում վեցամյա բանտարկության Թիֆլիսի Մետեխի բանտում⁴⁹³: Այդ ժամանակ նա 18 տարեկան էր⁴⁹⁴:

Բայց շուտով բժիշկ Բագրատ Նավասարդյանի ջանքերի շնորհիվ հաջողվում է նրան բանտից տեղափոխել հոգեբուժարան, որտեղից էլ դուրս է գրվում 1880 թ.⁴⁹⁵: Այդ ծանր ամիսների մասին Տիգրան Նավասարդյանի գրած երկու ձեռագիր գրքույկները պահվում են Հայաստանի ազգային արխիվում⁴⁹⁶:

⁴⁹⁰ **Светлана Варданян**, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику, с. 12.

⁴⁹¹ **Светлана Варданян**, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику, с. 14:

⁴⁹² **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. II, ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս **Հովսեփ Օրբելու**, հատորը պատրաստեց և նախաբանը գրեց **Ա. Մ. Նազինյանը**, ՀՍՍՌ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959 (-660 էջ): **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. III, ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս **Հովսեփ Օրբելու**, հատորը պատրաստեց և նախաբանը գրեց **Ա. Մ. Նազինյանը**, ՀՍՍՌ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962 (-672 էջ):

⁴⁹³ **Սվետլանա Վարդանյան**, Տիգրան Նավասարդյանը բանագետ-բանահավաք, էջ 43: **Светлана Варданян**, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику, с. 12, 13:

⁴⁹⁴ Բանագետ և բանահավաք, բանասիրական գիտ. թեկնածու **Սվետլանա Վարդանյանը** (1940, ԼՂԻՄ, Հաղորթ–2020, Երևան) Տիգրան Նավասարդյանի նվիրված իր ուսումնասիրության մեջ սխալմամբ նշում է. «Пятнадцатилетний юноша оказался в Метехской тюрьме» («Տասնհինգամյա պատանին հայտնվեց Մետեխի բանտում»), ինչը, կարծում ենք, անուշադրության հետևանք է, տե՛ս **Светлана Варданян**, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику, с. 13.

⁴⁹⁵ **Светлана Варданян**, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику, с. 13.

⁴⁹⁶ ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 4, I մաս, II մաս:

Բագրատ Նավասարդյանը կամավոր մասնակցել էր 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, իսկ 1878 թ. Վաղարշապատում անվճար բուժում ու խնամում էր գաղթականներին: Նա նախատիպ է ծառայել **Բաֆֆու** «Խենթը» վեպի բժշկապետի, «Ոսկի աքաղաղի» Ստեփանի և «Կայծերի» Ապանի կերպարների համար⁴⁹⁷:

28-ամյա բժիշկ **Բագրատ Նավասարդյանն** ի նպաստ աղքատների՝ 1880-ին Թիֆլիսում հիմնել է Կովկասում առաջին անվճար բուժարանը, մեկ տարի անց՝ **Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը**, որը չորս տասնամյակ՝ մինչև 1921 թվականն իր հիվանդանոցներով, դպրոցներով, որբանոցներով, դեղատներով ու անվճար ճաշարաններով անգնահատելի ծառայություն է մատուցել հայ ժողովրդին⁴⁹⁸: Ահա, այսպիսի բացառիկ հայորդու բազմաթիվ լավ գործերից մեկն էլ քաղաքական բանտարկյալ **Տիգրան Նավասարդյանին** Մետեխի տխրահոչակ բանտից ազատելն է եղել:

Տիգրան Նավասարդյանն իր հավաքած բանահյուսական նյութերով 21 տարեկանում՝ 1882 թ., Վաղարշապատում հրատարակում է «**Հայ ժողովրդական հեքիաթների**» առաջին, իսկ Երևանում՝ երկրորդ հատորը:

Թե այդ երկու գրքույկների տպագրությունն ինչ մեծ արձագանք է գտել, վկայում է այն, որ նույն թվականին լույս տեսած **Բաֆֆու** նշանավոր «**Խամսայի մեկիքությունները**» գիրքն ավարտվում է տարբեր կազմակերպությունների անգործության քննադատությամբ և Տ. Նավասարդյանի գովեստով. «...Մեզանում ընկերությունները կազմվում են ոչ թե գործ կատարելու համար, այլ գործը սպանելու համար: Իսկ մասնավոր մարդիկ իրանց եռանդով, անձնավիրությամբ, տոկոսությամբ ավելի են գործում, ավելի արդյունք են ցույց տալիս, քան թե մի ամբողջ ընկերություն:

Ինձ համար ավելի մեծ նշանակություն ունի մի երիտասարդ Նավասարդյանցի աշխատությունը, որը աղքատ, ամեն միջոցներից զուրկ, բայց սիրտը լի եռանդով դերվիշի նման ոտքով ման է գալիս հայոց գյուղերը, մտնում է ժողովրդի ամեն ծալքերի մեջ, հեքիաթներ է հավաքում և մեր զավակներին ընթերցանության տետրակներ է տալիս: Բայց ինչ է շինում հայոց գրքերի տպագրական ընկերությունը, – ոչ ոք չգիտե»⁴⁹⁹:

⁴⁹⁷ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, 12 հատորով, հատոր չորրորդ, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց **Խ. Սամվելյանը**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1984 (– 464 էջ), էջ 446, 447: Բժիշկ Բ. Նավասարդյանի հայրը՝ Աբրահամ աղան, Վաղարշապատում բնակվող հարուստ առևտրական և կալվածատեր էր, տե՛ս նույն տեղում, էջ 447, 461:

⁴⁹⁸ «Կովկասի հայոց բարեգործական ընկերություն» // ՀՀՀ, հ. 2, Երևան, 1995, էջ 746, 747: Նավասարդյան Բագրատ Աբրահամի» // ՀՀՀ, հ. 3, Երևան, 1999, էջ 856: Բարեգործական ընկերության գործունեության մանրամասները տե՛ս **ԼԷՕ**, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, 1881–1911, Թիֆլիս, տպարան Մ. Մարտիրոսեանցի, 1911 (– VIII + 360 էջ):

⁴⁹⁹ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, Ուղեգրություններ, պատմական երկեր, IX հատոր, էջ 625:

Իսկ ինչպե՞ս են Բահաթրյանների տետրերը հայտնվել Տ. Նավասարդյանի մոտ: 1973թ. ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի լույս ընծայած «**Հայ ժողովրդական հեքիաթների**» VI հատորի շատ արժեքավոր ծանոթագրությունների բաժնում այդ հարցի պատասխանը չկա. «Թե երբ և ում կողմից է հանձնվել Բահաթրյանների հեքիաթների ձեռագիր ժողովածուն Տ. Նավասարդյանցին, որոշակի տեղեկություն չունենք»⁵⁰⁰:

Տասը տարի անց՝ 1983թ., նույն ինստիտուտի հրատարակած «**Հայ ազգագրություն և բանահյուսություն**» մատենաշարի՝ Արցախին նվիրված 15-րդ հատորի հեղինակ, վաստակաշատ բանահավաք և բանագետ, բանասիրական գիտ. թեկնածու **Ալվարդ Ղազիյանը** (1930, Իջևանի շրջ., գ. Սարիգյուղ–2017, Երևան), իրավացիորեն եզրակացնում է. «Առաքել Բահաթրյանը Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս (1881–1882 թթ.) արձագանքելով երիտասարդ բանահավաք-հրատարակիչ Տիգրան Նավասարդյանի կոչին՝ նրան է հանձնում վերոհիշյալ գրառումները»⁵⁰¹: Ցավոք, Ալվարդ Ղազիյանի հղած «**Հայ-ժողովրդական հեքիաթների**» ութերորդ հատորի (1894թ.) ծանոթագրության մեջ որևէ կոչի կամ թվականի մասին ոչինչ չի գրված: Հավանաբար նա նկատի է ունեցել «Հայ-ժողովրդական հեքիաթների» **առաջին հատորում** տպագրված Տիգրան Նավասարդյանի շնորհակալական խոսքը՝ ուղղված լրագրերում հրատարակված իր կոչին արձագանքած բանահավաքներին, այդ թվում՝ **Ա. Բահաթրյանին**, սակայն շփոթելով՝ **առաջինի** փոխարեն **ութերորդ հատորին** է հղել, որտեղ ևս հիշատակվում է **Ա. Բահաթրյանը**: Բայց այդ հարցերին կանդորադատնանք հաջորդ էջերում: Ինչևէ, գիտության մեջ նման վրիպումները հազվադեպ չեն:

Տիգրան Նավասարդյանին նվիրված ուսումնասիրության (1991) մեջ **Սվետլանա Վարդանյանը** գրում է. «Есть основания считать, что Аракел Баатэрян, учитель школы Нерсисян, передал Т. Навасардяну материалы, записанные Гр. и Ал. Баатэрянами ещё в 1860-1870 гг. в Карабахе»⁵⁰² («Հինք կա ենթադրելու, որ Ներսիսյանի ուսուցիչ Առաքել Բահաթրյանը Տ. Նավասարդյանին է հանձնել Գր. և Ալ. Բահաթրյանների՝ դեռևս 1860–70 թթ. Ղարաբաղում գրառած նյութերը»): Պարզաբանենք, որ Առաքել Բահաթրյանը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում մանկավարժություն և հոգեբանություն է դասավանդել 1881–1882 ուստարում, իսկ 1882թ. աշնանը մեկնել է Նոր Նախիջևան՝ հայոց թեմական դպրոցում ուսուցիչ և տեսուչ աշխատելու⁵⁰³:

⁵⁰⁰ **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Արցախ, Ոտիք, հ. VI, էջ 706:

⁵⁰¹ **Ալվարդ Ղազիյան**, Արցախ, էջ 5:

⁵⁰² **Светлана Варданян**, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику, с. 23:

⁵⁰³ **Նագիկ Հարությունյան**, Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը), էջ 22–24:

Նագիկ Հարությունյան «Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը)» (1992) գրքում նշում է, որ Բահաթրյանների գրառումները «...**ձեռագիր վիճակում անհայտ ճանապարհով, անհայտ անձի կողմից հանձնվում են հայ բազմավաստակ բանահավաք-հեքիաթագիր Տիգրան Նավասարդյանին**»⁵⁰⁴:

Բանասիրական գիտ. թեկնածու (2013), բանագետ և բանահավաք **Էսթեր Խենյանը** 2007 թ. հրապարակած «**Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները)**» հոդվածում այդ մասին գրում է. «1883 թ. Ա. Բահաթրյանը կնքեց իր մահկանացուն, և թե ով և երբ է Բահաթրյան եղբայրների՝ 1860-ական թվականներին գրառած բանահյուսական նյութերի ձեռագիր ժողովածուն հանձնել Տ. Նավասարդյանին, հայտնի չէ: Հնարավոր է, որ Ա. Բահաթրյանը դեռևս իր կենդանության ժամանակ հանձնած լինի այդ նյութերը Տ. Նավասարդյանին, հնարավոր է նաև, որ հետագայում Բահաթրյան եղբայրներից որևէ մեկը հանձնած լինի: Մենք հակված ենք երկրորդ տեսակետին, որովհետև Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթների» առաջին երկու գրքերը լույս են տեսել 1882–83⁵⁰⁵ թվականներին, և եթե այդ նյութերը ձեռքի տակ լինեին, նա կընդգրկեր առաջին հատորներից որևէ մեկում, մինչդեռ նա այդ ձեռագիր հավաքածուից 11 հեքիաթներ ընդգրկել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի VIII (1894 թ.), IX (1902 թ.), X (1903 թ.) գրքերում՝ հետևյալ ծանոթագրությամբ. «Լարաբաղի բարբառով գրված սույն հեքիաթները հանգուցյալ մանկավարժ Առաքել Բահաթրյանցի ստվար ժողովածուից, որ հանձնված է մեզ տպագրելու»⁵⁰⁶ :

Կարծում ենք՝ բանագետներին հետաքրքրող հարցի պատասխանը պարզորոշ նշված է 1882 թ. Վաղարշապատում լույս տեսած «**Հայ-ժողովրդական հեքիաթների**» առաջին հատորի վերջում՝ «**Շնորհակալիք**» վերնագրի ներքո տպագրված Տ. Նավասարդյանի երախտագիտության խոսքում. «**Քաղցր պարտականություն են համարում հրապարակաւ յայտնել իմ խորին շնորհակալութիւնը հետևեալ պատկառելի անձանց.-Տփլիսի-Մեծ. բժիշկ Բ. Նաւասարդեանց, մեծ. պ. Ա. Բահաթրեանց, Յարգելի կոյս Հոփսիմէ Աղէք. Թալիբեանց, արժ. քահ. Գիւտ Աղանեանց և Գ. Մանդակունի (այնուհետև թվարկվում են այլ քաղաքների և գյուղերի բանահավաքները–Ս. Վ.) ...Որոնք՝ կար-**

⁵⁰⁴ Նագիկ Հարությունյան, Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը), էջ 88:

⁵⁰⁵ Առաջին երկու գրքերը լույս են տեսել 1882 թ. (Ս. Վ.):

⁵⁰⁶ **Էսթեր Խենյան**, Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները), էջ 340, 341:

դալով հայ լրագրների մէջ իմ տուած յայտարարութիւնը «Հայ-ժողովրդական քանաւոր աւանդութեանց» մասին՝ նպաստամատոյց եղան ինձ այդ ձեռնարկութեան մէջ, զանազան տեղերից տպագրութեան համար բաւականաչափ նիւթեր ուղարկելով»⁵⁰⁷:

Տիգրան Նավասարդյանն ըստ երևոյթին նկատի ունի «Մշակ» թերթի 1882թ. հունվարի 14-ի համարում լոյս տեսած Վաղարշապատից իր ուղարկած անվերնագիր հայտարարութիւնը, որով նա համագործակցության կոչ է անում բանահավաքներին, նաև տեղեկացնում, որ նախատեսվող առաջին և երկրորդ գրքույկներում կտպագրվեն միայն իր հավաքած հեքիաթները, որից հետո հերթը կհասնի նաև մյուսների գրառածներին. «Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի «Հայ-ժողովրդական աւանդութիւնների» առաջին հատորը (ա. գրքույկ), որ բովանդակում է իւր մէջ միայն հեքիաթներ, ժողոված Երևանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով:

Այս ա. գրքույկի անմիջապէս լոյս տեսնելուց յետոյ, մամուլի տակ կը մտնի նորա բ. գրքույկը: Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հեքիաթների տպագրութիւնը, այնուհետև ձեռնամուխ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միատեսակների հրատարակութեան – ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱԾՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԷԾՔՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս ածելով նոյնպէս առանձին գրքույկներով:

Յուտով եմ, որ մեր պատուելի օտարաքաղաքացի համազգայինք չեն զլանայ իրեանց կարեաց չափ աջակից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ:

Բաւականաչափ նիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այնուհետև տպագրուելի բոլոր գրքույկներից մի մի օրինակ ձրի կը ստանան, բացի այս՝ նոցա ազգանունները կը տպագրուեն գրքույկի վերջը: Իսկ այն պարոնները, որոնք այս աւանդութիւններից նոյնպէս մեծ քանակութեամբ ժողոված ունեն և կը ցանկանան իրանց ժողովածուն վաճառել՝ թո՛ղ բարեհաճեն յայտնել իրանց պայմանները:

Նիւթերը հարկատր է գրել (գրածը խնդրում ենք մաքուր լինի և որոշ) բուն տեղական բարբառով, դնելով ժողովածուի վերջը տեղական դժուարիմաց բառերի բացատրութիւնները»⁵⁰⁸:

Եվ այսպէս, Բահաթրյանների հավաքածուն Առաքելը Տիգրան Նավասարդյանին է հանձնել 1882թ. հունվարին «Մշակում» տպագրված հայտարարությու-

⁵⁰⁷ Հայ-ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանայ Նաւասարդեանց, առաջին գիրք, Վաղարշապատ, Ի տպարանի Ս. Կաթողիկէ Էջմիածնի, 1882 (–64 էջ), էջ 62, 63:

⁵⁰⁸ Նաւասարդեանց Տ., [Յայտարարութիւններ], «Մշակ», 1882, Յունվարի 14 (26), № 4, էջ 4:

նից հետո, մինչև Նոր Նախիջևան մեկնելը: Կարծում ենք՝ մինչ այդ եղբայրները խնամքով արտագրել են իրենց գրառումները: Նույնը և Առաքելը, որի բանահյուսական նյութերը գրված են գեղեցիկ և արագավարժ ձեռագրով, ինչը հատուկ չէ 12-ամյա դպրոցականին, այլ՝ շատ ավելի մեծի, որը հաճախ է գրի հետ գործ ունենում⁵⁰⁹:

Թեև 15 քաղաքներից ու գյուղերից 30 հոգի⁵¹⁰, այդ թվում՝ ճանաչված անհասներ, բանահյուսական նյութեր էին ուղարկել, բայց, ինչպես նշեցինք, առաջին հատորում ընդգրկվեցին միայն Տիգրան Նավասարդյանի գրառած և «Արարատ» ամսագրի 1881թ. տասնմեկերորդ և 1882թ. առաջինից չորրորդ համարների «Արարատայ թերթին» հավելվածներում լույս տեսած հեքիաթները⁵¹¹: Հավանաբար այն պատճառով, որ դրանց շարվածքներն արդեն պատրաստ էին և գիրքն էլ տպագրվում էր նույն տպարանում՝ Վաղարշապատում, որտեղ՝ «Արարատը»: Նույն թվականին Երևանում հրատարակված հաջորդ հատորում⁵¹² ևս, ինչպես տեղեկացրել էր Տ. Նավասարդյանը, միայն նրա գրառումներն էին:

Այլ բանահավաքների նյութեր ժողովածուներում զետեղվում են՝ սկսած 3-րդ հատորից՝ 1884 թվականից⁵¹³, բայց այդ տարի էլ Տ. Նավասարդյանը, բժիշկ Բագրատ Նավասարդյանի նյութական աջակցությամբ մեկնում է Շվեյցարիա՝ Ժնև, տպագրական գործ ուսումնասիրելու: Նա Ժնևում մնում է չորս տարի, և նույնիսկ 1887-ին շարում է Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթ՝ «Հնչակ» ամսաթերթի առաջին համարները⁵¹⁴:

1888 թ. Թիֆլիս վերադառնալով՝ նա շարունակում է հեքիաթների գրքերի

⁵⁰⁹ Այս եզրակացությանը հանգելուն նպաստել է նաև «Պիոներ կանչ» («Կանչ») թերթի և «Պիոներ» («Աղբյուր») ամսագրի խմբագրություններում մեր աշխատանքային փորձը, երբ ամեն օր դպրոցականներից բազմաթիվ նամակներ էինք ստանում:

⁵¹⁰ Հայ-ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանայ Նավասարդեանց, առաջին գիրք, էջ 62, 63:

⁵¹¹ Հեքեաթների մասին, «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, Ի տպարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1881, նոյեմբեր 30, թիւ ԺԱ, էջ 626–627: Նավասարդեանց Տ., Հեքեաթներ. Արջի Քոթոթը, «Արարատ», ամսագիր, 1881, նոյեմբեր 30, թիւ ԺԱ, «Արարատայ թերթին», էջ 1–8: Նույնի՝ Հեքեաթներ. Գառնիկ-Աղպեր, Ոսկէ Զուկը, «Արարատ», 1882, յունվար 31, թիւ Ա, «Արարատայ թերթին», էջ 9–16: Նույնի՝ Հեքեաթներ. Ոսկէ Զուկը, Զուտողի մալը՝ ուտողին հալալ ա, «Արարատ», 1882, փետրվար 28, թիւ Բ, «Արարատայ թերթին», էջ 17–24: Նույնի՝ Հեքեաթներ. Անջիգեար մեր, Իրեք Աղպր-տինք, Մօթալի հեքաթը, «Արարատ», 1882, մարտ 31, թիւ Գ, «Արարատայ թերթին», էջ 25–32: Նույնի՝ Հեքեաթներ. Մօթալի հեքաթը, «Արարատ», 1882, ապրիլ 30, թիւ Դ, «Արարատայ թերթին», էջ 33–36:

⁵¹² Հայ-ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանայ Նավասարդեանց, երկրորդ գիրք, Երևան, Էմին Տէր Գրիգորեանցի տպարանում, 1882 (–44 էջ):

⁵¹³ Հայ-ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանայ Նավասարդեանց, երրորդ գիրք, Թիֆլիս, տպարան Մովսիսի Վարդանեանց, 1884 (–50 էջ):

⁵¹⁴ Светлана Варданян, Вклад Тигра́на Навасардя́на в армянскую фольклористику, с. 14.

հրատարակությունը⁵¹⁵ և, ի վերջո, ստանալուց 12 տարի անց՝ 1894-ին, «**Հայ-ժողովրդական հեքիաթներ**» ութերորդ հատորում լույս են տեսնում **Առաքել Բահաթրյանի** հանձնած տետրերից ընտրված հինգ հեքիաթներ⁵¹⁶, բայց, ցավոք, **Առաքել** արդեն չկար, քանի որ դեռևս 1883 թ. փետրվարի 5-ին՝ 35 տարեկանում, Խարկովում⁵¹⁷, ուր մեկնել էր բուժվելու, հոգեբուժական հիվանդանոցում մահացել էր⁵¹⁸:

Տիգրան Նավասարդյանը, տպագրվող առաջին հեքիաթի («**Վէսկե քաքիլ տղէն հաքեաթը**») էջատակում չոր-ցամաք ծանոթագրել է. «**Ղարաբաղի բարբառով գրած սոյն հեքիաթները. Թաքաւերէն տղորցը հաքեաթը. Խալ անիւմ, Խալիչա անիւմ, Երան նստիւմ դիւան անիւմ. Ասլան-Բալասուն հաքեաթը և Պառու կնգանը հաքեաթը**– հրատարակում ենք հանգուցեալ մանկավարժ **ԱՌԱՔԷԼ ԲԱՀԱԹՐԵԱՆՑԻ** ստուար ժողովածուից, որ յանձնուած է մեզ տպագրելու»⁵¹⁹:

Տիգրան Նավասարդյանը չի նշում, որ **Առաքել Բահաթրյանի** տված տետրերում ամփոփված են **երեք եղբայրների** գրառած բանարվեստի նմուշները և տպավորություն է ստեղծվում, որ բոլորը **Առաքելի** հավաքածներն են: Այդպես է կարծել նաև «**Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում**» (1959) ուսումնասիրության հեղինակ Վ. Հարությունյանը՝ վերապատմելով VIII հատորում տպագրված «**Թաքաւերէն տղորցը հաքեաթը**»⁵²⁰:

Իսկապես, **Առաքել Բահաթրյանը** նույնպես նույն վերնագրով հեքիաթ է գրի առել, բայց այն տպագրվել է IX հատորում և սյուժեն տարբեր է⁵²¹:

⁵¹⁵ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նաւասարդեանց**, չորրորդ գիրք, Տիփսիս, տպարան Մովսէս Վարդանեանի, 1888 (–112 էջ):

⁵¹⁶ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նաւասարդեանց**, ութերորդ գիրք, Թիֆլիս, տպարան Մովսէս Վարդանեանի, 1894 (–124 էջ), էջ 36–62:

⁵¹⁷ **Նագիկ Հարությունյան**, **Առաքել Բահաթրյան** (Կյանքը և գործը), էջ 25:

⁵¹⁸ Պրոֆ. **Ա. Շավարշյան**, **Առաքել Բահաթրյանի** մանկավարժական գործունեությունը և հայացքները, էջ 9:

⁵¹⁹ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նաւասարդեանց**, ութերորդ գիրք, էջ 36:

⁵²⁰ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նաւասարդեանց**, ութերորդ գիրք, էջ 40–45: **Հարությունյան Վ.**, Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում, Երևան, Հայպետուսմանկիրատ, 1959 (–152 էջ), էջ 75–77: (Գրքում նշված է հեղինակի անվան միայն սկզբնատառը): **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք**, հ. VI, «Թաքաւերէն տղորցը հաքեաթը [Քաչալ ախպերը]», էջ 32–36, ծանոթագրության մեջ գրված է. «Հեքիաթը գրի է առել Ա. Բահաթրյանը, 1865 թ. մարտ-օգոստոս ամիսներին, Շուշիում» (էջ 708), սակայն ըստ Հայաստանի ազգային արխիվում պահվող բնագրի, Ալեքսանդր Բահաթրյանն այն գրառել է 1860 թ. մայիս–օգոստոս ամիսներին, տե՛ս Տիգրան Նավասարդյանի ֆ. 484, ց. 1, գ. 1, թերթ 208, «Թաքաւերիւն տղորցը հնքնաթը» (հին էջագրմամբ, այսուհետև՝ հին էջ.՝ 413–415), 210 թերթի շրջերես, 7 թերթ կտրված է, 211 թ. շրջերես:

⁵²¹ ՀԱԱ, Տիգրան Նավասարդյանի ֆոնդ 484, ց. 1, գ. 1, 224 թերթի շրջերես, երկու թերթ կտրված է, թ. 225: **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նաւասարդեանց**, իններորդ գիրք, Թիֆլիս, տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1902 (–96 էջ), էջ 78–82:

Մենք թվարկված հինգ հեքիաթները համեմատեցինք Հայաստանի ազգային արխիվում պահվող բնագրերի հետ, և պարզվեց, որ դրանցից **ոչ մեկը Առաքելի գրառածը չէ, բոլորն էլ Ալեքսանդր Բահաթյանին**⁵²² են:

Պատմական գիտ. դոկտոր Վահրամ Բալայանը, «**Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում**» (2017) մենագրության մեջ համառոտ անդրադառնալով Բահաթյանների բանահյուսական ժառանգությանը, նշում է, որ նրանց հավաքած հեքիաթները տպագրվել են «**Հայ-ժողովրդական հեքիաթների**» VI, VIII, IX, X հատորներում⁵²³: Այնինչ, VI հատորում զետեղված «Մանկական հեքիաթ (Ղարաբաղի բարբառ)»-ի տողատակում Տիգրան Նավասարդյանը ծանոթագրել է. «**պ. Միքայել Տեր-Յովհաննիսեանցի ժողովածուից, Ղարաբաղի Նոր-շէն գիւղից ուղարկած, առ այժմ հրատարակում ենք սոյն մանկական հեքիաթը**»⁵²⁴:

1894թ. VIII հատորի լույս ընծայումից ութ–իւր տարի անց հրատարակված IX և X գրքերում Բահաթյանների գրառումները տպագրելիս Տիգրան Նավասարդյանը կրկին ծանոթագրություններում եղբայրներին չի հիշատակում. IX հատորում գրում է. «Հանգուցեալ ԱՌԱՔԷԼ ԲԱՀԱԹՐԵԱՆՑԻ ժողովածուից հրատարակում ենք հետևեալ հեքիաթները. – «Թաքաւերին տղօրցը հաքեաթը», «Քասիպ մարթին հաքեաթը», «Խորթ ախճկանը հաքեաթը» և «Քօսակին հու քաչալին հաքեաթը»⁵²⁵: Այս չորսից մեկը՝ «**Քօսակէն հու քաչալէն հաքեաթը**»⁵²⁶ Գրիգորի գրի առածն է⁵²⁷:

1903թ. լույս տեսած X հատորի ծանոթագրության մեջ նշվում է. «Առաքել Բահաթրեանցի ժողովածուից հրատարակում ենք Ղարաբաղի բարբառով գրած սոյն հեքիաթները»⁵²⁸: Տպագրված երկու հեքիաթից մեկը՝ «**Կիւ տէռած ախճկանը հաքեաթը**» գրառել է Ալեքսանդրը⁵²⁹:

⁵²² ՀԱԱ, Տիգրան Նավասարդյանի ֆ. 484, ց. 1, գ. 1, թերթ 208–214:

⁵²³ Վահրամ Բալայան, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 244: Տե՛ս նաև «**Հայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի VI հատորում (1973) «Մանկական հեքիաթ»-ի արտատպությունը՝ էջ 175, 176 և նրան նվիրված ծանոթագրությունը՝ էջ 717:

⁵²⁴ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նուասարդեանց**, վեցերորդ գիրք, Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռօտիսեանցի, 1890 (–152 էջ), էջ 32:

⁵²⁵ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նուասարդեանց**, իններորդ գիրք, Թիֆլիս, տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1902 (–96 էջ), էջ 78:

⁵²⁶ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նուասարդեանց**, իններորդ գիրք, էջ 83–85:

⁵²⁷ ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 1 (հին էջ.՝ 490–492), 249 թերթի շրջերես–250 թերթի շրջերես: **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Արցախ, Ուտիք, հ. VI, էջ 260, 261, 723:

⁵²⁸ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նուասարդեանց**, տասներորդ գիրք, Թիֆլիս, տպարան Մովսէս Վարդանեանի, 1903 (–96 էջ), էջ 36:

⁵²⁹ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նուասարդեանց**, տասներ

Անկեղծ ասած, մեզ համար անհասկանալի է, թե ինչո՞ւ Տիգրան Նավասարդյանն իր գրքույկներում այլ բանահավաքների անունները նշում էր, իսկ Բահաթրյան Ալեքսանդրին և Գրիգորին՝ ոչ, այն դեպքում, երբ նրանց տեսությունները ձեռքի տակ էին և եղբայրների գրառումներն իրարից հստակ տարանջատված էին:

Նրանք նույն անարդարացի վերաբերմունքին են արժանացել նաև գիտնականների կողմից, որոնք նույնպես նրանց մասին լռություն են պահպանել:

Քանի որ Ալեքսանդրը և Գրիգորը ժամանակի գրագետ և կրթված անձնավորություններից էին, պետք է որ Շուշիի կյանքում, մամուլում իրենց մասին հիշատակություններ թողած լինեն: Հուսով ենք՝ ապագա ուսումնասիրողները նրանց ևս ուշադրության կարժանացնեն, ի վերջո, իրենց կրտսեր եղբոր հետ նրանք ևս մեր առաջին բանահավաքներից են, և ինչպես նշել ենք, 1860 թ. երկուսով գրառել են 31 հեքիաթ ու զվարճապատում:

X գրքույկի հրատարակությունից հետո ևս 70 երկարուձիգ տարիներ Բահաթրյանների ժողովածուի մեծ մասը մնում է անտիպ: Վերջապես, նրանց հավաքած 64⁵³⁰ հեքիաթներից և զվարճապատումներից 59-ը (Տ. Նավասարդյանի 11 տպագրածները ներառյալ) լույս տեսան 1973 թ. ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած «**Հայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի VI հատորում⁵³¹:

Գրքի ընդարձակ «**Ծանոթագրություններ**»-ում⁵³² կարդում ենք. «Ղարաբաղի բաժնում իրենց վաղեմությանը ու քանակով առաջնակարգ տեղ է գրավում Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանների հավաքածուն, որը պարունակում է 61 հեքիաթ՝ գրի առնված 1860 թ., Շուշիում: Ձեռագիր այդ հավաքածուն պահպանվում է Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 1,

րորդ գիրք, էջ 36–43: ՀԱԱ, Տիգրան Նավասարդյանի ֆ. 484, ց. 1, գ. 1 (հին էջ. 421–426), 214 թերթի շրջերես-թ. 217: Տե՛ս նաև **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք**, հ. VI, էջ 49–54, 709:

⁵³⁰ 243-րդ թերթի շրջերեսին և թ. 244-ում (հին էջ.՝ 479, 480) մեծ տատերով և այլ ձեռագրով շարադրված է «Թաքավերեն ախճկանը հաքաթը»: Վերնագրի և հաջորդող երկու-երեք տողերի վրա գրչով գծեր են քաշված: Քանի որ հեքիաթը թերի է, չի մաքրագրված-արտագրված, հայտնի չէ ո՞վ և ե՞րբ է գրառել, ուստի այն չենք հաշվատել: ՀԱԱ Տ. Նավասարդյանի ֆոնդում պահվող մատյանում (ց. 1, գ. 15) Առաքել Բահաթրյանի գրանցած հեքիաթների ու զվարճապատումների վերնագրերի ցանկի 25-րդ համարի դիմաց, նկատի ունենալով «Թաքավերեն ախճկանը հաքաթը», նշված է. «սևագրություններ Տ. Նավասարդյանի, [էջ] 479-481», ֆ. 484, ց. 1, գ. 15, թ. 9:

⁵³¹ **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք**, հ. VI, տե՛ս հետևյալ համարների հեքիաթներն ու զվարճապատումները՝ № № 1–18, 27–40, 65, 66, 69–72, 74, 75, 77–81, 158–168, 177, 181, 182 (էջ 19–90, 147–174, 245–248, 256–263, 266–269, 271–275, 617–659, 690, 691, 698–702):

⁵³² **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք**, հ. VI, էջ 705–748:

№2): Դա աշակերտական տետրի չափով, 307 թերթից բաղկացած, միատեղ կազմված ընդհանուր ձեռագիր գիրք է, որը պարունակում է տարբեր ժամանակներում և տարբեր անձանց կողմից հավաքված բանահյուսական և ազգագրական նյութեր՝ հանձնված Տիգրան Նավասարդյանին: Հավաքածուն ունի ընդհանուր համարակալում, կատարված հետազայում, արխիվային մշակման ընթացքում (1–613)»⁵³³:

Պարզաբանենք, որ 1961թ. Գրականության ինստիտուտի բանահյուսության բաժնի հետ է արխիվը Հնագիտության և ազգագրության ինստիտուտ տեղափոխվել:

Այստեղ Տ. Նավասարդյանի ֆոնդն ուսումնասիրվել և էջագրվել է (նաև Լևինի համակարգով)⁵³⁴:

1992թ. մարտի 8-ին Տ. Նավասարդյանի ցուցակագրված ֆոնդը հանձնվել է Հայաստանի ազգային արխիվին, որտեղ այն համարակալվել է ըստ թերթերի: Ուստի Բահաթրյանների գրառումների սկզբի 402-րդ էջը համապատասխանում է ներկայիս 204-րդ թերթին, վերջին՝ 580-րդ էջը՝ 297-րդ թերթին:

Մենք հղումներում նշում ենք և՛ հին էջագրումը, և՛ նոր համարակալումը:

Եվ այսպես, **Հայաստանի ազգային արխիվում** պարզեցինք, որ Բահաթրյան եղբայրների ժողոված 64 հեքիաթերից ու զվարճապատումներից տպագրվել է 59-ը: Ալեքսանդրի գրառած 10-ից անտիպ է մնում 2⁵³⁵, Գրիգորի 21-ից՝ 1⁵³⁶, և Առաքելի 33-ից՝ 2⁵³⁷ հեքիաթ և զվարճապատում:

Պատմական գիտ. դոկտոր Վահրամ Բալայանը «Հայ ժողովրդական հեքիաթների» VI հատորում հաշվում է Բահաթրյանների հավաքածուից 46 (իրականում՝ 45–Ս. Վ.) հեքիաթ և եզրակացնում. «Մնացած 15 հեքիաթն անտիպ վիճակում պահվում է Հայաստանի ազգային արխիվի 484-րդ ֆոնդում»⁵³⁸:

Տեղեկացնենք, որ Բահաթրյանների գրառածներից ևս 14-ը տպագրվել է հենց այդ նույն հատորում, միայն թե «**Հավելված**» բաժնում⁵³⁹, ինչի մասին գրքի

⁵³³ **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք**, հ. VI, էջ 705: Տ. Նավասարդյանի ֆոնդի մասին մանրամասնորեն տես **Светлана Варданян**, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику, с. 28 - 41.

⁵³⁴ **Светлана Варданян**, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику, с. 28.

⁵³⁵ «2. Էրկու սարին էնդօլացի մարթ», թ. 209: «3. Քօսակին, Քաչալին հու ճաղարին հնաքաթը» (հին էջ՝ 411, 412), 209 թերթի շրջերես, թ. 210:

⁵³⁶ ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 1, «7. Քաչալին հնաքաթը» (հին էջ՝ 497–499), թ. 253–254:

⁵³⁷ ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 1, «12. Պէլ դարադաղցուց հնաքաթը» (հին էջ՝ 454, 455), թ. 231, 231 թերթի շրջերես: «21. Ստանին հնաքաթը» (հին էջ՝ 469–472), 238 թերթի շրջերես–թ. 240:

⁵³⁸ **Վահրամ Բալայան**, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 244:

⁵³⁹ **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք**, հ. VI, № 158, էջ 617, 618, № 159, էջ

«Նախաբանում» պարզաբանված է. «**Հավելված** բաժնում գետեղված են այն նյութերը, որոնք հեքիաթի ժանրին ձուլված գրույցներ, լեգենդներ ու ավանդույթուններ են և արդեն կորցրել են իրենց ժանրային կերպարանքը: Այստեղ տեղ են գտել նաև այն հեքիաթները, որոնք բովանդակության ու գեղարվեստական-արտահայտչական տեսակետից լիարժեք չեն և կամ աննշան փոփոխությամբ հիմնական բնագրերի տարբերակներ են»⁵⁴⁰:

Այսպիսով, հարյուր տասներեք տարի անց վերջապես առաջին անգամ ընթերցողներին հասու դարձավ նաև «**Պըել դարադաղցուց հաքյաթը [Անգլուխ տերտերը]**»⁵⁴¹ (№ 8/1):

Շեռաբրքիր է, որ Առաքել Բահաթյանը նույն՝ «**Պել դարադաղցուց հաքյաթը**» վերնագրով վեց գվարճապատում է գրառել⁵⁴², որոնցից հինգը տպագրվել է «**Հայ ժողովրդական հեքիաթների**» VI հատորում և տարբերվելու համար յուրաքանչյուրի վերնագրի տակ քառակուսի փակագծերի մեջ ավելացվել է բովանդակության մասին հուշող ենթավերնագիր⁵⁴³:

Ըստ այդ տարբերակի՝ մի քանի դարադաղցի ծմակում ման գալիս անձավի խորքում մի թաքնված արջ են տեսնում: Քահանային համոզում են, որ մտնի, քանի որ արջը նրան կհարգի և դուրս կգա: Նա ներս է սողոսկում, բայց արջը նրա գլուխը բռնում է: Գյուղացիները տեր հորը դուրս են քաշում, բայց նրա գլուխը պոկվում է: Վերադառնում են գյուղ, կնոջը հարցնում, թե երեկ երեկոյան ամուսնու գլուխը վրան էր: Նա էլ պատասխանում է. «**Դե վալլա, կյոտուն չըմ, ամնա մինակ ուրկյունի մեր փեսին նհետ վըր չնրնգ ար օտում, մրոքը տոնրոն ար կյնմ**» («Աստված վկա, չգիտեմ, բայց միայն [հիշում եմ] երեկոյան մեր փեսայի հետ, որ չարագ էր ուտում, մորուքը շարժվում էր»):

Հավանաբար շատերի համար անակնկալ է, որ քահանայի կինն ասում է «**վալլա**», որն արաբերեն է և նշանակում է **Ալլահը վկա՝ Աստված վկա**: «**Հայ**

619, №160, էջ 620–622, №161, էջ 623, 624, №162, էջ 625–627, №163, էջ 628–632, №164, էջ 633–637, №165, էջ 638–642, №166, էջ 643–649, №167, էջ 650–655, №168, էջ 656–659, №177, էջ 690, 691, №181, էջ 698–700, №182, էջ 701, 702:

⁵⁴⁰ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք, հ. VI, էջ 15:

⁵⁴¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք, հ. VI, էջ 272: Գնահատելով Բահաթյանների գրառումները հրատարակության պատրաստողների ջանքերը, չենք կարող չնշել, որ կան բնագրերից շեղումներ, օրինակ՝ այս փոքր գվարճապատումում «Եննան»-ը երկու անգամ էլ տպագրվել է «Ետնան», երբ հենց նույն հատորի բառարանում, որպես բարբառային ընդունված ձև, գրված է. «Եննան (ետնան) - հետո, այնուհետև» (էջ 753), այդ դեպքում անբացատրելի է, թե ինչո՞ւ է խաթարվել մեր առաջին բանահավաքներից մեկի բնագիրը:

⁵⁴² ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 1 (հին էջ.՝ 453–457), 230 թերթի շրջերես–232 թերթի շրջերես: Չտպագրված տարբերակը (հին էջ.՝ 454–455), թ. 231, 231 թերթի շրջերես:

⁵⁴³ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք, հ. VI, էջ 271–275:

ժողովրդական հեքիաթների»՝ նույն հատորում տպագրված Ղարաբաղի բարբառի բառարանը «վալլա (վալլահ)»-ը բացատրում է «աստված վկա, այն աստվածը»⁵⁴⁴: Ինչպես կհամոզվենք առաջիկայում, երդման այս ձևը օգտագործվել է նաև **Ագուլիսի, Սալմաստի, Մոկսի, Ջավախքի, Կեսարիայի, Մուշի, Ղարադաղի** տարբերակների կանանց պատասխաններում, այլ բարբառներում⁵⁴⁵, բայց, որքան էլ զարմանալի է, չի հանդիպում կրոնափոխ համշենահայերից գրառված երգիծական մանրավեպերում: Այսօր էլ մահմեդական երկրների հայկական գաղթօջախներում այս երդումը շատ տարածված է:

Իսկ որտեղ էր զվարճապատումում հիշատակվող **Ղարադաղը**: Այն Արցախի՝ Ղարաբաղի, հարավային հարևանն էր: Ղարադաղի գավառը գտնվում էր Արաքս գետի աջ ափին՝ Պարսկաստանում՝ Արաքսի և Կապուտան (Ուրմիա) լճի միջև: Նախկինում մտնում էր Մեծ Հայքի Վասպուրականի նահանգի մեջ և կոչվում էր Պարսպատունիք⁵⁴⁶: 1905թ. Թիֆլիսում հրատարակված «**Ատրպատական**» գրքի 27-ամյա հեղինակը՝ **Երվանդ Ֆրանգյանը** (1878, Իգդիր–1928, Թավրիզ)⁵⁴⁷, գրում է. «Ղարադաղը ամբողջապես ծածկված է լեռնային ցանցով, իսկ այդ լեռները բռնած են խիտ անտառներով»⁵⁴⁸:

Այս գավելչտապատումի մեկ տարբերակի հերոսներն էլ **Ղարադաղի Ողան** գյուղի շինականներն են: Սակայն, դա չի նշանակում, որ ողանցիները, իսկապես, մտավոր խնդիրներ ունեն: Երբ հետևում ենք նման թիրախավորված բնակավայրերում ծնվածների ճակատագրերին, պարզվում է, որ նրանց մեջ էլ շատ

⁵⁴⁴ **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք**, հ. VI, էջ 766: Տե՛ս նաև «Վալլա(հի) (արաբ. vallahi)–ձ. Մահմեդականների երդման բացականչություն՝ Աստված վկա», **Արմեն Յուրիկի Սարգսյան**, Ղարաբաղի բարբառի բառարան, ԼՂՀ, ԿԳՆ, Արցախի պետական համալսարան, Երևան, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2013 (–864 էջ), էջ 681:

⁵⁴⁵ «Վալլա, վալլահի–աստված վկա», տե՛ս **Առակներ, ավանդություններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով)**, գրի առավ **Սո. Մալխասյան**, ՀՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1958 (–190 էջ), էջ 178: «Վոլա–վալլա, վալլահի, այո՛, աստված վկա, այդպես է, հաստատման կամ ժխտման եղանակ», տե՛ս **Սահակ Մովսիսյան** (Բենսե), Հարք (Մշո Բուլանըխ) // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ. 3, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972 (–184 էջ), էջ 178:

⁵⁴⁶ **Մուրեն Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963 (–156 էջ) էջ 77: **Նազար Գորոյեանց**, Պարսկաստանի հայերը, պատմական, տեղագրական եւ վիճակագրական համառոտ տեղեկություններ Պարսկաստանի հայերի մասին՝ ամենաին ժամանակները, մինչև 1898թ., Թեհրան, տպարան «Մոդերն», 1968 (–368 էջ), էջ 208–218:

⁵⁴⁷ «Ֆրանգյան Երվանդ» // **ՀՀՀ**, հ. 4, Երևան, 2003, էջ 959, 960:

⁵⁴⁸ **Երուանդ Ֆրանգեան**, Ատրպատական (Պատկերագրող ժողովածու), Թիֆլիս, Էլեքտրաշարժ տպարան «Հերմէս» ընկ., 1905 (–296 էջ), էջ 97: Գրքում նշված է հեղինակի անվան միայն սկզբնատառը:

են եղել գիտնականներ, արվեստի և մշակույթի գործիչներ, գրողներ ու լրագրողներ և այլն: Շատ չխորանալով՝ ասենք, որ հենց **Ռդանում** է ծնվել սփյուռքահայ գրականագետ, մի շարք գրքերի հեղինակ, հայոց լեզվի և գրականության դոկտոր **Ռուբինա Փիրումյան Մինասյանի** (ԱՄՆ, Կալիֆորնիայի համալսարան) հայրը՝ **Բաղդիկ Մինասյանը** (1902, Ռդան – 1976, Թեհրան), որը 1923–1928 թթ. քիմիայի բնագավառում բարձրագույն կրթություն, ապա և դոկտորի աստիճան է ստացել Չեխիայում՝ Պրահայում, ուսումնասիրել նաև մանկավարժություն և հոգեբանություն, երկար տարիներ մանկավարժ է աշխատել Իրանում, իսկ 1960–1971 թթ. եղել է Թեհրանի «Ալիք» թերթի գլխ. խմբագիրը⁵⁴⁹:

Երկրամասի հայերի տխուր վիճակն է 1872թ. «Մշակ» թերթում տպագրված «Նամակ Ղարաղաղից» հոդվածում ներկայացնում Բաֆֆին. «Այժմ մինչև 28 գյուղերում բնակվում են հայեր, նոցա թիվը ամեն մի գյուղում կարելի է միջին թվով 30 տուն հաշվել: Այդ 28 գյուղերի մեջ դուք չեք գտնելու ոչ մի վարժարան: Այդ մասին չի կարելի մեղադրել ժողովուրդը, որ վերջին տգիտության մեջ է և ուսման անհրաժեշտ կարիքը չէ գգում: Այլ մեղադրելի է Ատրպատականի Հոգևոր կառավարությանը, Թաբրիզի Առաջնորդարանը:

Նա միայն այն ժամանակ մտաբերում է, թե Ղարաղաղում հայ ժողովուրդունի, երբ տարենը մի անգամ հարկավոր էր յուր նվիրակները ուղարկել այդ գավառի Հոգևոր պտուղը հավաքելու: Խղճալի գյուղացին իր կրոնական ջերմեռանդությամբ վճարում է իր հոգու պարտքը: Բայց եթե չքավորության պատճառով չկարողանա իր պարտքը լցուցանել, Առաջնորդի նվիրակը կստանա նորանից բռնությամբ, նորա տան չուլ-փալասը ծախել տալով, որովհետև նա ուներ իր հետ Թաբրիզու բարձր կառավարությունից հոքմ (հրաման) տեղային գավառապետի վերա, որ այդպիսի հանգամանքներում օգնե նվիրակին:

Խղճալի ժողովուրդ, նա յուր չքավորության մեջ ստիպված է տերության տուրքը վճարել ծեծ ուտելով... նա ստիպված է և յուր պարտադիր հոգևոր նվերը վճարել Առաջնորդին դարձյալ ծեծ ուտելով...

Երեսուն տարի առաջ, երբ Ղարաղաղն էր Տաթևա վանքի վիճակը, այս գավառից հայ երեխայք տարվում էին նույն վանքում ուսման համար, ուր պատրաստվում էին գոնյա փոքրիշատե գրագետ քահանայացուք: Բայց քանի Ղարաղաղը կորցրավ Տաթևը, այդ բախտից ևս զրկվեցավ նա:

Այժմ ամեն մի ածխավաճառ, այբը զիմից որոշող, անտառի արջը, եթե նա ցանկություն ուներ քահանա դառնալու, կարող էր յուր բեռնակիր իշաները վաճառել, մի քառասուն ոտուրի արծաթ կազմել Առաջնորդին դիմելով, տերտեր

⁵⁴⁹ **Ռուբինա Փիրումյան Մինասյան** եւ **Բաղդիկ Մինասյան**, Թավրիզից ստալինեան գուլագ: Ընդհատված պատմություն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀԱԻ հրատ., 2019 (–332 էջ):

դառնալ և անտառում փայտահատությամբ կոշտացած, ածուխի մեջ սևացած յուր ձեռքը խեղճ ժողովրդին համբուրել տալ...»⁵⁵⁰:

Երեք տասնամյակ անց՝ XX դարի սկզբին, **Ողան** գյուղն ուներ 65 տուն և 390 բնակիչ⁵⁵¹: **Երվանդ Ֆրանգյանը** գրում է, որ Ղարադաղի գավառի «29 գիւղերից միմիայն Աղաղանը, Խանազեաիւր և Ողանը ունեն դպրոցներ, բայց այն էլ Աստուած դպրոց համարի»⁵⁵²: «Ղարադաղի ժողովուրդը աւելի քան տգետ է և վերին աստիճանի սնտոխապաշտ: Նրանք հաւատում են մի շարք նախապաշարմունքների. քահանաներն՝ փոխանակ ձգտելու այդ փարատել՝ միւս կողմից աւելի ամրապնդում, նոյնիսկ տարածում են և նրանք են զանազան «Ֆալ»-երի հեղինակը ու հնայութեամբ են պարապում»⁵⁵³:

Ահա այսպիսի «Ֆալ»⁵⁵⁴ բացող և հնայագրեր գրող հոգևորականների ծխական համայնքներում է պատմվել «**Լուսին վորոնող քահանան**» (№9) զվարճապատումը, որի բուն գրվածքի գտնվելու վայրն, ասացողն ու բանահավաքը չեն նշված, այլ միայն ծանոթագրված է. «XԺ–Անհայտ բանահավաքի ձեռագիր պատառիկներից»⁵⁵⁵: Այն՝ որպես հայկական հակակրոնական բանահյուսության նմուշ, 1938 թ., արեղյանական ուղղագրությամբ, հրատարակել է երիտասարդ գիտնական **Արամ Ղանալանյանը** (1909, Ախալցխա–1983, Երևան), որը հետագայում իր բանագիտական աշխատանքների և գիտական վաստակի համար արժանացել է ԳԱ ակադեմիկոսի կոչման (1977):

Մենք պարզեցինք, որ այս զավեշտապատումի բնագիրը գտնվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում՝ ակնաավոր ազգագրագետ, բանահավաք և հնագետ, «**Ազգագրական հանդէսի**» խմբագիր Երվանդ Լալայանի (1864, Ալեքսանդրապոլ–1931, Երևան) ֆոնդում, որը, հավանաբար, ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտից այնտեղ է տեղափոխվել 1961 թ.՝ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմավորումից երկու տարի հետո⁵⁵⁶:

⁵⁵⁰ **Բաֆֆի**, Նամակ Ղարադաղից, «Մշակ», 1872, հուլիսի 13, №27: Նույնը տես՝ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, Ուղեգրություններ, պատմական երկեր, տասերորդ հատոր, հատորը կազմեց, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Խ. Սամվելյանը, Երևան, «Նաիրի» հրատ., 1991 (–544 էջ), էջ 94, 95, 505:

⁵⁵¹ **Ե. Ֆրանգեան**, Ատրպատական, 1905, էջ 98:

⁵⁵² **Ե. Ֆրանգեան**, Ատրպատական, 1905, էջ 99:

⁵⁵³ **Ե. Ֆրանգեան**, Ատրպատական, 1905, էջ 100:

⁵⁵⁴ **Ֆալ, ֆալ բացել**–գուշակություն, գրբացություն, բախտ բացել, բախտագուշակություն անել:

⁵⁵⁵ **Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից**, ժողովածու, կազմեց և խմբագրեց **Ա. Ղանալանյան**, ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալ, գրականության և լեզվի ինստիտուտ, Երևան, հրատ. Արմֆանի, 1938, (–XXIII էջ + 126 էջ), էջ 69, 120:

⁵⁵⁶ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» // **ԼՍՀ**, հ.6, Երևան, 1980, էջ 459: «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» // **ՀՀՀ**, հ.3, Երևան, 1999, էջ 352:

Այն Ե. Լալայանի ֆոնդում պահվող «**Վեղանեցոց գրույցներից**» տետրում ամփոփված ողանցիների մասին 22 պատումներից առաջինն է և ամբողջական վերնագիրն է. «**Լուսին վորոնող քահանան կամ տերտերոջ մորուքը**»⁵⁵⁷: Բոլոր վերնագրերն ի տարբերություն բնօրինակների՝ ավելացվել են արեղյանական ուղղագրությամբ և այլ ձեռագրով ու թանաքով:

Քանի որ «**Նմուշներ հայկական հակակրոնական ֆուկլորից**» ժողովածուում, բացի «**Լուսին վորոնող քահանան**» գվարճալի մանրավեպից, ողանցիների մասին կային ևս 6 երգիծապատումներ, որոնք նույնպես ծանոթագրված էին «Անհայտ բանահավաքի ձեռագիր պատառիկներից», դրանք էլ համեմատեցինք «**Վեղանեցոց գրույցներից**» հավաքածուում եղածների հետ:

Ինչպես ենթադրում էինք, բոլորը նույն տետրից էին, սակայն մի քանիսը տպագրվել էին քիչ կամ շատ տարբերվող վերնագրերով⁵⁵⁸:

Ցավոք, զանազան պատճառներով մեզ դեռևս չի հաջողվել բանասաց(ներ)ի, բանահավաքի, տեղի և ժամանակի մասին մանրամասներ ճշտել: Հավանաբար, «**Վեղանեցոց գրույցներից**»-ը ևս 1915 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին Ե. Լալայանի կազմակերպած բանահավաքչական խմբի գրառումներից է:

Աներևակայելի փաստ է, որ ժամանակի թելադրանքով կազմված «**Նմուշներ հայկական հակակրոնական ֆուկլորից**» (1938) ժողովածուի 12 էջանոց «**Ներածությունում**»⁵⁵⁹ Ա. Ղանալանյանը ոչ մի անգամ չի հիշատակում Կ. Մարքսին, Ֆ. Էնգելսին, Վ. Լենինին ու Ի. Ստալինին, նրանց աթեիստական մտքերից քաղվածքներ չի ներկայացնում, ինչը պարտադիր էր այն ահասարսուտ տարիներին, երբ ամեն մի անգգույշ ասված, նաև չասված բառի, արված ու չարված արարքի համար հազարավոր մարդկանց էին գնդակահարում կամ արստորում Սիբիր: Հիրավի, զարմանալի է ոչ միայն 29-ամյա հեղինակի, այլև գիրքը հրատարակած ԽՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի գրականության և լեզվի ինստիտուտի ղեկավարության քաջությունը, երբ նույնիսկ մահաբեր 1930-ականներից տասնամյակներ անց էլ գիտնականներից պահանջվում էր ատենախոսություններում ու գրքերում անպայման հղել մարքսիզմ-լենինիզմի դասականներին:

⁵⁵⁷ ՀԱԻ արխիվ, Երվանդ Լալայանի ֆոնդ, ըստ Ե. Լալայանի Մայր մատյանի՝ 97-րդ տետր, վրան գրված է. «Վեղանեցոց գրույցներից»: 1. Լուսին վորոնող քահանան կամ տերտերոջ մորուքը, FAV: 5439.01-5440.00:

⁵⁵⁸ «5. Պայտը լուսնի տեղ դնող քահանան», FAV: 5442.02, ժողովածուում տպագրվել է «Պայտը լուսնի տեղ ընդունող քահանան» (էջ 66) վերնագրով: «10. Թավրիզեցի վարդապետն ու իր տիրացուն», FAV: 5447.02–5448.00.–«Պասակեր վեղանցիք յեվ վարդապետը», էջ 21, 22: «11. Վարդապետն ու իր սարկավազը յերեցփոխի տանը», FAV: 5449.01-5451.00–«Ծաղրված վարդապետը», էջ 23, 24: «16. Տերտերոջ խորհուրդը», FAV: 5454.01-5455.00–«Քահանայի խորհուրդը», էջ 68: «20. «Սուտ տերտերոջ պատարագը», FAV: 5457.01-5459.00–նույն վերնագրով, էջ 64, 65: «22. Քոյսվայի վորդին քահանա», FAV: 5460. 01-5461.00–«Քոյսվի վորդին քահանա», էջ 67:

⁵⁵⁹ Նմուշներ հայկական հակակրոնական ֆուկլորից, էջ IX–XX:

Արամ Ղանալանյանը նյութերի ընտրության մասին գրում է. «Հայկական հակակրոնական ֆոլկլորը չի սահմանափակվում միայն յեկեղեցուն և հոգևորականությանը նվիրված ստեղծագործություններով: Այստեղ մենք հանդիպում ենք նաև զուտ աթեիստական մոտիվների, ուղղված կրոնի, զանազան սրբերի և իրեն՝ աստծու դեմ»⁵⁶⁰:

Գրքի «**Առակներ, պատմվածքներ և մանր հեքիաթներ**»⁵⁶¹ բաժնում նա տպագիր և անտիպ աղբյուրներից ընտրել և հրատարակության է պատրաստել 41 երգիծապատումներ, առակներ ու ծիծաղաշարժ մանրապատումներ: Թերևս դրանցից միայն մի երկու-երեքը («**Պառվու խրատ աստծուն**», «**Սլիկ երեց**» և այլն)⁵⁶² կարելի է հակակրոնական կամ աթեիստական որակել: Մյուսներն ավելի ճիշտ կլիներ պայմանականորեն անվանել **հակակղերական**, քանի որ դրանցում քննադատվում և ծաղրվում են հոգևորականների ազատությունը, տգիտությունը, գողությունը, ստախոսությունը, ամուսնական անհավատարմությունը և այլ արատներ, որոնք վարդապետներին կամ քահանաներին հարիր չեն համարվել: Բանարվեստի նմուշներից մի քանիսն էլ այս ժողովածուում ընդգրկվել են պարզապես այն պատճառով, որ գործող անձանց թվում նաև հոգևորական ներկայացած խաբերա կա:

«**Լուսին վորոնող քահանան**»⁵⁶³ մանրապատումի հերոսները Ղարադադի Վեղան (Ողան) գյուղի բնակիչներն են, որոնք տեսնելով, որ երկար ժամանակ լուսինը չի երևում, քահանայի հետ գնում են որոնելու: Նկատում են, որ մի քարայրի մեջ աչքեր են փայլում, տեր հայրն ասում է՝ լուսինն է: Գլուխը մտցնում է այրի մեջ և պատվիրում, որ հենց ոտքերը շարժի, իրեն հանեն: Արջը նրա գլուխը պոկում է, քահանան ոտքերը թափահարում է, նրան դուրս են քաշում ու տեսնում՝ գլուխը չկա: Շվարում են ու հարցնում՝ նա գլուխ ունե՞ր, թե՞ չունե՞ր: Վերադառնում են գյուղ՝ կնոջից իմանալու, նա էլ ասում է. «**Վալլահ, զեթ գիտայիս չիմ, համա դե իրգոնե հրոածած ուտիլիս տեղ, մրուքը տըմբալիսը լա**» («Աստված վկա, ես չգիտեմ, բայց դե, երեկոյան թանապուր ուտելիս մորուքը տմբտմբում էր»): Գյուղացիներն էլ եզրակացնում են, որ ունեցել է:

⁵⁶⁰ Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից, էջ XVII:

⁵⁶¹ Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից, էջ 1-78:

⁵⁶² Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից, **Պառվու խրատ աստծուն**, էջ 3, այն, ինչպես նշված է, **Սենեքերիմ Շալջանի** անտիպ ժողովածուից է (էջ 105): Նույն տեղում, **Սլիկ երեց**, էջ 6-10: Արտատպված է, տե՛ս **Բենսե**, Բուլանըխ կամ Հարք գաւառ, «**Ազգագրական հանդէս**», գիրք Զ, Թիֆլիս, 1901, էջ 106-108, տե՛ս նաև **Բուլանըխ կամ Հարք գաւառ**, հաւաքեց **Բենսե**, խմբագրեց և հրատարակեց **Ե. Լալայեան**, Արտատպում **Ազգագրական հանդիսից**, Թիֆլիս, տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1901 (-Առաջին մաս՝ 7-182 էջ, Երկրորդ մաս 7-110 էջ), Երկրորդ մաս, էջ 106-108:

⁵⁶³ Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից, էջ 69:

Հաջորդ՝ «**Դերեն մորթը**»⁵⁶⁴ (№ 10) տարբերակի ասացողը 1888 թ. Ղարադաղի Դիզմարի գավառակի Խանազահ գյուղում ծնված **Հարություն Աղաջանյան** է, որը շվի ու գունա է նվագել, երիտասարդ տարիներին Բաքվում հացթուխ է աշխատել, ապա վերադարձել է հայրենի տուն և զբաղվել հողագործությամբ⁵⁶⁵: Բանահավաքը՝ **Հովհաննես Հովսեփյանը**, նույնպես խանազահցի է, ծնվել է 1921 թվականին: Մանկուց հետաքրքրվել է Ղարադաղի հայերի ազգագրությամբ և բանահյուսությամբ, բայց 1946 թ. Խորհրդային Հայաստան ներգաղթի ժամանակ, ցավոք, նրա հավաքածուն կորել է: Շուրջ երեք տասնամյակ նա կրկին նյութեր է հավաքել⁵⁶⁶:

Ըստ «**Դերեն մորթը**» պատումի՝ մեկ ամիս մառախուղ է լինում, գյուղացիները դիմում են իրենց հոգևոր հովվին՝ պարզելու, թե ինչու՞ արևը չի երևում: Նա էլ ենթադրում է, որ գուցե արևը Աստծուց նեղացել է, դուրս չի գալիս, կամ էլ հոգնել է և մի սարի հետևում պառկել, քնել է: Շինականները նրա հետ ճանապարհ են ընկնում արևին գտնելու: Տեսնում են՝ մի քարայրում ինչ-որ բան է պսպղում: Մտածում են՝ արևն է թաքնվել: Տեր հայրը ներս է մտնում: Քարայրից ճղճոց է լսվում: Պարզվում է՝ այնտեղ արջ է եղել, որի աչքերը պսպղացել են: Արջը թաթը զցում է և տեր հոր մորուքը պոկում: Նրան դուրս են քաշում՝ տեսնում՝ դեմքը պատառոտված է, և մորուքը չկա: Մի երկուսը երկմտում են՝ արդյո՞ք իրենց քահանան է, եթե նա է, ապա մորուքն ու՞ր է: Մյուսներն էլ ասում են, որ նա է, առավուտ շուտ մորուքը թողել է տանը: Վերադառնում են գյուղ, կնոջը հարցնում, թե տնից դուրս գալիս ամուսինը մորուք ունե՞ր: Նա էլ պատասխանում է. «**Քշանաց դերը շփոթ ուտիս տեղը, վհատաց իրեսեն երե մի բեն տմտմբալիս լալ**» («Վաղ առավոտյան տերտերը շփոթ⁵⁶⁷ ուտելիս կարծես երեսին մի բան տմբտմբում էր»):

Առաքել Բահաթրյանից բացի, Արցախում այս մանրապատումի մի տարբերակն էլ «**Հայ ժողովրդական հեքիաթների**» V հատորի մյուս նյութերի հետ «գրի է առել բանասեր-բանահավաք Մարգարիտ Գրիգորյանը (Սպանդարյան) 1922–1953 թթ. ընթացքում»⁵⁶⁸: Հավանաբար «1953»-ը վրիպակ է, քանի որ

⁵⁶⁴ **Հովհաննես Հովսեփյան**, Ղարադաղի հայերը, բանահյուսություն, հ. 2, ժողովածուն հրատարակության են պատրաստել և առաջաբանը գրել բան. գիտ. թեկնածու **Սվետլանա Վարդանյանը**, բանագետ **Էսթեր Խենցյանը**, պատասխանատու խմբագիր՝ բան. գիտ. թեկնածու **Ավարդ Դազիյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 (–644 էջ), էջ 340, 341:

⁵⁶⁵ **Հովհաննես Հովսեփյան**, Ղարադաղի հայերը, բանահյուսություն, հ. 2, էջ 563:

⁵⁶⁶ **Հովհաննես Հովսեփյան**, Ղարադաղի հայերը, բանահյուսություն, հ. 2, էջ 560, 561:

⁵⁶⁷ **Շփոթ** – ալյուրով, յուղով ու շաքարով պատրաստված խյուս:

⁵⁶⁸ **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Արցախ, հ. V, հատորի բնագիրը և ծանոթագրությունները՝ Ա.Մ. Նազիյանի և Մ.Ս. Գրիգորյանի (Սպանդարյան), նախաբանը գրեց

գրքում հանդիպում են և՛ 1956⁵⁶⁹, և՛ 1957⁵⁷⁰, և՛ 1958⁵⁷¹ թթ. գրառված հեքիաթներ և գվարճապատումներ (ընդհանուրը՝ 156 հատ): «Նախաբանում» բանահավաքի մասին այլ տվյալներ՝ ծննդյան թվական, աշխատանքի և բնակության վայր, կրթություն և այլն, չկան:

Նրա մասին որոշ կենսագրական տեղեկություններ կան գրքի վերջում «Ծանոթագրությունների» բաժնում. «Ներկա հատորի բոլոր հեքիաթները գրի է առել Մարգարիտ Գրիգորյանը (Սպանդարյանը) 1922–1953 թվականների ընթացքում: Լինելով բնիկ շուշեցի, Մ. Գրիգորյանը իր ծննդավայրում, դեռ վաղ մանկության հասակում սիրում և հրապուրվում է բանահյուսությամբ և դեռևս դպրոցական ուսումնառության տարիներին գրի է առնում մի շարք հեքիաթներ: Հետագայում բանասիրական հիմնավոր կրթություն ստանալով Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտում, ավարտելով ասպիրանտուրան, պաշտպանելով դիսերտացիա և աշխատելով որպես դասախոս, Մ. Գրիգորյանը երկար տարիների ընթացքում շրջագայել է Լեռնային Ղարաբաղի գյուղերն ու ավանները և եռանդուն ջանասիրությամբ ու անձնվեր սիրով հավաքել տեղի ժողովրդական բանահյուսության նյութերը՝ հեքիաթներ, առակներ, ջանգյուղումի երգեր, ժողովրդական ոճեր ու դարձվածքներ և այլն: Բացի հրատարակվող հեքիաթներից Մ. Գրիգորյանի նյութերի մեջ կան դեռևս անտիպ մի շարք հեքիաթներ (սույն հատորում ընդգրկված բնակավայրերից ու ասացողներից գրի առնված), որոնք կգետտելվեն հաջորդ հատորում»⁵⁷²:

Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի գրառումների հաջորդ հատորը լույս տեսավ 1971-ին՝ «**Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը**»⁵⁷³ վերնագրով: Գրքում հրատարակվել են 1804 խաղիկ, 28 հեքիաթ, 9 հեքիաթ-հանելուկ, 7 ավանդություն, 31 երգիծական գրույց, Պըլըպուղու 24 գվարճախոսություն, 243 հանելուկ, 461 առած-ասացվածք և այլն: «Ինստիտուտի կողմից» առաջաբանում բանահավաքի կենսագրության մասին գուցե միակ նորությունն այն է, որ սովորել է Շուշիի Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցում⁵⁷⁴:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող նրա թղթապանակներից մեկում գտանք երկու ձեռագիր «**Ինքնակենսագրություն**»:

Ա.Մ.Նազինյանը, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966 (–760 էջ), էջ 5:

⁵⁶⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, հ. V, էջ 692, 707, 711:

⁵⁷⁰ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, հ. V, էջ 691–693, 700, 701, 710, 711:

⁵⁷¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, հ. V, էջ 692–694:

⁵⁷² Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, հ. V, էջ 679:

⁵⁷³ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները՝ Մ.Մ. Գրիգորյան-Սպանդարյանի, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971 (–478 էջ):

⁵⁷⁴ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, էջ 5:

Առաջինը երկու էջ էր՝ գրված 1958 թ. դեկտեմբերի 29-ին, Երևանում: Երկրորդը կրկին երկու էջ էր, միացված «**Իմ մասին**» վերնագրով 8 էջանոց ձեռագիր կենսագրությանը՝ գրված 1963 թ. նոյեմբերի 4-ին, Երևանում: Նաև 1–24 մեքենագիր էջ (ընդհանուր էջագրմամբ՝ էջ 29–52) անվերնագիր մի ինքնակենսագրություն, որի գրելու ամսաթիվը և վայրը չեն նշված, կամ, թերևս վերջին էջերը պակասում են: Այն հղելիս պայմանականորեն կանվանենք «**Անվերնագիր**»:

Ըստ ձեռագիր «**Ինքնակենսագրությունների**»՝ Մարգարիտ Սպանդարյանը ծնվել է 1902 թ. Շուշիում: 1909 թ.՝ հոր մահից հետո, հինգհոգանոց ընտանիքը դժվարությամբ է գոյատևել:

Նրանց գերդաստանից էին «**Նոր Դար**» (Թիֆլիս) թերթի խմբագիր, հասարակական գործիչ, հրապարակախոս Սպանդար Սպանդարյանն ու որդին՝ հասարակական-քաղաքական գործիչ, լրագրող և գրաքննադատ Սուրեն Սպանդարյանը⁵⁷⁵:

Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի՝ 1958 թ. գրած ոչ մեծ ինքնակենսագրության մեջ հիշատակվում է նաև հորաքույրը. «...չեն կարող չհիշել իմ ծեր հորաքույրը՝ Ղումաշ Ավագի Սպանդարյանին, որին պարտական եմ դաստիարակությանս համար: Նա շատ հեքիաթներ էր պատմում ինձ, որոնք ես լսում էի մեծ հաճությամբ: Առաջին անգամ գրի եմ առել նրա պատմած հեքիաթներից «Ոսկե խնձորը»⁵⁷⁶ և այլ հեքիաթներ տասնչորս տարեկան հասակում, Շուշիում, որոնք չեն մնացել»⁵⁷⁷:

Շուշիի 1920 թ. հրդեհի և հայերի զանգվածային կոտորածի ժամանակ պատանեկան տարիների գրառումները ոչնչանում են: «**Անվերնագիր**» ինքնակեն-

⁵⁷⁵ Ըստ Մ. Գրիգորյան-Սպանդարյանի՝ Սպանդար Սպանդարյանն իր հոր հորեղբոր տղան էր, տե՛ս ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Ինքնակենսագրություն», 1958 թ., էջ 1: Հայկական բոլոր հանրագիտարաններում Սպանդար Ամիրջանի Սպանդարյանի ծննդավայր է նշվում Շուշին (1849 թ.), տե՛ս ՀՍՀ, հ. 11, 1985, էջ 50, ՀՀՀ, հ. 4, 2003, էջ 491: Զարմանալի է, որ Երվանդ Տեր-Մկրտչյանի «**Գանձեր Վասպուրականի**» գրքում, նշանավոր վասպուրականցիների կենսագրությունների շարքում, առանց աղբյուրները նշելու, ներկայացված է նաև Սպանդար Սպանդարյանը: Ըստ այդմ՝ «**Մշակ**»-ի խմբագիր Գրիգոր Արծրունու պատկերով վանեցի մեծահարուստ Գևորգ Արծրունին, Թիֆլիսում բնակություն հաստատելուց հետո մեծ շինարարություն է ծավալում, կառուցում է վաճառատներ և այլն, որոնց համար Վանից հավատարիմ պահապան է հրավիրում ֆիզիկական արտակարգ ուժի տեր Ամիրան Սպանդարյանին: Շուտով Ամիրանը ինքն է դառնում հարուստ վաճառական: Այդ Ամիրան աղայի հինգ զավակներից մեկն էր Սպանդար Սպանդարյանը, որը ևս բացառիկ ուժի տեր էր: Մանրամասն ներկայացվում են նրա և Սուրեն Սպանդարյանի կենսագրությունները, տե՛ս **Երուանդ Տեր Մկրտչյան**, Գանձեր Վասպուրականի, հատոր Առաջին, Պոսթոն, 1966 (–654 էջ), էջ 398–402, 403–405:

⁵⁷⁶ Պատանեկան տարիներին գրառած և կորստի մատնված հեքիաթները հորաքույրից՝ Ղումաշ Ավագյանից Մարգարիտը կրկին գրի է առել 1922 թ. ձմռանը Շուշիում: Այդ հեքիաթները տե՛ս **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. V, էջ 12–121, ասացողի մասին տե՛ս էջ 681, 682, նաև՝ **Լեոնային Ղարաբաղի բանահյուսությունը**, էջ 444, 445:

⁵⁷⁷ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Ինքնակենսագրություն», 1958,

սագրության մեջ կարդում ենք. «Լեոնազագաթի (Քեոծին կըլոխը) մշուշը փրկեց Շուշվա բնակչության մի փոքր մասին, թշնամին չէր տեսնում մշուշի միջից փախչողներին: Գնդակները պատահական կերպով էին կաչում:

... Փախչելով և մտնելով փախչող ժողովրդի հոսանքի մեջ, մեր ընտանիքը գյուղից գյուղ թափառում էր անտուն, անտեղ, քաղցած ու ցնցոտիների մեջ: Քնում էինք ուր պատահում էր, ձյան վրա, թոնրատներում, գոմերում, անձրևի տակ, սրահներում: Կերակրվում էինք վայրի կանաչեղենով: Մենք գյուղացի չէինք ու գյուղերում ոչ ոք չունեինք: Գյուղերը ևս այրվեցին ու փախչող գյուղացիների հետ մենք գնում էինք չգիտեինք թե ուր...»⁵⁷⁸:

1921թ. նրանց ընտանիքը ապաստանում է այն ժամանակ բազմազգ Բաքվում. «...գյուղերում թափառելուց հետո, մեր ընտանիքը գալիս է Բաքու: Հենց կայարանից մեզ ուղարկում են Գաղթականների տուն, ուր բազմաթիվ տաճկահայ գաղթականներ ևս կային: Այնտեղ մեզ հաց ու կերակուր են տալիս, ամերիկյան օգնության թե մի ուրիշ, լավ չեմ հիշում...: Քնում էինք հատակին: 1921թ. հունիս ամիսն էր, սպասում էի սեպտեմբերին, որ ուսումնա շարունակեմ: Հունիս ամսի վերջին ինձ գոռով, անկախ իմ կամքից ամուսնացնում են: Ես դեռ փոքր էի՝ 14–15 տարեկան»⁵⁷⁹:

Մարգարիտն ընդունում է ամուսնու ազգանունը՝ Գրիգորյան. «Ամուսինս հայ էր, արհեստավոր: Նա մեզ պահեց այն դժվարին տարիներին, մթերքների դժվարության և հերթերի ժամանակաշրջանում, մորս օգնեցի, եղբորս ու քրոջս»⁵⁸⁰:

Այնուհետև, երբ արդեն երկու երեխաների մայր էր, 4 տարի սովորում է բանֆակում՝ բանվորական միջնակարգ դպրոցում, ապա ընդունվում Բաքվի Վ. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտ, ավարտելուց հետո՝ Բաքվի պետհամալսարանի ասպիրանտուրա⁵⁸¹:

29 դեկտ., 2-րդ էջ:

⁵⁷⁸ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 2, 3 (ընդհանուր էջագրմամբ՝ էջ 30, 31): Մ. Գրիգորյան-Սպանդարյանի մասին տես նաև **Եվա Զաքարյան**, Կյանք՝ նվիրված հայրենի եզերքի բանավոր արժեքների պահպանմանը // **Շուշին՝ հայկական մշակույթի օջախ**, Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2014 (–240 էջ), էջ 117–124:

⁵⁷⁹ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 3 (էջ 31): Բ. գ. թ. Ավարդ Ղազիյանն իր araspel.wordpress.com կայքէջում նրա ծննդյան թվականը համարում է 1906թ.: Եթե Մ. Գրիգորյանի ինքնակենսագրության մեջ նշված 1902-ը ճիշտ է, ապա 1921թ. նա պետք է որ 19 տարեկան լիներ: Կարծում ենք՝ վաղ ամուսնացնելու նպատակով, հավանաբար, փաստաթղթերում նրա ծննդյան թվականը սխալ են գրել:

⁵⁸⁰ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 4 (էջ 32):

⁵⁸¹ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 5, 6 (էջ 33, 34):

1942-ին՝ պատերազմի սկզբում, զոհվում է նրա «բարի, մարդասեր ամուսինը»⁵⁸²: Մարգարիտ Գրիգորյանը մյուսների հետ Բաքվի շուրջը, ծանրագույն պայմաններում, խրամատներ է փորում: Զորակոչվում են նաև տղան ու աղջիկը⁵⁸³:

Լինելով հզոր կամքի տեր, նա պատերազմի տարիներին գրում և 1944թ. Երևանի Վ. Մոլոտովի անվան պետական համալսարանում⁵⁸⁴ պաշտպանում է «Վ. Բոլոտովը և հայ պոեզիան» թեմայով թեկնածուական ատենախոսություն⁵⁸⁵:

Թեև Բաքվի մանկավարժական ինստիտուտում նա 1937-ից դասավանդել է ռուս և արտասահմանյան գրականություն, գրել այդ թեմաներով հոդվածներ (մի մասն անտիպ), 1953-ից մինչև 1958թ.՝ աշխատել Հայոց լեզվի և գրականության ամբիոնում⁵⁸⁶, սակայն նրա իսկական կոչումը բանահավաքչությունն էր. «Ամեն ամառ իմ ողջ ընտանիքով ես գնացել եմ Լեռնային Ղարաբաղ՝ իմ գեղասքանչ ծննդավայրը, և որովհետև Շուշին այրված էր, այդ թվում և իմ հայրական տունը, ես ամառը գալիս էի Շուշի քաղաքի դիմաց գտնվող Շուշիքենդ գյուղը, որն առաջ «Շոշ» էր կոչվում:

Մենք բուն շուշեցիներ էինք... սկսած Շուշի քաղաքի հիմնադրումից, դրա համար էլ գյուղերում ոչ մի բարեկամ կամ ծանոթ չունեինք: Տուն էինք վարձում ու ապրում մերթ այս գյուղում, մերթ մի ուրիշ գյուղում, ամենից շատ այնպիսի գյուղերում, որտեղից Շուշին երևում էր: Ամեն ամառ միշտ մի օրով գնում էինք Շուշի ու ավերակների միջով անցնելով բարձրանում վերև՝ մեր հիմնովին այրված տան բակը, կանաչագարդ այգին, ուր վարդեր են փթթել, ուր կանաչ ծառեր են ծաղկել: Մի գորգի այրված կտոր, մի ապակե ամանի կտոր թանկ էր իմ սրտին, հուշեր էր բերում իմ մանկապատանեկան կյանքից ու դպրոցից»⁵⁸⁷:

Անշուշտ, իր բանահավաքչության ընթացքում Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանը տարբեր տարիների ստիպված է եղել շատ խաչընդոտներ հաղթահարել. «Պատահել է չորս օրով քաղցած եմ մնացել, գիշերելու տեղ չեմ ունեցել, պատահել է հորդ անձրևի տակ, ցեխերի մեջ խրված մի գյուղից մյուսն եմ անցել, ավտո չլինելու դեպքում ոտքով եմ գնացել և այլ դժվարություններ, երբ

⁵⁸² ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 4 (էջ 32):

⁵⁸³ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 4, 10, 11 (էջ 34, 38, 39):

⁵⁸⁴ Երևանի պետական համալսարանը 1941–1958 թթ. կոչվում էր Վ. Մոլոտովի անվան, տե՛ս **Կենսագրական հանրագիտարան**, Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (-620 էջ), էջ 6:

⁵⁸⁵ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 10, (էջ 38): Տե՛ս նաև թղթ. 2, «Диплом кандидата наук».

⁵⁸⁶ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Трудовая книжка», պատճեն:

⁵⁸⁷ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 6 (էջ 34):

գյուղերում հացի խանութ չկա, երբ ոչ ոք չունեն, որ իջնեն նրանց տանը, երբ ամաչում են հաց խնդրել փողով և այլ անհարմարություններ ու դժվարություններ են կրել:

... Ոչ ոք ինձ չի ասել «հավաքիր»: Ես այդ կատարել եմ ելնելով իմ անհուն սիրուց դեպի իմ ծննդավայրը, մեր այրված Շուշին, ասես թե ցանկանալով բուժել նրա վերքերը, ցույց տալ նրա անհասանելի բարձրության ու վեհության գոնե մի բեկոր: Այդ բխել է իմ սրտից, իմ հոգուց»⁵⁸⁸:

Ցավոք, նրա բնակարանը ևս գիտությամբ զբաղվելու համար հարմար չէր: «**Իմ մասին**» ինքնակենսագրականում կարդում ենք. «Բաքվի իմ փոքր սենյակը տոթ [էր] ու դեպի փողոցը ոչ մի պատուհան ու օդանցք չունենալով, անկարելի էր ամառը այնտեղ ապրել, այդ կիսամութ և անօդ սենյակում, ուր քառասուն տարի ապրեցի, ստիպված եմ եղել ամեն տարի ամառը գնալ մեր լեռները: 1928թ. սկսած և հետո էլ՝ 1946թ. սկսած իմ ամառային արձակուրդի ամիսներին ես գտնվեցի Լեռնային Ղարաբաղում, շրջեցի Լեռնային Ղարաբաղի գյուղերը»⁵⁸⁹:

«Ես ինձ զոհեցի իմ սրտի երագին, այն է՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսության սուրբ գործին, ես դրա մեջ զետեղեցի իմ հայրական օջախի սրբությունը Շուշում, իմ մորթված և անարգված ժողովրդի հիշատակը, իմ լավագույն դպրոցի այնքան մարդկային, արտասահմանում ուսում առած, ազնիվ ու տոկուն ուսուցիչների պայծառ հիշատակը, ինձ հետ սովորող փայլուն, գեղեցկուհի աշակերտուհիների, իմ հոշոտված ընկերուհիների անջնջելի հիշատակը: Այո, մինչև այսօր էլ ես լալիս եմ նրանց համար ընկած հուշերի ցանցի մեջ, մեն մենակ ու անամուսին, կիսամութ, փոքր ու անօդ սենյակում: Շուշուց դուրս ես էլ կյանք չեմ ճանաչում ինձ համար, չնայած այն հանգամանքին, որ ես դեռ փոքր էի, դեռ մանկապատանեկան շրջանում»⁵⁹⁰:

Նրա բանահավաքչական աշխատանքներին մեծապես նպաստում է այն, որ նա դոկտորական ատենախոսության թեմա է ընտրում Ղարաբաղի բանահյուսությունը և բարբառը: Մանկավարժական ինստիտուտի, ռուս գրականության, հայոց լեզվի և գրականության ամբիոնների ղեկավարների տված գրությունները՝ ուղղված տեղական իշխանություններին, այն վտանգավոր տարիներին Մ. Գրիգորյան-Սպանդարյանին հնարավորություն են տալիս գյուղերում անարգել գրի առնել ժողովրդական բառուրանը⁵⁹¹:

⁵⁸⁸ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, «Անվերնագիր», էջ 8, 9 (էջ 36, 37):

⁵⁸⁹ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, «Իմ մասին», էջ 4 (էջ 429):

⁵⁹⁰ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, «Անվերնագիր», էջ 12 (էջ 40):

⁵⁹¹ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Իմ մասին», էջ 3-4 (էջ 428, 429):

Նա դոկտորական ատենախոսությունն արդեն ավարտել էր, երբ 56 տարեկանում անակնկալ հիվանդանում է. «Իմ դոկտորական դիսերտացիան գրած, պատրաստ էր, երբ ես հիվանդացա: Ես մտածում էի, ինչո՞ւ պաշտպանել, սև հոդի համա՞ր⁵⁹²: Ու ես չպաշտպանեցի: Դոկտորական դիսերտացիայի մի մասը, ավելի շուտ՝ կեսը, Լեոնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսության գիտական ուսումնասիրությունն էր, որը մաս առ մաս գետնեղել եմ հեքիաթների գրքերի առաջաբաններում և տանն էլ ունեմ մյուս մասերը, իսկ երկրորդ կեսը, որի վերնագիրն է՝ «Ղարաբաղի բարբառը և Շուշի քաղաքի ենթաբարբառը», հանձնել եմ Հայաստանի ԳԱ լեզվի ինստիտուտին 1958 թ.»⁵⁹³:

«1958 թ., երբ ծանր հիվանդացա, ես մտածում էի ոչ թե իմ առողջության, այլ անդուկներով հավաքած Ղարաբաղի բանահյուսության մասին⁵⁹⁴:

...Հեշտ չէր 25 տարի միննույն տեղն աշխատել, այնպիսի տարիներին, երբ ամեն ժամ սպասվում էր վտարվելու վտանգ, աքսոր, և ինստիտուտից շատերին տարան⁵⁹⁵:

...Ես աշխատանքից հեռացա ու անցա թոշակի: ... Իմ թոշակը՝ 120 ռուբլին, հատկացնում էի իմ հավաքած նյութերը մեքենագրելու և կազմելու համար: Ես այդ նյութերից կազմեցի 10 հաստափոր գիրք»⁵⁹⁶:

Նա համառոտ ներկայացնում է դրանք: Մենք կթվարկենք մի քանիսը՝ առաջին հատոր՝ 448 էջ՝ 149 հեքիաթ, երկրորդ հատոր՝ 454 էջ՝ 123 հեքիաթ, երրորդ հատոր՝ 489 էջ՝ 86 հեքիաթ, չորրորդ հատոր՝ 481 էջ՝ 87 հեքիաթ և այլն: Նա արտագրել է նաև Շուշիի գերեզմանաքարերի վրա փորագրված բանաստեղծությունները... Բացի այս տասը հատորից, գրել է նաև Շուշիի 1910–1920 թթ. իրադարձությունները, ժողովրդի նիստուկացը, սովորույթները պատկերող հինգ գրքից բաղկացած փաստագրական վեպ (2500 մեքենագիր էջ), որը նույնպես անստիպ է⁵⁹⁷:

⁵⁹² Պայմանականորեն «Անվերնագիր» անվանված նրա հուշապատումի մեքենագիր երկրորդ օրինակի 1-ին էջի վերնի՝ վերնագրի համար նախատեսված հատվածում, ձեռագիր գրված է. «Մահացել է 6 հունիսի, 1976 թ., Բաքվում»: Բ. գ. թ. **Ավարդ Ղազիյանը** նույն տարեթիվն ու ամսաթիվն է հաղորդել ք. գ. թ. **Եվա Զաքարյանին**, տե՛ս **Եվա Զաքարյան**, Կյանք՝ նվիրված հայրենի եզերքի բանավոր արժեքների պահպանմանը, էջ 121: Մ. Գրիգորյանի ֆոնդի 2-րդ թղթապանակում, որտեղ նրա ինքնակենսագրություններն են, մի առանձին թղթի վրա, մեզ անհայտ անձը անստորագիր երկտողում գրել է, որ նա մահացել է 1972 թ. ապրիլի 8-ին, Բաքվում (Ս. Վ.):

⁵⁹³ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 22 (էջ 50):

⁵⁹⁴ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 14 (էջ 42):

⁵⁹⁵ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 15 (էջ 43):

⁵⁹⁶ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 16 (էջ 44):

⁵⁹⁷ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, «Անվերնագիր», էջ 17–19, 23, 24 (էջ 45–47, 51, 52):

«Այս ամենը 1958 թ. հունվարին բերել են Երևան, որպեսզի հանձնեն որևէ արխիվի, քանի որ հիվանդ էի, հուսահատ դրության մեջ ու չէի ուզում, որ այդ ամենն իմ մահից հետո կորչի, փչանա: Խստաշունչ ձմեռ էր, սառույցներ: Ես ամեն օր այդ ծանր գրքերը տանում էի զանազան արխիվներ, բայց չէին վերցնում:

Բոլորովին հուսահատված իջնում էի Պետական հրատարակչության սանդուղքներով, ուր հանդիպեցի իմ շատ հարգելի ուսուցիչներից մեկին՝ **Առաքել Առաքելյանին**⁵⁹⁸, որի աշակերտուհին են եղել դեռ Շուշի քաղաքի Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցում: Նա ճանաչեց ինձ, ուրախացավ լսելով այդ գրքերի մասին ու իմ մասին:

— Ես հպարտանում եմ Ձեզնով, Սպանդարյան, — ասաց նա ու բացատրեց, թե ուր պիտի տանել:

Ես տարա Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտ: Ինստիտուտի դիրեկտորն էր **Գուրգեն Հովսեփյան**⁵⁹⁹: Նա լսելով այդ ամենի մասին, ասաց, որ չեն կարող ընդունել, քանի որ ինստիտուտը մեծ միջոցներ չունի վճարելու: Ես շատ հուսահատվեցի: Ես մտածում էի, որ այդքան տարիների աշխատանքս պիտի ոչնչանա, կորչի, և իմ ժողովրդի բանահյուսությունն անհետանա: Ես խնդրեցի ձրի վերցնել: Մի փոքր մտածելուց հետո նա ասաց.

— Բերեք մյուս գրքերը ևս, ես հանձնաժողով կհրավիրեմ, եթե արժեքավոր գրքեր են, կվերցնենք: Պատասխանը կստանաք երեք օրից հետո:

Այդպես էլ եղավ: Երեք օրից հետո ես գնացի և ակնածանքով մտա դիրեկտորի կաբինետ: Այնտեղ դիրեկտորից բացի նստած էին մի քանի նշանավոր մարդիկ, որոնց դեմքով չէի ճանաչում, իսկ մեր խոշոր գիտնականների ազգանունները ես լավ գիտեի: Ընկճված և տխուր նստեցի աթոռին: Փոքր լռությունից հետո նրանցից մեկն ասաց.

⁵⁹⁸ Բ. գ. դ.-պ. **Առաքել Առաքելյանը** ծնվել է 1887 թ. Խաչենի գավառի (Ասկերան) Խանսաձախ գյուղում: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1907 թվականից ուսուցիչ է աշխատել Իգդիրում և Շուշիում, 1925–27 թթ. եղել է Լ.Ղ.Խ լուսավորության ժող. կոմիսար: Մի շարք գրքերի հեղինակ է: Դասավանդել է Երևանի բուհերում: Մահացել է 1980 թ., Երևանում, տե՛ս ՀՀՀ, հ. 1, 1990, էջ 258: **Մարինե Հարությունյանը** «Մշակութային կյանքը Լեոնային Ղարաբաղում (Արցախում)...» գրքում, առանց հղում կատարելու, մահվան տարեթիվ է նշում 1981 թ. (էջ 137): Ա. Առաքելյանի մասին առավել մանրամասն տե՛ս Բ.գ.դ. **Մխրատյանի Ավագյանի** «Ականավոր գիտնականն ու մանկավարժը (Առաքել Առաքելյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)» հոդվածում, «Սովետական մանկավարժ», ամսագիր, Երևան, 1988, № 1, էջ 71-73:

⁵⁹⁹ Զարմանալի է, որ Մ. Գրիգորյանը չի նշում, որ Բ. գ. դ. **Գուրգեն Հովսեփյանը** ևս շուշեցի էր: Գուրգեն չի իմացել: Կարծում ենք՝ Ա. Առաքելյանը կամ հենց Գ. Հովսեփյանը պետք է որ ասած լինեին: Գ. Հովսեփյանը ծնվել է 1910 թ. Շուշիում, սովորել Մոսկվայում, հայ-ռուսական գրական կապերի մասին գրքերի և հոդվածների հեղինակ է: 1946-ից աշխատել է Գրականության ինստիտուտում, 1954–64 թթ.՝ տնօրեն: Մահացել է 2000 թ., Երևանում, տե՛ս **Հայ գրատպություն և գրքարվեստ, հանրագիտարան**, Երևան, 2015, էջ 638:

— Գիտե՞ք, որ Դուք այն մեղուն եք, որն իր թևերին մեղր է բերել:

Սյուսը, թե՛

— Գիտե՞ք, որ Դուք ակադեմիկոսից ավելի եք աշխատել... Տասը հաստա-
վոր հատոր սեղանի վրա...

Իրերկտորը լուռ լսում էր: Այնուհետև նա ասաց.

— Եթե հիվանդ եք, ուզում եք Ձեզ արտասահման ուղարկենք բուժվելու:

Երևանում այդքան մերժումներից հետո ես իմ ականջներին չէի հավատում:

— Ո՛չ, ես շատ թույլ եմ, չեմ կարող արտասահման գնալ, — ասացի ես, իմ
մտքում չհավատալով լսածներին:

— Մենք կվերցնենք Ձեր գրքերը, միայն լրիվ չենք կարող վճարել, որոշ
գումար կհատկացնենք, եթե համաձայն եք, թողեք, որ պայմանագիր կնքենք:

Ես շատ ուրախացա:

— Թեկուզ ձրի էլ վերցնեք, համաձայն եմ, — ասացի ես:

Վերցրեցին, պայմանագիր կնքեցին, որ մի տարվա ընթացքում կվճարեն
որպես ժամանակավոր գիտական աշխատողի: Պահանջեցին փաստաթղթեր ու
«Գործ» կազմեցին:

Բոլոր գրքերս տվեցին **Արտաշես Նազինյանին**, որն այդտեղ էր աշխա-
տում»⁶⁰⁰:

Երիտասարդ բանագետ և բանահավաք, բանասիրական գիտ. թեկնածու
Արտաշես Նազինյանը (1924, Իջևանի շրջան, գ. Աչաջուր – 1999, Երևան) և Մար-
գարիտ Գրիգորյան-Սպանդարյանը մի քանի տարի աշխատում են Գրականու-
թյան ինստիտուտ ներկայացված, այնուհետև Հնագիտության և ազգագրության
ինստիտուտ տեղափոխված կյուրերը հրատարակության պատրաստելու վրա:

Այդ ընթացքում՝ 1959 թ., Ա. Նազինյանի խմբագրությամբ և առաջաբանով
լույս են տեսնում, հավանաբար նախօրոք պլանավորված «**Հայ ժողովրդական
հեքիաթներ**» առաջին և երկրորդ, 1962 թ.՝ երրորդ, 1963 թ., որպես գլխ. խմբա-
գիր, չորրորդ հատորները, որից հետո՝ 1966 թ.՝ Մ. Գրիգորյան-Սպանդարյանի
Արցախում գրառած բանարվեստի նմուշները, որոնց թվում՝ 1950 թ. Շուշիում,
Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի բնակիչ **Շամիր Ղազարյանի**⁶⁰¹ պատ-
մած «**Հաթերքին իրեր դերը**»⁶⁰² (№ 11) երգիծական մանրապատումը, որը մեկ

⁶⁰⁰ ՀԱԻ արխիվ, **Մարգարիտ Գրիգորյանի** ֆոնդ, թղթ. 2, «Անվերնագիր», էջ 19, 20 (էջ 47, 48): «Անվերնագիր» հուշագրության մեքենագրված օրինակն ունի բազմաթիվ ուղղա-
գրական և կետադրական սխալներ, չի խմբագրված և նույնիսկ չի վերնագրված: Մենք
տպագրելիս այս հատվածի անճշտություններն ուղղել ենք, չմիջամտելով հեղինակի
ասելիքին՝ շատ քիչ խմբագրել:

⁶⁰¹ **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Արցախ, հ. V, էջ 699:

⁶⁰² **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Արցախ, հ. V, էջ 413, 414:

վերնագրի ներքո ընդգրկում է Հաթերք գյուղի երեք քահանաների մասին երեք հաջորդական պատմություններ:

Զվարճապատումը սկսվում է այսպես. «**Ինիս ա, չինիս, մին շեն անընր Հաթերք: Էտ շենին ժողովուրթը Էնքան խավար ըն ինիս, վեր ուրանց շենին ըլնձ-չլնձ իրեք դերին նրհախ տեղան կուտուրես ըն**»⁶⁰³: Ըստ ասացողի՝ **հաթերքցիներն** այնքան խավարամիտ են եղել, որ իզուր տեղն իրենց երեք հոգևորականների մահվան պատճառ են դարձել: Երբ և ինչու՞ է ծագել նման կարծիքը հաթերքցիների մասին, մենք չգիտենք, բայց հայտնի են հակառակը հաստատող փաստեր:

Գյուղից ոչ հեռու գտնված Հաթերք բերդավանը XII–XIII դդ. **Հաթերքի իշխանության** կենտրոնն էր⁶⁰⁴: 1184թ. Հաթերքի տեր և Խաչենի իշխանաց իշխան **Վախթանգն** իր նստավայր է հրավիրել մեծ իրավագետ **Մխիթար Գոշին**, որը Հաթերքի դղյակում՝ «ի դղեկին, որ անուանի Հայթերք»⁶⁰⁵, գրել է նշանավոր «**Դատաստանագիրքը**»⁶⁰⁶: Մի քանի տարի անց իշխանաց իշխան Վախթանգն ու եղբայրները երկրաշարժից ավերված Գետիկի վանքի տեղում Մխիթար Գոշի համար կառուցել են Նոր Գետիկի վանքը⁶⁰⁷՝ հայտնի **Գոշավանքը**: Այս փաստերն արդեն իսկ վկայում են մեր գիտությանն ու մշակույթին հաթերքցիների քերած հսկայական նպաստի մասին:

Հետագա դարերում հաթերքցիներին դառնադետ ճակատագիր է բաժին հասել, պատերազմների ու **Շահ Աբասի** իրագործած հրեշավոր ծրագրի՝ 1603–1605 թթ. հայերի Պարսկաստան բռնագաղթի⁶⁰⁸ հետևանքով հաթերքցիների մի մասը կամ նրանց սերունդները սփռվել են տարբեր երկրներում, այդ թվում՝

⁶⁰³ **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Արցախ, հ. V, էջ 413:

⁶⁰⁴ **Բագրատ Ուլուբարյան**, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, ՀԳԱ հրատ., 1975 (–456 էջ), էջ 144–149:

⁶⁰⁵ **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա. (Ե. դարից մինչև 1250 թ.), 48 նմանահանություններով, Անթիլիաս, տպարան կաթողիկոսության հայոց Կիլիկիոյ, 1951 (–658 էջ), սյուն 505:

⁶⁰⁶ **Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց**, իրավաբանական հետազոտությունք հանդերձ ծանոթութեամբք **Վահան Ծ. վարդապետի Բատամեանց** միաբանի Սրբոյ Էջմիածնի եւ վանահոր Ս. Գայանեայ վանուց, ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1880 (–634 էջ), էջ 84: **Բագրատ Ուլուբարյան**, նշվ. աշխ. էջ 146:

⁶⁰⁷ Նոր Գետիկի վանքի կառուցման մասին տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Վարազ Առաքելյանի**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982 (–352 էջ), էջ 123, 125, 127, 128, 151–158:

⁶⁰⁸ **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, թարգմանությունը առաջաբանը և ծանոթագրությունները **Վարազ Առաքելյանի**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988 (–592 էջ), էջ 40–66: **Սերգեյ Վարդանյան**, Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, «Ապոլոն» հրատ., 1995 (–264 էջ + 24 էջ գունավոր ներդիր + 450 սև-սպիտակ և գունավոր լուսանկարներ, վիմագրություններ, քարտեզներ և այլն), էջ 195, 196:

Իտալիայում: XVII դ. վերջին և XVIII դարի սկզբին **Վենետիկում** և **Լիվոռնոյում** թանկարժեք քարերի մեծահարուստ վաճառական, ծագումով հաթերքցի **Ադա դի Մաթուսը**, որը հարաբերություններ ուներ նույնիսկ **Լյուդովիկոս XIV թագավորի** և **Հոմի պապի** հետ, իր միջոցներով Լիվոռնո քաղաքում կանգնեցրել է հայկական եկեղեցի⁶⁰⁹, որի կառուցման բազում դժվարություններից անդրադարձած **Մեսրոպ վրդ. Ուղուրյանը** նրա մասին գրում է. «Մոյն հիմնադիր Հայն էր Պարոն Մաթուս Ադա Տերտերենց, հարազատ սերունդ Օղլանքեշիշեանց Թեոդորոսի Ադուանից իշխանին: Բարեյիշատակ Իննովկենտիոս ԺԲ իր առաքելական կրկին կոնդակօքն յ17 և յ18 Հոկտեմբերի 1698, շնորհեց Ադային մեծամեծ արտօնություններ, և մասնատր առանձնաշնորհություններ, անուանելով գնա Քաղաքացի Հոովմայ, Լատերանեան կոնս, և Ասպետ զինտորութեան Ոսկի Խաչի»⁶¹⁰:

Հետագայում ևս, ընդհուպ մինչև մեր օրերը, հաթերքցիները շատ ճանաչված մարդիկ ու գիտնականներ են տվել⁶¹¹:

Ինչպես նշել ենք, այս զավեշտապատումի վերնագրի տակ երեք առանձին պատմություններ են միավորվել: Առաջինն այն մասին է, թե ինչպես են հաթերքցիները արտում աղ ցանում, որ աղ հնձեն (AaTh № 1200): Ցանում են, գնում են տեսնում, որ մի ծաղկի վրա «պրոթալրթոնո ճանջեր»՝ բրդոտ, մազմզոտ ճանճեր են հավաքվել: Որ իրենց աղի բերքը չփչացնեն, թրով, թվանքով հարձակվում են ճանճերի վրա: Նրանցից մեկը փախչում, նստում է քահանայի կրծքին: Քահանան եղբորը ձեռքով հասկացնում է, որ կրակի ճանճի վրա: Նա էլ կրակում է ու իր եղբորը սպանում⁶¹²:

Զվարճապատումի մի տարբերակ էլ՝ «**Հըթըրքեցուց աղ վարելը**»⁶¹³ վերնագրով 1978 թ. լույս է ընծայել «Հայաստան» հրատակչությունը: Անշուշտ, լավ նախաձեռնություն է, բայց «**Նմուշներ Լեոնային Ղարաբաղի ժողովրդական**

⁶⁰⁹ **Սոնա Թաջիրեան**, Խոջա Մինաս Մինասեանի հաշուեմատեանը, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 2019, №1–12, սյուն 195–198:

⁶¹⁰ **Մեսրոպ վարդապետ Ուղուրյան**, Պատմութիւն հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցոյ նոցա ի Լիւոռնոյ քաղաքին: Հանդերձ յաւելումաձովք, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1891 (–326 էջ), էջ 83:

⁶¹¹ «Հայերք» // **Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.3, Երևան, ԵՊՀ հրատ., 1991 (–992 էջ), էջ 304: **Միքայել Աղաջանյան**, Հայերք. Պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2012 (–688 էջ):

⁶¹² **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Արցախ, հ. V, էջ 413:

⁶¹³ **Նմուշներ Լեոնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից**, կազմողներ՝ **Միքայել Առաքելյան, Ռոբերտ Ղահրամանյան**, Լեոնային Ղարաբաղի ժողովրդական ստեղծագործության մարզային տուն, Երևան, «Հայաստան» հրատ., 1978 (–224 էջ), էջ 100:

բանահյուսությունից» 224 էջանոց ժողովածուի հարյուրավոր նյութերից ոչ մեկի, այդ թվում՝ այս գավեշտալի պատումի բանասացի, բանահավաքի, գրառման տեղի ու ժամանակի մասին **բացարձակապես ոչինչ չի նշված**:

Այս երգիծական մանրավեպի տարբերակը պատմում են նաև **կրոնափոխ համշենցիները**: Այն գրի ենք առել 2014թ. Թուրքիայի Արդվիհի նահանգի Բորչքա քաղաքում: Ասացողը՝ **Ջելիյա Բորլսմազը** (Zeliha Korkmaz) ծնվել է 1927 թ. Բորչքայի գավառում՝ բարձր լեռներում գտնվող **Շշիլքեոյ** (նախկինում՝ Մանաստըր) գյուղում: Այս տարբերակում աղը ցանում են երկու եղբայր, հետո արտում նրանցից մեկի ճակատին մորելիս (ինչպես կրոնափոխ համշենցիներն են ասում՝ թուսթերչիչ, թուսթերչիգ) է նստում: Եղբայրը կրակում է մորելիս վրա ու սպանում եղբորը և մորելիսներին ասում. «**Մեզ հաղիգ մե ցինա քենաց, մեզ հաղիգ մե մինա քենաց**» («Մեկը ձեզանից գնաց, մեկն էլ մեզանից գնաց»)»⁶¹⁴ (№12, №12/1):

Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի գրառած «**Հաթերքին իրեր դերը**» (№11) երգիծապատումի երկրորդ քահանային վերաբերող հատվածը շատ ընդհանրություններ ունի մեր քննարկած սյուժեների հետ: Այն նման է Ղարադաղի տարբերակին, բայց արջի փոխարեն հանդես է գալիս գայլը, որը պոկում է տերտերի գլուխը:

Ըստ այդ պատումի՝ մշուշը ծածկում է արևը: Գյուղացիները ճանապարհ են ընկնում, որ արևին գտնեն: Տեսնում են՝ մի քարայրի մեջ մի բան է պեծպեծում: Կարծում են՝ արևն է: Քահանային քարայրն են մտցնում ու երբ ոտքերից դուրս են քաշում, պարզվում է՝ գլուխը չկա: Վերադառնում են գյուղ՝ կնոջը հարցնում, թե տնից դուրս գալիս ամուսնու գլուխը վրան է եղել: Նա էլ ասում է. «**Յըես գիդնս չըմ կըլոխը յրան ա իլնլ թնն չե, միննկ փրոթուշ օտելիս տեղը մըրոքը տըմբտըմբացալ ա**»⁶¹⁵ («Ես չգիտեմ գլուխը վրան է եղել թե չե, միայն [հիշում եմ] փոթուշ⁶¹⁶ ուտելիս մորուքը տմբտմբում էր»):

Արցախում մեկ այլ տարբերակ՝ «**Աղորը կոխը**»⁶¹⁷ (№13), 1970թ. թղթին է հանձնել ԼՂ Մարտունու շրջանի Աշան գյուղի դպրոցի հայոց լեզվի և գրականության երկարամյա ուսուցիչ, բանահավաք **Լևոն Հարությունյանը** (1928, գ.

⁶¹⁴ **Սերգեյ Վարդանյան**, Նոր գրառումներ Արդվիհի նահանգի Բորչքա քաղաքում, Աղ ցանուշե, «**Ձայն համշենական**», 2014, №9–10, էջ 8:

⁶¹⁵ **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Արցախ, հ V, էջ 414:

⁶¹⁶ **Փոթուշ** – մաճնի մեջ փրթած հացով կամ լավաշով, երբեմն նաև կտրտված վարունգով ուտելիք:

⁶¹⁷ **Լևոն Հարությունյան**, Նշխարներ Արցախի բանահյուսության, երկրորդ գիրք, Ստեփանակերտ, ԼՂՀ գրողների միության «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2004 (–424 էջ), էջ 60, 61:

Աշան–2012, գ. Աշան): Ասացողը 1924թ. Բերդաշեն գյուղում ծնված **Անիբար Իսրայելյանն**⁶¹⁸ է:

Ըստ այս պատումի՝ երեք հոգի գնում են որսի, քահանան էլ՝ հետները: Ուժեղ մշուշ է լինում: Ձորից լույս է երևում: Տեր հայրը զգուշացնում է, որ Աստվածն է, առաջարկում է՝ առջևը չոքեն ու խաչ անեն: Իջնում են ձորը, բայց այլևս լույսը չեն տեսնում: Ձորում՝ ժայռի վրա, մի «ծակ»՝ որջ է լինում: Քահանան ասում է, որ Աստվածն այնտեղ է, երբ ինքը մտնի և ոտքերը մկրատածն շարժի, ուրեմն Աստծուն գրկել է, ընկերները թող դուրս քաշեն: Քարայրում արջը նրա գլուխը պոկում է: Նրան դուրս են հանում, տեսնում, որ առանց գլխի է: Վերադառնում են գյուղ, երեցկնոջը հարցնում, թե որսի գնալիս ամուսինը գլուխ ունե՞ր: Նա էլ տրամաբանելով պատասխանում է. «**Սօրվանից տեղեկություն չունիմ, ամա իրեք օր սանա առաչ, աղանձ ըմ ըրալ, ինքն էլ աղանձ ա կերալ: Պա վեր ըլալ չի հու՛նց ա կերալ**»⁶¹⁹ («Այսօրվանից տեղեկություն չունեմ, բայց սրանից երեք օր առաջ աղանձ եմ պատրաստել, ինքն էլ աղանձ է կերել: Բա որ չի եղել, ո՞նց է կերել»):

Արցախում մեզ հայտնի չորրորդ գրառումը նույնպես արվել է 1970թ., Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղում, որտեղ 1894թ. ծնվել է ասացողը՝ **Հայրապետ Գրիգորյանը**: Գրառողի՝ **Միքայել Օհանջանյանի** (ծածկանունը՝ Մոպեր Ղարաբաղցի), հավաքածուի երկու մատյանները գտնվում են Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում: Մեզ հետաքրքրող «**Վերսկան դերը**»⁶²⁰ (№14), («Որսորդ տերտերը») զվարճապատումը Ա տեսրում է, որտեղ մեկտեղված են 148, ինչպես բանահավաքն է գրել՝ «հեքիաթ-անեկդոտներ (քաթ-մնսանլներ)»:

Ըստ այս պատումի՝ քահանան ու գյուղացին որսի ժամանակ ծմակում արջի թարմ հետքի են հանդիպում, գնում են տեսնում՝ արջն իր բունն է մտել: Գյուղացին տեր հորը համոզում է, որ աղոթք ասելով, Աստծուն աղաչելով՝ ներս խցկվի, արջին բռնի, ինքն էլ՝ նրան, միասին քաշեն, հանեն, մորթեն, միսը կիսեն, շալակած տուն տանեն: Տեր հայրը քթի տակ աղոթելով՝ չորեքթաթ մտնում է բունը: Արջը նրա գլուխն է բռնում, գյուղացին էլ՝ ոտքերը, երկու կողմից ուժեղ ձգում են: Գյուղացին քահանային դուրս է բերում, տեսնում՝ գլուխ չունի: Մտում է զարմացած: Մտածում է՝ երեցկնոջը հարցնի, թե այսօր ամուսնու գլուխը վրան է եղել: Տեր հորը շալակում, տանում է, թողնում գյուղի մոտ, ինքը գնում է երեցկնոջը

⁶¹⁸ **Լևոն Հարությունյան**, Նշխարներ Արցախի բանահյուսության, երկրորդ գիրք, էջ 366:

⁶¹⁹ **Լևոն Հարությունյան**, Նշխարներ Արցախի բանահյուսության, երկրորդ գիրք, էջ 61:

⁶²⁰ ՀԱԻ արխիվ, թղթ. «**Միքայել Պետրոսի Օհանջանյան (Մոպեր Ղարաբաղցի)**, ԼՂԻՄ, գ. Խանաբաղ, Հեքիաթ-անեկդոտներ (Քաթ-մնսանլներ), Ա տեսր, 1976թ.», FF XII: 7105-7401 (էջ 7153):

հարցնում, նա էլ պատասխանում է. «**Դնուզն ասած, իսկի իտի լավ տնտղալ չըմ, իտի խորդավաթը մննես չի, լիա են ա մննես, վեր ուրուգյոնն աղանձ ուտելիս մրոքը տուրուր կյալիս ա իլալ**»⁶²¹ («Ճիշտն ասած, բոլորովին դրա վրա լավ ուշադրություն չեմ դարձրել, այդպիսի մանր-մունր բաները չեմ հիշում, միայն այն եմ հիշում, որ երեկոյան աղանձ ուտելիս մորուքը իրար էր գալիս»):

Որստորըը վերադառնում է, բայց քահանայի մարմինը նույն տեղում չի լինում, շատ է փնտրում, չի գտնում: Հետ է դառնում երեցկնոջ մոտ, ասում. «**Դերը ինձ թողալ ա, թաքուն քեցալ վերս: Հինչու պիրի կասիս ինձետե փայ դարկե**»⁶²² («Տերտերը ինձ թողել է, թաքուն գնացել որսի: Ինչ որ բերի, կասես՝ ինձ համար բաժին ուղարկի»):

Ի դեպ, այս գվարճալի պատումի՝ մեզ ծանոթ համարյա բոլոր հայերեն տարբերակները, այդ թվում՝ կրոնավոյս համշենահայերից գրառվածները, ավարտվում են գոհի (քահանայի) կնոջ կամ գյուղի «խելացիի» պատասխանով, **արցախյան այս մանրավեպն այն եզակիներից է, որ դրանից հետո էլ գործողությունը շարունակվում է:**

ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Նախիջևանում ևս պատմվել են այս երգիծապատումի փոփոխակները: Դրանցից առաջինն իր «**Ագուլեցոց բարբառը**»⁶²³ գրքում 1883թ. Մոսկվայում հրատարակել է **Սարգիս Սարգսյանցը**: Նույն թվականին Թիֆլիսում էլ **Հովհաննես Նազարյանցն** է իր «**Անեկդոտներ**» ժողովածուում զետեղել **Կաճեթ** գյուղի քահանայի մասին Շատախի բարբառով մի մանրավեպ⁶²⁴: Այս երկուսը նմանատիպ պոեմներով հայերեն գվարճապատումների շարքում մեզ հայտնի առաջին տպագրված նմուշներն են:

Իսկ ո՞վ էր **Սարգիս Սարգսյանցը**, որը 1883թ., երբ դեռ շատ հազվադեպ էին բարբառագիտական և բանահյուսական ժողովածուները, լույս է ընծայել

⁶²¹ ՀԱԻ արխիվ, թղթ. «Միքայել Պետրոսի Օհանջանյան (Մոպեր Ղարաբաղի), ԼՂԻՄ, գ. Խանաբաղ, Հեքիաթ-անեկդոտներ (Քաթ-մնասնլներ), Ա տետր, 1976թ.», FF XII: 7105-7401, էջ 7153:

⁶²² ՀԱԻ արխիվ, թղթ. «Միքայել Պետրոսի Օհանջանյան (Մոպեր Ղարաբաղի), ԼՂԻՄ, գ. Խանաբաղ, Հեքիաթ-անեկդոտներ (Քաթ-մնասնլներ), Ա տետր, 1976թ.», FF XII: 7105-7401 (էջ 7153):

⁶²³ **Սարգիս Սարգսյանց**, Ագուլեցոց բարբառը (Զօկերի լեզուն), լեզուաբանական հետազոտություն, մասն I, մասն II, ժողովածու, Մոսկվա, Скоропечатная О. Гербека, 1883 (մասն I, -136 էջ + մաս II, -74 էջ), մաս II, էջ 49, 50:

⁶²⁴ **Անեկդոտներ**, հատոր III, աշխատասիրեց **Յովհաննէս Նազարեանց**, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. Տպարան, 1883 (-256 + XII էջ), էջ 64, 65:

այդպիսի լուրջ գիտական աշխատություն: Զարմանալի է, բայց նրա մասին կենսագրական տեղեկություններ չգտանք հայկական հանրագիտարաններում, բարբառագիտական և բանագիտական գրքերում և հոդվածներում, անգամ բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Մարի Զաքարյանի** (ծնվ. 1943, Երևան, սերում է Գողթն գավառից) 2008թ. հրատարակած «**Ազուլիսի բարբառի բառարան**»⁶²⁵ ընդարձակ ուսումնասիրության մեջ, նախիջևանագետ, բազմաթիվ գրքերի և հոդվածների հեղինակ Արգամ Այվազյանի (ծնվ. 1947, Նախիջևանի ԻՀ Շահբուզի շրջ., գ. Առինջ) «**Ազուլիսի բարբառի մասունքներ**» (2011)⁶²⁶ ստվարածավալ աշխատությունում:

Թեև ապագա մեծանուն գիտնական, ակադեմիկոս **Մանուկ Աբեղյանը** 25 տարեկանում՝ 1890թ., Թիֆլիսի «**Նոր-Գար**» թերթի հինգ համարներում տպագրված իր «**Ժողովրդական լեզուի շեշտադրութիւնը (Արևելեան ճիւղի բարբառների մէջ)**» հոդվածաշարում⁶²⁷ անդրադառնում է նաև Ս. Սարգսյանցի «**Ազուլեցոց բարբառը**» գրքին⁶²⁸, բայց հեղինակի մասին ոչինչ չի գրում:

Տարբեր աղբյուրներում մեր որոնումների ընթացքում մեզ հանդիպեց «Արմենայրես» պետական լրատվական գործակալության 2015թ. հունիսի 15-ին տարածած Խոսրով Խղաթյանի «**Գավառի սուրբ Կարապետ եկեղեցու բակում նշանավոր հայագետ է թաղված**» հոդվածը: Պարզվեց՝ խոսքը Սարգիս Սարգսյանցի մասին է: Այն սկսվում է այսպես. «Նախկին մանկավարժ, ազգագրագետ, Սարուխան գյուղի բնակիչ Խաչիկ Ենգիբարյանը վերջին տարիներին զբաղվել է Գավառ քաղաքի սուրբ Կարապետ եկեղեցու բակում ավելի քան 120 տարի առաջ թաղված Սարգիս Սարգսյանցի ծավալած գործունեության ուսումնասիրությամբ: ...Տապանաքարի արձանագրությունը հետևյալն է. «Տապանը հաշտարար դատավորի՝ Երեանյան գավառի Կոլլեժսկի Ասեստր Սարգիս Սարգսյանցի՝ ծնվ. Նովիսի, 1833թ. 6 ապրիլի, վխճ. 1894թ., 17 օգոստոսի»: Նույնը գրված է նաև ռուսերեն»: Խաչիկ Ենգիբարյանը լրագրողին ասում է. «Տարբեր

⁶²⁵ **Մարի Զաքարյան**, Ազուլիսի բարբառի բառարան (ինքնության բացահայտում), Երևան, Իրավունք հրատ., 2008 (-352 էջ):

⁶²⁶ **Ազուլիսի բարբառի մասունքներ**, աշխատասիրությամբ **Արգամ Այվազյանի**: Կանխաբանությունը, բառարանի, ազգագրական նյութերի կազմումը ու ծանոթագրությունները **Ա. Այվազյանի**, Երևան, հեղինակային հրատարակություն, «Գասպրինտ» տպագրատուն, 2011 (-616 էջ):

⁶²⁷ **Մ[անուկ] Աբեղեան**, Ժողովրդական լեզուի շեշտադրութիւնը (Արևելեան ճիւղի բարբառների մէջ), «**Նոր-Գար**», թերթ, Թիֆլիս, 1890, սեպտեմբերի 20, №141, էջ 1, 2, սեպտեմբերի 22, №142, էջ 1, 2, սեպտեմբերի 25, №143, էջ 1, 2, սեպտեմբերի 26, №144, էջ 1, 2, սեպտեմբերի 27, №145, էջ 1, 2:

⁶²⁸ **Մ[անուկ] Աբեղեան**, Ժողովրդական լեզուի շեշտադրութիւնը (Արևելեան ճիւղի բարբառների մէջ), «**Նոր-Գար**», 1890, սեպտեմբերի 20, №141, էջ 1, 2, սեպտեմբերի 26, №144, էջ 1:

արխիվներից ու փաստաթղթերից տեղեկացել են, որ Սարգիս Սարգսյանը Ռուսական Կայսրության կողմից 1868թ. Երևան գավառի դատարաններում զբաղեցրել է ատենակալի պաշտոն, իսկ տարբեր ժամանակներում պաշտոնավարել է նաև արքունի գանձարանում, ռազմական դատարաններում, եղել կոլեգիական խորհրդական: Մեր ուսումնասիրությունը հանգեցրեց նրան, որ Սարգիսը, բացի պետական պաշտոնյա լինելուց, եղել է նաև հայտնի մտավորական: Նա ուսումնասիրել է Ազուլիսի լեզուն: Սարգիս Սարգսյանցի ուսումնասիրած լեզվաբանական հետազոտության առաջին մասը՝ «Ազուլեցոց բարբառը եւ Ջոկերի լեզուն» աշխատությունը հրատարակվել է Մոսկվայում: Ջոկերի լեզվախմբի բարբառը մեր իրականության մեջ այլ ուսումնասիրող չի ունեցել»: Խ. Ենգիբարյանի համար չպարզաբանված է մնում, թե ինչո՞ւ են Սարգսյանցին Նոր Բայազետում թաղել. «Տեսազոտողը ենթադրում է, թե դա կապված է այն բանի հետ, որ Սարգսյանը կյանքի վերջին ժամանակահատվածում պաշտոնավարել է Նոր Բայազետում»:

Անշուշտ, ուրախալի էր, որ մեր առաջին բարբառագետներից և բանահավաքներից մեկի մասին, ի վերջո հնարավոր եղավ որոշ կարևոր տեղեկություններ իմանալ, բայց շատ կասկածելի էր, որ դատարաններում ատենակալ, ռազմական դատարաններում և արքունի գանձարանում պաշտոնավարած, Նուխիից (այժմ՝ Շաքի, Ադրբեյջանում) եկած ոչ մասնագետը կարող էր Ազուլիսի դժվարին բարբառի մասին նման բարձրարժեք գիտական ուսումնասիրություն գրել: Նաև հարց էր ծագում, թե ինչո՞ւ է Երևանի նահանգի բնակիչն իր գիրքը հրատարակել հեռավոր Մոսկվայում: Իսկ գուցե հեղինակն ապրել է հենց Մոսկվայում: Ահա, այստեղ անգնահատելի օգնություն ցուցաբերեց Մոսկվայի հայկական Ս. Հարություն եկեղեցու գերեզմանատան մասին **Սամվել Մուրադյանի** 2007 թ. հրատարակած «**Армянское Ваганьковское кладбище (к 200-летию со дня основания)**»⁶²⁹ («Հայկական Վագանկովյան գերեզմանոցը (հիմնադրման 200-ամյակի առթիվ)» գիրքը:

Սամվել Մուրադյանը նույնպես արմատներով Գողթնից է՝ Նախիջևանի Օրդուբադի շրջանի Բիստ գյուղից, 1988-ին Երևանից բնակության է մեկնել Մոսկվա, որտեղ աշխատանքին զուգահեռ՝ Մոսկվայի Կենտրոնական արխիվում և տպագիր աղբյուրներում տվյալներ է հավաքել հայկական գերեզմանատան մասին⁶³⁰:

Ահա, այդ գրքում՝ 69-րդ համարի տակ կարդում ենք. «Саркисов Сергей Иванович (1854-1892), деревня Цхна Нахичеванского уезда Эриванской губернии,

⁶²⁹ **Самвел Мурадян**, Армянское Ваганьковское кладбище (к 200-летию со дня основания), Ереван, «Грабер» изд., 2007 (–108 с.).

⁶³⁰ **Самвел Мурадян**, Армянское Ваганьковское кладбище, с. 103–105.

преподаватель ЛИВЯ»⁶³¹, այսինքն նա Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի դասախոս է եղել: Տպագրվել է նաև դամբանաքարի լուսանկարը՝ վրան հայերեն գրված «**Սարգիս Յ. Սարգսեանց**», «**ծնաւ Գողթան գաւառի Յաղնայ գիղում**», ծննդյան և մահվան տարեթվերը, իսկ կողեզրին փորագրված է նրան նվիրված 6 տող բանաստեղծություն.

...Դու թոթափեցիր հրնություն փոշիք՝
Հըմտալից գրչով տեղ տալով Գողթնին...

Հեղինակը նշված է՝ «Գր. Խ.», պարզ է, որ նշանավոր հայագետ **Գրիգոր Խալաթյանցն** է (1858, Ալեքսանդրապոլ–1912, Թիֆլիս), որը 1886-ից մինչև իր մահը հայագիտական առարկաներ է դասավանդել Լազարյան ճեմարանում, հրատարակել «Ազգագրական հարցարանը» (1887), խմբագրել «**Էմինեան ազգագրական ժողովածուի**» 1–8 հատորները (1901– 1911թթ.):

Արդեն կասկած չկար, որ **Սարգիս Սարգսյանցի** շիրմաքարը հենց սա էր: Այդ մասին գրուցեցի նաև նախիջևանագետ **Արզամ Այվազյանի** հետ: Նա ասաց, որ ինքն էլ է **Սամվել Մուրադյանի** գրքում հրատարակված տապանաքարը հիմք ընդունել Սարգիս Սարգսյանցի մասին իր գրած համառոտ կենսագրականում⁶³²:

Այսպիսով, հանիրավի մոռացված գիտնական **Սարգիս Սարգսյանցն** «Ազուլեցոց բարբառը» գիրքը հրատարակել է 29 տարեկանում և կյանքից վաղաժամ հեռացել 38-ում:

Քանի որ արդեն հայտնի էին նրա մահվան տարեթիվն ու ամսաթիվը՝ 1892թ. մարտի 29-ը, որոշեցինք կարդալ այդ օրերի մամուլը: Թիֆլիսի «**Մշակ**» թերթի 1892թ. ապրիլի 2-ի համարում, հենց առաջին էջի վերին՝ ամենաերևացող տեղում, որպես կարևոր լուր՝ տպագրված էր. «Մարտի 30-ին, կարճատև հիանդութիւնից յետոյ, Սօսկվայում վախճանվեց յայտնի լեզուագէտ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՅ: Հանգուցեալի հօրեղբօր որդի Լևոն Սարգսեանց հրաւիրում է հանգուցեալի ծանոթներին և յիշատակը յարգողներին ներկայ գտնվել ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻՆ, որը լինելու է այսօր, հինգշաբթի, ապրիլի 2-ին, Քամոյանց եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 11½-ին»⁶³³:

Սարգիս Սարգսյանցի հորեղբոր տղան՝ **Լևոն Սարգսյանցը**, նրանից 8 տարի փոքր էր, նույնպես ծնվել էր Ցղնայում: Նա 1888-ին ավարտելով Մոսկվայի պետական համալսարանի բնագիտության բաժինը, նույն տարում՝ 26 տարեկանում, շրջագայելով Արևմտյան Հայաստանում, «Այց Թիւրքաց Հայաստանին» (1890) գրքում նկարագրելով իր ճանապարհորդությունը՝ առաջիններից

⁶³¹ **Самвел Мурадян**, Армянское Ваганьковское кладбище, с. 103–105.

⁶³² **Արզամ Այվազյան**, Նախիջևան, հայկագույնք: Ով ով է: Կենսագրական հանրագիտարան, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2012 (–384 էջ), էջ 207, 208:

⁶³³ «**Մշակ**», Թիֆլիս, 1892, ապրիլի 2, №38, էջ 1:

մեկն է, որ հիշատակում է նաև քրիստոնյա համշենահայերին, նրանց անվանելով «**լազ-հայ**» և բացատրում. ««**Լազ**» **անունը ընդհանրապես տալիս են լազատանցիներին, չ'որոշելով իսկական լազին լազատանցի տաճկից, յոյ-նից և հայից**»⁶³⁴:

Մինչև 1892թ. նա դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան և Գայանյան դպրոցներում, այնուհետև եղել է Շուշիի թեմական դպրոցի տեսուչ, 1895–1900 թթ.՝ Լազարյան ճեմարանի դասախոս, վերադառնալով Թիֆլիս՝ խմբագրել է «**Մուրճ**» ամսագիրը: 1918թ. ընտրվել է Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ⁶³⁵:

Ի տարբերություն «**Մշակի**»՝ «**Նոր-Դար**» թերթի «Քրոնիկոն» բաժնում տպագրված անվերնագիր և անստորագիր հոդվածը որոշ տեղեկություններ է հաղորդում Սարգիս Սարգսյանցի մասին. «Այս օրերս Թիֆլիսում ստացուած մի հեռագրից ցատով սրտի իմանում ենք, որ Մոսկուայում վախճանուել է «Ազուլեցոց բարբառը» յայտնի լեզուագիտական ուսումնասիրութեան հեղինակ լեզուագէտ Սարգիս Սարգսեանը:

Ի նկատի ունենալով, որ մեր լեզուի և բազմազան բարբառների ուսումնասիրութեան մեծ կարիք կայ և լեզուագիտական հետազոտութեան ճիւղը մեր գրականութեան մէջ ահագին թերութիւն ունի և ընդ նմին գիտնական-լեզուագէտներին մեր մէջ մատնետով կարելի է համարել, – Սարգիս Սարգսեանի մահը շատ զգալի կորուստ է հանդիսանում մեզ համար:

Հանգուցեալը 1878/9 թուականին Գէորգեան ճեմարանում ուսուցչի պաշտոն էր վարում, այդ ժամանակուա արդիւնք է «Ազուլեցոց բարբառը» ուսումնասիրութիւնը, այնուհետև ուսուցչութեան պաշտօն վարել է Խարկովում և Մոսկուայում՝ Լազարեան ճեմարանում: 1879 թուականից ի վեր նա պարապում էր մեր աշխարհաբար լեզուի պատմութեան ուսումնասիրութեամբ, իսկ վերջերս առանձին եռանդով էր զբաղում իր ընտրած ճիւղի մշակութեամբ:

Սարգիս Սարգսեանցի մահը զգալի է մանաւանդ, որ նա վախճանուել է տակաւին երիտասարդ հասակում և մեր լեզուի ուսումնասիրութիւնը շատ ակնկալութիւններ ունէր նրանից»⁶³⁶:

Սարգիս Սարգսյանցն իր գրքի «**Անեկդոտներ**» բաժնում տպագրել է 17 գվարճապատում, որոնցից վերապատմում ենք նախավերջինը, որը պայմանականորեն վերնագրել ենք «**Ռըմնցիք ու լուսնըկօս**» (№15):

Մի օր Ռամիս գյուղի շինականները տեսնում են, որ լուսինը չի երևում: Տեր

⁶³⁴ **Լեոն Սարգսեանց**, Այց Թիլլիքաց Հայաստանին (Հայ տուրիստի յիշողութիւններից), Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռօտինեանցի, 1890 (–286 էջ), էջ 207:

⁶³⁵ «Սարգսյան Լեոն Դավթի» // ՀՄՀ, հ. 10, Երևան, 1984, էջ 222: «Սարգսյան Լեոն Դավթի» // ՀՀՀ, հ. 4, Երևան, 2003, էջ 361:

⁶³⁶ Քրոնիկոն, «**Նոր-Դար**», Թիֆլիս, 1892, ասպիլի 4, №57, էջ 2:

հոր հետ ճանապարհ են ընկնում, որ լուսնին գտնեն: Հասնում են մի քարայրի: Մտածում են՝ լուսինն այնտեղ է թաքնվել: Քահանայի ոտքերից պարան են կապում, ուղարկում քարայրի խորքը: Սպասում են, բայց նա դուրս չի գալիս: Բանից պարզվում է՝ այնտեղ արջ է լինում, որն իսկույն բռնում է նրա գլուխը: Գյուղացիները տեր հորը պարանով դուրս են քաշում, բայց գլուխը մնում է արջի թաթերի մեջ: Ոչ ոք չի հիշում, թե քահանան գլուխ ունեցել է: Գալիս են կնոջը հարցնում, նա էլ ասում է. «**Վալլահ գլոնի էլի չէլիը մայտըս չի, մոյն թանք ան այ մայտըս օր յըրկէ բինջար նօտամ վախտը մայրուքը դըմբդըմբալիս այ նել**»⁶³⁷ («Աստված վկա, գլուխ լինել-չլինելը չեմ հիշում, միայն այն եմ հիշում, որ երեկ բանջար ուտելու ժամանակ մորուքը տմբտմբում էր»):

Ռամիսը Սարգիս Սարգսյանցի հայրենի Յղնա գյուղի հարևանն էր: Նրա հրատարակած 17 «անեկդօտներից» 4-ը ուսմիսցիների մասին է:

Իր «**Գողթան գաւառ**» գրքում Ռամիս գյուղը մանրամասն նկարագրում է 1900 թ. Ազուլիսում ծնված, 1922 թ. Պրահա՝ համալսարանում ուսանելու մեկնած, 1932 թվականին Թեհրան փոխադրված դոկտ. **Հովհաննես Հախնազարյանը**: Նա 15–16 տարեկանում⁶³⁸ Ռամիսում հյուրընկալվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի իր դասընկերոջ տանը. «Ռամիսն իրօք Գողթան գաւառի ամենագեղեցիկ բնական դիրք ունեցող գիւղերից էր, ունէր շատ առողջարար օդ: Գիւղի միջով, մի շարք փողոցներից, առուների առատ ջուրը կարկաչելով բակերն ու պարտեզներն էր հոսում: Ժողովուրդը խմելու ջուրը հոգում էր գիւղի աղբիւրներից: Փողոցները շատ մաքուր էին, ամէն ընտանիք պարտատուր էր իր տան առաջը մաքուր պահել: Տները շատ ներկայանալի էին, երբեմն երկյարկանի: Գիւղն ունէր նաև իր հրապարակը, որի չորս կողմը քարէ նստարաններ էին դրած: Մաքուր էին նաև տների ներսը և որոշ ունևոր ընտանիքներ թանկագին գորգերով կահաւորած սենեակներ, սեղան-աթոռ ունէին»⁶³⁹:

...Գիւղի դպրոցը ոչ միայն ծառայում էր նոր սերնդի տարրական կրթութեան..., այլև կենտրոն էր ազգային-ժողովրդական տօների հանդիսատուր կատարման: Բոլորն էլ հասասարապէս դպրոց էին ուղարկում իրենց զաւակներին: Սիրողներից դերասանական և երգեցիկ խմբեր էին կազմում գիւղում, որոնք ազգային տօներին պատշաճ հանդիսատուրութեամբ և շուքով տօնում էին Նոր Տարին, Բարեկենդանը, Վարդանանքը և ներկայացումներ տալիս այդ առիթներով: Գիւղացիները ուրախութեամբ էին հովանատրում երիտասարդների ջանքերը,

⁶³⁷ **Սարգիս Սարգսեանց**, Ազուլեցոց բարբառը (Զօկերի լեզուն), լեզուաբանական հետազօտութիւն, մաս II, էջ 49, 50:

⁶³⁸ **Դոկտ. Յովհաննէս Հախնազարեան**, Գողթան գաւառ (Պատմագրութիւն եւ յուշագրութիւն), Թեհրան, 1991 (–394 էջ), էջ 268:

⁶³⁹ **Դոկտ. Յովհաննէս Հախնազարեան**, Գողթան գաւառ, էջ 262:

այս սովորությունը այժմ էլ պահպանուած է: Ամառայ ամիսներին գիւղի հրապարակը բեմի էր վերածուած: Գիւղի երիտասարդները աշխատանքից յետոյ, երեկոյեան հաւաքուած էին հրապարակում և մինչև ուշ գիշեր երգում ու պարում, կամ զանազան առիթներով հանդէսներ էին կազմակերպում⁶⁴⁰:

...Ռամիսի ժողովուրդը իր արտաքինով բաւական տարբերում էր յատկապէս ագուլեցիներից: Բարձրահասակ, ամուր կազմածքով, առողջ ու թիկնեղ մարդիկ էին այս գիւղի բնակիչները և շատ թրծուած՝ գիւղական աշխատանքների մէջ: Ամառայ արևն ու ձմեռայ քամիներն ու ցուրտը փոքր ինչ մուգ գոյն էին տւել ժողովրդին⁶⁴¹:

...Համեմատած Գողթանի դաշտային գիւղերին, Ռամիսի ժողովուրդը շատ աւելի ռազմունակ ոգի ուներ և մի տեսակ ինքն էր իր պաշտպանը, որովհետև ցարական շրջանի պետական իշխանութիւնները այդ լեռնային շրջանները դժար էին թափանցում: Գիւղացիները պատմում էին, որ յատկապէս ամառայ ամիսներին, թուրք վաչկատուն և թափառական ցեղերը իրենց ոչխարների հօտերով յաճախ անցնում էին գիւղի օբաների շրջանները և երբեմն էլ փորձում փախցնել այս գիւղի ոչխարների հօտերն ու եղջիւրաւոր անասունները: Գիւղացիք զէնքով պիտի պաշտպանէին իրենց իրաւունքը և պատիւը: 1918–20 թականներին, երբ թուրքերը աւելի յարձակողական դիրք բռնեցին հայերի նկատմամբ, ռամիսեցիք ոչ միայն կարողացան կազմակերպուած ձևով պաշտպանել իրենց հայրենի գիւղը, այլ նաև անհրաժեշտ դէպքում օգնութեան էին գալիս Յոնային, երբ վերջինիս վիճակը վտանգաւոր էր դառնում: Այդ էր պատճառը, որ ռազմական տեսակէտից ստիպուած եղան մաքրել Ուստուփի թրքական գիւղը և անմիջական կապի մէջ մնալ Յոնայի հետ»⁶⁴²:

Բազմաթիվ արհավիրքներ հաղթահարած քաջարի ռամիսցիներն ու ցղնացիները, ցավոք, իրենց գյուղերն ու չնաշխարհիկ բնաշխարհը ստիպված լքեցին 1989 թ.՝ արցախյան շարժման օրերին: Բայց, մինչև այդ, 1930-ականներից Երևանում բնակվող ցղնացի **Ավետ Մովսիսյանը** (1893– 1973), բարեբախտաբար, 1960-ականներին Յոնայում և հայաստանաբնակ ցղնացիներից բանահյուսական նյութեր է գրառել⁶⁴³, այդ թվում նաև՝ ռամիսցիների մասին մեզ հետաքրքրող գվարճապատումի հետևյալ տարբերակը, որը պայմանականորեն վերնագրել ենք «**Ռւմնացիք ու գոյլը**» (№16):

⁶⁴⁰ Դոկտ. Յովհաննէս Հախնազարեան, Գողթան գաւառ, 1991, էջ 267:

⁶⁴¹ Դոկտ. Յովհաննէս Հախնազարեան, Գողթան գաւառ, էջ 263:

⁶⁴² Դոկտ. Յովհաննէս Հախնազարեան, Գողթան գաւառ, էջ 264, 265:

⁶⁴³ Արգամ Այվազյան, Նախիջևան, հայկագունք: Ով ով է: Կենսագրական հանրագիտարան, էջ 169:

Ռամփացիները հավաքվում, որոշում են՝ լուսնին բռնեն: Գյուղի «խելացիները» քահանայի հետ Հաչա սարն են ելնում: Որքան բարձրանում են, լուսինն իջնում է սարի հետևը: Մի քիչ էլ որ գնում են, «մոյն մի՞ծ ծոկ»՝ մի մեծ անցք, քարայր է հանդիպում: Քահանայի ոտքերին պարան են կապում, մտցնում այնտեղ, որ լուսնին բերի: Սպասում են, բայց նա դուրս չի գալիս: Պարանով քաշում են, տեսնում՝ նրա գլուխը չկա: Դու մի ասա, դա գայլի բունն է եղել, և գայլը տերտերի գլուխը պոկել է: Տեր հոր մարմինը գյուղ են բերում և կնջը հարցնում, թե գլուխ ունեցե՞լ է: Նա էլ ասում է. «**Գլուխ էլիլը գիղամ չիմ: Ման անա մայտրս, օր ըրկե մրթանին բակլա ըտելուց մայրուքը տրմտըմբալիսա նել**»⁶⁴⁴ («Գլուխ լինելը չգիտեմ: Միայն այն եմ հիշում, որ երեկ երեկոյան բակլա ուտելիս մորուքը տմբտմբում էր»):

Ռամփացիների մասին այս ծիծաղաշարժ պատումի **Ռամփսի խոսվածքով**⁶⁴⁵ մեկ տարբերակ էլ պահպանվում է ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում: Գրառողը բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, բարբառագետ և բանահավաք **Ռուբեն Բաղրամյանն** է (1920, Ադր. ԽՍՀ, Շամխորի շրջ., գ. Լեռնային Ջագիր–1994, Երևան): Նա 1957–1969 թթ. աշխատել է ԳԱ լեզվի ինստիտուտի հայ բարբառագիտության բաժնում, 1964-ից՝ նաև Խ. Աբովյանի անվ. հայկական մանկավարժական ինստիտուտում (այժմ՝ համալսարան): Շամախիի, Կոզենի, Դերսիմի բարբառների, Սևանի ավազանի խոսվածքների մասին գրքերի և հոդվածների հեղինակ է:

1985 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվին հանձնած բանահյուսական հավաքածուի թղթապանակի սկզբում՝ «Երկու խոսք»-ում, նա գրել է. «Ժողովրդական բանահյուսության սույն (երկրորդ) պրակը (առաջինը գտնվում է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում) ամփոփում է 1945 թ. սկսած մինչև վերջերս մեր ժողոված նյութերը:

Այս պրակի նյութերը (714 էջ) ռեգիոնալ չեն, ինչպես նախորդինը, այլ՝ համահայաստանյան: Մրանց զգալի մասը միակ առհավատչյաներն են այն բազմաթիվ բնակավայրերի խոսվածքների, որոնք այժմ չկան կամ էլ չքանում են:

Նյութերը դասավորված են ըստ խոսվածքային (աշխարհագրական) տարածքի՝ արևելքից (Շամախի-Ղարաբաղ) դեպի արևմուտք (Պոլիս-Կիլիկիա): Յուրա-

⁶⁴⁴ **Ագուլիսի բարբառի մասունքներ**, աշխատասիրությամբ **Արզամ Այվազյանի**, էջ 175:

⁶⁴⁵ ԳԱ թղթակից անդամ **Արարատ Ղարիբյանը** Ռամփսի խոսվածքի մասին գրել է. «Ագուլիսի շրջանի համարյա բոլոր գյուղերի խոսվածքները նկատելի տարբերություններ ունեն Ագուլիսի բարբառից, առանձնապես նկատելի է Ցղնայի և Ռամփսի խոսվածքների տարբերությունը», տե՛ս **Ար. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն: Հնչյունաբանություն և ձևաբանություն, Երևան, ՀՍՍՌ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտ, 1953 (–460 էջ), էջ 25:

քանչյուր ժանրի տակ նյութերը զետեղված են թվահամարներով, փակագծերում առնված նույն խոսվածքից քաղված նյութերի համար են:

Նյութերի մեծագույն մասը գիտական տառադարձությամբ է, իսկ ավելի փոքր մասը, որ գրի են առել բարբառագիտական-բանաստեղծական պատրաստություն ստացած մեր նախկին ուսանողները, որոշ չափով թերարժեք է:

Այս պրակից դուրս մնացին «Ղարաբաղի անեկդոտները» և «Պըլը-Պուղու անվան հետ կապված այն անեկդոտները, որոնք տեղ չեն գտել «Ղարաբաղի զվարճախոս Պըլը-Պուղին» գրքույկում: Սրանք էլ կազմելու են մի առանձին պրակ»⁶⁴⁶:

Եթե նախորդ երկու պատումներում ռամիսցիները քահանայի հետ **լուսնին** էին փնտրում, ապա այս տարբերակում, որը պայմանականորեն վերնագրել ենք «**Ռ-ամիսի տերտերը**» (№17)՝ **արևին**, որին ծածկել էր մշուշը: Գյուղացիները հասնում են մի քարայրի, քահանան սողետող առաջանում է դեպի ներսում երևացող փոքր լույսերը, արջը նրա գլուխը պոկում է: Պարզվում է՝ որ այդ լույսերը արջի աչքերն են, որոնք փայլել են մթության մեջ:

Տեր հորը պարանով դուրս են քաշում, տեսնում՝ գլուխը չկա: Ոչ ոք չի հիշում, թե նա գլուխ ունեցել է: Գնում են երեցկնոջը հարցնում, նա էլ պատասխանում է. «**Դնոզ ասիմ, մէտըս չի, մըն թնքանն ըմ գիդանիս, էր մըթանին պաննջնթ օտում վախտը մէրուքը տըմբտըմալիս ա նէլ**»⁶⁴⁷ («Ճիշտն ասեմ, չեմ հիշում, միայն այն գիտեմ, որ երեկոյան բանջարով ճաշ ուտելու ժամանակ մորուքը տմբտմբում էր»):

Զվարճապատումի վերջում Ռուրեն Բաղրամյանը փակագծում նշել է՝ (Ռ-ամիսից): Նա այս, նաև ռամիսցիների մասին մյուս յոթ երգիծապատումների ասացողների, գրառման վայրերի, տարեթվերի և այլ մանրամասների վերաբերյալ ոչինչ չի հաղորդում⁶⁴⁸:

«**Ռ-ամիսի տերտերը**» (№17) պատումի ձեռագիրը կարդալիս որոշ բարբառային բառերի իմաստները հասկանալու համար դիմեցինք այդ խոսվածքի հատուկենտ կրողներին. պարզվեց, որ բնագրում կան ոչ մեծ շեղումներ, բայց հարգելով գիտնականի հեղինակային իրավունքը՝ «**Բնագրեր և թարգմանություններ**» բաժնում տպագրում ենք նույնությամբ՝ կից հրատարակելով բարբառակիրների և նախկին ռամիսցիների օգնությամբ շտկված օրինակը (№17/1), և

⁶⁴⁶ ՀԱԻ արխիվ, թղթ. «**Ռ. Հ. Բաղրամյան**, Ժողովրդական բանասիրություն, Երևան, 1985», «Երկու խոսք», ամենասկզբում է, չի էջագրված:

⁶⁴⁷ ՀԱԻ արխիվ, թղթ. «**Ռ. Հ. Բաղրամյան**, Ժողովրդական բանասիրություն, Երևան, 1985», №159 (4), էջ 171, 172:

⁶⁴⁸ ՀԱԻ արխիվ, №148 (1), էջ 165, №150 (3) և №151 (4), էջ 166, №158 (3), էջ 171, №160 (1), էջ 172, №161 (2), էջ 173, №162 (3), էջ 173, 174:

գրական արևելահայերեն մեր թարգմանությունը (№17/2), քանի որ **Ռամիսի խոսվածքը** քիչ թե շատ իմացողներն արդեն 70-ն անց էին, և հետագայում, երբ այլևս բարբառախոսներ չեն լինի, ուսումնասիրողներին դրանք կարող են օգտակար լինել:

Նախիջևանցիներն այս երգիծական մանրավեպի մի տարբերակն էլ պատմում էին Արաքսի աջ ափին բնակվող **շամբեցիների** մասին, որն իր հայրենի **Աստապատ** գյուղում գրառել է **Մանուկ Աբեղյանը**: Այն՝ «**Շամբեցիք ու արեւը**»⁶⁴⁹ (№18) վերնագրով, 1890 թ. հրատարակվել է Թիֆլիսում՝ **Տիգրան Նավասարդյանի** կազմած «**Հայ-ժողովրդական հեքիաթներ**» շարքի 6-րդ հատորում: Քսանհինգամյա Մանուկ Աբեղյանը նույն՝ 1890 թ. «**Նոր-Գար**» թերթում լույս տեսած իր «**ժողովրդական լեզուի շեշտադրությունը (Արևելեան ճիղի բարբառների մէջ)**» հոդվածաշարում Խաչատուր Աբովյանի և Պերճ Պոռչյանի երկերից հետո Արարատյան բարբառի ուսումնասիրության միակ աղբյուրը համարելով «**Հայ-ժողովրդական հեքիաթների**» 1–6-րդ հատորյակները⁶⁵⁰, անշուշտ, որպես գուտ գիտական, անաչառ դիտարկում՝ մատնանշում է տպագրված բանահյուսական նյութերում շեշտի և հարցական նշանի կիրառության սխալները⁶⁵¹:

Մեկ տարի անց նույն թերթում հանդես գալով «**Վարսամ**»⁶⁵² ծածկանունով՝ Մանուկ Աբեղյանը հեքիաթների **յոթերորդ գրքին** նվիրված գրախոսականում բարձր է գնահատում Տիգրան Նավասարդյանի կատարած աշխատանքը. «Պ. Տ. Նաւասարդեանցը մեզանում միակն է, որ շարունակաբար հոգ է տանում մի ապերախտ, բայց կարևոր գործ կատարելու, ժողովրդական բանահյուսութեան արդիւնքները ժողովելու և հրատարակելու: Նրա ժողովածուների ուր»⁶⁵³ գրքերը միասին արդէն մի պատկառելի հատոր են կազմում, որի մէջ մտնում են զանազան բարբառներով հեքիաթներ, երգեր, ջանգիլումներ, առածներ, հանելուկներ, անէծքներ ու օրհնանքներ, երդումներ, փաղաքշական խօսքեր, մանկա-

⁶⁴⁹ **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նաւասարդեանց**, վեցերորդ գիրք, Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի, 1890 (–152 էջ), էջ 56:

⁶⁵⁰ **Մ[անուկ] Աբեղեան**, ժողովրդական լեզուի շեշտադրությունը (Արևելեան ճիղի բարբառների մէջ), «**Նոր-Գար**», թերթ, Թիֆլիս, 1890, սեպտեմբերի 20, №141, էջ 1:

⁶⁵¹ **Մ[անուկ] Աբեղեան**, ժողովրդական լեզուի շեշտադրությունը (Արևելեան ճիղի բարբառների մէջ), «**Նոր-Գար**», 1890, սեպտեմբերի 25, №143, էջ 1, 2:

⁶⁵² **Մանուկ Աբեղյանը «Նոր-Գար»** թերթում 1889–1893 թթ. հանդես է եկել նաև «**Վարսամ**» ծածկանունով, տե՛ս **Բախտիար Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան, 2005, էջ 430:

⁶⁵³ Մ. Աբեղյանը նկատի ունի նաև «**Հայ-ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարից զատ տպագրված «**Հայ-ժողովրդական ասանդություններ**, ժողովածու Տիգրանայ Նաւասարդեանց, գիրք առաջին, Երևան, Էմին Տէր-Գրիգորեանցի տպարանում, 1883» գիրքը:

կան խաղերի նկարագրություններ, ժողովրդական բառեր և այլն, որոնք ապագայում անշուշտ նշանատր նիւթ կըմատակարարեն մեր ժողովրդական բանահիւսութեան և բարբառների ուսումնասիրութեան համար»⁶⁵⁴:

Բայց վերադառնանք «**Հայ-ժողովրդական հեքիաթների**» 6-րդ հատորին, որտեղ Մանուկ Արեղյանի գրառած «Շամբցիք ու արևը» գվարճապատումը տպագրվել է հետևյալ ծանոթագրությամբ. «**Աստապատոցոց բարբառով գրած սոյն հեքիաթը և սորա հետևեալ առակները ստացել ենք պ. Մանուկ Արեղեանից, որ նա անձամբ ժողովել է Աստապատում**»⁶⁵⁵: Հեքիաթին հաջորդող 5 պատումների հերոսները նույնպես **Շամբի** բնակիչներ են: Շամբը գյուղանվան կրճատ տարբերակն է, ամբողջականը **Դարաշամբ** է: Այն գտնվում էր Պարսկաստանի Մակուի խանությունում՝ Արաքսի աջ ափին: Բնակավայրի շուրջը ճահիճներ ու լճակներ կային⁶⁵⁶: Անունը դրանից է ծագել, քանի որ «շամբ» նշանակում է «**եղեգներով ծածկված ճահճուտ**»⁶⁵⁷: Գյուղը՝ **Շամպ**⁶⁵⁸ ձևով, հիշատակվում է դեռևս Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976թ. կոնդակում, որը մեզ է հասել հավանաբար 1320-ական թվականներին արված ընդօրինակությամբ⁶⁵⁹:

Շամբի մոտ էր գտնվում Արաքսի ամենահարմար գետանցը: Գրող, մանկավարժ, Կալկաթայի «**Ազգասէր**» և «**Ազգասէր Արարատեան**» թերթերի խմբագիր, հրապարակախոս **Մեսրոպ Թաղիադյանը** (1803, Չորագյուղ, այժմ Երևանի կազմում – 1858, Պարսկաստան, Շիրազ), 1819-ին՝ 16 տարեկանում, որպես դպիր՝ Ս. Էջմիածնի նվիրակ Դանիել եպիսկոպոսի հետ շրջագայելիս նավակով Արաքսն անցնելով, եղել է Դարաշամբում: Իր «**Ճանապարհորդություն**» գրքում նա գրում է, որ 1819թ. ապրիլի 9-ին «Չոգաք յԱստաբատ հեռի ՚ի Նախչուանայ երկու մղոնօք ընդ հարաւ, կառուցեալ ՚ի խառնուրդ վտակի նորա ընդ

⁶⁵⁴ Վարսամ, Մատենախօսություն, «Նոր-Դար», Թիֆլիս, 1891, սեպտեմբերի 10, № 137, էջ 1, 2:

⁶⁵⁵ Հայ-ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանայ Նուսասարդեանց, վեցերորդ գիրք, էջ 48:

⁶⁵⁶ «Դարաշամբ» // թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1988 (– 992 էջ), էջ 54:

⁶⁵⁷ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980 (– 828 էջ), էջ 60:

⁶⁵⁸ Գեորգ Տեր-Վարդանեան, Ջուլիէտա Սահակեան, Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը՝ տրուած Դարաշամբի սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին, «Էջմիածին», ամսագիր, 2012, Յուլիս, էջ 100:

⁶⁵⁹ Գեորգ Տեր-Վարդանեան, Ջուլիէտա Սահակեան, Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը՝ տրուած Դարաշամբի սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին, էջ 94, 96, 97:

գետն Երասխ»⁶⁶⁰: Աստապատից հետո «միշտ ընդ յարևելյա հարաւոյ ընթանալով ՚ի ձորն Երասխայ՝ հասաք յանդիման Դալաշամբ անուանեալ գեղջ, որ է յայնկոյս Երասխայ, ՚ի խառնուրդն Տղմուտ գետոյ: Անցանք նաւակաւ յայս գետ և զմիջով տուեալ գեղջն՝ ընդ զառիվեր Մաղտեաց լերին՝ հասաք ՚ի մեծ վանքն Նախավկայի կոչեցեալ...»⁶⁶¹: Բնագրի «Դալաշամբ»-ը բացահայտ վրիպակ է, քանի որ նույն գյուղի մասին մյուս էջերում տպագրված է «գիրատունս Դարաշամբայ իրելով», «Դարաշամբեցոց»⁶⁶²: «Ճանապարհորդության» 1975 թ. վերահրատարակության մեջ «Դալաշամբ»-ը ուղղվել է «Դարաշամբ»⁶⁶³:

Տեղանունը «Դարաշամբ» տարբերակով է երկու անգամ արձանագրել **Երվանդ Ֆրանգյանը**: Իր «Ատրպատական» (Թիֆլիս, 1905) գրքում նա գրում է. «Մակու գաւառի արևելեան կողմը, Արաքսի ափին, գտնուում է ս. Ստեփաննոս Նախավկայի հռչակատր վանքը, բայց միանգամայն անշուք և խեղճ դրութեան մէջ: Վանքից քիչ հեռու գտնուում է Դարաշամբ գիւղը, որ պատկանում է վանքին: Դարաշամբ ունի 30 տուն հայ, բոլորն էլ աղքատ և ողորմելի, միշտ ենթակայ քիւրդերի և թուրքերի ատարառութիւններին ու ասպատակութիւններին»⁶⁶⁴:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ու Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի 1975 թ. լույս ընծայած Մ. Թադիադյանի «Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր» գրքի առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ, բանասիրական գիտ. թեկնածու **Ռուզան Նանումյանը** (1913, Կրասնոդարի երկ., ք. Արմավիր–2001, Երևան) նշում է, որ Մ. Թադիադյանի «Ճանապարհորդություն» երկի 1847 թ. հրատարակությունում նշված 1819 թ. սխալ է, քանի որ Եփրեմ կաթողիկոսը Դանիել եպիսկոպոսին նվիրակ է ուղարկել 1821 թ. գարնանը⁶⁶⁵: Ինչևէ, փաստն այն է, որ **Մ. Թադիադյանը** 1819 կամ 1821 թթ. եղել է Դարաշամբում և իր ուղեգրության մեջ թողել մեր թեմային առնչվող շատ կարևոր վկայություն. «Յառակա աշխար-

⁶⁶⁰ **Ճանապարհորդություն Մեսրոպայ Գ. Թադիդեանց Վ. Ա. Սարկաւագի Սրբոյ էջմիածնի ՚ի Հայս**, հատոր առաջին, ՚ի տպարանի Արարատեան ընկերութեան ՚ի Կալկաթա, 1847 (–390 էջ), էջ 243: Տե՛ս նաև **Մեսրոպ Թադիադյան**, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, առաջաբանը, տեքստը և ծանոթագրությունները՝ **Ռուզան Նանումյանի**, գրական ժառանգություն, հ. 9, ՀՄՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975 (–620 էջ), էջ 138:

⁶⁶¹ Տե՛ս **Ճանապարհորդություն Մեսրոպայ Գ. Թադիդեանց**, էջ 244, **Մեսրոպ Թադիադյան**, Ուղեգրություններ, հոդվածներ, էջ 139:

⁶⁶² Տե՛ս **Ճանապարհորդություն Մեսրոպայ Գ. Թադիդեանց**, էջ 245, 246:

⁶⁶³ **Մեսրոպ Թադիադյան**, Ուղեգրություններ, էջ 139:

⁶⁶⁴ **Երվանդ Ֆրանգյան**, Ատրպատական, Թիֆլիս, 1905 (–296 էջ), էջ 24:

⁶⁶⁵ **Մեսրոպ Թադիադյան**, Ուղեգրություններ, հոդվածներ, էջ 550:

հին հանեալ է պարզմտութիւն Դարաշամբեցոց, իբրև զԲոլորանցոց ՚ի սահմանս Փէրիոյ յաշխարհին Պարսից»⁶⁶⁶:

Ուրեմն, Մանուկ Աբեղյանի հրատարակածից դեռ յոթ տասնամյակ առաջ էին **շամբեցիների** ու նաև Փերիայի գավառի **Բոլորան** գյուղի բնակիչների պարզամտության մասին «առակս», այսինքն՝ «գրոյց հասարակաց»⁶⁶⁷ պատմում:

Անդրադառնանք սրախտությունների ճանաչված նշանակետի՝ Շամբի մասին մեկ այլ վկայության ևս:

Բանահավաք, կենսագիր, պատմաբան, դրամատուրգ, թատերական գործիչ, մեծահարուստ **Գալուստ Շերմազանյանի** (Շիրմազանեանց, Շիրմազան-Վարդանով, Շիրմազան-Վարդանեանց)՝ 1878թ. հրատարակած «**Անեկդոտներ**» գրքի առաջին և վերջին պատումները նույնպես շամբեցիների մասին են⁶⁶⁸: **Գալուստ Շերմազանյանն** իր առևտրական գործերով շատ է շրջագայել Հայաստանում, Վրաստանում ու Պարսկաստանում, հավաքել է բանահյուսական, ազգագրական և պատմագիտական նյութեր: 1864–65 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխը⁶⁶⁹:

1865թ. քաղաքային վարչությունը Թիֆլիսի բարեկարգման համար լրացուցիչ եկամուտներ ստանալու նպատակով նոր հարկեր է նշանակում⁶⁷⁰, նաև գինեվաճառության վրա 25 տոկոս հարկ է ավելացնում⁶⁷¹, ինչի պատճառով հունիսի 27–28-ին արհեստավորների և առևտրականների արհեստակիցների կազմակերպությունները՝ համքարությունները, բողոքի մարդաշատ ցույցեր և անկարգություններ են անում: Այդ թվականին քաղաքում կար 4235 արհեստավոր, ընդհանրապես այդ տարիներին թիֆլիսցիները զբաղվում էին արհեստների և առևտրի 95 տեսակով⁶⁷²:

⁶⁶⁶ **Ճանապարհորդութիւն Մեսրոպբայ Գ. Թաղիդեանց**, էջ 246, **Մեսրոպ Թաղիդեան**, Ողեգրություններ, հոդվածներ, էջ 140:

⁶⁶⁷ **Նոր բառգիրք հայկազեան լեզուի**, հատոր առաջին, ՚ի Վենետիկ, ՚ի տպարանի սրբոյն Դազարու, 1836 (–1140 էջ), էջ 283:

⁶⁶⁸ **Անեկդոտներ, գուարճալի գրուցներ, համառոտ դէպքեր եւ առակներ մեծ մասամբ ազգային կենսքից առած**: Ժողովեց **Գալուստ Շիրմազանեանց**, Թիֆլիս, Ի տպարանի Յովհաննու Մարտիրոսեանց, 1878 (–198 էջ), էջ 7, 101, 192:

⁶⁶⁹ **Սամվել Կարապետյան**, Թիֆլիսի քաղաքագլուխները, RAA գիտական ուսումնասիրություններ, գիրք Ե, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003 (–120 էջ), էջ 57:

⁶⁷⁰ **Սամվել Կարապետյան**, Թիֆլիսի քաղաքագլուխները, էջ 58–60:

⁶⁷¹ **Հրաչեայ Ասմաբեան**, Թիֆլիսի 1865 թուականի համքարական շարժումը, «**Բազմավեպ**», Վենետիկ, Ս. Ղազար, 2007, էջ 136, 137:

⁶⁷² **Վալենտինա Աբրահամյան**, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18–20-րդ դարի սկիզբը), ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, Հայաստանի պատմության պետական թանգարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1971 (–256 էջ + 32 էջ լուսանկարներ), էջ 86–88:

Միթե Գալուստ Շերմազանյանը չգիտեր արհեստավորների ու առևտրականների հոգեբանությունն ու կենցաղը: Հիանալի գիտեր. այդ է վկայում այն, որ սայաթնովագետներին քաջ հայտնի **Գևորգ Ախվերդյանը** (1818, Թիֆլիս – 1861, Թիֆլիս) Թիֆլիսի համքարություններին նվիրված ուսումնասիրություն գրելիս Պարսկաստանի նմանատիպ կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու համար 1857 թ. նամակ-հարցարան է ուղարկում **Գ. Շերմազանյանին**⁶⁷³ և նրանից ստանում շատ բանիմաց և մանրակրկիտ պատասխան, այդ թվում՝ հայերի գործունեության մասին⁶⁷⁴:

Հավանաբար հարկերի ավելացման նախաձեռնությունը եղել է ցարական իշխանություններինը, կամ նրանց գիտությամբ, այլապես փոխարքայության կենտրոնում դժվար թե քաղաքային վարչությունն ինքնուրույն նման աղմկահարույց որոշում կայացներ:

Առիթից օգտվելով՝ **Գ. Շերմազանյանի** հակառակորդները, նաև նորաբնակներին չհանդուրժող հնաբնակ թիֆլիսցիները, իրավիճակը սրելու նպատակով կեղծ լուրեր ու բամբասանքներ են տարածում, հրահրում արհեստակցական կազմակերպություններին՝ համքարություններին՝ բողոքի ցույցեր անելու: Նրանք հարձակվում, կողոպտում և ավերում են **Գ. Շերմազանյանի** տունը, որի մի մասը նա դարձրել էր 200 տեղանոց թատերասրահ⁶⁷⁵, ոչնչացնում են նրա ստեղծագործությունները՝ պիեսներն ու գիտական աշխատությունները, նաև գրադարանը, բզիկ-բզիկ են անում հայկական հնագույն ձեռագրերի հավաքածուն⁶⁷⁶:

Քսանութամյա **Պերճ Պողոսյանը**, որը հինգ տարի առաջ՝ 1860 թ. հրատարակած իր «**Սոս և Վարդիթեր**» վեպի շնորհիվ ճանաչված գրող էր և Թիֆլիսի քաղաքային վարչության բարձրաստիճան պաշտոնյայի երեխաներին նրանց գյուղական ամառանոցում հայերեն էր դասավանդում, լսելով **Շերմազանյանի** տան վրա հարձակման մասին, յոթ վերստ հեռվից ձիով սլանում է քաղաք: Թիֆլիս չհասած՝ արդեն ճանապարհին նա տեսնում է իրերի կտորտանքներ, հագուստների ու գորգերի ծվեններ, բզկտված ձեռագրերի պատատիկներ: Նույնիսկ այս իրադարձություններից 34 տարի անց տպագրած իր «**Մի անհայտ թատրոն**

⁶⁷³ **Վալենտինա Աբրահամյան**, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18–20-րդ դարի սկիզբը), 1971, էջ 209–212:

⁶⁷⁴ **Վալենտինա Աբրահամյան**, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18–20-րդ դարի սկիզբը), էջ 212–216:

⁶⁷⁵ **Արամ Երեմեան**, Ռուսահայ թատրոնի պատմություն (Սկզբից մինչև 70-ական թակալները), պատմա-քննադատական տեսություն, «Բազմավեպ», Վենետիկ, 1934, № 2–3, էջ 91:

⁶⁷⁶ **Նիթեր ազգային պատմութեան համար: Երեւելի Հայկազունք ի Պարսկաստան**, աշխատասիրութեամբ **Գալուստ Շերմազանեանի**, Ռուստով (Դժնի վերայ), տպարան Յովհաննու Տէր-Աբրահամեան, 1890 (–400 էջ), էջ 9:

նական գործիչ»⁶⁷⁷ հողվածում նա սրտի անհուն կսկիծով է պատմում տեսածի մասին. «Շուտ-շուտ կռանում, վերցնում, սարսափում ու ափսոսալի թառաչ եմ հոգվույս խորքից դուրս վիժում: Գիտե՞ք ինչ: Մագաղաթյա հայ ձեռագրի հնությունների պատաններ, կապույտ հնադարյան հաստ թղթի վրա գրած ձեռագիրներ...⁶⁷⁸: ...Բայց, ախար, դ՛ր մեկի հետևիցն ընկնեի, քանի մոտենում էի Թիֆլիսին, այնքան շատանում և բազմազան էին դառնում ոտնատակ տված ձեռագրերի պատռուքները, ուստի և ձեռքս թափ տվի...⁶⁷⁹: ...Ավանդ, միայն ես չեմ եղել, որ արտասովախառն աչքերով մի կապոց լիքը հին ձեռագրի կտորտանք եմ ժողովել, ինձ նման շատերը, հազվագյուտ սրբությունները ժողովելու համար, մասներ ու ձեռքերը հողոտել ու փոշոտել են, բայց և նրանք ինձ պես ստիպված են եղել լալով թափելու և, ինչպես նվիրական նշխարք, մի կտոր ծոցներումը պահելու»⁶⁸⁰:

Մոտավոր պատկերացում կազմելու համար, թե Թիֆլիսի արհեստավորների այս աննախադեպ վայրագությունն ինչ վնաս է հասցրել հայ ժողովրդին և համաշխարհային մշակույթին, **Պերճ Պոռոջյանը** գրում է. «Քաղաքագլուխ Գալուստ Շերմազանյանցի մատենադարանի հոչակը հայտնի էր հնության սիրահար բոլոր հայ և օտարազգի բանասերներին, առավելապես հայերին:

Սկսած հեռավոր Պարսկաստանից, շարունակած ռուսական սահմանում գտնված մեծահոչակ Տաթևի, Որոտնա և այլ վանքերից ու յոթը պորտով տերտերական տներից, Գալուստը ժողովել էր բոլոր պիտանի ձեռագիրներն և արժանավոր հնությունները, որոնց թիվը 1000-ների էր հասնում: Կային ասողներ, թե տեսել են Գալուստի մատենադարանի հնությունների շարքում Մահմեդի կնքով վավերացրած, մեծ մարգարեի ինքնաձեռագիր հայերին շնորհված արտոնագիրը, որով Իսլամի օրինատուն ազատում է ի բնե հյու-հնազանդ հայ ազգին մոլեռանդ մահմեդականների բռնակալությունից, իսկ հակառակ վարվողներին խելացի կրոնապետը սպառնում է զրկել դրախտի հանդերձյալ քառասնական մշտադալար հուրի-փերիներից»⁶⁸¹:

Այս իրադարձությունները, որոնց արհեստավորների համքարությունների կողմից մասնակցում էր նշանավոր դրամատուրգ, արքունի խորհրդական **Գալ-**

⁶⁷⁷ **Պերճ Պոռոջյան**, Մի անհայտ թատրոնական գործիչ, Թիֆլիս, «Թատրոն», վեցամյա հանդես, 1899, դեկտեմբեր, էջ 57–75, տես **Պերճ Պոռոջյան**, Երկերի ժողովածու, յոթ հատորով, հ.7, կազմեցին, տեքստը պատրաստեցին՝ **Խ. Պողոսյան, Վ. Դաբեյան**, Երևան, «Հայաստան» հրատ., 1964 (–588 էջ), էջ 429–454:

⁶⁷⁸ **Պերճ Պոռոջյան**, Երկերի ժողովածու, յոթ հատորով, հ. 7, 1964, էջ 440:

⁶⁷⁹ **Պերճ Պոռոջյան**, Երկերի ժողովածու, յոթ հատորով, հ. 7, 1964, էջ 441:

⁶⁸⁰ **Պերճ Պոռոջյան**, Երկերի ժողովածու, յոթ հատորով, հ. 7, 1964, էջ 446:

⁶⁸¹ **Պերճ Պոռոջյան**, Երկերի ժողովածու, յոթ հատորով, հ. 7, 1964, էջ 440, 441:

րիել Սունդուկյանը (1825, Թիֆլիս–1912, Թիֆլիս), նրա համար շարժանիք դարձան գրելու «**Պեպո**» պիեսը⁶⁸²:

Ցավոք, այդ թոհուրոհի մեջ ոչնչացել է նաև **Գալուստ Շերմազանյանի** բանահյուսական հարուստ հավաքածուն: Դրա մասին «**Անեկդոտների**» առաջաբանում նա գրում է. «Յաճախ և երկար ճանապարհորդութեանս ժամանակը ժողոված էի հազարներից ատիկ անեկդոտներ, ազգային գուարճալի գրույցներ և համառոտ զբօսեցուցիչ դէպքեր, և պատեհ առիթի էի սպասում հրատարակելու, բայց տարաբախտութեամբ յանկարծ ոչընչացան, և այնուհետև, այն է 1865 թուականից յետոյ մինչև ցայսօր կրկին սկսեցի ժողովել...»⁶⁸³: Գ. Շերմազանյանի համառության արդյունքում կորստի մի մասը վերականգնվեց, այդ թվում՝ Պըլը Պուլոյ մասին զվարճապատումները, որոնք առաջին անգամ հրատարակվեցին 1878 թ.⁶⁸⁴:

Այն, որ **Գ. Շերմազանյանն** իր շրջագայությունների շտրիկով հիանալի գիտեր հայկական երգիծապատումների պարզամիտ հերոսների բնակավայրերի անունները, երևում է նույն առաջաբանի հետևյալ հատվածից. «**Ղարաբաղ հոչակուած են Շուշի[ի] գիւղացիներն իրանց գուարճախօսութիւնովն և Հաթերքցիք պարզմտութիւնովն, նոյնպէս Ղարաղաղի՝ Ողան գեղացիներն, ինչպէս էլ Հին-Նախիջևանի՝ Շամբեցիներն և Ախալցխայ՝ Դամալայ գեղի բնակիչներն երևելի են իրանց պարզմտութիւնովը, մինչև անգամ Սպահանի Հայ-գաղթականների մէջ յայտնի են Բոլորանցիներն**»⁶⁸⁵: Նա ինքն էլ է հրատարակել շուշեցիների (բազմաթիվ), բոլորանցիների (էջ 37), ողանցիների (էջ 48, 49), հաթերքցիների (էջ 63–66), շամբեցիների (էջ 7, 101, 192) վերաբերյալ ժողովրդական զվարճալի պատումներ:

Գալուստ Շերմազանյանի թվարկած համարյա բոլոր բնակավայրերի բնակիչների մասին բանահավաքները գրառել են մեզ հետաքրքրող գավելշտապատումների տարբերակներ, բայց այժմ վերադառնանք 1890 թ. **Մանուկ Աբեղյանի** հրապարակած «**Շամբեցիք ու արևը**» (№ 18) մանրապատումին:

Ըստ այդ տարբերակի՝ մի օր Շամբում ամպամած է լինում, արևը չի երևում: Շամբեցիներն ասում են, թե արևն իրենցից խռովել է: Նրանք դարադաղցիների

⁶⁸² **Սուրեն Հարությունյան**, Գաբրիել Սունդուկյան: Մենագրություն, Երևան, Հայպետհրատ, 1960 (–510 էջ), էջ 199, 244, 245: **Լ. Ասմադյան**, «Սունդուկյան Գաբրիել Մկրտումի» // **ՀՍՀ**, հ. 11, Երևան, 1985, էջ 192:

⁶⁸³ **Անեկդոտներ, գուարճալի գրույցներ, համառոտ դէպքեր և առակներ մեծ մասամբ ազգային կենսից առած**: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, 1878 (–198 էջ), էջ 3:

⁶⁸⁴ **Անեկդոտներ, գուարճալի գրույցներ, համառոտ դէպքեր և առակներ...**, էջ 7, 13, 16, 36, 186–192:

⁶⁸⁵ **Անեկդոտներ, գուարճալի գրույցներ, համառոտ դէպքեր և առակներ...**, էջ 5, 6:

և հաթերքցիների նման գնում են արևին փնտրելու, «**կը տենան մին ծակը մին բան պլատում այ**» (տեսնում են մի ծակի մեջ մի բան է փայլում): Կարծելով, թե արևն է, և մտածելով, որ քահանան արևի հետ մտերիմ կլինի, նրան բերում են, որ արևին համոզի՝ դուրս գա: Նրա գլուխը ներս են մտցնում ու սպասում: Երբ շինականների համբերությունը սպառվում է, տեր հորը դուրս են քաշում, տեսնում՝ անգլուխ է: Գյուղ են վերադառնում և կնոջը հարցնում, թե ամուսինը գլուխ ունե՞ր: Նա էլ պատասխանում է. «**Չեմ գիտում, գլուխը միտս չի, մենակ հաց ուտելուս մին գատ դըմդըմբում էր**» («Չգիտեմ, գլուխը չեմ հիշում, միայն [հիշում եմ] հաց ուտելիս մի բան տմբտմբում էր»):

Առաջ անցնելով՝ նշենք, որ **ներկայացված մանրավեպը մեզ ծանոթ երեքուկես տասնյակից ավելի տարբերակներից միակն է, որտեղ չի ասվում, թե ով է գլուխը պոկում**: Մյուս համանման սյուժեներով երգիծապատումներում մթության մեջ լույս տվող բաները արջի կամ գայլի աչքերն են լինում, ինչը դժվար չէր կոսահել հայրենի բնաշխարհին քաջածանոթ աստապատցի գյուղացի ունկնդիրների համար, այլապես Մանուկ Աբեղյանը հարկ կհամարեր բանասացին հարցնել կամ իր կողմից պարզաբանել:

«**Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում**» (1959) գրքի հեղինակ **Վ. Հարությունյանը**, մանրամասն վերապատմելով «**Շամբցիք ու արեւը**», 1950-ական թթ. ոգով արել է հետևյալ անսպասելի եզրակացությունը. «**Տգիտությունը ծաղրելուց բացի, հեքիաթն ունի նաև սուր սոցիալական ուղղվածություն: Ժողովուրդը հարստահարողների ու ձրիակերների գլուխը ջարդելու համար առիթ չի բաց թողնում իր ձեռքից**»⁶⁸⁶:

Վերապատմելով նաև Մ. Աբեղյանի գրառած «**Իրեք շամբցի**»⁶⁸⁷ ծիծաղաշարժ մանրավեպը, Վ. Հարությունյանը, ինչպես «**Շամբցիք ու արեւի**» դեպքում, չի նշել ով է գրի առել և որտեղ է տպագրվել:

Նա, վերաշարադրելով բազմաթիվ հեքիաթներ ու զվարճապատումներ, ինչ-որ անհասկանալի հաստատակամությամբ անտեսել ու շրջանցել է դրանք փրկողներին՝ ասացողներին, բանահավաքներին ու հրատարակողներին: Չնշելով սկզբնաղբյուրները՝ նա բնագրերը կարդալ ցանկացող գիտնականներին, ուսուցիչներին, ուսանողներին և մյուս ընթերցողներին դժվարին կացության մեջ է դրել: Թերևս որոշ բացառություն է արել «**տաղանդավոր մանկավարժ**

⁶⁸⁶ **Վ. Հարությունյան**, Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում, Երևան, Հայպետոսմանկհրատ, 1959 (–152 էջ), էջ 133, 134:

⁶⁸⁷ **Վ. Հարությունյան**, Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում, էջ 134, 135: Տե՛ս **Հայ-ժողովրդական հեքիաթներ**, ժողովածու **Տիգրանայ Նաւասարդեանց**, վեցերորդ գիրք, էջ 57:

Առաքել Բահաթրյանի գրի առած»⁶⁸⁸ բանարվեստի երկու նմուշները՝ «**Խօրթ ախճկանը հաքեաթը**»⁶⁸⁹ և «**Թաքավերէն տողորը հաքեաթը**»⁶⁹⁰ վերապատմելիս, հիշատակելով բանահավաքին, բայց քար լռություն պահպանելով գրառման վայրի, թվականի, այլ մանրամասների, այդ թվում՝ տպագրության մասին:

Նա մի հավելյալ դժվարություն էլ հարուցել է գրքի կազմի և տիտղոսաթերթի վրա իր ազգանվան հետ նշելով միայն անվան սկզբնատառը: Թե ո՞վ է Վ. Հարությունյանը, մեզ այդպես էլ չհաջողվեց պարզել: Նրա անունը և կենսագրական որոշ փաստեր փորձեցինք ճշտել Ազգային գրադարանի քարտարանում և մատենագիտության բաժնում: Ապարդյուն: Քանի որ հրատարակիչը «Հայպետուսմանկիրան» էր, փնտրեցինք նաև Երևանի հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանում: Չգտանք: Որևէ գրախոսական կարդալու համար թերթեցինք «**Սովետական մանկավարժ**» ամսագրի 1959–60 թթ. բոլոր համարները, ինչպես նաև «**Սովետական դպրոց**» շաբաթաթերթի երկու տարվա հավաքածուն, որտեղ գրքի տպագրության ու բովանդակության մասին հանդիպեցինք միայն մի համառոտ լրատվության, կրկին առանց հեղինակի ամբողջական անվան հիշատակման⁶⁹¹: Ինչևէ, մեզանից անկախ պատճառով չենք կատարում սույն ուսումնասիրության առաջարկում մեր տված խոստումը և գիտնականին այս կամ այն չափով չենք ներկայացնում:

⁶⁸⁸ Վ. Հարությունյան, Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում, 1959, էջ 73:

⁶⁸⁹ Վ. Հարությունյան, Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում, 1959, էջ 73, 74: Տե՛ս Հայ-ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանայ Նաուասարղեանց, իններորդ գիրք, էջ 86–89: Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք, հ. VI, էջ 46–48:

⁶⁹⁰ Վ. Հարությունյան, Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում, էջ 75–77: Տե՛ս Հայ-ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանայ Նաուասարղեանց, ութերորդ գիրք, էջ 40–45: Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք, հ. VI, էջ 32–35: Վ. Հարությունյանի վերապատմած «Թաքավերէն տողորը հաքեաթը» Առաքել Բահաթրյանի գրառածը չէ: Նրա գրի առածը տպագրվել է Տիգրան Նավասարդյանի «Հայ-ժողովրդական հեքիաթների» IX գրքում (1902 թ., էջ 78–82): Այդ մասին տե՛ս նաև «Ղարաբաղի (Արցախ) և Ղարադաղի (Պարսպատունիք) տարբերակները» գլխում:

⁶⁹¹ Ուսուցչի գրադարանի համար, «Սովետական դպրոց», շաբաթաթերթ, Երևան, 1959, սեպտեմբերի 25, № 39:

ԳՐԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՉՆՇՎԱԾ ՕՐԻՆԱԿ

Մեկ գվարճապատում էլ՝ «Տերտերն ու արջը»⁶⁹² (№19) վերնագրով, առանց աղբյուրը մատնանշելու, տեղ է գտել 36-ամյա բանագետ և բանահավաք, բանասիրական գիտ. թեկնածու Արտաշես Նազիսյանի⁶⁹³ կազմած «Ծաղկեփունջ» (1960) գրքում, որի առաջաբանում գրված է. «Այս ժողովածուի նյութերը ժամանակին գրի են առնվել բազմավաստակ բանահավաքներ Ս. Հայկունու, Տ. Նավասարդյանի, Մ. Բարխուդարյանի, Եր. Լալայանի և ուրիշների կողմից և հրատարակվել ազգագրական ժողովածուներում ու հանդեսներում»⁶⁹⁴:

Արտաշես Նազիսյանը դրանց բարբառայնությունը որոշ չափով մեղմել է, մոտեցրել գրական լեզվին, որպեսզի հասկանալի դառնան մանուկ և պատանի ընթերցողներին. «Ժողովածուի նյութերը հեղինակային, ինքնուրույն մշակումներ չեն: Նկատի ունենալով բարբառային անմատչելիությունը, մենք լեզվական վերամշակման ենք ենթարկել ներկայացվող նյութերը, չանտեսելով, սակայն, ժողովրդական լեզվի ոճական ու արտահայտչական կոլորիտն ու առանձնահատկությունները: Անհրաժեշտ դեպքում միայն միջամտել ենք ժողովրդական բնագրերին, վերացնելով նկատվող ձգձգվածությունը կամ ճապաղությունը, առանց շեղվելու, սակայն, սյուժեի զարգացումից և հրաժարվելով ինքնուրույն հավելումներից կամ անտեղի հապավումներից»⁶⁹⁵:

Ինչպես վերը ընդգծեցինք, ցավոք, չեն հղվել աղբյուրները, որպեսզի համեմատելով պարզ դառնար, թե հրատարակված նյութերից որը որքան է փոփոխվել, կամ որը ով, երբ ու որտեղ է գրառել, ո՞ր գավառի բանահյուսության նմուշ է:

«Տերտերն ու արջը» մյուս պատումներից տարբերվում է նրանով, որ արջը տեղ հոր գլուխը պոկում է ոչ թե քարայրում, այլ՝ գյուղի այգիներում: Երբևէ արջ չտեսած գյուղացիները կանչում են քահանային, որ գա խաչավետարանով, աղոթելով ու շարականով Աստծո այդ պատիժը գյուղի այգիներից քշի: Քահանան մոտենում է արջին, մյուսները հեռվից դիտում են: Արջը վրա է հասնում և պոկում է նրա գլուխը:

Մեզ ծանոթ մյուս բոլոր տարբերակներում, բացի 2010 թ. Խոփայի խոսվածքով մեր գրառած «Արչէ» (№3) մանրավեպից, գլխի պոկվելը ոչ ոք չի տեսնում, և

⁶⁹² Ծաղկեփունջ, հայ ժողովրդական առակներ, գրույցներ, խաղեր, առածներ ու հանելուկներ, ժողովածուն կազմել և նյութերը մշակել է Ա. Նազիսյանը, Երևան, Հայպետհրատ., 1960 (-148 էջ), էջ 60:

⁶⁹³ Արտաշես Նազիսյանի մասին տես նաև «Ղարաբաղի (Արցախ) և Ղարաղաղի (Պարպատունիք) տարբերակները» գլխում:

⁶⁹⁴ Ծաղկեփունջ, էջ 8:

⁶⁹⁵ Ծաղկեփունջ, էջ 8:

միայն այս երկու զվարճապատումներում է, որ իրադարձությունները տեղի են ունենում բոլորի աչքի առաջ, ուստի անհասկանալի է՝ ինչու՞ են ականատեսները գյուղ վերադառնում և զոհի կնոջը հարցնում, թե ամուսինը գլուխ ունե՞ր:

Քննարկվող «**Տերտերն ու արջը**» երգիծական մանրավեպում երեցկինը նրանց պատասխանում է. «**Վալլանհ, չեմ իմանում գլուխ ունեք, թե չէ, համա երկու օր առաջ աղանձ ուտելիս միրուքը կտմբտմբար**» («Աստված վկա, չգիտեմ գլուխ ունեք, թե չէ, բայց երկու օր առաջ աղանձ ուտելիս մորուքը տմբտմբում էր»):

Քանի որ գործող անձանցից մեկը հոգևորական է, ուստի **խորհրդային տարիների մտածողությամբ** օգտագործվել է աթեիստական դաստիարակության նպատակով: **Արտաշես Նազինյանի** հրատարակած «Ծաղկելինջից», «**Տերտերն ու արջը**», առանց աղբյուրը նշելու, 1976 թ. արտատպվել է «**Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի (աթեիստական քրեստոնատիա)**» ժողովածուում⁶⁹⁶:

Վաչագան Հարությունյանի կազմած և տասը հազար տպաքանակով հրատարակված այս հաստափոր գրքի անտոսագիայում կարդում ենք, որ այն «նախատեսված է պրոպագանդիստների, դասախոսների, ագիտատորների, ուսանողների, ասմունքող-երգիծաբանների համար»:

Վերնագրից դատելով՝ «**Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի**», պետք է որ առաջաբանում մեծ տեղ հատկացված լինեք հայ գրողների ստեղծագործություններին և հայ բանահյուսությանը, բայց հիշատակվում են միայն **Հովհ. Թումանյանի** «Լոռեցի Սաքոն»⁶⁹⁷ պոեմն ու **Հովհ. Շիրազի** «Մեր հին վանքի պատերի տակ»⁶⁹⁸ բանաստեղծությունը, իսկ հայ բանահյուսությունից՝ «**Սլիկ էրեց**»⁶⁹⁹ հեքիաթը, առանց ասացողի ու բանահավաքի, հրատարակության վայրի ու թվականի մասին տվյալների: «Սլիկ էրեց»-ը⁷⁰⁰ տպագրելիս Վ. Հարությունյանը համառորեն չի նշել, որ նշանավոր բանահավաք Բենսեի այս գրառումը արտատպել է «**Հայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի X հատորից⁷⁰¹:

⁶⁹⁶ **Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի (աթեիստական քրեստոնատիա)**, կազմող և առաջաբանի հեղինակ՝ **Վաչագան Հարությունյան**, Երևան, «Հասարակական» հրատ., 1976 (-684 էջ), էջ 648, 649:

⁶⁹⁷ **Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի**, 1976, էջ 29:

⁶⁹⁸ **Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի**, 1976, էջ 31:

⁶⁹⁹ **Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի**, 1976, էջ 31:

⁷⁰⁰ **Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի**, 1976, էջ 313–317:

⁷⁰¹ **Հայ ժողովրդական հեքիաթներ**, Մուշ-Բուլանըլս, հ. X, հատորը կազմեց և ծանոթագրեց **Սողոմոն Տարոնցին**, ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967 (-636 էջ), էջ 132–135:

Երեսուն էջանոց առաջաբանում **Վաչագան Հարությունյանը** 21 անգամ ընդարձակ քաղվածքներ է ներկայացրել Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Լենինի երկերից: Ի հակադրություն ինչպե՞ս չի շնչառաջադրվում այս ժողովածուի լույս ընծայումից 38 տարի առաջ՝ ստալինյան հետապնդումների սարսափելի օրերին՝ 1938թ., երիտասարդ գիտնական **Արամ Ղանալանյանի** հրատարակած «**Ներածությունը**»:

Վաչագան Հարությունյանը միտումնավոր մոռացության է մատնել Արամ Ղանալանյանի «**Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից**» ժողովածուն: Գուցե տեղյակ չի եղել նրա մասին: Ինչ խոսք, տեղյակ է եղել, քանի որ այնտեղից, կրկին առանց նշելու, արտատպել է «**Պատվու խրատ ասածուն**»⁷⁰² գվարճապատումը:

Ի դեպ, գրքում սփռված բանարվեստի նմուշների ասացողների և բանահավաքների տվյալները հետևողականորեն զանց են առնված, այնինչ տարբեր բաժիններում տպագրված Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Լենինի աթեիստական ևս 58 քաղվածքները⁷⁰³ (առաջաբանից բացի), բարեխղճորեն հղված են:

Վերոնշյալ ընդհանրությունները հաշվի առնելով՝ չենք բացառում, որ նախորդ՝ «**Նախիջևանյան տարբերակները**» գլխի վերջում մեր անդրադարձած «**Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում**» (1959) գրքի հեղինակ Վ. Հարությունյանը Վաչագան Հարությունյանն է:

Ինչպես արդեն գրել ենք, Արտաշես Նազիսյանի «**Ծաղկեփունջ**» ժողովածուից «**Տերտերն ու արջը**» Վաչագան Հարությունյանն առանց աղբյուրը նշելու, ընդգրկել է իր կազմած քրեստոմատիայում:

Ընց այս տարբերակն է թարգմանվել ռուսերեն և «Поп и медведь» (№ 19/1) («**Տերտերն ու արջը**») վերնագրով զետեղվել «Армянский фольклор» («Հայկական բանահյուսություն») գրքում⁷⁰⁴: Կարծում ենք՝ կային շատ ավելի հետաքրքիր պատումներ, բայց բարբառային լինելու պատճառով դրանք, ըստ երևույթին, թարգմանական դժվարություններ են հարուցել:

⁷⁰² Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի (աթեիստական քրեստոմատիա), 1976, էջ 58, 59, տե՛ս Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից, 1938, էջ 3:

⁷⁰³ Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի, էջ 34–38, 60–64, 136–138, 273–276, 322–324, 418, 419, 592–594, 652–654:

⁷⁰⁴ Армянский фольклор, составление и перевод Г. О. Карапетяна, Москва, изд. «Наука», 1979 (–376 с.), с. 151, 372.

ԿԱՃԵԹՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Քննարկվող ժողովրդական գվարճապատումների փոփոխակները պատմվել են նաև **Փերիայի, Շատախի, Մոկսի, Ջավախքի, Լոռու, Տավուշի, Վանի, Մուշի, Կեսարիայի, Արաբկիրի, Խարբերդի, Դիարբեքի** և այլ վայրերի հայերի շրջանում: Մեզ հայտնի ամենահին տպագիր օրինակներից մեկը **Սարգիս Սարգսյանցի «Ազուլեցոց բարբառը»** գրքում 1883 թ. հրատարակված ռամիսցիների մասին գվարճապատումն է⁷⁰⁵, որին արդեն անդրադարձել ենք, մյուսը Վանի նահանգի Վանի գավառի Շատախի գավառակի Կաճեթ (Կաճետ) գյուղի բնակիչների մասին է, որը նույնպես 1883 թ. տպագրվել է Թիֆլիսում՝ մանկավարժ, բանահավաք, դրամատուրգ **Հովհաննես Նազարյանցի** կազմած **«Անեկդոտների»** 3-րդ հատորում: Անվերնագիր է⁷⁰⁶ (№ 20): Ցավոք, կազմողը չի նշել, թե ով և ումից է գրառել: Ժողովածուի վերջում ներկայացվել են միայն տարբեր քաղաքներում բնակվող 10 «անձանց անունները, որոնք մեծ քանակությամբ են նիւթ տուել»⁷⁰⁷: Քանի որ այս մանրավեպի հերոսները խոսում են Շատախի բարբառով, կարելի է ենթադրել, որ ասացողը շատախցի է:

Կաճեթ գյուղի բնակիչներին թիրախավորող շատ երգիծական գրույցներ կան⁷⁰⁸: Ըստ **Հ. Նազարյանցի** հրատարակածի՝ **քրդերը** կաճեթցի քահանայի գլուխը կտրում են և իրենց հետ տանում: Երեցկիները նրա մարմնին նայելով, լալիս է և ասում, որ «խօկեւորին» մի բան է պակասում, բայց չգիտի թե ինչ: Գյուղացիները հավաքվում են, մտածում են ու քննում, թե ինչն է պակասում: Մեկն ասում է՝ մորուսը, մյուսը՝ բերանը, երրորդն էլ՝ աչքերը, իսկ երեցկիները ողբում է. «**Ա՛խ, խոկետը տիրոջ կրկնը թախըմով ի պակասս**»⁷⁰⁹ («Ա՛խ, հոգևոր տիրոջ գլուխն ամբողջովին է պակասում»):

⁷⁰⁵ **Սարգիս Սարգսյանց**, Ազուլեցոց բարբառը, էջ 49, 50:

⁷⁰⁶ **Անեկդոտներ**, հատոր III, աշխատասիրեց **Յովհաննես Նազարեանց**, Թիֆլիս, Մ. Վարդանանցի և ընկ. տպարանում, 1883 (-256 + XII էջ), էջ 64, 65:

⁷⁰⁷ **Անեկդոտներ**, հատոր III, էջ 254:

⁷⁰⁸ **И. Орбели**, Фольклор и быт Мокса, Академия Наук СССР, институт востоковедения, Москва, главная редакция восточной литературы издательства «Наука», 1982 (-144 с.), №9 (с. 64), №31 (с. 70, 71). **И. Орбели**, Избранные труды в двух томах, т. II, составитель и редактор тома доктор исторических наук, профессор **П. М. Мурадян**, НАН РА и АН РФ, Ереван, издательство «Гитутюн», НАН РА, 2002 (-XVI с. + 456 с.), Մոկսի բարբառով՝ №9 (էջ 56), №31 (էջ 63), նույնի ռուսերենը, որն արտատպվել է **Հ. Օրբելու** «Фольклор и быт Мокса» գրքից, №9 (с. 131, 132), №31 (с. 137, 138). **Անուշավան Դևկանց**, Կաճեթա ծեր, հաղագս ծիծաղական պատմությանց և վասն խրատի, Երևան, «Հայաստան» հրատ., 1974 (-328 էջ):

⁷⁰⁹ **Անեկդոտներ**, հատոր III, աշխատասիրեց **Յովհաննես Նազարեանց**, 1883, էջ 65:

Կաճեթցիների մասին մեկ անտիպ երգիծապատում էլ՝ «Կանճեռա տերտե-րը»⁷¹⁰ (№ 21) վերնագրով, մեզ հանդիպել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող Գ. Թարվերդյանի «Անեկդոտներ յեվ Առած-ներ, Հանելուկներ, Շուտասելուկներ...»⁷¹¹ ձեռագիր ժողովածուում, որի «Յերկու խոսք»-ը թվագրված է «1935 թ. 11 ոգոստ., Ազատական»: Ըստ «Հայկական սովետական հանրագիտարանի» և «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի»՝ Արտաշատի շրջանի Ազատական գյուղն իր այդ նոր անունը ստացել է 1945 թ., իսկ մինչ այդ կոչվել է Չիգդամլու (Չիգդամլու, Ղոբզովան)⁷¹²: Քանի որ բոլոր գրառումներն արված էին 1922–1940 թթ. գործածված արեղյանական ուղղագրությամբ (որոշ շեղումներով), ուստի, մտածում էինք, որ բանահավաքը նոր գյուղանունն ավելացրել է 1945 թ. անվանափոխությունից հետո: Այդ առումով, անակնկալ էր, երբ 1937 թ. տպագրված «Հայ աշուղներ» գրքի «Յերկու խոսք»-ում, որի հեղինակը Գ. Թարվերդյանն է, կարդացինք, որ նրա հայրենի գյուղի անունը Ազատական է⁷¹³: Փաստորեն տեղանունը փոխվել է 1945-ից տարիներ առաջ:

Բանահավաք Գեղամ Թարվերդյանը (1884, Չիգդամլու–1959, Երևան)⁷¹⁴, հանդես էր գալիս նաև Վերդի, Աշուղ Վերդի ծածկանուններով, ինքն էլ հորինում էր աշուղական երգեր: Սալմաստցիների (Խոյի) բարբառով շուտասելուկներ, հանելուկներ և այլ նյութեր սկսել է հավաքել 11 տարեկանից՝ 1895-ից, ինչպես որ նշված է հիշատակված ձեռագիր ժողովածուի տիտղոսաթերթին, իսկ 12–13 տարեկանից երգարան պահելու սովորություն է ունեցել, որի մեջ գրի է առել աշուղական խաղեր⁷¹⁵: Նա 1934-ից բանահավաք է աշխատել Հայաստանի կուլտուրայի պատմության (հետագայում՝ Պատմության և գրականության) ինստիտուտում: Իր կուտակած բանահյուսական նյութերով հրատարակել է մի քանի գրքեր⁷¹⁶:

⁷¹⁰ ՀԱԻ արխիվ, թղթ. «Գ. Թարվերդյան, Անեկդոտներ յեվ Առածներ, Հանելուկներ, Շուտասելուկներ Սալմաստեցոց Բարբառով, Հավաքել են 1895–1933 թթ.», FFI:1495–1798:

⁷¹¹ ՀԱԻ արխիվ, թղթ. «Գ. Թարվերդյան...», FFI: 1501:

⁷¹² «Ազատական» // ՀԱՏ, հ. 1, Երևան, 1974, էջ 97, 98: «Ազատական» // Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 1986 (–992 էջ), էջ 41:

⁷¹³ Հայ աշուղներ, անտիպ յերգերի ժողովածու, Ա, հավաքեց յեվ կազմեց՝ Գ. Թարվերդյան, առաջաբան յեվ մասնագիտական խմբագրություն Գ. Լեվոնյանի, ՀԽՍՀ պատմության յեվ գրականության ինստիտուտ, Յերեվան, Պետական համալսարանի տպարան, 1937 (–560 էջ), էջ XIX:

⁷¹⁴ «Վերդի» // ՀԱՏ, հ. 11, 1985, էջ 399: Հայկ Խաչատրյան, Գրական տեղեկատու, 1934–1986, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986 (–622 էջ), էջ 537:

⁷¹⁵ Հայ աշուղներ, էջ XIX:

⁷¹⁶ Հայ գուսաններ, ժողովածուն կազմ. է Գ. Թարվերդյան, Երևան, Հայպետհրատ, 1957 (–298 էջ): Հանելուկներ, հավաքեց և կազմեց՝ Գ. Թարվերդյան, Երևան, Հայպետհրատ,

Ըստ **Գեղամ Թարվերդյանի** Սալմաստի (Խոյի) բարբառով գրառած «**Կանճեսա տերտերը**» զվարճապատումի՝ մի անգամ Կանճեթ գյուղից ութ-տասը հոգի գնում են որսորդության: Նրանց արջ է հանդիպում: Հարայ-հրոց են բարձրացնում: Արջը փախչում, մտնում է մի մեծ անցքի մեջ: Կանճեթցիները մտածում են՝ ինչ անեն: Մեկն ասում է՝ գնանք գյուղ, քահանային բերենք, թող գա, աղոթի և արջին հանի: Գնում են, բերում: Տեր հայրը գալիս է, մի քիչ աղոթում է, գլուխը մտցնում է, որ տեսնի՝ արջն ինչ վիճակում է: Արջը նրա գլուխը պոկում է: Որսորդները շատ են սպասում, բայց նա դուրս չի գալիս, ոտքերից քաշում են, հանում: Տեսնում են՝ գլուխը չկա: Վերադառնում են Կանճեթ, կնոջը հարցնում՝ որ տեր հորը տարանք, գլուխը վրան էր: Կինն էլ պատասխանում է. «**Կոլխ-մլոխ չեմնալի, վալլահ, ամմա էտ մե պանը զեհնիս իկանլի, որ խաց ուտելուն տերտերի տանան (չանան շաշ տալով) մե դաստան մազ կար, հա իրար կըկըպներ...**»⁷¹⁷ («Գլուխ-մլուխ չգիտեմ, Աստված վկա, բայց այդ մի բանը միտքս է գալիս, որ հաց ուտելիս տերտերի այդ տեղը (ծնտորը ցույց տալով) մի փունջ մազ կար, հա շարժվում էր»):

Հարգելով բանահավաքի հեղինակային իրավունքը «**Բնագրեր և թարգմանություններ**» բաժնում արեղյանական ուղղագրությամբ, նույնությամբ ընդգրկել ենք Գ. Թարվերդյանի ոչ անթերի գրառումը (№ 21)՝ զուգահեռ ներկայացնելով նաև բարբառակիրների աջակցությամբ մեր ճշտած տարբերակը (№ 21/1), որը, հավանաբար, նույնպես անթերի չէ:

Հետաքրքիր է, որ Շատախի հարևան Մոկսի գավառակում 1911–1912 թթ. ուսումնասիրություններ կատարելիս ապագա մեծանուն գիտնական, 1934–1951 թթ. Լենինգրադի (Սանկտ-Պետերբուրգ) Էրմիտաժի տնօրեն, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1935), իսկ այն ժամանակ 24–25-ամյա **Հովսեփ Օրբելին** (1887, Քութայիս–1961, Լենինգրադ) նույնպես գրառել է նման զավեշտապատում, որը՝ 1982թ. Մոսկվայում տպագրվել է ոչ թե բնագրով, այլ ռուսերեն թարգմանությամբ՝ «**Как церковь передвигали**»⁷¹⁸ (№ 22), և միայն քսան տարի անց՝ 2002թ. է Երևանում ռուսերենի հետ հրատարակվել նաև հայերեն բնագիրը: «**Էրեց կը-**

1948 (–44 էջ): **Վերդի (Գեղամ Թարվերդյան)**, Հեքիաթներ և զրույցներ, Երևան, Հայպետհրատ, 1957 (–80 էջ) և այլն: **Գ. Թարվերդյանի** գրառած 4 հեքիաթ էլ տպագրվել է՝ **Հայ ժողովրդական հեքիաթներ, Պարսկահայք**, հ. XVIII, հատորը կազմեց, առաջաբանը գրեց և տպագրության պատրաստեց **Թամար Գևորգյանը**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016 (–656 էջ), էջ 102–116:

⁷¹⁷ ՀԱԻ արխիվ, թղթ., վրան գրված է. «**Գ. Թարվերդյան**, Անեկդոտներ յեվ Առածներ, Հանելուկներ, Շուտասելուկներ Սալմաստեցոց Բարբառով, Հավաքել են 1895 թվից մինչև 1933 թ.», FFI:1495-1798 (էջ 1587):

⁷¹⁸ **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, Академия Наук СССР, Институт востоковедения, Москва, главная редакция восточной литературы издательства «Наука», 1982 (–144 с.), с. 73.

ցրնձն, ժնն կըտընդն»⁷¹⁹ (№ 22/1) վերնագրված երգիծական մանրավեպը միասին պատմել են Մոկսի գավառակի գավառապետ (մուղիր) 51-ամյա քուրդ **Մուրտուլա-բեգը**, որը հրաշալի խոսում էր Մոկսի հայերի բարբառով⁷²⁰ և Մոկս գյուղաքաղաքի Ապրըխսանանց թաղամասի երիտասարդ բնակիչ **Միսրակ Զաքարյանը**⁷²¹: Հ.Օրբելու հարցման համաձայն՝ Մոկս գյուղաքաղաքի հինգ թաղամասերը միասին ունեին 190 տուն բնակչություն⁷²²:

26-ամյա **Ռուբեն Տեր-Մինասյանը**, որը 1908 թ. եղել է Մոկսում, իր «**Հայ յեղափոխականի մը յիշատակները**» գրքում գրում է. «Մոկսը հետաքրքրական երկիր է իր բնակիչներու թե՛ տարագով եւ թե՛ մարդաբանական կազմով: Անոնք կապուտաչեայ, շէկ են, կուրծքերը լայն, հասակները բարձր, մէջքերը բարակ: Հայերէն կը խօսին առանձին շեշտով եւ կը տարբերին միւս հովիտներու բնակիչներէն: Անոնց տարագը, մանաւանդ կանանցը, նոյնպէս կը տարբերի»⁷²³:

Ահա, այս յուրահատուկ տարագ հագած, բարձրահասակ, գեղեցկադեմ, խարտյաշ մարդիկ, մի օր բողոքում են, որ եկեղեցին գյուղից հեռու է, ձմռանը չեն կարողանում այնտեղ գնալ: Մեկն առաջարկում է, որ երեցը աղոթատան պատուհանից գլուխը հանի, նրա վիզը պարանով կապեն և քաշեն, նա կցնցվի, եկեղեցին կոճալ՝ կշարժվի, այդպես կրենն գյուղի մոտ: Բայց ուժեղ ձիգ տալուց քահանայի գլուխը պոկվում է: Գյուղացիներն ասում են՝ սա իրենց տերտերի գլուխը չէ, իրենց տերտերի գլուխը մարմին էլ ուներ: Տանում են երեցկոնջն են ցույց տալիս, նա էլ նայում է և ասում. «**Խոլն, չը՛մ կը՛տնն. մի էրէց ինչ խնց կուտէր, անու մուրուս կըտընդըղկըտէր. ջնոբիսք՛, փշում ճննաշ տանք՛՝ մընն տընդըղկըտնն՛**»⁷²⁴ («Աստված վկա, չգիտեմ, մեր երեցը, երբ հաց էր ուտում, նրա մորուքը տմբտմբում էր, փորձենք մի քիչ ճաշ տանք, հիմա էլ կտմբտմբում»):

⁷¹⁹ **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, составитель и редактор тома доктор исторических наук, профессор **П. М. Мурадян**, НАН РА и АН РФ, Ереван, издательство «Гитутюн», НАН РА, 2002 (–XVI с. + 456 с.), с. 66. **Հ.Օրբելու** կատարած ուսերեն թարգմանությունը՝ նույն տեղում՝ էջ 140: **Հ.Օրբելու** գրառած հայերեն բարբառային տեքստերը հրատարակության է պատրաստել **Մարո Հայրիկի Մուրադյանը**, նույն տեղում, էջ VI, VII:

⁷²⁰ **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, с. 35, 129, 133–135. **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, с. 14–15, 191, 195, 196:

⁷²¹ **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, с. 129, 133, 134. **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, с. 191, 195, 196:

⁷²² **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, с. 141, **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, с. 35.

⁷²³ **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե հատոր, Տարօնէն Թիֆլիս (1908–1909), Գ հրատարակութիւն, Թեհրան, 1982, վերահրատարակություն՝ Երևան, «Աղանա» հրատ., 1990 (–384 էջ), էջ 105, 106:

⁷²⁴ **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, с. 66.

Երեցկնոջ պատասխանը Հովսեփ Օրբելին ոռուերեն այսպես է թարգմանել. «**Ей-ей, не знаю; когда наш поп ел, борода у него тряслась; испытаяем, дадим ему немного похлебки-ну-ка, будет ли трястись борода?**»⁷²⁵.

Մենք արդեն անդրադարձել ենք Առաքել Բահաթրյանի Ղարաբաղի բարբառով 1860թ. գրի առած զվարճապատումի «**վալլա**»՝ «**Աստված վկա**» երդմանը: Մոկսի տարբերակի առնչությամբ ցանկանում ենք նշել, որ համապատասխան «**ուլլա**»՝ «**Աստված վկա**» երդումը բազմիցս հանդիպում է Մոկսում Հովսեփ Օրբելու գրառած նաև բանահյուսական այլ արձակ նմուշներում⁷²⁶: Այն ոռուերեն թարգմանվել է կամ «**ей-ей**»⁷²⁷, կամ «**право же**»⁷²⁸ կամ «**право**»⁷²⁹, նույնիսկ՝ «**а ведь**»⁷³⁰, «**вот**»⁷³¹, երբեմն մի քանի տարբերակ միասին, օրինակ՝ №52 հերիաթում:

Անշուշտ, Հովսեփ Օրբելին այս բազմազանությամբ ցանկացել է թարգմանություններն ավելի ընթերցելի ու ոչ միօրինակ դարձնել: «**Ռուս-հայերեն բարբառաբան**» վկայությամբ՝ «**ей-ей**» ձայնարկությունը խոսակցական է և նշանակում է «հավատա, ճիշտ եմ ասում, երդվում եմ»⁷³², իսկ «**право**» միջանկյալ բառն էլ նշանակում է «իսկապես, արդարև, ճիշտ եմ ասում»⁷³³, մյուսները՝ «**а ведь**», «**вот**», նույնպես «Աստված վկա» երդման իմաստը չունեն:

1979թ. Մոսկվայում հրատարակված «**Армянский фольклор**» («Հայկական բանահյուսություն») գրքի թարգմանիչ **Գ. Կարապետյանն** էլ սույն ուսումնասիրության նախորդ՝ «**Գրառման տվյալները չնշված օրինակ**» գլխում մեր անդրադարձած «**Ծաղկեփունջ**» (1960) ժողովածուի «**Տերտերն ու արջը**»⁷³⁴ երգի-

⁷²⁵ **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, с. 73, **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, с. 140.

⁷²⁶ **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, №9 (с. 56), №26 (с. 61), №28 (с. 62), №33 (с. 64), №37 (с. 66), №38 (с. 66), №45 (с. 70, 71, 75), №46 (с. 77), №49 (с. 81, 83), №51 (с. 85, 87), №52 (с. 91, 93, 94, 96, 98).

⁷²⁷ **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, №9 (с. 64), №26 (с. 69), №28 (с. 70), №33 (с. 72), №37 (с. 73), №38 (с. 73), №45 (с. 77), №46 (с. 83). **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, №9 (с. 132), №26 (с. 136), №28 (с. 137), №33 (с. 138), №37 (с. 140), №38 (с. 140), №45 (с. 143), №46 (с. 149).

⁷²⁸ **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, №49 (с. 87, 89), №51 (с. 90), №52 (с. 96). **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, №49 (с. 153, 155), №51 (с. 157), №52 (с. 161).

⁷²⁹ **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, №51 (с. 92), №52 (с. 97, 102). **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, №51 (с. 157), №52 (с. 162, 165–167).

⁷³⁰ **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, №52 (с. 96). **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, №52 (с. 161).

⁷³¹ **Иосиф Орбели**, Фольклор и быт Мокса, №52 (с. 98). **Иосиф Орбели**, Избранные труды в двух томах, т. II, №52 (с. 163).

⁷³² **Ռուս-հայերեն բարբառաբան**, 1968, էջ 236:

⁷³³ **Ռուս-հայերեն բարբառաբան**, 1968, էջ 877:

⁷³⁴ **Ծաղկեփունջ**, հայ ժողովրդական առակներ, գրույցներ, խաղեր, էջ 60:

ծապատումի ռուսերեն տարբերակում «**Վալլահ**»-ը տառադարձել է «**Валла**»⁷³⁵ և սխալմամբ կարծելով՝ աղբրեջաներեն է, գրքի բառարանում բացատրել է. «**Валлах (азерб.) – клятва «бог свидетель»; говорится в подтверждение факта**»⁷³⁶ («Վալլախ (աղբր.)– երդում «աստված վկա», ասվում է ի հաստատումն փաստի»): Կարծում ենք՝ շատ ավելի պարզ ու հասկանալի կլիներ, եթե **Հ. Օրբելին** և **Գ. Կարապետյանը** «վալլա»-ն թարգմանեին «**Ей богу**», «**Бог свидетель**»⁷³⁷:

Նշենք, որ երեցկնոջ պատասխանն այնքան է կարևորվել, որ իր հայրենակից վանեցի գաղթականներից ուսուցիչ, պատմաբան և բանասիակալ **Սենեքերիմ Շալջյանի** (1878, Վան–1943, Երևան) Երևանում գրառած մեկ տարբերակում («**Տէրարոչ մուրուս**») այն նույնիսկ չափածո է: Այս պատումում պարզապես քահանան մահացել է, գյուղացիները նրան թաղել են և մի քանի օր հետո սկսել վիճել, թե նա մորուք ունե՞ր, թե՛ չունե՞ր: Կնոջն են հարցրել, նա էլ արտասանել է.

«Պյամը կեր,
Կէրթեր, կուգեր,
Մածուն կուտեր,
Նյամ, նյամ կաներ,
Էլ չեմ կիտե,
Կնր թե չըկեր»⁷³⁸:

Սենեքերիմ Շալջյանի 1933թ. գրած ինքնակենսագրությունից⁷³⁹ տեղեկանում ենք, որ նրա 500 էջանոց ազգագրական և բանահյուսական գրառումներն իր տան հետ այրվել են 1915թ. Վանի ապրիլյան հերոսամարտի օրերին: Այնուհետև նա ընտանիքով գաղթել է Էջմիածին, ապա՝ Երևան ու Թիֆլիս, որտեղ էլ ընդգրկվել է **Երվանդ Լալայանի** բանահյուսություն գրառող արշավախմբի մեջ⁷⁴⁰: Տարբեր գյուղերում ու քաղաքներում աստանդական կյանք վարելուց հետո 1931թ. օգոստոսին 53-ամյա **Սենեքերիմ Շալջյանը** բնակություն է հաստա-

⁷³⁵ Армянский фольклор, 1979, с. 151.

⁷³⁶ Армянский фольклор, 1979, էջ 367:

⁷³⁷ **Հայ-ռուսերեն բառարան**, ՀԳԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984 (–724 էջ), էջ 79:

⁷³⁸ ՀԱԻ արխիվ, թղթ. «Անեկդոտներ Վան քաղաքի բարբառով (նաև զանազան բարբառների փոքրիկ ասոյթներով), հավաքեց և գրի առավ **Սենեքերիմ Շալջյան**, 1935թ. նոյ. 13-ից սկսուած: Հունիսի 20, Երևան, 1936», FFI: 6399, 01 (էջ 38): **Ծիծաղում են վանեցիները**, ժողովածու, կազմողներ՝ **Վ. Հարությունյան**, **Ն. Մելիքյան**, Երևան, «Զանգակ-97», 2006 (–196 էջ), էջ 144, 145:

⁷³⁹ **Ավարդ Ղազիյան**, Սենեքերիմ Շալջյան (1878–1943 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 2016, №1, էջ 204–211:

⁷⁴⁰ Նրա հավաքած բանահյուսական նյութերի մեծագույն մասը տպագրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած «**Հայ ժողովրդական հեքիաթներ**» մատենաշարի IV (1963), VIII (1977), IX (1968), XI (1980), XII (1984), XIII (1985), XIV (1999), XV (1998), XVI (2009), XVIII (2012) հատորներում:

տել Երևանում և շարունակելով իր բանահավաքչական գործունեությունը՝ թղթին է հանձնել վերոնշյալ **«Տէրտրոչ մուրուս»**-ը:

Այն, որպես հակակրոնական բանահյուսության օրինակ, **«Նմուշներ հայկական հակակրոնական ֆուկլորից»** ժողովածուում 1938 թ. հրատարակել է **Արամ Ղանալանյանը**, բայց երեցկնոջ պատասխանի **«Մածուն կուտեր»** տողը դուրս է մնացել⁷⁴¹:

Ինչպես արդեն ասել ենք, գրքի առակների և զավեշտալի մանրապատումների բաժնում միայն մի քանի հակակրոնական նյութեր կան. վստահաբար այս չափածոն դրանցից չէ:

«Տէրտրոչ մուրուս»-ը (№ 23) երկրորդ անգամ հրատարակվել է Հայաստանի «Վասպուրական» հայրենակցական միության պատվավոր նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր **Վարազդատ Հարությունյանի** (1909, Վան – 2008, Երևան) և ծագումով վանեցի, 1954 թվականից կես դար «Արմենայրես» պետական լրատվական գործակալությունում աշխատած փորձառու լրագրող և խմբագիր **Նորա Մելիքյանի**⁷⁴² տպագիր և անտիպ տարբեր աղբյուրներից կազմած **«Ծիծաղում են վանեցիները»** ժողովածուում⁷⁴³: «Կազմողների կողմից» նախաբանում կարդում ենք. «Վերջին տարիներին ՀՀ ԳԱԱ-ի հրատարակությամբ լույս տեսան վասպուրականյան հեքիաթների երկու ծավալուն հատորները: Գրառված հայ ժողովրդական բանահյուսության հարուստ հավաքածուից վասպուրականյան ուշագրավ զվարճապատումներ այս գրքում զետեղելու համար մեզ տրամադրեց բանասիրական գիտությունների թեկնածու, ազգագրագետ, «Վասպուրական» հայրենակցական միության պատվավոր անդամ **Ալվարդ Ղազիյանը**: Գրքում ներառվել է դրանցից ավելի քան 90-ը՝ բնօրինակով, Վանի ու Շատախի բարբառներով»⁷⁴⁴:

Հեղինակներն, անշուշտ, նկատի ունեն ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած **«Հայ ժողովրդական հեքիաթներ»** մատենաշարի XIV և XV հատորները⁷⁴⁵, որոնք նվիրված են Վասպուրականի արձակ բանահյուսությանը:

⁷⁴¹ **Նմուշներ հայկական հակակրոնական ֆուկլորից (ժողովածու)**, 1938, էջ 13:

⁷⁴² **Նորա Մելիքյան, Հրայր Զորյան**, Արմենայրես – 90. 1918 – 2008, Պատմա-փաստագրական ակնարկ Հայաստանի պետական լրատվական գործակալության անցած ուղու մասին, Երևան, «Արմենայրես» ՓԲՀ, 2010 (–304 էջ +32 լուսանկարների ներդիր), էջ 285–301:

⁷⁴³ **Ծիծաղում են վանեցիները**, 2006, էջ 144, 145:

⁷⁴⁴ **Ծիծաղում են վանեցիները**, 2006, էջ 4, 5:

⁷⁴⁵ **Հայ ժողովրդական հեքիաթներ, Վան-Վասպուրական**, հ. XIV, հատորը կազմեց և տպագրության պատրաստեց **Ալվարդ Ղազիյանը**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1999 (–592 էջ): **Հայ ժողովրդական հեքիաթներ, Վան-Վասպուրական**, հ. XV, հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց **Վերժինե Սվազյանը**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, «Ամրոց» հրատ., 1998 (–512 էջ):

«Ծիծաղում են վանեցիները» ժողովածուի «Այսպես են ծիծաղել վանեցիները հնում» (էջ 129–179) բաժնի 91 զվարճապատումներից ու զվարճախոսություններից միայն «Այսիկ և բամբակ» (էջ 155, 156) հեքիաթն է, որ տպագրված է եղել XIV հատորում⁷⁴⁶: Մենք, համեմատելով տպագիր և անտիպ նյութերը, պարզեցինք, որ այդ 91-ից առնվազն 41-ը անխոնջ բանահավաք **Սենեքերիմ Շալջանի** 175 զվարճապատում ու զվարճախոսություն պարունակող «**Անեկդոտներ Վան քաղաքի բարբառով**» ձեռագիր մատյանից են⁷⁴⁷, բայց մեզ անհայտ պատճառով կազմողները **նրա անունը չեն հիշատակում ո՛չ ժողովածուի առաջաբանում, ո՛չ որևէ էջում**:

Գրքում չեն նշվել սկզբնաղբյուրները, ասացողների ու գրառողների տվյալները, ինչը, ցավոք, արժեզրկում է արված աշխատանքը և անհարկի բարդություններ հարուցում ուսումնասիրողների համար:

Ի դեպ, **Ս. Շալջանի** գրի առածներից ինը նմուշ՝ համապատասխան հղումներով, դեռևս 1938թ. հրատարակել է **Արամ Ղանալանյանը**, այդ թվում՝ հետա-

⁷⁴⁶ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XIV, էջ 551, 552, տե՛ս Վանայ սագ: Հուաքածոյր Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների, ժողովեց Գեորգ Գ. Շերենց, առաջին մաս, Թիֆլիս, Թիֆլիսի ընկերութիւն հայերէն հրատարակութեան, 1885 (–188 էջ), էջ 119, 120:

⁷⁴⁷ ՀԱԻ արխիվ, թղթ. «Անեկդոտներ Վան քաղաքի բարբառով (նաև գանազան բարբառների փոքրիկ ասոյթներով), հավաքեց և գրի առավ **Սենեքերիմ Շալջան**, 1935թ. նոյ. 13-ից սկսուած: Հունիսի 20, Երևան, 1936», FFI: 6297-6636: Պահպանելով **Ս. Շալջանի** համարակալումները, փակագծերում նշել ենք ձեռագիր ժողովածուի էջերը, իսկ սուրանկյուն նշանից հետո՝ «Ծիծաղում են վանեցիները» գրքի էջերը՝ 1. **Ուրպանթ շուտ էկավ, չանձ շապանթ** (էջ 1> 167), 2. **Էրկաթ եմ յես, պոպատ եմ յես** (էջ 1>164), 5. **Զի գան պոլրթ-պանմբակ, ջանհանմ**՝ խայանա, թե կը տանկրնա (էջ 4 >140), 7. **Զի տարան պատի տրկով, յես տրվի հանձեղ ատմի** (էջ 6> 150), 8. **Տանկերէն կիցոդ գեղական** (էջ 7 >157), 18. **Մըկրոտով ի** (էջ 14, 15>162), 28. **Սիրոդ ունեցոդ կնիկ** (էջ 28, 29 > 161, 162), 34. **Պատկով վոսկին, կարմիր ճորի** (էջ 33, 34 >135, 136), 35. **Ցից փոթուցել** (էջ 34 > 168, 169), 40. **Տէրտրոյ մուրուս** (էջ 38> 144, 145), 43. **Խոսով** (էջ 40>153), 44. **Էսա քո իշուց դրիս էջ ի** (էջ 40 > 134), 55. **Կվատ աղչկըներ** (էջ 50>129), 56. **Կվատ կնիկ** (էջ 51>151), 60. «**Թան-թանանա, պապին ուտի՝ գվանթանա. Խավիծ-խավվալիծ, պապին ուտի՝ ինի վոտնից**» (էջ 53>129), 71. **Էլըմ կուրկոտ կա ծիծելու** (էջ 63> 151), 74. **Թանքի շեխն ինան տանկի կնիկ** (էջ 66, 67>145), 83. **Սուր տերտրե** (էջ 73, 74> 138, 139), 91. **Խաթուննոթէս պոնէր ի** (էջ 80>162, 163), 98. **Գանմի ուտոդ մարթ** (էջ 84> 153), 105. **Աղբատ պապիկ** (էջ 90, 91>147, 148), 109. **Կակոսկէ խուգու ճաշ** (էջ 93, 94>130, 131), 111. **Նրոնանձ** (էջ 96, 97>174), 114. **Տուտ փակ, էրտիս կալ, բոես Մոսոյի հոգին էմալ էղավ** (էջ 98>175), 124. **Պատվու խրատ Աստծուն** (էջ 104, 105>135), 125. **Մկրտէլն ի զիգնից, խայանալ, տանկնայն էլ խո զիգնից չի** (էջ 105, 106>137), 126. **Տէրտրե խնդաց, ժան տնդանց** (էջ 106, 107> 144), 130. **Յես յիմ փարէն չում մըխսա** (էջ 109, 110>146), 131. **Թթուն պովե** (էջ 110, 111>152), 132. **Կանեցոցոց հաշիվ** (էջ 111>175), 133. **Վոտովն ուտենք, անվոտ մեր ծառէն ի** (էջ 111, 112>160), 134. **Իշու ծոնյի** (էջ 112>158), 139. **Խարսի խոստովանանք** (էջ 115>140), 140. **Ճնչ պախս ինան տէրտրոյ ջորի ֆասուլեք** (էջ 116>139, 140), 141. **Մէլ մեղք, չորս վանթք** (էջ 116>132), 143. «**Տեր վոթորմյա, չեմ օթորմա**» (էջ 117, 118>148), 144. **Կրովու տարվա պատմութեն** (էջ 118>178), 146. **Ծէթ ծախօղի էրագ** (էջ 119, 120>177), 151. **Փէտ, փէտ, փէտ** (էջ 125>176, 177), 154. **Քն պերան քանթուս ի** (էջ 128, 129>178), 161. **Տն տղա Հանթան** (էջ 133>133):

գայում «**Ծիծաղում են վանեցիները**» ժողովածուում տպագրված «**Տերտեր խնդաց, ժամ տնդաց**»⁷⁴⁸ գվարճալի մանրավեպը, որը որոշ ընդհանրություններ ունի մեր քննարկած տարբերակների հետ: Այն **Սենեքերիմ Շալջյանի** հավաքածուում առանձին վերնագրված «**Կանետա ծոեր**» բաժնում է, որն ընդգրկում է 126–136 համարակալումով նյութերը: Այդ մասի նախաբանում ներկայացված ավանդության համաձայն՝ գյուղի ջուրն անատողջ է եղել և կանեթցիները խմելով՝ թեթևամիտ են դարձել: **Խրիմյան Հայրիկը** փակել է տվել աղբյուրը, որից հետո կանեթցիները խելոքացել են⁷⁴⁹:

Ըստ «**Տերտեր խնդաց, ժամ տնդաց**» պատումի՝ կանեթցի մի տղա դաշտում ձի է տեսնում, որը ճանճերը քշելու համար գլուխը վերուվար է անում: Նա ձիուն հարցնում է, թե իրեն կուտի՞, մորն էլ կուտի՞, հորեղբորն էլ, գյուղացիներին էլ, տերտերին էլ: Ձին գլուխը բարձրացնում ու իջեցնում է: Տղան վագում է գյուղ, ասում, որ դաշտում մի գագան է հայտնվել, որը բոլորին պիտի ուտի: Գյուղացիները վեր են կենում, որ փախչեն: Մեկն ասում է՝ բա մեր եկեղեցին: Քահանային մտցնում են աղոթարանի մեջ, գլուխը նեղ պատուհանից հանում, վիզը պարանով կապում ու ձգում են, որ աղոթատունն էլ տանեն: Տերտերը խեղդվում է, շրթունքները հետ են քաշվում: Կանեթցիներն էլ կարծում են, որ նա ծիծաղում է, եկեղեցին էլ շարժվում է⁷⁵⁰:

Քանի որ այս պատումում քահանայի գլուխը չի պոկվում և գյուղացիները չեն գնում երեցկնոջը հարցնելու, ուստի տարբերակներն ամփոփելիս այն չենք ընդգրկել:

Կանեթցիների մասին մեկ փոփոխակ էլ՝ «**Կանեթյան ծոեր**» (№ 24) վերնագրով, հրատարակել է բնիկ շատախցի, երախտաշատ բանասիակապ, ազգագրագետ, երգիչ **Հայրիկ Մուրադյանի** (1905, Շատախի գավառ, գ. Ջնով-1999, Երևան) դուստրը՝ 1974թ. հանրահայտ «**Ակունք**» ազգագրական համույթի հիմնադիր-ղեկավար, բարբառագետ և բանասիակապ, բանասիրական գիտ. թեկնածու **Մարլենա (Մարո) Մուրադյանը**⁷⁵¹ (1934, Երևան–1987, Երևան): Նա այդ պատումը գրառել է Ցեղասպանությունից փրկված շատախցիներից:

⁷⁴⁸ **Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից (ժողովածու)**, էջ 73, 74: **Ծիծաղում են վանեցիները**, էջ 144:

⁷⁴⁹ ՀԱԻ արխիվ, թղթ. «Անեկդոտներ Վան քաղաքի բարբառով (նաև զանազան բարբառների փոքրիկ ասոյթներով), հավաքեց յեվ գրի առավ **Սենեքերիմ Շալջյան**, 1935թ. նոյ. 13-ից սկսուած: Հունիսի 20, Երևան, 1936», FFI: 6525 (էջ 106): **Արամ Ղանալանյան**, Ավանդապատում, ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969 (–534 էջ + XXXIII), էջ 108, 439:

⁷⁵⁰ ՀԱԻ արխիվ, թղթ. «Անեկդոտներ Վան քաղաքի բարբառով (նաև զանազան բարբառների փոքրիկ ասոյթներով), հավաքեց յեվ գրի առավ **Սենեքերիմ Շալջյան**, 1935թ. նոյ. 13-ից սկսուած: Հունիսի 20, Երևան, 1936», FFI: 6525-6527 (էջ 106, 107):

⁷⁵¹ **Մարլենա Մուրադյան**, Շատախի բարբառը, Երևան, ԵՊՀ հրատ., 1962 (–228 էջ), էջ 176, 178:

Համառոտ վերապատմենք. մի օր **Կաճեթ** գյուղի քահանան, տեսնելով, թե ինչպես է արեգակը մտնում **Առնուստ** սարի հետևը, ժամհարին կանչում է, որ սրբատան զանգերը խփի: Երբ գյուղացիները հավաքվում են, նրանց ասում է՝ իրենք բաց աչքերով կույր են, մինչև այդ օրը չեն տեսել, որ արևը գալիս, իջնում է Առնուստ սարի այն կողմը և քնում: Առաջարկում է՝ աղով-մատաղով գնան արևի մոտ՝ ուխտի: Կաճեթցիները մի-մի այծ, գառ, ուլ են վերցնում, որ մատաղ անեն: Տեր հայրն ասում է՝ **եկեք եկեղեցին էլ տանենք:**

Նրա վիզը պարանով օղակ են գցում, նա էլ գլուխը պատուհանից հանում է: Այնքան են քաշում, որ օղակը պարանոցը կտրում է, ու մարմինն ընկնում է աղոթատան մեջ, իսկ գլուխը ցած է գլորվում պատի տակ: Կաճեթցիները գնում են երեցկնոջը հարցնում, թե առավոտյան դուրս գալիս ամուսնու գլուխը վրան էր: Նա էլ պատասխանում է. «**Յէս հոնստ կյիտիմ՝ կըլօխ վերէն էր, թի չէ, մէ պան կըհիշամ, տը մածուն կուտէր, մուրուս կըլէր, կըկէր, կըտըմտըմբէր...**»⁷⁵² («Ես որտեղից գիտեմ՝ գլուխը վրան էր, թե՛ չէ, մի բան եմ հիշում, որ մածուն էր ուտում, մորուքը գնում, գալիս, տմբտմբում էր...»):

ՋԱՎԱԽՔԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

«**Տերտերի միրուքը**»⁷⁵³ (№ 25) վերնագրով նմանատիպ երգիծական մանրապատում կա նաև Ջավախքի բանարվեստում: Այն, երիտասարդ տարիքում՝ 1938 թ., Երևանում գրանցել է ապագա վաստակաշատ գիտնական, ազգագրագետ (1970-ից՝ պատմական գիտ. դոկտոր) **Վարդ Բդոյանը** (1910, Ջավախք, Նինոծմինդայի շրջան, գ. Փոքր Խանչալի-1986, Երևան): Ասացողը՝ **Գարեգին Հայրապետյանը** (ծնվ. 1870 թ.) 1930-ին Երևան էր տեղափոխվել Ախալքալաքի Չամդուրա գյուղից⁷⁵⁴:

Գյուղացիները ցանկանում են իրենց եկեղեցին տեղաշարժել ավելի հարմար վայր: Քահանան սրբատան պատուհանից գլուխը հանում է, այն կապում են գութանի շղթայով և մի քանի գոմեշներով քաշում: Գլուխը պոկվում է: Ժամկոչը տեսնում է, որ տեր հայրը ընկել է աղոթատան մեջ, բայց գլուխ չունի: Վազում է երեցկնոջը հարցնում՝ տերտերը, որ եկեղեցի եկավ, գլուխը վրան էր: Նա էլ

⁷⁵² **Մարլենա Մուրադյան**, Շատախի բարբառը, էջ 178:

⁷⁵³ **Վարդ Բդոյան**, Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, կազմեց, առաջաբանը գրեց և տեքստային անհրաժեշտ ծանոթագրությունները կատարեց **Ռաֆայել Ղարիբյանը**, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014 (–752 էջ), էջ 406, 407:

⁷⁵⁴ **Վարդ Բդոյան**, Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, էջ 714, 721:

ասում է. «Վալլան, չեմ կրնա ըսե, գոխը վրան էր, թե չէ, հըմը էնքան գիտեմ, օր միրուքը շընկար կը» («Աստված վկա, չեմ կարող ասել, գլուխը վրան էր թե չէ, բայց այնքանը գիտեմ, որ մորուքը շարժվում էր»):

ԿԵՍԱՐԻԱՅԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Գրքում քննարկվող ամենահետաքրքիր գվարճապատումներից մեկը՝ «Խելօր Դաւիթ»-ը (№ 26), Կեսարիայի թուրքախոս հայերից գրառել և թարգմանել է «Ե. Յ. Գազազեան»-ը: Այն 1899 թ. հրատարակվել է Կ. Պոլսի «Բիւրակն» պարբերականում⁷⁵⁵:

Հերոսը՝ «խելացի» Դավիթը, «ի բնէ տգեղ ու տճել էր, անտիական հասակով, Մալայեան բերնով, Մոնկոլեան ճակտով եւ իր հնդկական ասքով կոպիտ վայրենի մըն էր: Սակայն իր իմաստութեամբ ու ճարտասանութեամբ հոչակուած ու համբաւուած էր գեղին մէջ, այնպէս որ ամէն մարդ խորհուրդ հարցնելու համար իրեն կուգային, եւ կամ, երբ երկու հոգի իրարու հետ կազ ու կոի ունենային՝ իրեն կը դիմէին որ վճճը դադրեցնէ եւ կամ վճիռ մը տայ: Իսկ կիրակի ու տօնի օրերը գեղացիներն իր գլուխը ժողված՝ անոնց բանաստեղծական ոճերով ճառեր կը ճամարտակէր ու գեղացիները կը հիացնէր»⁷⁵⁶:

Մի օր, երբ նա ճառեր էր արտասանում, գեղջուկներից մեկն ասում է. «Տէր իմ, Աստուած քեզի երկար օրեր տայ, բայց երբ դուն մեռնիս, մենք ի՞նչ պիտի ըլլանք առանց պաշտպանի եւ ուղեցոյցի, խն[դ]րենք ասոր դարման մը խորիէ՛»: Մեր խելացին վայրիկ մը խորիելէ ետքը, գասթիլեան հպարտութեամբ մը ըսաւ. «Պոլիս խելք կը ծախեն եղեր, պէտք է Պոլիս երթալ ու խելք ծախու առնել»⁷⁵⁷:

Համագյուղացիները նրան մի մեծ քսակ ոսկի են տալիս և ճանապարհում Պոլիս: «Խելօր» Դավիթը մի քանի օր գնալուց հետո, Պոլիս չհասած, հանգրվանում է մի պանդոկում: Դուրս է գալիս զբոսնելու և տեսնում է՝ մի մարդ զամբյուղով ինչ-որ բան է տանում: Հարցնում է՝ ի՞նչ է ծախում: Մարդը, գլխի ընկնելով, որ Դավիթը չգիտի ի՞նչ է ձմերուկը, խաբում է. «Իշուկի հակկիթ՝ գոր ճեղքելու ըլլաս, մէջէն ասանակ մը կ'ելլէ»⁷⁵⁸: Դավիթը մեկ ոսկով առնում է:

Վերջապես, երբ Պոլիս է հասնում, «կը հիանայ, երբ կը տեսնէ ծովը, նաւերը, մեծ ու շքեղ բնակարանները, շուկաները եւ այն տեղի փայլուն իրերը: ...Մարդուն մէկը իր դիրքէն կը կռահէ թէ պարզամիտ մէկն է՝ անոր կ'ըսէ. «Ի՞նչ կ'ուզես,

⁷⁵⁵ «Բիւրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, 25 մարտի, № 14, էջ 214–216:

⁷⁵⁶ «Բիւրակն», 1899, 25 մարտի, № 14, էջ 214:

⁷⁵⁷ «Բիւրակն», 1899, 25 մարտի, № 14, էջ 214:

⁷⁵⁸ «Բիւրակն», 1899, 25 մարտի, № 14, էջ 214:

ինչ պիտի գնես, ըսէ՛, խնդրեմ»: Մեր խելացին պատասխանելով կ'ըսէ. «Խելք ծախու պիտի առնեմ»: Մարդը՝ տեսնելով թէ կատարեալ տգէտ ու ապուշ մէկն է, կ'ըսէ. «Շատ աղէկ, ես ծախեմ, սակայն հրչափ ստակ ունիս»⁷⁵⁹: «Խելոք» Դավիթն էլ հանում է իր քսակը և ցույց տալիս: Մարդն ասում է. «Շատ լաւ, եկու՛ր երթանք մեր տունը, քեզի տամ խելքը»⁷⁶⁰: Գնում են: Մարդը «այծենի տիկ մը կ'առնէ ու փչելով զայն կ'ոռեցընէ ու Խելացի Դավիթին ձեռքէն ստակը առնելով կ'ըսէ. «Ահա, խելքը ասոր մէջն է. սակայն չըլլայ որ բանաս, եթէ բանալու ըլլաս, խելքը կը փախչի. իսկ երբ գեղը հասնիս, բաց, գեղացիները եթէ գլուխդ ժողվես՝ ամէնքնիդ ալ պիտի խելօքնաք»⁷⁶¹:

«Խելոք» Դավիթն այծի տիկը վերցնելով՝ «իբ նպատակին հասնող մարդու մը ուրախութեամբ ճամբայ կ'ելլէ»⁷⁶²: Նա, ձմերուկը մի քարի խփելով, ճեղքում է, որ ավանակը մեջից դուրս գա: Նույն քարի մոտ նապաստակի բունն է լինում: Նապաստակը փախչում է, Դավիթն էլ կարծելով՝ ավանակն է, հետապնդում է, բայց չի հասնում (AaTh № 1319):

Ի վերջո գյուղ է գալիս, նստում ջրհորի մոտ, որ հանգստանա: Մտորում է, եթե տիկը բոլորի մոտ բացի, նրանք կխելոքանան, իրեն բաժին չի մնա, ավելի լավ է ինքը նախապես իմաստնանա: Տիկի բերանն արձակում է, մեջի օդը սուլելով դուրս է մղվում: Դավիթը գոռում է. «Խելքը փախան, խելքը փախան»:

Շինականները լսում են ու հավաքվում են նրա շուրջը: Դավիթն ասում է՝ խելքը ջրհորն է մտել, շնոտ պարան բերեք, որ հանենք, խորքերը չփախչի: Բերում են: Մեկին իջեցնում են հորը, նա էլ, շատ փնտրելուց հետո մի անցք գտնելով, մտածում է՝ խելքն այնտեղ է թաքնվել, և գլուխը ներս է խոթում: Խոռոչի միջից հայերեն գոռում է. «**Չիկայ, չիկայ**»: Գյուղացիներն էլ, որ թուրքախոս էին, կարծում են՝ թուրքերեն ասում է. «**Չէք հա, չէք հա (քաշէ, քաշէ)**»: Բոլորը միասին նրան պարանով քաշում են, գլուխը պոկվում է, մնում անցքի մեջ, մարմինը դուրս են բերում, բայց տեսնելով, որ մարդը գլուխ չունի, իրար են հարցնում. «Աղբւր, աս մարդը գլուխ ունէ՛ր, չունէ՛ր»: Կնոջն են կանչում: «Խելոք» Դավիթը նրան է դիմում. «Աշկին»⁷⁶³, ամուսինդ գլուխ ունէ՛ր»: Կինն էլ պատասխանում

⁷⁵⁹ «Բիրակն», 1899, 25 մարտի, №14, էջ 214, 215:

⁷⁶⁰ «Բիրակն», 1899, 25 մարտի, №14, էջ 214, 215:

⁷⁶¹ «Բիրակն», 1899, 25 մարտի, №14, էջ 215:

⁷⁶² «Բիրակն», 1899, 25 մարտի, №14, էջ 215:

⁷⁶³ «Աշկին», նաև «աշկին» Կեսարիայի բարբառով նշանակում է «աղջիկ», տե՛ս **Տ[րդատ] Վ[արդապետ] Պալեան**, Հեքեաթներ Բ., Ճորմակ դավախի աշկինի հեքեաթը, Պալա-հեսի գեղի բարբառով, «Բիրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1898, սեպտեմբերի 24, թիվ 32, էջ 582: **Արշակ Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, Գահիրէ, 1937 (Նախորդ հատորի շարունակությունն է, էջագրված է՝ 1295 էջից մինչև 2479 էջ, հատորը 1190 էջ է), էջ 1634: **Թորոս Մ. Մատաղճեան**, Յուշամատեն Թոմարգայի, Պէրյութ, տպարան Կ. Տօսիկ-

է. «Վալլահ կ'ասեմ, աշ⁷⁶⁴ ուտելու ատեն սախալը տոմ տոմ կ'ընէր եւմ, ունէր, չունէր, չեմ գիտեր»⁷⁶⁵ («Աստված վկա, կերակուր ուտելու ժամանակ մորուքը տմբտմբում էր, ունէր, չունէր, չգիտեմ»):

Այստեղ Դավիթը հավաքվածներին ասում է. «Հէյ կոպիտներ, ես ձեզի չըսի որ այս մարդը գլուխ չունէր, հայեցէք, մեռեր է, ա՛յ արթըննալիք չունի, առէք ու հողըրտըն (գերեզման) թաղեցէք»: Գեղացիները կ'առնեն ու կը թաղեն: Այն ատեն խելօք Դաւիթ գեղացիներուն կ'ըսէ. «Հիմա այլ ես խելքը փախաւ. կեցէք ձեզի բան մ'ըսեմ. երբ ես մեռնիմ, իմ մօրուքիս թելերէն առէք եւ ձեր քովը պահեցէք, որովհետեւ ես Պոլիս ա՛յլ աւելի խելօքցայ. խելք ծախտողը ինծի բաւական տուած էր. այսպէս դուք ալ կը խելօքնաք»: Զայս ըսելով գեղացիները կը մխիթարէ որ շատ վշտացած էին խելքին փախչելուն համար»⁷⁶⁶:

Կնոջ պատասխանից՝ թե մորուքը տմբտմբում էր, կարելի է ենթադրել, որ այս դեպքում էլ գլխից գրկվողը քահանա է եղել: Այս վարկածն է հաստատում նաև այն, որ թուրքախոս հայերի մեջ ջրհոր իջնողը հայախոս էր, իսկ մորուքով և հայախոս կարող էր լինել քահանան, բայց, կարծում ենք, պատումն ինչ-ինչ պատճառներով խմբագրվել է:

Բազմավաստակ պատմաբան, բանասեր, մանկավարժ, խմբագիր, 1910 – 1922թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի քարտուղար **Արշակ Ալպոյաճյան** (1879, Կ. Պոլիս–1962, Կահիրե) իր «**Պատմութիւն հայ Կեսարիոյ**» բարձրարժեք, սովորածավալ երկհատորյակի (2480 էջ) երկրորդ հատորի «**Ջրոյցներ կամ հէքիաթներ**» բաժնում Կեսարիայի հայերի բարբառով բանահյուսության նմուշներ հրատարակելուց հետո «**Բիրակնից**» արտատպելով «**Խելօք Դաւիթը**»⁷⁶⁷ գրում է. «**Միայն մէկ հատ, թուրքերէնէ հայերէնի վերածուած Ե. Յ. Գազազեանի կողմէ կը ներկայացնեն, իբր հայկական ստեղծագործութիւն, սակայն լեզուով օտար**»⁷⁶⁸: Փորձենք պարզել, թե ինչու՞ է նա այսպիսի բացատրություն արել:

Նախ՝ կեսարացիների թուրքախոսության մասին: Ինչպես տեղեկանում ենք **Սիմեոն դպիր Լեհացոյ**, Կեսարիայի հայերը վաղուց էին տաճկախոս դարձել: Նա 1608թ. Լվովից Երուսաղեմ ուխտագնացությունից⁷⁶⁹ հետո վերա-

եան, 1959 (–628 էջ + քարտեզ), էջ 455:

⁷⁶⁴ Աշ–կերակուր, ուտեստ, ուտելիք, ճաշակելիք (Ս. Վ.):

⁷⁶⁵ «Բիրակն», 1899, 25 մարտի, №14, էջ 215:

⁷⁶⁶ «Բիրակն», 1899, 25 մարտի, №14, էջ 215:

⁷⁶⁷ **Արշակ Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, Գահիրէ, 1937, էջ 1818–1820:

⁷⁶⁸ **Արշակ Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, էջ 1817:

⁷⁶⁹ **Սիմեոն դպրի Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք, ուսում-

դարձի ճանապարհին 1616–1618 թթ.⁷⁷⁰ լինում է մի շարք քաղաքներում, այդ թվում՝ Կեսարիայում, որի հայերի օտարախոսության մասին գրում է. «Եւ հինգ-հարիւր տուն հայ եւ աւելի կայր ի նմա. փարթամ վաճառականք եւ խոճայք անվանի մեծատունք. բայց աղքատն աւելի էր. այլ զանահաթ չունին, ամէնն դերձակ եւ խաֆթաչիք են: Ներսցիք **հայնակ** չի գիտեն, միայն **տաճկնակ**, ֆարսի. իսկ դրսեցիք **հայնակ** գիտեն»⁷⁷¹ («Եվ հինգ հարյուր տուն, և ավելի, հայ կար այնտեղ. փարթամ վաճառականներ և անվանի հարուստ խոճաներ, բայց աղքատներն ավելի շատ էին: Ուրիշ արհեստ չունեն, բոլորը դերձակ են ու պարեգոտ կարող: Ներսցիները հայերեն չգիտեն, [այլ]՝ միայն տաճկերեն, ֆարսի, իսկ դրսեցիք գիտեն հայերեն»⁷⁷²):

Նա իր ուղեգրության մեջ հայախոս դրսեցիներին հիշատակում է որպես հյուրասեր, կատակասեր, բանաստեղծ և առակախոս մարդիկ. «Եւ շուրջ զքաղաքաւ բազում այգիք, որպէս Էտրնու յոլով եւ մրգաւէտ. եօթն ազգ խաղող տեսաք անդ: Այլ եւ մարդիկն են հիւրընկալ եւ մարդասէր. ամէն օր այգի մի տանէին զմէզ. եւ մինչ իրիկունն մխիթարէին զմեզ կերակրովք եւ անուշ ըմպելօք. զի գինին առատ է եւ լի. եւ մարդիկն քաղցրագրոյց եւ անուշախօսք, մարդավարք, խորագէտք եւ բանաստեղծք եւ առակախօսք, կատակարարք եւ ուրախացուցիչք...»⁷⁷³ («Եվ քաղաքի շուրջը բազում այգիներ [կան], ինչպես Էտրնայում, շատ ու մրգավետ: Յոթ տեսակ խաղող տեսանք այնտեղ: Մարդիկ ևս հյուրընկալ և մարդասեր են: Ամեն օր մի այգի էին տանում մեզ, ու մինչև երեկո հյուրասիրում էին մեզ կերակրով և անուշ ըմպելիքներով, որովհետև գինին առատ է ու լի, իսկ մարդիկ քաղցրագրոյց և անուշախօսք, մարդավարի, խորագետ, բանաստեղծ ու առակախոս են, կատակող և ուրախացնող...»⁷⁷⁴):

Սիմեոն դպիր Լեհացու այցելությունից հետո անցած շուրջ երեք դարերի ընթացքում Կեսարիայի հայերի օտարախոսությունն ավելի էր խորացել: Արշակ Ալպոյաճյանը գրում է. «Իրենց թրքախօս դատնալը պատճառ եղած է նաև որ կերպով մը խզումի ենթարկուի իրենց կապակցութիւնը անցեալի աւանդութիւններուն հետ և Հայ աւանդավէպերը կամ առասպելները, ինչպէս նաև զրոյցները

նսաիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակինեան, Մխիթարեան ուխտէ, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1936 (–535 էջ), էջ 3, 4:

⁷⁷⁰ **Սիմեոն դպիր Լեհացու** Ուղեգրություն, էջ ԻԴ, 324–326:

⁷⁷¹ **Սիմեոն դպիր Լեհացու** Ուղեգրություն, էջ 326:

⁷⁷² **Սիմեոն Լեհացի**, Ուղեգրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Արշակ Մաղոյանի**, Երևան, «Նաիրի» հրատ., 1997 (–252 էջ), էջ 186:

⁷⁷³ **Սիմեոն դպիր Լեհացու** Ուղեգրություն, տարեգրություն եւ յիշատակարանք, Վիեննա, 1936, էջ 328, 329:

⁷⁷⁴ **Սիմեոն Լեհացի**, Ուղեգրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Արշակ Մաղոյանի**, 1997, էջ 187:

կամ հեքեաթները, առակները, առածները, հանելուկները, օրհնությունները և անեծքները, նոյնիսկ աղօթքները, մոռցուին և անոնց տեղ բռնեն թրքականները կամ թուրքերենները, և շատ քիչ բան կամ ոչինչ մնայ զուտ հայկականներէն»⁷⁷⁵:

Կարծում ենք՝ որպէս զուտ հայկական բանահյուսության մնուշ՝ **Ա. Ալպոյաճյանն** ընտրել է «**Խելօք Դաւիթ**»-ը այն պատճառով, որ գլխավոր հերոսի անունը Դաւիթ է, և ջրհոր իջնողն էլ հայ է և հայերեն է դիմում համագյուղացիներին: Չենք բացառում, որ վաղուց ի վեր օտարախոս դարձած կեսարացիները, որոնց կապը հայության հետ մնացել էր եկեղեցին, ջրհորում գլխից գրկված քահանայի դրվագը հենց իրենք էլ փոփոխել են, սակայն նախնական տարբերակի հետքերը մնացել են:

Իսկ ճվ է «**Խելօք Դաւիթ**»-ը թուրքերեն գրառել և գրական հարուստ լեզվով թարգմանել, գուցե և՛ վերապատմել: Բանահավաքի մասին «**Բիւրակնից**» միայն տեղեկանում ենք, որ նա «**Ե. Յ. Գազազեանն**» է և բնակվել է Կեսարիայում⁷⁷⁶:

Արշակ Ալպոյաճյանի երկհատորյակում, որտեղ կեսարացիների մեծաթիվ անուն-ազգանուններ և լուսանկարներ կան, Ս. Կարապետ վանքի գիշերօթիկ վարժարանի 1901թ. 6 շրջանավարտների խմբանկարի տակ 2-րդը նշված է «**Երուանդ Յ. Գազազեան**»⁷⁷⁷, հաջորդ էջում նրա անվանն ավելացված է՝ «**Կեսարացի**»⁷⁷⁸: Ուշադիր որոնողը **Ե. Գազազյանին** կարող է գտնել նաև ավելի վաղ՝ 1898թ. Ս. Կարապետ վանքի գիշերօթիկ վարժարանի ուսուցիչների և սաների 52 հոգանոց խմբանկարում: Կեսարիայի թեմի առաջնորդ **Տրդատ վրդ. Պալյանի** (1850, Կեսարիա, գ. Թալաս–1923, Աթենք)⁷⁷⁹ շուրջը լուսանկարվածների անվանացանկում՝ 41-րդ աշակերտի անուն-ազգանունը «**Երուանդ Գազազեան**»⁷⁸⁰ է: Եթե նա «**Խելօք Դաւիթ**» հեքիաթ-զվարճապատումի գրառողն ու թարգմանիչն է, ապա որոշ չափով հասկանալի է դառնում, թե ինչու է վանքի գիշերօթիկ վարժարանի սանը քահանային (եթե բնագրում այդպես էր) ու նրա

⁷⁷⁵ **Արշակ Ալպոյաճեան**, Պատմություն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրություն, հ. Բ, Գահիրէ, 1937, էջ 1809:

⁷⁷⁶ «**Բիւրակն**», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, 25 մարտի, №14, էջ 216:

⁷⁷⁷ **Արշակ Ալպոյաճեան**, Պատմություն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրություն, հ. Ա, Գահիրէ, 1937 (–1336 էջ + 10-ից ավելի քարտեզներ), էջ 1153:

⁷⁷⁸ **Արշակ Ալպոյաճեան**, Պատմություն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 1154:

⁷⁷⁹ **Հ. Ն. Ալիսեան**, Կենսագրական. Տրդատ եպիսկոպոս Պալեան, Համառօտ ակնարկ մը իր գրական գործունեութեան վրայ, «**Հանդէս ամսօրեայ**», Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923, նոյեմբեր-դեկտեմբեր, սյուն 549, 552: Տե՛ս նաև **Ա. Ալպոյաճեան**, Պատմություն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 946, 954: Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան, կազմեց՝ **Գեորգ Տէր-Վարդանեան**, էջ 1–180, Կենսամատենագիտություն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, կազմեց՝ **Կարինէ Աւետեան**, էջ 181–248, Երևան, «Քննասէր» հրատարակչություն, 2002 (–248 էջ), էջ 182–192:

⁷⁸⁰ **Արշակ Ալպոյաճեան**, Պատմություն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 1136, 1137:

կնոջը փոխարինել սովորական գյուղական ամուսնական զույգով: Գլխից զրկված հոգևորականի և նրա պարզամիտ կնոջ մասին Կեսարիայում գրառված երգիծական հորինվածքի հրապարակումը մայրաքաղաքային «**Բիրակն**» շաբաթաթերթում, անշուշտ, վանականների խստակենցաղ միջավայրում չէր խրախուսվի:

«**Խելօք Դաւիթ**»-ի առաջին ընթերցումից իսկ աչքի է զարնում բանասացի գրական-գեղարվեստական պատմելաոճը, գրառողի բանահավաքչական հարուստ փորձը, ինչը շատ զարմանալի է: Որոշ վերապահումով կարելի է ասել, որ **Երվանդ Օտյանի** (1869, Կ. Պոլիս – 1926, Կահիրե) հանրահայտ **ընկեր Փանջունու** ծալվարյան առաքելության մասին պատմող երգիծաշարի 1909 թ. լույս աշխարհ գալուց տասը տարի առաջ, «խելացի» Դավիթն իր «**բանաստեղծական ոճերով ճառեր**» ճամարտակելու ունակությամբ և խոսքի ու գործի հակադրությամբ ինչ-որ չափով բանահյուսական հեռավոր ընդհանրություններ ունի Տրապիզոնում ծնված ճառասաց Բ. Փանջունու հետ:

Կարծում ենք՝ **Երվանդ Գագազյանին** մեծապես **օգնել, գուցե և խմբագրել է** շատ փորձառու որևէ բանահավաք: Ենթադրում ենք, որ դա կարող էր լինել այդ խմբակային լուսանկարի կենտրոնական դեմքը՝ Կեսարիայի թեմի առաջնորդ Տրդատ վրդ. Պալյանը: Նա այդ տարիներին՝ 1898–1900 թթ., հաճախ էր «**Բիրակնում**» հրատարակում նահանգի հայերից իր գրառած հեքիաթներն ու ազգագրական նյութերը⁷⁸¹:

Որ խմբագրելու միջոցով, այսպես ասած, քահանաների պատիվը պահելը, նրան օտար չէր, «**Առածանի**» աշխատության մեջ նկատել է **Արամ Ղանալանյանը**: Իր «**Ժողովրդական առածներ եւ զանազան ասացուածք**» գրքում Տրդատ եպս. Պալյանը «**Սար ու ձոր՝ տերտերի փոր**» հանրահայտ առածը խմբագրել և հրատարակել է «**Սար ու ձոր՝ փիս տերտերի փոր**»⁷⁸² տարբերակով, փորձելով շատակերությունը վերագրել միմիայն վատ քահանաներին:

Երուսաղեմի միաբան **Տրդատ վրդ. Պալյանը** (1899-ից՝ եպիսկոպոս)⁷⁸³, 1887 թ. թեմի առաջնորդ ընտրվելով⁷⁸⁴, «Կեսարիոյ հիւսիսային-արեւելեան կողմը, երեք ժամու չափ հեռաւորութեամբ»⁷⁸⁵ գտնվող Ս. Կարապետ վանքում, որը

⁷⁸¹ Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան, կազմեց՝ **Գէորգ Տէր-Վարդանեան**, էջ 1–180, Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, կազմեց՝ **Կարինէ Աւետեան**, էջ 181–248, Երևան, «Քննասէր» հրատարակչութիւն, 2002 (–248 էջ), էջ 221–224:

⁷⁸² **Արամ Ղանալանյան**, Առածանի, Երևան, 1960, էջ XC:

⁷⁸³ **Հ. Ն. Ակինեան**, նույն տեղում, սյուն 550: **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 948, 949:

⁷⁸⁴ **Հ. Ն. Ակինեան**, նույն տեղում, սյուն 549: **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 945:

⁷⁸⁵ **Տրդատ եպիսկոպոս Պալեան**, Հայ վանորայք, հրատարակութեան պատրաստեց **Կարինէ Աւետեանը**, Ս. Էջմիածին, Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչութիւն, 2008

«պորտաքուծարանի մը վերածուած էր»⁷⁸⁶, գիշերօթիկ վարժարան է հիմնում: Այն ուներ կրթավճարով և ճրիավարժ սովորող սաներ⁷⁸⁷, իսկ 1897-ին կից բացում է նաև համիդյան ջարդերից փրկված 40 երեխաների համար որբանոց-կրթարան⁷⁸⁸:

Արշակ Ալպոյաճյանը վարժարանի մասին գրում է. «Հետզհետե հեռաւոր քաղաքներէ եւս սկսան թոշակատրներ հասնիլ և դպրոցը ստացաւ համբաւ մը շնորհիւ իր հիմնադիրին որ աշակուրջ կը հսկէր այս հաստատութեան վրայ, այնպէս որ գաւառի հեռաւոր և մերձաւոր վայրերէն, Սև ծովու և Միջերկրականի եզերքներէն, նոյնիսկ Կ. Պոլիսէն, բազմաթիւ աշակերտներ ունեցաւ»⁷⁸⁹:

Նշանավոր հայագետ, Վիեննայի Միսիթարյան միաբանության անդամ **Հայր Ներսես վրդ. Ակիսյանը** (1883, Արդվին–1963, Վիեննա), 1923 թ. «**Հանդէս ամսօրեայ**»-ում տպագրված Տրդատ եպիս. Պալյանի կենսագրականում մանրամասնում է. «Վարժարանին կից հաստատեց նաև Մատենադարան-թանգարան մը, ուր հաւաքեց իբր 160 ձեռագիր եւ 900 տպագիր մատենան եւ բազմատեսակ հնութիւններ, մասամբ վանքէն առնելով եւ մասամբ իւր սեփական աշխատութեամբ ձեռք բերելով»⁷⁹⁰:

Բայց, ցավոք, նրա պաշտոնավարման տարիները չափազանց արյունահեղ և փոթորկալից էին. հիշենք 1895 թ. համիդյան ջարդերը, 1908 թ. երիտթուրքերի հեղափոխությունն ու Սահմանադրության ընդունումը: **Արշակ Ալպոյաճյանը** մի փոքր բացում է վարագույրը. «...Սահմանադրութեան հռչակումէն յետոյ մթնոլորտը փոխուած էր և սխալ ըմբռնուած ազատութիւնը՝ կարծես սանձարձակութեանց մղած էր անկարգ ու աննպայ տարրեր, որոնք համբաւներու դէմ կը կռուէին յաճախ իրենց աննշան գոյութեան կարեւորութիւն մը տալու համար: Հազիւ թէ Սահմանադրութիւնը հռչակուած, Տրդատ եպ. իր դէմը գտաւ այդ տարրերը որոնք գործի վրայ գտնուելու եռանդով այս արժէքաւոր եկեղեցակաւոր տապալելու կամ վատահամբաւելու ապաշնորհ աշխատանքին լծուեցան»⁷⁹¹:

1910 թ. վաթսունամյա **Տրդատ եպս. Պալյանը** հրաժարական է ներկայացնում⁷⁹²: Իր պաշտոնավարման 23 տարիների ընթացքում նա բազմաթիվ հիշար-

(– 464 էջ + 48 էջ լուսանկարներով ներդիր), էջ 35: Ս. Կարապետ վանքի մասին տե՛ս էջ 35–69:

⁷⁸⁶ **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 1130, 1131:

⁷⁸⁷ **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 1133, 1135:

⁷⁸⁸ **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 1138:

⁷⁸⁹ **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 1134:

⁷⁹⁰ **Հ. Ն. Ակիսեան**, Կենսագրական. Տրդատ եպիսկոպոս Պալեան, Համառօտ ակնարկ մը իր գրական գործունեութեան վրայ, «**Հանդէս ամսօրեայ**», 1923, նոյեմբեր-դեկտեմբեր, սյուն 550:

⁷⁹¹ **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 949:

⁷⁹² **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 950–953:

ժան գործեր էր արել, գրել և հրատարակել էր մի քանի գրքեր, թերթերում ու ամսագրերում՝ հայագիտական հոդվածներ, թեմական կյանքը լուսաբանող տեղեկագրեր, հայերեն ձեռագրերի և հայկական վանքերի նկարագրություններ, ազգագրական ուսումնասիրություններ, նաև ժողովրդական բանահյուսության նմուշներ⁷⁹³:

Նա 1911-ին տեղափոխվում է Զմյուռնիա քաղաքի մոտ գտնվող 520 տուն հայ բնակչություն ունեցող Մաղնիսա (Մազնեսիա)⁷⁹⁴ գյուղ, որտեղ հայրական հարկի տակ, 10 տարուց ավելի շարունակում է զբաղվել հայագիտությամբ: Բայց, ցավոք, 1922թ. սեպտեմբերին, երբ Զմյուռնիայում էր, քաղաքի կոտորածների ժամանակ զրկվում է իր ունեցվածքից, գրքերից ու անտիպ ուսումնասիրություններից⁷⁹⁵: Մեծ դժվարությամբ նավով հասնում է Աթենք, որտեղ մահանում է 1923թ. հուլիսի 2-ին և թաղվում Աթենքի գերեզմանատանը՝ «յուդարկատր ունենալով միայն չորս հոգի, որոնցմէ մին **Վահան Թ-էքէեան**, որ տեսած՝ Տրդատ եպ.ի գործը Կեսարիոյ մէջ, քանի մը բառերով իր ցաւը կը յայտնէ...»⁷⁹⁶:

Տրդատ եպս. Պալյանը մահվանից ամիսներ առաջ գրած իր նամակներից մեկում նշում է, որ Զմյուռնիայում ոչնչացվել են. «30 տարիներ է ի վեր աշխատած եւ ժողոված ազգագրական հաւաքածոյներս ու ուսումնասիրութիւններս»⁷⁹⁷:

Հ. Ներսես վրդ. Ակինյանը բավականին մանրամասն ներկայացնում է կորուստները, որոնց թվում՝ «Հէքեաթներ, 120 հատ ծերունիներու բերնէն լսուած (իբր 3 հատոր), անտիպ, ժողովրդական հայկական առածներ, գրեթէ 5000 հատ (անտիպ), ...Հայկական սովորութիւնք՝ կաղանդի, ծննդեան, նշանտուքի,

⁷⁹³ **Հ. Ն. Ակինեան**, Կենսագրական. Տրդատ եպիսկոպոս Պալեան, Համառօտ ակնարկ մը իր գրական գործունեութեան վրայ, «**Հանդէս ամսօրեայ**», 1923, նոյեմբեր-դեկտեմբեր, սյուն 551–558: **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 954–956: Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան, կազմեց՝ **Գէորգ Տէր-Վարդանեան**, էջ 1–180, Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, կազմեց՝ **Կարինէ Աւետեան**, էջ 181–248, Երեւան, «Քննասւթ» հրատարակչութիւն, 2002 (–248 էջ), էջ 192–232: **Կարինէ Ավետյան**, Լրացումներ Տրդատ եպիսկոպոս Պալյանի մատենագիտության մեջ, «**Էջմիածին**», ամսագիր, 2014, № Բ, էջ 116–126:

⁷⁹⁴ **Մաղնիսա** գյուղի մասին մանրամասն տե՛ն **Գ. Շահինեան**, Մաղնիսայի հայ գաղթականութիւնը, «**Բիւրակն**», 1899, յունուար 7, № 1–2, էջ 11–15:

⁷⁹⁵ **Հ. Ն. Ակինեան**, Կենսագրական. Տրդատ եպիսկոպոս Պալեան, Համառօտ ակնարկ մը իր գրական գործունեութեան վրայ, «**Հանդէս ամսօրեայ**», 1923, նոյեմբեր-դեկտեմբեր, սյուն 550, 551: **Արշակ Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 953, 954:

⁷⁹⁶ **Արշակ Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 954:

⁷⁹⁷ **Հ. Ն. Ակինեան**, նշվ. հոդվածը, սյուն 551: **Արշակ Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 954: Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան, կազմեց՝ **Գէորգ Տէր-Վարդանեան**, էջ 1–180, Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, կազմեց՝ **Կարինէ Աւետեան**, էջ 181–248, Երեւան, «Քննասւթ» հրատարակչութիւն, 2002 (–248 էջ), էջ 231, 232:

ամուսնությունն են, նաև նախապաշարմունք (անտիպ), Բուսական, կենդանական բառեր (անտիպ), Գաւառական բառեր (անտիպ)»⁷⁹⁸ և այլն:

Հետաքրքիր է, որ «Խելօք Դաւիթ»-ի վերջում՝ աստղիկներով առանձնացված տպագրվել է ոչ այն է բանասացի, ոչ այն է **Ե. Գազազյանի** յուրովի, ինչ-որ չափով անհարկի ընդհանրացումը: Ա. Ալպոյաճյանն այս հատվածը չի արտատպել, հավանաբար վստահ լինելով, որ այն արտահայտում է ոչ թե ասացողի, այլ բանահավաքի մտքերը. «Ասիկայ մանրավէպ մըն է: Թէ խելօք Դաւիթ անուն մէկը կար թէ՛ չկար, չենք գիտեր, բայց միշտ պակաս չեն ջոջ խելօք Դաւիթներ, որոնք քաղաքակրթութեան կեդրոններէն իրենց ծննդավայրը կը դառնան քաղաքակրթութեան յոռի եւ կեղծ կողմը միայն օրինակելով եւ իրենց ուռուցիկ ու սնամէջ տիկերով կը հրապուրեն ու կը խաբեն»⁷⁹⁹:

Կարծում ենք՝ հռետորական ոճով այս եզրահանգումը գիշերօթիկի աշակերտի տարիքին ու կենսավորման համահունչ չէ, այլ շատ ավելի փորձառու մեկի, որը նաև նման մտքեր տպագրելու վաստակ պիտի ունենար:

«**Բիրակնի**» խմբագրությունը ևս անդրադարձել է գվարճապատումին և ընթերցողների ուշադրությունը հրավիրել նրա ազգագրական կողմին. «Յաճախ առիթներ չեն պակսիր գաւառացի ժողովրդի բերնէն լսելու սա հանելուկը. «Տուն մը կայ, տուն մըն ալ ասոր մէջ, դեղին Դաւիթը նստած էր մէջ» = Հակիթ: (Հմմտ. «Բիրակն» ԺԸ. տարի էջ 537): Չպիտի յաջողինք հանելուկին կամ «խելացի Դաւիթ» ասածին, (որ Պոլիս ալ կը գործածուի) գոհացուցիչ լուծում մը տալ, եթէ ժողովրդի հաւատքին կամ հայեացքին հաղորդակից եղած ու մանրավէպը լսած չըլլանք: Առաջարկուած «Դեղին Դաւիթ» հանելուկը կամ «**խելացի Դաւիթ**» ասածն ուրիշ բան չեն, եթէ ոչ խտացումը: «Խելօք Դաւիթի» մանրավէպին, ուր պատկերացուցուած են ռեւէ տեղի մը բնակիչներու ծայրաստիճան տգիտութիւնը ու նախնական վիճակը: Բայց թէ ինչու՞ համար ուրիշ անուններէ աւելի Դաւիթ անունը ընտրուած կամ համարուած է մանրավէպին ոգին, ջիղը, դերակատարը, դժբաղդաբար չենք գիտեր»⁸⁰⁰:

Անկեղծ ասած, ինչպես «**Բիրակնի**» խմբագրության աշխատակցի, այնպես էլ մեզ համար անհայտ է, թե ինչու է «**խելօք Դաւիթ**» դարձվածքը նշանակում ոչ **խելացի, պարզամիտ, հիմար**: Դրա բացատրությունը փորձեցինք գտնել 1918–19 թթ. Կ. Պոլսում հրատարակված «**խելօք Դաւիթ**» գրական-քաղաքական, երգիծական շաբաթաթերթի առաջին համարի խմբագրականում, բայց այնտեղ էլ՝ առանց պարզաբանման, քանիցս օգտագործվում է «Խելօք

⁷⁹⁸ **Հ. Ն. Ակինեան**, նշվ. հոդվածը, սյուն 557: **Արշակ Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կենսարիոյ, հ. Ա, էջ 956:

⁷⁹⁹ «**Բիրակն**», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, 25 մարտի, թիւ 14, էջ 216:

⁸⁰⁰ «**Բիրակն**», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, 25 մարտի, թիւ 14, էջ 216:

Դաւիթ» դարձվածքը. «Խելօք-Դաւիթական իմաստութեան համար», «Խրաքանչիւրը ըլլան մէյմէկ... Խելօք Դաւիթ»⁸⁰¹ և այլն:

Հետաքրքիր է, որ 1928 թ. Մարսելում լույս է տեսել 30 էջանոց **«Խելօք Դաւիթին տարեցոյցը»**⁸⁰²:

«Խելօք Դաւիթ»-ը եղել է նաև գրական ծածկանուն, երբեմն այդպես է հանդես եկել սփյուռքի մշակույթի գործիչ **Լևոն Թագվորի Խաչիկյանը** (1907, Սեբաստիա, գ. Խանձառ–2003, Փարիզ)⁸⁰³:

Ինչպես մեզ սասցին պոլսահայ ծանոթները, այդ թվում՝ **«Մարմարա»** թերթի խմբագրի տեղակալ **Մաքրուհի Հակոբյանը**, **«Խելացի Դաւիթ»** դարձվածքն այսօր էլ պարզամիտ, հիմար իմաստով գործածական է, բայց նրանք էլ ծագման աղբյուրը չգիտեին:

«Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» կարդում ենք. «Խելացի Դավիթ (հեգն.), –Բան չհասկացող, անխելք, խենթ: Խելացի Դավիթ, այդ երկու կտոր փայտի վրա այդքան փող կծախսեն»⁸⁰⁴:

ԼՈՌՈՒ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Ուշագրավ է, որ Կեսարիայի փոփոխակի հետ որոշ նմանություններ ունեն Լոռիում և Տավուշում գրառված պատումները: **«Կուրթանցոց որսերեն սովորելը»**⁸⁰⁵ (№ 27) վերնագրով երգիծապատումը 1967 թ. թղթին է հանձնել բանագետ և բանահավաք **Թամար Գևորգյանը**⁸⁰⁶: Գյուղը հնում կոչվել է Կորդան, որի արմատը, ըստ տեղացիների՝ **«կորդ»**-ն է և նշանակում է **«պինդ, անմշակ, խոպան հող»**⁸⁰⁷: Սա ականայից հիշեցնում է կրոնափոխ համշենահայերի Խոփայի խոսվածքի **«գորտ, գորթ»** բառը, որն օգտագործվում է **արոտավայր, մարգագետին, անմշակ հող** իմաստներով:

⁸⁰¹ Խմբագրական, Մեր խօսքը, **«Խելօք Դաւիթ»**, միմոսական շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1918, նոյեմբերի 9, թիւ 1: «Միմոսական շաբաթաթերթի» փոխարեն 1918 թ. դեկտեմբերի 14-ից՝ 6-րդ համարից գրվում է «Գրական զանգուտական շաբաթաթերթ»:

⁸⁰² **Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794–1980)**, Երևան, 1986, էջ 176:

⁸⁰³ **Բախտիար Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան, 2005, էջ 201, 623:

⁸⁰⁴ **Աշոտ Սուքիայան, Սերգեյ Գալստյան**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1975 (–616 էջ), էջ 278:

⁸⁰⁵ **Թամար Գևորգյան**, Լոռի (Տաշիրք-Ձորագետ) // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ.20, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999 (–270 էջ), էջ 147:

⁸⁰⁶ **Թամար Գևորգյան**, Լոռի (Տաշիրք-Ձորագետ), էջ 234:

⁸⁰⁷ **Թամար Գևորգյան**, Լոռի (Տաշիրք-Ձորագետ), էջ 141:

Վրացերեն ևս «կորդի» նշանակում է «խոսքի հոդ», իսկ ճաներեն (լազերեն)՝ «գուղձ, հողակոշտ»⁸⁰⁸:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս ամենը թեմայի հետ կապ չունի, բայց կրոնափոխ համշենահայերի զվարճապատումների նմանությունները փնտրողը, անշուշտ, չի կարող բառապաշարի ընդհանրությունների հանդեպ անտարբեր լինել:

Ըստ Կուրթանի տարբերակի՝ գյուղի բնակիչները ցանկանում են ռուսերեն սովորել և Համբոյին ուղարկում են Թիֆլիս, որտեղ նա մի մարդու հարցնում է, թե ռուսերեն որտեղ են վաճառում: Նա էլ խաբում է, տալիս է լուցկիների երկու տուփ, մեջը՝ մեղուններ, թե՛ սա է ռուսերենը: Համբոն գալիս է գյուղ, գյուղացիները բացում են տուփերը, և մեղունները փախչում են: Նրանցից մեկը մտնում է ձորի քարայրը: Քահանային պարանով իջեցնում են քարանձավը, որ աղոթագիրք կարդա, և ռուսերենը դուրս գա: Այդ անձավում մի արջ է լինում, որը պոկում է նրա գլուխը: Գնում են կնոջը հարցնում, թե տեր հայրը գլուխ ունե՞ր: «Վայ ֆոքի, — պատասխանում ա տերտերակինը, — ետ գիղեմ ոչ, համա միտս ա, որ գիրագի օրը ժամ ասելիս միրուքը վրին տըմբտըմբեր» («Վայ, հոգի, — պատասխանում է տերտերակինը, — այդ չգիտեմ, բայց հիշում եմ, որ կիրակի օրը՝ ժամասացության ժամանակ, մորուքը վրան տմբտմբում էր»):

ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Ռուսերեն ձեռք բերելու համար Թիֆլիս գնացած քահանայի մասին մի զվարճապատում էլ՝ «Լոռեցունց ռուսերենը»⁸⁰⁹ (№ 28) վերնագրով, Տավուշի մարզի Իջևանի շրջանի իր հայրենի Դիտավան գյուղում 1993թ. գրառել է բանագետ-բանահավաք **Էսթեր Խենյանը**: Ասացողը 1909թ. նույն գյուղում ծնված **Գուրգեն Գրիգորյանն** է, որը շատ պատմություններ է իմացել⁸¹⁰:

Քահանային Թիֆլիսում խաբում են և պուլիկներով ռուսերեն (իրականում՝ շնաճանճեր) են վաճառում: Նա վերադարձին Սանահինի մոտ հանգստանալիս, որոշում է իր բաժին ռուսերենը վերցնի: Բացում է, և կճուճից դուրս են թռչում շնաճանճերն ու հարձակվում տեր հոր վրա: Նա փախչում է, մտնում քարայրը,

⁸⁰⁸ **Ջահուկյան Գևորգ**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987 (-748 էջ), էջ 598: **Նույնի՝** Հայերեն ստուգաբանական բառարան, Միջազգային լեզվաբանական ակադեմիա, Երևան, «Ատոդիկ» հրատ., 2010 (-820 էջ), էջ 423:

⁸⁰⁹ **Էսթեր Խենյան**, Իջևան (Ձորովոր) // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ. 25, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008 (-492 էջ + 16 էջ ներդիր), էջ 255, 256:

⁸¹⁰ **Էսթեր Խենյան**, Իջևան (Ձորովոր), էջ 379, 436, 437:

որտեղ արջ է լինում: Արջը նրան բռնում է: Քահանայի օգնության կանչերը լսելով՝ գյուղացիները վազում են, ոտքերից դուրս քաշում ու տեսնում՝ գլուխը չկա: Չեն կարողանում ճշտել, թե ո՞ր գյուղի քահանան է: Գնում են գյուղերն ընկնում, կնոջը բերում: Նա շորերից ճանաչում է: Հարցնում են. **«Բա, տերտերակին, ո՞ր ա կյլոխը, տանիցը որ տոնս եկավ տերտերը, կյլոխը վրեն է՞ր:**

Ասըմ ա. — **Ճիշտն ասած լավ չեն հիշըմ կյլոխը վրեն էր, մենակ տանիցը տոնս կյլոխս միրուքը վրեն տըմբտըմբեր»**⁸¹¹ («Բա, տերտերակին, ո՞ր է գլուխը, տնից որ դուրս եկավ տերտերը, գլուխը վրան էր:

Ասում է. — **Ճիշտն ասած, լավ չեն հիշում՝ գլուխը վրան էր, միայն [հիշում եմ] տնից դուրս գալիս մորուքը վրան տմբտմբում էր»):**

ՄԵՎԱՆԻ ԱՎԱԶՄՆՈՒՄ՝ ՉՈՐԱԳՅՈՒՂՈՒՄ, ԳՐԱՆՑՎԱԾ ՄՈՒՇԻ ՏԱՐՔԵՐԱԿԸ

Եթե նախորդ բոլոր երգիծապատումներում քահանայի գլուխը պոկողն արջն էր, միայն երկու տարբերակներում՝ **«Հաթերքին իրեք դերը»**, **«Ռըմացիք ու գոյլը»**՝ գայլը, ապա, զարմանալիորեն, Սևանի ավազանում՝ Մարտունու շրջանի Չորագյուղ բնակավայրում (Գեղարքունիքի մարզ), Մուշի բարբառով պատմված **«Տերդերի գըլօխը»**⁸¹² (№ 29) զվարճապատումում **վագրն** է, որն ընդհանրապես մեր լեռնաշխարհում վաղուց չկա: Ասացողի տվյալները բացակայում են, բանահավաքի մասին էլ հայտնի է միայն անուն ազգանունը՝ **Ալթուն Միկոյան**: Ըստ գրքի հեղինակ, բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Բաղրամյանի**, որին արդեն անդրադարձել ենք **«Նախիջևանյան տարբերակները»** գլխում, տպագրված բանարվեստի նմուշներն անձամբ է հավաքել, կամ էլ իր խնդրանքով գրի են առել բանասիրական կրթությամբ ուսուցիչները: Հավանաբար **Ալթուն Միկոյանը** նրանցից մեկն է եղել⁸¹³:

Ըստ այս տարբերակի՝ «Չորու գեղա» գյուղացիները **վագր** են տեսնում, գնում են քահանային կանչում: Վագրը, գյուղացիների բազմությունից վախեցած, փախչում, թաքնվում է քարայրում: Տեր հորը, որպես սուրբ և անձեռնմխելի, վագրի հետևից մտցնում են քարայրը: Նա աղաչում-պաղատում է, որ իրեն

⁸¹¹ **Էսթեր Խեմյան**, Իջևան (Չորովոր), էջ 256:

⁸¹² **Ռ. Հ. Բաղրամյան**, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրություն, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Երևան, 1972 (–226 էջ), էջ 171, 172: Գրքում նշված են հեղինակի անվան և հայրանվան միայն սկզբնատառերը: Այլ աղբյուրներից ճշտեցինք, որ գրքի հեղինակը բանասիրական գիտ. դոկտոր, բարբառագետ **Ռուբեն Բաղրամյանն** է:

⁸¹³ **Ռ. Հ. Բաղրամյան**, Հայերեն բարբառներ, 1972, էջ 2, 172:

դուրս քաշեն: Հանում են, բայց արդեն առանց գլխի է լինում: Իրար ասում են. «Տղերք, օր տերդեր մըզի խէտ յէկավ, գըլօխնի վրէն էր, թէ՛ չէ»⁸¹⁴ («Տղերք, որ տերտերը մեզ հետ եկավ, գլուխը վրան էր, թե՛ չէ»): Գնում են «տիրօխնուն»՝ երեցկնոջն են հարցնում, նա էլ պատասխանում է. «Գըլօխ-մըլօխ չըմ գինա, խամա արուր ուտելուց մօրուս վրէն կըղմըղմըր»⁸¹⁵ («Գլուխ-մլուխ չգիտեմ, բայց ապուր ուտելիս մորուքը վրան տմբտմբում էր»):

ՄՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Մյունիքում ևս կենցաղավարել է քննարկվող զվարճապատումի փոփոխակներից մեկը՝ «Հիմար տերտերն ու արջը», որը 1979 թ. հրատարակվել է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի VII հատորում⁸¹⁶ և 2020 թ. նույն ինստիտուտի գիտաշխատողների խմբի (գիտ. դեկավար՝ բանասիրական գիտ. դոկտոր Թամար Հայրապետյան) կազմած «Մյունիքի բանահյուսությունը» ժողովածուում⁸¹⁷ (№ 30): Այն 1939 թ.՝ 24 տարեկանում, գրի է առել ապագա նշանավոր գրող Մերո Խանզադյանը (1915, Գորիս–1998, Երևան): Ասացողը Գորիսում բնակվող 32-ամյա քամանչահար Աշոտ Դադալյանն է⁸¹⁸, որն իր երգերի շնորհիվ հետագայում լայն ճանաչման արժանացած հանրահայտ Գուսան Աշոտն է (1907, Գորիս–1989, Երևան): Նրանից գրառած մեկ այլ երգիծական մանրապատումի առթիվ Մերո Խանզադյանը գրել է. «Սա մի հայտնի առակատող, զվարճարան մարդ է, քիչ վտիտ, բայց բարի հոգով, գիտի անհամար հեքիաթներ, առակներ, զվարճախոսություններ և այլն: Պատմելիս վարակում է լսողին և տանում ծիծաղի ծովը»⁸¹⁹:

Ըստ այդ պատումի՝ արջը գյուղի մոտակա ճգնավորի քարայրն է մտնում: Գյուղացիները կարծելով, թե ցանկանում է ճգնավոր դառնալ, քահանային բերում են, ժայռից պարանով գլխիվայր իջեցնում անձավի մոտ, որ օրհնի, արջն էլ պոկում է տեր հոր գլուխը: Գյուղացիները նրան պարանով վերև են քաշում,

⁸¹⁴ Ռ. Հ. Բաղրամյան, Հայերեն բարբառներ, 1972, էջ 172:

⁸¹⁵ Ռ. Հ. Բաղրամյան, Հայերեն բարբառներ, 1972, էջ 172:

⁸¹⁶ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Մյունիք, հ. VII, հատորը պատրաստել և ծանոթագրել են Ա. Մ. Նազիկյանը և Մ. Ն. Առաքելյանը, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979 (–768 էջ), էջ 552, 553:

⁸¹⁷ Մյունիքի բանահյուսությունը, կազմ.՝ Թ. Լ. Հայրապետյան, Գ. Է. Մելիքյան, Ս. Շ. Առաքելյան, Ա. Ս. Կիրակոսյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀԱԻ հրատ., 2020 (–384 էջ, այդ թվում՝ 14 էջ լուսանկարների ներդիր), էջ 79:

⁸¹⁸ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Մյունիք, հ. VII, էջ 712:

⁸¹⁹ Մյունիքի բանահյուսությունը, էջ 314:

տեսնում՝ գլուխը չկա: Գյուղ են վերադառնում ճշտելու՝ տեր հայրը գլուխ ունե՞ր, թե՛ չունե՞ր: Երեցկինն էլ պատասխանում է. «Այդքանը միտս չի գալիս, միայն այն եմ հիշում, որ առավոտ տեր հայրը աղոթք անելիս մի րուքը տմբտմբում էր»⁸²⁰:

ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ԳՐԱՌՎԱԾ ԱՐԱԲԿԻՐՑԻՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Արաբկիրցիների շրջանում պատմվող փոփոխակը հրատարակել է **Սարգիս Բախտիկյանը**, որը Ցեղասպանության հետևանքով Բեյրութում հանգրվանած արաբկիրցիներից հավաքել է Արաբկիր քաղաքի մոտակա **Շեփիկ** գյուղի բնակիչների մասին 19 գվարճալի մանրավեպեր, որոնք 1953 թ. ամփոփել է «**Շեփկայ խելացին**»⁸²¹ ժողովածուում:

Թե ի՞նչ է **Սարգիս Բախտիկյանը**, գրքում չի նշված: Մենք պարզեցինք, որ նա ևս արաբկիրցի է, ծնվել է 1910⁸²² կամ 1911⁸²³ թթ. Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Արաբկիրի գավառակի Ամպրկա⁸²⁴ գյուղում: Ցեղասպանության ժամանակ գրկվել է ծնողներից, ինքն էլ հրաշքով փրկվել 80-ամյա մեծ մոր շնորհիվ: 23–24 տարեկանում Բեյրութում հրատարակած իր «**Արաբկիր եւ շրջակայ գիւղերը**» գիրքը ձոնել է մեծ մորը. «Բայց դո՛ւն, քաջակորով Է՛ննես, դո՛ւն զիս քղանցքիդ տակ առիր, չարժեցար, հակառակ թիկունքիդ ստացած հարուածներուն ու զիս ազատեցիր այն սուիններէն, որոնց վրա կը ճոճէին անմեղ մանուկներ»⁸²⁵:

Բայց, ցավոք, շուտով մահանում է նաև մեծ մայրը: 1919 թ. **Ս. Բախտիկյանը** ընդունվում է Արաբկիրի որբանոց, որը 1922-ին տեղափոխվում է Լիբանան՝ Անթիլիաս⁸²⁶:

⁸²⁰ Սյունիքի բանահյուսությունը, էջ 79:

⁸²¹ Սարգիս Բախտիկեան (Շոփեցի), Շեփկայ խելացին (Հայկական զուարճախօսութիւն), Պէլրութ, տպարան Օլիմպիք, 1953 (–84 էջ):

⁸²² Պատմութիւն հայոց Արաբկիրի, կազմեց եւ երկասիրեց Անդրանիկ Փոլատեան, Հրատարակութիւն Ամերիկայի Արաբկիրի միութեան, Նիւ Եորք, 1969 (–1020 էջ), էջ 751:

⁸²³ Վարդան Եպիսկ. Տէմիրճեան, Հանգիստ Տ. Ներսէս Արք. Բախտիկեանի (1911–1989), «Հասկ», ամսագիր, Անթիլիաս, 1989, յունիս-յուլիս-օգոստոս, էջ 359, 360:

⁸²⁴ Պատմութիւն հայոց Արաբկիրի, էջ 751:

⁸²⁵ Սարգիս Բախտիկեան, Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, Պէլրութ, տպարան Վահագն, 1934 (–160 էջ), էջ 7:

⁸²⁶ Վարդան Եպիսկ. Տէմիրճեան, Հանգիստ Տ. Ներսէս Արք. Բախտիկեանի (1911–1989), «Հասկ», ամսագիր, Անթիլիաս, 1989, յունիս-յուլիս-օգոստոս, էջ 360:

Տարբեր հաստատություններում կրթություն ստանալով՝ նա Բեյրութում աշխատում է ուսուցիչ և վարժարանի տնօրեն, 1957թ. ձեռնադրվում կուսակրոն քահանա, 1959-ին ստանում վարդապետության աստիճան⁸²⁷:

Որբի կյանքի բոլոր դառնությունները ճաշակած Սարգիս Բախտիկյանն արդեն որպես **Ներսես ծ. վրդ. Բախտիկյան**՝ 1970–1974 թթ. եղել է Բեյրութից ոչ հեռու գտնվող Զիրբեյլ ավանում գտնվող «Թռչնոց բույն» նշանավոր որբանոցի տնօրենը⁸²⁸: Այն հիմնել և մինչև կյանքի վերջը ղեկավարել էր դանիացի միսիոներուհի, բժիշկ **Մարիա Յակոբսենը** (*Maria Jacobsen*, 1882–1960): **Ներսես ծ. վրդ. Բախտիկյանի** առաջին գործերից մեկը լինում է բազմաթիվ որբերի համար մայր դարձած **Մարիա Յակոբսենի** օրագրի որոնումները և 1979թ. այն բնագրով՝ դանիերեն, և հայերեն թարգմանությամբ տպագրելը⁸²⁹:

Այս եզակի կոթողային հրատարակությունից հետո նա հեղինակել է շուրջ տասը գիրք, բայց մինչ այդ՝ 1953թ., լույս է ընծայել «**Շեփկայ խելացին**» ժողովածուն, որտեղ էլ ընդգրկված է «**Մօրուքը տեսայ ըմնա...**»⁸³⁰ (N° 31) ծիծաղաշարժ մանրավեպը, որը սույն ուսումնասիրության մեջ քննարկվող սյուժեի տարբերակներից է: Հետաքրքիր է, որ զվարճապատումում հիշատակվում են Արաբկիրի հայոց հոգևոր հովիվ **Եզնիկ վրդ. Ապահունին**, Շեփիկ գյուղն ու նրա քահանան, Փիլպոս Առաքյալի ուխտատեղին, Մոսեի ջուրը և Անկոյի կամուրջը: Ցավոք, Սարգիս Բախտիկյանն ասացողների մասին տեղեկություններ չի նշել և նյութը վերապատմել է:

Գրքի առաջաբանում նա Շեփիկ գյուղի մասին գրել է. «Շեփիկ՝ զուտ հայաբնակ գիւղ մըն է, որ կը գտնուի Եփրատի արեւմտեան ափերուն երկարող՝ Անդի Տարոսի փեշերուն վրայ ձգուած՝ Արաբկիրէն Ակըն տանող ճամբուն վրայ:

Այս գիւղին բնակչութիւնը իրայատուկ մտածելակերպ մը ունի: Բացառիկ երեսոյթ մը, որ չի տեսնուիր նոյն շրջանի միւս հայ գիւղացիներուն մօտ եւ ասորը

⁸²⁷ **Վարդան Եպիսկ. Տէմիրճեան**, Հանգիստ Տ. Ներսէս Արք. Բախտիկեանի (1911– 1989), էջ 361: **Պատմութիւն հայոց Արաբկիրի**, կազմեց եւ երկասիրեց **Անդրանիկ Փոլատեան** (գրքում Ս. Բախտիկյանի կուսակրոն քահանա ձեռնադրվելու թվականը սխալմամբ նշված է 1959թ., էջ 751):

⁸²⁸ **Վարդան Եպիսկ. Տէմիրճեան**, Հանգիստ Տ. Ներսէս Արք. Բախտիկեանի (1911– 1989), էջ 361:

⁸²⁹ **Մարիա Ճէյքոպսըն (Եագոպսըն)**, Օրագրութիւն 1907–1919, Խարբերդ, Դանիերէն ձեռագիր բնագրէն թարգմանեցին **Ներսէս Եպս. Բախտիկեան, Միհրան Միմոնեան, Անթիլիաս, Լիբանան**, տպարան կաթողիկոսութեան հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1979 (–1386 էջ, այդ թվում՝ լուսանկարներով ներդիրներ): **Վարդան Եպիսկ. Տէմիրճեանի** «Հանգիստ Տ. Ներսէս Արք. Բախտիկեանի (1911–1989)» «**Հասկում**» (1989, N° 6–8) տպագրված հոդվածում (էջ 363) գրքի ծավալը նշված է 968 էջ, այնինչ միայն **Մ. Յակոբսենի** դանիերեն օրագրի պատճենահանված էջերի թիվն է այդքան:

⁸³⁰ **Սարգիս Բախտիկեան (Շոփեցի)**, Շեփկայ խելացին (Հայկական զուարճախօսութիւն), Պէրյուք, տպարան Օլիմպիք, 1953 (–84 էջ), էջ 70–72:

համար այ, երբ այդ շրջանին մէջ ապրողներէն մէկը տարօրինակ գաղափար մը յայտնէ կամ ծրագիր մը պարզէ, ծիծաղով կը դիմատրեն զինք. – ՇԷՓԿԱՅ ԽԵ-ԼԱՅԻ անուանելով:

Մենք, այս ինքնատիպ գիտացիներուն մասին, բաւական թուով մանրավէ-պեր հաւաքեր ենք, որոնք, անկասկած, ժամանակի ընթացքին հիսուեր, որդոց որդի պատմուելով մեզի հասեր են:

...Կարող է պատահիլ որ այս մանրավէպերէն մէկը կամ միւրը, հայկական բնագաւառի այս կամ այն գիւղին ու ւանին այ վերագրուի: Ասիկա ցոյց պիտի տար մտածումի մը պատկերը, որ զուրկ պիտի չըլլար ազգագրական արժէքէ»⁸³¹:

Շեփիկը գտնվում էր **Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Արաբ-կիրի գավառակում**, Արաբկիր քաղաքից շուրջ 8 կմ հեռու⁸³²: **Գարեգին վրդ. Սրվանձոյանցը** 1878թ. ճանապարհորդելու ընթացքում եղել է նաև Շեփիկում. «Ել մը կ'ելնենք, որո գլխեն կը տեսնենք Շեփիկ գեղ, գեղեցիկ է յուր դիրքն ու շրջակայքը. հնձողներու միջեն կ'անցնինք, դեռ քառորդ մը կա գեղը հասնելու, և ահա վարժապետն ութն աշակերտոք՝ ծառոց տակեն մեր ճամբան կը կտրե. փոքրիկ մանկունք, գլխիբաց, երկայն ու խառնակ մագերով, բոքիկ ոտներով, մեկ շապիքով ու վարտիքով, բեկբեկ ձայնիվ սկսան երգել և կրկնել.

«Անգութ երկինք այ չըհիշեր, մոռցեր է Հայաստանը,

Անսիրտ Հայեր այ չեն սիրեր անուշիկ Հայաստանը...»:

Սիրտս ծովացավ անոնց ձայնեն և ասացվածքեն. հուզյալ կը ծփայր արյունս և արցունքս...:

Շքեղ տուն մը կա առջևնիս, հոն հանգուցին զմեզ. հացագործ Միմն աղա-յի տունն էր, որ 'ի գուր յուր բոլոր հարստությունը թափած էր այս շենքին համար, ինքն մեռած էր, միակ դուստրը կարգեր էր Մելքոն անուն բարեբարո երիտա-սարդի մը հետ, զմեզ խիստ շնորհալի կերպով ընդունեց, բողոքական էր այս խեղճը, և բավական կային սույն գեղի մեջ բողոքական անունով Հայեր»⁸³³:

Շեփիկը Արաբկիրի գավառակի գյուղերից առաջինն է բողոքականություն ընդունել, և առաջիններից մեկը եղել է գյուղի երեցը՝ **Տեր Մարտիրոս քահա-նան**: Այդ մասին իր հուշերում **Ս. Միքայելյանը** գրում է. «Իրերու այս կացութի-

⁸³¹ **Սարգիս Բախտիկեան (Ծովեցի)**, Շեփիկայ խելացին (Հայկական զուարճախօսութիւն), Պէրյուօ, տպարան Օլիմպիք, 1953 (–84 էջ), էջ 3:

⁸³² «Շեփիկ»//**Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հա-րակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1998 (–812 էջ), էջ 115: Շեփիկի մասին ավելի մանրամասն տես **Պատմութիւն հայոց Արաբկիրի**, էջ 101–110:

⁸³³ **Գարեգին Սրվանձոյանց**, Երկեր, 2 հատորով, հ. 2, պատրաստեց և ծանոթագրեց **Վ. Բոդոյանը**, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ԳԱ հրատ., 1982 (–564 էջ), էջ 291, 292:

նը անախորժութիւն մը ստեղծած էր ազգային եկեղեցիին համար, եւ շէփիկցիները իրենց յատուկ վրէժխնդրական ոգիով երբեք չսիրեցին դասալիք քահանան եւ կարծես իբր փոխվրէժ՝ երկար տարիներ գիւղը առանց քահանայի թողուցին, կրօնական եւ հոգեւոր մատակարարութիւնը յանձնելով մօտակայ այցելու քահանաներու...»⁸³⁴: Ահա, առանց քահանա մնացած այդ գյուղի վրա էլ հարմարեցվել է հանրահայտ սյուժեն:

Գարեգին վրդ. Սրվանձտյանց ինն օր մնալով Արաբկիրում՝ մանրամասն գրում է քաղաքում նոր վարժարան կառուցելու, ազգային աշխույժ կյանքի մասին, նշում, որ արաբկիրցիները «ուրախությամբ կ'սպասեին իրենց նորընտիր Առաջնորդ Եզնիկ վարդապետին, ալ ավելի ուրախ պետք էր լիներ Եզնիկ վարդապետ, որ այսպիսի պատրաստյալ և հասունացյալ պատվական հունձք մը կը հանձնվեր իրեն»⁸³⁵:

Եզնիկ վրդ. Ապահունու ավագանի անունը «Նիկանովր Իւլիւկճեան»⁸³⁶ (Յուսլուկճյան, Ուսլուկճյան) էր: Շատ պատանիների պես նա ևս իր բնատուր ձիրքերը փորձել է բանաստեղծելու արվեստում: **Մատթոս Առաջին Կոստանդնուպոլսեցի** նորընտիր կաթողիկոսի 1859թ. Թիֆլիս այցելության առթիվ, վերամբարձ ոճով նրա գրած 58 տողանոց չափածո «**Ուղերձ**»-ը հեղինակի անվան-հայրանվան-ազգանվան և այլ մանրամասների նշումով հրատարակվել է Թիֆլիսի «**Մեղու Հայաստանի**» շաբաթաթերթում. «Յօրինեաց Նիկանովր Բարխուդատեան Իւլիւկճեանց՝ որդեգիր Նորին Վեհափառութեան՝ յաշակերտաց Ուսումնարանի մայր Եկեղեցոյ, որ ՚ի Գումգափու Կ. Պօլսոյ, 27 յունիսի, 1859, ՚ի Թիֆլիզ»⁸³⁷:

Մինչև եկեղեցու բեմ բարձրանալը նա ուժերը փորձել է նաև ներկայացումներում, քանիցս խաղացել թատերական բեմերում, այդ իսկ պատճառով նրա անուն-ազգանունը հայտնվել է ֆրանսահայ գրող, երգիծագիր, դերասան և թատերագետ **Նշան Պեշկեթաշլյանի** (1896, Կ. Պոլիս – 1972, Մարսել)⁸³⁸ 1969թ. Բեյրութում՝ Անթիլիասում հրատարակած «**Թատերական դէմքեր**» աշխատասիրության մեջ՝ բայց «Իւլիւկճեան»⁸³⁹ տարբերակով: Ն. Պեշկեթաշլյանը գրել է.

⁸³⁴ **Պատմութիւն հայոց Արաբկիրի**, կազմեց եւ երկասիրեց **Անդրանիկ Փոլատեան**, Հրատարակութիւն Ամերիկայի Արաբկիրի միութեան, Նիւ Եորք, 1969 (–1020 էջ), էջ 106:

⁸³⁵ **Գարեգին Սրվանձտյանց**, Երկեր, 2 հատորով, հ. 2, էջ 294:

⁸³⁶ **Պատմութիւն հայոց Արաբկիրի**, էջ 453:

⁸³⁷ **Նիկանովր Իւլիւկճեանց**, Ուղերձ, «**Մեղու Հայաստանի**», Թիֆլիզ, 1859, յուլիսի 18, համար 29, էջ 228, 229:

⁸³⁸ **Բախտիար Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան, էջ 319, 327, 703:

⁸³⁹ **Նշան Պեշկեթաշլեան**, Թատերական դէմքեր, Հրատարակութիւն Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակի, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1969 (–1142 էջ), էջ 111:

«1863-ի շրջանին բեմ ելած է քանի մը անգամ: Ապա, կը դառնայ կրօնաւոր՝ կոչուելով Եզնիկ եպիսկոպոս Ապահունի»⁸⁴⁰:

Մաղաքիա արք. Օրմանյանը (1841, Կ. Պոլիս – 1918, Կ. Պոլիս) Կ. Պոլսի հայոց պատրիարք եղած տարիներին (1896 – 1908) մեծապես աջակցել է Եզնիկ վրդ. Ապահունուն⁸⁴¹: Նա, իր «**Ազգապատում**»-ում խոսելով եպիսկոպոսներից մեկի մասին, ժպիտով է անդրադառնում այն հոգևորականներին, ովքեր նոր, ավելի բարեհունչ ազգանուններ են ընտրել. «Չափաւոր կարողութեան, բայց համեստ բնատրութեան տէր անձ մը եղաւ Ալանեան, իր ժամանակակից եւ ընկերակից եկեղեցականաց մէջ արժանատրագոյնը, որ անոնց թեթևութեան ալ չհետեւեցաւ, երբոր Այազմալեանը՝ Դիմաքսեան, Իսլիքճեանը՝ Ապահունի, Մէխանէճեանը՝ Արշարունի, Իսքէնտէրեանը՝ Ռուբինեան անուններով զարդարվեցան»⁸⁴²:

Նշան Պեշիկթաշլյանի «**Թատերական դէմքեր**»-ում Եզնիկ վրդ. Ապահունու ծննդյան թվականը նշված է 1840-ը, իսկ 1938 թ. Բուխարեստում տպագրված «**Հայ հանրագիտակ**»-ում⁸⁴³, և 1969 թ. Նյու Յորքում լույս տեսած «**Պատմութիւն հայոց Արաբկիրի**»⁸⁴⁴ գրքում գրված է 1843 թվականը:

Եզնիկ վրդ. Ապահունին 1878 թ.՝ 35 տարեկանում, ընտրվում է **Արաբկիրի թեմի առաջնորդ**, ուր մեծահանդես թափորով հասնում է սեպտեմբերի 10-ին: Հավանաբար հանդիսություններ կազմակերպելիս նրան օգնել է թատերական փորձը: Նրա փառաշուք դիմավորման մասին Արաբկիրից ընդարձակ թղթակցություն է տպագրվել Կ. Պոլսի «**Հայրենիք**» թերթում, որից քաղվածաբար ներկայացնում ենք որոշ հատվածներ. «Իհաս մը երեւելիք ազգայնոց եւ որոց հետ նաեւ կառավարութեան կողմէն դրկուած հեծելագօրքն կանխեցիք ի Չիկնիր ուր Գայմագամ պէյը ինք բանաւոր արգելքով մը չկարենալով ընտիր երիվարը զարդարած դրկած էր ի պատիւ, իսկ երկրորդ դաս մը ջուրին ակը յատուկ վրանի մը տակ կը սպասէին բազմախոտն ժողովրդեան հետ որոց թիւը երթալով կը ստուարանար եւ որ քաղաքէն մինչ երկու ժամու չափ զճանապարհաւ պարանեալ կը սպասէին...: ...Նորին Գերապատուութիւնը դպրոցին երգեցիկ սանուց առաջնորդութեամբ եկեղեցին այցելեց. աղօթեց եւ վերստին շարունակեց ճամբան այս անգամ Ազգին կողմանէ յատկապէս դրկուած ահիպարանոց նժոյգի մը վրայ բազմած, տանը պատշգամները եւ փողոցները հայ եւ տարազգի բազմու-

⁸⁴⁰ Նշան Պեշիկթաշլեան, Թատերական դէմքեր, 1969, էջ 1111:

⁸⁴¹ Պատմութիւն հայոց Արաբկիրի, էջ 454:

⁸⁴² Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմուած, Կ. Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001 (–5970 սյուն կամ 2986 էջ), սյուն 5789:

⁸⁴³ «Ապահունի Եզնիկ» // Հայ հանրագիտակ, խմբագրեց Հ. Մկրտիչ վարդ. Պոտուրեան Պարտիզակցի, Պոքրէշ, 1938 (–600 էջ), էջ 202:

⁸⁴⁴ Պատմութիւն հայոց Արաբկիրի, էջ 453:

թեամբ խոնեալ փոխանակ փունջերու եւ ճիթենեաց ու արմաւենիի ոստերու սիրոյ եւ համակրանաց սրտառուջ ճայներով կ'ողջունէին զՆորին Սրբազնութիւն...»⁸⁴⁵:

Յոթ ամիս անց սիրված առաջնորդը կաթողիկոսի կողմից եպիսկոպոս ձեռնադրվելու և օծվելու համար ուղևորվում է Ս. Էջմիածին: Նրան ճանապարհ դնելու մարդաշատ արարողությանը ևս մանրամասն անդրադարձել է Կ. Պոլսի «**Հայրենիք**» թերթը, որից ներկայացնում ենք մի փոքր հատված. «Ապրիլ 3 մեկնեցաք Արաբկերէն, ուղեկցութեամբ **առաւել քան երկու հազար ազգայնոց եւ մահմետական բարձրաստիճան պաշտօնակալաց**, որք մինչեւ մէկ ժամ ի Շէփիկ գիւղն եկան: Նորին գերապատուութեան դադար առնելով անդ՝ օրհնեց գծողովորդն, եւ յետ օրհնութեանն ժողովորդք միաձայն աղաղակեցին արտասուալից աչօք, «Սրբազան հայր, շնու դարձիր»: Այս աղաղակը այնքան սրտաշարժ էր, որ աչերէս արցունք քամեց, եւ որ Իւր՝ գծողովորդս լաւագոյն կերպիւ եւ հայրաբար հովուած ըլլալուն զգալի ապացոյցն էր: **Շէփիկէն մեկնեցանք 400ի չափ երեւելի ազգայնոց հետ, որք ձիաւոր էին...**»⁸⁴⁶:

Արաբկիրից Ակն ճանապարհին գտնվող **Շէփիկ** գյուղով անցուդարձ անող այս մեծահանդես թափորներով մարդաշատ արարողություններն իրենց արտացոլումն են գտել նաև տեղացիների բանահյուսության մեջ, իբր շէփիկցիները, ցանկանալով դիմավորել սիրելի վարդապետին, ընդառաջ են գնում և մթնշաղին տեսնում մի մեծ, սև զանգված, որն արջ է լինում: Արջը մտնում է քարայրը: Կարծում են՝ թեմի առաջնորդ **Ապահունին** է, և քանի որ գյուղի քահանան չի եկել նրան դիմավորելու, նեղացել է: Գրաստի վրա դրած բերում են գյուղի ծերուկ, «խլխլուն» քահանային, որ վարդապետի «խաթըրը առնի»: Տեր հայրը երկար ժամանակ մնում է քարայրում: Մտածում են՝ զրուցում է Ապահունու հետ: Գյուղացիներից երկու հոգի երկյուղածությամբ մտնում են քարայր և տեսնում նրա գետնատարած մարմինը: Դուրս են քաշում, բայց գլուխը չի լինում: Հարցնում են իրենց միջի խելացիին, թե տեր հայրը գլուխ ունե՞ր, նա էլ ասում է. «**Շիտակը, ես մօրուքը տեսայ, ըմնա գլուխին ֆարդին չգացի...**» («Ճիշտն ասած, մորուքը տեսայ, բայց գլուխը չնկատեցի»):

⁸⁴⁵ Ն. Գոլանճեան, Գերապատիւ Ապահունի յԱրաբկեր, «Հայրենիք», լրագիր, Կ. Պոլիս, 1878, թիւ 475, տէն Պատմութիւն հայոց Արաբկիրի, էջ 456-457: Ընդգծումները մերն են-Ս. Վ.:

⁸⁴⁶ «Հայրենիք», 1879, թիւ 520, տէն Պատմութիւն հայոց Արաբկիրի, էջ 459: Ընդգծումները մերն են-Ս. Վ.:

ՓԵՐԻԱՅԻ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ներսես ծ. վրդ. Բախտիկյանի 1967 թ. Բեյրութում հրատարակած «**Փերիոյ խելացին**» բանահյուսական ժողովածուում նույնպես կա քահանայի գլխի մասին մանրապատում: Գրքի առաջաբանում նա գրում է. «Այս գրոյցները որոնք ամբողջական Հայաստանի զանազան մասերուն մէջ, իրենց տարբերակներով, բերնէ բերան, ժամանակի ընթացքին, ապրեր ու հասեր են մեզ, ցոյց կու տան մեր ժողովուրդին ճիւղաորման արմատները եւ նաեւ մեր ժողովուրդին պահպանողական զօրաւոր գիծը, այլապէս ինչպէս պիտի կարողնայինք տրամաբանել թէ Պարսկաստանի այդ հեռաւոր անկիւնը ինչպէս երեք հարիւր յիսուն տարի կղզիացած ապրած Փերիոյ գաւառի գիւղական կամ ժողովրդական գրոյցները յար եւ նման են, անոնցմէ շատերը, Հայաստանի զանազան մասերուն մէջ պատմուած գրոյցներուն որոնցմէ փունջ մը մենք 1953ին հրատարակած ենք ՇԷՓԿԱՅ ԽԵԼԱՑԻՆ խորագրով: Շէփիկ Արաբկիրի հիւսիսը, քաղաքէն մէկ կամ քիչ մը ատլի հեռաւորութեամբ գուտ հայաբնակ գիւղ մըն էր:

Մենք, մեր մշակոյթի տեսակէտով, որոշ արժէք գտնելով այդ գրոյցներուն մէջ, գրի առած ենք անոնցմէ մաս մը եւ կը հրամցնենք հանրութեան»⁸⁴⁷:

Այն, որ Փերիայի գավառի **Բոլորան**⁸⁴⁸ գյուղի բնակիչների մասին կատակները տարածված էին դեռևս XIX դարում, հայտնի է **Մեսրոպ Թաղիաղյանի** 1819 թ. (կամ 1821 թ.) Դարաշամբ՝ Շամբ գյուղ այցելության գրառումից⁸⁴⁹, նաև՝ **Գալուստ Շերմազանյանի** 1878 թ. հրատարակած «**Անեկդոտներ**» գրքի առաջաբանից⁸⁵⁰: Դրանց մենք անդրադարձել ենք այս ուսումնասիրության «**Նախիջևանյան տարբերակները**» գլխում, այժմ ներկայացնենք կատակասերների թիրախ դարձած Բոլորանը նաև այլ խորապատկերով:

Փերիայի գավառի և **Բոլորան** գյուղի մասին շատ կարևոր սկզբնաղբյուր է **Արամ Երեմյանի** 1919 թ. Պարսկաստանում՝ Նոր Զուղայում, հրատարակած «**Սպահանի Փերիա գաւառը**»⁸⁵¹ գիրքը: Համաձայն մեր որդեգրած սկզբունքի՝

⁸⁴⁷ **Ներսես ծ. վրդ. Բախտիկյան**, Փերիոյ խելացին (զուարճալի մանրադէպեր), Պէյրութ, տպարան Սեան, 1967 (-60 էջ), էջ 11:

⁸⁴⁸ «Բոլորան» // **Հայր Սուրբաս Էփրիկեան**, Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, երկրորդ տպագրություն, Վենետիկ, Ս. Ղազար, 1903-05 (-844 էջ), էջ 428: «Բոլորան» // **Հայ հանրագիտակ**, Պոքրէշ, 1938, էջ 408: **Լ. Գ. Մինասեան**, Պատմութիւն Փերիայի հայերի (1606-1956), Ապթիլիաս, 1971 (-486 էջ), էջ 268: **Հ. Գրիգորյան**, «Բոլորան» // ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 512:

⁸⁴⁹ **Ճանապարհորդութիւն Մեսրոպբայ Գ. Թաղիղեանց**, էջ 246, **Մեսրոպ Թաղիաղյան**, Ուղեգրություններ, հողվածներ, էջ 140:

⁸⁵⁰ Տե՛ս Անեկդոտներ, էջ 5, 6:

⁸⁵¹ **Արամ Երեմեան**, Սպահանի Փերիա գաւառը (Ազգագրութիւն), Նոր-Զուղա, տպարան Ս. Ամենափրկեան վանքի, 1919 (-138 էջ):

փորձենք պարզել, թե էրբ և որտեղ է ծնվել հեղինակը, քանի տարեկանում է գրել գիրքը, էրբ և որտեղ է մահացել, կենսագրական այլ տվյալներ: Ըստ «**Հայկական սովետական հանրագիտարանի**» և «**Հայկական համառոտ հանրագիտարանի**»՝ մի շարք գրքերի հեղինակ, գրող, գրականագետ, արվեստաբան **Արամ Երեմյանը** ծնվել է 1898 թ. Մարզվանում (Արևմտյան Հայաստան) և 1972 թ. մահացել է Բենդեր-Փեհլիխում (Իրան)⁸⁵²: «**Հայ գրատպություն և գրքարվեստ**» հանրագիտարանում ծննդյան վայրը նշված է «ք. Մարզվան (Մեքսատիայի նահանգ)», մահվանը՝ «Բենդեր-Փեհլիխում (Իրան)»⁸⁵³: Արամ Երեմյանի կենդանության օրոք՝ 1960 թ. լույս տեսած «**Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ (կենսաբիբլիոգրաֆիական ծանոթագրություններով)**» գրքում, որտեղ ներկայացված են **Ա. Երեմյանի** կենսագրությունը և մի շարք հոդվածների մատենագիտությունը, նրա ծննդավայրը նշված է «Մարզվան (Իրան)»⁸⁵⁴: Ա. Երեմյանի ծննդյան և մահվան վայրերի մասին **Բախտիար Հովակիմյանի** «Հայոց ծածկանունների բառարանում» գրված է՝ «Մարզվան-Իսպահան (Նոր Ջուղա)»⁸⁵⁵, նույնը նաև նրա «Նոր Ջուղայի թատրոնը (1887–2017)» գրքում⁸⁵⁶:

Թվում էր՝ այդ անհամապատասխանությունները ճշտված կլինեն Արամ Երեմյանի «**Սպահանի Փերիա գաւառը**» գրքի 2011 թ. վերահրատարակության⁸⁵⁷ մեջ, բայց, ցավոք, այնտեղ հեղինակի կենսագրությունը չի տպագրվել: Գունավոր լուսանկարներով հարստացված նոր, որակյալ հրատարակության ոչ ընդարձակ առաջաբանում Սպահանի թեմի առաջնորդ, գերաշնորհ **Տ. Բաբկենեկյա**. **Չարյանն** իր «Օրհնութեան խօսք»-ում⁸⁵⁸ նույնպես չի անդրադարձել հեղինակի կենսագրությանը:

Եվ այսպես, Արամ Երեմյանը Սպահանի Փերիայի գավառում իր ուսումնասիրությունները կատարել է 1918 թ.⁸⁵⁹ **20 տարեկանում**: Մինչ այդ նա սովորել է

⁸⁵² **Ս. Շտիկյան**, «Երեմյան Արամ Գարեգինի» // ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 546: «Երեմյան Արամ Գարեգինի» // ՀՀՀ, հ. 2, Երևան, 1995, էջ 113:

⁸⁵³ «Երեմյան Արամ Գարեգինի» // **Հայ գրատպություն և գրքարվեստ, հանրագիտարան**, Երևան, Հայկական հանրագիտարան, հրատ., 2015 (–1120 էջ), էջ 360:

⁸⁵⁴ **Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ (կենսաբիբլիոգրաֆիական ծանոթագրություններով)**, կազմեց **Հովհ. Պետրոսյան**, Երևան, Հայկական ՍՍՌ Պետգրապատ, 1960 (–540 էջ), էջ 79:

⁸⁵⁵ **Բախտիար Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 600:

⁸⁵⁶ **Բախտիար Հովակիմյան**, Նոր Ջուղայի թատրոնը (1887–2017), Սպահանի Հայոց թեմի թեմական խորհուրդ, Երևան, «Զանգակ» հրատ., 2018 (–224 էջ + 32 էջ ներդիր), էջ 44:

⁸⁵⁷ **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (Ազգագրութիւն), (Բ հրատարակութիւն), Հրատարակութիւն՝ Սպահանի հայոց թեմի կրօնական խորհրդի, Նոր Ջուղա, 2011 (–VII+ 124 էջ, այդ թվում գունավոր լուսանկարներով 16 էջ ներդիր):

⁸⁵⁸ **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (Ազգագրութիւն), (Բ հրատարակութիւն), 2011, էջ VII, VIII:

⁸⁵⁹ **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (1919), էջ 3, 85, 87: **Արամ Երեմյան**, Սպա-

Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում⁸⁶⁰: Գրքի սկզբի «Մասունա-
խօսականը» գրել է **Հրայցա Աճառյանը**: Այն թվագրված է «Նոր-Ջուղա, 1919
յուլիս 3»⁸⁶¹:

Հ. Աճառյանի «Կյանքիս հուշերից» կենսապատումից տեղեկանում ենք,
որ նա 1919 թ. ապրել է Թեհրանում, տեղի հայկական դպրոցում դասավանդել է
ֆրանսերեն, հայերեն և հաշվապահություն⁸⁶²: Բարբառն ուսումնասիրելու նպա-
տակով 28 օր՝ մինչև հուլիսի 15-ը, եղել է Նոր Ջուղայի հայերի հյուրը⁸⁶³: Ուրեմն
բազմազբաղ գիտնականը ժամանակ է գտել և կարդացել է **Արամ Երեմյանի**
ձեռագիրը և հուլիսի 3-ին այն գրախոսել է՝ բարձր գնահատելով երիտասարդ
գործընկերոջ կատարած աշխատանքը. «...մի անգնահատելի ծառայություն է
մատուցանում հայագիտության մեր երիտասարդ մտատրականներից պր.
Արամ Երեմյանը, որ իր վրայ է վերցրել Նոր-Ջուղայի շրջանի հայ ժողովրդի
ազգագրությունը ուսումնասիրելու դժվարին գործը: Նա արդեն հրատարակել էր
մի հատոր՝ **Նոր-Ջուղա** վերնագրով (տպ. Նոր-Ջուղա 1919)...: Այժմ հեղինակը
հրատարակում է իր երկրորդ գործը...: Այս աշխատության մեջ մանրամասն
նկարագրուած է Փերիայի հայաբնակ 26 գիւղերի և Քեարւանդի 2 գիւղերի
տեղագրութիւնը մի առ մի, բնակիչների շնչահամարը, նրանց տնտեսական
դրութիւնը, այն ծանր **հարստահարեալ** վիճակը՝ որին ենթարկուած են գրեթէ
անխտիր յիշեալ բոլոր գիւղերի հայերը՝ շրջաբնակ պարսիկ խաների և
աւազակաբարոյ լոռերի ձեռքին, նրանց նիստ ու կացը, սովորութիւնները, առ-
տնին տնտեսութիւնը, ասանդութիւնները, նախապաշարումները, տօների և հան-
դէսների նկարագրութիւնը, մէկ խօսքով նրանց ազգագրութեան ամբողջ տե-
ղագրական և բնութագրական մասը»⁸⁶⁴:

Բոլորանի մասին Արամ Երեմյանը գրում է. «Սա զուտ հայաբնակ մի բա-
ւական մեծ գիւղ է...: Բնակիչները հաւանական են համարում գաղթած Հարթ

հանի Փերիա գաւառը (2011), էջ 2, 33, 64, 70:

⁸⁶⁰ **Ռ. Մ., Արամ Երեմյան** (Գրական-հասարակական 35-ամյա գործունեության առթիվ), «Էջմիածին», ամսագիր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1955, №5, մայիս, էջ 56: **Ռ. Մ.-ն Ռուբեն ավ. քահանա Մարտիրոսյանի** ծածկանունն է, տես **Մասունագիտություն «Էջմիածին» ամսագրի (1944–1973)**, կազմող՝ **Սեդա Կոծիսյան**, «Էջմիածին» ամսագրի խմբագրություն, Էջմիածին, 1973 (–294 էջ), էջ 278:

⁸⁶¹ **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (1919), էջ 2: **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (2011), էջ 1:

⁸⁶² **Հրայցա Աճառյան**, Կյանքիս հուշերից, 1967, էջ 346:

⁸⁶³ **Հրայցա Աճառյան**, Կյանքիս հուշերից, էջ 412, 413: Նոր Ջուղայում Հ. Աճառյանի հյուրընկալների և բարբառի ուսումնասիրությանն աջակցողների մասին տես՝ **Հ. Աճառյան**, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Երեւան, ապակետիպ, 1940 (–402 էջ), էջ 2–8:

⁸⁶⁴ **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (1919), էջ 1, 2: **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (2011), էջ 1:

գաւառի Բլուր գիւղից, այժմ ընդամենը 100 տուն են 820 բնակչով, որից 415-ը արու է, 405-ը էգ:

...Կրթական գործով այս գիւղը գերազանցում է միւս գիւղերից, ունի երկսեռ «Հայրիկեան» դպրոցը, շենքը նոր է և բաւական յարմար... 120 աշակերտ-աշակերտուհիներով»⁸⁶⁵, «...այս տարւայ երաշտի պատճառով ցանքսերը, խոտհարքները կիսով չափ այրել, փչացել են: Գիւղացիները ոչ ուտելու պաշար ունեն, ոչ էլ սերմացու, նրանք կանգնած են սովի ճանկերում, որին այս տարի (1918) զոհ են գնացել 100 հոգի»⁸⁶⁶:

Հրայա Աճառյանը, Փերիայի գավառի հայկական շեների, այդ թվում՝ **Բոլորանի** ծանր կացութիւնը նկատի ունենալով, իր գրախոսութիւնն ավարտում է տխուր իրականութեան արձանագրումով. «Դժբախտաբար այս ժողովուրդը շատ աղքատ է անգիր բանահիւսութեան կողմից: Հեղինակը մեծ դժվարութեամբ կարողացել է ձեռք բերել մի քանի վիճակի երգեր, հաւաքել է տեղական օրհնէքները, անէծքներն ու երգումները, և այսչափով վերջանում է բանահյութեան բաժինը:

Տառապող ու հարստահարուող ժողովուրդը ժամանակ չունի երգելու...»⁸⁶⁷:

Եվ ահա, **Արամ Երեմյանի** և **Հրայա Աճառյանի** անժայիտ նկարագրութիւնների տպագրութիւնից 48 տարի անց՝ 1967 թ., Բեյրութում լույս է տեսնում **Ներսէս Ժ. Վրդ. Բախտիկյանի**՝ Փերիայի գավառի զվարճալի մանրադէպերի ժողովածուն:

Նա առաջաբանում ավստասանք է հայտնում, որ այդ երգիծապատումները չի կարող բարբառով ներկայացնել. «Մենք... շնորհակալութեան խօսք ունինք **Բոլորան** գիւղացի, այժմ Նոր Զուղայարնակ, պատուական հայորդի Պրն. **Մեսրոպ Նիկողեանին**, որ համբերութեամբ մեզ պատմած է այդ գրոյցները: Նախապէս մտադիր էինք այդ գրոյցները իրենց բարբառով տալու, սակայն հիմա որ հեռու ենք եւ իրենցմէ մէկը չկայ որ լեզուական ուղղումներ կատարէ, կը զգուշանանք մի գուցէ չկարենանք հարազատութեամբ տալու: Մենք խորագրելով այս գրոյցները ՓԵՐԻՈՅ ԽԵԼԱՑԻՆ, կը բաւարարուինք լոկ մէջբերումները եւ կարգ մը բառերը Փերիոյ բարբառով տալով այնքան որքան այդ իսկ հնարատր է մեզ համար»⁸⁶⁸:

⁸⁶⁵ **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (1919), էջ 84, 85: **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (2011), էջ 64:

⁸⁶⁶ **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (1919), էջ 87: **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (2011), էջ 66:

⁸⁶⁷ **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (1919), էջ 2: **Արամ Երեմյան**, Սպահանի Փերիա գաւառը (2011), էջ 1:

⁸⁶⁸ **Ներսէս Ժ. Վրդ. Բախտիկեան**, Փերիոյ խելացին (զուարճալի մանրադէպեր), Պեյրութ, 1967, էջ 11:

Իսկ ղվ էր բանասաց **Մեսրոպ Նիկոլյանը**: Նրա մասին տեղեկություններ ձեռք բերելու համար դիմեցինք ծանոթ պարսկահայերի, բայց՝ ապարդյուն: Բարերախտաբար, այդ հարցում մեզ աջակցեց ծագումով բոլորանցի, Լոս Անջելեսում բնակվող, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Մանուկյան-Դեմիրճյան վարժարանի (AGBU Manoogian-Demirdjian school) մաթեմատիկայի ուսուցչուհի տիկին **Աննա Թահմասյանը**: Նա, Իրանում և ԱՄՆ-ում ապրող նախկին բոլորանցիներից հարցուփորձ անելով, ի վերջո գտավ Մեսրոպ Նիկոլյանի որդուն՝ **Վարուժ Նիկոլյանին**, որը, պարզվեց, նույնպես արտագաղթել էր Լոս Անջելես:

Ըստ նրանից քաղած տվյալների՝ **Մեսրոպ Նիկոլյանը** 1914թ. ծնվել է Բոլորան գյուղում, 5 տարեկանում տեղափոխվել հորեղբոր մոտ՝ Նոր Ջուղա (այժմ Սպահան քաղաքի թաղամաս), ավարտելով դպրոցը՝ ուսումը շարունակել է տեղի Բրիտանական քոլեջում, սովորել է հաշվապահություն, հետագայում, որպես մասնավոր կապալառու՝ համագործակցել է Իրանի ազգային նավթային ընկերության հետ և իր 7–8 նավթատար նավերով (տանկեր) նավթ է փոխադրել:

Եղել է թեմի կալվածական և կրթական խորհուրդների անդամ, և քանի որ Բոլորանի հողերը վանքապատկան էին, երկար տարիներ գյուղի տարեկան տուրքի հավաքման պատասխանատուն էր: Նա նաև Բոլորանի անցյալի, ազգագրության ու բնահյուսության հրաշալի գիտակ էր: Մահացել է Նոր Ջուղայում 1977 թվականին՝ 63 տարեկանում:

Իսկ էրբ և որտեղ են խաչաձևվել **Մեսրոպ Նիկոլյանի** և **Ներսես ծ. վրդ. Բախտիկյանի** ճանապարհները, ինչից էլ 1967 թ. Բեյրութում ծնունդ է առել «**Փերիոյ խելացին**» գվարճալի մանրավեպերի գիրքը: Մանրամասնենք, որ Իրանա-Հնդկաստանի թեմը 1958 թ. անջատվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և անցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: 1960 թ. անվանափոխվել է՝ կոչվելով Սպահանի և Հարավային Իրանի թեմ, իսկ 1995-ից՝ Սպահանի թեմ: Առաջնորդանիստը միշտ եղել է **Նոր Ջուղայի նշանավոր Ս. Ամենափրկիչ վանքը**:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «**Հասկ**» ամսագրում 1989 թ. **Ներսես արք. Բախտիկյանի** մահվան առթիվ տպագրված կենսագրականում կարդում ենք, որ 1960 թ. նոյեմբերին Իրանա-Հնդկաստանի թեմի պատգամավորական ժողովը նրան ընտրել է Առաջնորդական տեղապահ, հետագայում՝ Առաջնորդ, բայց 1965-ին վերադարձել է Անթիլիաս⁸⁶⁹: Ուրեմն Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում **Ներսես ծ. վրդ. Բախտիկյանը** և **Մեսրոպ Նիկոլյանը** համագործակցել են 1960–1965 թթ., որի ընթացքում էլ Ներսես ծ. վրդ. Բախտիկյանը

⁸⁶⁹ **Վարդան Եպիսկ. Տեմիրճեան**, Հանգիստ Տ. Ներսես Արք. Բախտիկյանի (1911–1989), «**Հասկ**», ամսագիր, Անթիլիաս, 1989, յունիս-յուլիս-օգոստոս, էջ 361:

նը նրանից գրի է առել Փերիայի հայերի գվարճապատումները, որոնք հրատարակել է 1967-ին, բայց արդեն Նոր Ջուղայից հեռու՝ Բեյրութում, և չկարողանալով հարազատ մնալ բարբառին, դրանք վերապատմել է:

«**Փերիոյ խելացին**» գրքում ընդգրկված «**Ուրբաթը կը փնտռեն...**»⁸⁷⁰ (№32) մանրավեպն այն մասին է, թե ինչպես մի ուրբաթ օր **Բոլորանի** բնակիչները փորձում են ճշտել, թե այդ օրն ինչ շաբթի է: Շաբաթով սկսում են հաշվել և հինգշաբթիով ավարտում են: Դիմում են քահանային՝ պարզելու, թե ուրբաթը ո՞ր է: Նրա հետ գնում են ուրբաթին գտնելու: Հետվից տեսնում են, որ մի սև զանգված մտավ քարայրը: Տեր հորը ներս են ուղարկում: Արջը նրա գլուխը պոկում է: Գյուղացիները վիճում են, թե սա գլուխ ունե՞ր, թե՞ չունե՞ր: Վերադառնում են Բոլորան, կնոջը հարցնում, նա էլ մտածմունքի մեջ է ընկնում և պատասխանում է. «**Տէր Հայրը, երբ տնից դուրս էր գալիս, մարմինը տեսայ, բայց գլուխը չեմ յիշում...**»:

Իր հայրենի Փերիայի գավառում պատմված մեկ տարբերակ էլ՝ «**Ուրբաթը կորիլ ա**»⁸⁷¹ (№33), գրառել է պարսկահայ ճանաչված պատմաբան, ազգագրագետ, մատենագետ, թարգմանիչ, հրատարակիչ **Լևոն Մինասյանը** (1920, Փերիայի գավառ, գ. Վերին Խոյզան–2012, Նոր Ջուղա): Շինականները աղբյուրի մոտ՝ ծառի տակ նստած, հերթականությամբ թվարկում են շաբաթվա օրերը և ուրբաթը բաց են թողնում: Տանուտերին են հարցնում, թե ո՞ր է ուրբաթը: Նա էլ ուղարկում է քահանայի մոտ, որի հետ գնում են կորած ուրբաթին գտնելու: Ըստ բանասացի՝ այգիներում մի «ծակ» են տեսնում, կարծում են ուրբաթն այնտեղ է թաքնվել, և որպես ավագ տեր հորը ներս են մտցնում: «Ծակում» **գայլ** է լինում, որը պոկում է նրա գլուխը: Գյուղացիները մարմինը դուրս են քաշում: Այսպիսով, և ուրբաթին չեն գտնում, և քահանայից են զրկվում:

Ի դեպ, մեզ ծանոթ ավելի քան երեքուկես տասնյակից ավելի փոփոխակներից (այդ թվում՝ իսլամ համշենահայերից գրառված) սա միակն է, որտեղ չկա կնոջ կամ գյուղի «խելացիների» պատասխանը:

⁸⁷⁰ **Ներսես Ծ. վրդ. Բախտիկեան**, Փերիոյ խելացին (գուարճալի մանրադէպեր), Պէյրութ, 1967, էջ 37–39:

⁸⁷¹ **Լևոն Մինասեան**, Գիւղական բառ ու բան (Փերիա գաւառ), Նոր Ջուղա, տպարան Սբ. Ամենափրկիչ վանքի, 1998 (–424 էջ), էջ 375, 376:

ՄՈՒՇԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Ուրբաթի որոնումներին է նվիրված նաև «**Ուրբաթի կորուստը**» (№ 34) երգիծական մանրավեպը, որը 1977 թ. «**Հիմա՛ ես ուզում թե հետո**»⁸⁷² ժողովածուում հրատարակել են ԵՊՀ հայ բանահյուսության դասախոս, բանասիրական գիտ. թեկնածու **Նելլի Հակոբյանը** (1936, Ստեփանակերտ–2008, Երևան) և նրա ուսանող, հետագայում պատմական գիտ. և բանասիրական գիտ. դոկտոր **Արծրունի Սահակյանը**: Գիրքը նախատեսված է միջին և բարձր տարիքի դպրոցականների համար: Խմբագիրը գրող **Հրանտ Մաթևոսյանն** է: Անտոացիայում գրված է. «Գիրքը հիմնականում ամփոփում է այնպիսի հեքիաթներ, որոնք մինչև այժմ գեղարվեստական մշակման չեն ենթարկվել: **Մշակման համար** հիմք ենք ունեցել բոլորովին նոր, միայն վերջին տարիներս Հայաստանի տարբեր շրջաններում կատարած գրառումներ: Ասացողների ներկա սերունդը ժամանակակից կյանքով ապրող, նրա բարքերի, նախասիրությունների ու ճաշակի առաջընթացին տեղյակ մարդիկ են: Բայց դա չի խանգարել, որ նրանք իրենց պատումներում պահպանեն մեր դասական հեքիաթի ոգին: Մենք նույնպես ձգտել ենք դրան՝ մեր մշակումներում հարազատ մնալով հեքիաթների ասացողական արվեստին, պատումի ոճին և նպատակին: Այդ միտումը մեզ ստիպել է գրել մի լեզվով, որում գրական լեզվի հետ միահյուսված օգտագործվել են նաև ժողովրդա-խոսակցական լեզվի տարրեր, իսկ երբեմն իրար կողքի առաջ են եկել նույն արտահայտության գրական և բարբառային ձևեր, ինչպես՝ ասավ-ասաց, այստեղ-էստեղ, կին-կնիկ և այլն, որոնք, անշուշտ, որակ չեն կազմել»⁸⁷³:

Ինչպես տեսնում ենք, **ժողովածուն գիտական հրատարակություն չէ**, և գուցե այդ պատճառով չեն նշված **մշակված** բանարվեստի նմուշների գրառման ժամանակի, վայրի, բարբառի, ասացողների և բանահավաքների տվյալները, թեև ցանկալի էր:

Այս հարցերի մի մասի պատասխանները ստանում ենք **Նելլի Հակոբյանի** և **Արծրունի Սահակյանի** կազմած ու 1980 թ. հրատարակած «**Հայկական ժողովրդական հեքիաթներ**» գրքում բնագրով տպագրված «**Ուրբաթի կորուստը**»⁸⁷⁴ (№ 35) զվարճապատումի ծանոթագրությունից. «1961 թ. գրի առավ **Հրաչյա Մկրտչյանը**: Ասացողն անհայտ մշեցի էր: Գրառման հանգամանքների մասին

⁸⁷² **Նելլի Հակոբյան, Արծրունի Սահակյան**, Հիմա՛ ես ուզում թե հետո: Միջին և բարձր տարիքի դպրոցականների համար, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977 (–200 էջ), էջ 184:

⁸⁷³ **Նելլի Հակոբյան, Արծրունի Սահակյան**, Հիմա՛ ես ուզում թե հետո, էջ 2:

⁸⁷⁴ **Հայկական ժողովրդական հեքիաթներ**, բնագրերը հրատարակության պատրաստեցին, ծանոթագրեցին և բառացանկը կազմեցին՝ **Ն. Ա. Հակոբյան, Ա. Ս. Սահակյան**, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980 (–304 էջ), էջ 196, 197:

տեղեկություններ չկան: Հեքիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ծառայել նրա հրատարակության համար, պահպանվում է ՀԲ (համալսարանի բանահյուսության – Ս. Վ.) արխիվում: Ժամանակակից գրառումների հավաքածուում հեքիաթը առայժմ տարբերակ չունի»⁸⁷⁵:

Ի դեպ, հրատարակված 49 հեքիաթներից միայն այս մեկի ասացողն է անհայտ⁸⁷⁶ (չհաշված «Թակավորն ու իմաստուն ծէրունին» հեքիաթը, որի ասացողի և բանահավաքի անունները նույնպես չեն հիշատակված, քանի որ կազմողները բնագիրը բանահյուսության արխիվում չեն գտել և հրատարակել են մեքենագիր օրինակը⁸⁷⁷):

Անտացիայում սշված է. «Ներկա ժողովածուն ամփոփում է հայ ժողովրդական հեքիաթների նոր գրառումներ, որոնք կատարվել են **բանասիրական ֆակուլտետի ուսանողների կողմից** Սովետական Հայաստանի տարբեր շրջաններում»⁸⁷⁸:

1977 թ. հրատարակված «**Ուրբաթի կորուստը**» մշակված զվարճապատումի և 1980 թ. Մուշի բարբառով լույս տեսածի միջև թեև կան շատ նմանություններ, բայց մշակման պատճառով զգալի են նաև տարբերությունները, որոնց ընթերցողները կարող են ծանոթանալ սույն ուսումնասիրության «**Բնագրեր և թարգմանություններ**» բաժնում՝ համեմատելով երկու տարբերակները (№ 34 և № 35):

Ըստ Մուշի բարբառով գրառված «**Ուրբաթի կորուստը**» պատումի՝ «գավրնցի դանուտեր մըտկի մէջ» հաշվում է շաբաթվա օրերը և ուրբաթը բաց է թողնում: Տղայի հետ գնում է քահանայի մոտ, և միասին սկսում են ուրբաթին փնտրել: Հասնում են արջի որջի մոտ, տղան ասում է, որ ինքն իր աչքով է տեսել, որ իրենց ուրբաթն այնտեղ է մտել: Տեր հորը մտցնում են արջի բունը, որ ուրբաթին հանի: Արջը նրա գլուխը պոկում է: Նրան ոտքերից դուրս են քաշում, տեսնում՝ գլուխը չկա: Գալիս են երեցկնոջը հարցնում, թե տեր հայրը գլուխ ունե՞ր, նա էլ ասում է. «**Վա՛լլա, իմ հօկին չըմ գըրնա կօրսու, վրէ՛ն էր, թը չէ: Գինամ օր, յէպ ժածիկ կուղէր, մուրուկ դօշին կըտըռտըզէր**»⁸⁷⁹ («Աստված վկա, իմ հոգին չեմ կարող կորցնել՝ վրան էր, թե՛ ոչ: Գիտեմ որ, երբ ժածիկ էր ուտում, մորուքը կրծքին տմբտմբում էր»):

Տարիներ անց հնարավորություն ունեցանք ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող **Հրաչ Ասատուրի Մկրտչյա-**

⁸⁷⁵ Հայկական ժողովրդական հեքիաթներ, 1980, էջ 278:

⁸⁷⁶ Հայկական ժողովրդական հեքիաթներ, 1980, էջ 278:

⁸⁷⁷ Հայկական ժողովրդական հեքիաթներ, 1980, էջ 281, 282:

⁸⁷⁸ Հայկական ժողովրդական հեքիաթներ, 1980, էջ 281, 282:

⁸⁷⁹ Հայկական ժողովրդական հեքիաթներ, 1980, էջ 197:

նի բանահյուսական նյութերի ձեռագիր ժողովածուից «**Ուրբաթ գորեր է**»⁸⁸⁰ (№ 36) պատումի ասացողի և բանահավաքի մասին որոշ տեղեկություններ քաղել: Ասացողը՝ **Ասատուր Մկրտչի Մկրտչյանը**, ծնվել է 1882թ. Կարսի շրջանի **Փալտրվան** գյուղում: Ծնողները գաղթել էին Մուշի Հունան գյուղից: Ասատուրը վեց տարեկանում գրկվել է մորից, ինը տարեկանում՝ հորից և մնացել տատի խնամքին: Ինքնուրույն գրաճանաչ է դարձել, ընդամենը մեկուկես ամիս է սովորել գյուղի քահանայի մոտ: Ունեցել է պատմելու բնատուր շնորհք: Հիշյալ գվարճապատումը 1898թ. լսել է տատից, որը, ինչպես նշեցինք, գաղթել էր Մուշի գավառից: Բանահյուսական ժողովածուն պատրաստելու ժամանակ՝ 1970թ., Ասատուրը ողջ է եղել⁸⁸¹: Այն Ասատուրից 1961թ. գրառել է որդին՝ **Հրաչ Մկրտչյանը**, որը ծնվել է 1920թ. Կարսի Փալտրվան գյուղում, բնակվում էր Լենինականում և ուսուցիչ էր աշխատում⁸⁸²:

Ինստիտուտի արխիվում պահվող Հրաչ Մկրտչյանի գրառած Մուշի տարբերակը, ինչպես նաև ասացողի ու գրի առնողի տվյալները տպագրվել են ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտ. դոկտոր, վաստակաշատ բանագետ և բանահավաք **Սարգիս Հարությունյանի** (1928, Շիրակ, գ. Ղազանչի–2019, Երևան) ղեկավարած գիտաշխատողների խմբի՝ 2013թ. պատրաստած «**Կարս**» բանահյուսական ժողովածուում⁸⁸³: Այս դեպքում ևս «գավրոցի տանուտերը» մտքի մեջ հաշվում է շաբաթվա օրերը և տղային ասում, որ «շաբաթվա օրերից մեկ բակաս կիգա, ըստ՝ շաբաթըվա որ օրն է գորի, օր ես կըլխու ընկամ: Դեն, ես հաշվիմ, տու անգաջ էրէ: — Ու կսկըսէ հաշվելը. — Էրկուշըբթի, իրեքշըբթի, չորեքշըբթի, շաբաթ ու գիրակի... Ո՞րն է գորի, չըմ գըռնա գըռնի:

Ուրբաթն է գորի, ուրբաթն է գորի, — կըսէ ու վեր կը թոնի տղեն տեղեն...»⁸⁸⁴:

Ընթերցողներն, անշուշտ նկատեցին, որ տանուտերը ոչ միայն **ուրբաթը**, այլև **հինգշաբթին** չի թվարկում: Մենք համեմատեցինք Հրաչ Մկրտչյանի ձեռագիր օրինակի⁸⁸⁵ հետ, պարզվեց բնագրում նույնպես այդպես է: Ուրեմն ասացողի կամ գրատողի բացթողումն է:

⁸⁸⁰ ՀԱԻ արխիվ, թղթ. «**Հրաչ Ասատուրի Մկրտչյան**, Շիրակի ժողովրդական բանահյուսությունից, 1970», FFVI: 4112-4116 (էջ 4–6):

⁸⁸¹ ՀԱԻ արխիվ, թղթ. «**Հրաչ Ասատուրի Մկրտչյան**, Շիրակի ժողովրդական բանահյուսությունից, 1970», Կենսագրությունը, FFVI: 4104:

⁸⁸² ՀԱԻ արխիվ, թղթ. «**Հրաչ Ասատուրի Մկրտչյան**, Շիրակի ժողովրդական բանահյուսությունից, 1970», FFVI: 4116:

⁸⁸³ **Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը**, կազմողներ՝ **Սարգիս Հարությունյան** (գիտական ղեկավար), **Սվետլանա Վարդանյան**, **Էսթեր Խենյան**, **Լուսինե Դոնջյան**, **Մարինե Խենյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013 (–752 էջ), էջ 458, 459, 635, 653, 682:

⁸⁸⁴ **Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը**, 2013, էջ 458:

⁸⁸⁵ ՀԱԻ արխիվ, թղթ. «**Հրաչ Ասատուրի Մկրտչյան**, Շիրակի ժողովրդական բանահյուսությունից, 1970», FFVI: 4112:

Տանուտերն ու տղան գնում են քահանայի մոտ և նրա հետ սարունորում ուրբաթին են փնտրում: Արջի բնի մոտ տղան ասում է, որ գլխի է ընկել՝ ուրբաթն այստեղ է: Տեր հորը մոցնում են որջը, որ իր սուրբ ձեռքերով դուրս բերի: Ներսից ձայներ են լսվում, կարծում են՝ նա ու ուրբաթը ծիծաղում են: Քահանային ոտքերից քաշում, հանում են և տեսնում՝ գլուխը չկա: Դու մի ասա, արջը պոկել է: Հայրը որդուն հարցնում է՝ երբ տեր հորը բերեցինք, գլուխը վրան էր: Նա էլ չի իմանում: Գնում են երեցկնոջ մոտ: Ասում է. «Վալլա, իմ հոգին չում գրոնա կորցու, եր դերդերոջ կրլուխ վրեն էր, թե չէ... հըմը իմ հոգին ծըզի, սուտ չէղնի: Դերդեր ժաժիկ օր գուտեր, մուրուք գը տոտըզեր... տուս օր դարաք, կրլուխ վրեն էր, թե՛ չէ, չում գրոնա մեղք պատնա վրը իմ հոգուն»⁸⁸⁶ («Աստված վկա, իմ հոգին չեմ կարող կորցնել, ... տերտերի գլուխը վրան էր, թե՛ չէ ...սակայն, իմ հոգին ձեզ, սուտ չլինի: Տերտերը, որ ժաժիկ էր ուտում, մորուքը տմբտմբում էր... որ դուրս տարաք, գլուխը վրան էր, թե՛ չէ, չեմ կարող մեղք բարձել իմ հոգու վրա»):

Այս տարբերակը, ինչպես և Ն. Հակոբյանի ու Ա. Սահակյանի հրատարակածը, բանահավաք Հրաչ Մկրտչյանը գրառել է նույն՝ 1961թ.: Համադրելով ընդհանրությունները՝ կարծում ենք, որ թեև երկրորդ փոփոխակը առաջինից մեկ երրորդով մեծ է, երկուսն էլ պատմել է Ասատուր Մկրտչյանը:

ՆԱՅԱԳԵՏ ԶԵՅՄՍ ՌԱՍԵԼԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայկական ժողովրդական հեքիաթներ» (1980) ժողովածուում տպագրված Հրաչ Մկրտչյանի գրառած «Ուրբաթի կորուստը»⁸⁸⁷ (N° 35), ամերիկացի հայագետ, Նյու Յորքի Քոլումբիայի համալսարանի դասախոս (1993-ից՝ Հարվարդի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ) Ջեյմս Ռասսելը (James Russell) փոխադրել է անգլերեն և «The missing Friday» (N° 35/1) վերնագրով 1987թ. հրատարակել ԱՄՆ-ում⁸⁸⁸: Բացի այդ, նա նույն գրքից թարգմանել է ևս երկու հեքիաթ՝ «Բյասիբի հեքիաթը» (The tale of the pauper) և «Միամիտ կինը» (The foolish woman), որոնց ասացողը Աբովյանի շրջանի Մայակովսկի

⁸⁸⁶ Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը, 2013, էջ 459:

⁸⁸⁷ Հայկական ժողովրդական հեքիաթներ, բնագրերը հրատարակության պատրաստեցին, ծանոթագրեցին և բառացանկը կազմեցին՝ Ն. Ա. Հակոբյան, Ա. Ս. Սահակյան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980 (–304 էջ), էջ 196, 197:

⁸⁸⁸ Armenian Tales, Translated by James R. Russell, “Ararat”, volume XXVIII no. 1, winter, New Jersey, 1987, pp. 21, 22.

գյուղի բնակչուհի, 1906թ. Կոտայք գյուղում ծնված **Մայրանուշ Մկրտչյանն** է, բայց անհասկանալի պատճառով Ջեյմս Ռասելը «**Միամիտ կինը**» հեքիաթի անգլերեն տարբերակի տակ նշել է «from MOUNTAINOUS KARABAGH», այսինքն՝ Լեռնային Դարաբաղից:

Քանի որ «**Ուրբաթի կորուստը**» գվարճալի մանրապատումի հետ նա իր մեկնաբանություններում՝ «**Commentary**» (№37) անդրադառնում է նաև մյուս երկուսին, ուստի հասկանալի լինելու համար, թե ինչին է վերաբերում նրա խոսքը, դրանք ևս համառոտ կվերապատմենք:

«**Քյասիբի հեքիաթը**» մի աղքատի մասին է, որն ամեն երեկո աղոթում է, որ Աստված իր բարձի տակ 100 ոսկի դնի, պայմանով՝ եթե 1 հատ էլ պակաս լինի, ինքը չի ընդունելու: Մի հարուստ, այդ մասին իմանալով, փորձելու համար նրա բարձի տակ 99 ոսկի է դնում: Աղքատը վերցնում է ու դիմում Աստծուն, թե 99 ոսկի տվեցիր, 1 հատն ինչ էր, որ ափսոսացիր: Հարուստն իր ոսկիները հետ է ուզում: Այդ մարդը չի վերադարձնում: Հարուստը դատարան է դիմում, բայց աղքատը պատճառաբանում է՝ շոր չունի, որ գնա դատարան: Հարուստը շոր է տալիս: Այժմ էլ ասում է՝ ոտքն է ցավում: Հարուստը ձի է տալիս: Գնում են դատավորի մոտ: Աղքատն ասում է՝ հարուստը ստախոս է, հիմա կասի, որ իմ հագի շորերն էլ են իրենք: Հարուստն ասում է՝ «**Խա, իմն ի**»: Թե՛ն՝ կասի ձին էլ է իրենք: Հարուստը թե՛ «**Խա, ծին էլ ի իմը**»: Դատավորը կարծելով, որ աղքատը ճիշտ է խոսում, շորերն էլ, ձին էլ թողնում է նրան:

Հաջորդը «**Միամիտ կինը**» հեքիաթն է: Մի պառավի տուն աղքատ ճամփորդ է գալիս: Պատավը հարցնում է, թե որտեղից է եկել: Նա էլ թե՛ այն աշխարհից: Այդ կնոջ որդին մահացած է լինում, նա հյուրին հարցնում է, թե այն աշխարհում իր տղային տեսել է: Նա էլ պատասխանում է, եթե տեսած չլինեք, ինչու՞ պիտի գար այս տունը, եկել է, քանի որ տղան շոր չունի, սոված է: Ծեր կինն ունեցած-չունեցածը տալիս է նրան, որ տանի իր որդուն:

Երեկոյան տուն է վերադառնում նրա մեծ տղան, իմանում է պատահածի մասին, ասում է, որ գնում է աշխարհում շրջելու և եթե իր մորից ավելի միամիտ կին հանդիպի, հետ կգա, եթե չէ՛ չի գա: Գնում, հասնում է թագավորի պալատ: Թագուհին պատշգամբից խոզերին է դիտելիս լինում: Տղան թագուհուն ասում է, որ իր խոզի հարսանիքն է, այդ խոզերից մեկն իր խոզի մորաքույրն է, եկել է տանի քրոջ աղջկա հարսանիքին: Թագուհին հավատում է և իր խոզը տալիս է նրան: Նա էլ տեսնելով, որ իր մորից ավելի միամիտ կին կա, թագուհու խոզն առած՝ հետ է դառնում տուն:

Ահա այս երեք գվարճալի պատմությունների համար է **Ջեյմս Ռասելը** գրել իր մեկնաբանությունները՝ «**Commentary**» (№37), որը ներկայացնում ենք թարգմանաբար. «Այս հեքիաթներն ինչ-որ չափով արտացոլում են հակակղերական

տրամադրությունները և երկրային կծու ծաղրը կրոնական երևույթների նկատմամբ, որոնք սովորական են հայկական բանավեպում: Առաջին պատմության մեջ մի կին խաբվում է Դրախտի մասին պատմություններով, երկրորդում՝ քահանային խաբեությամբ ստիպում են մտածել, որ Ուրբաթը կարող է թաքնված լինել քարայրում, և, վերջապես, երրորդում՝ մի աղքատ մարդ ակնհայտորեն հիմար «հրաշքից» հետո մեղադրում է Աստծուն ժլատության համար: Երեքում էլ աղքատը և աշխարհականը հաղթող են դուրս գալիս: Թագուհին, որն ավելի լավ զբաղմունք չուներ, քան ցեխում թավալվող խոզերին դիտելը, խաբվում է, տանտերը և նրա որդին հավատացած են և ստիպում են երեցկնոջը հավատալ, որ մարդիկ երբեմն մոռանում են իրենց գլուխը տանը. և Աղքատը, հեռու լինելով Հոր Երանելու կերպարից, ճողոպրում է ոսկով, հագուստով և ձիով՝ խորամանկելով ինչպես հարուստին, այնպես էլ դատավորին:

Զնայած այս երեք հեքիաթներն ինչ-որ չափով համահունչ են հնդեվրոպական և ասիական բանահյուսության մեջ տարածված մոտիվներին, դրանք ունեն նաև որոշակի առանձնահատկություններ, որոնք դրանց դարձնում են օյկոտիպ՝ տեղական տարբերակներ, որոնք բնորոշ են մշակույթին կամ տարածաշրջանին: Քրիստոնեական խորապատկերը հանդիսանում է մի այդպիսի օյկոտիպիկ հատկանիշ: Բայց կան նաև իսլամական տարրեր, ըստ երևույթին, ինստունիներ թիվը համապատասխանում է Ալլահի անունների թվին (ըստ արաբական ավանդույթի՝ միայն ուղտը գիտի հարյուրերորդը, և երևի, հենց դրա համար էլ նա ժպտում է). և Ուրբաթը մուսուլմանական համընդհանուր աղոթքի օրն է: (Կա հայերեն արտահայտություն մի մարդու համար, ում խելքը տեղը չէ. «Ուրփաթները գը բագսին», ինչը համապատասխանում է ամերիկյան «Նա լրիվ իր խելքը թոցրել է» արտահայտությանը):

Երկրորդ պատմությունն ունի զարմանալի անհեթեթ, սյուրռեալիստական հատկանիշ, որը հիշեցնում է Նիկոլայ Գոգոլի «Քիթը» պատմվածքը: Եվ, ինչպես Գոգոլի մոտ, այն ունի որոշակի դաժանություն. ոչ ոք չի վշտանում դժբախտ երեցի համար, որի կինը (երեցկինը) միայն հիշում է, որ այդ առավոտյան իր ամուսինը յոգուրտը կաթեցրեց մորուքին⁸⁸⁹ և, ուրեմն, նա պետք է որ գլուխ ունենար: Այս յուրահատուկ, ոչ մեծ ընտրանիում չկան գերբնական էակներ՝ **վիշապներ, դևեր և քաջքեր**, որոնք տարածված են հայոց վիպաշխարհում: Սակայն այս մասին կխոսվի մի ուրիշ անգամ⁸⁹⁰:

⁸⁸⁹ Հայերեն բնագրում ոչ թե **յոգուրտ** է, այլ՝ **ժածիկ**, որը խնոցու թանը եփելուց և քամելուց ստացվող կաթնաշոռի սման փսրո ուտեստ է, և այն մորուքին կաթեցնելու մասին ոչինչ չի ասվում:

⁸⁹⁰ **Armenian Tales**, Translated by **James R. Russell**, “**Ararat**», volume XXVIII no. 1, p. 22. Անգլերեն բնագիրը տե՛ս սույն աշխատության «**Բնագրեր և թարգմանություններ**» բաժնում:

Ինչպես տեսնում ենք, այս մեկնաբանություններում հեղինակն իր թարգմանած երեք հեքիաթներից երկուսում իսլամական տարրերի առկայության մասին ենթադրություններ է անում: **Շատ անսպասելի է, որ նա աղքատ գյուղացու բարձի տակ հարուստի դրած 99 ոսկիների թվի և Ալլահի անունների 99 թվի միջև ընդհանրություններ է տեսնում:** Իր այս գուգահեռը նա չի փաստարկում:

Չի պատճառաբանված նաև նրա հաջորդ ենթադրությունը՝ կապված «**Ուրբաթի կորուստը**» (№ 35) գվարճապատումի հետ: Ըստ նրա՝ «**Ուրբաթը մուսուլմանական համընդհանուր աղոթքի օրն է**»: Ինչ կապ ունի: Օրինակ՝ եվրոպական որոշ երկրներում ու քաղաքներում ուրբաթ օրերին էր շուկա լինում: Ռուսական բանահյուսությունից մեզ հայտնի «**О Немце**» («Գերմանացու մասին») երգիծական մանրապատումում, որը հեռավոր Սամարայի նահանգի Ստավրոպոլսկոյե գավառում (ույեզդ) XIX դարի երկրորդ կեսին գրի է առել բանաստեղծ, ազգագրագետ և բանահավաք **Դմիտրի Սադովնիկովը** (1847–1883), նույնպես կարևոր բաղկացուցիչներ են **Ուրբաթը, Արջը և Արջի գոհը**:

Համատուտ վերապատմենք. լինում է չի լինում մի գերմանացի է լինում: Նա իր ռուս կառապանին **ուրբաթ** օրն ուղարկում է շուկա՝ կաթ ու միս առնելու: Կառապանը գնում է, բայց շուկայում կաթ ու միս չի լինում: Գերմանացին զայրանում է նրա վրա ու հարցնում՝ ո՞վ է մեղավոր, որ չկա: Կատակասեր կառապանն ասում է՝ ուրբաթը: Գերմանացին, հավանաբար ռուսերեն լավ չիմանալով՝ հրամայում է կառապանին, որ ձին լծի, գնան շուկա, ու ինքն ուրբաթին պատժի: Հասնում են շուկա, գերմանացին բացականչում է. «Որտե՞ղ է ուրբաթը»: Կառապանը տեսնում է՝ մի գյուղացի արջ է տանում, ցույց է տալիս արջին և ասում՝ նա է ուրբաթը: Գերմանացին մոտենում է արջին, շպպացնում է նրա ականջին ու հայիոյելով հարցնում է, թե ինչու՞ թույլ չի տալիս կաթ ու միս առնեն: Արջն էլ բռնում է ու գերմանացու ոսկորներն է կոտրատում, հազիվ կիսամետ բաց թողնում⁸⁹¹:

Հիշենք, որ իսլամի ծագումից դարեր առաջ արդեն իսկ ուրբաթ օրը, ինչպես և շաբաթվա մյուս օրերը, քրիստոնյա աշխարհի համար հատուկ կարևորություն ունեին, ս. Ջատկին նախորդող Ավագ շաբաթի օրերից յուրաքանչյուրն իր խորհուրդն ուներ և կոչվում էր Ավագ երկուշաբթի, Ավագ երեքշաբթի, Ավագ չորեքշաբթի, Ավագ հինգշաբթի, Ավագ ուրբաթ, որը Քրիստոսի խաչելության հիշատակի օրն է⁸⁹²:

⁸⁹¹ Сказки и предания Самарского края, собраны и записаны Д. Н. Садовниковым, «Записки Императорского русского географического общества по отделению этнографии», т. XII, С.-Петербург, типография министерства внутренних дел, 1884, с. 167, 168.

⁸⁹² Ա. Ղազարյան, Մ. Նավոյան, Մ. Միքայելյան, «Ավագ շաբաթ» // Քրիստոնյա Հաստան, հանրագիտարան, Երևան, 2002 (–1076 էջ), էջ 119–122:

Թե ինչ նշանակություն է ունեցել **ուրբաթ** օրը տարբեր տարածաշրջանների ու գավառների հայերի համար, վկայում է ազգագրական հարուստ գրականությունը, նաև այն, որ 1512 թ. հայերեն առաջին տպագիր գիրքը ընտրվել է հենց «**Ուրբաթագիրք**»: Այդ հիշարժան իրադարձության 500-ամյակի առթիվ 2012 թ. խնամքով պատճենահանված-վերահրատարակված «Ուրբաթագրքի» առաջաբանի հեղինակ, բանասիրական գիտ. թեկնածու **Լուսինե Ավետիսյանը** գրում է. «Հայերեն առաջին տպագիր գրքի համար հիմք են ծառայել ձեռագիր «Ուրբաթագիրք»-երը, որոնք ժողովածուներ էին՝ կազմուած տարբեր տեքստերից՝ հիննականում հմայական աղօթքներ, հատուածներ Աւետարանից, ինչ-որ գլուխ Գրիգոր Նարեկացու «Մատենան»-ից, կիսաառասպելական զրոյցներ, ինչպիսին է Ս. Կիպրիանոսի պատմութիւնը իր գործած չարիքների, ապա՝ հրաշքների մասին, Ուստիանէ կոյսի պատմութիւնը, սրբերին ու «Սուրբ Խաչ»-երին ուղղուած աղերսներ, սաղմոսներ, չար աչքից ու խայթոցներից պաշտպանող պահպանագրեր եւ այլն: Ի դէպ, Մատենադարանում պահուող հնագոյն ձեռագիր «Ուրբաթագիրք»-ը 1476-ով թուագրուող թիւ 3248 ձեռագիրն է»⁸⁹³:

««Ուրբաթագրքի» տիտղոսաթերթը զարդարում է եռատող մի նախադասութիւն՝ «Անուն գրոցս է սուրբ ուրբաթագիրք»: Գիրքն այդպէս է կոչուել ոչ «ուրբաթ» բառով սկսուելու պատճառով: Նրա առաքելութիւնն է եղել խօսքով բժշկելը եւ չար ուժերից պաշտպանելը, յանձնարարուել է կարդալ ուրբաթ օրը: Մարդիկ հաւատացել են շաբաթուայ օրերի խորհրդին: Հայ Առաքելական Եկեղեցու տօնական համակարգում շաբաթուայ իւրաքանչիւր օր իր նշանակութիւնն ունի: Առանձնայատուկ է ուրբաթը, որ մարդու արարման, բայց նաեւ Մարդու Որդու խաչելութեան օրն է, այդ պատճառով երկակի բնոյթ ունի: ...Ուրբաթը նուիրում է Քրիստոսին խորհրդանշող Սուրբ Խաչին, որն էլ օրուայ խորհրդով իր առանցքի շուրջ միատրում ու միմեանց է շաղկապում Ուրբաթագրքի բոլոր մասերը, ասես թոյլ տալով այն կոչել նաեւ Սուրբ Խաչի գիրք: Ուրբաթը զօրութիւն է տալիս չարից պաշտպանող աղօթքներին, եւ ընձեռում մեղքերի պատճառով հոգու եւ մարմնի կորսուած ներդաշնակութիւնը վերագտնելու հնարաւորութիւն...»⁸⁹⁴:

Բայց, որպէսզի քննարկվող գվարճապատումի բազմաթիվ տարբերակներից ընդամենը մեկը կարդալով հեռուն գնացող եզրահանգումներ չարվեն, ներկայացնենք նաև որոշ վիճակագրական տվյալներ:

Այսպես, թեև կրոնափոխ համշենահայերը իսլամ են, բայց նրանց գավելշտապատումների հերոսները «**մուսուլմանական համընդհանուր աղոթքի օր**» ուրբաթը չեն կորցնում ու չեն փնտրում, իսկ քրիստոնյա հայերից գրառված 30

⁸⁹³ **Ուրբաթագիրք**, բնօրինակի վերծանութիւնը, թարգմանութիւնը, առաջաբանը, ծանօթագրութիւնները, տեղեկատուն, անուանացանկերը, քարտեզը, հարթաքանդակը եւ գեղ. ձեւավորումը՝ բան. գիտ. թեկն. **Լուսինե Աւետիսեանի**, ՀՀ ԳԱԱ Մ. Արեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, «Զանգակ» հրատ., 2012 (– 400 էջ), էջ 7:

⁸⁹⁴ **Ուրբաթագիրք**, 2012, էջ 9, 10:

տարբերակներից ընդամենը հինգի հերոսներն են ուրբաթին որոնում: Շեշտենք, որ այդ 5-ից երեքի՝ Մուշի բարբառով պատմվածների («**Ուրբաթի կորուստը**», «**Ուրբաթի կորուստը**», «**Ուրբաթ գօրեր է**») ասացողն ու գրառողը նույն անձինք են, իսկ մյուս երկու մանրապատումն էլ («**Ուրբաթը կորիլ ա**», «**Ուրբաթը կը փնտռեն**») գրառվել են Պարսկաստանի նույն՝ Փերիայի գավառում: Այսինքն՝ ուրբաթի կորուստն ու փնտրտուքը ներկայացնող այս զվարճապատումը տարածվածներից չէ: Ավելին, կա նաև **կիրակիի** որոնման մասին պատմող տարբերակ, որին կանդրադառնանք ստորև:

ՆԱԼԵՊՈՒՄ ԳՐԱՌՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ներկայացվող երգիծական մանրապատումի հերոսները **ուրբաթի** փոխարեն **կիրակին** են կորցնում և գնում **կիրակիին** որոնելու: Նշենք, որ հնում ոչ միայն **ուրբաթն** էին կարևորում, այլև՝ **կիրակին**, որը դեռևս նախաքրիստոնեական շրջանում եղել է դարբինների համար ծիսական օր: Ըստ **Խորենացու** հաղորդած առասպելի՝ **Արտավազդի** շղթաներն ամրացնելու նպատակով դարբինները կռանով երեք կամ չորս անգամ հարվածում էին գնդանին. «յաւուր միաշաբաթօջ երիցս կամ չորիցս բախեն զսալն, զի գօրացին, ասեն, շղթայքն Արտաւազդայ»⁸⁹⁵: «Յաւուր միաշաբաթօջ», այսինքն՝ կիրակի օրը, ինչպես տպագրվում է պատմահոր երկի գրաբար հրատարակություններում և թարգմանություններում⁸⁹⁶:

Ապացուցելու համար, թե ինչ կարևորություն են ունեցել շաբաթվա օրերը, այդ թվում՝ **կիրակին**, կարելի է ազգագրական հանդեսներից և գիտական գրականությունից բազմաթիվ օրինակներ բերել⁸⁹⁷, բայց դրանով ավելորդ կծան-

⁸⁹⁵ **Մովսիսի Խորենացու** Պատմություն Հայոց, Ի Վենետիկ, 1827 (–632 էջ), էջ 287:

⁸⁹⁶ **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս **Ստ. Մալխասյանցի**, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1968 (–420 էջ), էջ 195: **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները **Ստ. Մալխասյանցի**, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1997 (–552 էջ), էջ 174:

⁸⁹⁷ Տե՛ս **Հրանուշ Խառատյան-Առաքելյան**, Հայ ժողովրդական տոները (Երկրորդ, լրամշակված հրատարակություն), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն «Հազարաշեն», Երևան, «Զանգակ-97», 2005 (–360 էջ): **Հրանուշ Խառատյան**, Տոնը և տոնահանդեսի մշակույթը Հայաստանում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, «Միրվարդ հրատ.», 2009 (–356 էջ): **Աղասի Թաղևոսյան**, Դարբինը հայոց ծիսակարգում (Պատմաազգագրական ուսումնասիրություն) // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ. 23, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստի-

րաբեռնվի սույն ուսումնասիրությունը, և անհարկի կշեղվի ընթերցողների ուշադրությունը, ուստի վերադառնանք մեր զվարճապատումին: 64-րդ համարակալումով այս տարբերակը⁸⁹⁸ արևմտահայ գաղթականներից և նրանց սերունդներից Հալեպում գրանցել է սփյուռքահայ (2014-ից՝ Երևանում բնակվող) ճանաչված մանկավարժ, ազգագրագետ և բանահավաք, պատմական գիտ. դոկտոր (2016) **Հակոբ Չոլաքյանը**: «Ազգագրական և բանահիսական փշրանքներ-2» մատենաշարով 1988թ. Հալեպում տպագրված «**Միջգաւառական անեքթոսներ**» գրքում զվարճախոսությունների և զվարճապատումների որևէ ասացողի տվյալ չի նշված, քանզի, ինչպես Հակոբ Չոլաքյանը մեզ պարզաբանեց, դրանք սիրիահայերից շատերը գիտեն, ուստի պատմողներից մի քանիսին առանձնացնելն իմաստ չունի և արդարացի չէր լինի:

Նա գրքի առաջաբանում գրում է. «Մեծ Եղեռնէն վերապրած հայ գաղթականներէն շատ ու շատեր՝ անապատի հովերէն քշուած աւագի պէս հատիկ-հատիկ, ալիք-ալիք եկան ինկան սա Հալէպի հնամենի պատերուն տակ: ...1923-ին Հալէպ հաստատուած գաղթականներուն թիւը արդէն հասած էր շուրջ 35.000-ի: ...Հալէպի մէջ ի մի եկած հայ ժողովուրդի այս բեկորները հոն իրարու հետ լացին նոյն կորուստին համար, իրարու օգնեցին սալելու համար, բայց նաեւ զարմացան իրենց իրարմէ ունեցած տարբերութիւններուն վրան: Անոնք բերին իրենց բարբառներն ու խօսուածքները, թրքախօսութիւնն ու քրտախօսութիւնը և զիրար հասկնալու համար շատ անգամ պէտք ունեցան միջնորդ լեզուի մը: Բերին իրենց տարագները, տօները, ճաշերը և դեռ ինչ բարբեր ու մտայնութիւններ:

...Այս ժողովուրդը, որ մահին յաղթեց, իր մեռելներուն համար բառ չունէր, ունենալ չէր ուզեր... Ինչո՞ւ չխօսէր իր մասին... Այո՛, իրենց մեռելները լալու փոխարէն անոնք խնդացին սպրոդներուն վրայ: Այդ զուարթախտ ծաղրն ու ծիծաղը զիրենք աւելի մօտեցուց իրարու, նոյնացուց:

...Այս փոքրիկ ժողովածոն կ'ընդգրկէ Հալէպի նոր գաղութի հայոց այս միջհայրենակցական կամ միջգաւառական անեքթոսները, որոնց հերոսներն են Տիգրանակերտցին, Ուրֆացին, Այնթապցին, Սասունցին, Քիլիսցին, Մարաշցին, Խարբերդցին և միւսները:

...Փորձ եղած է անեքթոսները գրի առնել հարազատութեամբ, այնպէս՝ ինչպէս որ սովորաբար կը պատմուին անոնք այսօր: Գրեթէ չենք փոխած նաեւ լե-

տուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 99–186 (–186): **Սամվել Մկրտչյան**, Տոներ: Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևանի պետական համալսարան, Երևան, «Գասպրիստ» հրատ., 2010 (–192 էջ):

⁸⁹⁸ **Միջ-գաւառական անեքթոսներ**, Ազգագրական և բանահիսական փշրանքներ-2, հաւաքեց և ներկայացուց **Յ. Չոլաքեան**, Հալէպ, տպարան «Արեւելք», 1988 (–120 էջ), էջ 32, 33:

գուն. եղածին պէս ձգուած են բարբառային բառերն ու օտարաբանութիւնները»⁸⁹⁹:

Գիրքը՝ որոշ հավելումներով, վերահրատարակվել է 2005 թ.՝ ընդգրկելով 274 գվարճախոսություն և գվարճապատում, սրախոսություններ: Կրկին 64-րդ համարակալմամբ լճեցիների մասին գվարճապատումն է⁹⁰⁰, որը մեր գրքի «**Բնագրեր և թարգմանություններ**» բաժնում պայմանականորեն վերնագրել ենք «**Լճեցիներն ու արջը**» (№ 38): Լճեն Դիարբեքիի նահանգի Լճե գավառակի վարչական կենտրոնն էր, ուներ 2000 տուն, որից 200 տունը հայեր էին, մնացյալը՝ քրդեր⁹⁰¹: Լճեցիներին 1899 թ. այսպես է բնութագրել «**Բիրակնի**» հոդվածագիրը. «...Մեծ մասը Տիարպեքիէն, Բալուէն եւ այլ կողմերէ գաղթեր են: Հուժկու ու չարքաշ, ամէնքն ալ գործի տէր, խիստ սրամիտ ու ժրագան, բայց դեռ անուս, հետեւաբար ինքնահասան, նախանձոտ ու գինեմոլ:

Մոգականութիւնն ալ դեր մ'ունի իրենց մէջ:

Ջերմ կրօնասէր: Ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին անունով, հազիւ 40–50 տարուան շինութիւն»⁹⁰²:

Ըստ տպագրված գվարճապատումի՝ լճեցիներից մեկը շաբաթվա օրերը հաշվելիս **կիրակին** բաց է թողնում⁹⁰³: Գյուղացիները քահանայի գլխավորությամբ գնում են **կիրակին** գտնելու: Ճանապարհին տեսնում են մի քարայր, որտեղ բնակվում էր արջը: Տեր հայրը ներս է մտնում և զրկվում գլխից: Լճեցիները գյուղ են վերադառնում, երեցկնոջը հարցնում, թե տեր հայրը գլուխ ունե՞ր, նա էլ ասում է. «**Ես լէ չըմ գինամ, պաս երբ որ կը խօսար, երկու թել մագ կը ծածար**» («Ես էլ չգիտեմ, միայն թե, երբ խոսում էր, երկու թել մագ էր շարժվում»):

Հակոբ Չոլաքյանի գրքերում հրապարակված հաջորդ՝ 65-րդ երգիծական մանրավեպը⁹⁰⁴ հիշեցնում է Սարգիս Բախտիկյանի 1953-ին հրատարակած «**Մօրուքը տեսայ, ըմնա...**»⁹⁰⁵ գվարճապատումը: Բայց այս դեպքում հերոսները ոչ թե Խարբերդի նահանգի Արաբկիրի գավառակի **արաբկիրցիներն** են, այլ՝ հենց

⁸⁹⁹ **Միջ-գաւառական անեքթոտներ**, Ազգագրական եւ բանահիւսակական փշրանքներ-2, 1988, էջ 3–5, 9, 10: **Յակոբ Չոլաքեան**, Միջգաւառական անեքթոտներ, Բ տպագրութիւն, Հալէպ, 2005 (–176 էջ), էջ 3–6, 12, 13:

⁹⁰⁰ **Յակոբ Չոլաքեան**, Միջգաւառական անեքթոտներ, Հալէպ, 2005, էջ 48, 49:

⁹⁰¹ **Գ. Մ. Քէօթօղլեան**, Լըճէ, «**Բիրակն**», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, փետրվարի 18, թիւ 8, էջ 115, 116: **Գ. Մ. Քէօթօղլեան**, Լըճէ, «**Բիրակն**», 1899, մարտի 4, թիւ 11, էջ 167:

⁹⁰² **Գ. Մ. Քէօթօղլեան**, Լըճէ, «**Բիրակն**», 1899, մարտի 4, թիւ 11, էջ 167:

⁹⁰³ **Միջ-գաւառական անեքթոտներ**, Ազգագրական եւ բանահիւսակական փշրանքներ-2, հաւաքեց եւ ներկայացուց՝ **Յ. Չոլաքեան**, էջ 32, 33:

⁹⁰⁴ **Միջ-գաւառական անեքթոտներ**, Ազգագրական եւ բանահիւսակական փշրանքներ-2, հաւաքեց եւ ներկայացուց՝ **Յ. Չոլաքեան**, էջ 33, 34: **Յակոբ Չոլաքեան**, Միջգաւառական անեքթոտներ, Բ տպագրութիւն, էջ 49–51:

⁹⁰⁵ **Սարգիս Բախտիկեան (Ծոփեցի)**, Շէփկայ խելացի, էջ 70–72:

խարբերոցիները, ուստի այն «**Բնագրեր և թարգմանություններ**» բաժնում տպագրել ենք «**Խարբերոցիներն ու արջը**» (№39) պայմանական վերնագրով:

Խարբերոցիները ճանապարհ են ընկնում սրբազանին դիմավորելու: Քահանան, ծեր ու հիվանդ լինելով, նրանց չի միանում: Հեովից տեսնում են, որ դեպի իրենց մի սև կերպարանք է գալիս: Ուրախանում են ու ընդառաջ վազում: Բայց մութ ուրվապատկերը քարայրն է մտնում: Կարծելով՝ սրբազանն իրենցից նեղացել է, որ ծերուկ քահանան չի եկել դիմավորելու, նրան էլ են գյուղից բերում: Նա անձավն է խցկվում և երկար ժամանակ չի վերադառնում: Երբ դուրս են քաշում, տեսնում են՝ գլուխը չկա: Իրար են հարցնում՝ տեր հորը որ բերեցինք, գլուխը վրան էր: Դիմում են մեջների գիտունին: Նա էլ ասում է. «**Շիտակը, ես մօրուքը տեսայ, բայց գլուխ ունենալը հաստատ չեմ կրնար ըսել**»:

ԱՅԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՓՈՓՈԽԱԿՆԵՐԸ

Որպեսզի պատկերն առավել ամբողջական լինի, փորձենք ճշտել, թե մեր քննարկած տարբերակները այլ ժողովուրդների բանահյուսության մեջ հանդիպում են, թե ոչ: Ինչպես հայտնի է, տարբեր ազգերի հեքիաթների և զվարճապատումների միջազգային ուղեցույցն առաջինը կազմել է ֆին բանագետ, դոկտոր **Աստտի Ամատուս Աարնեն** (1867–1925), որը 1910 թ. Հելսինկիում գերմաներեն հրատարակել է «Verzeichnis der Märchentypen»⁹⁰⁶ («Հեքիաթների տիպերի տեղեկատու») վերնագրով իր ուսումնասիրությունը:

Ամերիկացի բանագետ, Բլումինգթոնի (Ինդիանա) համալսարանի պրոֆեսոր **Սթիթ Թոմփսոնը** (1885–1976), Աարնեի հեքիաթների համացույցը լրացնելով և կարգավորելով, 1928-ին հրատարակել է «The types of the folktale»⁹⁰⁷ («Հեքիաթների տիպերը») վերնագրով, այն հավելելով՝ վերահրատարակել նաև 1961, 1964, 1973 թվականներին: Այդ ժամանակներից էլ **Աարնեին** և **Թոմփսոնին** հղելիս շրջանառության մեջ է դրվել «AaTh» հապավումը:

Աարնե-Թոմփսոնի հեքիաթացույցի համաձայն՝ այս զվարճապատումը տարածված է այլ ժողովուրդների միջավայրում ևս. «**Առանց գլխի մարդը արջի որջում: Մի մարդու գլուխը արկածով հափշտակվում է, և նրա ընկերները չեն տեսնում պատահածը: Վիճաբանում են, արդյոք նա երբևէ գլուխ ունեցել է**» (AaTh №1225): Ինչպես տեսնում ենք, չկա կնոջ պատասխանը, ինչը հայկական փոփոխակների պարտադիր բաղկացուցիչն է:

⁹⁰⁶ Antti Aarne. Verzeichnis der Märchentypen, Helsinki, 1910.

⁹⁰⁷ The types of the folktale. A classification and bibliography. Antti Aarne's "Verzeichnis der Märchentypen", translated and enlarged by Stith Thompson. Second revision, Helsinki, 1964.

Ռուս բանագետ **Նիկոլայ Անդրենը** (1892–1942) թարգմանել է Աարնեի աշխատությունը և այն նոր աղբյուրներով հավելելով՝ «Указатель сказочных сюжетов по системе Аарне»⁹⁰⁸ («Հեքիաթների սյուժեների տեղեկատու՝ Աարնեի համակարգով») վերնագրով 1929 թ. հրատարակել Լենինգրադում: Աարնեի համարակալման 1225-ի տակ նշված է. «**Пошехонец без головы (откусил медведь, оторвало мельницей и т. п.), другие (жена) помнят, что борода у него была, а была ли голова-не знают**» («Պոշեխոնցին առանց գլխի (կծել-պոկել է արջը, պոկել է ջրաղացը և այլն), ուրիշները (կինը) հիշում են, որ մորուք ուներ, իսկ արդյոք գլուխ ունե՞ր, չգիտեն»):

Ըստ 1979 թ. Լենինգրադում հրատարակված արևելասլավոնական ժողովուրդների համեմատական հեքիաթագույցի՝ հայկական տարբերակների հետ ընդհանրություններ ունեն նաև ռուսական, ուկրաինական, բելառուսական բանահյուսական նմուշները: Նույն՝ 1225 համարակալմամբ նշված է. «**Глупец (поп) без головы (откусил медведь, оторвало мельницей): другие (жена) помнят, что борода у него была, а была ли голова не знают**»⁹⁰⁹ («Հիմարը (քահանան) առանց գլխի (կծել-պոկել է արջը, պոկել է ջրաղացը), մյուսները (կինը) հիշում են, որ նա մորուք ուներ, իսկ արդյոք գլուխ ունե՞ր, չգիտեն»):

Բավարարվենք միայն դրանցից ամենահին տպագիր տարբերակին՝ **Վասիլի Բերեզայսկու** հրատարակածին ծանոթանալով: **Վասիլի Բերեզայսկին** (1762–1821), որը ֆրանսերեն, հանրահաշիվ և այլ առարկաներ էր դասավանդում Սանկտ Պետերբուրգի ուսումնական հաստատություններում⁹¹⁰, 1798 թ. լույս է ընծայում իր «**Анекдоты древних пошехонцов**»⁹¹¹ («Հին պոշեխոնցիների անեկդոտները») գիրքը: **Պոշեխոն** գյուղաքաղաքը և շրջանը գտնվում էին նրա հայրենի Յարոսլավլի նահանգում: Տեղացիները պոշեխոնցիների մասին անեկդոտներ էին պատմում:

Գիրքը՝ որոշ լրացումներով, 1821 թ. վերահրատարակվում է⁹¹² և մեծ հաջո-

⁹⁰⁸ **Николай Андреев**, Указатель сказочных сюжетов по системе Аарне, Государственное русское географическое общество, Ленинград, 1929 (–118 с.).

⁹⁰⁹ Сравнительный указатель сюжетов. Восточнославянская сказка. Составители: **Л. Г. Барг, И. П. Березовский, К. П. Кабашников, Н. В. Новиков**, АН СССР, Институт Этнографии им. Н. Н. Миклухо-Маклая, Ленинград, изд. «Наука», Ленинградское отделение, 1979 (–438 с.), с. 275.

⁹¹⁰ **Д. Молдавский**, Василий Березайский и его «Анекдоты древних пошехонцев» // **Русская сатирическая сказка в записях середины XIX–XX веков**, подгот. текста, ст. и коммент. **Д. М. Молдавского**, Москва-Ленинград, Издательство АН СССР, 1955, с. 236–245.

⁹¹¹ **Анекдоты древних пошехонцев**, сочинение **Василия Березайского**, Санкт-Петербург, 1798.

⁹¹² **Анекдоты или похождения древних пошехонцев**, второе издание, исправленное с приобщением повестей о Щуке, о походе на Медведя и Забавного Словаря, служащего истолкованием разных слов. Сочинение **В. Березайского**. Анекдоты или весёлые по-

ըություն ունենում: Երկրորդ հրատարակության հավելումներից մեկը պոշեխոնցիների որսի գնալու մասին 17 էջանոց⁹¹³ պատումն է: Գրքի բովանդակության ցանկում գրված է. «О походе на Медведя. Удивительные подвиги Пошехонцев при нападении на Медведя, и плачевная участь смельчака Яшки Трошкина, посетившего Медведя в самой его берлоге»⁹¹⁴ («Արջի վրա արշավանքի մասին: Պոշեխոնցիների զարմանալի սխրագործությունները Արջի վրա հարձակվելիս և Արջին հենց նրա որջում այցելած խիզախ Յաշկա Տրոշկինի ողբալի ճակատագիրը»):

Հեղինակը, ժողովրդական բանահյուսության հիման վրա ստեղծված իր պատումում շոայլորեն ցուցադրելով Հին Հունաստանի դիցաբանության ու առասպելների իր իմացությունը, բազմակողմանի զարգացվածությունը, հյութեղ լեզվով, հումորով, ծաղրով, հեգնանքով ու սարկազմով շատախոսում է, թե ինչպես են մի քանի տասնյակ պոշեխոնցիներ, անմահ **Մինինի և Պոժարսկու**⁹¹⁵ հերոսական օրինակից ոգևորված, բոլոր տեսակի գենքերով զինված, շների ուղեկցությամբ, ձմռան կեսին դահուկներով ու սահնակներով գնում քուն մտած արջին որսալու, որպեսզի ռուսական հողը ազատագրվի նրանից: Արջի բնի մոտ քաջարի երիտասարդ **Յաշկան** ասում է, որ իրեն ամուր պարաններ տան, ինքը մենակ կմտնի, և քանի դեռ արջը քնած է, նրան շատ պինդ կկապոտի և շան լակոտի կամ կատվի ձագի պես դուրս կբերի: Նա նաև զգուշացնում է, որ եթե վտանգի պահին պարանը շարժվի, իրեն իսկույն հանեն:

Մի խոսքով, **Յաշկան** մտնում է որջը, արջը նրա գլուխը պոկում է: Որսորդները Յաշկային պարանով քաշում են: Արջը հարձակվում է և որսորդներից շատերի ձեռքն ու ոտքն է կտորում, վնասում: Հեղինակի բնորոշմամբ՝ որսորդները գրոհում են արջի վրա, ինչպես բազեները՝ աղավինների: Նրան սպանում են, մորթով փաթաթում մենամարտի ժամանակ գլխից զրկված **Յաշկային** ու հաղթական վերադառնում Պոշեխոն:

Համագյուղացիները հավաքվում են սահնակի շուրջը, որի վրա արջի մորթու մեջ պառկած էր **Յաշկան** և տեսնում են, որ նրա գլուխն ու մորթե գլխարկը չկան: Այդ ժամանակ վազեվազ գալիս է նրա կինը՝ **Ֆեդուլովնան**: Նրան հարցնում են՝ երբ Յաշկան որսի էր գնում, գլուխ ունե՞ր: **Այստեղ կինը մտքերի մեջ է ընկնում, ասում է՝ ճիշտն ասած ինքն էլ չի հիշում: Անցյալ տարի սր**

хождения старинных пошехонцов, издание новое, поправленное, с прибавлением по-
вестей о Шукке, и о походе на Медведя, и с присовокуплением Забавного словаря. Сочинение
В. Березайского, В Санкт Петербурге, в типографии Департамента Внешней
Торговли, 1821 (–206 с.).

⁹¹³ **Анекдоты или похождения древних пошехонцов**, второе издание, 1821, с. 163–180:

⁹¹⁴ **Анекдоты или похождения древних пошехонцов**, второе издание, 1821, с. IV:

⁹¹⁵ **Կուզմա Մինինը և իշխան Դմիտրի Պոժարսկին** 1611–1612 թթ. Նիժնի Նովգորոդում և Յարոսլավլում կազմավորված աշխարհագրի ղեկավարներն էին, որոնք 1612 թ. լեհերից ազատագրեցին Մոսկվան:

Պետրոսի տոնի (к Петрову дню)⁹¹⁶ նախօրեին ամուսինը ջրարջի մորթուց ականջավոր գլխարկ է առել, եթե գլուխ չուներ, գլխարկ ինչու՞ պիտի գներ: Կնոջ խելացի պատասխանից ներկաները համոզվում են, որ իսկապես գլուխ ունեցել է⁹¹⁷: **Յաշկային** թաղում են, առատ հոգեհաց են տալիս, նաև՝ արջի մտով համեղ ուտեստներ, բոլորը գոհ են լինում:

Այս զվարճալի պատումի մեկական տարբերակ էլ ոուներեն թարգմանության միջոցով մեզ հայտնի է թուրքական «**Когда твой муж выходил из дому, была ли у него на плечах голова?**»⁹¹⁸ (№ 40), («Երբ քո ամուսինը տնից դուրս էր գալիս, նրա ուսերին գլուխ կամր»), պարսկական «**Была ли голова?**»⁹¹⁹ (№ 41) («Գլուխը կամր», № 41/1) և ասորական «**Как тиарийцы искали солнце**»⁹²⁰ (№ 42), («Թե ինչպես էին թիարցիներն արև փնտրում», № 42/1) բանահյուսությունից:

Թուրքականը և պարսկականը շատ կարճ են և համարյա իրար կրկնում են: **Մուլլա Նասրեդինն** ընկերոջ հետ գնում է որսի, հետապնդում են գայլին, որը մտնում է իր բունը: Ընկերը նրա հետևից ներս է սողոսկում: Որոշ ժամանակ անց, երբ Նասրեդինն ընկերոջը դուրս է քաշում, տեսնում է՝ գլուխը չկա: Վերադառնում է քաղաք ու նրա կնոջը հարցնում, թե ամուսինը տնից դուրս գալիս գլուխ ունե՞ր:

Թուրքական և պարսկական տարբերակներն այսքանով ավարտվում են, **չկա կնոջ պատասխանը**, որը կրոնափոխ համշենահայերից և տարբեր վայրերի քրիստոնյա հայերից գրառվածների մեխն է, ամենակարևոր, եզրափակիչ մասը:

Շեռաբրքի է, որ մեր քննարկած հայկական 37 պատումներից ոչ մեկը չի առնչվում **խոջա (մուլլա) Նասրեդինին**, որի մասին երգիծական զրույցները վա-

⁹¹⁶ **Պողոս** և **Պետրոս** առաքյալներին նվիրված տոն է, ոուսները նշել են հուլիսի 12-ին, այդ օրը ավարտվել է պատր և երկու-երեք օր կերել-խամել, ուրախացել են:

⁹¹⁷ **Анекдоты или похождения древних пошехонцев**, второе издание, исправленное с приобщением повестей о Щуке, о походе на Медведя и Забавного Словаря, с. 179, 180:

⁹¹⁸ **Анекдоты о ходже Насреддине**, перевод с турецкого В. А. Гордлевского, изд. Второе, Академия Наук СССР, Институт востоковедения, Москва, изд. Восточной литературы, 1959 (-275 с.), с.167.

⁹¹⁹ **Молла Насреддин**, перевод с персидского Н. Османова, Академия Наук СССР, Институт востоковедения, Москва, изд. «Наука», 1970 (-207 с.), с. 78. **Проделки хитрецов**, Мифы, сказки, басни и анекдоты о прославленных хитрецах, мудрецах и шутниках мирового фольклора. Составление, вступительная статья и общая редакция текстов Г. Л. Пермякова, Москва, изд. «Наука», 1977 (-560 с.), с. 373, 374.

⁹²⁰ **От Ахикара до Джано**, перевод с сирийского, составление и комментарии А. Белова и Л. Вильскера, редакция и предисловие чл.-кор. АН СССР Н.В. Пигулевской, Ленинград, Гос. издательство Художественной литературы, 1960 (-416 с.), с. 260-262. **Истребитель колючек**. Сказки, легенды и притчи современных ассирийцев. Составление, перевод с ассирийского и европейских языков К. П. Матвеева (Бар-Маттая), Москва, Главная редакция восточной литературы издательства «Наука», 1974 (-384 с.), с. 50, 51.

ըուց էին ծանոթ հայերին: Այդ է վկայում նաև **Միմենոն դպիր Լեհացին**: Նա Երուսաղեմից Լվով վերադարձի ճանապարհին Կ. Պոլիս հասնելուց (ըստ Հ. Ն. Ակինյանի՝ 1618 թ. մայիս-հունիսին⁹²¹) առաջ իր այցելած քաղաքների հիշարժան վայրերի շարքում հիշատակում է նաև **Նասրեղինի գերեզմանը**. «Անտի գնացար ԿՕՆԻԱ: Անտի ԱԽՇԱՐ, ԵՆԿԻՇԱՐ, որ եւ անդ կան Հայք սակաւ. անդ տեսաք զկօն Նասրատինու, վրան քէմեր շինած. եւ բազում ծիծաղեցաք»⁹²² («Այնտեղից գնացինք Կոնիա: Այդտեղից՝ Ախշար, Ենկիշար, որտեղ նույնպես հայերը սակավ են: Այնտեղ տեսանք Նասրատինի կողը, վրան գոտի պատկերած, և շատ ծիծաղեցինք»⁹²³):

Պարսկական տարբերակին մերօրյա հայ ընթերցողը ծանոթ է նաև **Խոջա Նասրեղինի** մասին 23 ժողովուրդների զվարճապատումներ ներկայացնող «Քսաներեք Նասրեղին» (1984)⁹²⁴ ժողովածուից, որի թարգմանիչը գրող, բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գևորգ Հայրյան** է (1913, Սյունիք, գ. Ծավ–1999, Երևան): Նա եղել է Մոսկվայի «Պրավդա» թերթի սեփական թղթակիցը Հայաստանում, ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար, Կինոյի պետական կոմիտեի նախագահ և այլն:

Ցանկանում ենք անդրադառնալ 1069 երգիծական գրույցներ պարունակող այս ստվարածավալ ժողովածուի միայն «**Գլուխ կա՛ր արդյոք**»⁹²⁵ մանրապատումին, քանի որ թարգմանական վրիպումի պատճառով ընթերցողը կարող է կարծել, որ պարսկերեն տարբերակն այդպիսին է: Գրքում կարդում ենք. «Նասրեղինի բարեկամը չէր ուզում բաց թողնել որսը, գլուխն առաջ պարզած մտավ որջը և երկար կանգնած մնաց այնտեղ: Նասրեղինը, տեսնելով, որ դուրս չի գալիս, մոտեցավ և ոտքերից բռնած դուրս քաշեց նրան»⁹²⁶: Անշուշտ, տափաստանում գայլի որջն այդքան բարձր չէր կարող լինել, որ որսորդը, այն էլ առանց գլխի, կանգնեմնար: Հասկանալի է, որ մարդուն կանգնած վիճակով հնարավոր չէ ոտքերից բռնած դուրս քաշել: Ինչևէ, ռուսերեն. «Приятель... полез головой вперед в логово и долго торчал так»⁹²⁷ նախադասությունը, կարծում ենք՝ պետք էր թարգմանել «Բարեկամը գլուխն առաջ սողոսկեց որջը և այդպես երկար մնաց», քանի որ

⁹²¹ **Միմենոն դպրի Լեհացոյ** Ուղեգրություն, տարեգրություն եւ յիշատակարանք, ուսումնասիրեց եւ հրատարակեց **Հ. Ներսէս Վ. Ակինեան**, Մխիթարեան ուխտէ, Վիեննա, 1936, էջ ԻԴ:

⁹²² **Միմենոն դպրի Լեհացոյ** Ուղեգրություն, 1936, էջ 333:

⁹²³ **Միմենոն Լեհացի**, Ուղեգրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Արշակ Մադոյանի, Երևան, «Նաիրի» հրատ., 1997, էջ 189:

⁹²⁴ **Քսաներեք Նասրեղին**, ժողովածու, ռուսերենից թարգմանեց **Գևորգ Հայրյանը**, առաջաբանը՝ **Ա. Ղանալանյանի**, Երևան, «Հայաստան» հրատ., 1984 (–496 էջ):

⁹²⁵ **Քսաներեք Նասրեղին**, ժողովածու, 1984, էջ 248, 249:

⁹²⁶ **Քսաներեք Նասրեղին**, ժողովածու, 1984, էջ 249:

⁹²⁷ **Молла Насреддин**, перевод с персидского Н. Османова, с. 78.

«полезать» նշանակում է նաև «սողոսկել, խցկվել»⁹²⁸, իսկ «торчать» ոչ միայն «տնկվել, ցցվել», այլև՝ «վեր ընկած լինել, միշտ գտնվել, գտնվել»⁹²⁹ իմաստն ունի:

20 հազար օրինակ հրատարակված այս գիրքը երկու տարի անց՝ 1986 թ., վերահրատարակվել է **30 հազար** տպաքանակով՝ վերը նշված թարգմանական անհամապատասխանություններն էլ հետը: Համենայն դեպս, զվարճապատումին գրիչ դիպել էր, «Գլուխ կար արդյոք» վերնագիրը դարձել էր «Գլուխը կար» (№ 41/1), իսկ վերջին նախադասությունն ավարտվում էր ոչ թե «գլուխը վրան էր» հարցով, այլ՝ «գլուխը կար»⁹³⁰:

Ասորական տարբերակը նույնպես ռուսերենից է թարգմանվել: Նրա հերոսները թիարցիներ են: Ինչպես կարդում ենք ռուսերեն գրքում. «Цельный цикл произведений сирийского фольклора посвящен жителям селения Тиари, прославившимся своей непроходимой глупостью»⁹³¹ («Ասորական բանահյուսության մի ամբողջ շարք պատմվածքներ ու հեքիաթներ նվիրված են Թիարի գյուղի բնակիչներին, որոնք հռչակված են իրենց անհուսալի տխմարությամբ»⁹³²):

Թիարցիներ էին կոչվում Հաքյարիի (Хакяри) վիլայեթի Թիարիի (Թիյարի) ասորական մելիքության բնակիչները⁹³³: Համաձայն **Ա-Դօ-ի**՝ Վանի վիլայեթը բաժանված էր երկու գավառի՝ սանջակի. «դրանք են՝ Վանի և Հեքեարիի սանջակները»⁹³⁴, «Հեքեարիի սանջակն առաջ կազմում էր առանձին վիլայեթ. շատ քարտեզներում մինչև այժմ էլ Հեքեարին առաջ է բերված իբրև ջոկ վիլայեթ»⁹³⁵. դրա միացումը Վանի վիլայեթին տեղի ունեցավ 1876 թին, որոշ քաղաքական հաշիւներով...»⁹³⁶:

Նշանավոր ազգագրագետ և բանահավաք **Երվանդ Լալայանը** Վասպուրականին նվիրված իր աշխատության մեջ առանձին գլուխ⁹³⁷ է հատկացրել նահանգի ասորիներին. «Լեռնական կիսանկախ ասորիները բաժանում են հետևեալ եօթ աշիրէթների կամ տոհմերի՝ Վերին Թիարի, Ներքին Թիարի, Թխումի, Թալի, Բա-

⁹²⁸ **Ռուս-հայերեն բառարան**, 1968, էջ 832:

⁹²⁹ **Ռուս-հայերեն բառարան**, 1968, էջ 1238:

⁹³⁰ **Քսաներեք Նասրեդին**, ժողովածու, ռուսերենից թարգմանեց **Գևորգ Հայրյանը**, առաջաբանը՝ **Ա. Ղանալանյանի**, Երևան, «Հայաստան» հրատ., 1986 (– 512 էջ), էջ 257:

⁹³¹ **От Ахикара до Джано**, 1960, с. 257.

⁹³² **Խիկար Իմաստունից մինչև Ջանոն**, ռուսերենից թարգմանեց **Հրանտ Աղասարյանը**, Երևան, «Հայաստան» հրատ., 1990 (– 480 էջ), էջ 287:

⁹³³ **Истребитель колючек**, 1974, с. 372.

⁹³⁴ **Ա-Դօ**, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները: Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաական և տնտեսական դրութեան, Երեւան, տպարան «Կուլտուրա», 1912 (– VIII+ 408 էջ), էջ 7:

⁹³⁵ Տե՛ս Ռուսաց Շտաբի քարտեզը, հրատարակված 1902 թին (ծանոթագր. Ա-Դօ-ի):

⁹³⁶ **Ա-Դօ**, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, էջ 9:

⁹³⁷ **Ե. Լալայան**, Վասպուրականի ասորիները, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1913, գիրք XXIV, № 1, էջ 181–232:

գի, Ջիլուի (ա. Ջարանի, բ. Ջէէրի) և Դէզի: Իւրաքանչիւր տոհմ կենտրոնացած է մի որոշ երկրի վրայ, որ կրում է տոհմի անունը, կազմում է մի քանի գիւղ, ունի ընդհանուր արօտատեղի, ձմերանոց, անտառ, և վարելահող. վերջինս արդէն ընդհանուր սեպհականութիւնից անցել է մասնաւոր սեպհականութեան»⁹³⁸:

Ե. Լալայանը հատ-հատ անդրադառնում է ասորիների 7 մելիքություններին՝ Ջելուի Ջարանիշի, Ջիրի, Վերին Թիարի, Ներքին Թիարի, Թխումի, Բազի և Թալի⁹³⁹:

Թիարցիների մասին զվարճապատումի պատճառով, հասկանալի է, որ մեզ հետաքրքրում են Վերին Թիարի և Ներքին Թիարի մելիքությունները, որոնք թեև ապավինել էին լեռների պաշտպանությանը, բայց երբեմն ենթարկվում էին քրդական արյունոտուտ աշիրերների հարձակումներին: Այդպիսի ասպատակություններից մեկի ժամանակ Վերին Թիարի մելիք Սմայիլը, երեք օր քաջաբար կռվելով, ապաստանել է անմատչելի լեռներում: Քուրդ Բադիր-խան բեյը երդվելով, որ վնաս չի տա, նրան համոզել է իջնել բանակցելու: Նրանք աղքատի մոտ նստած երկար խոսել են, վերջը Բադիր-խան բեյը մելիք Սմայիլին առաջարկել է մահմեդականություն ընդունել, խոստանալով նրան նվիրել այն ամենը, ինչ կցանկանա: Մելիք Սմայիլն էլ հակադարձել է, թե դու քրիստոնեություն ընդունիր՝ ես քեզ կտամ ինչ ցանկանաս: Բադիր-խան բեյն իր ծառաներին նշան է արել և նրանք տեղնուտեղը սպանել են մելիքին⁹⁴⁰:

Մինչև զվարճապատումին անդրադառնալը՝ **Երվանդ Լալայանի** օգնությամբ համառոտ ներկայացնենք թե ինչպիսի բնական միջավայրում են ապրել և իրենց բանավոր պատմությունները հյուսել ասորիները. «Աշունն այստեղ սքանչելի է, մանաւանդ հոկտեմբեր ամիսը և նոյեմբերի կէսը, ձմեռը սաստիկ ցուրտ. յաճախ երկու մետրից աւելի բարձրութեան ձիւն է գալիս, և Թխումում, Թիարում, Բազում, ուր 35–40 աստիճանի թեքութիւն է տիրում, 3–4 ամիսների ընթացքում հաղորդակցութիւնը բոլորովին ընդհատում է ոչ միայն գիւղերի մէջ, այլ և դէկտեմբերից մինչև մարտ ամիսը նոյնիսկ միևնոյն գիւղի 100–150 քայլ հեռաւորութեան վրայ գտնուած տների միջև: Գարունն սկսում է անձրևներով, և հազիւ մայիսին պարզում են եղանակները...»⁹⁴¹:

Ահա, այսպիսի լեռներով և մահմեդական քրդերի արյունարբոյ ցեղերով շրջապատված, խստաշունչ ձմեռ և անձրևոտ գարուն ունեցող ներամկոփ երկրամասում է պատմվել «**Թե ինչպես էին թիարցիներն արև փնտրում**» ժողովրդական մանրավեպը:

⁹³⁸ Ե. Լալան, Վասպուրականի ասորիները, էջ 194:

⁹³⁹ Ե. Լալան, Վասպուրականի ասորիները, էջ 200–213:

⁹⁴⁰ Ե. Լալայան, Վասպուրականի ասորիները, էջ 206:

⁹⁴¹ Ե. Լալան, Վասպուրականի ասորիները, էջ 182:

Մի օր խիստ մշուշի պատճառով արևը չի երևում: Թիարցիները մտածում են՝ արևին մի բան է պատահել, պետք է գնալ, նրան փրկել: Նրանք սարուձոր են ընկնում, չեն գտնում, վերջապես, թավ անտառում քարանձավի ներսը նայելով՝ մի առյուծ են տեսնում:

Ինչպես հայտնի է, ըստ Արևելքի ժողովուրդների՝ առյուծը արևի մարմնացումն ու խորհրդանիշն է:

Թիարցիներն ուրախանում են, որ արևին գտան: Առյուծն էլ, մարդկանց տեսնելով, մոնչում է և հարձակվում, նրանցից մեկի գլուխն է պոկում ու փախչում:

Գյուղացիները կանչում են այդ մարդու կնոջը, հարցնում՝ քո ամուսնու գլուխը չկա, հո տանը չի թողել: Կինը տուն է գնում, փնտրում, մի քանի փունջ մազ է գտնում, գալիս, ասում է, որ գլխի մազերը գտել է, ուրեմն գլուխն էլ տանը պիտի լինի:

Թիարցիներն իրենց անգլուխ համազոտացուն են դիմում, թե՛ վեր կաց, գնա գլխիդ հետևից, բայց տեսնելով, որ վեր չի կենում, ասում են՝ թող մնա, եթե ուզի, ինքը կգա, և վերադառնում են գյուղ:

Շուտով առյուծը հետ է գալիս և ուտում է այդ խեղճ մարդուն:

Երբ անձրևի կտրվելուց հետո արևը երևում է, թիարցիներն իրար ասում են՝ լավ է՝ արևին գտանք, քարանձավից դուրս քշեցինք:

Ցավոք, ասորական զվարճապատումի հայերեն թարգմանությունը զերծ չէ թերություններից, որոնցից նշենք մեկ-երկուսը: Արևին փնտրելու մասին. «*Может быть, думали они, удастся его найти*», թարգմ.՝ «Գուցե հաջողվի **դրան** գտնել, — մտածում էին նրանք...»: Անգլուխ համազոտացուն թողնել, հեռանալու մասին. «*Они покинули его и направились домой*», թարգմ.՝ «Նրանք թողեցին **դրան** և ճանապարհվեցին դեպի տուն»: Եվս մեկ օրինակ. «*Лев зарычал*», թարգմ.՝ «Առյուծը ռոնաց»: Կարծում ենք՝ բոլորը գիտեն, որ առյուծները մոնչում են («*зарычать – մոնչալ*»)՝⁹⁴² ռոնում են գայլերն ու շները:

Ի տարբերություն թուրքականի և պարսկականի՝ ասորական պատումը զգալի ընդհանրություններ ունի հայկական փոփոխականների հետ, որոնցում նույնպես պարզամիտ գյուղացիները մռախլապատ եղանակի պատճառով «կորցնում են» արևին և գնում են փնտրելու, օրինակ՝ «**Գերեն մրոքը**» (Դարադադ, №10), «**Հաթերքին իրեք դերը**» (Արցախ, №11), «**Ռամիսի տերտերը**» (Նախիջևան, №17), «**Շամբցիք ու արելը**» (Նախիջևան, №18):

Բայց, թերևս, ասորական բանահյուսությունից մեզ հայտնի այս միակ օրինակի հիմնական տարբերությունը քրիստոնյա հայերից գրառված նմանատիպ զվարճալի պատումներից, **քահանայի կերպարի բացակայությունն է**: Գուցե պատասխանը փորձենք գտնել Երվանդ Լալայանի այս տողերում. «Ուշագրաւ է, որ սրանց մէջ ևս գրագէտները տիրացու են կոչում, որովհետև ամեն մի գրագէտ հաճոյքով տիրացութիւն է անում, և տիրացու կոչումը մի տեսակ պատուանուն է կազմում: Ջելուի երիտասարդ մելիքը, որ գրագէտ է, և ամեն առաւօտ

⁹⁴² Ռուս-հայերեն բառարան, 1968, էջ 291:

երեկոյ եկեղեցում տիրացութիւն է անում, իւր հասցէն ինձ թելադրելիս ասաց. Ջելուի մելիք՝ տիրացու Ջիբրայիլ. և երբ ես կրկնեցի առանց տիրացու բառի, նա ինձ հպարտութեամբ նկատեց, թէ պէտք է ատեցանէ տիրացու բառը, որովհետև ինքը միւս մելիքների պէս չէ, այլ գրագէտ է»⁹⁴³:

Հավանաբար մշտապես բռնի կրոնափոխության վտանգի տակ ապրող, «հազիւ 1 տոկոս»⁹⁴⁴ գրագիտություն ունեցող ասորիների համայնքներում, որտեղ գրեկ-կարդալ իմացող մելիքները պատիվ էին համարում տիրացու, այսինքն՝ տերտերացու, եկեղեցական ստորին պաշտոնյա՝ դպիր⁹⁴⁵ լինել, բանասացները խուսափել են իրենց միանձնյա ղեկավարող մելիք-քահանայացուների մասին զավեշտալի գրույցներ պատմել:

ԵԶՐԱՏԱՆԳՈՒՄ

Ընթերցողներն, անշուշտ, նկատել են, որ քրիստոնյա հայերից գրատված 30 երգիծական մանրապատումներից 29-ի դժբախտ հերոսը **քահանա** է, և միայն Կեսարիայի թուրքախոս հայերի պատմած «**Խելօք Դաւիթ**»-ում է, որ ջրհորում գլխից զրկվողը թուրքախոսների մեջ հայախոս է և մորուք ունի, ինչից ենթադրում ենք, որ նախնական տարբերակում նա ևս **հոգևորական** է եղել:

Մահմեդական համշենահայերի 7 սյուժեների հերոսների շարքում չկա քահանա, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է նրանով, որ XVIII դարում բռնի իսլամացվելով՝ նրանք չեն ցանկացել երգիծապատումի գործող անձ դարձնել հայ եկեղեցականներին, մանավանդ որ համշենցիներից շատերը, առերես կրոնափոխվելով, մինչև XIX դարի կեսերը, որոշ վայրերում՝ նույնիսկ մինչև XX դարի սկիզբը, պահպանում էին քրիստոնեական ավանդույթները:

Որ Համշենի գավառում («Участок Хемшин» = Ուչաստոկ Խտմշին) 1866 թ. դեռևս գործում էր 1 հայկական եկեղեցի («Армяно-Григорианская церковь») և կար քրիստոնեությունը պաշտոնապես պահպանած 22 տուն հայ և հույն բնակչություն, տեղեկացնում է Թիֆլիսում հրատարակվող «**Кавказский календарь на 1867 годъ**» («1867 թվականի Կովկասյան օրացույց») տարեգիրքը⁹⁴⁶:

Յոթ տարի անց՝ 1873 թ., Կայսերական ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժնի հանդեսը ևս անդրադառնում է Տրապիզոնի նահանգի 11 գավառներին, որոնցից Համշենը՝ **Էմշինը** («**округ Эмшин**») ուներ

⁹⁴³ Ե. Լալայեան, Վասպուրականի ասորիները, էջ 189:

⁹⁴⁴ Ե. Լալայեան, Վասպուրականի ասորիները, էջ 189:

⁹⁴⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980 (–836 էջ), էջ 503:

⁹⁴⁶ Заметка о Лазистане (в Трапезундском пашалыке), «Кавказский календарь на 1867 годъ», изданный Главнымъ управлениемъ Наместника Кавказского, XXII годъ, Тифлисъ,

1548 տուն (6322 մահմեդական բնակիչ), մեկ հայկական եկեղեցի, 92 տուն՝ 82 հույն և հայ բնակիչ: Նշենք, որ հողվածը որոշ փոփոխություններով նախորդի վերապատմությունն է, թվերն արտագրված են «**Кавказский календарь на 1867 годъ**» տարեգրքից, նորություն է հայերի և հույների թիվը՝ 82 հոգի, նաև նրանց տների քանակը՝ 22-ի փոխարեն՝ 92, ինչը, հասկանալի է՝ տպագրական վրիպակ է, քանի որ 92 տան համար 82 բնակիչը չափազանց քիչ է: Հետաքրքիր փոփոխություն է և այն, որ նախորդ հողվածում օգտագործված էին «**Хемшин**» տեղանունը փոխարինվել է Էմշին «**Эмшин**» տարբերակով⁹⁴⁷:

Թե ո՞ր գյուղում էր այդ հայկական եկեղեցին, պարզում ենք **Պ. Թումայանցի** 1870 թ. գրած հողվածն ընթերցելով. «Աթենայէն 12 ժամ հեռի լերանց հարաւային կողմն է ամուր դիրքով Համշէն հայախօս մեծ գաւառը, ուր հինա հազիւ քսան տուն հայ կգտնուի քահանայով մը Էլէհովիտ գիւղի մէջ»⁹⁴⁸: Էլէհովիտը նշանավոր **Եղնովիտ** գյուղի անվան տարբերակներից է:

Թուրքական պաշտոնական փաստաթղթերում՝ Տրապիզոնի վիլայեթի օսմաններն վիճակագրական տարեգրքերում՝ **սալնամներում** ևս Լազիստանի սանջակի Համշենի գյուղախմբում («Hemşin nahiyesi» = Հեմշին նահիյեսի) կամ գավառում գրանցված են քրիստոնյա հայեր, օրինակ՝ 1869 թ. 24 տուն 88 հայ («ermeni») տղամարդ («zükür»)⁹⁴⁹, ուստի Կայսերական ռուսական աշխարհագրական ընկերության հանդեսում տպագրված հայ և հույն բնակչության թիվը՝ 82, կարծում ենք, նույնպես սխալ է: Այդ և հաջորդ տարիների վիճակագրական աղյուսակներում Համշենում ընդհանրապես քրիստոնյա հույներ չեն նշված:

Տրապիզոնի նահանգի 1869 թ. **սալնամում** Համշենի նահիյետում արձանագրված են նաև մեկ եկեղեցի, երկու հոգևորական, երեք հայկական դպրոց՝ 29 աշակերտով⁹⁵⁰: Պետք է ենթադրել, որ Եղնովիտից բացի, քրիստոնյա հայեր կային ևս երկու գյուղում: Հաջորդ տարվանից թեև տների թիվը մեկով կրճատվում է, բայց զարմանալիորեն հայերի քանակը մեծանում է՝ 1870⁹⁵¹, 1871⁹⁵²,

Въ типографии Главного управления, 1866 (–570 с.), с. 403.

⁹⁴⁷ Заметка о Батуме, «Известия Кавказского отдела Императорского Русского географического общества», Тифлис, 1873, т. II, № 3, с. III.

⁹⁴⁸ **Պ. Թումայանց**, Պոնտոսի հայերը. աշխարհագրական եւ քաղաքական վիճակ Տրապիզոնի, «**Լումայ**», հանդես, Տիֆլիս, 1899, գիրք Բ, յուլիս, էջ 156:

⁹⁴⁹ **Trabzon Vilayeti Salnamesi 1869**, Cilt 1, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, Trabzon İli ve İlçeleri Eğitim, Kültür ve Sosyal Yardımlaşma Vakfı Yayınları, 1993 (–222 s.), s. 144, 145

⁹⁵⁰ **Trabzon Vilayeti Salnamesi 1869**, Cilt 1, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, Trabzon İli ve İlçeleri Eğitim, Kültür ve Sosyal Yardımlaşma Vakfı Yayınları, 1993, s. 154, 155.

⁹⁵¹ **Trabzon Vilayeti Salnamesi 1870**, Cilt 2, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, Trabzon İli ve İlçeleri Eğitim, Kültür ve Sosyal Yardımlaşma Vakfı Yayınları, 1993 (–315 s.), s. 184. Լատինատառի վերածված տարբերակում **հայերի թիվը** սխալմամբ տպագրվել է աղյուսակի մեկ տող ցածր հորիզոնականում (էջ 185), ուստի հղել ենք միայն օսմաներեն արաբատառ բնագրի էջը:

⁹⁵² **Trabzon Vilayeti Salnamesi 1871**, Cilt 3, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, Trabzon İli

1872⁹⁵³, 1873⁹⁵⁴, 1874⁹⁵⁵, 1875⁹⁵⁶ թթ.՝ 23 տուն և 104 հայ տղամարդ: Ինչպես տեսնում ենք՝ սախամեներում արական սեռի հայերի թիվը 6 տարի ներկայացվել է բացարձակապես անփոփոխ, ինչը կասկածներ է առաջացնում, բայց, ցավոք, տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ այլ աղբյուրներ չունենք:

Ընդամենը երեք տարի անց՝ 1878 թ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին, Համշենի գավառում հայ քրիստոնյա տղամարդկանց թիվը քառակի նվազել է՝ իջնելով 22-ի⁹⁵⁷: Պատճառը մեզ հայտնի չէ, գուցե ռազմական թատերաբեմում հայտնվելու վտանգից դրդված՝ հայերի մեծ մասը արտագաղթել է: Չի բացառվում, որ այդ գերլարված օրերին նրանք սպանվել կամ բռնի կրոնափոխվել են:

Լևոն Սարգսյանցը, որին անդրադարձել ենք «Նախիջևանյան տարբերակները» գլխում, 1888 թվականին ճանապարհորդելով Արևմտյան Հայաստանում, գրում է. «Մի քանի կողմերում, ուր հայերը իսպառ մահմեդականացել են, օրինակ՝ Բիզե սանջակի (Լազտանի) Համամաշէն նահիյեում, դեռ մնում են մի քանի տասնեակ հայ-քրիստոնեաներ: Այդ կողմի մահմեդականացածների կանայք, ինչպես ինձ պատմեց ձիապան Յովհաննեսը, դեռ պահպանել են մի քանի քրիստոնեական սովորություններ, օրինակ՝ խնորի վրայ խաչակնքելը: Այդ մահմեդականացածներից շատերի տներում պահպանում են, իբրև իրանց պապելից մնացած սրբություններ, հին հայոց գրքեր ու ձեռագիրներ»⁹⁵⁸:

ve İlçeleri Eğitim, Kültür ve Sosyal Yardımlaşma Vakfı Yayınları, 1993 (–347 s.), s. 200. Լատինատառի վերածված տարբերակում **հայերի տների թիվը** սխալմամբ տպագրվել է աղյուսակի մեկ տող բարձր հորիզոնականում (էջ 201), ուստի հղել ենք միայն օսմաներեն արաբատառ բնագրի էջը:

⁹⁵³ **Trabzon Vilayeti Salnamesi 1872**, Cilt 4, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, Trabzon İli ve İlçeleri Eğitim, Kültür ve Sosyal Yardımlaşma Vakfı Yayınları, 1994 (–357 s.), s. 200. Լատինատառի վերածված տարբերակում **հայերի թիվը** սխալմամբ տպագրվել է աղյուսակի մեկ տող ցածր հորիզոնականում (էջ 201), ուստի հղել ենք միայն օսմաներեն արաբատառ բնագրի էջը:

⁹⁵⁴ **Trabzon Vilayeti Salnamesi 1873**, Cilt 5, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, Trabzon İli ve İlçeleri Eğitim, Kültür ve Sosyal Yardımlaşma Vakfı Yayınları, 1995 (–275 s.), s. 176, 177.

⁹⁵⁵ **Trabzon Vilayeti Salnamesi 1874**, Cilt 6, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, Trabzon İli ve İlçeleri Eğitim, Kültür ve Sosyal Yardımlaşma Vakfı Yayınları, 1995 (–263 s.), s. 182. Լատինատառի վերածված տարբերակում **հայերի տների թիվը** սխալմամբ տպագրվել է աղյուսակի մեկ տող բարձր հորիզոնականում (էջ 183), ուստի հղել ենք միայն օսմաներեն արաբատառ բնագրի էջը:

⁹⁵⁶ **Trabzon Vilayeti Salnamesi 1875**, Cilt 7, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, Trabzon İli ve İlçeleri Eğitim, Kültür ve Sosyal Yardımlaşma Vakfı Yayınları, 1995 (–349 s.), s. 258. Լատինատառի վերածված տարբերակում **հայերի տների թիվը** սխալմամբ տպագրվել է աղյուսակի մեկ տող բարձր հորիզոնականում (էջ 259), ուստի հղել ենք միայն օսմաներեն արաբատառ բնագրի էջը:

⁹⁵⁷ **Trabzon Vilayeti Salnamesi 1878**, Cilt 10, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, Trabzon İli ve İlçeleri Eğitim, Kültür ve Sosyal Yardımlaşma Vakfı Yayınları, 1999 (–351 s.), s. 240, 241.

⁹⁵⁸ Լևոն Սարգսյանց, Այց Թիւրքաց Հայաստանին, էջ 234:

Հայկական փրկված ձեռագրերի մասին **Լևոն Սարգսյանցից** բացի, «**Արարատ**» ամսագրում 1895թ. գրում է նաև **Սարգիս Հայկունի**ն. «Ընկուզի կոճղ հաւաքելու համար այս երկիր մտնող հայք կը հաւատացնեն՝ թէ բազմաթիւ տնէրու մէջ տեսած են եկեղեցական հին անօթներ, որք իբրեւ նուիրական կամ սրբութիւն մի պահած են, այլ եւ ուրիշ հնութիւններ, ձեռագիրներ կ'ըն. որ ինձ շատ հաւատալի է, նորա համար որ հաւատարիմ անձերէ լսած եմ»⁹⁵⁹:

Համշենի կրօնափոխ հայերի մասին 1893թ. Նովոչերկասկից⁹⁶⁰ «**Նոր-Դար**» թերթին ուղարկած իր հոդվածում շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում «**Պիրո**» գրչանունով հանդես եկած, ծնունդով Նախիջևանից, 24-ամյա լրագրող **Արշակ Եղիգարյանը**⁹⁶¹: Ըստ նրա՝ Նովոչերկասկում Սալմաստից, Մուշից, Վանից, Մալաթիայից և Նախիջևանից արտագնա աշխատողներ կան: Նրանց մէջ քիչ չեն նաև հույները, ասորիները և տաճիկները⁹⁶²: Բայց, պարզվում է, որ վերջինները Համշենի գավառից եկած կրօնափոխ հայեր են. «Նովոչերկասկից գրած մեր մէկ թղթակցութեան մէջ («Նոր-Դար» №152) յիշելով տեղիս պանդուխտների որ ազգութեան պատկանելը, մենք ասել էինք, որ այստեղ կան և տաճիկներ. բայց այդ սխալ էր և մեծ սխալ մեր կողմից, ուստի ներկայ յօդուածով ուղղելով մեր այդ սխալը, ուզում ենք մի երկու խօսք ասել դրանց մասին:

Այստեղի տաճիկներն իսկապէս տաճիկներ չեն, այլ տաճկացած հայեր»⁹⁶³:

Իր «**Տաճկացած հայեր**» հոդվածում **Արշակ Եղիգարյանը** նրանցից քաղած բացառիկ արժեքավոր մանրամասներ է հաղորդում, որոնք առնչվում են կրօնափոխ համշենահայերին, ուստի ներկայացնում ենք ոչ մեծ կրճատումներով. «Այժմ Ռուսիայի շատ քաղաքներում կան դոյնօրինակ հայեր, որոնք հաց են թխում, կերակուր եփում, և հիւրանոցներ ունին. գլխատրապէս դրանք գտնուում են Ռոստովում, Թայդանում⁹⁶⁴, Նովոչերկասկում, ապա հարաւային Ռուսիայի քաղաքներում՝ Խարկովում, Օդեսայում, և Վոլգայի վրայ գտնուող քաղաքներում: Այդ իսլամն ընդունած հայերը Հեմշին գավառամասից են Երիգայի մութասարրըֆլըդից⁹⁶⁵, Տրապիզոնի վելայէթից: Հեմշինի նախկին հայերը (այժմեան

⁹⁵⁹ **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «**Արարատ**», 1895, № Ը, օգոստոս, էջ 297:

⁹⁶⁰ Դոնի Ռոստովից հյուսիս-արևմուտք գտնվող Նովոչերկասկ քաղաքը 1897թ. մարդահամարի տվյալներով ուներ 52 հազար բնակիչ:

⁹⁶¹ Արշակ Եղիգարյանը մամուլում բազմաթիվ հոդվածներ է հրատարակել Ե., Եղ., Եղիգար, Ժիրայր, Պերո, Պիրո, Սիրո (կարծում ենք՝ վերջին երեքը ռուսերեն նշանակում են գրիչ-Ս. Վ.) և այլ գրչանուններով, տես **Բախտիար Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան, էջ 141, 145, 146, 177, 359, 360, 517, 598:

⁹⁶² **Պիրո**, Նովոչերկասկ, «**Նոր-Դար**», Թիֆլիս, 1893, սեպտեմբերի 2, №152:

⁹⁶³ **Պիրո**, Տաճկացած հայեր, «**Նոր-Դար**», 1893, դեկտեմբերի 21, №227:

⁹⁶⁴ **Թայդանը** ՌԴ Ռոստովի մարզում՝ Ազովի ծովի ափին գտնվող **Տագանոգ** քաղաքի հին անունն է: 1897թ. մարդահամարի տվյալներով ուներ 51 հազարից ավելի բնակիչ:

⁹⁶⁵ **Երիգայի մութասարրըֆլըդից** – Ռիզեի գավառից:

տաճիկներ) Անի քաղաքի գաղթականներից են: Դրանք ի սկզբանե 7 տուն գաղթել են Անիից, ապա երկար տարիների ընթացքում բազմանալով կազմել են 54 գիղ, իրաքան[չ]իր գիղը 200, 100, 60, վերջապես, ասել կամ պակաս տուն բնակիչներով:

Տաճկական բռնակալության սարսափելի ժամանակներում դրանց ստիպել են ընդունել իսլամը: Սակայն չնայելով այս հանգամանքին, նրանք դեռ մինչև այժմն էլ պահպանել են մի քանի սովորություններ, տոներ, որ բուն հայկական են. օրինակ՝ Վարդավառին նրանք մատաղ են անում, գնում են ուխտ իրենց ասերակ վանքերը և եկեղեցիները: Շէյխուկ իսլամը հրամայել էր, որ նրանք՝ Հեմշինի բնակիչները՝ Վարդավառը չտօնեն, բայց նրանք ասել են, որ, եթե նրանց թնդանօթի բերանն անգամ կապելու լինեն, նրանք պետք է տօնեն: Մայրերն իրենց որդոց մինչև այժմ յունուարի 6-ին, Մկրտության տօնին, ստիպում են մտնել ջուրը և լողանալ, որովհետև այդ օրը ս. Խաչն ընկնում է ջուրը. նրանք այդ ժամանակ ասում են «մենք այժմ մեր երեսներին մտոն ունինք, ուստի և ամօթ չունինք. այդ ջուրը սրբում է ձեզ, լողացէք, մեր նախնիք միշտ այդպես են արել»:

Այո՛, մայրերն ասելի հայ են մնացել, քան թե հայրերը. հայ կինը միշտ ասելի սրբութամբ է պահպանել իր նախնիքներից իրեն ասանդած հաւատը, քան թե հայ մարդը: Նրանք մինչև այժմ պաշտում են հայ վանքերը և եկեղեցիները և եթե եկեղեցու ծառերից մի ճիղ անգամ ընկած լինի ճանապարհին, նրանք վերցնում են և առանձին տեղ դնում, որ գնացող եկողը կոխ չտայ. ասել է, որ նրանք իբրև սրբութիւն պաշտում են և եկեղեցու ծառերն անգամ. շատ մայրեր խնդրում են իրենց որդոց տանել իրենց Երուսաղեմ երկրպագութիւն տալու համար սուրբ վայրերին: Այդպիսի տաճկացած շատ հայերի հայրերը մահմեդական են, իսկ մայրերը քրիստոնեայ:

Նրանք՝ Հեմշինի գաւառամասի հայերը՝ աղջիկ չեն տալիս բուն տաճիկներին, այլ տաճկացած հայերին: Մայրենի լեզուն էլ նրանք տակաւին չեն մոռացել, և եթե յաճախ խօսում են թիւրքերէն, այն էլ կառավարութեան երկիւղից. բայց, այնուամենայնիւ, շատերը և՛ գիտեն և՛ խօսում են հայերէն:

Տաճկացած հայերի ազգանունները նոյնպէս ցոյց են տալիս նրանց հայկական ծագումը, որպէս Կոստան օղլի, Յակոբ օղլի, Մուդրուսի օղլի, Ստեփան օղլի:

...Այստեղ իսկ տաճկացած հայերից կան այնպիսիները, որոնք պատմում են, թե իրենց մայրերի կողմից քահանաների սերունդ են, նրանց ցեղից են: Կան այնպիսիներն իրենց հայրենիքում, որ մէկ եղբայրը քրիստոնեայ է, միւսը մահմեդական: ...Հեմշինի հայ կանանց անուններն էլ հայկական են»⁹⁶⁶:

1895թ. «Արարատ» ամսագրում հրատարակված «Կորած ու մոռացուած հայեր» հոդվածում **Սարգիս Հայկունին** պատմում է **Սյուրմենեի** գավառակում

⁹⁶⁶ **Պիրո**, Տաճկացած հայեր, «Նոր-Գար», Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 21, №227:

կրոնափոխ համշենահայերի հետ իր հանդիպումների մասին⁹⁶⁷. «Գտնուած են Թորոսլի գիւղն⁹⁶⁸, կարծած են թէ հայ գիւղի մի մէջ կը գտնուիւմ. մեծին ու փոքրին խօսքը հայերէն, արանց և կանանց կերպարանքը հայոյ տիպ և Տրապիզօնի հայ գիւղացոց զգեստի նման:

Հարցուցի մի ծերունու.

— Ինչո՞ւ թուրքացած էք:

Սա ջերմ մահմետական էր, խոժոր դէմքով մի առ մի պատմել սկսաւ Մահմետի հրաշագործութիւններն: Մի պառաւ կնոջ ուղղեցի այս հարցումը մի գաղտնի վայր:

— «Յիսուս Քրիստոս անելով սկսաւ ասել՝ մեռնիմ հայի հաւատին, էն է եօր ինչանք հիմի կապրինք...»:

Ծիմլակովացի մի ծերունի պատմեց, թէ իրենք քահանայի սերունդ են, «Քեշիշ օղի» կասուին, այժմ ևս իրենց տան մէջ եկեղեցական ամեն զգեստներ կան. շատ մի ճանապարհորդ հայ և երոպացի ուզած են գնել, բայց չէ ծախած, որպէս զի իրենց տան անբաղդութիւն չպատահի:

Նոյն գիւղից մի կնոջ հարցուցի. — դու թուրք ես, ինչո՞ւ մի ոսկի տուիր, եկեղեցոյ համար ատարարան գնելու:

— Հէյ կիտի հէյ, ասաց, հին էրեցնին ինցօ պետքը էրեց էին, խալվութ (գաղտնի) մեզիկի մեռոն բերէին կու, միք էլ միր տղոց քսէինք կու, իմ չիւս մօնչերուս երկուսին քսած ունիւմ էսոնք օնուշ հոմին կու, էսուր էօր քսած չունիւմ, շոն հոտ կուգայ»⁹⁶⁹:

Թրէճոր գիւղացի մի կը պատմէր..., թէ Օձթուխ գիւղի եկեղեցոյն մէջ մտեր է մի օձ և քար դարձած է, երբ քահանայն ատարարանը օձի գլխուն դրած է:

— Դուք ի՞նչ գիտէք թէ հայ էք, հարցուցի մի պառաւի:

— Մեռնիւմ քեզիկի, ասաց, ինցօ չէ, Կիրակնուտ, չորեքնուտ, ուրբթնուտ պէհինք կու, խաչին (եկեղեցի) ըխտինք կու, մում վառինք կու՞, էլ ինչ ասիւմ, հէյի էմեն ատէթ պէհինք կու»⁹⁷⁰:

Նոյն հողվածում **Սարգիս Հայկունին** Սյուրմենէի գավառակի կրոնափոխ հայերի մասին վկայում է. «...ուրեք կը գտնուին մայրեր, որք իրենց աղջկանց կասեն. — Մեռնիւմ հէյի⁹⁷¹ ատէթին, հէյի մեռօնը, պատարագը, պասը, խաչը,

⁹⁶⁷ **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «Արարատ», 1895, № Է, յուլիս, էջ 243:

⁹⁶⁸ «1867–8 թուականներուն ի Մուշ գնալու միջոցին այս գիւղէն անցայ» (ծանոթ.՝ Սարգիս Հայկունու):

⁹⁶⁹ « — Հէյ գիտի, հէյ, ասաց, — հին էրեցները ինչ լավ էրեց էին, մեզ գաղտնի մեռոն էին բերում, մենք էլ մեր երեխաներին էինք քսում, իմ չորս տղաներից երկուսին քսել են, նրանք անուշ բուրում են, որին որ չեն քսել, շան հոտ է գալիս» (թարգմ.՝ Ս. Վ.):

⁹⁷⁰ « — Մեռնեմ քեզ, — ասաց, — ինչպէս չէ, կիրակնամուտ, չորեքշաբթամուտ, ուրբթամուտ պահում ենք, եկեղեցում ուխտ ենք անում, մում ենք վառում... էլ ի՞նչ ասեմ, հայի ամեն ավանդոյթ պահում ենք» (թարգմ.՝ Ս. Վ.):

⁹⁷¹ **հէյի**–հայի (Ս.Վ.)

խունկը, մումը, խոստովանքը ու սրբութիւնը, էմեն ինչ սուրբ է, շօն ատէթ (սովորութիւն) է թուրքի ատէթը»⁹⁷²:

Ինչպէս 1910 թ. Ֆարհատն է «**Ազատամարտ**» թերթում գրել Խոփայի գավառի Ջուրբիճի գյուղից 1895 թ. Մաքարյայի նահանգ՝ **Աչմա-պաշը** գաղթած կրոնափոխ համշէնցիների մասին, նրանք ևս ջերմեռանդորեն պահպանում էին նախնիներից մնացած ձեռագիր սուրբ գրքերն ու եկեղեցական զգեստները. «Հայկական սովորոյթներու մնացորդներ, ինչպէս բոլոր ազգի **տէօսմէներուն**»⁹⁷³ մէջ, ասոնց քով ալ կան: Ինձ կը հաւաստեն թէ դեռ կը գտնուին իրենց քով ձեռագիր ատետարաններ և եկեղեցական զգեստներ գորս ջերմեռանդօրէն և աւանդաբար կը պահպանեն: Ապարդին անցան իմ ջանքերը զանոնք գտնելու: Հրաշագործ «գրքի» մը մասին, գոր փաթաթած կը պահեն եղեր, պատմութիւններ կը պատմուին»⁹⁷⁴:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Սյուրմենէի գավառակի լեռնային գյուղերից մեկում կրոնափոխ համշէնահայերի մի ընտանիքի հետ անակնկալ հանդիպման մասին է իր «**Օրերուս հետ**»⁹⁷⁵ գրքում պատմում նշանավոր վրիժառու **Միսաք Թորլաքյանը**:

Մոտակա սարուձորերում ռազմական իրավիճակի մասին տեղեկություններ հավաքելու համար Տրապիզոնի մերձական Կյուշանա գյուղում ծնված 27-ամյա Միսաք Թորլաքյանը, սյուրմենցի Արշակի հետ համշէնցի ֆիդայիների իրենց խմբին անտառում թողնելով, ռուսական զորքերի դեպի Տրապիզոն ընդհանուր հարձակման օրը՝ 1916 թ. ապրիլին 1-ին (կամ նախօրէին) գնում են մոտակա թուրքական գյուղի ծայրին՝ անտառի եզրին գտնվող մի տուն և թուրք ներկայանալով՝ հարցուփորձ անում: Շուտով պարզվում է, որ բնակիչները՝ ծեր ամուսինները, կրոնափոխ համշէնցիներ են: Անտառից կանչում են նաև մյուս ֆիդայիներին և տանտիրոջը խնդրում՝ իրենց կերակրի, որի համար կվճարեն. «Ասոր վրայ ծերունին ըսաւ իր հայերէնով.

⁹⁷² **Սարգիս Հայկունի**, Կորած ու մոռացուած հայեր, «Արարատ», 1895, № Է, յուլիս, էջ 240:

⁹⁷³ **Տէօսմէ** (dönme, դյոնմե) – կրոնափոխվելով իսլամ ընդունած անձ (Ս. Վ.):

⁹⁷⁴ **Ֆարհատ**, Մահմետական հայեր, «Ազատամարտ», թերթ, Կ. Պոլիս, 1910, օգոստոսի 18/31:

⁹⁷⁵ XX դ. առաջին կեսի պատմական իրադարձությունների մասնակից և ականատես, համշէնցի հերոս Միսաք Թորլաքյանը մեծ հետաքրքրությամբ ընթերցվող իր բացառիկ արժեքավոր հուշագրության առաջին հրատարակության «Երկու խօսքում» անկեղծորեն գրել է. «Բովանդակ կեանքիս ընթացքին խօսքի կամ գիրի հետ գործ ունենալու առիթն ալ գրեթէ ունեցած չեմ», տես **Մ. Թորլաքյան**, Օրերուս հետ, Լոս Անճէլըս, 1953, էջ 9: Զենքին ընկերացած հայ ազատամարտի նվիրյալը, տարիների հետվից հիշողությամբ վերապատմելով կրոնափոխ համշէնցի բարբառախոս ծերունու հետ 1916 թ. կայացած զրոյցը, բնականաբար, այն չէր կարող ներկայացնել բանասեր-բարբառագետի ճշգրտությամբ: Ցավոք, թե՛ գրքի առաջին (էջ 259) և թե՛ մեր ձեռքի տակ եղած երրորդ հրատարակության (տես **Մ. Թորլաքյան**, Օրերուս հետ, Գ. հրատարակութիւն, Պէյրուօ, 2001, էջ 309, 310) այդ հատվածում սպրդել են նաև տպագրական վրիպակներ, որոնք անհասկանալի են դարձնում ծերունու խոսքը, ուստի տողատակում անդրադարձել ենք դրանց, որպէսզի հետագա վերահրատարակությունների ժամանակ ուղղվեն:

— Քոնի աշխարք էկած իմ, առաջին օնքունն է միր շիմէն նիս հէյո օտք մտաւ: Օմոթ չէ՞ որ փարա առնում ծեզոնից: Երկու հատ էծ ոնիմ, էշտոմ կտրիմ:

Այդ ըսաւ ու գնաց, եւ կէս ժամ չանցած, կաթսայ մը միսը կրակին վրայ դրաւ: Ու շարունակեց խօսիլ:

— Իմ պապս էլ հէյի էր Համշէնէն էկած, էս էտրաֆի⁹⁷⁶ գեղոնը, ինչոր հին մարդիկ կոն, հէյո լիզուն պեհիսկու, շատ տուներու մէջ խաչ, Աւետորոն, շարակոն կայ, իմ պատաւս էլ խաչ մը ոնի, իրիկտնիրը պատկած ժոմուն գլխուն տակ տնէկու էրէսնէլ խաչ հոնէկու ու էմոն պարկիկու, օր մը մոռնա ու խաչը գլխուն տակ չղնէսա⁹⁷⁷ էքուն եաթաղէն հիտոնդ վիր կելլէ, էստեղ խաչի տեղ մը կայ, էշտայ հուն աղօթք ընէ պիտի օր ցաիիրը թեթեւոն: Ամա միր ենիմէտուն⁹⁷⁸ քով հէյոթին մնացած չէ ինչոր էնիք էնոց մէ խալուտ պեհիկկու: Իշալլահ Աստուած կուտայ, ու էսօրուրնէ էնդին միր պապերուն թողած սուրբ լիզուն խորաթիք կու»⁹⁷⁹ (« — Քանի աշխարհ եմ եկել, առաջին անգամն է՝ մեր շեմից ներս հայի ոտք մտավ: Ամոթ չէ՞, որ փող վերցնեմ ձեզանից: Երկու հատ այծ ոնեմ, գնամ մորթեմ»):

« — Իմ պապն էլ Համշէնից էկած հայ էր, այս շրջակա գյուղերում, ինչ որ հին մարդիկ կան, հայի լեզուն պահում են, շատ տներում Խաչ, Ավետարան, Շարական կա, իմ պատավն էլ մի խաչ ոնի, երեկոները պատկած ժամանակ գլխի տակ է դնում, երեսին էլ խաչ է հանում ու այդպես է պատկում, մի օր մոռնա ու խաչը գլխի տակ որ չղնի, առավոտյան անկողնուց հիվանդ վեր կկենա, այստեղ եկեղեցու մի տեղ կա⁹⁸⁰, պիտի գնա այնտեղ աղոթք անի, որ ցավերը թեթևանան: Բայց մեր երիտասարդների մոտ հայություն չի մնացել, ինչ որ անում ենք, նրանցից գաղտնի ենք պահում: Իշալլահ, Աստված կտա ու այսօրվանից հետո⁹⁸¹ մեր պապերի թողած սուրբ լեզվով կխոսենք»):

«**Кавказское слово**» թերթի թղթակցի զրուցակիցը՝ Հովսէպի Էֆենդի Միքայելյանը ևս, պատմում է եկեղեցու հանդէպ կրոնափոխ համշէնցիների ակնածանքի մասին. «Недалеко от Хопы, в одном селении есть развалины христианского храма. Теперь эти развалины эмшены называют «Хачадур» и очень чтут; не

⁹⁷⁶ Գրքի 2001թ. հրատ. մէջ՝ «էտրաճի» – տպագրական վրիպակ է, թուրք.՝ «etraf» նշանակում է «շրջակայք, շրջակա», «էտրաֆի» – շրջակայքի, շրջակա:

⁹⁷⁷ Կարծում ենք՝ տպագրական վրիպակ է, գրքի 2001թ. հրատ.՝ «չղնէս», պետք է լինի «չղնէ նէ» – եթէ չղնի:

⁹⁷⁸ «ենիմէտուն» – տպագրական վրիպակ է, 2001թ. հրատ.՝ «ենիեթմենուն» (թուրք.՝ «yeni yetme» – չափահաս, երիտասարդ) – երիտասարդների:

⁹⁷⁹ **Մ. Թորլաքեան**, Օրերուս հետ, Լոս Անճելլոս, Հորիզոն տպարան, 1953 (–568 էջ), էջ 259: **Մ. Թորլաքեան**, Օրերուս հետ, Գ. հրատարակութիւն, Պէյրոթ, «Համազգային»ի Վահէ Սէթեան տպարան, 2001 (–624 էջ), էջ 309, 310: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունն ու կետադրությունը:

⁹⁸⁰ Քանի որ չի ասում «խաչ կա», այսինքն՝ եկեղեցի կա, պետք է ենթադրել, որ խոսքը մի վայրի մասին է, որտեղ նախկինում եկեղեցի է եղել, որից որոշ ավերակներ են մնացել:

⁹⁸¹ Բնագրում՝ «էսօրուրնէ էնդին», բառացի՝ այսօրվանից այն կողմ:

трогают у развалин траву, не пускают туда скот и т.д.⁹⁸²) («խոփայից ոչ հեռու մի գյուղում քրիստոնեական տաճարի ավերակներ կան: Այժմ այդ ավերակներն էմ- շեններն անվանում են «**Խաչադուռ**»⁹⁸³ և շատ են հարգում, ավերակների մոտ խոտին ձեռք չեն տալիս, չեն թողնում այստեղ անասուններին և այլն»):

Հովսեփի էֆենդի Միքայելյանը ևս շեշտում է խմորի վրա խաչակնքելու խո- փացի համշենցիների սովորույթը. «Что эмшены приняли ислам не очень давно – об этом говорят сохранившиеся среди них христианские обычаи и безусловное почтение к религии Христа. Так, их женщины крестят тесто, некоторые старики и старухи до сих пор соблюдают христианские посты и даже творят христианские молитвы»⁹⁸⁴ («Որ էմշեններն իսլամն ընդունել են ոչ այնքան վաղուց, այդ մասին վկայում են նրանց մեջ պահպանված քրիստոնեական ավանդույթները և Քրիս- տոսի կրոնի հանդեպ անվերապահ հարգանքը: Այսպես, նրանց կանայք խմորը խաչակնքում են, որոշ ծերեր և պառավներ մինչև հիմա պահում են քրիստոնեա- կան պահքերը և նույնիսկ քրիստոնեական աղոթքներ են անում»):

Ի դեպ, Ղրղզստանի Կզըլ-Կիյա քաղաքում Դուրսուն Քարաբաշաքովը (ծնվ. 1905 թ., գ. Գոնիո) 1984 թ. պատմեց, որ ինքը լավ է հիշում, որ մինչև արքար-

⁹⁸² **Иосиф Рис**, Армяне-магометане близ Хопы, «Кавказское слово», ежедневная газета, Тифлис, 1915, 25-ого февраля, № 45. Կարծում ենք՝ խոսքը Մարրիյալ (այժմ՝ Քենալիաշա) գյուղի մոտակա ուղղափառ եկեղեցու մասին է, որտեղ վրաց Բագրատ V թագավորը 1367 թ. ամուսնացել է Տրապիզոնի կայսր Ալեքսիոս III Կոմնենոսի դստեր՝ 10-ամյա Աննայի հետ, տե՛ս **Михаил Панарет**, О Великих Комнинах (Трапезундская хроника), перевод и комментарии С.П. Карпова и Р.М. Шукурова, издание греческого текста А. М. Крюкова, серия «Новая Византийская библиотека. Источники», Санкт-Петербург, изд. «Алетейя», 2019 (–176 с.+ карта), с. 93, 103. Տե՛ս նաև **Успенский Ф. И.**, Очерки истории Трапезундской империи, Санкт-Петербург, Евразия, 2003 (–320 с.), с. 164. 2010 թ. լուսանկարել ենք բարձր զանգակատունն ու ավերված եկեղեցին, որոնց պատերը ծածկված էին մագլցող բաղեղներով, այլ բոյսերով, անմիջականորեն անձձ ծառերով: **Է. Լիոզենը** ևս նկարագրում է խիտ բուսականությամբ պարուրված ավերակները, տե՛ս **Յ. Լիոզեն**, ըզվ. աշխ., էջ 151, 152:

⁹⁸³ Համշենի բարբառում, որոշ բացառություններով, «ա» հոդակապը կորչում է, ուստի կարծում ենք, որ «**Խաչադուռ**»-ը սխալ է տպագրվել, մանավանդ որ **Հ. Ղուկաս վարդ. Ինճիճյանը**, գրելով Տրապիզոն քաղաքի եկեղեցիների մասին, նշում է, որ գյուղացիները (համշենցիները – Ս. Վ.) դրանց «**խաչտուր**» են ասում. «Չորս եկեղեցիք են հայոց կամ ըստ բարբառոյ գիղականաց Խաչտուր, զի գամենայն եկեղեցիս խաչտուր անուանեն անդէն գիղականք...», տե՛ս **Հայր Ղուկաս վրդ. Ինճիճեան**. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, հատոր Ա, էջ 387: **Ա. Սուրիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում»** (ԵՊՀ հրատ., 2009, –1242 էջ), որպէս եկեղեցու և ժամատան հոմանիշ է ներկայացված «խաչդուռ» բառը (էջ 263, 356, 408): **Հ. Աճառյանի «Քննություն Համշենի բարբառի»** գրքում գրված է «խաչ + դուռ» նշանակում է – եկեղեցու դուռ» (էջ 58), «խաչտուռ, եկեղեցու դուռը, կամ առաջը», արտասանվում է թե՛ խաչտուռ և թե՛ խաչտուռ» (էջ 177): Մեր օրերում Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի համշենցիները «խաճ» ասում են եկեղեցուն, իսկ «խաճտուռ»՝ եկեղեցու բակին:

⁹⁸⁴ **Иосиф Рис**, Армяне-магометане близ Хопы, «Кавказское слово», ежедневная газета, Тифлис, 1915, 25-ого февраля, № 45.

վելը իրենց գյուղերում հացի խմորի գնդերի վրա օդում խաչ էին անում, միայն մեկի վրա չէին խաչակնքում, որովհետև դա կենդանիների բաժինն էր: Նույն թվականին Ջելալ Քարաիբրահիմովը (ծնվ. 1955 թ.) ինձ վկայեց, որ իր մանկության տարիներին, երբ դեռ հացը տանն էին թխում, Ղազախստանի Չիրկինո գյուղի համշենցիները ոչ միայն խմորի գնդերի վրա էին օդում խաչ անում, այլև դրանք բացելուց (գրտնակելուց) հետո ավելզրով խաչ էին դաշում⁹⁸⁵:

Եզրահանգումը մեկն է. թուրքական իշխանությունների կողմից բանտարկվելու, անմարդկային չարչարանքների և մահապատժի ենթարկվելու պատճառով քահանաների հետ զաղտնաբար հանդիպող, մահվան սպառնալիքով առերես իսլամ ընդունելուց հետո էլ շուրջ 200 տարի հանապազօրյա հացը թխելիս խմորի վրա խաչակնքող, հայերեն հին գրքերն ու ձեռագրերը, եկեղեցական զգեստները որպես սրբություններ պահպանող համշենցիները հայ հոգևորականներին զվարճապատումների գործող անձ չէին դարձնի:

Նրանք իրենց կատակաբանությունների թիրախ չեն ընտրել նաև մոլլաներին, քանի որ լինելով հայախոս և նախկին քրիստոնյաներ՝ շրջակա այլազգիների կողմից կրնակավելին մահմեդականների հավատը ծաղրողներ և վիրավորողներ:

Նշենք, որ համշենցիները բարձրաստիճան մոլլաների մեջ էլ հայրենակիցներ ունեին, որոնք չէին թաքցնում իրենց հայկական ծագումը: Առաջին աշխարհամարտից առաջ Տրապիզոնում ապրած Մխիթարյան միաբաններից մեկից լսածը 1919 թ. այսպես է վերապատմում նշանավոր գիտնական **Հայր Բարսեղ Սարգիսյանը**. «Մեր միաբան Հայրերէն մին... բարեկամանալով Համշէնցի ծեր **Իմամի** մը հետ, օր մը, կ'ըսէ նա, երբ հայերէն և թրքերէն ինչ ինչ բառերու ծագման մասին կը խօսէինք, Հայերը տաճիկներէն առած ըլլալու են, նա, այսինքն թրքացած **Իմամն**, իսկոյն վրայ բերաւ. Ո՛չ Փափագ էֆէնտի, տաճիկները մեզմէ առած են: Եւ այս ըսելով՝ կ'աւելցնէր սա, թէ՛ իր պապերը հայ էին ազգաւ»⁹⁸⁶:

Շեռաքրքիր է, որ քրիստոնյա համշենահայերի բանահյուսական ժառանգության մեջ նույնպես մեզ չեն հանդիպել սույն աշխատությունում քննվող սյուժեով զավեշտապատումներ, որոնք քահանա կամ մոլլա հերոսներ ունենային:

Հավանաբար պատճառն այն է, որ Տրապիզոնի նահանգում ապրելով կրոնավոր ազգակիցների ու մահմեդական համերկրացիների հարևանությամբ, նրանք ևս խուսափել են զվարճապատումների ծիծաղի առարկա դարձնել իրենց սակավաթիվ քահանաներին ու օտարազգիների մոլլաներին:

⁹⁸⁵ **Ս. Վարդանյան**, Կրոնավորիս համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (սյուժեքեր և ուսումնասիրություններ), էջ 62:

⁹⁸⁶ **Հ. Բ. Սարգիսեան**, Վիճակագրական նոր տեսություն մը ի նպատտ անկախ Հայաստանի, «Բազմավէպ», 1919, նոյեմբեր, №11, էջ 329:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր ուսումնասիրությունն ամփոփելիս ներկայացնում ենք որոշ վիճակագրական տվյալներ, քանի որ ընթերցողների համար դժվար կլինի հիշել և ընդհանրացնել բոլոր զվարճապատումները:

Այսպես, քրիստոնյա հայերից գրառված 30 տարբերակներից 29-ում գլխավոր հերոսներից մեկը **քահանա** է, իսկ «**Խելօք Դաւիթ**»-ում հավանաբար նույնպես քահանա է եղել: 30-ից 18-ում **արջը** պոկում է տեր հոր **գլուխը**, մեկում՝ մորուքը («**Դերեն մրոքը**»): Երեք երգիծական մանրավեպերում արջի փոխարեն հանդես է գալիս **գայլը** («**Հաթերքին իրեք դերը**», «**Ռւմացիք ու գոյլը**», «**Ուրբաթը կորիլ ա**»), մեկում՝ **վագրը** («**Տէրդէրի գլոխը**»), և միայն Մանուկ Աբեղյանի գրառած «**Շամբցիք ու արեւը**» տարբերակում է, որ չի նշվում, բայց կարելի է ենթադրել, ինչպես մյուս պատումներում՝ **արջը** կամ **գայլը**: Երեք երգիծապատումներում հոգևոր հայրը գլխից զրկվում է եկեղեցին քաշելու ժամանակ («**Էրէկ կրցընձն, ժամ կրտընդն**», «**Կաճեթա ծըռեր**», «**Տէրտերի միբուքը**»), իսկ «**Խելօք Դաւիթի**» հերոսը՝ իրեն **ջրհորից** դուրս հանելիս: Մեկ դեպքում **քրդերն** են տեր հորը գլխատում («**Կաճեսցի քահանայի գլուխը**»): Ի դեպ, մեկ տարբերակում քահանան **բնական մահով** է մահացած լինում, և համագյուղացիները թաղումից մի քանի օր հետո խոսքի են բռնվում, թե նա մորուք ունէր, թե՛ չունէր («**Տերտրոչ մուրուս**»):

Կրոնափոխ համշենահայերի 7 զավեշտապատումներից 5-ում մարդկանց գլուխն արջն է պոկում, մեկական դեպքում՝ **մակույկը** և **ջրաղացքարը**: Բոլոր 7 փոփոխակներն էլ եզրափակվում են կնոջ պատասխանով:

Քրիստոնյա հայերի 30 պատումներից 25-ը ավարտվում են ամուսնու՝ **գլուխ**, 2-ը՝ **մորուք** («**Դերեն մրոքը**», «**Տերտրոչ մուրուս**») ունենալ-չունենալու մասին կանանց ենթադրություններով, 2 դեպքում («**Մօրուքը դեսայ ըմնա...**», «**Խարբերդցիներն ու արջը**») տեղացի «խելացիի» և «գիտունի» պատասխաններով և միայն 1 անգամ է («**Ուրբաթը կորիլ ա**»), որ ներկաներն իրար չեն հարցնում, թե քահանան գլուխ ունէր, թե՛ չունէր:

Այդ 30 երգիծական պատումներից 5-ում, որից երեքի ասացողն ու գրառողը նույն անձինք են («**Ուրբաթի կորուստը**», «**Ուրբաթի կորուստը**», «**Ուրբաթ գօրիք է**»), գյուղացիներն **ուրբաթին** են որոնում («**Ուրբաթը կը փնտոեն**», «**Ուր-**

բաթը կորիլ ա»), մեկ տարբերակում կորած է լինում **կիրակին** («**Լճեցիներն ու արջը**»), 4 մանրապատումների հերոսները արևին են փնտրում («**Դերեն մրոքը**», «**Հաթերքին իրեր դերը**», «**Ռամիսի տերտերը**», «**Շամբցիք ու արևը**»), երեքինը՝ **լուսնին** («**Լուսին վորոնող քահանան**», «**Ռըմացիք ու լուսնըկօն**», «**Ռըմացիք ու գնիլը**»), մի դեպքում՝ **Աստծուն** («**Ադորը կլուխը**»), երկու փոփոխակում՝ **սրբազանին** («**Մօրուքը տեսայ, ըմմա...**» «**Խարբերդցիներն ու արջը**»), իսկ Առաքել Բահաթյանի գրի առած տարբերակում՝ պարզապես ծնակում գրոսնելիս են լինում («**Պըել դարադադցուց հաքյաթը**»):

Կան նաև բոլորովին անսպասելի ցանկություններ հայտնաձև գյուղացիներ, օրինակ՝ երկու զվարճապատում այն մասին է, թե ինչպես են նրանք Համբոյին, մյուս դեպքում քահանային՝ ռուսերեն առնելու համար Թիֆլիս ուղարկում («**Կուրթանցոց ռուսերեն սովորելը**», «**Լոռեցունց ռուսերենը**»), մեկ պատումում գյուղի խելացուն՝ Դավիթին, ճանապարհում են Կ. Պոլիս՝ իրենց համար **խելք բերելու** («**Խելօք Դաիթ**»):

Հայկական, այդ թվում՝ կրոնափոխ համշենահայերի 37 փոփոխակների այուժների ու հերոսների այսպիսի բազմազանությունը, հիրավի, զարմացնում է:

Մենք արդեն անդրադարձել ենք հեքիաթների միջազգային տեղեկատուներում 1225 համարի ներքո ներկայացվող տարբերակներին.

Աարնե-Թոմփսոնի հեքիաթների համացույցի դերակատարներն են՝ **առանց գլխի մարդը, նրա ընկերները և արջը:**

Նիկոլայ Անդրենի ներկայացրած հերոսների թիվը քիչ ավելի է՝ **պոշեխոնցի գյուղացին, ուրիշները (կինը), արջը (ջրադացը):**

Արևելասլավոնական ժողովուրդների հեքիաթացույցի հերոսները ևս բազմազանությամբ աչքի չեն ընկնում՝ **հիմարը (քահանան), արջը (ջրադացը), մյուսները (կինը):**

Բանասիրական գիտ. դոկտոր, բանագետ և բանահավաք **Արմեն Շավարշի Սարգսյանն** իր «**Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ)**» (2020) արժեքավոր մենագրության «**Հայ ժողովրդական երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների թեմատիկ դրսևորումները**» գլխի մեկ բաժինը վերնագրել է «**Խելապակասության թեման**»⁹⁸⁷: Հեղինակը գրում է. «**Խելապակասության թեմաներից ամենաշատ հանդիպողը, թերևս, տերտերի գլուխը պոկվելու** հետ է կապված, պատումների մի խմբում այն տեղի է ունենում եկեղեցին տեղափոխելու հետև-

⁹⁸⁷ **Արմեն Շավարշի Սարգսյան**, Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀԱԻ հրատ., 2020 (–512 էջ), էջ 228–233:

անքով, մյուսում՝ առավել մեծ քանակ կազմող պատումների խմբում, **երկուշաբթին փնտրելու ժամանակ** տերտերին քարայրը իջեցնելու և արջի կողմից գլխատվելու պատճառով»⁹⁸⁸: Այս բաժնում **Ա. Սարգսյանն** անդրադառնում է **Մարլենա Մուրադյանի** հրատարակած «**Կնճեթի ծրոներ**», «Ծիծաղում են վանեցիները» ժողովածուում տպագրված «**Տերտեր խնդաց, ժամ տնդաց**» և Մոկսում **Հովսեփ Օրբելու** գրառած «**Էրեց կրցրնձն, ժամ կրտրնդն**» զվարճապատումներին⁹⁸⁹, որոնց մեր ընթերցողները ծանոթացել են մեր այս ուսումնասիրության «**Կանեթցիների մասին տարբերակները**» բաժնում:

Ա. Սարգսյանը, հղում անելով 2010 թ. «**Ոսկե դիվան**» հեքիաթագիտական հանդեսում տպագրված մեր հոդվածին⁹⁹⁰, գրում է. «Փաստենք նաև, որ բանագետ-ազգագրագետ Սերգեյ Վարդանյանը խելապակասության թեմաներից գլուխը պոկվելուն առնչվող 22 տարբերակ է առանձնացրել (դրանցից 3-ը Թուրքիայի իսլամ համշենահայերից Վարդանյանի գրառած նմուշներն են), ցույց տալու համար պարսկական և թուրքական նմանատիպ պոեմ ունեցող պատումների հանդեպ հայկականների կառուցվածքային և գեղարվեստական առավելությունը»⁹⁹¹:

Այնուհետև, որպես սույն գրքի խմբագիր, ծանոթանալով աշխատությանը՝ հավելել է. «Հետագա տարիներին այդ դիպաշարով նյութերի քանակը հասցնելով 37-ի՝ Ս. Վարդանյանը հրատարակության է պատրաստել «Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակների մասին» ծավալուն հետազոտությունը՝ համապատասխան բնագրերով (անտիպ)»⁹⁹²:

Ամփոփելով՝ նշենք, որ մենք որոշեցինք գոհանալ այդ 37 նմուշներով, քանի որ սույն ուսումնասիրության նպատակը կրոնափոխ համշենահայերից և հայկական մյուս համայնքներից, գավառներից ու գյուղերից գրառված տպագիր և անտիպ բոլոր տարբերակների հայտնաբերումն ու համեմատությունը չէ իրար և աշխարհի բազում ժողովուրդների բանահյուսական նմանատիպ ժառանգության հետ: Ի սկզբանե նպատակադրվել էինք ընդամենը պարզել, թե կրոնափոխ համշենահայերից մեր գրի առած պատումներն

⁹⁸⁸ **Արմեն Շ. Սարգսյան**, Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ), էջ 230:

⁹⁸⁹ **Արմեն Շ. Սարգսյան**, Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ), էջ 230, 231:

⁹⁹⁰ **Վարդանյան Ս.**, Մի զվարճախոսության գրառումների և հրապարակումների պատմությունից, «**Ոսկե դիվան**» հեքիաթագիտական հանդես, Երևան, Հովհ. Թումանյանի թանգարան, 2010, պրակ 2, էջ 32–41:

⁹⁹¹ **Արմեն Շ. Սարգսյան**, Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ), էջ 231, 232:

⁹⁹² **Արմեն Շ. Սարգսյան**, Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ), էջ 232:

արդյոք ունեն իրենց փոփոխականները հայ ժողովրդի տարբեր հատվածների բանարվեստում, ինչը լիուլի հաստատվել է:

Վերը շարադրված ողջ նյութը, ինչպես նաև այն կարևոր հանգամանքը, որ մեր կրոնափոխ ազգակիցներն այս զվարճապատումները պատմել են հայերեն՝ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով, հիմնավորապես հաստատում են մեր համոզմունքը, որ դրանք հայկական բանահյուսական ժառանգության անբաժանելի մասն են⁹⁹³:

⁹⁹³ **Ձայն համշենական**, ժողովածու, բանաստեղծություն, արձակ, բանահյուսություն, գիրք 3-րդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց **Սերգեյ Վարդանյանը**, Երևան, 1989, էջ 291: **Վարդանյան Սերգեյ**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան, 2009, էջ 203: **Ս. Վարդանյան**, Մի զվարճախոսության գրառումների և հրապարակումների պատմությունից, «**Ոսկե դիվան**», հեքիաթագիտական հանդես, պրակ 2, Երևան, Հովհ. Թումանյանի թանգարան, 2010, էջ 39: **Ս. Վարդանյան**, Իսլամացված համշենահայերից գրառված մի զվարճապատումի յոթ տարբերակների մասին // **Շիրակի պատմամշակութային ժառանգությունը**, հայագիտության արդի հիմնահարցեր, 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, 2019, էջ 343:

СЕРГЕЙ ВАРДАНЯН

СРЕДА ФОЛЬКЛОРНОГО ПОВЕСТВОВАНИЯ

(Варианты одной сатирической сказки от исламизированных амшенских армян)

Резюме

Данное исследование, посвященное среде и истории устного народного творчества, является первым и единственным опытом сравнения 37 неопубликованных и опубликованных сатирических сказок со схожей сюжетной линией и записанных от исламизированных амшенских армян и – в XIX–XX веках – от проживающих в разных местах армян-христиан (АаТн № 1225).

Шесть из семи рассматриваемых в книге сатирических сказок от исламизированных амшенских армян записаны С. Варданяном: одна – в 1987 г. в Казахстане, остальные 5 – в 2010–2013 гг. в Турции. Седьмой вариант записан научными сотрудниками Гарвардского университета в Бостоне с рассказа переехавшего туда из Турции, из провинции Хопа, 25-летнего исламизированного амшенского армянина.

Запись 4 из 30 сатирических сказок от армян-христиан сделана в Арцахе (Карабах), самая ранняя из них – в городе Шуши в 1860 г. Остальные были поведаны в Лори, Тавуше, Сюнике, Нахиджеване, Карадахе, Перии, Кесарии, Бейруте, Алеппо и т. д.

Данная монография – первый в армянской фольклористике опыт сравнения фольклора армян-христиан и армян-мусульман, а также объединения в одном исследовании более трех с половиной десятков сатирических сказок со схожей сюжетной линией.

Автор подводит к выводу о том, что фольклор исламизированных амшенских армян является неделимой частью армянского фольклорного наследия.

Рассматриваемые в книге сатирические сказки сравниваются с их русскими, турецкими, персидскими и ассирийскими вариантами.

Там, где это возможно, автор приводит интересные и существенные подробности о сказителях, собирателях фольклора и издателях, об упоминаемых в данной сатирической сказке действующих лицах и населенных пунктах. В книгу вошли также оригиналы всех сатирических сказок.

SERGEY VARDANYAN

THE DOMAIN OF A FOLKLORIC NARRATIVE

(Variations of a satirical tale from Islamized Hamshen Armenians)

Summary

This unique monograph dedicated to the study of the habitat and history of a folkloric specimen is the first ever attempt to juxtapose and correlate 37 published and hitherto unpublished satirical tales, based on the similarity of the storylines and transcribed from Islamized Hamshen Armenians and – in the XIX–XX centuries – from Christian Armenians residing in various places (AaTh № 1225).

In the treatise six of the seven satirical tales from Islamized Hamshen Armenians were recorded by Vardanyan: one in Kazakhstan in 1987, and the remaining five in Turkey in 2010–2013. The seventh version was recorded by Harvard University scholars in 1995 from a 25-year-old Islamized Hamshen Armenian, who had moved to Boston from Turkey, from the district of Hopa.

Out of 30 satirical tales from Christian Armenians, four were recorded in Artsakh (Karabakh), the earliest of them in the city of Shushi back in the year 1860. The others were recounted in Lori, Tavush, Syunig, Nakhijevan, Gharadagh, Peria, Caesarea, Beirut, Aleppo and elsewhere.

This monograph, for the first time in Armenian folkloristics, pairs the folklore of Christian and Moslem Armenians to correlate, as well as combine in a single study more than three dozen satirical tales with commonalities in their storylines.

The author concludes that the folklore of Islamized Hamshen Armenians is part and parcel of the Armenian folkloric heritage.

The satirical tales, discussed in the book, are also contrasted with their Russian, Turkish, Persian and Assyrian variations.

When the author analyzes the folkloric specimens, he often provides interesting minute details about the informants, preservationists and publishers, as well as characters and settlements, mentioned in the tales. The originals of all the anecdotes are also reproduced in the book.

**ԲՆԱԳՐԵՐ
ԵՎ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Բնագրեր և թարգմանություններ» բաժնում զետեղված բոլոր տպագիր և ձեռագիր նյութերը, նույնիսկ այն դեպքերում, երբ մեր կարծիքով, դրանցում ասացողը, բանահավաքը կամ հրատարակության պատրաստողը սխալներ են թույլ տվել, լույս ենք ընծայում նույնությամբ, մանավանդ որ նախկինում՝ XIX դարավերջին և XX դարասկզբին հայերեն գրքերը, թերթերն ու ամսագրերը զանազանվում էին իրենց ուղղագրական յուրահատկություններով: Հետագայում՝ 1922–1940 թթ. Հայաստանում արեղյանական ուղղագրության կիրառման տարիներին, այդ տարբերություններն ավելի խորացան: Ուստի ճիշտ համարեցինք բազմազան բարբառներով ու խոսվածքներով զվարճապատումները, նաև արեղյանական ուղղագրությամբ գրատվածներն ու տպագրվածները, հրատարակել նույնությամբ, այլապես ընթերցողները, հատկապես բանագետներն ու բարբառագետները դրանցից օգտվելիս, գիտական աշխատանք կատարելիս ստիպված պիտի լինեին ամեն անգամ գրադարաններում և արխիվներում որոնել և համեմատել բնագրերի հետ:

Բոլոր երգիծապատումների տակ նշել ենք այն աղբյուրները, որոնցից քաղել ենք:

Կրոնավոխ համշենահայերից մեր գրառած վեց պատումներից հինգը 2011–2014 թթ. հրատարակել ենք «**Ձայն համշենական**» թերթում՝ զուգահեռ ներկայացնելով գրական արևելահայերեն թարգմանությունները, այդպես էլ արտատպում ենք՝ հավելելով նաև այս ուսումնասիրության սկզբնատիժ հանդիսացած 1987 թ. Ղազախստանում մեր գրի առած «**Արդէլէցիք՝ ավջի**» երգիծական մանրապատումի թարգմանությունը (№ 1/1):

Քանի որ վաստակաշատ բանահավաք **Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի** 1950 թ. Շուշիում գրառած «**Հաթերքին իրեք դերը**» (№ 11) ժողովրդական զավեշտալի պատումում մեկտեղված երեք սյուժեներից մեկի՝ գյուղացիների աղ ցանելու պատմության տարբերակը մեզ հանդիպել է Թուրքիայում՝ Արդվինի նահանգի Բորչքա քաղաքում, ուստի այն ևս ընդգրկել ենք (№ 12) կից թարգմանությամբ (12/1)՝ որպես քրիստոնյա հայերի և կրոնավոխ համշենահա-

յերի բանահյուսական ընդհանրությունների ևս մեկ ապացույց, ինչին որ նվիրված է սույն մենագրությունը:

Ինչպես արդեն գրել ենք «**Նախիջևանյան տարբերակները**» գլխում, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում բանասիրական գիտ. դոկտոր, բարբառագետ և բանահավաք **Ռուբեն Բաղրամյանի՝** Ագուլիսի բարբառի Ռամիս գյուղի խոսվածքով ծիծաղաշարժ պատումի ձեռագրին ծանոթանալիս որոշ բառերի իմաստները հասկանալու համար դիմել ենք նախկին ուսմիսցիներին և պարզել, որ կան ոչ մեծ շեղումներ, բայց հարգելով գիտնականի հեղինակային իրավունքը, զվարճապատումը պայմանականորեն վերնագրելով «**Ռամիսի տերտերը**» (№17), տպագրում ենք նույնությամբ, բայց հրատարակում ենք նաև ուղղված տարբերակը (№17/1), և մեր թարգմանությունը (№17/2), որոնք կարող են ուսումնասիրողներին օգտակար լինել:

Մեկ բացառության էլ անդրադարձել ենք «**Կանեթցիների մասին տարբերակները**» գլխում: Բանահյուսական մի քանի ժողովածուներ լույս ընծայած **Գեղամ Թարվերդյանի՝** Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող **Խոյի (Սալմաստի)** բարբառով 1895–1933 թթ. գրառումների հավաքածուի «**Կանեթուս տերտերը**» (№21) զավեշտապատումը տպագրում ենք նույնությամբ՝ արեղյանական ուղղագրությամբ՝ զուգահեռ ներկայացնելով նաև բարբառն իմացողների օգնությամբ մեր շտկած տարբերակը (№21/1), որը, թերևս, նույնպես անթերի չէ:

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում գրքում ընդգրկված բարբառային նյութերը ճշտելիս և թարգմանելիս մեզ աջակցած բոլոր բարբառակիրներին:

№1 ԱՐԴԷԼԷՑԻՔ՝ ԱՎՋԻ

Արդելեցիք ավջիւուդա քէնացին: Հինգ հօքի մարթ քէնաց: Քէնացին անա, արչօնէ ձագէ քէդան, փութ աին անա, արչէ էէվնա չի, խօյին ա:

— Ինչ էնիք, ինչ էնիք օչ, մէգ հօքի մէ յէտ թօղուք մէչն ի վա:

Մէգին աստին թա.

— Թուն նէ միդ:

Ասաց.

— Չա՛, վախի գում:

Մէգալին աստին թա.

— Թուն նէ միդ:

Ան ալ ասաց.

— Վախի գում:

Մէ հօքի մէ գար, քէլօխէ թէթէվ էր, ան ասաց թա.

— Յէս մէդնու գում:

Անու չվօնէ գաբեցին, գույնիուս յէտ թօղին: Արչէ քէլօխէ փէռնէց մէչէ: Քաշէ քէլօխէ գրդրեց: Յէտ քաշեցին անա, մարթուն քէլօխէ չքար: Թուրցէվի մարթիքէ աստին թա.

— Իսա մէդավ անա, քէգ քէլօխէ գա՛ր թա, չքա՛ր թա:

Մէգէ ասաց թա՛ չքիդիմ, մէգալը ասաց թա՛ չքիդիմ, մէգալն ալ ասաց.

— Հայդէ՛, էրթօք գէնօչան հարցէնիք:

Քէնացին կյաղն ի վէ, գէնօչան հարցուցին.

— Աս արքանա մարթըդ վիր էլավ անա, քէլօխը վասա՛ն էր թա, վասա՛ն չէր թա:

Ան ալ ասաց թա.

— Քէլօխէ չքիդիմ, համա բէրբուքէ (բէրվուքէ) ժամի գուր:

Ձայն համշենական, ժողովածու, բանաստեղծություն, արձակ, բանասիրություն, գիրք 3-րդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, «Նորհրդային գրող» հրատ., 1989 (-252 էջ), էջ 228, 229:

Սերգեյ Վարդանյան, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանասիրությունը և երգարվեստը (սյուրեր և ուսումնասիրություններ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (-428 էջ), էջ 187, 188:

№ 1/1 ԱՐԴԱԼԱՑԻՆԵՐԸ՝ ՈՐՍՈՐԴ

(Թարգմանություն)

Արդալացիները որսորդության գնացին: Հինգ հոգի մարդ գնաց: Որ գնացին, արջի անցքը գտան, որ նայեցին, արջը չի երևում, խորն է:

— Ինչ անենք, ինչ չանենք, մեկ հոգու բաց թողնենք մեջը:

Մեկին ասացին թե՛

— Դո՛ւ մտիր:

Ասաց.

— Չէ՛, վախենում եմ:

Մյուսին ասացին թե՛

— Դո՛ւ մտիր:

Նա էլ ասաց.

— Վախենում եմ:

Մի հոգի կար, գլուխը թեթև էր, նա ասաց թե՛

— Ե՛ս կմտնեմ:

Նրան պարանը կապեցին, փոսը բաց թողեցին: Արջը մեջը գլուխը բռնեց: Քաշեց, գլուխը կտրեց: Որ հետ քաշեցին, մարդու գլուխը չկար: Դրսի մարդիկ ասացին.

— Սա որ մտավ, տեսնես գլուխը կա՛ր, թե՛ չկար:

Մեկը ասաց, թե՛ չգիտեմ, մյուսը ասաց թե՛ չգիտեմ, մյուսն էլ ասաց.

— Հայդե՛, գնանք կնոջը հարցնենք:

Գնացին գյուղն ի վեր, կնոջը հարցրեցին.

— Այս առավոտյան մարդդ որ վեր ելավ, գլուխը վրան էր, թե՛ վրան չէր:

Նա էլ ասաց.

— Գլուխը չգիտեմ, բայց շրթունքը շարժում էր:

(Թարգմանությունը տպագրվում է առաջին անգամ–Ս.Վ.)

№ 2 TEMEL'S HEAD

1 yiyek hadik enger caxudn ive kayağ enuš gerton. 2 caxudin keloxn ive kellin kayağe genin. 3 šad barak gelli; hemi inčecnuš kuzin. 4 audi inčecnele erguse uuš žompacove žompan išnoğun meg al na satarin kelxan žompan inčecnoğum gasa. 5 dağin onune temel gelli. 6 temełe čvone įedin gaba gu, 'yes hemi asdi inčecenim' gasa. 7 andi engerdake žompan kičnun put genin martun vuįude go keloxe čgo. 8 'yahu,' gasin, 'asu keloxe gar ta čgar ta? 9 inč enik inč enik oč?' 10 yuruc put genin, 'yahu,' gasin, 'meg erta gasa genoče harc enik balki genige kidena gu.' 11 genoče mode gerton. 12 'yahu,' gasin, 'ku martun keloxe vaan er ta vaan čer ta?' 13 genign a gasa, 'as akvan a,' gasa, 'kahvaltı hazərlamiš i,' gasa, 'bat marte giav ta giav oč ta čkidim,' gasa.

1 Three friends go up a mountain to make a boat. 2 They climb up to the top of the mountain and make the boat. 3 [The mountain] is very steep; now they want to lower [the boat down the mountain]. 4 Then to lower it, two go down by one path; the other says, 'I'll lower it down the steeper path.' 5 The lad's name is Temel. 6 Temel ties a rope around his neck and says, 'Now I'll lower it.' 7 Then the friends go down the path and see that there's a man's body, but there's no head. 8 'Hey,' they say, 'did he have his head or not?' 9 What should we do, what shouldn't we do?' 10 They look at each other and say, 'Hey, let's go ask his wife; maybe she knows.' 11 They go to the wife. 12 'Hey,' they say, 'Did your husband have a head, or not?' 13 The wife says, 'this morning he prepared breakfast, but I don't know if he ate it, or not.'

Bert Vaux, Sergio La Porta, Emily Tucker, Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes, "Annual of Armenian Linguistics", volume 17, Cleveland State University, Cleveland, 1996, pp. 33, 34.

№ 2/1 TEMEL'S HEAD

յիյեք հասիք էսկեր ցախուդն իվէ քայրղ էնուշ կ'երթոն: ցախուդին քելոխն իվէ ք'ելլին քայրղէ կ'էնին: Շատ պարաք կ'ելլի, հեմի ինչեցնուշ ք'ուզին: Անտի ինչեցնելէ էրկուսէ ուուշ ճոմփացովէ ճոմփան իշնողուն մէկ ալ նա սաթարին քել-խան ճոմփան ինչեցնողում կ'ասա: Տաղին օնունէ թեմել կ'ելլի: թեմելէ չվոնէ ճե-տին կապա կու, «ես հեմի աստի ինչեցնիմ», կ'ասա: Անտի էսկերտաքէ ճոմ-փան ք'իչնուն փութ կ'ենին մարդուն վուճուսէ կո քելոխէ չկո: «Յահու», կ'ասին, «ասու քելոխէ կար թա չկար թա: Ինչ էսիք ինչ էսիք օչ»: Յուրոց փութ կ'ենին «Յահու», կ'ասին, «մէկ էրթա կ'ասա կենցղէ հարց էսիք պալքի կենիկէ քիտենա կու»: Կենցղէ մօտէ կ'երթոն, «Յահու», կ'ասին, «քու մարդուն քելոխէ վասն էր թա չէր թա»: Կենիկն ա կ'ասա, «աս արվան ա», կ'ասա, «քահվալթի հազրրլա-միշ ի», կ'ասա, «պաթ մարդէ կիավ թա կիավ օչ թա ջրիտիմ», կ'ասա:

Yiyek hadik enger tsaxutn ive kayiğ enuş gerton. Tsaxutin keloxn ive kellin kayiğe genin. Şad barak gelli; hemi inçetsnuş kuzin. Audi inçetsnele erguse uuş compatsove compan işnoğun meg al na satarin kelxan compan inçetsnoğum gasa. Dağin onune temel gelli. Temele çvone cedin gaba gu, 'yes hemi asdi inçetsenim' gasa. Andi engerdake compan kiçnun put genin martun vucude go keloxe çgo. 'Yahu,' gasin, 'asu keloxe gar ta çgar ta? Inç enik inç enik oç?' Yuuts put genin 'yahu,' gasin, 'meg erta gasa genoçe harts enik balki genige kidena gu.' Genoçe mode gerton, 'yahu,' gasin, 'ku martun keloxe vaan er ta vaan çer ta?' Genign a gasa, 'as akvan a,' gasa, 'kahvalti hazırlamış i,' gasa, 'bat marte giav ta giav oç ta çkidim,' gasa.

Three friends go up a mountain to make a boat. They climb up to the top of the mountain and make the boat. [The mountain] is very steep; now they want to lower [the boat down the mountain]. Then to lower it, two go down by one path; the other says, 'I'll lower it down the steeper path.' The lad's name is Temel. Temel ties a rope around his neck and says, 'Now I'll lower it.' Then the friends go down the path and see that there's a man's body, but there's no head. 'Hey,' they say, 'did he have his head or not? What do we do, what don't we do?' They look at each other and say, 'Hey, let's go ask his wife; maybe she knows.' They go to the wife and say, 'Hey, does your husband have a head, or not?' The wife says, 'this morning he prepared breakfast, but I don't know if he ate it, or not.'

Bert Vaux, Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, "Journal of Armenian Studies", vol. VI, no 2, Winter-Spring 2000–2001, 2001, Belmont: 2001, pp. 53, 54.

Ընթերցանությունը դյուրացնելու և սխալներից խուսափելու համար հայաստան տարբերակում լատինական չափերտները փոխարինել ենք հայկականով (Ս. Վ.):

№ 3 ԱՐՉԷ

Յիէք հօքի ավջիւողա կընացին: Յախտողին մէգ արչ մէ դէսան: Արչէ անօց պըրնէց, ասաց.

— Թուք աստաղ ինչ գընէք:

Մարթօցէ լիզվէնին պըրըվէցան: Ինչ էնին: Արչէ ան մարթօցան մէգին պըրնէց, հէդէվ անու կէլօխէ քաշէց: Մարթօն կէլօխէ թըրավ: Արչէ մարթօն կէլօխէ արավ ու կընաց: Արչէ մարթօն կէլօխէ ույինէ քօթիդնօն դէսէցուց: Քօթիդնիյէ շաղ վախէցին: Արչէ ույինէ քօթիդնօն ասաց.

— Վախէ միք, յէս հիմի էրգու ադիգ ա պէյի գում:

Արչէ կընաց ցախտողնինէ, ամա մարթիքէ դաղէ չէնի: Ինքնուինէ ասաց. «Ասօց հայն ու մարը, նօ կընացին»:

Ավջիւողա էրթօղ մարթիքէ ցախտողան կյաղն ի վա կընացին: Անէր կէլօխ չուննօղ մարթօն գէնօչէ հարցուցին.

— Հաս արվանա քու մարթօն կէլօխէ վասն էր թա, վասն չէր թա:

Մարթօն գէնիգը ասաց.

— Չկիդին, հաս արվանա հաց ուղէլէ չէնգյան ժաժի գուր, ամա կէլօխէ վասն էր թա, վասն չէր թա, մէդիս չա:

№ 3/1 ԱՐՋԸ
(Թարգմանություն)

Երեք հոգի որսորդության գնացին: Անտառում մի արջ տեսան: Արջը նրանց ասաց.

— Դուք այստեղ ինչ եք անում:

Մարդկանց լեզուները բռնվեցին: Ինչ անեն: Արջն այն մարդկանցից մեկին բռնեց, հետո նրա գլուխը քաշեց: Մարդու գլուխը թռավ: Արջը մարդու գլուխն առավ ու գնաց: Արջը մարդու գլուխն իր քոթոթներին ցույց տվեց: Քոթոթները շատ վախեցան: Արջն իր քոթոթներին ասաց.

— Մի վախեցեք, ես հիմա երկու հատ էլ կբերեմ:

Արջը գնաց անտառ, բայց մարդիկ այնտեղ չէին: Ինքնիրեն ասաց. «Սրանց հայրն ու մայրը, ո՞ր գնացին»:

Որսորդության գնացած մարդիկ անտառից գյուղ իջան: Գլուխ չունեցող մարդու կնոջը հարցրեցին.

— Այս առավոտ քո մարդու գլուխը վրան էր, թե՛ վրան չէր:

Մարդու կինն ասաց.

— Չգիտեմ, այս առավոտ հաց ուտելիս ծնտը շարժվում էր, բայց գլուխը վրան էր, թե՛ վրան չէր, չեմ հիշում:

Սերգեյ Վարդանյան, Բանասիրության նոր գրառումներ Թուրքիայի Արդվինի նահանգում, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2011, №1-2, էջ 3:

№ 4 ՔԷԼՕԽ ՉՈՒՆՆՕՂԻՆ ՀԷՔԻՅԱՆ

Չօրս էսգեր վեր քելլին, ավջիւուդա գերթան՝ արչ ցվօնուշ: Էփեյի բեդեդին հեդեվ արչանէ հեդէ քեդնու գուն, գերթան-գերթան արչանէ մադարան փօրի գուն: Քիչ մէ բեդ գէնին, բալքի արչէ քելլա դեյի: Յեմեր գելլի, մէշվէնուն մեգէ գասա թա.

— Շաշեր, սութթադէ բեդ գէնիք, արչէ հիմի բարգաճ ա, թուս էլլէ չի:

Էնչադէ մեգալէ գասա թա.

— Յէս ինչի մէ ասիմ: Չվօնօվէ իմ օթքէս գաբիք, յէս մեդնում արչանէ մադարան ի վար, արչէ քեդնում անա, օթքէս թափի գամ: Օթքէս թափիմ անա, — գասա, — ինձի յեդ քաշէ գուք:

Մարթուն օթքինէ չվօնէ գաբի գուն, մեդնու գու արչանէ մադարան ի վար: Քօնի մէ մեթրօ գերթա անա, արչանէ վասն քէնգի, արչէ մարթուն ջիդան քափմիշ գէնա: Քափմիշ գէնա անա, մարթէ օթքէ թափա գա: Օթքէ թափա անա, էն գերդաքէ յեդ քաշի գուն մարթուն: Մարթուն արչանէ մադարացան հօնի գուն, փութ գէնին անա, մարթուս քելօխէ չքօ, արչէ քափմիշ աղաճ ունի: Էնգերդաքէ յաար մեգալի փութ գէնին, գասին թա մեգամեգալի.

— Քէգ արչանէ մադարան ի վար մեդնէլէ մարթուս քելօխէ վասն էր թա, վասն չէր թա:

Մեգէ գասա թա՝ վասն էր, մեգալէ գասա թա՝ վասն չէր: Էնթամէ, էրթաք գրնօչէ հարցէնիք, գասին: Գերթան մարթուն դունն ի վա, գրնօչէ ցէն գուդան, գասին թա.

— Ալլայիսա, քու մարթուն քելօխէ աւ արվանա վասն էր թա, վասն չէր թա:

— Յէս ալ վասմեդի չիմ, — գասա գրնիգէ, — աւ արվանա թուրշի ուդէլէ չէնգան ժաժէ գուր, համա քելօխէ վասն էր թա, վասն չէր թա, չքիդիմ, — գասա:

№ 4/1 ԳԼՈՒԽ ԶՈՒՆԵՑՈՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
(Թ-արգմանություն)

Չորս ընկեր վեր են կենում, որսորդության են գնում՝ արջ սպանելու: Բավականին պտտելուց հետո արջի հետքը գտնում են, գնում-գնում են արջի քարայրին են հասնում: Մի քիչ սպասում են, գուցե թե արջը դուրս կգա: Ձմեռ է լինում, նրանց միջից մեկն ասում է, թե.

— Գժեր, իզուր ենք սպասում, արջը հիմա պատկած է, դուրս չի գա:

Այն ժամանակ մյուսն ասում է, թե.

— Ես մի բան ասեմ: Պարանով իմ ոտքը կապեք, ես մտնեմ արջի քարայրը, որ արջին գտնեմ, ոտքս թափ կտամ: Որ ոտքս թափահարեմ, — ասում է, — ինձ հետ կքաշեք:

Պարանը կապում են մարդու ոտքին, մտնում է արջի քարայրը: Մի քանի մետր որ գնում է, արջին է հանդիպում, արջը մարդու վզից բռնում է: Որ բռնում է, մարդը ոտքը թափահարում է: Որ ոտքը թափահարում է, ընկերները մարդուն հետ են քաշում: Մարդուն արջի քարայրից հանում են, նայում են, մարդու գլուխը չկա, արջը պոկել է: Ընկերները մեկը մեկին են նայում, մեկմեկու ասում են, թե.

— Տեսնես արջի քարայրը մտնելիս այս մարդու գլուխը վրան էր, թե՛ վրան չէր:

Մեկն ասում է թե՛ վրան էր, մյուսն ասում է, թե՛ վրան չէր: Այն ժամանակ ասում են՝ գնանք կնոջը հարցնենք: Գնում են մարդու տուն, կնոջը կանչում են, ասում են.

— Ուրեմն, քո մարդու գլուխը այս առավոտյան վրան էր, թե՛ վրան չէր:

— Ես էլ չեմ հիշում, — ասում է կինը, — այս առավոտյան թթու ուտելիս ծնոտը շարժում էր, բայց գլուխը վրան էր, թե՛ վրան չէր, չգիտեմ, — ասում է:

Սերգեյ Վարդանյան, Կրոնստիոխ համշենահայերի երգերը և գրույցները, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2012, № 5-6, էջ 8:

№ 5 ՅԻՅԷՔ ԱՐԴԷԼԷՑԻ

Յիյէք հաղիգ արդէլէցի, լիվէրնիյէ առաձ, թվօնքնիյէ ուսաձ, քընացաձ ին արչու մէ բարգաձ դաղէ քըդաձ ոնին, աստաձ ոնին թա.

— Դօ, Հասան, քէզի իսիվա մաղարային մէշն ի վա ինչէցնիք, մէք չվանէ փըրնիք: Հասան, հունա դաղէ փութ աա, արչ գօ թա: Թահլիքէ-մահլիքէ ոննա անա, թուն չվօնէ թափա, մէք քէզի յէդ քաշօդ ուք, — աստաձ ոնին:

Ասու մաղարային մէշն ի վա յէդթօղաձ ոնին, ինչէցուցաձ ոնին: Արային էրգու դաքիքա անցաձ ա անա, ցէնէ-մէնէ գըդդրաձ ա, օչ չվանէ թափա գու, օչ ինչի մէ:

Արչէ իսու քէլօխէ գափմիշ աղաձ ոնի անա, չվանէ թափվաձ ա:

— Ահա՛, — աստաձ ոնին, — քաշիք, — աստաձ ոնին:

Քաշաձ ոնին անա, մարթունէ քէլօխէ վասն չքօ, ահա՛:

— Դօ, — աստաձ ոնին, — իսիվա իշնէլէ ասու քէլօխէ վասն էր թա:

— Չքիդիք, — աստաձ ոնին, — մէմէ էրթաք դունէ, հարցէնիք:

Էրգու էնգէրէ ասու ուսաձ ոնին, քէլօխսուզ դունն ի վա դասաձ ոնին: Քընացաձ ին, գընօչէ աստաձ ոնին թա.

— Հաս աքվանա իստի էլլէլէ մարթուս քէլօխէ դանդն էր թա:

Գընիգն ա աստաձ ոնի թա.

— Յահու՛, — աստաձ ոնի, — ան չքիդիմ, ջիդէ վասն էր, ամա քէլօխէ վասն էր թա, ան մէդիս չա, չքիդիմ:

№ 5/1 ԵՐԵՔ ԱՐԴԱԼԱՅԻ

(Թարգմանություն)

Երեք արդալացի, ատրճանակները վերցրած, հրացաններն ուսերին զցած, գնացել են մի արջի պատկած տեղն են գտել, ասել են թե.

— Դո՛, Հասան, քեզ այստեղից քարայրի մեջ իջեցնենք, մենք պարանը բռնենք: Հասան, դու այնտեղ նայիր՝ արջ կա՛: Վտանգ-մտանգ եթե լինի, դու պարանը թափահարիր, մենք քեզ հետ կքաշենք, — ասել են:

Սրան քարայրի մեջն ի վար բաց են թողել, իջեցրել են: Այդ ընթացքում երկու բռնակն ուր անցել է, ձայն-մայնը կտրվել է, ոչ պարանն է թափահարում, ոչ մի բան:

Արջը որ սրա գլուխը բռնել է, պարանը թափահարվել է:

— Ահա՛, — ասել են, — քաշենք, — ասել են:

Որ քաշել են, մարդու գլուխը չկա, ահա՛:

— Դո՛, — ասել են, — այստեղից իջնելիս սրա գլուխը վրան էր:

— Չգիտենք, — ասել են, — մի հատ գնանք տունը, հարցնենք:

Երկու ընկերը սրան ուսերին են առել, առանց գլխի տուն են տարել: Գնացել են, կնոջն ասել են, թե.

— Այս առավոտյան այստեղից ելնելիս այս մարդու գլուխը տեղն էր:

Կինն ասել է.

— Յահու՛, — ասել է, — այդ չգիտեմ, վիզը վրան էր, բայց գլուխը վրան էր՝ չեմ հիշում, չգիտեմ:

Սերգեյ Վարդանյան, Կրոնսփոխ համշենասիայերի բանասիրության նմուշներ, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2012, № 1-2, էջ 7:

№ 6 ՈՒՄ ՔԷԼՕԽՆ ԷՐ

Ավալէ քյաղի մէ արչէ դունէ մէդան ա անա, մարթն ու գէնիգէ բարգան ին, արչէ գէնօչէ մօղնան մարթուն արան ունի յովանիոս դասան ունի: Հաքվան վի էլան ա գէնիգէ, մարթէ մօղէ չքօնա գու: Մէգ օր մէ, էրգու օր, յիէք օր. մարթէս չքօ աշխէիս: Հանա գէնիգէ ախաօտ աստան ունի. «Մարթէս ո՛վ ա, գայիփ աղավ, յիէք օր ա չքօ»:

Հէդէվ քյաղացիք վի էլան ին, մօնքուշ քէնասան ին: Քէնասան ին ցախութնիյէ, արչօնէ (արչուն) յովան էգան ին անա, մարթուն բաշախֆէնիյէ՝ թուրէ, քէլօխէ մէչէ գէլլի: Հանա գէնօչէ ախապարէ դէսան ունի, խէլօք թէրան ին մարթուն թուրնիոս քաշան ին արչօնէ ձագան: Մարթուն քէլօխէ չքօնա գու, մարթիքէս յարաց հարցուցան ունին. «Քէս քէլօխէ վօրդանդ ա»: Մէգէ գասա. «Բալքի արչօնէ ձագին մէշն ա»: Ախապարէ աստան ունի թա.

— Էմմէնու սօյէ քուօչէս հարցէնիք թա, քէլօխէ գա՛ր թա:

Քէնասան ին, գէնօչէ հարցուցան ունին.

— Մարթուս քէլօխէ գա՛ր թա:

Գէնիգն ա աստան ունի թա.

— Հիգունէ բարգէլէ մօղէս մէգ քէլօխ մէ գար, ամա չքիդիմ քի, ում քէլօխն էր:

№ 6/1 ՈՒՄ ԳԼՈՒԽՆ ԷՐ

(Թարգմանություն)

Հնում մի գյուղում արջը, որ տուն է մտել, մարդն ու կինը պատկած են, արջը կնոջ մոտից մարդուն առել է, բունն է տարել: Առավոտյան կինը վեր է կացել, մարդը մոտը չէր: Մեկ օր, երկու օր, երեք օր, մարդը չկա աշխարհում: Կինը եղբորն ասել է. «Մարդս ո՞ր է, կորավ, երեք օր է՝ չկա»:

Հետո գյուղացիները վեր են կացել, գնացել են փնտրելու: Գնացել են անտառները, որ արջի բունն են եկել, մարդու ոտքերը՝ դրսում, գլուխը մեջն է լինում: Որ կնոջ եղբայրը տեսել է, շտապ վազել են, մարդուն դուրս են քաշել արջի անցքից: Որ մարդու գլուխը չեն գտել, մարդիկ իրար հարցրել են. «Տեսնես գլուխը որտեղ է»: Եղբայրը ասել է.

— Ամենից լավը՝ քրոջս հարցնենք, թե գլուխը կա՞ր:

Գնացել են, կնոջը հարցրել են.

— Մարդու գլուխը կա՞ր:

Կինն էլ ասել է.

— Երեկոյան պատկելիս մոտս մի գլուխ կար, բայց չգիտեմ, թե ում գլուխն էր:

Սերգեյ Վարդանյան, Թուրքիայում արված բանահյուսական նոր գրառումներ, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, № 5-6, էջ 7:

№ 7 ՉԱԽՑՈՒՑԷ ՔԱՐԷ ՔԻԼՈՒՇԷ

Արդէլէցիք սարնիվէ գերթան՝ չախցուցէ քարէ քիւուշ փետուշ: Գերթան, չախցուցէ քարէ ձագ գըլլի, մարթու մէ գասին թա.

— Մէք իսա քիլիք անա, վա ասնօղ ա, չախցուցէ մօղէ գօնգնօղ չա, թուն իսու մէչնիյուս քէլօխէղ խօթա, — գասին, — գամաց-գամաց դանիք:

Մարթէ քէլօխէ խօթա գու, անիվա քարէ քիլի գուն անա, մարթուն ջիղէ արի, քարէ արի գերթա անիվա վար գասնի: Քուքան մարթու մօղէ անա, ջիղէ վասն չա: Յաար հարցէնի գուն, գասին թա.

— Հաս հաքվանա, — գասին, — իսա մարթուս ջիղէ վասն էր թա, — գասին:

Մէգն ա գասա թա.

— Յաու՛, չքիղիմ, — գասա, — էրթաք գէնօչէ հարցէնիք, — գասա:

Գերթան գէնօչէ հարցէնի գուն: Գէնիգն ա գասա թա.

— Չքիղիմ, — գասա, — հացէ ձամէ գուր, — գասա, — հացէ գուլ գուդար, — գասա, — յէս չքիղիմ, — գասա, — ջիղէ վասն էր թա, վասն չէր թա:

№ 7/1 ՋՐԱՂԱՑԻ ՔԱՐԸ ԳԼՈՐԵԼԸ

(Թարգմանություն)

Արդալացիները սարն ի վեր են գնում՝ ջրաղացի քար գլորել բերելու: Գնում են, ջրաղացի քարը ծակ է լինում, մի մարդու ասում են.

— Մենք սա որ գլորենք, կանցնի կգնա, ջրաղացի մոտ չի կանգնի, դու սրա մեջ գլուխդ խոթիր, — ասում են, — կամաց-կամաց տանենք:

Մարդը գլուխը խոթում է, որ քարը ներքև են գլորում, մարդու գլուխն¹ առանձին, քարն առանձին է գնում ներքև, անցնում-գնում է: Որ գալիս են մարդու մոտ, գլուխը վրան չի: Իրար հարցնում են, ասում են.

— Այս առավոտյան, — ասում են, — այս մարդու գլուխը վրան էր, — ասում են:

Մեկն էլ ասում է.

— Յառ², չգիտեմ, — ասում է, — գնանք, կնոջը հարցնենք, — ասում է:

Գնում են, կնոջը հարցնում: Կինն էլ ասում է.

— Չգիտեմ, — ասում է, — հացը ծամում էր, — ասում է, — հացը կուլ էր տալիս, — ասում է, — ես չգիտեմ, — ասում է, — գլուխը վրան էր, թե՛ վրան չէր:

¹ Բնագրում՝ «ջիդ», որը նշանակում է ճիտ, վիզ, բանասացը օգտագործում է «պարսևոցը գլխի հետ» իմաստով:

² Յառ – համշենցիների շրջանում օգտագործվող ձայնարկություն:

Սերգեյ Վարդանյան, Բանասիրուսական նշխարներ (Թուրքիայի Արդվինի նահանգում արված բանասիրուսական նոր գրառումներ), «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, №7–8, էջ 7:

№ 8 ՊԷԼ ՂԱՐԱԴԱԳՑՈՒՑ ՀԱՔԱԹԸ

Իլնալ ա չիլնալ մին տերտեր, մին էլ մին քանի մարթ. ըստահանք ասալ ըն թա եկէք քինանք ծմակը ման կեանք: Քինանցալ ըն ման եկալ, մին ծմակի աղաքալ քինանլիս տէղը տէսալ ըն մին առչ չալա մտած: Շատ քարալ ըն տալ թա տիւս կեան, տիւս չի եկալ:

Եննան մինը մինին ասալ ըն նի մուտ. նահանք էլ ասալ ըն թա, տերտեր տու նի մուտ առչը քու խաթրըտ կը պահի, մին տեղան փոնի, ոններտ տիրիւր տօ որ ոններտ տիրիւր կը տաս ոններիցըտ կը փոնէնք ծիք տանք հանէնք: Որ խաթրըտ պահիլ չի է, երա կըտաննանք ծիք տանք հանէնք. թա դէ լնվ ա: Նիյ ա մտալ առչին ոններիցը փոնալ, առչն էլ ընդրա կլխանա փոնալ: Որ փոնալ ա ոնները տիրիւր ա տալ, նահանք էլ ոններան փոնալ ըն ծիք տալ: Առչըն էլ ընդադան ա ծիք տալ, նահանք ընդադան, նա ընդադան, նահանք ընդադան. էն դդար ծիք ըն տալ որ կլեօխը պուք ա եկալ: Եննան տարալ ըն ընդրա կնկանը կօշտը, հրցըրալ թա իրիւկիւնի տերտերին կլեօխը երան ար, նայ էլ ասալ ա թա դէ վալլա, կիտիւմ չըմ ամմա մինակ իրիւկիւնի մէր փէսին նեկտ որ չնրնզ ար օտում, մրօքը տիրիւր ար կեան:

Աճանից 3 խնձեօր վեր ինգնի մինն ասօղին, մինը լսօղին, մինը չիլսօղին:

Հայաստանի ազգային արխիվ, Տիգրան Նավասարդյանի ֆոնդ 484, ցուցակ 1, գործ 1, 231 թերթի շրջերես, թերթ 232:

№ 8/1 ՊԸԵԼ ՂԱՐԱԴԱՂՑՈՒՑ ՀԱՔՅԱԹԸ

[Անգլուխ տերտերը]

Իլնն ա չիլնն մին տերտեր, մին էլ մին քանի մարթ: Ըստահանք ասալ ըն, թա. «Եկեք քյինանք ծմակը ման կյանք»: Քյինացալ ըն ման եկալ, մին ծմակի աղաքավ քյինալիս տեղը տըեսալ ըն մին առչ չալա մտած: Շատ քարավ ըն տվալ, թա տոնս կյն, տոնս չի եկալ: Ետնան մինը մինին ասալ ըն. «Նի մուտ»: Նահանք էլ ասալ ըն, թա «Տերտեր, տոն նի մուտ, առչը քու խնթրըտ կըպահի, մին տեղան փոնի, վըեններտ տոնրոնր տո, որ ոններտ տոնրոնր կըտաս, վըեններիցըտ կըփոնինք, ծիքյ տանք հանենք»: Վըեր խնթրըտ պահել չի յէ, յրա կըտառնանք, ծիքյ տանք հանենք»: Թա. «Դե լնվ ա»: Նի յա մտալ առչին վըեններիցը փոնալ, առչն էլ ընդրա կլխան ա փոնալ: Վըեր փոնալ ա, վըենները տոնրոնր ա տվալ: Նահանք էլ վըեններան փոնալ ըն, ծիքյ տվալ: Առչըն էլ ընդաղան ա ծիքյ տվալ, նահանք՝ ընդաղան: Նա՝ ընդաղան, նահանք՝ ընդաղան, էն դար ծիքյ ըն տվալ, վըեր կլոխը պուք ա եկալ: Ետնան տարալ ըն ընդրա կնգանը կոշտը, հրցըրալ, թա. «Ուրկյոնի տերտերին կլոխը յրան ա՛ր»: Նա էլ ասալ ա, թա. «Դե վալլա, կյոնտոն չըմ, ամնա մինակ ուրկյունի մեր փեսին նհետ վըեր չնրնգ ար օտում, մրոքը տոնրոնր ար կյնմ»:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ աստղին, մինն՝ լսողին, մինը՝ չիլսողին:

Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Ուտիք, հ. VI, հատորի բնագիրը, նախաբանը, ծանոթագրությունները, բառարանն ու ցանկերը Ա. Մ. Նազիկյանի, Վ. Գ. Սվազյանի, ՀՄՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973 (-780 էջ), էջ 272:

№ 9 ԼՈՒՍԻՆ ՎՈՐՈՆՈՂ ՔԱՀԱՆԱՆ

Վեղան գյուղացիք տեսան, վոր յերկար ժամանակ լուսինը չի յերևում, քահանայի հետ գնացին լուսինը վորոնելու: Մի այրի մեջ տեսան, վոր յերկու աչքեր փայլում են: Տերտերն ասաց ժողովրդին.

— Այս լուսինն է: Յես գլուխս կոխեմ այրը, իսկ դուք վոտերս բռնեք: Յերբ յես վոտերս կթափահարեմ, դուք վոտերս պինդ ձիգ տաք: Այդպես ել անում է: Բայց այրի մեջ փայլող աչքերը՝ արջի յեն լինում: Քահանան գլուխը կոխելուն պես՝ արջը թռնում, բռնում է տերտերի գլխից և ձիգ է տալիս: Տերտերը ցավից վոտերը թափահարում է: Մարդիկ պինդ ձիգ են տալիս վոտերից, և տերտերի մարմինը հանում են առանց գլխի:

— Խոխե՛ք, հի՛նչ ըք ասում, տերեն գլուխը յերա ըլա, թա՛մ չե՛ — հարցրին մեկը մյուսից:

— Չի՛նք գտամ, — պատասխանեց մի խելոքը, գինըք ըրցըկնգանը հարցանք արըք:

Յեվ գնացին ու հարցրին յերեցակինին:

— Ըրցանկեն, ըստրե տերեն գլուխը իրայրլա թա չե:

— Վա՛լլահ, զեթ գիտայիս չիմ, — պատասխանել էր յերեցակինը, — համա դե իրգոնե հըռածած ուտիլիս տեղ, մրուքը տըմբալիսը լա:

Ժողովուրդը յետ դարձավ և իրար ասաց.

— Չե՛, տերեն գլուխը յերեյը լած:

Ննուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից, ժողովածու, կազմեց և խմբագրեց Ա. Ղանայանյան, ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալ, գրականության և լեզվի ինստիտուտ, հրատ. Արմֆանի, Երևան, 1938 (-XXIII + 126 էջ), էջ 69:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Երվանդ Լալայանի ֆոնդ, ըստ Ե. Լալայանի Մայր մատյանի՝ 97-րդ տետր, վրան գրված է. «Վեղանեցոց գրույցներից»: 1. Լուսին վորոնող քահանան կամ տերտերոջ մորուքը, FAV: 5439.01-5440.00:

№ 10 ԴԵՐԵՆ ՄՐՈՔԸ

Մի տարե գյորոնքը շատ թուողթաց ա իլալ: Մի ամես քիմի մհալեն մախտողը իրիննակեն իրիսը տըսա չըն:

Դե քյոհնա ըյամեն մարթիսքը մհեգուց մարթկանց նման օյաղ չըն լալ, թուլի, թավաքի, միամիտ մարթիքն լալ: Թոողթողըը որ շատ ա յրկննալիս, իրիննակը ըրվալիս չի, շենեն մախտողը հվաքվմ ա, գինիս դերեն տոնը, դերեն նանե հրցրիլիս. — Ա դեր, պա իրիննակը հի՛նչ ա դըռած, որ ըրվալիս չի:

Դերը մհետ վեզն ա քորիս, մհետ՝ մրոքը, պատատ խյալ-խյալ ըրիս, ըսիլիս. — Դե իրիննակ ա ալի, կարող ա Աստուծեն նանե նղացած ա, խտոված ալ դուս չի գյոլիս: Կարող ա շատ ա ինջինմիշ իլած, նայե սարեն եթկեն մի քրտակում խտուրու ա ինգած քոն ա իլած, դինջինալիս: Իրիննակեն բենը հոն կգիդա:

Շինացեք ըսիսն. — Ա դեր, մըր ձեռքն ա՝ քու յախան: Մընք առանց իրիննակ կարի չընք ապրի: Դորմա ծողղանցտ, եր կաց, ինգի մըր առաչը, մընք ալ քի նհետ գիննք իրիննակը ճարնք:

Դերը ըռշկին, շինացեք հետեն՝ գինիս, գինիս, բեցուր սարեն դոշումը մի խոր քրատակն ճրիլիս: Յիշիս տոնալիս՝ քրտակեն խորքմը մի բեն ա փապղալիս: Շինացեք ուլխնալիսն, հարայ-հրոց տալիս, որ իրիննակը ճարալնք:

Իրիննակը դուս բիրելու հետե առաչ դերն ա նի մոխի քրատակը:

Մին ալ էնն լսիլիս, որ դերը ճղճղալիս ա: Շինացեք ուլխնալիսն, որ ըհը՝ դերը իրիննակը փոնած ա: Վըտերեն նհետ փոնիսն, քաշիս, քրտակեն նանե դուս բիրիս, մնալիս գարմացած: Յիշիսն տոնալիս, որ դերեն իրիսկիսարը ճրողոտած ա, մրոքն ալ կավչնի:

Պատատ խիյալ-խիյալն ըրիս՝ մի էրկուսն ըսիսն, թա էս մեր դերը չի: Թա մեր դերն ա, պա մրոքն հո՛ր ա: Մի քանե հուգի ալ ըսիսն. — Չէ, լա մըր դերն ա: Հալքաթ քշանուն մրոքը բերած չի, թողած ա տան:

Դերն ալ խոսիս չի, որ մի բեն գիդան: Լուգին կապ լալ ինգած:

Դու մի ասի, քրատակը առջ ա ըղղանա իլած: Պապղու տվուղենն արջեն աշկրնն իլած: Դերը որ նի ա մտած քրատակը, առջը թաթըր գիճած ա, դերեն մրոքը բուք տված:

Վերչը, քրտակեն նանե դուս կալած մարթը հաստատ որոշելու հետե գիհիսն դերեն կնգանը հրցրիլին: Դերեն կնեզն ըսիս ա. — Քշանաց դերը շփոթ ուտիս տեղը, վհատաց իրեսեն երե մի բեն տմոմբալիս լալ:

Հովհաննես Հովսեփյան, Ղարադաղի հայերը, բանասիրություն, հ.2, ժողովածուն հրատարակության են պատրաստել և առաջաբանը գրել բան. գիտ. թեկնածու Սվետլանա Վարդանյանը, բանագետ Էսթեր Խենկյանը, պատասխանատու խմբագիր՝ բան. գիտ. թեկնածու Ալվարդ Ղազիյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 (–644 էջ), էջ 340, 341:

№ 11 ՀԱԹԵՐՔԻՆ ԻՐԵՔ ԴԵՐԸ

Ինիս ա, չինիս, մին շեն անըմը Հաթերք: Էտ շենին ժողովուրթը էնքան խավար ըն ինիս, վեր ուրանց շենին ըլնծ-չըլնծ իրեք դերին նրհախ տեղան կուտուրես ըն: Դե տես, հոնց ա ինիս:

Էտ շենացեք ըսես ըն, վեր պերեք տանիք աղ վարինք, հանցու վեր ամեն դոնում քյինինք վեչ Նախճըվանան չըրչըրվելավ աղ պիրինք: Տընես ըն մին խամ տեղ աղ շաղ տաս, վըրես: Էտ արտում տեղեն զիզ ա փըսնես: Ըտահանք գյիդնս ըն, թն լրհա աղը էտ ա: Քյիս ըն տըսնաս էտ տեղեն զիզուն յըրան պըրթպըրթոտ ճննջեր ըն նըստալ: Տահանք գյիդնս ըն, թն էտ ճննջերը աղեն արտը փըչըցնիս ըն: Եր ըն կընաս թորավ-թըրփննգյնվ քյիս, թն հանցու վեր ճննջերը կըտորին:

Քյիս ըն, նի տոնաս արտը, կոխ տաս, ճննջերեն թըկես, փըխչըցընես: Բիրդան մին ճննջ քյիս ա մեծ դերեն դոշին վեր կյաս: Դերըն ուրնն ախպորը ծեռքավ ինըցնես ա, վեր թըրփննգյըն յըրա անե, ճննջեն ըսպանե: Ախպերըն էլ թըրփննգյը թոնշ ա ընես, ախպորը սըրտան տաս, հանցու վեր ճննջեն ըսպանե, ամնա ուրնն ախպորը՝ մեծ դերին ա ըսպընես:

Էտ պըտըրհմունքանը ետը ընցնես ա մին խիլլն վախտ: Երգինքը թուխպես ա, իրիքննկը ըրվաս չի: Շենացեք մըսիաթ ըն ընես, վեր քյինին շոո կյան, իրիքննակը քըթենան:

Քյիս ըն, շատ շոո կյաս, խրեգ շոո կյաս, ըտ էլ աստոծ ա գյիդնս: Մին էլ քյիս ըն մին քըրըտակու յիշիս, տըսնաս, ըտեղ մին պեն ա պըծըպածի ընես:

Գյիդնս ըն, թն էտ իրիքննակըն ա:

Պիրիս ըն մաշնակ դերին վըններան փըռնես կլոխը նի քըցիս, հանցու վեր իրիքննակը փըռնե, տոնս օնե: Տու մեր ասել, էտ պըծպածե անողը կյոնոն աշկեր ա: Կյոնը բոնդան դերեն կլոխը քցիս ա ըռեխը: Տոնսկյոնսին մարթիքը վըններան փըռես ըն, ծիք տաս: Բոնդան կլոխը պուք ա կյաս: Դերին տոնս ըն օնես, տըսնաս կլոխը յըրան չի: Տըրանք գյիդնս ըն, թն դերը տանան առանց կըլոխ ա տոնս եկալ:

Քյիս ըն դերըկընգանան հըրցընես. — Ա՛ դըրննկեն, դերը վեր տանան տոնս ա եկալ, կըլոխը յրան ա իլն՝, թն չէ:

Դըրակենըն ըսես ա. — Յընես գյիդնս չըմ կըլոխը յրան ա իլն՝ թն չէ, միննկ փըռթուշ օտեղիս տեղը մըրոքը տըմբտըմբացալ ա:

Ետնան վեր տըսնաս ըն դերը առանց կլխե մըռնիս ա, տընես ըն թըղես:

Հաթերքընը թոխա օրեր շատ ա ինիս: Գյիդանս ըն, թան էտ արտերեն վնաս կտա: Ժողովուրթեն հըվըքես ըն, ամնեն մինը մին պեն ա յոր ունես, վեր քյինին սարեն յըրա վըեննը կացած թոխպեն թըկելավ ետ տան: Էտ կուճի դերը մին ծակ մանս ա յոր օնես, քյիս: Ժողովուրթը գյիդանս ա, թան վեր մանսը ծակ ըլած չի ինի, թոխպը ետ կըտեոնա: Գյիդանս ըն, թան թոխպը լոխ էտ ծակավըն ա եկալ: Էտ կուճի դերին էլ ըն սպընես:

Մըիենգյ ուրանց կյիժոթունան էտ իրեք դերին էլ կուտուրես ըն:

Դե ետնան տըսնաս ըն, վեր ուրանց վարած արտերը վեչ մին պեն չի տըվավ, էնքան կոխ ըն տըվալ, վըննատակ ըրալ, ըսես ըն.

— Դե մըեր բախտն էլ իստի յա իլի, Ճարտարը հացավ լիգյը, Գիշին կյինավ լիգյը, մունք էլ իստի ծըռքընես տեոտակ, դանդանգյոն:

Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, հ. V, հատորի բնագիրը և ծանոթագրությունները՝ Ա. Մ. Նազինյանի և Մ. Մ. Գրիգորյանի (Սպանդարյան), նախաբանը գրեց Ա. Մ. Նազինյանը, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966 (-760 էջ), էջ 413, 414:

№ 12 ԱՂ ՑԱՆՈՒՇԷ

Էրգու ախպար արդին աղ ցանի գուն: Աղը ցանի գուն, աղը հողի մէջէ հալի գու, գերթա: Աղը ձրլի չի: Աղը ձրլի չի անա. «Էրթաք արդին բէդ էնիք», — գասին:

Գերթան, բէդ գէնին: Մէգ ախպարէ ինաթին, մէգէ իսաթիս գունգնի գուն, բէդ գէնին: Թուսթերչիզն ա թուս թերչի գու անօցմա մէգ հաղիզին ջագդին նէ-գէրչի գու: Ինաթինն ա թուսթերչիզին ցվանի դէյի, գուցքա:

Հէմ թուսթերչիզէ, հէմ մարթէ մերնի գուն, գերթան:

— Մէգ հաղիզ մէ ցինա քէնաց, մէգ հաղիզ մէ մինա քէնաց, — գասա ախպարէ:

№ 12/1 ԱՂ ՑԱՆԵԼԸ

(Թարգմանություն)

Երկու եղբայր արտում աղ են ցանում: Աղը ցանում են, աղը հողի մեջ հալվում է, գնում: Աղը չի ծլում: Աղը որ չի ծլում, ասում են. «Գնանք արտում հսկենք»:

Գնում են, հսկում են: Մեկ եղբայրը այն կողմում, մեկը այս կողմում կանգնում են, հսկում են: Մորելին էլ ցատկում է, նրանցից մեկի ճակատին է նստում*: Այն կողմինն էլ, որ մորելին սպանի, կրակում է:

Մորելին էլ, մարդն էլ մեռնում են:

— Մեկը ձեզանից գնաց, մեկն էլ մեզանից գնաց, — ասում է եղբայրը:

* Բնագրում «նէգէրչի գու», նշանակում է «կպչում է»:

Սերգեյ Վարդանյան, Նոր գրատումներ Արդվինի նահանգի Բորչքա քաղաքում, «**Ձայն համշնական**», ամսաթերթ, Երևան, 2014, № 9–10, էջ 8:

№ 13 ԱԴՈՐԸ ԿԼՈՒՄԸ

Պելանց շենան իրեք հոքի քինում ըն վերսի, դերն էլ տահանց նհետ: Քոռ քշաթոխսպը պատում ա, հնգերը հնգերեն տեսնում չի, քորքոռե տալավ քինում ըն: Թոխսպը մին խրեգ վեր ետ ամաչում, եշում ըն տեսնում ծորան մին լուս ա ըրվամ: Քաշկու-հնարքու պեն ա: Դերն ասում ա.

— Աստուծ ա, եկեք քինինք ըռաչին չոքինք խչըհանինք:

Քինում ըն ծորը էլ լուսը ըրվամ չի, բայց ծորեն տոշումը մին ծակ կա: Դերն ասում ա. «Աստուծ նի մտած ա ըննական ծակը: Տուք ծակեն ըռաչին վեննը կացեք, ես նի մննիմ, վեր վեններս մկրատ-մկրատ ըրե, գիդացեք վեր ըստծու խտտալ ըմ, վններաս ծիք տվեք տուս կալիք»: Հնգերունքն ասում ըն՝ լավ կընի:

Դերը նի ա մննում թա չէ՝ վենները փոնում ըն, հինչքան օժ օնին՝ ծիք տամ: Տու ասել վեր տա մին արչու պուն ա ընում, արչն էլ մաչին նստած: Նի մննելն ըբաթ, արչը դերին կոխը քցում ա ճանգը, վեր ծիք ըն տամ, դերը տուս ա կյամ առանց կոխ:

— Արա էս հինչ պեն ա, պա դերին կոխ չի՞ ըլալ:

Հնգերեն մինն ասում ա.

— ճիշտն ասած՝ ես հիշում չըմ:

Էն մինն էլ օտերը եր ա քցում:

Դե լավ, եկեք քինինք դրկնգանան հրցնինք, պետք ա վեր նա գիդա:

Քինում ըն:

— Դրակեն, ա՛ դրակեն, սօրե վեր դերը եկալ ա վերսի, կոխը յրան ա ըլա՛լ:

— Սօրվանից տեղեկություն չոնիմ, ամա իրեք օր սանա առաչ, աղանձ ըմ ըրալ, ինքն էլ աղանձ ա կերալ: Պա վեր ըլալ չի հու՛նց ա կերալ:

Լևոն Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, երկրորդ գիրք, Ստեփանակերտ, ԼՂՀ գրողների միության «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2004 (-424 էջ), էջ 60, 61:

№ 14 ՎԵՐՍԿԱՆ ԴԵՐԸ

Դեր նաև մին շինացե մինտեղ քյնամ ըն վերս: Ծմակավը քյնավիս մին առչու թագա հետ ըն քթենում, քյնամ տեսնում նի մտած պյոնը: Շինացեն դերին ասում ա. «Տոն ուստուծախոս մարթ ըս, ադոթ ընելավ, ուստուծու դաչանք ընելավ նի մըտ առչան փոնե, ես էլ քզանա, ծիք տանք, տոնս օսինք, մորթինք, կես անինք, շիլակինք, քյնանք տոն»:

Դերը համոզ ա կենում, քթեն տակեն ադոթ, դաչանք մոթմոթալավ, չորութաթ տալավ նի ա մնում պյունը, խուրանում:

Առչը դերին կլխան ա փոնում, շինացեն էլ վներան, ծիք ըն տամ, բուշցնում, դարթու տամ: Դերը տոնս ա կյամ առանց կլոխ: Վերսկանը մնամ ա մաթ մնացած, թա խն դերը առանց կլոխ ա: Տակ ա մտածում՝ կլոխ, ախերը ինքյը ուրան ասում. «Շլակիմ քյնամ շենը, հրցնիմ տեսնամ սօրե դերին կլոխը յրա յա իլավ»:

Իտի էլ անում ա: Շլակում ա, քյնամ շենան պատար դրադ վեր տնում, ինքը քյնամ դրկնգանան հրցնում. «Դրակեն, վեր սօրե դերը տանան տոնս ա եկալ, կլոխը յրա յա իլավ»: «Դոնգն ասած, իսկի իտի լավ տնտղալ չըմ, իտի խուրդավաթը մննես չի, լիա են ա մննես, վեր ուրո՞ւցյոնե աղանձ ուտելիս մրոքը տուրուր կյալիս ա իլալ»:

Վերսկանը քյնամ ա տեսնում դերը ընդեղ չի: Շատ ա շոռ կյամ, քթենում չի: Կյամ ա դրկգանը ասում. «Դերը ինձ թողալ ա, թաքուն քեցալ վերս: Հինչու պիրի կասիս ինձետե փայ դարկե»:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթապանակ «Միքայել Պետրոսի Օհանջանյան (Մոսկեր Ղարաբաղցի), Հեքիաթ-անեկդոտներ (Քաթ-մննսններ), Ա տետր», FF XII: 7105–7401 (էջ 7153):

№ 15 [ՌԸՄԱՑԻՔ] ՈՒ ԼՈՒՄՆԵԿՕՆՆԵՐ*

Մոյն մթանի Ռըմնցիք տիսնամ ըն՝ ըրգանքամը լոսնըկօս նրնամ չի. սպասամ ըն, սպասամ, տիսնամ՝ չէ լոսնըկօ չի կօյ:

— Ա՛յ տղարք՝ — նահամ ըն մոյն քանիսը — թն կօյ լոսնըկօն կրօհած այ. ակիք յօք տէրտէրին իմաց տօք՝ մոյն ճօր արիք:

Նելիս ըն. տէրտէրին նահամ. տէրտէրին յիտըները վիկալամ նելիս՝ շօն գոն լոսինը գոննին: Նելիս ըն, նելիս-գելիս ըն հըսանամ մոյն մաղարի՛ կէշտ: Մայտք ըն նարամ՝ թն կօյ լոսնըկօն հօկ մաղարին մաջին այ. վճռում ըն օր տէրտէրը մտայ մաղարին մաջը լոսնըկօն հանի: Տէրտէրին ատներիցը քանդիր ըն կապամ, օր ունչ այ՝ տէրտէրը մաղարիցը յիտ դնոնամ վախտը ատներիցը քաշին հանին: Տէրտէրը մտում այ. մարդիքը մաղարին առաջին սպասամ ըն: Սպասամ ըն, սպասամ՝ տէրտէրը դոնս չի գելիս, քանդիրը քաշամ ըն, տէրտէրին հանամ, համա տիսնամ ըն գլոնը վնրան չի. դոն մա նահիլ մաղարին մաջին մոյն օրջ էլած նստեծ, տէրտէրը մտնելու բնատ՝ գլիցը բոնում այ. իբօր դոնս դօլի մարդիքը քաշամ ըն՝ տէրտէրին գլոնը մնալիս այ արջին թանթոնլամը: Քաշամ ըն հանամ տիսնամ ըն տէրտէրին գլոնը վնրան չի. սկսում ըն յիտիտ մաջ հրցանամ՝ յարաք տէրտէրին վնրան գլոնի այ նել թն չէ: Ըսկի մոյնին մայտը չի: Նելիս ըն տէրտէրին կնգուն հըրցանամ՝

— Տրակին՝ տէրտէրին գլոնի նել այ թն չէ.

Տրակինը ջղօք այ տալիս թն՝

— Վալլահ գլոնի էլի չ՛էլիլը մայտըս չի, մոյն թնք ան այ մայտըս օր յըրկէ բինջար նօտամ վախտը մայրուքը դըմբդըմբալիս այ նել:

* Բնագիրը վերնագիր չունի (Ս. Վ.):

Սարգիս Սարգսեանց, Ագուլեցոց բարբառը (Զօկերի լեզուն), լեզուարանական հետազոտութիւն, մասն I, մասն II, ժողովածու, Մոսկվա, Скоропечатная О.Гербера, 1883 (մասն I, -136 էջ + մաս II, -74 էջ), մաս II, էջ 49, 50:

Տնն նան արտատպությունը՝ Ագուլիսի բարբառի մատնքներ, աշխատասիրությամբ **Արգամ Այվազյանի**, Կանխաբանությունը, բառարանի, ազգագրական նյութերի կազմումը ու ծանոթագրությունները Ա. Այվազյանի, Երևան, հեղինակային հրատարակություն, «Գասպրինտ» տպագրատուն, 2011 (-616 էջ), էջ 157, 158:

№ 16 [ՌԵՄԱՑԻՔ ՈՒ ԳՈՒԼԸ]*

Ռըմացիք հրվնքվամըն, որոշամըն օր նօն լուսնյակը բըռնին: Գեղի խելաք ումանին-տերտերն վիրըն կալամ նելիս դիրի Հաչա սորը: Դրուք քանի նելիսըն լուսնյակը քըշանամա, կամաց կամաց գյաղվամա սարի յիխկը:

Փուքուր ալըն նելիս տիսնամըն սարի մանջին մույն միծ ծոկ կօ: Աս միր խելաք տերտերի ուտներիցը քանդիրըն կապամ, մըտըցանամ ատ ծակի մանջը, օր լնսինը բըռնին: Սպասամըն, սպասամ տիսնամըն տերտերը դնս չի գելիս: Քաշամըն, քաշում տերտերին հանամըն տիսնամըն վնրնն գլնի չկօ: Դու մա նահիլ ատ ծոկը գնլի բննն նելամ, գուլը բռնումա գլուիք քաշում հանամ:

Վիրըն կալամ ատ տերտերի ջանը առանց գըլիի, նելիսըն նըրօ նմուն խելնք տըրկընգուն հրցանում՝ թե տերտերին գլնի օնի նել:

Տրնկինը նահամա.

— Գլուի էլիլը գիդնն չիմ: Ման անա մայտըս, օր ըրկե մըթանին բակլա ըտելուց մայրուքը տըմտըմբալիսա նել:

**Բնագիրը վերնագիր չունի (Ս. Վ.):*

Ագուլիսի բարբառի մասունքներ, աշխատասիրությամբ Արզամ Այվազյանի, Կանխաբանությունը, բառարանի, ազգագրական նյութերի կազմումը ու ծանոթագրությունները Ա. Այվազյանի, Երևան, հեղինակային հրատարակություն, «Գասպրինտ» տպագրատուն, 2011 (–616 էջ), էջ 175:

№ 17 [ՌԱՄԻՍԻ ՏԷՐՏԷՐԸ]*

Կյանքն քը չունգը յերգար նըստում ա, արիվը ըրվալիս չի, ժողովուրթը գյի-
նանլիս չի ինչ անին, էր ստ չունգը պատի չի արիվը տոնս կյոն:

Մըտածում ըն, մըտածում, հինարը քյիթանում ըն: Վիր ըն կալում լոնծանը ու
նանլիս ըն, էր չունգը լոնծի ծակի մէչավ հըռիկ տոն, արիվը ճարին, քըթանին:

Քըշեղավ-քըշեղավ նանլիս ըն մըն միծ քըրատոկ, ընդէղան կանում ըն, տըս-
նալիս ըն, էր լոնս ա ըրվանլիս, ասում ըն.

— Ըհը, նըրեվը քըթէնք, հարկավօր ա տէրտէրը առաչ ընգի, օռնէլօլ նօ,
արեվ տոնս պէրի:

Տէրտէրը մըտում ա ստ քրատօկը ու նանլիս, անքան ա նանլիս, էր պ գըրա-
լիս չի դիք-դիք նօ, պըրանում ա փուրի վէրան, նանլիս ա հասնում լոնսին: Տոն մի
ասիլ ստ լոնսը օչին աշկարն ա ընալիս:

Օչը էր տըսնալիս ա, էր մառթ ա գյօլիս, հըռցակվում ա վէրան ու կըլօխը
քաշում: Տէրտէրը մըտում վախտը ասում ա ժողովուրթին, էր ուտարըս տոնրոնր
ըմ տըրվալ, ան վախտը ինձ քաշիլ ըք հանէլ:

Օչը էր տէրտէրին կըլուխը քաշում ա հանում, տէրտէրը ուտարը թըփթը-
փացանում ա, ժողովուրթը քաշում ըն հանում, տըսնալիս ըն, էր կըլուխը կօ չի:

Ըստէղ մարթիք մընալիս ըն մանթան, ոնրոնր հըռցանում ըն, թէ տէրտէրը
գյօլիս վախտը կըլուխը վէրան ա նէլ, թէ չէ: Օչ օլ գյիտալիս չի՝ դոնօգ պատաս-
խան տօ, ճարները կըտրում ա նանլիս ըն տըրըկընգու կօշտը, հըռցանում ըն.

— Տընկյին, քըշէրվին, էր տէրտէրը էկալ ա, կըլուխը վէրան ա նէլ, թէ չէ:

Տընկյինը, թէ. — Դոնօգ ասիմ, մէտըս չի, մըն թնքը ան ըմ գյիդանլիս, էր մը-
թանին պանջան օտում վախտը մէրուքը տըմքտըմալիս ա նէլ:

* Բնագիրը վերնագիր չունի (Ս. Վ.):

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթապանակ
«Ռ. Հ. Բաղրամյան, Ժողովրդական բանասիրություն, Երևան, 1985», էջ 171, 172:*

№ 17/1 [ՌԱՄԻՍԻ ՏԷՐՏԷՐԸ]*

Կյանքունքը **չոնագր** յերգար նըստում ա, **անրիվը ըրվանլիս** չի, ժողովուրթը գյի-
դանլիս **չին** ինչ անին, էր ատ **չոնագր** պատի չի, **անրիվը** տոնս կյոն:

Մըտածում ըն, մըտածում, հինարը **քըթանում** ըն: Վիր ըն կալում լոնծարը
ու նանլիս ըն, էր **չոնագր** լոնծի ծակի մէչավ հըրիկ տօն, **անրիվը** ճարին, քըթանին:

Քըշելավ-քըշելավ նանլիս ըն մըն միծ քըրատօկ, ընդէդան կանում ըն, տըս-
նալիս ըն, էր լոնս ա ըրվանլիս, ասում ըն.

— Ըհը՛, **անրիվը** քըթէնք, հարկավօր ա՛ տէրտէրը առաչ ընգի, **օհնէլավ
նօ, անրիվը** տոնս պէրի:

Տէրտէրը մըտում ա ատ քըրատօկը ու նանլիս, անքան ա նանլիս, էր ալ գըրա-
լիս չի դիք-դիք նօ, **պըրանվում ա փըրին վէրան**, նանլիս ա, հասնում լոնսին: Տոն
մա ասիլ, ատ լոնսը **առչին** աշկարն ա ըլնալիս:

Օռչը, էր տըսնալիս ա, էր մաթօ ա գյօլիս, հըրոցակվում ա վէրան ու **կըլուխը**
քաշում: Տէրտէրը, մըտում վախտը ասում ա ժողովուրթին, էր ուտարըս տոնրոնր
ըմ տըրվալ, ան վախտը ինձ քաշիլ ըք, հանէլ:

Օռչը, էր տէրտէրին կըլուխը քաշում ա, հանում, տէրտէրը ուտարը թըլի-
թըլիացանում ա, ժողովուրթը քաշում ըն, հանում, տըսնալիս ըն, էր կըլուխը կօ
չի:

Ըստէդ մարթիք մընալիս ըն մանթանլ, ոնրոնր հըրոցանում ըն, **թան** տէրտէրը
գյօլիս վախտը կըլուխը վէրան ա նէլ, **թան**՝ չէ: **Օչօլ գյիդանլիս** չի՝ դոնգ պատաս-
խան տօ, ճարները կըտրում ա, նանլիս ըն տըրըկընգուն կօշտը, հըրոցանում ըն.

— **Տըրանկին**, քըշէրվին, էր տէրտէրը էկալ ա, կըլուխը **վէրան** ա նէլ, **թան**
չէ:

Տըրանկինը, թան.

— Դոնգ ասիմ, մէտըս չի, **մընթանք** ան ըմ գյիդանլիս, էր մըթանին պանջանր
օտում վախտը մէրուքը **տըմքտըմքալիս** ա նէլ:

* Նախկին ոամիսցիների օգնությամբ Սերգեյ Վարդանյանի ճշտած տարբերակը:

*Ռ. Բաղրամյանի ձեռագիր քնագրի հետ տարբերությունները տպագրվել են թավ տա-
ներով:*

№ 17/2 [ՌԱՄԻՍԻ ՏԵՐՏԵՐԸ]

(Թարգմանություն)

Գարնանը մշուշը երկար է նստում, արևը չի երևում, ժողովուրդը չի իմանում ինչ անի, որ այդ մշուշը չպատի, արևը դուրս գա:

Մտածում են, մտածում, հնարը գտնում են: Վերցնում են լուծերը ու գնում են, որ մշուշը լուծի ծակի միջով վռնդեն, արևին ճարեն, գտնեն:

Քշելով-քշելով գնում են մի մեծ քարայր, այնտեղ կանգնում են, տեսնում են, որ լույս է երևում, ասում են.

— Ըհը՛, արևը գտանք, հարկավոր է՝ տերտերը առաջ ընկնի, օրհնելով գնա, արևը դուրս բերի:

Տերտերը մտնում է այդ քարայրն ու գնում է. այնքան է գնում, որ էլ չի կարողանում դիք-դիք գնա, պատկում է փորի վրա, գնում է, հասնում լույսին: Դու մի ասա, այդ լույսը արջի աչքերն են լինում:

Արջը, որ տեսնում է, որ մարդ է գալիս, հարձակվում է վրան ու գլուխը պոկում: Տերտերը, մտնելու ժամանակ ժողովրդին ասում է, որ ոտքերս իրար տամ, այն ժամանակ ինձ կքաշեք, կհանեք:

Արջը, որ տերտերի գլուխը քաշում է, պոկում, տերտերը ոտքերը թփթփացնում է, ժողովուրդը քաշում է, հանում, տեսնում է, որ գլուխը չկա:

Այստեղ մարդիկ մնում են զարմացած, իրար հարցնում են, թե տերտերի գալու ժամանակ գլուխը վրան է եղել, թե՛ չէ: Ոչ ոք չի իմանում՝ ճիշտ պատասխան տա, ճարները կտրում է, գնում են տերտերկնոջ մոտ, հարցնում են.

— Տերտերկին, առավոտյան, որ տերտերը եկավ, գլուխը վրան էր, թե՛ չէ:

Տերտերկինը, թե՛.

— Ճիշտն ասեմ, չեմ հիշում, միայն այն գիտեմ, որ երեկոյան բանջարով ճաշ ուտելու ժամանակ մորուքը տմբտմբում էր:

Ագուլիսի բարբառի Ռամիսի խոսվածքից թարգմանությունը՝ Սերգեյ Վարդանյանի:

№ 18 ՇԱՄԲՑԻՔ ՈՒ ԱՐԵԻԸ

(Աստապատոցոց բարբառ)

Մին օր Շամբում ամպ կընի, կը մթնի, էլ արև չի ընայ: Շամբցիք կ'ասեն՝ Արևը մեզանէ խոռվել այ, գնանք ման գանք, բարըշենք: Կը գնան սար ու ձոր ման կը գան, չեն գտնիլ, ետի վերջը ետ դառնալուս կը տենան մին ծակը մին բան պլստում այ: Կ'ասեն՝ էս այ, արևը գտել անք: Ու՛մ դրկենք կուշտը, ո՛ւմ չդրկենք, որ մեզ հետ բարըշացնի, — կ'ասեն՝ Տէրտէրի հետ դօստ կընի, տէրտէրին դրկենք գնայ բարըշացնի: Տէրտէրի գլուխը կը ճխտեն ծակը, հա՛, կը կաղնեն թէ դուս այ գալու: Հաւսալէքը կը կտրուի՝ կը քաշեն տէրտէրին կը հանեն, կը տենան՝ գլուխ չունի: Մինմնու կ'ասեն՝ Տէրտէրը գլուխ ու՛նէր: — Չէ, չունէր: — Գնանք տէրտէրակնկան հարցնենք: — Կը գնան տէրտէրակնկան կը կանչեն, կ'ասեն.

— Տիրօխնի, տէրտէրը գլուխ ու՛նէր: — Կ'ասի.

— Չեմ գիտում, գլուխը միտս չի, մենակ հաց ուտելուս մին գատ դըմդըմբում էր:

Հայ-ժողովրդական հէքիաթներ, ժողովածու Տիգրանայ Նաւասարդեանց, վեցերորդ գիրք, Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի, 1890 (-152 էջ), էջ 56:

№ 19 ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԱՐՁԸ

Արջը մտած կլինի գյուղի այգիները: Գյուղացիք էլ իրենց օրում Արջ տեսած չեն լինի: Գյուղացու մեկը հեալով գյուղ կվազի ու կասի. — Եկեք տեսեք ինչ աստու պատիժ է գյուղ մտել:

Գյուղացիք էլ տերտերին ձեն կտան, խաչ-ավետարանով գա, որ աղոթքով ցատումը գյուղից հեռացնի: Տերտերը խաչ ու բուրվատով, աղոթք ու շարական ասելով, գյուղացիք էլ՝ ծեր ու մանուկ լաց ու կոծով կերթան արջին տեսնելու: Տերտերը կմոտենա արջին, մնացածները հեռու կկանգնեն:

Արջը վրա կհասնի, տերտերի գլուխը կպոկի ու կթոցնի: Գյուղացիք կտեսնեն, որ արջը չկա, կմոտենան, կտեսնեն տերտերը կա, գլուխը չկա:

Տերտերին կվերցնեն տուն կտանեն ու իրիցկնկանը կհարցնեն. — Տերտերը գլուխ ունե՞ր, թե չէ:

Իրիցկիներ կասի. — Վալլանի, չեմ իմանում գլուխ ունե՞ր, թե չէ, համա երկու օր առաջ աղանձ ուտելիս միրուքը կտմբտմբար:

Ծաղկեփունջ, հայ ժողովրդական առակներ, զրույցներ, խաղեր, առածներ ու հանելուկներ, ժողովածուն կազմել և նյութերը մշակել է Արտաշես Նազինյանը, Երևան, Հայպետհրատ, 1960 (-148 էջ), էջ 60:

№19/1 ПОП И МЕДВЕДЬ

Как-то в сельский сад забрел медведь, а крестьяне никогда в жизни его не видели. Один из них стремглав прибежал в село и крикнул:

— Идите скорей, посмотрите, какое божеское наказание выпало на долю нашего села!

Крестьяне позвали попа и попросили его пойти с крестом, Евангелием и помолиться, чтобы отвести божий гнев от села. Поп с крестом и кадиллом шел и молился, а крестьяне, стар и млад, со слезами шли за ним. Поп подошел к медведю, а крестьяне остановились поодаль.

Медведь навалился на попа, оторвал ему голову и убежал. Крестьяне, заметив, что медведь исчез, подошли... и увидели, что у попа нет головы.

Попа отнесли домой и спросили попадью:

— Была у попа голова или нет?

— Валлах, не знаю, была у него голова или нет,- ответила попадьа, — два дня назад, когда он ел жареную пшеницу, борода у него тряслась.

Армянский фольклор, составление и перевод Г. О. Карапетяна, Москва, изд. «Наука», 1979 (- 376 с.), с. 151.

№ 20 [ԿԱՃԵՏՑԻ ՔԱՀԱՆԱՅԻ ԳԼՈՒԽԸ]*

Քրդերը մի կաճեացի քահանայի գլուխը կտրեցին տարան: Երեցկինը լալով ասում էր.

— Տէր խոկետրին մի բան պակաս ի, չեմ կինայ ինչ ի:

Գիւղացիք ժողովուեցան քահանայի դիակի մօտ, շատ մտածեցին ու քննեցին:

Վերջապէս մէկն ասաց.

— Խոկետր խօր մօրուսն ի պակաս, մօրու՛սը:

Միւսը թէ.

— Տխայ վալայ, մօրուսի մօտի բերանն էլ ի պակաս:

Երրորդը.

— Տխայ, աչքերն էլ ի պակաս:

Իսկ երեցկինը սկսեց ողբալ.

— Ա՛խ, խոկետր տիրոջ կլոխը թախըմնով ի պակաս:

* Բնագիրը վերնագիր չունի (Ս. Վ.):

Անեկդոտներ, հատոր III, աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարանում, 1883 (-256 էջ +XII), էջ 64, 65:

№ 21 ԿԱՃԵՏՄԻ ՏԵՐՏԵՐԸ

Ասեսեն Ոսմանլույի խողը, Շատախի մը հալը, կանճետ անընով մե կեղ կա, ետ կեղի մնիլուխաթը թնմնըզ ասեսեն սարսաղ, անլիքյնմ են...

Մէ խետ ետ կեղեն ութ-տաս խոքի եթնսեն ավի, տննցը մե առչ ի ոռչահ իկնլի, վոր տսնասեն առչին, հարայ-մնդնթ են ննելի, առչը ախու փախնելի մնելի մե յեքքա ծակի մեչ: Ժողնըվեսեն, իշթնր ննենք, իշթնր խանենք ետ առչը, մէյն ասելի.

— Տղներ, եթննք կեղեն մեր տերտերին պերենք, թո իկա աղոթի առչին խանի...

Եթասեն տերտերին պերեսեն իկնլի մղնյի աղոթք ի կնոթալի, նոր կլոխը ճխտելի ծակը, վոր տսնա առչը ինչ հալիյի, առչը նլրնլը թնթը թնլելի տերտերի կլոխը պոցուցելի տանելի: Ավչիները շատ վոր սպասեսեն տսնասեն տերտերը տուս չի կյնլի, պոնեսեն վոտերեն քաշեսեն խանեսեն... վոր խանեսեն մէյմէկու ասեսեն. — տղներ, տերտերին վոր պերինք կլոխը վրնն էր թէ չէ... Ասեսեն, — չէհննլի վալլա: Ըլեսեն իկնսեն տիրոխնիյեն են խառցուցել.

— Տիրոխնի, — ասեսեն, — վոր էկանք տերտերին տարանք, կլոխ կա՛ր վրնն, թէ չէ: Տիրոխնին միթկ ննելի, ասելի.

— կլոխ-մլոխ չէմննլի վալլահ, ամմա էտ մէ պննը զէհնիս իկնլի վոր, խաց ուտելուն տերտերի տննան (չննան շաշ տալով) մէ դմստա մազ կար հա՛ իրար կը կըպնէր...

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթապանակ, վրան գրված է. «Գ. Թարվերդյան, Անեկոռտներ յեվ Առածներ, Հանելուկներ, Շուտասելուկներ Սալմաստեցոց Բարբառով, Հավաքել եմ 1895 թվից մինչև 1933 թ.», FFI:1495-1798 (էջ 1587):

№ 21/1 ԿԱՃԵՏՈՒ ՏԷՐՏԷՐԸ

Ասէս էս, Օսմանլոյի խօզը՝ Շատալիսի մըհալը, Կանճետ անընօվ մէ կէդ կա, էտ կէդի մնխլուխաթը թանմնրզ, ասէս էս, սարսաղ, անլիքլանմ էս...

Մէ խէտ էտ կէդէն ութ-տաս խօքի էթան էս ավչի, տանցը մէ առչ ի ուոջահ իկնլի, վօր տըսնաս էս առչին, հարայ-մննդանթ էս աննէլի, առչը ախու փախնէլ ի, մնէլ ի մէ յէքքա ծակի մէչ: Ժօղնըվէս էս, իշթանր աննէսք, իշթանր խաննէսք էտ առչը: Մէյն ասէլ ի.

— Տղնէր, էթանք կէդէն մեր տերտերին պերէսք, թօ իկա աղօթի, առչին խանի...

Էթաս էս, տերտերին պերէս էս: Իկնլ ի մղանլի աղօթք ի կննթալի, նօր կլօխը ճխատլ ի ծակը, վօր տըսնա առչը ինչ հալիյ ի, առչը անրանը թանթը թանլէլ ի, տերտերի կլօխը պոցուցէլ ի, տանէլ ի: Ավչինէրը շատ վօր սպասէս էս, տըսնաս էս տերտերը տուս չի կյանլի, պոնէս էս վօտերէն, քաշէս էս, խանէս էս...

Վօր խանէս էս, մէյմէկու ասէս էս. — Տղնէր, տերտերին, վօր պերինք, կլօխը վրան էր թէ չէ...

Ասէս էս, — Չէհնանլի, վալլա:

Ըլէս էս, իկնս էս տիրօխնիյին էս խաոցուցէլի.

— Տիրօխնի, — ասէս էս, — վօր էկանք տերտերին տարանք, կլօխ կանր վրան, թէ չէ:

Տիրօխնին միթկ աննէլ ի, ասէլ ի.

— Կլօխ-մլօխ չէմնալի, վալլահ, ամմա էտ մէ պանը զէհնիս իկնլի, վօր խաց ուտէլուն տերտերի տանն (չաննն շաշ տալօվ) մէ դանստն մագ կար, հա իրար կըկըպնէր...

Խոյի (Սալմաստի) բարբառակիրների օգնությամբ Սերգեյ Վարդանյանի ճշտած տարբերակը:

№ 22 КАК ЦЕРКОВЬ ПЕРЕДВИГАЛИ

В одной деревне церковь была далеко от деревни. Сельчане сказали:

— Мы зимой ходить в церковь не можем, не знаете ли, как нам ее приблизить к деревне.

Один человек сказал:

— Пусть поп станет на престол, голову через окошко высунет наружу, накинем на нее веревку, будем тянуть, поп будет встряхиваться, а церковь сдвигаться.

Потянули – шея у попа удлинилась, а потом порвали шею, выдернули наружу, видят – голова покатилась.

Сказали:

— Что это такое, это же не наш поп, у нашего попа было еще и тело!

Сказали:

— Понесем, попадью спросим.

Понесли. Попадья катала тесто.

Сказали:

— Ну-ка, посмотри, это наш поп или нет?

Посмотрела, сказала:

— Ей-ей, не знаю; когда наш поп ел, борода у него тряслась; испытаем, дадим ему немного похлебки – ну-ка, будет ли трястись борода?

Иосиф Орбели, Фольклор и быт Мокса, Академия Наук СССР, института востоковедения, Москва, главная редакция восточной литературы издательства «Наука», 1982 (- 144 с.), с. 73.

Иосиф Орбели, Избранные труды в двух томах, т. II, составитель и редактор тома доктор исторических наук, профессор П. М. Мурадян, Ереван, издательство «Гитутюн» НАН РА, 2002 (-XVI+ 456 с.), с. 140.

№ 22/1 [ԷՐԷՑ ԿԸՑԸՆՁԱՆ, ԺԱՄ ԿԸՑԸՆԴԱՆ]*

Կեղըմ ժանտուն գանտըն կիլնը՛:

Կեղանկան սիցին.

— Մինք՝ ծըմեռ չընք՝ կանրը՛ յն ժան կը՛տնէք՝ ընչըխ տըմօտխըսցինք՝ կեղին:

Մանրթըմ էսանց.

— Էրեց թըխ կաննը՛ սեղան, կըլօխ հորտոնսվէ թըխ խանը՛ տոնս, պանանըմ իցկինք՝ հինը՛ քէշինք՝. էրեց կըցընան, ժան կըտընան:

Քէշիցին, իրիցոն վիզ հերկընցսվ, նուր վիզ ճօփկիցին, քէշիցին տոնս, տեսան կըլօխ ը՛ կըլուրվանվ, սիցին.

— Նան ինչկ ը՛, նան չը՛ մի էրեց, մի իրիցուն ջանդանկ կեր: — Սիցին. — տանինք՝ տերօխրուն խանրցնինք՝:

Տանան, տերօխրին կոննդ կաներ, սիցին.

— Մըհան իրիշկը՛ նան մի էրէցը ը՛, թի՛ չը՛:

Իրիշկից, էսանց.

— Իոլան, չը՛մ կը՛տնան. մի էրեց ինչ խանց կուտեր, անու մուրուս կըտընդըղկըտեր. ջանքինք՝, փշում ճանշ տանք՝՝ մըհան տընդըղկըտն՛:

* Բնագիրը վերնագիր չունի (Ս.Վ.):

Иосиф Орбели, Избранные труды в двух томах, т. II, составитель и редактор тома доктор исторических наук, профессор П. М. Мурадян, Ереван, издательство «Гитутюн» НАН РА, 2002 (–XVI + 456 с.), с. 66.

№ 23 ՏԵՐՏՐՈՉ ՄՈՒՐՈՒՍ

Տերտեր կը մտնի: Քանիմ օր ետ գեղակիիստեր ուրենց մեչ խոսքի կը պովեն, թե մեր տերտրոչ մուրուս կներ, թե չըկեր: Մեյ քանիի կասեն՝ կեր, մեյ քանիի թե՛ չըկեր: Կերթան մո՛ տիրուխնին. — Տիրուխնի, տերտրոչ մուրուս կներ, թե չըկեր:

— Պյամը կեր.
Կերթեր, կուզեր,
Մածուն կուտեր,
Նյամ, նյամ կաներ,
Էլ չեմ կիտե,
Կներ, թե չըկեր:

Ծիծաղում են վանեցիները, ժողովածու, կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Երևան, «Զանգակ-97», 2006 (–196 էջ), էջ 144, 145:

Բնագիրը տեսն **ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ**, թղթապանակ «Անեկդոտներ Վան քաղաքի բարբառով (նաև զանազան բարբառների փոքրիկ ասոյթներով)», հավաքեց յեվ գրի առավ Սենեքերիմ Շալջյան, 1935թ. նոյ. 13-ից սկսուած: Հունիս 20, Երևան, 1936», FFI: 6399,01(էջ 38):

№ 24 ԿԱՃԷԹ-Ս՝⁹⁹⁴ ԾԸՌԵՐ⁹⁹⁵

Կանճեթան կյեղ հանխապիւրմ կեր, վալ անու ճիւր կըխըմէր՝ կըծըռովէր: Կանճեթ-
ցեր ճիչ ու պըստիկ ան հանխապրի ճիւր կըխըմէն՝ կըծըռովէն: Անու խանմար շանտըխ-
ցիք կանշտըցիբոն⁹⁹⁶ կըսէն «Կանճեթան ծըռեր»:

Օրըմ էվարին Կանճեթան տերտէր թանննշա կանի ու կըտիսնի, թան ինչըխ
արէկյանկ մէր կըմըտնի Աննուսան սարի հիտեվ: Կըկանչի ըզժանմխար, կըսի.

— Տըղւմ, կընան ժաննատան գանգեր գան:

Ժանմխանը գանգեր կըգանրկի, ու կյեղանկան հըմէն կըժողվվին կըկյանն ժան-
տան տիւռ:

Տերտէր կըսի.

— Օրնվանծքեր, մինք չոր հանսոր աշկեր պանց կոր էնք: Մինք չէնք տի-
սիր, ինչըխ հըմէն օր հըրկուն արեկյանկ կըյան, կիճնի Աննուսան հանկող, փալ կը-
տա անու, կըքընի: Էկէք, աղօվ, մանտնղօվ յանք անու մօտ ուխտ:

Ծուռ կանշտըցեր խավան կացին ուրենց տէրտըրոչ խրատին: Քյանցին հըմէն
տուն, մանման մաքիմ, էճըմ, կյանողմ, ուլըմ պիրին ժանմտան տիւռ, տը տանին, մա-
տաղ անին արեկյանկան:

— Էկէք, օրնվանծքեր, ժանմտուն շըկկինք տանինք խան մի: մըր չըտանինք՝
արեկյանկ ըզմէր աշկեր տըխանի:

Կանշտըցիք սիցին.

— Ժանմտուն տէրտըրոչն ի, թըխ տէրտէր շըկկի:

— Իսմ, տըշըկկիմ, — սաց տէրտէր, — յես մըկա տըլպանցընանամ, յեմ կը-
լօխ ժանմտան հանկաննտվէ տըխանին տիւս, տիւք քյանցէք կյեղ, քյաննիմ չըվան
կա՝ պէրէք կապէք մանանկու, ծէրըմ արէք օղ, իսկէք յեմ վիզ, ծէրմ էլ թանլէք
ժանմտան պիւր, քյէշէք ժանմտուն խանէք վան ճի, տը շըկկիմ տանիմ:

Կանճեթան ծըռեր ուրենց չըվանքյտեր կանպըցին մանանկուց, ծէր արին օղ իս-
կըցին տէրտըրոչ վիզ, ծէրմ էլ թանլըցին ժանմտան պիւր ու կյեղով թափան, տը
ըզժանմտուն քյէշէն խանեն, վան տէրտըրոչ:

Մըկյա քյաննի կըքէշին, օղ կըկըքյվի ու ըզտէրտըրոչ վիզ կըքյամի: Տէրտէր

⁹⁹⁴ Կանճեթ – գյուղ Շատախում:

⁹⁹⁵ Ծուռ – խենթ:

⁹⁹⁶ կաշտըցեր – կանճեթցիներ:

քիչ կըմընա, տը բսհչի⁹⁹⁷: Անու պերան կըպսցվի կըխըփվի, սստսնքեր կսնրսնվան: Կսնշտըցեր կըշկին, գյո չըն խսնսկսնս, տը տերտեր կըխսխստվի: Անոնց խսնկվին տերտեր կըծըծղա:

— Քյէշէք տըղտեր, — կըսին կսնշտըցեր մսնսնկու, — քյէշէք, տերտեր խընդսնց՝ ժսնստուն տընդսնց:

Քյէշըցին, սսկոսմ քյէշըցին, չուր տերտըրոչ վիգ պոկվսվ, կըլոխ ընգսնվ ժսնստան պստի տսկ, ջսնդսնկ ընգսնվ ժսնստան մէչ:

Կսնճէթսն ծըրեր դէս շկըցին՝ տերտեր չըկս, դէս շկըցին՝ տերտեր չըկս: Մըտսն ժսնստուն, տէսսն տերտեր գյո ընգիի ի վսնր տսխստին, կըթըփթըփս, կըլոխ վերէն չի:

— Տըղս՛, սնն հու՛ր ի մեր տերտըրոչ կըլոխ.

— մլսն, յէս չըմ տիսիի:

— մլսն, յէս էլ չըմ տիսի:

— Հսնպսն վսնվն ի տիսի...

— Աստվսծ կյիտի...

— Տո՛, մսն քյսնցէք տըրխտըրուն խսնրցցէք՝ հսնկյնխ ընչ տերտեր տընէն իլիի ի տիս, կըլոխ վերէն էր, թի՛ չէ...

Կսնշտըցիք քյսնցին մսն տըրխտըրին:

— Իսսթուն տըրխտըրի, — սիցին, — մեր տերտեր գյո ընգիի ի ժսնստան մէչ, կըթըփթըփս, կըլոխ կուրսիի ի, կսն իկիսքյ՝ չըկսդսնսքյ: Մըկս չընք կյիտի, սնոսնվտուն տը տընէն տիս ի իկիի, ուր կըլոխ վերէն էր, թի՛ չէ...

— Յէս հու՛ստ կյիտիս՝ կըլոխ վերէն էր, թի չէ, — սսց տըրխտըրին, — մէ պսն կըհիշսմ, տը մսծուն կուտեր, մուրուս կըլեր, կըկյեր, կըտըմտըմբեր...

Մարլենս Մուրադյան, Շատսխի բարբտըր, Երկսն, Երկսնի պետսկսն հսմսլսսսրսնի հրստարսկչություն, 1962 (–228 էջ), էջ 176, 178:

Բստերի բսցստըրությունները Մարլենս Մուրադյանի գրքի բնսգրինն են (Ս.Վ.):

⁹⁹⁷ բսհչել – խտղդսմսհ սնել:

№ 25 ՏԵՐՏԵՐԻ ՄԻՐՈՒՔԸ

Գեղացիք թոփ կըլլին ժամին դուռը, խոսին կը, թը՝ մեր ժամին տեղը լավը չէ, էսինչ տեղը ըլլիր, ավելի լավ կըլլիր: Մեկը կըսեն՝ ժամը քակենք, հոն շինենք, մեկնա կըսեն:

— Ախպար, օր քակենք, վախենամ չըկըրնանք շինեն, էտևա գեղովի առանց ժամ մընանք:

Վերչապես կանչեն կը իրենց գեղին ամենագիտունին, կըսեն ժամը տեղափոխելու իրենց ցանկության մասին և կարծիքը գուզեն իմանալ:

— Լավ, կըսեն, եփ օր էտման է, նա քակենք, նայա բան: Արիք առանց քակելու քաշենք, տեղափոխենք էստեղ:

Գեղացիք կըսեն՝ կըյնընք: Հա՛, կըսեն, քնացեք տերտերին կանչեցեք, թող քա: Տերտերը քուքա: Էնորա կըսեն օր, ըշտը, էս ժամը պիտի տեղափոխենք: Արի դու մըտի ժամը, քու օրհնութենովըդ ու գորութենովըդ, մե քիչմա մեր օքնութենով տեղափոխենք:

Տերտերը մըտնի կը ժամը՝ օրհնության: Էտև տերտերին կըսեն:

— Այսի պզտի աքոշկեցեն գլխըդ դուս հանեն: Տերտերը, ըշտը, գլխը մե կերպըմ դուս կը հանեն: Գութնին ժընջիները փերեն, կանցընեն տերտերին ճիտը, կապեն կը: Գոմընին, քանիմ ջուխտ բանող անասուն, փերեն լըծեն կը: Տերտերը կըսկըսեն Տերօդորմյա ըսելը: Մալը, հայ ըսելուն պես, օր չի քաշե, տերտերին գլխը կը թըռնի:

Ժամկոչը մեմա էն կը տեսնի օր, տերտերը ժամին մեչը կը շըփփա, գլխնա վրան չէ: Ափալ-թափալ վազգե կը դուզ տերտերանց տունը: Ճըվալեն մըտնի կը նես ու կըսեն:

— Իրիցկին, տերտերն օր ժամ էկավ, գլխը վրան էր:

— Գլխը հըպը ճըրտեղ պիտի ըլլիր, — կըսեն իրիցկինը:

— Իրիցկին, հոքուդ մեռնիմ, — կըսեն ժամկոչը, — հըլը մեմ լավ հիշե, էտիկ հիմի շատ կարևոր է:

— Վալլան, — կըսեն իրիցկինը, — չեմ կըրնա ըսեն, գլխը վրան էր, թե չէ, հըմը էսքան գիտեմ, օր միբուքը շընկար կը:

Վարդ Բոդյան, Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, կազմեց, առաջաբանը գրեց և տեքստային անհրաժեշտ ծանոթագրությունները կատարեց Ռաֆայել Ղարիբյանը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014 (–752 էջ), էջ 406, 407:

№ 26 ԽԵԼՕՔ ԴԱԻԹ

Կար ու չիկար խելօք Դաիթ անունով մէկը կար:

Խելօք Դաիթ ի բնէ տգեղ ու տճեւ էր, իր անտիական հասակով, Մալայեան բերնով, Մոնկոլեան ճակտով եւ իր հնդկական աչքով կոպիտ վայրենի մըն էր: Սակայն իր իմաստութեամբ ու ճարտասանութեամբ հոչակուած ու համբաւուած էր գեղին մէջ, այնպէս որ ամէն մարդ խորհուրդ հարցնելու համար իրեն կուգային, եւ կամ, երբ երկու հոգի իրարու հետ կազ ու կոխ ունենային՝ իրեն կը դիմէին որ վճճը դադրեցնէ եւ կամ վճիռ մը տայ: Իսկ կիրակի ու տօսի օրերը գեղացիներն իր գլուխը ժողված՝ անոնց բանաստեղծական ոճերով ճառեր կը ճամարտակէր ու գեղացիները կը հիացնէր:

* * *

Օր մը, մինչ այսպէս ճառեր կը խօսէր, գեղացիներուն մէջէն մէկն ըսաւ. «Տէ՛ր իմ, Աստուած քեզի երկար օրեր տայ, բայց երբ դուն մեռնիս, մենք ի՞նչ պիտի ըլլանք առանց պաշտպանի եւ ուղեցոյցի, խն[դ]րենք ասոր դարման մը խորհէ՛ք»: Մեր խելացին վայրիկ մը խորհելէ ետքը, գասթիլեան հպարտութեամբ մը ըսաւ. «Պոլիս խելք կը ծախեն եղեր, պէտք է Պոլիս երթալ ու խելք ծախու առնել»: Ասոր վրայ գեղացիները աղաչեցին իրեն թէ ինք երթայ անձամբ ու ծախու առնու»: Դաիթ կը հաւանի այս խորհրդին եւ իրեն մեծ քսակ մը ոսկի կուտան գոր իր մախաղին մէջ կը դնէ ու կ'ուղեորի դէպի Պոլիս: Քանի մ'օր ճամբորդութիւն ընելէ ետքը պանդոկ մը կը հասնի ուր քիչ մը հանգիստ կ'առնէ եւ դուրս կ'ելլէ պտտելու համար: Մինչ այս մինչ այն, մարդ մը կը տեսնէ որ գլուխը զամբիտով մը բան մը կը տանէր (ձմերուկ): Մեր խելացին այս մարդը քովը կանչելով՝ կը հարցնէ անոր թէ ի՞նչ է այդ ծախածը: Մարդը այս հարցման զարմանալով կը պատասխանէ. «Իշուկի հաւկիթ՝ գոր ճեղքելու ըլլաս, մէջէն աւանակ մը կ'ելլէ»: Այս խօսքին Դաիթ հաւանելով՝ մէկ ոսկի կու տայ եւ հատ մը կ'առնէ ու իր մախաղին մէջ կը դնէ՝ ըսելով ինքնիրեն. «Ի՛նչ աղուոր բան է ասիկայ, վաղը երբ խելքը գնելէս ետք վերադառնամ գեղը, ասիկայ կը ճեղքեմ ու աւանակին վրայ հեծնելով գեղս կը հասնիմ», այս երագով կը շարունակէր իր ճամբան:

* * *

Վերջապէս Պոլիս կը հասնի. կը հիանայ, երբ կը տեսնէ ծովը, նաւերը, մեծ ու շքեղ բնակարանները, շուկաները եւ այն տեղի փայլուն իրերը: Եւ երբ այսպէս չորս կողմ դիտելով ապշած ու յափշտակեալ մտքով կ'երթար, մարդուն մէկը իր

դիրքէն կը կռահէ թէ պարզամիտ մէկն է՝ անոր կ'ըսէ. «Ինչ կ'ուզես, ինչ պիտի գնես, ըսէ՛, խնդրեմ»: Մեր խելացին պատասխանելով կ'ըսէ. «Խելք ծախու պիտի առնեմ»: Մարդը տեսնելով թէ կատարեալ տգէտ ու ապուշ մէկն է կըսէ. «Շատ աղէկ, ես ծախեմ. սակայն դրչափ ստակ ունիս»: Խելացին ուրախութեամբ մը իր մախաղէն հանելով քսակը, կ'ըսէ. «Ահա այսչափ է»: Մարդը կ'աւելցընէ. «Շատ լաւ, եկու՛ր երթանք մեր տունը, քեզի տամ խելքը»: Երկուքը միասին կ'երթան ու անձանօթը այծենի տիկ մը կ'առնէ ու փչելով զայն կ'ուռեցընէ ու Խելացի Դաւիթին ձեռքէն ստակը առնելով կ'ըսէ. «Ահա, խելքը ասոր մէջն է. սակայն չըլլայ որ բանաս, եթէ բանալու ըլլաս, խելքը կը փախչի. իսկ երբ գեղը հասնիս, բաց, գեղացիները եթէ գլուխդ ժողվես՝ ամէնքնիդ ալ պիտի խելօքնաք»: Մեր պարզամիտն այս այծենին առնելով՝ իր նպատակին հասնող մարդու մը ուրախութեամբ ճամբայ կ'ելլէ: Իսկ ձմերուկը գոր ինք կը կարծէր իշուկի հակիրթ, ճամբան քարի մը զարնելով երկուքի կը ճեղքէ և ճիշդ այնտեղ նապաստակի մը խշտեակը ըլլալով, նապաստակն այն ձայնէն կը խրտչի: Դաւիթ՝ կարծելով թէ աւանակն է, կ'սկսի ետեւէն վազել, խելացին կը փախչի, նապաստակը կը փախչի եւ վերջապէս չկրնալով ետեւէն հասնիլ, կը վհատի ու տրտում տխուր կը շարունակէ իր ճամբան: Ի վերջոյ իր գեղը հասնելով՝ հոն ջրհորի մը քով կը նստի, որպէսզի հանգչի: Եւ մինչ կը նստէր, ինքնիքն կ'ըսէ. «Հիմա որ ես խելքը տանիմ, ամէնքը մէկէն իմ ձեռքէս կ'առնեն, ալ ինծի չիմնար. ուստի ես հիմա, քիչ մը խմեմ»: Այծենիին բերանը կը բանայ, մէջի օդը կը պարպուի սուլելով: Դաւիթ զայս տեսնելով, ճիչեր կ'արձակէ և կը պոռայ ահեղագոչ. «Խելքը փախան, խելքը փախան»:

* * *

Գեղացիներն երբ այս ձայնը կը լսեն, ամէնքը մէկէն կու գան եւ կը տեսնեն որ իրենց տէր, խելօք Դաւիթը եկած է: Կը հարցնեն անոր թէ ինչ ըրած է, գնէր է արդեօք խելքը. եւ խելացին պատասխանելով կ'ըսէ. «Թէպէտեւ խելքն առի, սակայն քիչ մը խմելու համար բերանը բացի, եւ այն ալ այս ջրհորը փախաւ, հիմա շուտով չուան մը բերէք, որ հանենք, շուտ բերէք որ չփախչի խորքերը»: Չուանը բերելով՝ մէջը մարդ մը կ'իջեցնէ ու մարդը կ'սկսի փնտռել:

Շատ մը փնտռելէ ետքը, չի կրնար գտնել եւ այն տեղերը ծակ մը գտնելով գլուխը մէջը կը խօթէ, կարծելով թէ խելքը անոր մէջն է, եւ ծակին մէջէն կը կանչէ. «Չիկայ, չիկայ»: Գեղացիները կարծելով թէ «քաշէ՛, քաշէ՛»⁹⁹⁸ կ'ըսէ, ամէնքը մէկէն կ'սկսին քաշել, բայց որովհետեւ մարդուն գլուխը ը ծակին մէջ էր, մարդը չի կրնար պոռայ, եւ այսպէս ամէնքը մէկ քաշելով մարդուն գլուխը կը կտրուի եւ

⁹⁹⁸ Այս մանրամասն տաճկերէն պատմուած ըլլալով՝ հայերէն «Չիկայ, չիկայ», բառերը տաճկերէն «Չէք հա, չէք հա» (= քաշէ՛, քաշէ՛) հասկցում են:

ծակին մէջ կը մնայ: Գեղացիները մարդը հանելով կը տեսնեն որ գլուխ չունի եւ կասկածելով՝ կ'ըսեն իրարու. «Աղբար, ասոր գլուխը ու՛ր է», ամէնքն ալ կ'ըսեն իրարու. «Աղբար, աս մարդը գլուխ ունէ՛ր, չունէ՛ր»: Եւ այսպէս մինչ կը վիճէին թէ ունէ՛ր, չունէ՛ր, կ'որոշեն որ անոր կնոջ հարցնեն, թէ ամուսինը արդեօք գլուխ ունէ՛ր, ի վերջոյ կը կ'անչեն իր կինը, ու խելօք Դաւիթ կ'ըսէ, «Աշկին, ամուսինդ գլուխ ունէ՛ր»: Կինը կը պատասխանէ. «Վալլահ կ'ասենմ, աշ ուտելու ատեն **սս-խալը տոմ տոմ** կ'ընէր ես, ունէ՛ր, չունէ՛ր, չեմ գիտեր»: Ասոր վրայ խելացին կ'ըսէ թէ «Հէյ կոպիտներ, ես ձեզի չըսի՞ որ այս մարդը գլուխ չունէր, հայեցէ՛ք, մեռեր է, ակ արթըննալիք չունի, առէ՛ք ու հողըրտըն (գերեզման) թաղեցէ՛ք»: Գեղացիները կ'առնեն ու կը թաղեն: Այն ատեն խելօք Դաւիթ գեղացիներուն կ'ըսէ. «Հիմա այլ ես խելքը փախաւ. կեցէ՛ք ձեզի բան մ'ըսեմ, երբ ես մեռնիմ, իմ մօրուքիս թելերէն առէ՛ք եւ ձեր քովը պահեցէ՛ք, որովհետեւ ես Պոլիս ակ աւելի խելօքցայ. խելք ծախողը ինծի բաւական տաճ էր. այսպէս դուք ալ կը խելօքնաք»: Զայս ըսելով գեղացիները կը մխիթարէ որ շատ վշտացած էին խելքին փախչելուն համար:

* * *

Ասիկայ մանրավէպ մըն է: Թէ խելօք Դաւիթ անուն մէկը կար թէ՛ չկար, չենք գիտեր, բայց միշտ պակաս չեն ջոջ խելօք Դաւիթներ, որոնք քաղաքակրթութեան կեդրոններէն իրենց ծննդավայրը կը դատնան քաղաքակրթութեան յոռի եւ կեղծ կողմը միայն օրինակելով եւ իրենց ուռուցիկ ու սնամէջ տիկերով կը հրապուրեն ու կը խաբեն:

«Բիւրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, № 14, էջ 214–216:

Արշակ Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, Գահիրէ, 1937 (էջագրումը շարունակվում է առաջին հատորի վերջին՝ 1295-րդ էջից, հասնում մինչև 2480 էջ), էջ 1817–1820:

№ 27 ԿՈՒՐԹԱՆՑՈՑ ՌԸՍԵՐԵՆ ՍՈՎՈՐԵԼԸ

Համբոյանց գեղընը ուզում են կարքին որսերեն սրվորեն, չունքի ասըն են. «Ինչքան լիզու գիղես, ենքան մարթ ես»:

Գեղըցիք թոփ են ըլըմ ու Համբոյին, որպես այքարաց մարթու, դարգում են քաղաք: Էս Համբոս գնըմ ա Թիվիզ⁹⁹⁹, մի մարթու ոաստ ա գալի ու հարցնըմ. — Ախպերացու, ըստի որսերենը որդի՞ են ծախըմ:

Դա շուն մարթ ա ըլըմ, ձեռաց գլխի ա ընգնըմ, որ միամտի հետ գործ ունի, խափըմ ա, թե՛ են ծախըմ եմ: Դրան եղնեն ա գծըմ, տանըմ մի տուն: Ասըմ ա. — Ըստի ճամփա պահի, չվել ես գամ:

Մըքիչ եղը գալիս ա, էրկու շախչկի կրոպկա հետը: Դու մի ասիլ դրանց մեջը ճանշ ա լքցրած ըլըմ: Կրոպկեքից մինը դնըմ ա Համբոյի ընգաճին: Համբո քեզ Համբո, ճանջի բզգոցը լըսըմ ա ու ուրխանըմ. «Ջան, որսերեն ջան, գեղը թող լիսավորվի»: Շախչկի կրոպկեքը վե կալած գալիս ա գեղը: Գեղացիք թոփ են ըլըմ ու ըստիան, ընդիան վռագցնըմ. «Արա Համբո, հլա բաց արա»:

Դա որ բաց չի անըմ, ճանջերը դուս են գալի ու պու՛կ, փախչըմ են: Հավարն ընգնըմ ա գեղը, թե որսերեննին փախան:

Տենըմ են մինը գնաց ու մտավ ձորի էրը: Դրա եղնա գնըմ են: Համա էրը մտնիլը դժար ա ըլըմ: Ինչ անեն, ինչ չանեն, վերջը մի խոսքի են գալի, որ տերտերը աղոթագիրք կարթալով, թոզով կապած դվեր մտնի էրը ու որսերենը հանի ընդիան:

Դու մի ասիլ էրի միջին մի արջ ա ըլըմ: Տերտերը հենց մտնըմ ա էրը թե չէ, էդ արջը գլուխը պոկըմ ա: Որ տենում են տերտերը եղացավ, թոզը քաշըմ են, ինչ տենան, տերտերի գլուխը կա ոչ, ըտի ըրմանըմ են, սկսըմ են իրար հարցնիլը, թե տերտերին որ թոզով ցճացնեին, գլուխը վրին էր, թե չէ: Ոչ մինն էլ ա հիշելուս չի ըլըմ: Գնըմ են տերտերի կընգանը հարցնըմ.

— Այ տերտերակին, ըսոր տերտերի գլուխը վրին ա էլե՛լ:

— Վայ ֆոքի, — պատասխանում ա տերտերակինը, — ետ գիղեմ ոչ, համա միտս ա, որ գիրագի օրը ժամ ասելիս միրուքը վրին տըմբտըմբեր:

Թամար Գեորգյան, Լոռի (Տաշիր-Ձորագետ) // Հայ ազգագրություն և բանասիրություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 20, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999 (-270 էջ), էջ 147:

⁹⁹⁹ Քոլեցիք Թիվիզին են քաղաք ասելիս ըլըմ (ծանոթագրությունը՝ ասացողի):

№ 28 ԼՈՌԵՑՈՒՆՑ ՌՈՒՍԵՐԵՆԸ

Լոռեցի մարթիքը էս ժամանակ բոլորովին ռուսերենից գաղափար չեն ունեցել, փող են հվաքում տալիս տերտերին, որ տերտերը քյանն Թիֆլիզ՝ ռուսերենը առնի պիրի: Տերտերը փողերը հվաքում ա, մի հինգ-վեց պուլիկ էլ վերցնում՝ սիրեկով ու քյանն Թիֆլիզ:

Թիֆլիզ ա քյանն, թե չէ, դե Թիֆլիզի պացաննին կըլիսի են ըլում, որ սնն մի պանն ունի, պըլպելանն մտիկ ա անում: Հն: Ասում են. — Տեր հայր, ողջույն, ընչի՞ ես ման կյանլի, ընչի՞ պահանջ ունես:

Ասում ա. — Մեզ մոտ ռուսերենի պակասութիւն կա, եկել եմ ռուսերեն առնեմ տանեմ:

Ասում են. — Տեր հայր, մենք ունենք էտ ռուսերենը, փողերը հանի:

Տերտերն ասում ա. — Փողերն ունենք:

Ասում են. — Դե աման տու:

Տերտերը պուլկնին տալիս ա, քյանն են գրիշըքերիցը շնածաննջը թուփ անում լցնում պուլկքերը, կապում, պիրում տալիս տերտերին, փողերը առնում: Տերտերը պուլկնին շըլակում ա, դե էս վախտը ոտով են քյանլիս-կյանլիս ըլել, եկել ա հասել Սանահին, տեսել ա ըտեղ քերծ կա, ասել ա. — Ըստեղ, էս խովլաթ տեղը նստեմ իմ փայը վեր ունեմ:

Սիրեկը որ պանց ա անում է՛, ճաննջը տերտերին հիս ա ըլում, միրուքը, պաննը: Փախչում ա, ըտի մի էր ա ըլում, մտնում ա էտ էրը: Էրըմն էլ արչ ա ըլում, տերտերին փոնում ա, կյոնում ա. — Ինձ կերանվ, հասեք:

Շողովուրթը վազ են տալի տենում են՝ տերտերի ոտները տոնս դուրը, քաշում են հանում, տենում են՝ կյոնիս չկա, արչը կյոնիսը պուկել ա: Տերտերին կարում չեն ճընանչեն, ո՞ր կեղի տերտերն ա: Գյոտերն են ընգնում քյանն տերտերի կյնգանը քըթնում պիրում: Տերտերակինը կյանլիս ա շորերից ճընանչում, որ, իրոք, որ իրան մարթն ա՛ տերտերն ա իրանց: Ասում են. — Բա, տերտերակին, ո՞ր ա կյոնիսը, տանիցը որ տոնս եկավ տերտերը, կյոնիսը վրեն է՞ր:

Ասում ա. — Ճիշտն ասած լան չեմ հիշում կյոնիսը վրեն էր, մենակ տանիցը տոնս կյանլիս միրուքը վրեն տըմբտըմբեր:

Էսթեր Խենյան, Իջևան (Ձորովոր) // Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 25, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, «Գիտություն» հրատ., 2008 (-492 էջ), էջ 255, 256:

№ 29 ՏԷՐԴԷՐԻ ԳԸԼՕԽԸ

Իդա Ձ'օրու Գէդա քյաշվաննի մէ ջանավար երէվաց: — Տըդէրք, էլէք հնար մը գ'ըտնէնք, իդա վագրին փիծցունք: Գ'եղացիք ժողլվան, օր էրթան իդա վագրին փիծցուն: Իդա Շավգրի Ավօն ի, մէգ լէ Կյազարի Գյուլաքն ի, Շինագնի Հայրօն, Շընբընի Հազօն ըսին:

— Տէրդէրնի սուրբ ա, ինօր լէ վերունք մըզի խէտ:

Տէրդէրին լէ վերցուցին, գմէն գէղնի ժողլէցին, տվին իդու ջանավար վագրի քամագնի: Իդա անտէր վագր օր մըզի չըտէսավ, օդնէրօվ դուման խանեց ու մէգ լէ տէսանք բըռբըռչօղ անէլօվ փախսավ: Մէնք լէ քամագից վերցուցինք մէկսի հօրսէլին, մէգէլնի չախսուն, իդա Շինագընի Հայրօն քյանդրնի վերուց. տվինք իդոր քամագ: Վագրնի մտավ մէջ ջօջ ծագ մի:

Ըսինք, տըդդէրք, իմնլ էնինք:

— Արէք իդա տէրդէրուն մածունք ծագնի, էնիգա սուրբ ա, վագրնի ինօր բան չըսա:

Տէրդէրին բ'ըռնինք, գ'ըլխվրանց էծկինք ծագնի, մէ շու յեդօ իդա տէրդէրնի բօռաց:

— Վայ, ճ'ըզի մըռնիմ, ճ'էր օդնէրնի պագիմ, զիս հուդա տէղէն խանէք:

Չումքի ինօր քաշինք խանինք, մէգ լէ տէսանք ինօր գ'ըլուլս վրէն չէր:

— Տղէրք, բը իսօր գ'լուլսն ինչ էղավ: Տղէրք, օր տէրդէր մըզի խէտ յէկավ, գ'ըլօխնի վրէն էր, թէ չէ՛:

Մէգնի ըսավ. վրէն էր, մէգէրնի, թէ՛ չէ, ըսինք օր էղէնց ա, էրթանք տիրօխնուն խարցուցէնք:

— Տիրօխնի, տէրդէրնի օր մըզի խէտ էկավ, գ'ըլօխնի վրէն էր, թէ չէ՛:

— Գ'ըլօխ — մըլօխ չըմ գ'ինա, խամա աբուր ուտէլուց մօրուս վրէն կըղըմ-ղըմբէր:

Ռ. Հ. Բաղդամյան, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրություն, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Երևան, 1972 (– 226 էջ), էջ 171, 172:

№ 30 ՀԻՄԱՐ ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԱՐՁԸ

Մի գյուղի մոտ, ժայռի տակ, մի ճգնելու քարայր է լինում: Մի օր գյուղացիները նկատում են, որ մի արջ եկել է մտել այդ քարայրի մեջ ու դուրս չի գալիս: Գյուղացիները, որովհետև ներքևից գնալու ոչ մի տեղ չի լինում, վերևից սկսում են հայ-հույ՝ անել՝ արջին քարայրից դուրս հանելու համար: Ինչ անում են, ինչ չեն անում, հնար չի լինում արջին հանելու: Գյուղացիք մտածում են, մտածում և գալիս այն եզրակացության, որ արջը հասկացել է, որ այդ քարայրը ճգնվելու տեղ է, եկել է ճգնվելու:

Գնում են տերտերին բերում և ասում. — Տեր հայր, սրբահոգի արջը ուզում է ճգնի: Արի քեզ թոկով կախ տանք, գնա քարայրի մոտ, արջին օրհնիր, որ հալալ ճգնավոր լինի:

Տերտերը համաձայնվում է, այն պայմանով, որ եթե ներքևից միրուքը շարժի իսկույն հանեն: Ամուր թոկով տերտերին գլուխնիվար կախում են ժայռից: Երբ տերտերը հավասարվում է քարայրին, արջին տեսնելով՝ սկսում է դեպի արջը խաչ հանել ու աղոթքներ մրմնջալ: Արջը զայրանում է և տերտերի մրքից բռնում: Տերտերը թոկը շարժում է, իմաց տալով, որ ձգեցեք: Վերևից մարդիկ են քաշում, ներքևից արջն է տերտերի գլուխը խստում, այնքան ձգում են, որ տերտերի գլուխը պոկ է գալիս և անգլուխ հանում են վերև:

— Ո՞ր է տեր հոր գլուխը, — բացականչում են մարդիկ:

Դես-դեն են ընկնում, բայց չեն գտնում:

— Տղերք, երբ տերտերին կախեցինք, գլուխը վրեն էր, թե ոչ, — հարցնում է ժամհարը:

— Չենք իմանում վրեն էր թե ոչ, — պատասխանում են հավաքվածները:

Ճարը կտրած՝ մարդիկ մեկին ուղարկում են տերտերի տունը՝ իրիցկնոջից իմանալու:

— Իրիցկին, այսօր տեր հոր գլուխը վրեն է եղել, թե ոչ:

Իրիցկինը պատասխանում է. — Այդքանը միտս չի գալիս, միայն այն եմ հիշում, որ առավոտ տեր հայրը աղոթք անելիս միրուքը տմբտմբում էր:

Սյունիքի բանահյուսությունը, կազմ.՝ Թ.Լ. Հայրապետյան, Գ.Է. Մելիքյան, Ս.Շ. Առաքելյան, Ա.Ս. Կիրակոսյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀԱԻ հրատ., 2020 (–384 էջ), էջ 79:

Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ, Սյունիք, հ. VII, հատորը պատրաստել և ծանոթագրել են Ա.Ս. Նազիկյանը և Մ. Ն. Առաքելյանը, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979 (–768 էջ), էջ 552, 553:

№ 31 ՄՕՐՈՒՔԸ ՏԵՍԱՅ ԸՄՄԱ...

Արաբկիր քաղաքը մեզմե կէս դար և քիչ մըն ալ անելի տարիներ առաջ ունեցեր է խիզախ, գործունեայ առաջնորդ մը Եզնիկ Ապահունի անունով:

Եզնիկ վարդապետի կեանքը դաստիարակիչ է: Ան իսկապէս այն քաջ հովիւը եղած էր որ իր անձը ոչխարներուն համար կը զոհէր: Ահա՛, այսպիսի առաջնորդի մը ներկայութիւնը հայրենի բնագաւառի հեռաւոր անկիւնը, անոր, որ նպատակ դրած էր դաստիարակութեան ճամբով վերակենդանացնել դարերու ստրկութեան կամակոր համակերպող ժողովուրդը, այսպիսի առաջնորդի մը ներկայութիւնը, տիրող կառավարութեան հաճելի չթուելուն, զայն իբրև յեղափոխական կ'աքսորեն Պոլիս: Հոն, ամէն ճիգ ու ջանք կը թափէ վերադառնալու իր թեմին, իր ժողովուրդին, որը իր կարգին Եզնիկէն զատ ուրիշ որեւէ առաջնորդ ընդունելու կողմնակից չէր: Եւ ասի, օրին մէկը լուր կուգայ Պոլսէն որ Եզնիկ վարդապետը ճամբայ ելած էր դէպի Արաբկիր: Օրերու անհամբեր սպասումէն ետք, երբ վարդապետը կը հասնի Ակն, Արաբկիրցիք ձիով ու ոտով, մեծով ու պզտիկով դէմ կ'ելլեն, կ'անցնին Ակնոյի կամուրջը, կ'անցնին Շէփկայ ներքեւէն, ու համար հազար հոգիով կ'ուղղուին Փիլպոս Առաքէլալ ուխտատեղին ուր տեղի պիտի ունենար պաշտօնական դիմաւորումը:

Շէփկըցիք, երբ քաղաքացիներուն այս խանդը, ոգետրութիւնը կը տեսնեն, իրենք ալ անմասն չմնալու համար, կը հաւաքուին Սօսէի ջուրին գլուխը, ուր առաջնորդութեամբ Խելացիին, ճամբայ կ'ելլեն:

Շատ կ'երթան թէ քիչ, այդ չենք գիտեր, միայն թէ երեկոյեան մթնշաղին, երբ տակաւին իրենց ճամբան կը շարունակեն, մէյ մ'ալ ինչ տեսնեն, սեւ ու մեծ, խոշոր մոշոր զանգուած մը իրենց առջեւէն սահելով կը մըտնէ մօտի քարայրը: Շէփկըցիք կանգ կ'առնեն:

— Հա՛, — կ'ըսէ անոնցմէ մէկը, — սա անպայման, մեռնիմ իր կարգին, մեր Եզնիկն էր, և որովհետև մեզ հետ Տէր Պապան չկար, ատոր համար ալ առանց կարեւորութիւն տալու մեզի, գնաց մուղարան մտաւ...:

— Քանի այդպէս է, մեզմէ մաս մը հոս թող սպասէ, մաս մըն ալ երթայ ու Տէր Պապան բերէ...

Հաւանութիւնը ընդհանուր կ'ըլլա: Իրենցմէ անելի թեթեւտն տղաք կը վագեն գիւղ, կը գտնեն քահանան, գիւղին ծերոնկ, խլխըլուն քահանան, գրաստի մը վրայ կը դընեն ու կը շտապեն:

Տէր Հայրը կը հասնի, եղելութեան տեղեակ կ'ըլլայ ու կը հաւանի ինք առանձին քարայր մտնելու ու Եզնիկին խաթրը առնելու: Կը մտնէ քարայրէն ներս: Բաւական կ'ուշանայ: Շէփկցիները կ'ուզեն մօտէն հետաքրքրուիլ, Խելացին կը միջամտէ.

— Չէ՛, ձգեցէք որ տէրտէր ու վարդապետ կուշտ ու կուտ մը խօսակցին...:

Շէփկցիներուն համբերութիւնը կը հասնի, ու իրենցմէ երկու հոգի քարայրին մօտենալով, երկիւղածութեամբ ու յարգանքով, քիչ մը մուտք կը գործեն ու Տէր Հօր գետնատարած մարմինը դուրս կը բերեն: Ինչ տեսնեն, Տէր Հօր գլուխը չկար:

— Խելացի՛, — կը հարցնէ իրենցմէ մէկը, — երբ Տէր Պապը եկաւ նէ գլուխը վրան էր թէ չէ...

— Շիտակը, ես մօրուքը տեսայ ըմնա գլուխին ֆարդին չգացի...

Ու տակաւին Խելացին իր համագիւղացիներով կը խորհի թէ արդեօք Տէր Հայրը գլուխ ունէ՛ր երբ քարայր մտաւ... թէ լոկ մօրուքով էր... Քարայր մտնողը Եզնիկն էր թէ արջ մը...

Սարգիս Բախտիկեան (Ծովեցի), Շէփկայ Խելացին (Հայկական զուարճախոսութիւն), Պէյրութ, տպարան Օլիմփիք, 1953 (-84 էջ), էջ 70-72:

№ 32 ՈՒՐԲԱԹԸ ԿԸ ՓՆՏՈՒՆ...

Օրին մեկը, Բոլորանի Աղբիւրին գլխուն, քանի մը գիւղացիներ, սաղարթախիտ ուտենիի մը շուքին, գետին բազմած, կ'ուզեն ճշդել օրը: Այդ օրն ալ Ուրբաթ կ'ըլլայ:

Իրենցմէ մեկը ձախ ձեռքի մատները մէկիկ մէկիկ գոցելով կը համրէ .

— Շաբաթ, Կիրակի, Երկուշաբաթ, Երեքշաբաթ, Չորեքշաբաթ, Հինգշաբաթ ...

— Ապա ճրտեղ մնաց Ուրբաթը, կը ձայնէ իրենցմէ մեկը ու իր կարգին կը սկսի մատները մէկիկ մէկիկ գոցելով համրել **Երկուշաբաթ, Երեքշաբաթ, Չորեքշաբաթ, Հինգշաբաթ**. շաբթուան օրերուն **անունները** միշտ պարսկական ձեւով տալով **սօ շանբէ, սէ շանբէ, չար շանբէ, փէնճ շանբէ**: Ներկայ խելացիները բոլորն ալ կը փորձեն կորսուած Ուրբաթը գտնել յաջորդաբար իրենց մատներուն վրայ համրելով շաբթուայ օրերը, չմոռնալով անշուշտ միշտ Շաբաթէն սկսիլ եւ Հինգշաբթիով վերջացնել: Այս կերպով բոլորին ալ ջանքը ի գուր կ'անցնի եւ վեճը ծայր կ'առնէ:

Երկար բարակ վիճելէ ետք վերջապէս կ'որոշեն Խելացիին առաջնորդութեամբ, խնդիրը ներկայացնել գիւղի քահանային: Կ'իջնեն գիւղ ու կանգ կ'առնեն քահանային դրան առջեւ: Որպէսզի քահանային մօտ ամօթով չմնան, դրան առջեւ կանգնած, անգամ մըն ալ կը փորձեն իրենց ըմբռնած ձեւով Ուրբաթը գտնել եւ դարձեալ չեն յաջողիր ու դուռը կը զարնեն: Տիրուհին-երեցկիներ-դուռը կը բանայ:

— Տիրուհի, Տէր Հայրը տանն է:

— Տէր Հայրը, Տէր Հայրը տանն է, բայց չեմ իմանում ճրտեղ է..

— Ո՞նց թէ չես իմանում:

— Տէր Հայրը տանն է, քուրսու քնարին...

— Ուրեմն տանն է:

— Չեմ իմանում...

Գիւղացիները երեցկնոջ այս անորոշ պատասխաններէն սրտնեղած, առանց երկար բարակ տնտնալու ներս կը մտնեն, քուրսու **քնարին**, առօք փառօք, **աշքերէ**-բացորոշ-բազմած կը գտնեն Տէր Հայրը, զարմանք պատճառելով երեցկնոջ, որ անորոշութեան մէջ կը տարուբերէր: Գիւղացիները **առջի հերթին** Տէր Հօր կը բացատրեն իրենց այցելութեան նպատակը: Տէր Հայրը, իր կարգին,

գիւղացիներուն հետ կը սկսի մատներու համրանքով կորսուած Ուրբաթը փնտռել:

— Շաբաթ, Կիրակի, Երկուշաբաթ, Երեքշաբաթ, Չորեքշաբաթ, Հինգշաբաթ... Ու վերջ:

— Տէր Հայր, կարգիդ մատաղ, Սուրբ Օծումդ վկայ, կը ձայնէ Խելացին, ապա սա Ուրբաթը յիշուել է կորել...

Բոլորը մէկ, Տէր Հայրն ալ միասին, դուրս կու գան կորսուած Ուրբաթը փնտռելու: Հոս ու հոն, վերջապէս կը հասնին կրկին Վերի Աղբիւրին գլուխը: Հոս երկար չեն մնար, հանդերը կ'անցնին, միշտ ի խնդիր կորսուած Ուրբաթին:

Բաւական կը յառաջանան ու կը հասնին իրենց այգիներուն: Հեռուէն կը նշմարեն որ սեւ զանգուած մը քարայրի նման տեղ մը կը մտնէ:

— Հա՛, է՛ն իմանում է Ուրբաթին տեղը, — կը բացականչեն միաբերան ու կը համոզեն Տէր Հայրը, որ երթայ ու **հարց տայ**: Տէր Հայրը կը հասնի քարայրի նման տեղը ու ներս կը մտնէ:

Գիւղացիները հեռուն կանգնած ակնդէտ կը սպասեն Տէր Հոր գալուն: Տէր Հայրը կ'ուշանայ: Գիւղացիները, ճարահատ, կը մօտենան քարայրին եւ կը տեսնեն, որ քարայրին մուտքին, Տէր Հայրը ամբողջ մարմնով, կէս մէջքը ներս, գետին պատկեր է: Ոտքերէն քաշելով դուրս կը հանեն եւ ի զարմանք բոլորին կը տեսնեն որ Տէր Հօր գլուխը չկար... Վէճի կը բռնուին թէ Տէր Հայրը երբ քարայր մտաւ գլուխը վրան էր թէ չէ, առանց անդրադառնալու որ հեռուէն իրենց տեսած սեւ զանգուածը կարող էր արջ մը եղած ըլլալ ու Տէր Հայրն ալ անոր զոհը: Գիւղացիներուն վիճաբանութիւնը որոշ արդիւնքի չի հասնիր: Վերջապէս Խելացին իր վճռական որոշումը կ'արձակէ.

— Գնանք Տիրուհու մօտ եւ նրան հարց տանք ...

Գիւղացիները Տէր Հօր մարմինը շակած կը մտնեն գիւղ ու կանգ կ'առնեն քահանային տան դրան առջեւ: Դուռը կը բանայ երէցկիներ:

— Տիրուհի, ասա՛, երբ որ Տէրտէրը տնից դուրս էլաւ, գլուխ ունէ՛ր թէ ոչ...

Տիրուհին մտածմունքի մէջ կ'իյնայ: Իր յիշողութեան ոյժ տալով կ'ըսէ.

— Տէր Հայրը երբ տնից դուրս էր գալիս, մարմինը տեսայ, բայց գլուխը չեմ յիշում...

Ներսէս Ծ. Վրդ. Բախտիկեան, Փերիոյ Խելացին (գուարճալի մանրատէպեր), Պէյրութ, տպարան Սեւան, 1967 (-60 էջ), էջ 37-39:

№ 33 ՈՒՐԲԱԹ-Ը ԿՈՐԻԼ Ա

Մի գիւղում մի քանի հոգի աղբիւրի մօտի ծառի տակ նստած, երբ սկսում են խօսել շաբաթայ օրերի մասին և հաշիւ ասելով՝ Կիրակի, Էրկուշաբթի, Հիրեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի, Շաբաթ: Եւ այդպիսով Ուրբաթը մէջ տալով մնում են շաբաժ և ասում են.

— Ուրբաթը կորիլ ա, գնանք քաղխտղից հարցնենք:

Բոլորը միասին գնում են քաղխտղի (տանուտէրի) մօտ, նա ևս դրանց նման օրերը հաշիւով Ուրբաթը մէջ է տալիս, ասում են գնանք տէրտէրից (քահանայից) հարցնենք, գնում են քահանայի մօտ, նա ևս շաբաթայ օրերը հաշիւով Ուրբաթը մոռանում է: Ասում են գնանք դաշտերը ման գանք գտնենք:

Գնում են դէպի այգիների կողմը, տեսնում են մի ծակ, ասում են գուցէ Ուրբաթը մտել է այդտեղ, գնանք դուրս բերենք:

Գնում են հասնում ծակի մօտ, բայց ով պէտք է մտնի ներս, սա նրան է ասում, նա սրան, վերջն ասում են՝ մեր մեծը քահանան է, նա պէտք է մտնի, և քահանան վերնաշալը հանելով մտնում է ծակի մէջ:

Ներս մտնելով քահանան տեսնում է մի գայլի երկու փայլող աչքերը և հագի ժամանակ է ունենում բղաւելու.

— Դուրս քաշէք:

Ընկերները բռնում են ոտքերից, իսկ գայլը բռնում է գլխից և քաշելով գլուխը մնում է գայլի բերանին, իսկ մարմինը ընկերների ձեռքում:

Այսպիսով Ուրբաթը հօ չի գտնում, քահանայի կեանքն էլ վերջ է գտնում:

Այս զաւեշտը մի այլ ձևերով էլ է պատմում, որոնցից մէկն ևս բերում ենք այստեղ:

Ջրաղացի քարը սրող կամ այլ գործերը կատարող հիւսնի վարձը Ուրբաթօրայ վարձն է, որ ջրաղացպանը աղացած ցորեններից առնում է:

Երբ հիւսնը գալիս է իր բաժինն ստանալու, ջրաղացպանը շաբաթայ օրերը հաշիւով Ուրբաթ օրը մէջ է տալիս:

Հիւսնը խիստ բողբոջում է և ասում.

— Մի՞թէ Ուրբաթը կորել է, որ վարձը չես ուզում տալ:

Մէկը, որ դիտմամբ մոռանում է դիմացինի վարձը, ասում են.

— Մի՞թէ Ուրբաթը կորել է:

Լ. Գ. Մինասեան, Գիւղական բառ ու բան (Փերիա գաւառ), Նոր Զուղա, տպարան Սր. Ամենափրկիչ վանքի, 1998 (-424 էջ), էջ 375, 376:

№ 34 ՈՒՐԲԱԹԻ ԿՈՐՈՒՍԵԸ

Մի տանուտեր մտքի մեջ հաշիվ է անում, օրերը հաշվում է՝ երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ, կիրակի: Հաշվում է, հաշվում, ուրբաթը չի գտնում: Տղային ասում է.

— Տղա, լաո, դու տեղյա՛կ ես, որ մեր շաբաթը վեց օր ունի, մեկը կորել է:

— Ո՞նց թե կորել է, օրն էլ կորչի՞:

— Դե ես ասեմ՝ դու հաշվիր: Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ, կիրակի:

Վեր են կենում, երկուսով գնում են տերտերին ասեն կորած ուրբաթին գտնի: Հասնում են տերտերի մոտ, ասում.

— Տերտեր, տնաշեն, մեր ուրբաթը կորել է՝ դու դի՛նջ նստել ժածիկ ես ուտում:

— Ինչպե՛ս թե կորել է, — ասում է:

— Կորել է, էլի — երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ, կիրակի:

Տերտերը տեղից ելնում, փեշերը հավաքում, տանուտերի ու տղայի հետ սարուձոր են ընկնում՝ ուրբաթը գտնելու: Արջի բնի մոտ կանգնում են, տղեն ասում է, — Տերտեր, կարող է՛ մեր ուրբաթին արջը տարած լինի:

Տերտերը գլուխը կոխում է արջի բույնը, իրենք հարցնում են՝ էդտեղ չի՞, — տերտերը ձեն չի տալիս: Ուքերից քաշում հանում են՝ հիմի էլ տերտերի գլուխն է կորել:

— Տղա, լաո, տերտերը որ գալիս էր՝ գլուխ վրե՛ն էր:

— Ես ի՛մ հոգին, բաբե, լավ չեմ նայել:

— Տղա, լաո, — ասում է, — զուլում բան եղավ, գնանք իրիցկնկան հարցնենք:

Գնում են տերտերակնոջ մոտ:

— Իրիցկին, դու մեզ ասա, տերտեր որ ուրբաթի ետևից դուրս եկավ՝ գլուխ վրե՛ն էր, թե չէ, — հարցնում են:

— Ասոված վկա, — ասում է, — չեմ հիշում՝ վրեն էր, թե չէ: Բայց որ ժածիկ էր ուտում՝ մորուքը դռնին տմբտմբում էր:

Ն. Հակոբյան, Ա. Սահակյան, Հիմն էս ուզում թե հետո, Միջին և բարձր տարիքի դպրոցականների համար, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977 (-200 էջ), էջ 184:

№ 35 ՈՒՐԲԱԹԻ ԿՕՐՈՒՍԸ

Գավըոցի դանտուտեր մըտկի մէջ հաշիվ կէնէ, օրեր կըհաշվէ. Էրկուշըպտի, իրիքշըպտի, չօրէքշըպտի, հինգշըպտի, շապատ ու գիրակի: Կըհաշվէ, կըհաշվէ, ուրպատ չըկըրնա գոնա: Ուր դղին գըսէ.

— Տղա լա՛օ, դու խաբար ունի՛ս, օր մըր ուրպատ գօրեր է:

— Ի՛մալ թը գօրեր է, ուրպատ լէ գօրի՛:

— Դը հաշվիմ դու անկան էրէ:

Գըսկսի համբըել մադնէրու վրա:

— Էրկուշըպտի, իրիքշըպտի, չօրէք, հինգ, շապատ ու գիրակի: Ի՛մ հօկին դուս հիգա՝ քըզի կխափիմ, գըտըսնսն, օր ուրպատ գօրեր է: Էրտանք դէրդըրոն քօլ, ըսինք թըղ ուրպատ գըղնա:

Դանտուտեր ուր դըղի հեղ կէրտան դէրդըրոն խէչ ու դէրդէրին գըսին.

— Դէրդէր, չըս ըսի ինճ ի էղի, մըր ուրպատն ի գօրի, տու դինջ սստեր իս ժաժիկ կուղիս:

— Ի՛մալ թէ գօրեր է, — գըսէ դէրդէր:

— Գօրեր է, հաշվիմ տու դէս, — կըսէ դանդեր ու էլի կըհաշվէ, էլի ուրպատ չկա:

— Ի՛մ հօկին տուս գա, դէրդէր, մըր ուրպատ գօրեր է, տու բըղի գըղնաս:

Դէրդէր կըկագըղնա, գէլնա դանտիրոն ու դանտիրոն տղու հեղ, չօլեր ու քօլեր կընգնան ուրպատ գըղնալու: Դանտիրոն տղէն դէրդէր կըկայնըցու արջու բնին ու գըսէ.

— Յես իմ աչկօլ իմ դէսի, օր մըր ուրպատ ուր բունն է մըտի:

Դէրդէրոն կիշէն, օր ուրին հանին: Դէրդըրոն կըկօխին արջու բուն, ուր օտքեր կըմնան տուս: Կընցնա ժամանագ: Դէրդըրու ծէն տուս չի գա: Կըքաշին դէրդըրոն օտքէրէն, դուտս կըհանին, կըտըսնան կլօխ վրէն չէ, արջ կլօխ կէրեր է:

— Տղա լա՛օ, մէնք դէրդըրոն օր բէրինք, ուր կլօխ վրէն էր թը չէ, — դանտուտեր կըհարցու տղուն:

— Վալլա յէս լէ վարավուրդ չէրի, վրէն էր, թը չէ:

— Տղա լա՛օ, գուլում էր էղալ: Արի էրտանք իրիցին հարցունք, թը դէրդէր օր տնէն տուս էգալ, կլօխ վրէն էր, թը չէ:

Գէրտան իրիցկնկան խէչ.

— Իրիցկին, տու մըզի ըսէ, դէրդէր օր տնէն տուս էգալ, ուր կլօխ վրէն էր, թը չէ, — կըհարցու դանտէր:

— Վալլա, իմ հօկին չըմ գըրնա կօրսու, — գըսէ իրիցկին, — վրէն էր, թը չէ:
Գինամ օր, յէպ ժաժիկ կուդէր, մուրուկ դօշին կըտըտորդէր:

Հայկական ժողովրդական հեքիաթներ, բնագրերը հրատարակության պատրաստեցին, ծանոթագրեցին և բառացանկը կազմեցին՝ Ն.Ա.Հակոբյան, Ա.Ս.Սահակյան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980 (–304 էջ), էջ 196, 197:

№ 35/1 THE MISSING FRIDAY

There was a householder from the provinces. One day he was reckoning in his mind: counting the days of the week. Monday, Tuesday, Wednesday, Thursday, Saturday, and Sunday. No matter how he counted, he couldn't find Friday. He called his son: 'Hey, boy, do you know where Friday's gone to?'

'How could it get lost? Do Fridays get lost?'

I'll count-you listen closely.'

He began counting on his fingers: 'Monday, Tuesday, Wednesday, Thursday, Saturday, Sunday. I'm going crazy. Am I fooling you? Can't you see Friday's lost? Let's go to the priest and tell him to find it.'

The householder and his son went over to see the priest and said, 'Father, look what's happened! Friday's missing, so how can you sit there eating yoghurt?'

'How could it be lost?' asked the priest?

'It's lost. I'll count. See?' replied the householder. He counted again, and again Friday wasn't there.

'I'm going out of my mind, Father. Friday's disappeared. You go find it.'

The priest got up and went off with the householder and his son to find Friday. They searched hill and dale. The boy stopped the priest at the entrance to a bear's lair and said, 'With my own eyes I saw Friday go into that cave.'

It was decided the priest should go after it, so they lowered him down into the hole with his feet sticking out the top. Time passed, and the priest made no sound. They pulled him out by his feet and saw he had no head: the bear ate it.

'Hey, son, the priest had his head on when we brought him here, didn't he?'

'Shucks, I didn't look to see if it was there or not.'

'This is pretty bad, son. We'd better go and ask his wife whether the Priest had his head on or not when he left the house this morning.'

So they went to her house.

'Ma'am, would you tell us, did the Father have his head on or not when he left the house today?' asked the householder.

'By my soul, I don't know,' replied the Priest's wife. 'Now was it, or wasn't it? But I do recall, while he was eating yogurt it was dribbling down his beard.'

№ 36 ՈՒՐԲԱԹ ԳՈՐԵՐ Է

Գավըռոցի տանուտերը հիրան տղի հետ սատած կեղնի տանը, չի խոսա ու մըտքի մեջ հիրան-հիրան հաշիվ կէնէ մատներու վրա: Մեկ էլ ձենով կհաշվէ մատներու վրա, էլի՛ բան չի դուրս գա:

— Դըղա, լաո՛, — կըսէ տղին, — գը հաշվին, գը հաշվին ու գը հաշվին, շաբաթվա օրերից մեկ բակաս կիգա, ըսէ՛ շաբաթըվա որ օրն է գորի՛, օր ես կըլխու ընկամ: Դեն, ես հաշվիմ, տու անգաջ էրէ: — Ու կսկըսէ հաշվելը. — Էրկուշըբթի, իրեքշըբթի, չորեքշըբթի, շաբաթ ու գիրակի... Ո՞րն է գորի, չըմ գըռնա գըռնի:

— Ուրբաթն է գորի, ուրբաթն է գորի, — կըսէ ու վեր կը թոնի տղեն տեղեն, — ուրբաթն է գորի, ու պտի գըտնանք, էրթանք դերդըրոջ քով՝ թըղ ուրբաթ գըռնա:

Գելնին հեր ու տղա կէրթան տերտերի քովը: Նես կը մտնին, կը տեսնին, օր տերտերը իրան հըմար սատած ժածիկ կուտէ:

— Դերդեր, — կըսէ տանուտերը, — գուլում է էկի մըր կըլխուն, մենք խաբար չունինք, մըր ուրբաթն է գորի, դու սատէ ժածիկ գուտիս:

— Իմա՛լ թե ուրբաթն է գորի, — կըսէ տերտերը:

— Հալ-հեքիաթ, — տանուտերը էլի կը հաշվէ մատներու վրա, ու էլի ուրբաթը չկա՛մ...

— Տղա, լաո՛, ի՛նչ էնինք, — կըսէ տերտերը, — ման իգանք:

— Ի՛նչ պըտի էնինք, էրթանք կեղեն տուս, ման իգանք, բալքի ուրբաթը կըտնանք:

Գելնին իրեքով կէրթան գեղից դուս, գընգնին չուերը, ման գուգան, ման գուգան, օր յանի ուրբաթ գըտնին: Շատ ման գուգան, մեկ էլ մե հարջիմ բուն կը գտնին, տանուտերի տղեն կըսէ. — Նո՛ր կըլխու ընկա, ուրբաթ էս ծակն է մըտի, — կըսէ ու կը տեսցնէ արջի բունը:

— Դերդեր — կըսէ տանուտերը — տու նես մըտի էս ձակեն ու քու սուրբ ձեռով մըր ուրբաթ տուս հանէ բընեն:

Տերտերին կը կոխեն արջի բունը, ոտները դուսը կը մնա: Քիչըմ վախտ կանցնի՝ ձեն չկա, ազըմ էլ կանցնի, կը տեսնին, օր նեսից գըռմըռոցի ձեն գուգա: Էտնք էլ գիտեն, թե տերտերը ուրբաթի հետ կը խոսա, կիսնդան, օր ուրբաթը գտել են, էրկըսով կը հասնին ու տերտերի ոտներից կը քաշեն, դուս կհանեն արջի բնից... ու ի՛նչ կտեսնին, օր տերտերի գուլսը վըրեն չէ: Դու մի ըսէ, արջը գըլուխը պոկել է: Հեր ու տղա իրար էրես կաշեն:

— Դերդա, լամ, — կըսէ հերը, մենք, օր դերդերոջ պերինք, կըլուիս վըրեն էր, թե՛ն չէ...

— Վալլա, իմ հոգին չըմ գըռնա գորցու, — կըսէ տղեն, — չըմ գըռնա ըսի՝ վըրեն էր, թե՛ն չէ... էրթանք իրիցկին հարցունք, իրիցկին գըսէ...

Գուգան իրիցկնգա քովը, կհարցնեն, կըսեն. — Իրիցկին, մենք, օր տերտերոջ տարանք, ուր կըլուիս վըրեն էր, թե՛ն չէ...

— Վալլա, իմ հոգին չըմ գըռնա կորցու, էր դերդերոջ կըլուիս վըրեն էր, թե՛ն չէ... հըմը իմ հոգին ծըզի, սուտ չէղնի: Դերդեր ժաժիկ օր գուտեր, մուրուք գը տոտըզեր... տուս օր դարաք, կըլուիս վըրեն էր, թե՛ն չէ, չըմ գըռնա մեղք պառնա վըր իմ հոգուն (կամ՝ դերդեր ժաժիկ օր գուտեր, մուրուք վըր կըլխուն գը տոտըզեր, վըր կըլխուն գը տոտըզեր:

Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Ս.Բ. Հարությունյան (գիտական ղեկավար), Ս.Ա. Վարդանյան, Է. Հ. Խենյան, Լ. Խ. Ղուկասյան, Մ. Հ. Խենյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, «Գիտություն» հրատ., 2013 (-752 էջ), էջ 458, 459:

Բնագիրը տե՛ն ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթապանակ «Հրաչ Ասատուրի Մկրտչյան, Շիրակի ժողովրդական բանահյուսությունից, 1970», FFVI: 4112-4116 (էջ 4-6):

№ 37 COMMENTARY

These tales all reflect in some measure an anticlerical attitude, and an earthy sarcasm about religious phenomena, which are common in Armenian folk literature. In the first tale, a woman is bilked with stories of Heaven; in the second, a priest is fooled into thinking Friday could be hiding in a cave; and in the third, a poor man after a patently stupid ‘miracle’ tells off God for being stingy. In all three, the poor or the laity come out on top: a queen who has nothing better to do than watch swine at slop is fooled, the householder and his son cover themselves by believing – and making the priest’s wife believe – that people sometimes forget their heads at home, and the pauper, far from being a long – suffering Job figure, makes off with gold, clothes, and a horse, having outwitted both a rich man and a judge.

Though all these three tales conform in some measure to motifs common throughout the Indo-European and Asiatic folk literature, they also have certain features which make them oikotypes – local variants specific to a culture or area. The Christian background is one such oikotypical feature. But there are also Muslim elements, it seems: the number ninety – nine corresponds to the names of Allah (only the camel, an Arab tradition holds, knows the hundredth, and that is why it appears to be smiling); and Friday is the Muslim day of communal prayer. (There is an Armenian expression for someone not in his right mind: *Urpatnere ge bagsin* ‘He’s missing a few Fridays’ – corresponding to the American ‘He’s lost his marbles!’)

The second tale has a wonderfully absurd, surrealistic quality which recalls Nikolai Gogol’s story, ‘The Nose.’ And, like Gogol, it has a certain cruelty to it – nobody seems to be much distressed about the hapless priest, whose wife (the *yeretsgin*) remembers only that he dribbled yogurt on his beard that morning and therefore must have had a head. This particular, small selection is free of the wonderful supernatural creatures: *vishaps*, *devs*, and *kaches* – that populate the landscape of Armenian lore. But more on them another time.

Armenian Tales, Translated by James R. Russell, “*Ararat*”, volume XXVIII no. 1, winter, New Jersey, 1987, p. 22.

№ 38 [ԼՃԵՑԻՆԵՐՆ ՈՒ ԱՐՁԸ]*

Լճեցին օրերը հաշուած ատեն Կիրակին կը կորսնցնէ.

— Երկուշաբթի, Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի, Ուրբաթ, Շաբաթ... Երկուշաբթի ...

— Ծօ՛, Կիրակին կորեր է, հատ մըն լէ համրէ, — կ'ըսեն գիւղացիները:

Մարդը նորէն կը համրէ, բայց ի գուր, Կիրակին չկայ: Լճեցիք ծունկ ծեծելով կը սկսին ողբալ.

— Ախ Կիրակի, ախ Կիրակի... կորեր է...

Իտեք կ'ընեն, կ'ելլեն կ'երթան տէրտէրին, կ'ըսեն.

— Տէրտէր, Կիրակին կորեր է, չեղնայ մեր ժամ պատարագի թշնամիները գողցեր են իրան, էլլանք փնտռենք...

Տէրտէրը կ'իյնայ գիւղացիներուն առջելը, դէս կ'երթան, դէն կ'երթան, Կիրակի կը փնտռեն... Կը հանդիպին քարայրի մը: Քարայրը նեղ մուտք մը ունէր: Չըսես որ ան արջի որջ էր, եւ արջը հոն էր: Տէրտէրին կ'ըսեն, որ ներս մտնէ եւ նայի, արդեօք հոն է Կիրակին: Տէրտէրը գլուխը ներս կը մտցնէ, յանկարծ կը սկսի թփռտալ եւ ետեւ գալով գետին կ'իյնայ առանց գլուխի...

— Որ ճամբայ ելանք՝ տէրտէրը գլուխ ունէր, — կը հարցնէ մէկը:

Կը շուարին կը մնան, տէրտէրը գլուխ ունէր, թէ չունէր: Ետ կը դառնան՝ ճամբան տէրտէրին գլուխը փնտռելու: Կը հասնին գիւղ: Կ'ըսեն.

— Էրթանք էրեցկնկան հարցնենք, տեսնանք տէրտէրը գլուխ ունէր, թէ չէ: Երեցկինը կ'ըսէ.

— Ես լէ չըմ գինամ, պաս երբ որ կը խօսար, երկու թել մագ կը ժաժար¹⁰⁰⁰ ...

* Բնագիրը վերնագիր չունի (Ս. Վ.):

Միջ-գաւառական անեքթոտներ, Ազգագրական եւ բանասիրական փշրանքներ-2, հասարեց եւ ներկայացուց՝ Յ. Չոլաքեան, Հայէպ, տպարան «Արեւելք», 1988 (-120 էջ), էջ 32-33: Յակոբ Չոլաքեան, Միջգաւառական անեքթոտներ, Բ տպագրութիւն, Հայէպ, 2005 (-176 էջ), էջ 48, 49:

¹⁰⁰⁰ Ես ալ չեմ գիտեր, միայն թէ երբ կը խօսէր, երկու թել մագ կը շարժէր:

№ 39 [ԽԱՐԲԵՐԴՑԻՆԵՐՆ ՈՒ ԱՐՁԸ]*

Խարբերոցիները կ'ելլեն իրենց նոր Սրբազանը դիմաւորելու: Քահանան ծեր ու հիւանդ ըլլալով՝ չ'երթար:

Բաւական ճամբայ կտրելէ վերջ կը տեսնեն, որ դիմացէն սեւ կերպարանք մը դէպի իրենց կը յառաջանայ:

— Մեռնիմ իր կարգին, մեր Սրբազանն է, — կ'ըսէ Խարբերոցոց Գիտունը:

— Եկան, եկան, — ըսելով կը վազեն կ'երթան: Չըսես որ եկողը սեւ ու խոշոր արջ մը կ'ըլլայ. խեղճը վախէն քարայրի մը մէջ կը մտնէ, կը պահուրտի:

— Սրբազանը փախաւ, Սրբազանը փախաւ, — կը կանչեն Խարբերոցիները:

— Մեռնիմ իր կարգին, — կ'ըսէ Խարբերոցոց Գիտունը, — տեսաւ որ քահանան չկայ՝ նեղուեցաւ, մտաւ քարայր... երթանք բերենք քահանան...

Կը դառնան գիւղ, ծերուկ ու խլիլուկ քահանան կը դնեն իշուկի մը վրան, կը բերեն: Քահանան առանձին կը մտնէ քարայրը, որպէսզի Սրբազանին սիրտը առնէ: Կը մտնէ եւ ան չ'ելլեր... Կ'անցնի մէկ ժամ, երկու, երեք, է, օրը իրիկուն կ'ըլլայ: Գլուխին ներս կը մտցնեն, կը տեսնեն քահանան փռուած է գետին, կարծես երկրպագութիւն կ'ընէ, կ'ըսեն.

— Նոր Սրբազանը սուրբ մարդ է, ճգնաւոր է, տեսէք, մեր քահանան քանի մտեր է՝ երկրպագութիւն կ'ընէ, ձգեցէք, քառասուն օր անցնի՝ մէյ մըն ալ կու գանք...

Կ'ըսեն ու կը քաշեն քահանան դուրս. ինչ տեսնեն, մարդուն գլուխը չկայ...

Մէկը կը հարցնէ.

— Տէրտէրը որ բերինք՝ գլուխը վրան էր, թէ չէ...

Ո՛չ որ կրնայ պատասխանել: Կը դիմեն Խարբերոցոց Գիտունին:

— Շիտակը, ես մօրուքը տեսայ, բայց գլուխ ունենալը հաստատ չեմ կրնար ըսել, — կը պատասխանէ ան:

* Բնագիրն անվերնագիր է, գրքում համարակալված է՝ 65 (Ս. Վ.):

Միջ-գաւառական անեքթոտներ, Ազգագրական եւ բանասիրական փշրանքներ-2, հասարակ ներկայացուց՝ **Յ. Չոլաքեան**, Հալէպ, տպարան «Արեւելք», 1988 (-120 էջ), էջ 33, 34: **Յակոբ Չոլաքեան**, Միջգաւառական անեքթոտներ, Բ տպագրութիւն, Հալէպ, 2005 (-176 էջ), էջ 49-51:

№ 40 «КОГДА ТВОЙ МУЖ ВЫХОДИЛ ИЗ ДОМУ, БЫЛА ЛИ У НЕГО НА ПЛЕЧАХ ГОЛОВА?»

Пошел ходжа с приятелем охотиться на волков. Увидели они громадного обросшего длинной шерстью волка и, позарившись на шкуру, погнались за ним. Волк залез в логово. Товарища разобрало, и он тоже полез за волком. Ходжа с час прождал снаружи, и, когда увидел, что товарищ не двигается, потянул и вытащил его из логовища, но головы у него уже не было. Ходжа немного подумал, а потом побежал в город. Он пошел к товарищу в дом и задал жене его вопрос: «Когда твой муж сегодня утром выходил из дому, была ли у него на плечах голова?».

Анекдоты о ходже Насреддине, перевод с турецкого В. А. Гордлевского, изд. Второе, Академия Наук СССР, Институт востоковедения, Москва, изд. Восточной литературы, 1959, с. 167.

№ 41 БЫЛА ЛИ ГОЛОВА?

Насреддин с приятелем отправился поохотиться. В степи они повстречали волка, стали преследовать его и загнали в логово. Приятель Насреддина не хотел упускать добычу, полез головой вперед в логово и долго торчал так. Насреддин видит, что он не вылезает, подошел и вытащил его за ноги. Смотрит, а приятель-то без головы. Насреддин удивился, вернулся в город, пошел к дому приятеля и спрашивает его жену:

— Когда твой муж выходил сегодня из дому, была у него с собой голова?

Молла Насреддин, перевод с персидского *Н. Османова*, Академия Наук СССР, Институт востоковедения, Москва, изд. «Наука», 1970, с. 78.

№ 41/1 ԳԼՈՒԽԵԸ ԿԱՐ

Նասրեդինը բարեկամի հետ գնաց որս անելու: Տափաստանում նրանք հանդիպեցին գայլի, սկսեցին հետապնդել նրան և քշեցին մտցրին որջը: Նասրեդինի բարեկամը չէր ուզում բաց թողնել որսը, գլուխն առաջ պարզած մտավ որջը և երկար կանգնած մնաց այնտեղ: Նասրեդինը, տեսնելով, որ դուրս չի գալիս, մոտեցավ և ոտքերից բռնած դուրս քաշեց նրան: Նայում է Նասրեդինը և տեսնում, որ բարեկամն առանց գլխի է: Նասրեդինը զարմացավ, վերադարձավ քաղաք և, գնալով բարեկամի տունը, հարցրեց նրա կնոջը.

— Երբ այսօր քո ամուսինը տնից դուրս եկավ, գլուխը կմր:

պարսկ.

Քսաներեք Նասրեդին, ժողովածու, ոռուերենից թարգմանեց Գևորգ Հայրյանը, առաջաբանը՝ Ա. Ղանալանյանի, Երևան, «Հայաստան» հրատ., 1986 (-512 էջ), էջ 257:

№ 42 КАК ТИАРИЙЦЫ ИСКАЛИ СОЛНЦЕ

В той местности, где расположено селение Тиари, часто выпадает снег. Случается, что снег идет даже осенью и весной, зимой же здесь никогда не обходится без снега. Бывают сильные дожди и туманы.

Однажды выдался на редкость ненастный день. Дул резкий ветер, лил проливной дождь, тучи покрывали небо, и люди во мгле друг друга почти не видели. И сказали тиарийцы:

— Что нам делать? Видно, с солнцем приключилась беда.

Сквозь густой туман не пробивалось ни единого солнечного луча. Вот почему тиарийцы решили, что с солнцем стряслось что-то неладное.

И сказали они друг другу:

— Пойдем искать солнце, надо выручать его из беды.

В поисках солнца они поднялись на гору — авось солнце застряло где-то среди горных склонов. Может быть, думали они, удастся его найти, и тогда оно снова будет светить их селению.

Тиарийцы искали солнце среди горных проходов, в речных долинах, в оврагах и ущельях. В конце концов они забрели в густой лес. В лесу они обнаружили пещеру, заглянули туда и увидели льва.

— Это наше солнце!¹⁰⁰¹ — воскликнули они. — Вот куда оно спряталось!

Тиарийцы стали звать льва:

— Выходи, выходи! Не надо прятаться!

Лев зарычал, прыгнул на людей, схватил одного за голову, оторвал ее и убежал.

Оглянувшись, тиарийцы увидели, что у одного из спутников нет головы. И позвали они жену этого человека и сказали ей:

— Женщина! У твоего мужа нет при себе головы. Не забыл ли он ее дома?

— Пойду-ка я да посмотрю, — ответила она.

Женщина вернулась в селение, обыскала весь дом и нашла несколько прядей волос. Тотчас она отправилась к тиарийцам, искавшим солнце, и воскликнула:

¹⁰⁰¹ В древности у некоторых народов Востока лев был олицетворением солнца.

— Да, милые мои, вы правы. Я видела его волосы, значит и голова, должно быть, находится дома.

Тогда они обратились к человеку с оторванной головой:

— Вставай! Мы уходим! Вставай скорее и пойдешь за головой!

Он ничего им не ответил.

Тиарийцы снова к нему обратились:

— Вставай, дружище! Почему ты не отвечаешь?

Нашлись все же люди, которые догадались, в чем дело. Они сказали:

— Надо, друзья, разбудить его. Он уснул.

Но, увидев, что все призывы и восклицания остаются без ответа, кто-то предложил:

— Ладно уж, оставим его в покое. Захочет, так сам придет.

Они покинули его и направились домой.

Вскоре сюда вернулся лев и сожрал тело этого человека.

Когда кончился дождь и снова засияли солнечные лучи, тиарийцы сказали:

— Хорошо, что мы разыскали солнце и выгнали его из пещеры, в которой оно пряталось от нас!

От Ахикара до Джано, перевод с сирийского, составление и комментарии А. Белова и Л. Вильскера, редакция и предисловие чл.-кор. АН СССР Н. В. Пигулевской, Ленинград, Гос. издательство Художественной литературы, 1960 (- 416 с.), с. 260-262.

Истребитель колючек. Сказки, легенды и притчи современных ассирийцев. Составление, перевод с ассирийского и европейских языков К. П. Матвеева (Бар-Маттая), Москва, Главная редакция восточной литературы издательства «Наука», 1974 (- 384 с.), с. 50, 51.

№ 42/1 ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ԹԻԱՐՑԻՆԵՐՆ ԱՐԵՎ ՓՆՏՐՈՒՄ

Այնտեղ, ուր փռված է Թիարի գյուղը, հաճախ է ձյուն գալիս: Պատահում է, որ նույնիսկ աշնանն ու գարնանն է ձյուն տեղում, իսկ ձմեռը երբեք առանց ձյան չի լինում:

Մի անգամ օրն անձրևոտ էր ու ցուրտ, սառը քամի էր փչում, հորդ անձրև էր գալիս, ամպը պատել էր երկինքը, և մարդիկ խավարում իրար համարյա չէին տեսնում: Եվ թիարցիներն ասացին.

— Ինչ անենք: Երևում է արևին փորձանք է պատահել:

Իսկո մատախուղի արանքից արևի ոչ մի շող չէր երևում: Ահա թե ինչու թիարցիները որոշեցին, որ արևին ինչ-որ բան է պատահել:

Եվ նրանք միմյանց ասացին.

— Գնանք փնտրենք արևին, հարկավոր է նրան դուրս բերել փորձանքից:

Արևին որոնելիս՝ նրանք գնացին բարձրացան սարը, գուցե արևը դեմ է առել լեռների լանջերին: Գուցե հաջողվի դրան գտնել, — մտածում էին նրանք, — և այն ժամանակ նորից կյուսավորի իրենց գյուղը:

Թիարցիները որոնում էին արևին լեռնացքներում, գետահովիտներում, ձորերում ու կիրճերում: Վերջապես նրանք հասան թավ անտառը: Անտառում նրանք մի քարանձավ գտան, նայեցին ներսը և մի առյուծ տեսան:

— Սա մեր արևն է¹⁰⁰², — բացականչեցին նրանք: — Ահա թե որտեղ է թաքնվել:

Թիարցիներն սկսեցին կանչել առյուծին.

— Դ՛նրս եկ, դ՛նրս եկ, պետք չէ թաքնվել:

Առյուծը ոռնաց, ոստնեց մարդկանց վրա, մեկի գլուխը բռնեց պոկեց ու փախավ:

Նայելով, թիարցիները տեսան, որ ուղեկիցներից մեկի գլուխը չկա: Եվ նրանք կանչեցին այդ մարդու կնոջն ու ասացին.

— Ա՛յ կնիկ, քո մարդու վրա գլուխ չկա: Հո գլուխը տանը չի՞ թողել:

— Մի գնամ տեսնեմ, — պատասխանեց կինը:

Կինը վերադարձավ գյուղ, փնտրեց ամբողջ տունը և մի քանի փունջ մազ գտավ: Անմիջապես ճանապարհվեց թիարցիների մոտ ու բացականչեց.

¹⁰⁰² Հնում Արևելքի որոշ ժողովուրդների մոտ առյուծը արևի մարմնացումն է եղել:

— Այո՛ սիրելիներս, դուք իրավացի եք: Ես տեսա նրա մազերը, ուրեմն գլուխն էլ տանը պիտի լինի:

Այնժամ նրանք դիմեցին գլուխը պոկված մարդուն.

— Վեր կաց: Մենք գնում ենք: Շուտ վեր կաց գնա գլխիդ հետևից:

Նա ոչինչ չպատասխանեց:

Թիարցիները նորից դիմեցին նրան.

— Վեր կաց, բարեկամ: Ինչո՞ւ չես պատասխանում:

Այնուամենայնիվ մարդիկ եղան, որոնք գլխի ընկան բանի էությունը: Նրանք ասացին.

— Պետք է արթնացնել նրան: Նա քնած է:

Բայց տեսնելով, որ բոլոր ճիչ ու կանչերը անպատասխան են մնում, ինչ-որ մեկն առաջարկեց.

— Լավ, հանգիստ թողնենք նրան: Որ ուզի, ինքը կգա:

Նրանք թողեցին դրան և ճանապարհվեցին դեպի տուն:

Շուտով առյուծը վերադարձավ այստեղ և կերավ այդ մարդու մարմինը:

Երբ անձրևը վերջացավ և նորից փայլեցին արևի ճառագայթները, թիարցիներն ասացին.

— Լավ է, որ մենք գտանք արևին ու դուրս քշեցինք քարանձավից, ուր փախել ու թաքնվել էր մեզնից:

Խիկար Իմաստունից մինչև Ջանոն, ռուսերենից թարգմանեց Հրանտ Աղասարյանը, Երևան, «Հայաստան» հրատ., 1990 (–480 էջ), էջ 290–292:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. № 560, Պատմություն վարուց Տեանն Հ. Պօղոս վարդապետի Մէհերեան, շարագրեալ յիւրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու:
2. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Երվանդ Լալայանի ֆոնդ, ըստ Ե. Լալայանի Մայր մատյանի՝ 97-րդ տետր, վրան գրված է. «Վեդանեցոց գրույցներից»: 1. Լուսին վորոնող քահանան կամ տերտերոջ մորուքը, FAV: 5439.01-5440.00:
3. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթապանակ, վրան գրված է. «Գ. Թարվերդյան, Անեկդոտներ յեվ Առածներ, Հանելուկներ, Շուտասելուկներ Սալմաստեցոց Բարբառով, Հավաքել եմ 1895 թվից մինչեվ 1933 թ.», FFI:1495-1798 (էջ 1587):
4. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթապանակ «Անեկդոտներ Վան քաղաքի բարբառով (նաև զանազան բարբառների փոքրիկ ասոյթներով), հավաքեց և գրի առավ Սենեքերիմ Շալջյան, 1935 թ. նոյ. 13-ից սկսուած – Հունիսի 20, Երևան, 1936», FFI: 6297-6636:
5. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Մարգարիտ Գրիգորյանի ֆոնդ, թղթապանակ № 2 (1958):
6. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, № 43, «Բ. Գ. Թողլաքյան, Համննահայերի և պոնտահայերի ազգագրական նյութերը (ձեռագիր) /Խարբերդ և Սերաստիա/, մաս II, 1959 – 1969 թթ.», տետր № 182, 37 թերթ (47-ից – 84), թերթ 52-րդ, 53-րդ թերթում սոսնձված հատված:
7. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթապանակ «Հրաչ Ասատուրի Մկրտչյան, Շիրակի ժողովրդական բանահյուսությունից, 1970», FFVI: 4112-4116:
8. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթապանակ «Միքայել Պետրոսի Օհանջանյան (Մոպեր Ղարաբաղցի), ԼՂԻՄ, գ. Խանաբաղ, Հեքիաթ-անեկդոտներ (Քաթ-մնասնկներ), Ա տետր, 1976 թ.», FF XII: 7105-7401 (էջ 7153):
9. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթապանակ «Ռ. Հ. Բաղրամյան, Ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1985», էջ 171, 172:
10. Հայաստանի ազգային արխիվ, Աշոտ Աշոտի Մնդոյանցի ֆոնդ 769, ցուցակ 1, գործ 28, 33, 34 (1987):
11. Հայաստանի ազգային արխիվ, Տիգրան Նավասարդյանի ֆոնդ 484, ցուցակ 1, գործ 1, 4, 15 (1992):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԳՐՔԵՐ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. **Արքահամյան Վալենտինա**, Հայ համաքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18–20-րդ դարի սկիզբը), ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, Հայաստանի պատմության պետական թանգարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1971 (-256 էջ + 32 էջ լուսանկարներ):
2. **Ա-Դօ**, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները: Ուսումնասիրության մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաական և տնտեսական դրություն, Երևան, տպարան «Կուլտուրա», 1912 (-VIII+ 408 էջ):
3. «Ազատական» // **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 1, ՀՍՍՀ ԳԱ, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1974 (-720 էջ), էջ 97, 98:
4. **Ալպոյաճեան Արշակ**, Պատմություն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրություն, հ. Ա, Հրատարակություն Կեսարիոյ եւ շրջակայից հայրենակցական միության Գահիրէի վարչության, Գահիրէ, 1937 (-1336 էջ + 10-ից ավելի քարտեզներ):
5. **Ալպոյաճեան Արշակ**, Պատմություն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրություն, հ. Բ, Հրատարակություն Կեսարիոյ եւ շրջակայից հայրենակցական միության Գահիրէի վարչության, Գահիրէ, 1937 (Նախորդ հատորի շարունակությունն է, էջագրված է՝ 1295 էջից մինչև 2479 էջը, հատորը 1190 էջ է):
6. **Աղաջանյան Միքայել**, Հաթերք. Պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Ստեփանակերտ, «Իիզակ պլյուս» հրատ., 2012 (-688 էջ):
7. **Աճառեան Հ.**, Հայ բարբառագիտություն. ուրուագիծ եւ դասատրություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով) // **Էմինեան ազգագրական ժողովածու**, հ.Ը, հրատարակութեամբ Լազարեան ձեռարանի արեւելեան լեզուաց, Մոսկուա-Նոր-Նախիջեան, 1911 (-XII + 306 էջ, քարտեզ):
8. **Աճառեան Հր.**, Հայերէն գաւառական բառարան // **Էմինեան ազգագրական ժողովածու**, հ.Թ., Թիֆլիս, Типография Н. Аганянц, 1913 (-1182 էջ):
9. **Աճառեան Հր.**, Քննություն Նոր-Նախիջեանի (Խրիմի) բարբառի, Երևան, ապակետիպ, 1925 (-464 էջ):
10. **Աճառեան Հ.**, Հայերէն արմատական բառարան, հ.Ա, Հրատարակություն Հայաստանի Խ.Ս.Հանրապետության պետական համալսարանի, Երևան, Համալսարանի ապակետիպ, 1926 (ձեռագիր էջագրված՝ 1232 էջ), չէջագրված՝ էջ V:
11. **Աճառեան Հ.**, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Երևան, ապակետիպ, 1940 (-402 էջ):
12. **Աճառյան Հրայցա**, Քննություն Համշենի բարբառի, ՀՍՍՌ ԳԱ Ն. Յա. Մառի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1947 (-272 էջ):
13. **Աճառյան Հրայցա**, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, Հայպետհրատ, 1951 (-610 էջ):

14. **Աճառյան Հրայցա**, Կյանքիս հուշերից, Երևան, ԵՊՀ «Միտք» հրատ., 1967 (-460 էջ):
15. **Աճառյան Հրայցա**, Հայ գաղթականության պատմություն, Հրայցա Աճառյանի անվան համալսարան, Երևան, «Զանգակ 97» հրատ., 2002 (-768 էջ):
16. **Աճառեան Հրայցեայ**, Քննություն Նոր-Նախիջեանի (Խրիմի) բարբառի, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառեանի անուն լեզուի ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021 (-266 էջ):
17. **Այվազյան Արզամ**, Ազուլիսի բարբառի մատուցներ: Կանխաբանությունը, բառարանի, ազգագրական նյութերի կազմումը ու ծանոթագրությունները Ա. Այվազյանի, Երևան, Հեղինակային հրատարակություն, «Գասպրինտ» տպագրատուն, 2011 (-616 էջ):
18. **Այվազյան Արզամ**, Նախիջևան, հայկազունք: Ով ով է: Կենսագրական հանրագիտարան, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2012 (-384 էջ):
19. «Ապահունի Եզնիկ» // **Հայ հանրագիտակ**, խմբագրեց **Հ. Մկրտիչ վարդ. Պոտուրեան Պարտիզակցի**, Պուքրէշ, 1938 (-600 էջ), էջ 202:
20. «Առաքելյան Առաքել Գևորգի» // **Հայկական համառոտ հանրագիտարան**, հ. 1, 1990 (-768 էջ), էջ 258:
21. **Առաքել Գավրիժեցի**, Պատմություն, թարգմանությունը առաջաբանը և ծանոթագրությունները **Վարազ Առաքելյանի**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988 (-592 էջ):
22. **Աամարյան Լ.**, «Սունդուկյան Գաբրիել Մկրտումի» // **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 11, Երևան, 1985 (-720 էջ), էջ 191–193:
23. **Աստվածաշունճ բիջիզուն ղէյ. Լաջվեռտին գարգէրը**, Կրրագան արէվէլա-հայէրէնըն հոշէճնագ (հոշէնճու խօրատա) տառոճ՝ **Ռօգա Խասսոյանը** – պանաստէղճուիի, թարկնօսիճ, ՀՀ ԿՄ հրնու ՌԴ ԿՄ օնտամ, Յէրէվան, Հայաստանի Աստվածաշունճային Ընգէրուտին, 2021 (-60 էջ):
24. **Ավթանդիլյան Ավագ**, Պատկերներ Բաֆֆիի կյանքից // **Բաֆֆիի ժամանակակիցների հուշերում** (ժողովածու), բնագիրը պատրաստեց և ծանոթագրեց **Խ. Ե. Սամվելյանը**, ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986 (-358 էջ), էջ 75–168:
25. «Արդույան Հովսէփի» // **Հայկական համառոտ հանրագիտարան**, հ. 1, Երևան, 1990 (-768 էջ), էջ 389:
26. **Բալայան Վահրամ**, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Արցախի գիտական կենտրոն և Արցախի պետհամալսարան, Երևան, «Զանգակ» հրատ., 2017 (-560 էջ + 32 էջ ներդիր):
27. **Բախտիկեան Ներսէս ծ. վրդ.**, Փերիոյ խելացին (գուարճալի մանրադէպեր), Պէրոյթ, տպարան Սեան, 1967 (-60 էջ):
28. **Բախտիկեան Սարգիս**, Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, Պէրոյթ, տպարան Վահագն, 1934 (-160 էջ):
29. **Բախտիկեան Սարգիս (Ծոփեցի)**, Շէփկայ խելացին (Հայկական գուարճալիսութիւն), Պէրոյթ, տպարան Օլիմփիք, 1953 (-84 էջ):

30. **Բակուր**, Շուշի բերդաքաղաքը (Պատմությունը մինչև 1920 թ.), ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, ԵՊՀ հրատ., 2000 (-350 էջ):
31. «Բահաթրյան Առաքել» // **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 2, Երևան, 1976 (-720 էջ), էջ 246:
32. «Բահաթրյան Առաքել» // **Հայկական համառոտ հանրագիտարան**, հ. 1, Երևան, 1990 (-768 էջ), էջ 461:
33. «Բահաթրյան Առաքել»//**Հայ գրատպություն և գրքարվեստ**, հանրագիտարան, Երևան, 2015 (-1120 էջ), էջ 188:
34. **Բահաթրեանց Ա.**, Առակագիրք, ինքնագիր եւ թարգմանածոյ առակներ եւ երգեր ժողովրդական լեզուով գրուած, Շուշի, տպ. Միրզաջան Մահուտսի Յակոբեանցի, 1886 (-162 էջ):
35. **Բահաթրյան Ավետիք**, Հին հայոց տաղաչափական արվեստը: Քննական տեսություն (Առաջաբանը՝ Էդ. Ջրբաշյանի), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1984 (-XXXIV+ 140 էջ): Տիտղոսաթերթի երկրորդ երեսին գրքի էջերի թիվը նշված է 185 էջ, իրականում գիրքը 174 էջ է:
36. **Բահաթրեան Բ.**, Պատմութիւն կենաց, նշխարաց եւ եկեղեցոյ Սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, Հանեալ ի 10-րդ տետրակէն Ճոաքաղին 1859 ամի, Ի Մոսքուա, Ի տպարանի Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1859 (-20 էջ):
37. «Բահաթրյան Բահաթուր Ավետիսի» // **Հայկական համառոտ հանրագիտարան**, հ. 1, Երևան, 1990 (-768 էջ), էջ 461, 462:
38. «Բահաթուր (Բահաթրյան) Եկատերինա Բեգլարի» // **Հայկական համառոտ հանրագիտարան**, Երևան 1990, հ. 1 (-768 էջ), էջ 462:
39. Բաղրամյան Ռ[ուբեն], Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրություն, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Երևան, 1972 (-226 էջ): Գրքում նշված են հեղինակի անվան և հայրանվան միայն սկզբնատառերը:
40. **Բարխուդարյան Վ.**, «Արդության Հովսեփ» // **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 2, Երևան, 1976 (-720 էջ), էջ 86:
41. **Բդոյան Վարդ**, Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, կազմեց, առաջաբանը գրեց և տեքստային անհրաժեշտ ծանոթագրությունները կատարեց **Ռաֆայել Ղարիբյանը**, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014 (-752 էջ):
42. [Բենսե] Բուլանըխ կամ Հարք գաւառ, հաւաքեց **Բենսե**, խմբագրեց և հրատարակեց Ե. Լալայեան, Արտատպուած Ազգագրական հանդիսից, Թիֆլիս, տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1901 (Առաջին մաս՝ 7-182 էջ, Երկրորդ մաս 7-110 էջ):
43. **Բժշկեան Հ. Մինաս Վարդապետ**, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեա ծով, ՚ի Վենետիկ, ՚ի վանս Սրբոյ Ղազարու, 1819 (-168 էջ + քարտեզ): Գրքի ամբողջական վերնագիրն է՝ Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեա ծով, Ստորագրեալ **Տեան Հ. Մինաս Վարդապետ Բժշկեան Տրապիզոնցոյ** ՚ի Մխիթարեան միաբանութենի, ՚ի Վենետիկ, ՚ի վանս Սրբոյ Ղազարու, 1819 (-168 էջ + քարտեզ):

44. **Բժշկեան Հ. Մինաս Վարդապետ**, Ճանապարհորդություն ՚ի Լեհաստան, ՚ի Վենետիկ, ՚ի վանս Սրբոյ Ղազարո, 1830 (-424 էջ):
45. «Բոլորան» // **Էփրիկեան Հայր Սուրիաս, Պատկերագարդ բնաշխարհիկ քառարան**, հ. 1, երկրորդ տպագրություն, Վենետիկ, Ս. Ղազար, 1903-05 (-844 էջ), էջ 428:
46. **Բրուտեան Վաչէ**, Պարբերական ակնարկ խորհրդահայ մամուլի, հոկտեմբեր-դեկտեմբեր, Խորհրդահայ մամուլը 1982ի աշնան (Բ մաս) // Երկիրը Արտերկրէն (Յօդուածներու ժողովածու), Երևան, Լուսակն, 2021 (-392 էջ), էջ 175–178:
47. **Գասապեան Մինաս Գ. (Ֆարիաս)**, Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ: Ուսումնասիրությունն վիճակագրական ցուցակներով եւ քարտէսով, Պարտիզակ, տպագր. «Ազատամարտ»ի, 1913 (-314 էջ):
48. **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա (Ե. դարից մինչև 1250 թ.), 48 նմանահանություններով, Անթիլիաս, տպարան կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ, 1951 (-658 էջ):
49. **Գեղամյանց Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա**, Ուղեգնացական ակնարկներ, Գիտական ուսումնասիրություններ, մատենաշար, գիրք ԺԳ., Երևան, «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հիմնադրամ, 2010 (-104 էջ):
50. **Գէօրգեան Կարօ**, Ամէնուն տարեգիրքը. 1963, Ժ. տարի, Տասնամեակի բացառիկ հատոր, Պէրյոզ-Լիբանան:
51. **Գորոյեանց Նազար**, Պարսկաստանի հայերը, պատմական, տեղագրական եւ վիճակագրական համառոտ տեղեկություններ Պարսկաստանի հայերի մասին՝ ամենահին ժամանակներէ մինչև 1898 թ., Թեհրան, տպարան «Մոդերն», 1968 (-368 էջ):
52. **Գրիգորյան Աշոտ Հայկազուն**, Հայոց ազգին պարտեզի գանձերը. Պալյաններ, Երևան, Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ, 2017 (-544 էջ + 7 ներդիր):
53. **Գրիգորյան Հ.**, «Բոլորան» // **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 2, Երևան, 1976 (-720 էջ), էջ 512:
54. Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Միւրի դոռ, Ծրագրեաց **Գ. Վ. Սրուանձտեանց**, Կ. Պօլիս, տպագրութիւն Ե. Մ. Տստեսեան, 1874 (-192 էջ):
55. **Գևորգյան Թամար**, Լոռի (Տաշիրք-Ձորագետ) // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ. 20, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999 (-270 էջ):
56. **Դևկանց Անուշավան**, Կանեթա ծոեր, հաղագս ծիծաղական պատմությանց և վասն խրատի, Երևան, «Հայաստան» հրատ., 1974 (-328 էջ):
57. **Երեմեան Արամ**, Սպահանի Փերիա գաւառը (Ազգագրութիւն), Նոր-Ջուղա, տպարան Ս. Ամենափրկչեան վանքի, 1919 (-138 էջ):
58. **Երեմեան Արամ**, Սպահանի Փերիա գաւառը (Ազգագրութիւն), (Բ հրատակութիւն), Հրատարակութիւն՝ Սպահանի հայոց թեմի կրօնական խօրհրդի, Նոր Ջուղա, 2011 (-VII+124 էջ, այդ թվում՝ գունավոր լուսանկարներով 16 էջ ներդիր):
59. «Երեմյան Արամ Գարեգինի» // **Հայկական համառոտ հանրագիտարան**, հ. 2, Երևան, 1995 (-768 էջ), էջ 113:

60. «Երեմյան Արամ Գարեգինի» // **Հայ գրատպություն և գրքարվեստ, հանրագիտարան**, Երևան, Հայկական հանրագիտարան, հրատ., 2015 (-1120 էջ), էջ 360, 361:
61. **Երեմյան Սուրեն**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963 (-156 էջ):
62. **Ջաքարյան Եվա**, Կյանք՝ նվիրված հայրենի եզերքի բանավոր արժեքների պահպանմանը // **Շուշին հայկական մշակույթի օջախ**, Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2014, էջ 117 – 124:
63. **Ջաքարյան Մարի**, Ագուլիսի բարբառի բառարան (ինքնության բացահայտում), Երևան, Իրավունք հրատ., 2008 (-352 էջ):
64. [Էօզքան Մահիր] **Özkan Mahir**, Hemsin Öyküleri, Hamşetsnag Hekiyaner, Մահիր Էօզքան, Համշենեան Պատմումներ, Համշենակ Հեքիաներ, Istanbul, ARAS-ԱՐԱՍ, 2014 (-336 էջ), երկվեզվյան: Պատմվածքները Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով (համշենակ) են և տպագրվել են հայատառ, նույնը՝ թուրքական լատինատառ այբուբենով, զուգահեռ թուրքերեն թարգմանությամբ:
65. **Թաղևոսյան Աղասի**, Դարբինը հայոց ծիսակարգում (Պատմաազգագրական ուսումնասիրություն) // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ.23, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2007 (-186 էջ), էջ 99 – 186:
66. **Թաղիադյան Մեսրոպ**, Ուղեգրություններ, հողվածներ, նամակներ, վավերագրեր, առաջաբանը, տեքստը և ծանոթագրությունները՝ **Ռուզան Նանումյանի**, գրական ժառանգություն, հ. 9, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975 (-620 էջ):
67. Թառայան Զ., «Տորոն» // **Հայկական սովետական հանրագիտարան**, հ.12, Երևան, 1986 (-720 էջ), էջ 63:
68. **Թողաբյան Բարունակ**, Համշենահայերի ազգագրությունը // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ. 13, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982 (-156 էջ + IX էջ լուսանկարներ և գծանկարներ):
69. **Թորլաբեան Միսաք**, Օրերուս հետ, Լոս Անճելլոս, Հորիզոն տպարան, 1953 (-568 էջ):
70. **Թորլաբեան Միսաք**, Օրերուս հետ, Գ. հրատարակչություն, Պեյրոթ, «Համազգային»-ի Վահե Սեթեան տպարան, 2001 (-624 էջ):
71. **Թուղլաճյան Բ.**, «Պայլաններ» // **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 9, Երևան, 1983 (-720 էջ), էջ 86 – 87:
72. **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ.1, ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969 (-604 էջ):
73. **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ.3, ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974 (-584 էջ):

74. **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 4, ՀՄՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1980 (-836 էջ):
75. **Ինճիճեան Հայր Ղուկաս Վարդապետ**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամէրիկոյ: Մասն Առաջին, Ասիա, Հատոր Ա, 'ի Վէնէտիկ, 'ի Վանս սրբոյն Ղազարո, յամի 1806 (-462 էջ): Գրքի առավել ամբողջական վերնագիրն է՝ **Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամէրիկոյ: Աշխատասիրութեամբ Տեանն Հայր Ղուկաս Վարդապետի Ինճիճեան կոստանդնուպօլսեցոյ**, յաշակերտուէ Տեանն Մխիթարայ մեծի Արքայի: Մասն Առաջին, Ասիա, Հատոր Ա, 'ի Վէնէտիկ, 'ի Վանս սրբոյն Ղազարո: Յամի 1806 (-462 էջ):
76. **Լազեան Գաբրիէլ**, Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1949 (-400 էջ):
77. **Լազեան Գաբրիէլ**, Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Մոնթէպելլօ, 1993 (-428 էջ):
78. **Լեոնային Ղարաբաղի բանահյուսությունը**, գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները՝ **Մ. Մ. Գրիգորյան-Սպանդարյանի**, ՀՄՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1971 (-478 էջ):
79. **Լէօ**, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Թիֆլիս, Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի, 1902 (-IV + 228 + 4 նկար):
80. **Լէօ**, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, 1881–1911, Թիֆլիս, տպարան Մն. Մարտիրոսեանցի, 1911 (-VIII + 360 էջ):
81. **Լէօ**, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1838–1913, Թիֆլիզ, տպարան Ն. Աղանեանի, 1914 (-696 էջ):
82. **Խաչատրյան Հայկ**, Գրական տեղեկատու, 1934–1986, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986 (-622 էջ):
83. **Խառատյան-Առաքելյան Հրանուշ**, Հայ ժողովրդական տոները (Երկրորդ, լրամշակված հրատարակություն), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն «Հազարաշեն», Երևան, «Զանգակ-97», 2005 (-360 էջ):
84. **Խառատյան Հրանուշ**, Տոներ և տոնահանդեսի մշակույթը Հայաստանում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, «Միրվարդ հրատ.», 2009 (-356 էջ):
85. **Խեմյան Էսթեր**, Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները) // **Շուշին հայոց քաղաքակրթության օրրան**, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ ԳԱ ակադեմիա, ԵՊՀ, ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն, Արցախի պետ. համալսարան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007 (-370 էջ), էջ 335–350:
86. **Խեմյան Էսթեր**, Իջևան (Ձորփոր) // **Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ**, հ. 25, ՀՀ ԳԱԱ հնագիտության և

- ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008 (-492 էջ + 16 էջ ներդիր):
87. **Խիկար Իմաստունից մինչև Ջանոն**, ռուսերենից թարգմանեց **Հրանտ Աղասարյանը**, Երևան, «Հայաստան» հրատ., 1990 (-480 էջ):
 88. **Ծաղկեփունջ**, հայ ժողովրդական առակներ, զրույցներ, խաղեր, առածներ ու հանելուկներ, ժողովածուն կազմել է **Ա. Նազինյանը**, Երևան, Հայպետհրատ., 1960 (-148 էջ):
 89. **Ծիծաղում են վանեցիները**, ժողովածու, կազմողներ՝ **Հարությունյան Վ., Մելիքյան Ն.**, Երևան, «Զանգակ-97», 2006 (-196 էջ):
 90. **Ծոցիկեան Ս.**, Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, տպագրութիւն Ա. Յ. Լէյլէկեան, 1947 (-816 էջ):
 91. **Կամենեց-Պողոսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.)**, աշխատասիրությամբ **Վ. Ռ. Գրիգորյանի**, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան», Երևան, ՀՍՄՌ ԳԱ հրատ., 1963 (-440 էջ):
 92. **Կենսագրական հանրագիտարան**, Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (-620 էջ):
 93. **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Վարազ Առաքելյանի**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982 (-352 էջ):
 94. **Կարապետյան Սամվել**, Թիֆլիսի քաղաքագլուխները, RAA գիտական ուսումնասիրություններ, գիրք Ե, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003 (-120 էջ):
 95. **Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը**, կազմողներ՝ **Սարգիս Հարությունյան** (գիտական ղեկավար), **Սվետլանա Վարդանյան**, **Էսթեր Խեմչյան**, **Լուսինե Ղոնջյան**, **Մարինե Խեմչյան**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013 (-752 էջ):
 96. **Կոստանդյան Էմմա**, Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979 (-195 էջ):
 97. **Կոստանդյան Էմմա**, Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, «Զանգակ-97», 2000 (-448 էջ):
 98. **Կոստանդյան Էմմա**, Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Երևան, ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008 (-200 էջ):
 99. «Կովկասի հայոց բարեգործական ընկերություն» // **Հայկական համառոտ հանրագիտարան**, հ. 2, Երևան, 1995 (-768 էջ), էջ 746, 747:
 100. **1926 թ. Համամիութենական մարդահամար, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության**, բաժին I, ազգություն-մայրենի լեզու-տարիք-գրագիտություն, Ա.Ս.Ֆ.Խ.Հ. Կենտրոնական վիճակագրական վարչություն, Թիֆլիս, հրատ. ԱՍՖԽՀ Կենտվիճվարի, Պոլիգրաֆ տրեստի 6-րդ տպարան, 1929 (-58 էջ + ՀՄԽՀ սխեմատիկ քարտեզ):
 101. **Հախնազարեան դոկտ. Յովհաննէս**, Գողթան գաւառ (Պատմագրութիւն եւ յուշագրութիւն), Թեհրան, 1991 (-394 էջ):
 102. **Հակոբյան Նելլի, Սահակյան Արծրունի**, Հիմմ եւ ուզում թե հետո: Միջին և բարձր տարիքի դպրոցականների համար, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977 (-200 էջ):

103. **Հայ աշուղներ**, անտիպ յերգերի ժողովածու, Ա, հավաքեց յեվ կազմեց՝ Գ. Թարվերդյան, առաջաբան յեվ մասնագիտական խմբագրություն Գ. Լեվոնյանի, ՀԽՍՀ պատմության յեվ գրականության ինստիտուտ, Յերեվան, Պետական համալսարանի տպարան, 1937 (-560 էջ):
104. **Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)**, ժողովածուն կազմել են **Ջոն Սահակի Կիրակոսյանը, Ռուբեն Գարեգինի Սահակյանը**, Երևան, «Հայաստան» հրատ., 1972 (-812 էջ):
105. **Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ (կենսաբիբլիոգրաֆիական ծանոթագրություններով)**, կազմեց **Հովհ. Պետրոսյան**, Երևան, Հայկական ՄՍՌ Պետգրապատ, 1960 (-540 էջ):
106. **Հայ գրողները և բանահյուսությունը ընդդեմ կրոնի** (աթեիստական քրեատոմատիա), կազմող և առաջաբանի հեղինակ՝ **Վաչագան Հարությունյան**, Երևան, «Հայաստան» հրատ., 1976 (-684 էջ):
107. **Հայ գուսաններ**, ժողովածուն կազմ. է **Գ. Թարվերդյան**, Երևան, Հայպետհրատ, 1957 (-298 էջ):
108. **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. I, ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու, հատորը պատրաստեց և առաջաբանը գրեց Ա. Մ. Նազիկյանը, ՀՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959 (-672 էջ):
109. **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. II, ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու, հատորը պատրաստեց և առաջաբանը գրեց Ա. Մ. Նազիկյանը, ՀՍՍՌ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959 (-660 էջ):
110. **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. III, ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու, հատորը պատրաստեց և նախաբանը գրեց Ա. Մ. Նազիկյանը, ՀՍՍՌ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962 (-672 էջ):
111. **Հայ ժողովրդական հեքիաթներ, Արցախ**, հ. V, հատորի բնագիրը և ծանոթագրությունները՝ Ա. Մ. Նազիկյանի և Մ. Մ. Գրիգորյանի (Սպանդարյան), նախաբանը գրեց Ա. Մ. Նազիկյանը, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966 (-760 էջ):
